Կ.Ե.ՄԵԼԻՔ-ՎՐԹԱՆԵՍՅԱՆ, Մ.Ա.ՏՈՆՅԱՆ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՔ»

К. Е. МЕЛИК-ВРТАНЕСЯН, М. А. ТОНЯН

МУЗЫКАЛЬНЫЙ ТОЛКОВЫЙ СЛОВАРЬ

Ереван «Хорурдаин грох» 1989

Կ.Ե.ՄԵԼԻՔ-ՎՐԹԱՆԵՍՅԱՆ, Մ.Ա.ՏՈՆՅԱՆ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Երևան «Խորհրդային գրող»-1989

ԳՄԴ 81.2—4
Մ 474

Մասնագետ խմբագիր
Ն. Կ. ԹԱՀՄԻԶՅԱՆ

Կ — 4602030000(102) / 705(01)88 — 174 88 «Տ»

ISBN 5-550-00171-3

© «Խորհրդային գրող» հրատարակչություն, 1989

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ներկա բառարանը Կ. Ե. Մելիք-Վրթանեսյանի և Մ. Ա. Տոնյանի երկար տարիների աշխատանքի արդյունքն է:

Կ. Մելիք-Վրթանեսյանը մեր հանրապետության հայտնի երաժշտագետներից, երախտավոր մանկավարժներից ու երաժշտական հասպրակական գործիչներից էր: 1934 թ. ավարտելով Լենինգրադի Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի անվան կոնսերվատորիայի պատմա-տեսական ֆակուլտետը, շուտով նա աշխատանքի անցավ Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում, ուր նրա նախաձեռնությամբ և ջանքերով 30-ական թվականների վերջերին հիմնադրվեց պատմա-տեսական ֆակուլտետ:

1942 — 1945 թթ., շարունակելով դասավանդել կոնսերվատորիայում, Կ. Մելիք-Վրթանեսյանը միաժամանակ ղեկավարում էր Հայֆիլհարմոնիայի աշխատանքները որպես դիրեկտոր և գեղարվեստական ղեկավար: 1957—1967 թթ. նա կոնսերվատորիայի պրոռեկտորն էր (գիտա-ուսումնական գծով) և քանիցս բարձրացնում էր (դեռևս 30-ական թվականներից իր նախաձեռնությամբ հոլովված) կարևորագույն մի հարց՝ հայերենով մեթոդական ձեռնարկներ, հայկական, ռուսական և արևմտաեվրոպական երաժշտության պատմության հարցերը լուսաբանող ձեռնարկներ, այլև տեսական առարկաների դասագրքեր ունենալու անհրաժեշտությունը, որոնք լրացված լինեին հայկական ժողովրդական և կոմպոզիտորական արվեստի նյութերով:

Հեռանկարային այս գործին շատ ճիգ ու ջանք նվիրեց Կ. Մելիք-Վրթանեսյանը, ականատես եղավ առաջին աշխատությունների ստեղծմանն ու անգամ հասցրեց խմբագրել դրանցից մեկ երկուսը: Իսկ առհասարակ, նա մեր երաժշտական մշակույթի հետ կապված էր բազմաթիվ թելերով: Սիմֆոնիկ նշանակալի համերգներից առաջ հանդես է եկել ներածական բանիմաց խոսքով, մամուլում՝ գրախոսություններով, ամսագրերում՝ հոդվածներով օպերային, բալետային ներկայացումների, երաժշտական այս կամ այն իրադարձության մասին: Հրապարակել է նաև առանձին գրքույկներ, նվիրված Ա. Տիգրանյանին (1939 թ.), Պ. Չայկովսկուն (1940 թ.):

Այդ ամենով հանդերձ, նրա երկարամյա մտորումների և լարված աշխատանքի առարկան ներկա բառարանն է, որի կազմման նախապատրաստական գործը նա սկսել էր տակավին 50-ական թվականների կեսերին: Անժամանակ մահը խանգարեց աշխատությունն ավարտելուն, նոր հոդվածներով լրացնելուն, գործը մնաց ձեռագիր և կիսավարտ վիճակում: Հարկ է ասել, որ ծավալուն այս աշխատությունն իր ներկա տեսքը ստացած չէր լինի հավանաբար, եթե Կ. Մելիք-Վրթանեսյանին ամենօրյա օգնություն ցույց տված չլիներ, ապա և չշարունակեր աշխատանքը նրա կինը՝ նույնպես երաժշտագետ Մ. Ա. Տոնյանը: Հանրապետության վաստակավոր ուսուցչուհի Մ. Տոնյանը ավարտել է Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պատմա-տեսական ֆակուլտետը և անմիջապես անցել մանկավարժական աշխատանքի: Տասնամյակներ շարունակ նա տեսական առարկաներ է դասավանդում Երևանի Չայկովսկու անվան երաժշտական մասնագիտացված միջնակարգ դպրոցում, 1956 թվականից ղեկավարում է դպրոցի տեսական բաժինը և մի շարք տարիներ խորհրդատու է ՀԽՍՀ Կուլտուրայի մինիստրության մեթոդական կաբինետում: Ներկա բառարանի հրատարակությամբ Մ. Տոնյանը հանդես է գալիս որպես իր ամուսնու օգնական-հեղինակակիցը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ զարմանալիորեն մեծ ուշացումով է հրատարակվում ազգային լեզվով երաժշտական բացատրական բառարան: Զարմանալիորեն, քանի որ հայ մատենագրությունն, ընդհանրապես, հարուստ է նաև բառարանագրական ավանդույթներով:

Կարելի է ասել, որ դեռևս գրերի գյուտից անմիջապես հետո, հայ մատենագիրների շրջաններում զգացվել է բառարանագրության զարգացման անհրաժեշտությունը: Եվ այդ ուղղությամբ կատարված սկզբնական աշխատանքները, հետզհետե ծավալվելով, փայլուն արդյունքներ են տվել տակավին միջնադարի պայմաններում: Իսկ նոր ժամանակներում և սովետական տարիներին հայ բառարանագրությունը նվաճել է շոշափելի բարձունքներ:

Առհասարակ, հայագիտության մեջ այն իրավացիորեն բնութագրվում է որպես դարավոր փորձով և հարուստ ավանդույթներով աչքի ընկնող երևելի բնագավառ, որին ծանոթանալիս ընթերցողն ակնածանքով կանգ է առնում ընդհանուր և մասնագիտական, տերմինաբանական և բացատրական հայերեն-օտար և օտար-հայերեն, երկլեզվյան և եռալեզվյան, ուղղագրական և քերականական, գավառական և հանրագիտական բնույթի բառարանների մի հսկա զանգվածի դեմ-հանդիման:

Ահա թե ինչու այս հետնախորքի վրա զարմանալի և ցավալի ենք համարում հայկական երաժշտական բառարանագրության ետ մնալը: Հարցն այն է նաև, որ տակավին միջնադարում (XII—XIII դդ.) մենք ունեցել ենք երաժիշտների համար ևս նախատեսված «Բառք քերականին», «Հանդէս բանաստեղծաց» և «Բառք քերթողական» կոչված բառարանները, իսկ XIX հարյուրամյակի ավարտին լույս տեսավ Մ. Քաջունու «Բառգիրք արուեստից և գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց» (1892—1894 թթ.) մասնագիտական-հանրագիտական բնույթի մեծածավալ, լուրջ գործը, որով ուղղակի նախապատրաստվում էր երաժշտական տարբեր բառարանների ստեղծումը:

Չնայած դրան, նախասովետական տարիներին երաժշտական բառարանագրությունը մեզանում այնպես էլ չզարգացավ: Կոմիտասի նախաձեռնումները մնացին անկատար (ինչպես երևում է նրա ձեռագրերից), իսկ սովետական շրջանում հրատարակվեցին մեկ-երկու մատենակից բառարաններ ու բառացանկեր (այդ թվում՝ մեր «Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ» գրքին կից), Վ. Դարպասյանի (որպես իտալերենի մասնագետի) կազմած «Երաժշտական տերմինների համառոտ բառարանը» (Երևան, 1975, 1979, 1986 թթ.) և Կ. Սեժենսկիի «Երաժշտական տերմինների համառոտ բառարանը» հայերեն թարգմանությամբ:

Սա շատ քիչ է: Մինչև օրս էլ չունենք հայերենով գրված երաժշտական ստուգաբանական, բացատրական, հանրագիտական և այլ տիպի բառարաններ, ինչը մեծ բաց է երաժշտական դպրոցների, ուսումնարանների և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի բեղուն գործունեության պայմաններում: Ահա այդ բացն է, որ գալիս է մասամբ լրացնելու ներկա բացատրական բառարանը:

Նրա կազմման ընթացքում օգտագործվել են տասից ավելի հրատարակություններ, այդ թվում՝ Հ. Ռիմանի «Musiklexicon»-ի ռուսերեն թարգմանության 1896 թվականի հրատարակությունը, Ա. Դոլժանսկու «Երաժշտական համառոտ բառարանը» (Լենինգրադ, 1952 թ.) և Բ. Շտեյնպրեսի և Ի. Յամպոլսկու կազմած «Երաժշտական հանրագիտական բառարանը» (Энциклопедический музыкальный словарь, М., 1959 г.), ռուս-հայերեն և իտալերեն-հայերեն բառարաններ, Ս. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը» և այլն:

Ներկա բառարանը ներառնում է շուրջ 2000 բառ-հոդված և բաղկացած է երեք մասից. հայերեն (որ հիմնական մասն է), իտալերեն և ռուսերեն:

Եթե՛ ընթերցողը փնտրվող տերմինի հայերենը չգիտե, կարող է որոնել բառարանի իտալերեն կամ ռուսերեն մասում, ապա վերադառնալ հայերենին:

ՆԻԿՈՂՈՍ ԹԱՇՄՋՅԱՆ

Ա

ԱԲՐԵՎԻԱՏՈՒՐԱ, տես՝ *կրճատագրություն:*

ԱԳՆՈՒՍ ԴԵԻ (լատ. agnus dei — գառն աստծո), *մեսսայի* եզրափակիչ բաժնի կաթոլիկ օրիներգություն:

ԱԳՈԳԻԿԱ (հուն. agōgḗ — տանել, շարժել), երաժշտության արտահայտիչ կատարման տարրերից մեկը՝ տեմպի ոչ մեծ տատանումներ (արագացում, դանդաղեցում): Տես՝ *ագոգիկ շեշտ:*

ԱԳՈՒՅԻԿ ՀԱՄԱՐ (ռուս. вставной номер) տես՝ *ներդրվող համար:*

ԱԳՈԳԻԿ ՇԵՇՏ (ռուս. агогический акцент) շեշտ, որն զգացվում է ոչ թե ձայնը սովորականից ավելի ուժգին հնչեցնելու, այլ իր տևողությունից քիչ ավելի երկար պահելու հետևանքով: (հմմտ. *դինամիկ շեշտ*):

ԱԴԱՊՏԵՐ (լատ. adapto-հարմարեցնել) նույնն է՝ *ձայնահան:*

ԱԴԱԶԵՏՏՈ (իտ. adagietto, adagio-ի նվազականը) *ադաջո* տեմպով գրված երաժշտական փոքրիկ ստեղծագործություն, կամ բազմամաս ստեղծագործության փոքրիկ մաս, փոքրիկ ադաջո:

ԱԴԱԶԻՈ (իտ. adagio-դանդաղ, հանդարտ) 1) շատ դանդաղ *տեմպ, լենտոյից* քիչ ավելի արագ, 2) այդ *տեմպով* գրված, սովորաբար խոհական-քնարական բնույթի երաժշտական *պիեսի* կամ *ցիկլայինի* (բազմամաս) ստեղծագործության որևէ մասի անվանումը, եթե այլ անվանում չունի, 3) բալետում՝ մեծ մասամբ քնարական բնույթի դանդաղ պար: Հաճախ սխալ է արտասանվում՝ *ադաժիո:*

ԱԴԻԱՖՈՆ (իտ. adiaphone) XIX դ. վերջում ստեղծված, լարելու կարիքը չզգացող *պիանինո*, որի մեջ լարերի փոխարեն ամրացված էին տարբեր բարձրություններ ունեցող *ձայնոցներ (կամերտոններ):* Հնչել է շատ մեղմ, այդ իսկ պատճառով գործնական կիրառություն չի գտել:

ԱԴ ԼԻԲԻՏՈՒՄ (լատ. ad libitum-ըստ ցանկության) 1) նշում այն մասին, որ կատարողը (երգիչ, երաժիշտ, խմբավար, նվագավար) նշված տեղը թե տեմպի, թե նրբերանգների տեսակետից կարող է կատարել ըստ սեփական ցանկության, հայեցողության, 2) թույլատրություն՝ *անսամբլից* հանել այն *պարտիան*, որին վերաբերում է նշումը:

ԱԶԱՏ ԱՐՎԵՍՏԱԳԵՏ (ռուս. свободный художник) կոչում, որը նախահեղափոխական Ռուսաստանում տրվում էր երաժշտական բարձրագույն կրթություն ունեցող երաժիշտներին:

ԱԶԱՏ ՈՃ (ռուս. свободный стиль) 1) նեղ իմաստով՝ արևմտաեվրոպական պրոֆեսիոնալ *պոլիֆոնիկ* երաժշտությունը, սկսած XVII դարից: Ի տարբերություն *խիստ ոճի*, այստեղ եկեղեցական լադերի փոխարեն գերիշխում են մաժոր և մինոր լադերը, որոշակիորեն զգացվում են *ակորդների ֆունկցիոնալ* հարաբերակցությունները, ազատորեն օգտագործվում են ամեն տեսակի *դիսոնանսներ* և *խրոմատիզմ:* Ա. ո. կոմպոզիտորների ստեղծագործություններում, եկեղեցական երաժշտության համեմատությամբ, չափազանց զգալի տեղ է գրավում աշխարհիկը: Լայնորեն օգտագործվում են նվագարանները և պոլիֆոնիկ երաժշտության բազմազան ու բազմաթիվ ձևերը: Ա. ո. հանճարեղ ներկայացուցիչներն են Յ. Ս. Բախը և Գ. Ֆ. Հենդելը: Լայն իմաստով, այսպես է կոչվում XVII դարից մինչև մեր օրերի երաժշտությունը, որն ընդգրկում է մի շարք ստեղծագործական դպրոցներ և կոմպոզիտորական բազմաթիվ ոճեր, 2) *պոլիֆոնիայի (կոնտրապունկտի)* ուսումնական դասընթացի երկրորդ բաժինը:

ԱԶԱՏ ՁԵՎ (ռուս. свободная форма) երաժշտական *պիեսի* ազատ *կոմպոզիցիա*, կառուցվածք, որը չի համապատասխանում տարածված տիպական կառուցվածքներին: Տես՝ *երաժշտական ձև:*

ԱԶԱՏ ՄԱՍ (ռուս. свободная часть) *էքսպոզիցիային* հաջորդող *ֆուգայի* երկրորդ մասը, որտեղ ըստ կոմպոզիտորի հայեցողության անցկացումներն ու *ինտերմե-*

դիաները հաջորդում են միմյանց՝ ցանկացած քանակությամբ, ցանկացած ձայներում, տոնայնություններում: Երբեմն ա. մ. տրոհվում է ֆուգայի միջին և եզրափակիչ մասերի:

ԱԶԳԱԿԻՑ ՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ռուս. родственные тональности) այն տոնայնությունները, որոնք գտնվում են առաջին աստիճանի ազգակցության մեջ: Տես՝ *տոնայնությունների ազգակցություն, առաջին աստիճանի ազգակցություն:*



ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. этнография, հուն. éthnos-ժողովուրդ և grapho-գրում եմ), տես՝ *երաժշտական ազգագրություն:*

ԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ռուս. сигнальные инструменты) նույնն է՝ *ազդափողակներ, ազդափողեր:*

ԱԶԴԱՓՈՂԱԿՆԵՐ, ԱԶԴԱՓՈՂԵՐ, ազդանշաններ տալու նպատակով գործածվող հատուկ պղնձյա փողային *բնական նվագարաններ* (բանակում, նավատորմում, ճամբարներում, տոնահանդեսներին)՝ *շեփոր, հեծելափող, հրետանափող, հետևակափող, նավատորմափողակ* (ավելի հարմար է՝ *տորմափողակ*):

ԱԼԲԱ (իտ. alba-այգաբաց, լուսաբաց, արշալույս) *այգերգ*, առավոտյան երգ, որը նկարագրում կամ ներկայացնում է սիրահարների հրաժեշտը լուսաբացին, գաղտնի հանդիպումից հետո (*տրուբադուրների*, ինչպես նաև *տրուվերների, մինեզինգերների* սիրած ժանրերից մեկը): Տես՝ *օբադ:*

ԱԼԲԵՐՏՅԱՆ ԲԱՍԵՐ (XVIII դարի իտալացի կոմպոզիտոր Դոմենիկո Ալբերտիի անունով) դաշնամուրային ստեղծագործություններում *ակորդային տոների* որևէ հաջորդականության բազմիցս կրկնումը հանդիսացող ձախ ձեռքի *պարտիան:* Տես՝ *հարմոնիկ ֆիգուրացիա:*



ԱԼԲՈՐԱԴԱ (իտ. alborada-լուսաբաց, այգաբաց) 1) արևածագին ձոնված հովվական երգ, 2) առավոտյան *սերենադ:* Տես՝ *ալբա, օբադ:*

ԱԼԼԵԳՐԵՏՈ (իտ. allegretto, *ալլեգրոյի* նվազական աստիճանը) 1) աշխույժ, քիչ ավելի դանդաղ *տեմպ*, քան *ալլեգրոն*, 2) այդ տեմպով գրված երաժշտական *պիեսի* կամ *ցիկլային* (բազմամաս) ստեղծագործության՝ *սոնատի, սիմֆոնիայի, կվարտետի* որևէ մասի անվանումը, եթե ուրիշ անվանում չունի:

ԱԼԼԵԳՐՈ (իտ. allegro-ուրախ) 1) աշխույժ բնույթի արագ *տեմպ*, որը համապատասխանում է ամենաարագ քայլքին, 2) այդ *տեմպով* գրված երաժշտական *պիեսի* կամ ցիկլային (բազմամաս) ստեղծագործության՝ *սոնատի, սիմֆոնիայի, կվարտետի* որևէ մասի անվանումը, եթե ուրիշ անվանում չունի, 3) *սոնատային ձևով* գրված երաժշտական ստեղծագործությունների առաջին մասերը (մեծ մասամբ): Տես՝ *սոնատ, սոնատային ալլեգրո:*

ԱԼԼԵԳՐՈ ԿՈՄՄՈԴՈ (իտ. allegro commodo-հարմար արագությամբ) չափավոր *տեմպ*, քիչ ավելի դանդաղ, քան *ալլեգրոն:* Տես՝ *կոմոդո:*

ԱԼԼԵԳՐՈ ՄՈԴԵՐԱՏՈ (իտ. allegro moderato-չափավոր արագ) չափավոր արագ *տեմպ, ալլեգրետոյի* և *ալլեգրոյի* միջինը:

ԱԼԼԵԼՈՒՅԱ (հուն. alleluja) եկեղեցական արարողությունների, ժամերգությունների ժամանակ կրկնվող բացականչություն: Հին հրեերեն նշանակում է՝ գովաբանենք աստծուն: Դրանից ստեղծվել է օրհներգություն, որի տեքստը ա. բազմիցս կրկնումն է, ըստ որում յուրաքանչյուր, հատկապես վերջին վանկով երգվում են մի շարք նոտաներ *(ձայնազարդեր):*

ԱԼԼԵՄԱՆԴ (ֆր. allemande, բառացի՝ գերմանական) XVI դարից Ֆրանսիայում տարածված ծանրաբարո, սահուն պար, չափավոր-դանդաղ *տեմպով*, սկզբում $\frac{2}{2}$, հետագայում $\frac{4}{4}$ չափով: XVII — XVIII դդ. ա. հանդիսանում էր *պարային սյուիտի* հիմնական մասերից՝ մեկը (քառամաս *սյուիտներում* առաջին մասը): Տես՝ *բասդանս:*



ԱԼՏ (լատ. altus-բարձր) 1) կանացի ցածր երգչաձայն (*մեցցո-սոպրանո, կոնտրալտո*), 2) մանկական (տղաների) ցածր երգչաձայն: Միջնադարյան երգչախմբերում *տենորը* երգում էր հիմնական մեղեդին, իսկ տղաների *պարտիան տենորից* բարձր էր, այստեղից էլ՝ *ալտ* անունը: Ձայնածավալն է՝ g[a] մինչև $e^2(f^2)$ (փոքր *օկտավայի* (*սոլ*-ից) *լա*-ից մինչև երկրորդ *օկտավայի մի*-ն (*ֆա*-ն)), 3) խմբերգերի և երգչային *անսամբլների* այն *պարտիան*, որը

պիտի կատարեն մանկական ցածր կամ կանանց ցածր ձայները, 4) *ջութակի* ընտանիքին պատկանող, *ջութակից* քիչ ավելի մեծ ու նրա կառուցվածքի *աղեղնային նվագարան* (գործիք): Նոտագրվում է *ալտի և ջութակի բանալիներով*, նվագում են *ջութակի* պես, օգտագործվում է որպես նվագախմբային, անսամբլային, ավելի հազվադեպ որպես մենակատարային նվագարան (գործիք), 5) պղնձյա փողային նվագարան (գործիք) *մի բեմոլ լարվածքով* (in Es), ձայնածավալն է A — b^1 (*մեծ օկտավայի լյա*-ից մինչև առաջին *օկտավայի սի բեմոլ*-ը), նոտագրվում է *ջութակի բանալիով*, հնչում է գրվածից *մեծ սեքստա* ցած, օգտագործվում է որպես նվագակցող գործիք փողային նվագախմբերում և *անսամբլներում*, 6) նվագախմբային մի շարք գործիքների (նվագարանների) տարատեսակների անվանման կցորդ՝ *ալտ-դոմրա, ալտ-կլարնետ, ալտ-տրոմբոն, ալտ-սաքսոֆոն*, 7) *հարմոնիայի դասընթացում*՝ քառաձայնի երկրորդ ձայնը:

ԱԼՏ-ԲԱԼԱԼԱՅԿԱ (ռուս. альтовая балалайка) տես՝ *բալալայկա:*

ԱԼՏ-ԴՈՄՐԱ (ռուս. альтовая домра), տես՝ *դոմրա:*

ԱԼՏ-ԿԼԱՐՆԵՏ (ռուս. альтовый кларнет), տես՝ *կլարնետ:*

ԱԼՏ-ՀՈԲՈՅ (ռուս. альтовый гобой), տես՝ *անգլիական եղջրափող:*

ԱԼՏ-ՄԱՆԴՈԼԻՆ (ռուս. альтовая мандолина), տես՝ *մանդոլին:*

ԱԼՏ-ՏՐՈՄԲՈՆ (ռուս. альтовый тромбон), տես՝ *տրոմբոն:*

ԱԼՏ-ՓՈՂ (ռուս. альтовая труба), տես՝ *փող:*

ԱԼՏ-ՖԼԵՅՏԱ (ռուս. альтовая флейта), տես՝ *ֆլեյտա:*

ԱԼՏԵՐԱՑԻԱ (ռուս. альтерация, լատ. alterare-ից՝ փոփոխում) 1) յոթ հիմնական հնչյունների (*դո, ռե, մի, ֆա, սոլ, լյա, սի*) բարձրացումը կես կամ մեկ *տոնով*, առանց անունները փոխելու, ինչ հնարավորություն է տալիս *հավասարաչափ տեմպերացված լարվածքի* յուրաքանչյուր հնչյունից կառուցել *մաժոր* և *մինոր տոնայնություններ*, 2) *լադի* հիմնական աստիճանների բարձրացումը կամ իջեցումը կես *տոնով*, առանց անունները փոխելու: Ա. լինում է ա) *լադային*, երբ ալտերացվում են *լադի* անկայուն աստիճանները, նրանց *ձգտողականությունն* ավելի սրելու, ուժեղացնելու նպատակով, բ) *զարտուղային (մոդուլյացիոն)*, երբ ալտերացվում են *լադի* բոլոր աստիճանները (թե *անկայուն*, թե *կայուն*), որևէ նոր տոնայնության հանդես գալու անհրաժեշտություն ստեղծելու նպատակով: Ա. կատարվում է *ալտերացիայի նշանների* միջոցով: Տես՝ *բանալիի նշաններ, պատահական նշաններ:*

ԱԼՏԵՐԱՑԻԱՅԻ ՆՇԱՆՆԵՐ (ռուս. знаки альтерации) փոփոխման հատուկ նշաններ, որոնց միջոցով կատարվում է յոթ հիմնական հնչյունների ձևափոխում, այսինքն՝ բարձրացումը կամ իջեցումը կես կամ մեկ *տոնով*, առանց անունները փոխելու: Ա. ն. են *դիեզը* (♯), որը տվյալ հիմնական հնչյունը բարձրացնում է կես *տոնով*, *դուբլ-դիեզը* (𝄪), որը տվյալ հիմնական հնչյունը բարձրացնում է մեկ *տոնով*, *բեմոլը* (♭), որը տվյալ հիմնական հնչյունն իջեցնում է կես *տոնով*, *դուբլ-բեմոլը* (𝄫), որը տվյալ հիմնական հնչյունն իջեցնում է մեկ *տոնով* և *բեկարը* (♮), որը չեզոքացնում է կից նշանների ազդեցությունը (*դուբլ-բեկար՝ ♮♮ , բեկար-դիեզ՝ ♮♯ , բեկար-բեմոլ՝ ♮♭* նշանները գործածությունից դուրս են եկել): *Հավասարաչափ տեմպերացված լարվածքի օկտավան* կազմված է տարբեր բարձրության տասներկու հնչյուններից, որոնք երաժշտության մեջ օգտագործվում են շուրջ երեսունհինգ տարբեր անվանումներով, և միայն յոթ հիմնականներն ունեն իրենց անունները (*դո, ռե, մի, ֆա, սոլ, լյա, սի*), մնացյալը ա. ն. միջոցով ձեռք են բերում ձևափոխված կամ ածանցյալ անվանումներ (տես՝ *էնհարմոնիկ հավասար հնչյուններ*): Ա. ն. կիրառվում են երկու կերպ՝ որպես *բանալիի նշաններ* և որպես *պատահական նշաններ:* Տես՝ *ալտերացիա:*

ԱԼՏԵՐԱՑՎԱԾ ԱԿՈՐԴՆԵՐ (ռուս. альтерированные аккорды) *ակորդներ*, որոնց կազմի մեջ կա մեկ կամ մի քանի *ալտերացված (խրոմատիկ* բարձրացված կամ իջեցված) աստիճան, ըստ որում *ալտերացվում* են *լադի* միայն անկայուն աստիճանները և այդ պատճառով ա. ա. չեն փոխում իրենց ֆունկցիան և դուրս չեն գալիս տվյալ տոնայնության սահմաններից: *Թվագրի* մեջ նշանակվում են պլյուս (+) կամ ♯ (բարձրացված) և մինուս (—) կամ ♭ (իջեցված) նշաններով, որոնք դրվում են *ակորդային տոնը* նշանակող արաբական 1, 3, 5, 7, թվանշանների ձախ կողմից, օր. $\overline{\text{II}}^{+1}_{+3}$ նշանակում է *երկրորդ աստիճանի կվինտսեքստակորդ*, բարձրացված *հիմնական* և *տերցիային տոներով:* Ա. ա. աչքի են ընկնում թարմությամբ, յուրօրինակ գունեղությամբ, մելոդիկ ձգողականության սրությամբ: Տես՝ *լադային ալտերացիա, դոմինանտային ալտերացված ակորդներ՝ մաժորում, դոմինանտային ալտերացված ակորդներ՝ մինորում, սուբդոմինանտային ալտերացված ակորդներ՝ մաժորում, սուբդոմինանտային ալտերացված ակորդներ՝ մինորում:*

ԱԼՏԻ ԲԱՆԱԼԻ (ռուս. альтовый ключ) *դո բանալին՝* դրված *նոտակիրի* երրորդ գծի վրա: Տես՝ *բանալիներ:*

ԱԼՏԻՆՈ (ռուս. альтино), տես՝ *տենոր-ալտինո:*

ԱԿ, *առաջին կողմ*, տես՝ *ձայն III:*

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՆԵՐ (ռուս. академические театры) Սովետական Միությունում «ա կ ա դ ե մ ի ա կ ա ն» պնդվավոր կոչումը սահմանված է 1919 թ. և շնորհվում է առաջատար, գեղարվեստական նշանակալի ձեռքբերումներով աչքի ընկած թատրոններին: Օպերայի

և բալետի թատրոններից սկզբնական շրջանում այդ պատվավոր կոչմանն արժանացել են Մոսկվայի Մեծ թատրոնը (տես), Լենինգրադի Կիրովի անվան (նախկին Մարիինյան) և Փոքր (նախկին Միխայլովսկու) թատրոնները: Հետագայում այդ կոչումը շնորհվեց մի շարք այլ, այդ թվում և Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնին (1956 թ.): Տես՝ *օպերային թատրոններ:*

ԱԿԱՆՋՆԵՐ (ռուս. колки) լարային նվագարանների (գործիքների) մաս, որոնք իրենցից ներկայացնում են տարբեր ձևի և կառուցվածքի փայտե, մետաղյա կամ պլաստմասսայից պատրաստված կոնաձև, գլանաձև փոքր ցցիկներ (ձողիկներ): Ա. պտույտով ձգում և լարում են լարերը:

Ա ԿԱՊԵԼԼԱ (իտ. a cappella՝ ինչպես կապելլայում) 1) *խմբերգի* տեսակ, որը չունի գործիքային նվագակցություն (տես՝ *խմբերգ*), 2) խմբական երգեցողություն, առանց գործիքային նվագակցության: Տես՝ *կապելլա:*

ԱԿՈԼԱԴ (ֆր. accolade-գրկում, accolader-ից՝ միացնել փակագծով) ուղիղ կամ ձևավոր փակագիծ, որով միացվում են երկու և ավելի *նոտակիրներ*, նոտագրված *պարտիաները* միաժամանակ կատարելու համար: Ա. գրվում է սկզբնագծի ձախ կողմից: Ձևավոր ա. միացվում են *տավղի (արֆայի)* և ստեղնավոր բոլոր նվագարանների նոտակիրները (դաշնամուր, երգեհոն, ակորդեոն և այլն), իսկ ուղիղ ա.՝ մնացած բոլոր լարային, փողային նվագարանների և երգիչների նոտակիրները:

ԱԿՈՐԴ (ֆր. accord, իտ. accordo-համաձայնեցում) 1) տարբեր բարձրություն ունեցող երեք կամ ավելի ձայների համահնչյունը, որոնք դասավորված են կամ կարող են դասավորվել *տերցիաներով:* Ա. տարբերվում են միմյանցից ա. կազմող հնչյունների քանակով և դրանց *ինտերվալային* փոխհարաբերությամբ: Դասական հարմոնիկ մտածողությունը (Հայդն, Մոցարտ, Բեթհովեն և այլք) հիմնված է *տերցիային կառուցվածքի* ա. վրա, այսինքն այնպիսի համահնչյունների, որոնց մեջ ներառնված ձայները դասավորված են կամ կարող են դասավորվել տերցիաներով ու դրանց *շրջվածքներով:* Ժամանակակից *ներդաշնակագիտության (հարմոնիայի) դասընթացում,* ընդհանրապես երաժշտագիտության մեջ ա. հասկացությունը տերցիային կառուցվածքի համահնչյունն է, իսկ երբ խոսվում է ա. այլ կառուցվածքի մասին, նըշվում է կառուցվածքը, օր. *կվարտային կառուցվածքի* ա. և այլն: Ա. ուսումնասիրմանը նվիրված է *ներդաշնակագիտության ակորդիկա* բաժինը:






2) լարերի *ակորդ*-լարերի հավաքածու տվյալ նվագարանի (գործիքի) համար, 3) լարային նվագարանի բոլոր լարերի հավաքածու, օր. ջութակի ա., այսինքն ջութակի չորս լարերը միասին:

ԱԿՈՐԴԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. аккордика) երաժշտության տեսության այն բաժինը, որն ուսումնասիրում է *տերցիային կառուցվածքի* տարբեր ակորդներ, իրենց բոլոր հատկանիշներով (տեսակ, կառուցվածք, դասավորություն, մելոդիկ դրություն և այլն), անկախ դրանց ֆունկցիոնալ հարաբերություններից: Ա. մտնում է մասամբ՝ երաժշտության տարրական տեսության և լրիվ՝ հարմոնիայի դասընթացի մեջ:


ԱԿՈՐԴԱՅԻՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐ (ռուս. аккордовые тона) նույնն է՝ *ակորդային տոներ:*

ԱԿՈՐԴԱՅԻՆ ՏՈՆԵՐ (ռուս. аккордовые тона) հնչյուններ, որոնք մտնում են *ակորդի* կազմության մեջ, օր. *ռե-ֆա-լյա ակորդում ռե*-ն, *ֆա*-ն և *լյա*-ն ա. տ. են: Յուրաքանչյուր ա. տ. ունի իր անունը, ըստ նրա գրաված տեղի՝ տերցիաներով կառուցված ակորդում. *հիմնական տոն* կամ *պրիմա, տերցիային տոն* կամ *տերցիա, կվինտային տոն* կամ *կվինտա, սեպտիմային տոն* կամ *սեպտիմա, նոնային տոն* կամ *նոնա:* Ա. տ. հարկ եղած դեպքում նշանակվում են վերը բերված *ինտերվալներին* համապատասխան արաբական թվանշաններով՝ 1, 3, 5, 7, 9:



ԱԿՈՐԴԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ (ռուս. названия аккордовых тонов) տես՝ *ակորդային տոներ:*

ԱԿՈՐԴԵՈՆ (ֆր. accordéon) խրոմատիկ *հարմոն*՝ դաշնամուրի ստեղնաշարով (աջ ձեռքի համար): Ա. լինում են տարբեր մեծության, մեծ ա. աջ ձեռքի համար ունի 41 ստեղն (*փոքր օկտավայի ֆա*-ից երրորդ օկտավայի *լյա*-ն), իսկ ձախ ձեռքի համար՝ 100—140 կոճականման ստեղներ: Ա. մեծ մասն ունի *ռեգիստրային փոխարկիչներ* (регистровые переключатели), որոնք հնարավորություն են տալիս կրկնապատկել բոլոր հընչյունները *ունիսոնով* կամ օկտավայով, փոփոխել հնչյունների *հնչերանգը (տեմբրը):* Նոտաները գրվում



են երկու *նոտակիրների* վրա, ջութակի և բասի բանալիներով: Տես՝ *բայան:*

ԱԿՈՐԴԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. расположение аккорда) *ակորդի* այն հատկանիշը, որը բնորոշվում է *ակորդ* կազմող *տոների* (հնչյունների) *ինտերվալային հարաբերությամբ: Քառաձայն դարսվածքում ակորդը* կարող է դասավորվել երեք ձևով՝ *նեղ, լայն* և *խառը:* Նեղ դասավորված է այն ա կ ո ր դ ը, որի կազմող տոները միմյանցից հաջորդաբար հեռացած են *կվարտայից* ոչ ավելի *ինտերվալով,* լայն դասավորված է այն ա կ ո ր դ ը, որի կազմող տ ո ն ե ր ը միմյանցից հաջորդաբար հեռացած են *կվինտայից* ոչ պակաս *ինտերվալով,* խառը դասավորված է այն ա կ ո ր դ ը, որի տ ո ն ե ր ի մի զույգը (ստորին կամ վերին) նեղ, մյուսը լայն դասավորություն ունի: Ա. դ. քառաձայնում որոշվում է միայն վերևի երեք ձայներով (*տենոր, ալտ, սոպրանո*), *բասը* հաշվի չի առնվում:



ԱԿՈՐԴԻ ԴՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. положение аккорда) *ակորդի* այն հատկանիշը, որը բնորոշվում է նրա հիմքի ձայնով, ըստ այդմ *եռահնչյունը* կարող է հանդես գալ՝ ա) հիմնական դրությամբ, այսինքն՝ որպես հիմնական *ակորդ* ($_3^5$), բ) որպես *սեքստակորդ* ($_6$), գ) որպես *կվարտսեքստակորդ* ($_4^6$), *սեպտակորդը*՝ որպես ա) հիմնական *ակորդ* ($_7$), բ) *կվինտսեքստակորդ* ($_5^6$), գ) *տերցկվարտակորդ* ($_3^4$) և դ) *սեկունդակորդ* ($_2$): *Նոնակորդը* համարյա միշտ օգտագործվում է հիմնական դրությամբ և այդ պատճառով նրա շրջվածքները մինչև հիմա սահմանված անուններ չունեն: Տես՝ *ակորդների շրջում, եռահնչյունի շրջվածքներ, սեպտակորդի շրջվածքներ:*



ԱԿՈՐԴԻ ԼԱՅՆ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. широкое расположение аккорда) տես՝ *ակորդի դասավորություն:*

ԱԿՈՐԴԻ ԽԱՌԸ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. смешанное расположение аккорда) տես՝ *ակորդի դասավորություն:*

ԱԿՈՐԴԻ ԽԻՏ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, նույնն է՝ *ակորդի նեղ դասավորություն:*

ԱԿՈՐԴԻԿԱ, նույնն է՝ *ակորդագիտություն:*

ԱԿՈՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ (ռուս. структура аккорда), *ակորդ* կազմող տ ո ն ե ր ի (հնչյունների) *ինտերվալային հարաբերակցությունը,* որը հնարավորություն է տալիս որոշելու՝ ա) ինչ կառուցվածքի է *ակորդը. տերցիային,* թե այլ (օր. *կվարտային*), հ ա ր մ ո ն ի ա յ ի դասընթացում ուսումնասիրվում են միայն *տերցիային կառուցվածքի ակորդներ* և սովորաբար *ակորդ* ասելիս հասկացվում է *տերցիային կառուցվածքի ակորդ,* իսկ երբ հարկ է լինում խոսել այլ կառուցվածքի ա կ ո ր դ ն ե ր ի մասին, ապա միայն այդ դեպքում է նշվում նրանց կառուցվածքը (օր. *կվարտային*), բ) ինչ *ինտերվալներից* է կազմված *տերցիային կառուցվածքի ակորդներից* յուրաքանչյուրը:

ԱԿՈՐԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. основное положение аккорда) *ակորդի* այն դրությունը, երբ նրա հիմքում (ներքևի ձայնում) գտնվում է *հիմնական տոնը:* Տես՝ *ակորդների շրջում:*

ԱԿՈՐԴԻ ՄԵԼՈԴԻԿ ԴՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. мелодическое положение аккорда) *ակորդի* վերևի ձայնով (գագաթով, իսկ *քառաձայն դարսվածքում՝ սոպրանոյով* կամ *մեղեդիով*) բնորոշվող հատկանիշը: Ըստ այդմ, *եռահնչյունը* կարող է գտնվել. ա) *հիմնական տոնի* (կամ՝ *պրիմայի*), բ) *տերցիային տոնի* (կամ՝ *տերցիայի*), գ) *կվինտային տոնի* (կամ՝ *կվինտայի*) *մելոդիկ դրության* մեջ, *սեպտակորդը* նաև դ) *սեպտիմային տոնի* (կամ՝ *սեպտիմայի*), իսկ *նոնակորդը* ե) *նոնային տոնի* (կամ՝ *նոնայի*) *մելոդիկ դրության* մեջ: Հարկ եղած դեպքում ա. մ. դ. նշանակվում են այդ *ինտերվալներին* համապատասխան արաբական թվանշաններով՝ 1, 3, 5, 7, 9:




ԱԿՈՐԴԻ ՆԵՂ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. тесное расположение аккорда) տես՝ *ակորդի դասավորություն:*

ԱԿՈՐԴԻ ՍԵՂՄ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. сжатое расположение аккорда) իմաստով նույնն է՝ *ակորդի նեղ դասավորություն:*

ԱԿՈՐԴՆԵՐԻ ՀԱՐՄՈՆԻԿ ՄԻԱՑՈՒՄ (ռուս. гармоническое соединение аккордов), տես՝ *ակորդների միացման ձևեր:*

ԱԿՈՐԴՆԵՐԻ ՄԵԼՈԴԻԿ ՄԻԱՑՈՒՄ (ռուս. мелодическое соединение аккордов), տես՝ *ակորդների միացման ձևեր:*

ԱԿՈՐԴՆԵՐԻ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎԵՐ (ռուս. виды соединения аккордов) *ակորդները* կարող են միացվել երկու ձևով՝ *հարմոնիկ* և *մելոդիկ:* Հ ա ր մ ո ն ի կ միացման դեպքում ընդհանուր տ ո ն ե ր ը մնում են տեղում՝ միևնույն ձայնում: Հ ա ր մ ո ն ի կ կարող են միացվել *կվարտա-կվինտային* և *տերցիային* փոխհարաբերության մեջ գտնվող բոլոր տեսակի *ակորդները* (*եռահնչյուն, սեպտակորդ, նոնակորդ*) և *սեկունդային* փոխհարաբերության մեջ գտնվող *սեպտակորդները*, որոնց մեջ ընդհանուր տ ո ն ե ր կան: Մ ե լ ո դ ի կ միացման դեպքում բոլոր ձայները շարժվում են ընդհանուր տ ո ն ե ր ի առկայությունից անկախ: *Սեկունդային* փոխհարաբերության մեջ գտնվող ե ռ ա հ ն չ յ ու ն ն ե ր ը կարող են միացվել միայն մ ե լ ո դ ի կ, որովհետև նրանք չունեն և ոչ մի ընդհանուր տ ո ն, իսկ *կվարտա-կվինտային* և *տերցիային* փոխհարաբերության ե ռ ա հ ն չ յ ու ն ն ե ր ն ու *սեպտակորդները* կարող են միացվել թե հ ա ր մ ո ն ի կ, թե մ ե լ ո դ ի կ:




ԱԿՈՐԴՆԵՐԻ ՇՐՋՈՒՄ (ռուս. обращение аккордов) *ակորդների* այն դրությունը, երբ ակորդային տոների տեղափոխման հետևանքով հիմքում (ներքևի ձայնում) հիմնական տ ո ն ի փոխարեն գրվում է *տերցիայինը, կվինտայինը* կամ *սեպտիմայինը:* Տես՝ *եռահնչյունի շրջվածքներ, սեպտակորդի շրջվածքներ:*

ԱԿՈՒՍՏԻԿԱ, ձ ա յ ն ա գ ի տ ո ւ թ յ ո ւ ն (հուն. akustikos-ից՝ լսելուն վերաբերող), 1) ձայնի ծագումն ու նրա նյութական հատկություններն ուսումնասիրող գիտություն, ֆիզիկայի բաժիններից մեկը: Երաժշտական ա. ուսումնասիրում է երաժշտական ձայների հ ա մ ա հ ն չ յ ու ն ն ե ր ի բնությունն ու հատկությունները, ինչպես նաև տարբեր երաժշտական սիստեմներ, երաժշտական ձայնի բարձրության, ուժգնության և հ ն չ ե ր ա ն գ ի. ընկալման օրինաչափություններ և երաժշտության հետ կապված մի շարք այլ երևույթներ, 2) բեմի, դահլիճի, սրահի, ձայնագրման ստուդիայի լսելիության որակը:


ԱՀԱՋԱՆԳ (ռուս. набат), թմբկազարկի կամ զանգերի միջոցով ազդարարվող տագնապի, աղետի ազդանշան:

ԱՁ, *առաջին ձայն:* Տես՝ *ձայն* III:

ԱՂԵՂ (ռուս. смычок, իտ. arco) փայտե ձողիկի երկու ծայրերին (գլխիկին և կոճղիկին) ամրացված սինթետիկ նյութերից կամ ձիու մազերի փունջ, որը լարերին քսվելով, հնչեցնում է դրանք: Պրոֆեսիոնալ աղեղնավոր նվագարանների (գործիքների) ա. բաղկացած են հետևյալ մասերից՝ *աղեղնափայտ* կոչվող ճկուն փայտից, որի վերին ծայրն ավարտվում է «S» (էս) կոչվող գլխիկով, ստորինը՝ կոճղիկով, և մետաղյա պտուտակից, որը կոճղիկն ամրացնում է աղեղնափայտին: Պտուտակը շարժվում է, կոճղիկն այս կամ այն չափով մոտեցնելով աղեղնափայտի ծայրին, այդպիսով ցանկացած ձգվածությունը տալիս գլխիկին և կոճղիկին ամրացված ժապավենաձև մազափնջին: Նվագելուց առաջ ա. մազերին *բևեկնախեժ (կոլոփոն)* են քսում, ավելի մաքուր և հնչեղ հնչում ստանալու համար: Ա. քսվելու հիմնական տեղը *հենարանի* (իշուկի) և *նվագակոթի* միջև ընկած տարածության կեսն է՝ ամենահագեցած և արտահայտիչ հնչումն է ստացվում: Երբ ա. լարին է քսվում *լարակալի* մոտ, արտաբերվում են հնչեղ, սակայն սուր հնչյուններ, և այդ տեղը նոտաներում նշանակվում է sul ponticello (իտ. սուլ պոնտիչելլո՝ հենարանի մոտ) բառերով, կրճատ՝ sul p: Մեղմ, նուրբ հնչյուններ ստանալու համար ա. մոտեցվում է ն վ ա գ ա կ ո թ ի ն, նշանակվում է sul tasto (իտ. սուլ տաստո՝ ն վ ա գ ա կ ո թ ի մոտ) բառերով, կրճատ՝ sul T: Լարերը երբեմն հնչեցվում են ոչ թե ա. մազափնջով, այլ աղեղնափայտի հարվածներով, արտաբերվում են չոր, հատու հնչյուններ: Ա. օգտագործման այդ եղանակը նոտաներում նշանակվում է col legno (իտ. կոլ լենյո՝ փայտով) բառերով, (հմմտ. *պիցցիկատո*):



ԱՂԵՂՆԱՓԱՅՏ, տես՝ *աղեղ:*



ԱՂԵՂՆԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ԳՈՐԾԻՔՆԵՐ) (ռուս. смычковые (музыкальные) инструменты) լարային նվագարաններ (գործիքներ), որոնք հիմնականում հնչեցվում են *աղեղով* (ա ղ ե ղ ը լարերին քսելով): Ժամանակակից *սիմֆոնիկ նվագախմբի* կազմի հիմնական մասն է հանդիսանում ա. ն. մի ամբողջ ընտանիք՝ *ջութակները, ալտերը* (առաջարկում ենք նաև *մեծ ջութակ* անվանումը), *թավջութակները, կոնտրաբասերը* (առաջարկում ենք նաև *բամբջութակ* անվանումը): Ա. ն. է նաև *վիոլան* իր բոլոր տարատեսակներով, ժողովրդական նվագարանները՝ *բյամանչան, բյամանին:* Տես՝ *լարային նվագարաններ (գործիքներ):*

ԱՂՄՈՒԿ (ռուս. шум) որոշակի բարձրություն չունեցող ձայն (ի տարբերություն երաժշտական ձայնի), որն առաջանում է հնչող մարմնի անհամաչափ տատանումների հետևանքով. մի շարք հարվածային երաժշտական գործիքների արձակած աղմուկը երաժշտական արտահայտչականության հավելյալ տարրն է:

ԱՄԲՈՂՋԱՏՈՆ ԳԱՄՄԱ (ռուս. целотонная гамма) *ամբողջատոն ձայնաշարի* վրա հիմնված *գամմա*, որում չեն զգացվում *լադային ձգողականության* օրինաչափությունները: Ա. գ. յուրաքանչյուր աստիճան իր նախորդից հեռացված է *մեծ սեկունդայով* կամ փոքրացրած *տերցիայով:* Բոլոր աստիճանների *եռահնչյունները* մեծացրած են, իսկ *կվարտաներն* ու *կվինտաները*՝ մեծացրած ու փոքրացրած, որի հետևանքով չեն զգացվում *ակորդների հարմոնիկ ֆունկցիոնալ հարաբերակցությունները:* Ա. գ. գրված երաժշտությունը թողնում է ֆանտաստիկ, միաժամանակ անկենդան ու անշարժ տպավորություն: Ա. գ. կարծես արհեստականորեն ստեղծված *գամմա* է, ուստի և օգտագործվում է հազվադեպ: Տես՝ *ամբողջատոն ձայնաշար:*



ԱՄԲՈՂՋԱՏՈՆ ՁԱՅՆԱՇԱՐ (ռուս. целотонный звукоряд) ամբողջ տ ո ն ե ր ո վ կառուցված *ձայնաշար*, որը բովանդակում է ընդամենը վեց հնչյուն, յոթերորդը, որը վեցերորդից վեր է նույնպես մեկ ամբողջ տ ո ն ո վ, առաջին աստիճանի կրկնությունն է՝ *օկտավա* վեր: Տես՝ *ամբողջատոն գամմա:*



ԱՄԲՈՂՋ ՆՈՏԱ (ռուս. целая нота) ժամանակակից նոտագրության մեջ տևողության հիմնական միավորի նշանը, որը մի քանի անգամ կիսվելով տալիս է նոտագրության մեջ գործածվող բոլոր տևողությունների մեծությունը: Տես՝ *տևողությունների զույգ բաժանում, բրեվիս:*

ԱՄԲՈՂՋ ՊԱՈՒԶԱ (ռուս. целая пауза) *պաուզա*, որը հավասար է ամբողջ *նոտայի* տևողությանը: Տես՝ *պաուզա:*

ԱՄԲՈՂՋ ՏՈՆ, տես՝ *տոն* (2-րդ իմաստով):

ԱՄԲՐՈՍՅԱՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. амвросианское пение) Միլանի եպիսկոպոս հայր Ամբրոսիի անունով, որը 374 թ. կաթոլիկ եկեղեցում հաստատեց արարողական երգեցողություն (ամբրոսյան երգեցողություն): Արևելյան պաշտամունքների օրինակով, կաթոլիկ *ժամերգության* մեջ մտցրեց *հիմներ* և *անտիֆոններ:*

ԱՄԲՈՒՇՅՈՒՐ (ֆր. ambouchure-ից՝ բերան) շրթունքների և լեզվի դրվածքը, դրանց շարժունակությունը փողային նվագարաններ (գործիքներ) նվագելիս, որից և հիմնականում կախված է թե ձայնի գեղեցկությունը, թե ի ն տ ո ն ա ց ի ո ն ճշգրտությունը (մաքրությունը): Զարգացնել ա.՝ կնշանակի մարզել և ավելի շարժուն դարձնել շրթունքները, ծնոտի և բերանի մկանները: Ա. երբեմն շփոթում են *բերանոցի* հետ:

ԱՄՈՐՁԱՏ ԵՐԳԻՉՆԵՐ (ռուս. певцы кастраты) փոքր հասակում ամորձատված տղամարդ երգիչներ, որի հետևանքով նրանք պահպանել են մանկական բարձր ու զնգուն ձայներ: XVI դ. մինչև XX դ. սկիզբը ա. ե. երգում էին կաթոլիկ եկեղեցիներում, ստանձնելով բարձր, երբեմն նաև կանանց պարտիաներ, քանի որ կանայք իրավունք չունեին մասնակցել ժամերգության: XVII դ. մինչև XIX դ. կեսերը ա. ե. հաճախակի հանդես են եկել նաև օպերային թատրոններում, դյուրությամբ կատարելով ս ո պ ր ա ն ո ն ե ր ի՝ տեխնիկապես բարդ պ ա ր տ ի ա ն ե ր ը, այդ իսկ պատճառով կոչվում էին նաև *սոպրանիստներ:*

ԱՄՊԼԻՏՈՒԴ (լատ. amplitudo՝ մեծություն) հնչող մարմնի տատանման թափը, տատանվող մարմնի առավել շեղվածության մեծությունը հավասարակշռության դիրքից: Ձայնի ուժգնությունը կախված է ա.՝ որքան մեծ է, այնքան ավելի ուժգին է հնչում ձայնը, և ընդհակառակն:

ԱՄՊԼՈՒԱ (ֆր. emploi՝ դեր) դերասանի ձիրքին, ֆիզիկական և վոկալ տվյալներին առավել համապատասխան բնույթի դերեր, օր. *տրագիկ, կոմիկ, սիրահար, ռեզոնյոր* (խրատամոլ, բարոյաբան), *ինժենյու* (անփորձ, միամիտ օրիորդ), *սուբրետուհի* (ժիր, խորամանկ, զվարթաբարո) և այլն:

ԱՅԾԵՄԱՐԴԻ ՍՐԻՆԳ, նույնն է՝ *Պանի սրինգ:*

ԱՆԳԼԵԶ (ֆր. anglaise՝ անգլիական) եվրոպական մի շարք երկրներում՝ անգլիական ծագում ունեցող ժողովրդական տարբեր պարեր: Տես՝ *էկոսեզ, կոնտրդանս:*

ԱՆԳԼԱԿԱՆ ԵՂՋՐԱՓՈՂ (իտ. corno inglese, ռուս. английский рожок) *ալտային հոբոյ* (կամ *ալտ-հոբոյ*), որը սխալ անվանում է ստացել ֆրանսերեն cor anglai (կոռ

անգլէ՝ անկյունաձև եղջրափող)-ը cor anglais (անգլիական եղջրափողի)-ի հետ շփոթելու հետևանքով: Սկզբնական շրջանում անկյունձև էր և կոչվում էր oboe da cassia (իտ. օբոե դա կասսիա՝ որսորդական հոբոյ): *Հոբոյի* տարատեսակն է, քիչ ավելի մեծ, սակայն նույն կառուցվածքի, ձայնը ավելի թանձր է ու ռնգային, փափուկ և հագեցած, հյութեղ, արտահայտիչ հնչերանգ ունի, տեխնիկապես ավելի քիչ շարժուն է: Նոտագրվում է ջութակի բանալիով: *Ձայնածավալը* ըստ գրության նույնն է, ինչ *հոբոյինը*, սակայն հանդիսանալով *ֆա լարվածքի* (in F) *փոխադրող նվագարան* (գործիք)՝ հնչում է գրվածից մաքուր կվինտա ցած, նվագախմբերում օգտագործվում է որպես նվագակցող և մենակատար նվագարան (գործիք): Տես՝ *հոբոյ:*

ԱՆԴԱՆՏԵ (իտ. andante, andare-ից՝ գնալ) 1) դանդաղ *տեմպ*, որը համապատասխանում է մարդու զարկերակի նորմալ զարկերին կամ հանգիստ քայլքին, 2) այդ *տեմպով* գրված երաժշտական *պիեսի* կամ *ցիկլային* (բազմամաս) ստեղծագործության (*սիմֆոնիա, սոնատ, կվարտետ* և այլն) որևէ մասի անվանում, եթե այլ անվանում չունի:

ԱՆԴԱՆՏԻՆՈ (իտ. andantino, *անդանտեի* նվազականը) 1) *անդանտեից* քիչ ավելի արագ *տեմպ*, 2) այդ *տեմպով* գրված երաժշտական ստեղծագործության կամ նրա մասերից մեկի անվանումը, եթե այլ անվանում չունի:

ԱՆԿԱՏԱՐ ԶԱՐՏՈՒՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. несовершенная модуляция), տես՝ *զարտուղություն:*

ԱՆԿԱՏԱՐ ԿԱԴԱՆՍ (ռուս. несовершенный каданс), տես՝ *կադանս:*

ԱՆԿԱՏԱՐ ԿԱԴԵՆՑԻԱ (ռուս. несовершенная каденция) նույնն է՝ *անկատար կադանս:*

ԱՆՀԱՄԱՉԱՓ ՏԱԿՏԵՐ (ռուս. несимметричные такты) նույնն է՝ *խառը չափ:*

ԱՆՀԱՎԱՍԱՐԱՉԱՓ ՏԵՄՊԵՐԱՑՎԱԾ ԼԱՐՎԱԾՔ (ռուս. неравномерно-темперированный строй) օկտավայի բաժանումը 12, երբեմն ավելի (14, 31) անհավասար մասերի: Դրանցում *Պյութագորասի* կամ *սինտոնիկ կոմայի* անհավասար էր բաժանվում *օկտավայում* պարունակվող բոլոր հնչյունների միջև, այդ իսկ պատճառով նույնանուն *ինտերվալները* հիմնականում անհավասար էին (օր. դո-դո ♯ -ը և դո-ռե ♭ -ը հավասար չեն), ինչի հետևանքով բացակայում էր *էնհարմոնիզմը*, թեև հետագայում մի քանի հնչյուններ *էնհարմոնիկորեն* հավասարվեցին: Ա. տ. լ. կարելի էր նվագել սահմանափակ տոնայնություններում (2—3 դիեզավոր կամ բեմոլավոր), որոնցում կային կեղծ, ոչ ճիշտ հնչող ինտերվալներ և ակորդներ, սակայն այդ լարվածքները, մինչև *հավասարաչափ տեմպերացված լարվածքի* վերջնական հաստատումը, դարերի ընթացքում բավարարել են տվյալ ժամանակաշրջանների երաժշտական պահանջները:

ԱՆՀԵՄԻՏՈՆԱՅԻՆ ՁԱՅՆԱՇԱՐ (ռուս. ангемитонный звукоряд, հուն. an՝ առանց, hemi՝ կիսա, ton՝ հընչյուն) առանց կիսատոների ձայնաշար (հմմտ. *պենտատոնիկա*), հակառակ հասկացությունն է՝ *հեմիտոնային ձայնաշարը*՝ կիսատոներով ձայնաշար:

ԱՆՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ (ռուս. дисгармония), *դիսհարմոնիա*, ներդաշնակության բացակայություն (անհամաձայնություն, անհամերաշխություն):

«ԱՆՇԱՐԺ ՍՏԱԿԱՏՈ» (գերմ. stehende՝ անշարժ, կանգնած) աղեղնավոր նվագարանների (գործիքների) *շտրիխ*, ցատկող աղեղի այնպիսի շարժում, որի ժամանակ նվագողի ձեռքը ամեն հնչյունից հետո վերադառնում է ելակետին և ստեղծում այն տպավորությունը, որ աղեղը տեղից չի շարժվում: *Շտրիխը* օգտագործվում է մեկ *լիգայի* տակ գտնվող մեծ քանակությամբ նոտաներ կատարելիս (ոչ արագ *ստակկատո*):



ԱՆՇԼԱԳ (գերմ. Anschlag՝ ազդ, աֆիշ) թատրոնում, համերգասրահում, կրկեսում, այլ հանդիսավայրերում հայտարարություն առ այն, որ տվյալ համերգի, ներկայացման բոլոր տոմսերը վաճառված են:

ԱՆՈՆՍ (ֆր. annonce՝ հայտարարություն, ծանուցում) նախնական հայտարարություն սպասվող գաստրոլների, համերգների, ներկայացումների, կինոնկարների և այլնի մասին:

ԱՆՍԱՄԲԼ (ֆր. ensamble՝ միասին) 1) գեղարվեստական կատարողական միասնական միավոր կազմող երկու կամ ավելի մասնակիցների՝ երկձայն, եռաձայն, քառաձայն և այլն, համատեղ երգեցողությունը կամ նվագը: Երկու մասնակիցներով ա. կոչվում է *դուետ* (կամ՝ երկյակ), երեքինը՝ *տրիո, տերցետ* (կամ՝ եռյակ), չորսինը՝ *կվարտետ* (կամ՝ քառյակ), հինգինը՝ *կվինտետ (կամ՝* հնգյակ), վեցինը՝ *սեքստետ* (կամ՝ վեցնյակ), յոթինը՝ *սեպտետ* (կամ՝ յոթնյակ), ութինը՝ *օկտետ* (կամ՝ ութնյակ), իննինը՝ *նոնետ* (կամ՝ իննյակ): Որոշ ա. կարող են ունենալ գործիքային, նվագախմբային, երգչախմբային և այլ նվագակցություն, սակայն դրանք տվյալ ա. կազմի մեջ չեն: Ա. ամենահատկանշական կողմն այն է, որ յուրաքանչյուր մասնակից կատարում է իր առանձին *պարտիան*, որոնց միասնությունը կազմում է երաժշտական կատարվելիք ստեղծագործության ամբողջականությունը (փոքր կազմով երգչախմբերը կամ նվագախմբերը երբեմն նույնպես կոչվում են *անսամբլներ*), 2) երաժշտական ստեղծագործություն՝ գրված երկու կամ ավելի կատարողների համար, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ուրույն *մե-*

ղեդային գիծը (պարտիան): երեք և ավելի նվագարանների (գործիքների) համար գրված այն ստեղծագործությունները, որոնք ունեն *սոնատային ձև*, համապատասխանաբար կոչվում են *տրիո, կվարտետ, կվինտետ, սեքստետ* և այլն: Մնացյալը պիտի ունենան անվանումներ, օր.՝ Կոմիտաս-Ալամդարյան, «Գարուն ա», լարային քառյակի համար (տես՝ *տրանսկրիպցիա*), 3) որևէ ա., նվագախմբի կամ երգչախմբի կատարման որակն արտահայտող հասկացություն, գնահատական: Տես՝ *պերսիմֆանս, երգի-պարի անսամբլ, պարի անսամբլ, երգի անսամբլ, կամերային անսամբլ:*

ԱՆՎԵՐՋ ԿԱՆՈՆ (ռուս. бесконечный канон) այնպիսի *կանոն*, որի կառուցվածքը հնարավորություն է տալիս կրկնել դա «անվերջ» ա. կ. մեղեդու վերջը անցնում է սկզբին կամ միանում սկզբի հետ (այլ կերպ՝ վերջն ու սկիզբը հնչում են միաժամանակ): Սովորաբար գրի է առնվում որպես մեկ ամբողջական *մեղեդի*, որը կատարում են երկու կամ ավելի ձայներ, ըստ որում *կանոնը* սկսում են կատարել ոչ միասին, այլ տարբեր ժամանակ, իրար հետևից, ըստ նշած *ինտերվալի* (եթե *իմիտացիան պրիմայի* չէ):

Ֆրանսիական կատակերգ «Երեքաբր ժակ»



ԱՆՎԵՐՋ ՄԵՂԵԴԻ (ռուս. бесконечная мелодия) ավարտված կառուցվածքով չամփոփվող, երկարատև, անընդհատ մեղեդիական զարգացում. հասկացությունը առաջին հերթին կապված է Ռ. Վագների երաժշտական դրամաների հետ:

ԱՆՏԻՖՈՆ (հուն. antiphōnos՝ ի պատասխան հնչող), *փոխերգ*, օրհներգություն, որ փոխնիփոխ կատարում են երկու երգչախմբեր, կամ երգչախումբը և մեներգիչը (քահանան): տես՝ *անտիֆոնային երգեցողություն:*

ԱՆՏԻՖՈՆԱՅԻՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. антифонное пение) երկու երգչախմբերի կամ մեներգչի և երգչախմբի փոխնիփոխ երգեցողությունը, որի կիրառումն առկա էր դեռևս հին Հունաստանում: Ա. ե. սկզբունքը լայնորեն կիրառել են բոլոր ժամանակների մի ամբողջ շարք կոմպոզիտորներ: տես՝ p e s p o n s o r i u m:

ԱՆՏԻՖՈՆԱՐԱՆ (իտ. antiphonario, ռուս. антифонарий) կաթոլիկ օրհներգությունների ժողովածու:

ԱՆՏՐԱԿՏ (ֆր. entr'acte՝ գործողության միջև) 1) նույնն է՝ ընդմիջում, 2) երաժշտություն, որը նախատեսված է կատարելու օպերային կամ այլ ներկայացման նշված երկու գործողությունների միջև: Սովորաբար կատարվում է ընդմիջումից հետո, մինչև հաջորդ գործողության վարագույրը բարձրանալը և փաստորեն դառնում այդ գործողության *նախանվագը*, օր. Բիզեի «Կարմեն» օպերայի 4-րդ գործողության ա.: Առաջին գործողությունից առաջ կատարվող երաժշտությունը կոչվում է *նախերգանք (ուվերտյուրա):*

ԱՆՏՐԵ (ֆր. entrée՝ մուտք) հանդիսավոր շքերթ՝ հյուրերի պարային մուտքը խնջույքի կամ պարահանդեսի դահլիճ: Նման ա. Ֆրանսիայում, Իտալիայում, Իսպանիայում բալետի նախատիպն են հանդիսացել:

ԱՆՏՐԵՊՐԵՆՅՈՐ (ֆր. entrepreneur՝ ձեռնարկատեր, ձեռնարկիչ) կապիտալիստական երկրներում թատրոնի (օպերային, օպերետային, էստրադային և այլն), կրկեսի, տեսարանային այլ ձեռնարկությունների մասնավոր ձեռնարկու, սեփականատեր, վարձակալ: տես՝ *անտրեպրիզ:*

ԱՆՏՐԵՊՐԻԶ (ֆր. entreprise) կապիտալիստական երկրներում՝ թատերական, ավելի ճիշտ, տեսարանային ձեռնարկություն: Ցարական Ռուսաստանում ա. երեք տեսակ գոյություն ուներ. ա) մասնավոր ա., որը պահում էր *անտրեպրենյորը*, բ) քաղաքային ա., որը պահում էր քաղաքային վարչությունը և գ) փայընկերական ա., որն ընդգրկում էր փայերով աշխատող բոլոր արտիստներին և որը ղեկավարում էր նրանցից մեկը:

ԱՆՏՈՒՐԱԺ (ֆր. entourage՝ միջավայր, շրջապատ) մենակատարների համերգին մասնակցող ուրիշ կատարողներ, օր. մեներգչի համերգին մեկ կամ մի քանի կատարող երաժիշտների ելույթները: XVIII — XIX դդ. մենակատարների համերգները մեծ մասամբ տեղի էին ունենում ա.: Ներկայումս տվյալ պրակտիկան սակավ է օգտագործվում:

ԱՆՑԿԱՑՈՒՄ (ռուս. проведение) 1) ֆ ու գ ա յ ի մասը, ուր ձայներից որևէ մեկում անցնում է թ ե մ ա ն՝ ամբողջությամբ, 2) ֆ ու գ ա յ ի այն մասի տարածված անվանումը, ուր ֆ ու գ ա յ ի մասնակցող բոլոր ձայներում թ ե մ ա ն անցնում է մեկ անգամ: Այս դեպքում թ ե մ ա յ ի հանդես գալը մեկ ձայնում կոչվում է մ ու տ ք: Մի քանի մուտքը (սակայն ոչ բոլոր ձայներում) կոչվում է ոչ լրիվ անցկացում: Միմյանց հաջորդող մուտքերի մեծ քանակությունը (յուրաքանչյուր ձայնում մեկ անգամից ավելի) կոչվում է չափից ավելի անցկացում:

ԱՆՑՄԱՆ ԿԱՄ ՋԱՐՏՈՒՂՈՂ ԱԿՈՐԴ (ռուս. модулирующий аккорд), տես՝ *զարտուղություն:*

ԱՆՑՈՂԻԿ ՋԱՐՏՈՒՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. проходящая модуляция), տես՝ *զարտուղություն:*

ԱՆՑՈՂԻԿ ՀՆՉՅՈՒՆ (ռուս. проходящий звук) երկու տարբեր բարձրություն ունեցող *ակորդային տոների* միջև գտնվող այն ո չ ա կ ո ր դ ա յ ի ն հնչյունը (կամ հընչյունները), որը հանդես է գալիս գ ա մ մ ա յ ա ձ և շարժման ժամանակ (վերընթաց կամ վարընթաց) մեկ *ակոր-*

դային տոնից մյուսին անցնելիս: Ա. հ. լինում են *դիատոնիկ* (եթե լադի հիմնական աստիճաններն են) և *խրոմատիկ* (եթե ձևափոխված աստիճաններն են): Ա. հ. կարող են հանդես գալ տակտի և թույլ, և ուժեղ մասերում (որոշ տեսաբաններ տակտի ուժեղ մասի ա. հ. համարում են չնախապատրաստված հապաղում): Ա. հ. կիրառվում են երկու, երեք, չորս ձայներում միաժամանակ: Տես՝ *ֆիգուրացիա:*

ԱՆՑՈՂԻԿ ԿՎԱՐՏՍԵՔՍՏԱԿՈՐԴ (ռուս. проходящий квартсекстаккорд) *կվարտսեքստակորդ*, որը գրվում է երկու *տերցիա* կազմող *ակորդային տոների* միջև անցնող *բասի* վրա: Հանդիպում է նույն աստիճանի *եռահնչյունի* և *սեքստակորդի* միջև, ինչպես նաև *սեպտակորդի* և նրա *շրջվածքների* միջև:

ԱՆՑՈՂԻԿ ՍԵՔՍՏԱԿՈՐԴ (ռուս. проходящий секстаккорд) *սեքստակորդ*, որը գրվում է երկու *տերցիա* կազմող *ակորդային տոների* միջև, անցնող բասի վրա, օր.՝ *մաժորում եռահնչյունի* և *սեքստակորդի* կամ *սեպտակորդի* և *կվինտսեքստակորդի* միջև, տակտի թույլ կամ համեմատական ուժեղ մասում: Ա. ս. կրկնապատկում է *տերցիային տոնը:*

ԱՆՑՈՂԻԿ ՆՈՏԱ (ռուս. проходящая нота) նույնն՝ է *անցողիկ հնչյուն:*

ԱՇՈՒՂ (արաբ. āšīḳ, սիրահար, ռուս. ашуг) ժողովրդական պրոֆեսիոնալ երգիչ, երաժիշտ, բանաստեղծ, երգահան Հայաստանում, Ադրբեջանում, Միջին Ասիայում և մի շարք արևելյան երկրներում: Ա. թեմատիկան բազմազան է՝ սիրային, խոհական, խրատական-բարոյախոսական, հերոսական, երգիծական, կատակային և այլն, երգելիս ա. մեծամասնությունն իրեն նվագակցում է *սազով* (հայ աշուղների շրջանակներում՝ նաև *քյամանչայով*, *քյամանիով*, *թառով*, նույնիսկ *ջութակով*, որը քյամանչայի պես դրվում էր ձախ ծնկանը): Ա. մրցել են իրար հետ՝ հանպատրաստից ստեղծագործելու, կատարողական վարպետության մեջ, և պարտվողը նվագարանը հանձնել է հաղթողին: Հայ ա. գոյությունը սկսվում է XVII դ., նրանք փոխարինելու եկան *տաղերգուներին* և *գուսաններին*, որոնց արվեստը պատմական մի շարք պատճառներով անհետանում էր (XVIII դ.): Ա. արվեստի անգերազանց ներկայացուցիչ է Սայաթ-Նովան, որի երգերը տարածված են ամբողջ Անդրկովկասում և երգվում են հայերեն, ադրբեջաներեն և վրացերեն:


ԱՉԵԼԵՐԱՆԴՈ (իտ. accelerando՝ աստիճանաբար) *տեմպի* աստիճանական արագացում:

ԱՉՉԱԿԱՏՈՒՐԱ (իտ. acciaccatura՝ համատեղ հարված) երգեհոնային և դաշնամուրային ստեղծագործություններում օգտագործվող (ներկայումս՝ հնացած) *ձայնազարդ. ակորդի* որևէ հնչյունի կամ առանձին հնչյունի հետ միաժամանակ վերցված նրա ստորին փոքր *սեկունդան*, որը սակայն անմիջապես հանվում էր: Ստացվում էր փոքր *սեկունդա* ներքև գտնվող յուրատեսակ *ֆորշլագ*, որը հընչում էր հիմնական նոտայի հետ միաժամանակ (փոխանակ քիչ առաջ հնչելու): Երաժիշտները հաճախ են օգտագործել ա., թեև հազվադեպ է նոտագրվել: Առանձին ձայնում ա. գրի էր առնվում փոքրիկ, *ֆորշլագանման* նոտայով, որի փայտիկը խազված էր, իսկ ակորդում՝ փոքրիկ թեք գծիկով: Ֆրանսերեն կոչվում է pinçe étouffé:



«ԱՊԱԳԱՅԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» (գերմ. Zukunftsmusick) տերմին, որն օգտագործվել է Ռ. Վագների նորարարական ստեղծագործական սկզբունքների նկատմամբ: ժամանակի ընթացքում «ա. ե.» արտահայտությունը գործածության մեջ է մտել և ստացել փոխաբերական իմաստ՝ «ապագա ժամանակների գործ», «հեռավոր ապագայի գործ»:

ԱՊԱԿՅԱ ՀԱՐՄՈՆԻԿԱ (ռուս. стеклянная гармоника) նվագարան, որի հնչող մասը պտտվող մետաղյա առանցքի վրա ամրացված ապակյա կիսագնդերի շարք է: Կիսագնդերը տարբեր մեծության են, դրան համապատասխան արձակում են տարբեր բարձրության հնչյուններ: Կիսագնդերի տակ, ամբողջ երկարությամբ հարմարեցված էր ջրաման, պտտվելիս կիսագնդերի եզրերը թրջվում էին և երբ նվագողը մատների ծայրերը քսում էր դրանց, շփումից կիսագնդերը հնչում էին: XVIII դ. վերջում ստեղծվեցին նաև ստեղնավոր ա. հ.: Մեկ դար առաջ դուրս է եկել գործածությունից:



ԱՊԱՍԻՈՆԱՏ (իտ. appassionata) կրքոտ, ոգեշնչված:
ԱՊԱՍԻՈՆԱՏՈ (իտ. appassionato) իմաստով նույնն է՝ *ապասիոնատ:*

ԱՊԼԻԿԱՏՈՒՐԱ (լատ. applicatura, applico-ից՝ դնում եմ վրան, սեղմում եմ, հպում եմ) տես՝ *մատադրում:*

ԱՊՈԹԵՈԶ (հուն. apothéōsis՝ աստվածացում) մի շարք օպերաների կամ այլ ներկայացումների, ինչպես նաև տոնական համերգների վերջին, հանդիսավոր պատկերը (մասը), որում մեծարվում և փառաբանվում է ժողովուրդը, հերոսը, հասարակական-պատմական իրադարձությունը և այլն: Ա., որոնց սովորաբար մասնակցում են մեծ թվով գործող անձինք, կրում են մոնումենտալ բնույթ և լի են ոգեշնչվածությամբ, թափով ու վեհությամբ:

ԱՌԱՋԻՆ ԲԱՍ (ռուս. первый бас) երգչախմբերում *բասերի պարտիան* կատարում են *բարիտոնները* և *բասերը*, իսկ երբ երգչախմբի *բասերը* բաժանվում են երկու խմբի, ապա առաջին *բասի* պ ա ր տ ի ա ն կատարում են *բարիտոնները*, երկրորդ բասինը՝ *բասերը:*

ԱՌԱՋԻՆ ԿՈՂՄ, կրճատ՝ **ԱԿ**, տես՝ *ձայն:*

ԱՌԱՋԻՆ ՁԱՅՆ, կրճատ՝ **ԱՁ**, տես՝ *ձայն:*

ԱՌԱՋԻՆ ՋՈՒԹԱԿ(ՆԵՐ) (ռուս. первая скрипка, первые скрипки) *լարային անսամբլներում, լարային, սիմֆոնիկ* և այլ նվագախմբերում տարբեր *պարտիաներ* կատարող երկու ջութակներից, կամ ջութակների խմբից այն, որը (կամ որոնք) կատարում է առաջին, առավել բարձր, պատասխանատու և արտահայտիչ *պարտիան:*

ԱՌԱՋԻՆ ՕԿՏԱՎԱ (ռուս. первая октава) տես՝ *օկտավա* (2-րդ իմաստով):

ԱՌԱՋՆՈՐԴ (լատ. dux, ռուս. вождь), տես՝ *ֆուգա:*

ԱՌՈԳԱՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. дикция), *դիկցիա*, բառերի պարզ և հասկանալի արտասանելու աստիճանը, որը երգչական (վոկալ) վարպետության շատ կարևոր կողմերից մեկն է հանդիսանում: Այն ստեղծագործություններում, որոնց խոսքն ու երաժշտությունը միասնականություն են կազմում (*երգ, ռոմանս, արիա* և այլն), երգչի վատ առոգանության դեպքում, վատ է ընկալվում ստեղծագործության բովանդակությունը, իջնում է կատարման որակը, դժվարանում (նույնիսկ տհաճ է դառնում) ընկալումը:

ԱՍՏԻՃԱՆ (ռուս. ступень) երաժշտական *ձայնաշարի, գամմայի, լադի* յուրաքանչյուր հնչյունը: *Լադն ունի* յոթ հիմնական հնչյուն (չհաշված *պենտատոնիկան, ամբողջատոն լադերը*), որոնցից յուրաքանչյուրը կարող է *ալտերացվել:* Այսպիսով, *լադի դիատոնիկ* (յոթնաստիճան) գամման դառնում է *խրոմատիկ* (տասներկու աստիճան): *Լադի* աստիճանները նշանակվում են հռոմեական թվանշաններով:

ԱՎԱԳ ԿՈՂՄ, տես՝ *երկրորդ կողմ:*

ԱՎԼՈՍ (հուն. aulós) Հին Հունաստանում և Առաջավոր Ասիայում տարածված հնագույն փողային նվագարան, կրկնակի *պիպիչով*, 4 — 15 անցքերով: Ա. սովորաբար երկփողանի էին, որոնցից յուրաքանչյուրը հիշեցնում էր ժամանակակից *հոբոյը: Զայնածավալը*՝ d(e) մինչև $d^3(e^3)$ (փոքր օկտավայի *ռե*-ից (*մի*-ից) մինչև երրորդ օկտավայի *ռե*-ն (*մի*-ն)), կիրառվում էր անտիկ ողբերգություններում, ռազմական երաժշտության մեջ, զոհաբերությունների ժամանակ:



ԱՎՏԵՆՏԻԿ ԼԱԴԵՐ (ռուս. автентические лады, հուն. authentikos-ից՝ իսկական, ստույգ), տես՝ *միջնադարյան լադեր:*

ԱՎՏԵՆՏԻԿ ԿԱԴԱՆՍ (ռուս. автентический каданс), տես՝ *կադանս:*

ԱՎՏԵՆՏԻԿ ԿԱԴԵՆՑԻԱ (ռուս. автентическая каденция), նույնն է՝ *ավտենտիկ կադանս:*

ԱՏԱԿԱ (իտ. attaca՝ կապիր, միացրու) 1) նշում այն մասին, որ բազմամաս երաժշտական ստեղծագործության հաջորդ մասը պետք է սկսել առանց դադարի (անմիջապես), 2) դաշնամուր նվագելիս՝ ձեռքերի հանկարծակի լարումը ուժեղ շեշտի համար, 3) ձայնական ապարատի շնչառական դրությունից երգչականի անցնելը:

ԱՏՈՆԱԼ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. атональная музыка) երաժշտություն, հիմնված *ատոնալության* վրա:

ԱՏՈՆԱԼՈՒԹՅՈՒՆ (ռուս. атональность) *տոնայնությունից*, ավելի ճիշտ՝ երաժշտության *լադային* հիմքից հրաժարվելը, ա. հատկանիշը *տոնիկայի* բացակայությունն է, առաջացել է դարասկզբին և հաստատուն տեղ գտել նոր վիեննական դպրոցի կոմպոզիտորների (Ա. Շյոնբերգ, Ա. Բերգ, Ա. Վեբեռն) ստեղծագործություններում: Ա տ ո ն ա լ երաժշտության գեղագիտական սկզբունքները սերտորեն կապված են *էքսպրեսիոնիզմի* հետ:

ԱՐԱԲԵՍԿ (ֆր. arabesque, իտ. arabesko՝ արաբական)

ձ ա յ ն ա զ ա ր դ ե ր ո վ լի, նուրբ և ճկուն, վայելչագեղ, գալարուն *մելոդիկ գիծ* ունեցող երաժշտական փոքրիկ *պիես*: Դաշնամուրի համար ա. գրել են Շումանը, Լյադովը, Արենսկին, Դեբյուսին և ուրիշներ, նվագախմբի համար՝ է. Վոլֆ-Ֆերրարին:

ԱՐԱԳ ՔԱՅԼ (ռուս. скорый марш), տես՝ *ռազմերթի քայլերգ:*

ԱՐԱԿԱՆ ԵՐԳՉԱՁԱՅՆԵՐ (ռուս. мужские /певческие/ голоса) *տենոր, բարիտոն, բաս,* տես՝ *երգչաձայն:*

ԱՐԱՆԺԵՎՈՐՈՒՄ (ռուս. аранжировка, ֆր. arranger-ից՝ կարգի բերել, սարքել (*վերամշակում*, որևէ նվագարանի (գործիքի) համար գրված ստեղծագործության հարմարեցումը մեկ ուրիշ նվագարանով (կամ երգչաձայնով, երգչախմբով, նվագախմբով և այլն) կատարելու համար: Կարելի է նաև երգը, ռոմանսը հարմարեցնել նվագարանով (նվագախմբով, երգչախմբով և այլն) կամ կատարելու, իսկ նվագախմբի համար գրված ստեղծագործությունը դաշնամուրով (երկու կամ չորս ձեռքով) կատարելու համար: Ա. կոչվում է նաև որևէ ստեղծագործության հեշտացված շարադրումը:

ԱՐԱՐ, տես՝ *գործողություն:*

ԱՐԱՐՎԱԾ, տես՝ *գործողություն:*

ԱՐԻԱ (իտ. aria՝ երգ, մեղեդի) 1) *օպերայի, օրատորիայի, կանտատի* և նման այլ ստեղծագործությունների մեջ մըտնող ավարտված հատված, որը կատարում է մեներգիչը (մեներգչուհին) սիմֆոնիկ նվագախմբի նվագակցությամբ, կամ երգչախմբի հետ: Ա. գործող անձի երաժշտական մենախոսությունն է, որով արտահայտում է իր ապրումները, խոհերը, դրսևորում շրջապատող մարդկանց, իրադարձությունների հանդեպ իր վերաբերմունքը: Օպերաներում յուրաքանչյուր գլխավոր գործող անձ (երկրորդականները՝ ավելի սակավ) մեկ կամ մի քանի ա. ունեն: Տարատեսակներն են *արիետան, արիոզոն, կավատինան, արիա դա կապո* և այլն, 2) տես՝ *համերգային արիա*, 3) երգային բնույթի գործիքային ստեղծագործություն, 4) ա. էին կոչվում Բախի ժամանակաշրջանի գործիքային *սյուիտների* այն մասերը, որոնք գրված էին ոչ պարային ձևով:


ԱՐԻԱ ԴԱ ԿԱՊՈ (իտ. da capo, բառացի՝ գլխից, իմա՝ սկզբից), եռամաս այնպիսի *արիա*, որի երրորդ մասը առաջինի ստույգ կրկնությունն է, այդ իսկ պատճառով երրորդ մասը գրի չէր առնվում, փոխարենը երկրորդ մասի վերջում գրվում էր da capo al Fine՝ դա կապո ալ ֆինե՝ կրկնել սկզբից մինչև Fine (վերջ) բառը: Մեծ տարածում ուներ XVII — XVIII դդ.:

ԱՐԻԵՏԱ (իտ. arietta՝ փոքրիկ արիա), մեծ մասամբ պարզ կառուցվածք և երգային բնույթ ունեցող *արիա:*

ԱՐԻՈԶՈ (իտ. arioso՝ արիայի նման) 1) ազատ կառուցվածքի քնարական կամ դրամատիկ բնույթի փոքրածավալ *արիա*, սովորաբար գտնվում է *թվերգի (ռեչիտատիվ)* միջում, կամ վերջում, երբեմն նշանակում է նույնը, ինչ *արիետան*, 2) կատարման արիանման, երգեցիկ բնույթ:

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՖԼԱԺՈԼԵՏՆԵՐ (ռուս. искусственные флажолеты), տես՝ *ֆլաժոլետ:*

ԱՐՊԵԶՈ (իտ. arpeggio, arpeggiare՝ *տավիղ (արֆա)* նվագել) *ակորդ*, որի հնչյունները կատարվում են ոչ թե միաժամանակ, այլ արագընթաց հաջորդականությամբ, մեծ մասամբ՝ վարից վեր, նշանակվում է կամ arpeggio (կրճատ՝ arp.) կամ *ակորդի* ձախ կողմից դրված ուղղահայաց ալիքաձև գծով:



Հազվադեպ լինում են նաև այսպիսի նշանակումներ՝



ԱՐՍ ՆՈՎԱ (լատ. ars nova՝ նոր արվեստ) վաղ վերածնության շրջանի առաջադիմական ուղղություն երաժշտական ստեղծագործության և երաժշտության տեսության մեջ, հիմնական օջախներն էին Փարիզը և Ֆլորենցիան: Իտալական ա. ն., ի տարբերություն ֆրանսիականի, հաճախ կոչվում է *տրեչենտոյի* (այսինքն՝ XIV դ.) երաժշտություն: Ականառու ներկայացուցիչներն էին Գիյոմ դը Մաշոն (Ֆրանսիայում) և Ֆ. Լանդինոն (Իտալիա): Ա. ն. բնորոշ ժանրերն են *մոտետը, բալլադը, մադրիգալը* (իրենց սկզբնական ձևով), նաև *կաչչան* (շասս) և *ռոնդոն:*

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ (ռուս. доктор искусствоведения, доктор искусствоведческих наук), ՍՍՀՄ-ում գիտական բարձրագույն աստիճան, որը շնորհվում է արվեստի տարբեր բնագավառների (այդ թվում՝ երաժշտության) այն գիտական աշխատողներին, որոնք պաշտպանում են դոկտորական դիսերտացիա և, որպես կանոն, մինչ այդ ունեցել են *արվեստագիտության թեկնածուի* աստիճան: Երբեմն դոկտորի աստիճան է շնորհվում առանց դոկտորական և թեկնածուական դիսերտացիաների պաշտպանման՝ անառարկելի և ականառու նվաճումների պատկառելի քանակություն ստեղծելու համար:

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ (ռուս. кандидат искусствоведения, кандидат искусствоведческих наук) ՍՍՀՄ-ում *արվեստագիտության դոկտորին* նախորդող գիտական աստիճան, որը շնորհվում է արվեստի, այդ թվում երաժշտության գծով բարձրագույն կրթություն ունեցող այն անձանց, ովքեր ավարտել են ասպիրանտուրան (կամ հանձնել են թեկնածուական մինիմումը)


և պաշտպանել թեկնածուական դիսերտացիա: Թեկնածուական դիսերտացիային փոխարինել կարող են գիտական որոշակի արժեք ներկայացնող հրապարակված աշխատությունները:

ԱՐՎԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ (ռուս. заслуженный деятель искусств) միութենական և ինքնավար հանրապետությունների Գերագույն Սովետների նախագահության կողմից արվեստի աշխատողներին շնորհվող պատվավոր կոչում (կոմպոզիտորներին, նկարիչներին, քանդակագործներին, ճարտարապետներին, ռեժիսորներին և արվեստի այլ աշխատողներին)՝ գեղարվեստական բարձրարժեք ստեղծագործությունների, գիտական աշխատությունների, ակնառու բեմադրությունների համար: Ա. վ. գ. կոչումը սահմանված է 1931 թ.:

ԱՐՏԻԿՈՒԼԱՑԻԱ (լատ. articulatio, articulare-ից՝ մասնատել, պարզորոշ արտասանել) նվագվող կամ երգվող հնչյունների հաջորդականության կատարման կերպը (եղանակը, ձևը): Ա. ընդգրկում է բազմաթիվ ձևեր, որոնցից հիմնականներն են՝ *լեգատոն, ստակատոն*, իրենց տարատեսակներով (օր. *նոն լեգատո, լեգատիսսիմո*), ա. են համարվում նաև մեկ ձայնից մյուսին սահուն անցնելու ձևերը՝ *պորտամենտոն և գլիսանդոն:* Երաժշտական ստեղծագործության ճիշտ մեկնաբանման, գեղարվեստական արտահայտչականության համար ա. կարևոր նշանակություն ունի: Տես՝ *շտրիխ:*

ԱՐՏԻՍՏ (ֆր. artiste, լատ. ars,artis-ից՝ արվեստ, արվեստով զբաղվող), արվեստի այն աշխատողը, որն իր կատարողական վարպետությունը դրսևորում է հասարակության առաջ (երգիչ, երաժիշտ, դերասան): Ավելի լայն առումով՝ նաև յուրաքանչյուր ստեղծագործող արվեստագետ (նկարիչ, քանդակագործ, ճարտարապետ և այլն):

ԱՐՖԱ (գերմ. Harfe) եռանկյունաձև *լարային կսմիթային* հնագույն նվագարան (գործիք): Ժամանակակից ա. ունի



դիատոնիկ լարված 46 լարեր (Ces₁ — g⁴)՝ *կոնտրօկտավայի դո բեմոլ*-ից մինչև չորրորդ *օկտավայի սոլ*-ը: Եղել են նաև *խրոմատիկ* լարվածքով ա., որոնցով նվագելը մեծ դժվարություններ էր հարուցում, իսկ ներկայումս *խրոմատիկ* ձայներ ստանալու համար ա. վրա հարմարեցված են կրկնակի գործողության ոտնային յոթ սարքեր, որոնցից յուրաքանչյուրը կարող է բարձրացնել կես կամ մեկ տոնով բոլոր օկտավաներում գտնվող միևնույն անվան լարերը: Նոտագրվում է երկու հնգագծի վրա, ջութակի և բասի բանալիներով, բազմազան է նվագելու տեխնիկան՝ կարելի է կատարել *ակորդներ, գամմայական պասաժներ, արպեջոներ, ֆլաժոլետներ, գլիսանդո* և այլն: Օգտագործվում է որպես նվագախմբային, անսամբլային և մենակատար նվագարան (գործիք), սիմֆոնիկ նվագախմբերում սովորաբար կիրառվում են երկու ա.՝ *արֆա պրիմա* և *արֆա սեկունդա*: Տես՝ *տավիղ* (2-րդ հմաստով):

Բ

ԲԱԳԱՏԵԼ (ֆր. bagatelle՝ աննշան, չնչին բան) գերազանցապես դաշնամուրի, ինչպես նաև այլ նվագարանների (գործիքների) և գործիքային անսամբլների համար գրված երաժշտական մանրանվագ:

ԲԱԶՄԱԹԵՄԱՅՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. многотемность, политематизм) երաժշտական ստեղծագործությունը երկու կամ ավելի հակադրական (կոնտրաստային) թեմաներով կառուցելու *կոմպոզիցիոն* սկզբունք, որը կիրառվում է *սոնատային* և մի շարք այլ ձևերում, հակադրվում է *թեմայնություն* հասկացությանը:

ԲԱԶՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. многоголосие) երաժշտության այնպիսի կազմություն, որն իրենից ներկայացնում է միաժամանակ հնչող երկու կամ ավելի տարբեր մեղեդիների (մելոդիկ գծերի) միասնություն: Տարբերում են բ. հետևյալ երկու տեսակներ՝ ա) *պոլիֆոնիա* — միաժամանակ հնչող մեղեդիներից յուրաքանչյուրն ինքնուրույն է և մնացածների հետ համահավասար նշանակություն ունի, բ) *հոմոֆոնիա* — մեկ ձայնը գերիշխում է, իսկ մնացածները երկրորդական, ենթակա դեր են կատարում: Գոյություն ունի նաև *պոլիֆոնիկ — հոմոֆոնիկ* բ., որը հանդիսանում է այդ երկուսի միակցությունը:

ԲԱԶՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ (ռուս. полиметрия) երկու կամ ավելի տարբեր չափերի զուգակցումը բազմաձայն երաժշտական ստեղծագործության մեջ, օր. առաջին ձայնում՝ 3/4, երկրորդում՝ 4/4, երրորդում՝ 3/8 և այլն:



ԲԱԶՄԱՌԻԹՄՈՒԹՅՈՒՆ (ռուս. полиритмия) երկու կամ ավելի այնպիսի *ռիթմերի* համատեղում, որոնք երբեք համընկնել չեն կարող, օր.՝ երկու ութերորդական նոտաները *տրիոլների, կվինտոլների, սեպտիմոլների* հետ չորս տասնվեցերորդական նոտաները *տրիոլների* հետ և այլն: Բ. ժամանակ *տակտի* ուժեղ մասերը բոլոր ձայներում համընկնում են: Տես՝ *պոլիռիթմիա, բազմաչափություն:*




ԲԱԶՄԱՍԵՐԻԱՅՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. полисериальность), տես՝ *սերիային տեխնիկա:*

ԲԱԶՄԱՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. политональность, ֆր. politonalite) մի քանի տարբեր տոնայնությունների միաժամանակյա զուգորդումը (այսինքն՝ դրանց հընչման միաժամանակությունը) երաժշտական ստեղծագործության մեջ: Մեծ տարածում է գտել XX դ. երաժշտության մեջ, երաժշտական արտահայտչամիջոց է, որի հաջող կիրառումը գեղարվեստական մեծ էֆեկտ է հարուցում: Տես՝ *երկտոնայնություն:*



ԲԱԼԱԼԱՅԿԱ (ռուս. балалайка) ռուսական կսմիթային ազգային նվագարան: Ունի երեք լար և եռանկյունի



իրան, երևան է եկել XVIII դ. սկզբին և աստիճանաբար փոխարինել *դոմրային:*

ԲԱԼԵՏ (ֆր. ballet, իտ. balletto, ballare-ից՝ պարել), *թատերապար,* 1) պարարվեստը, երաժշտությունը և դրամատիկ մտահղացումը միավորող թատերական-բեմական արվեստ, ներկայացման բովանդակությունը դրսևորվում է պարարվեստի և մնջախաղի (դիմախաղի և պլաստիկ շարժումների) միջոցով: Տարբերում են *դասական պարը* (գերիշխողն է) և *բնահատուկ պարը* (մոտ է ժողովրդականին): Բ. սկզբնաղբյուրները կապված են ժողովրդական թատրոնի պարային տարրերի և ժողովրդական պարերաժշտության հետ, 2) հատկապես գրված սյուժեով երաժշտական-դրամատիկ ստեղծագործություն, որի բեմադրումը իրագործվում է երաժշտության, պարի, մնջախաղի միջոցով: Բ. երաժշտության առաջին նշանավոր դեմքն է համարվում Լյուլլին (Ֆրանսիա, XVII դ.), բ. երաժշտության զարգացման համար բացառիկ նշանակություն ունեցան Պ. Ի. Չայկովսկու բալետները, բ. երաժշտություն են գրել Գլյուքը, Դելիբը, Դեբյուսին, Ստրավինսկին, Գլազունովը, Պրոկոֆևը, Գլիերը, Խաչատրյանը և ուրիշներ:

ԲԱԼԵՏԱԽՈՒՄԲ (ռուս. кордебалет) պարողների և պարուհիների խումբ, որը կատարում է մասսայական պարեր և տեսարաններ: Տես՝ *կորդբալետ:*

ԲԱԼԵՏԻ ՊԱՐԱԽՈՒՄԲ, տես՝ *կորդբալետ:*

ԲԱԼԵՏՄԱՅՍՏԵՐ (գերմ. Ballettmeister՝ բալետի վարպետ) բալետի, օպերայի, օպերետային, դրամատիկ թատրոնի, կինոյի, ինչպես նաև համերգային կատարման հեղինակ՝ համար առանձին պարերի խորեոգրաֆիկ (պարային) մասի հորինողն ու բեմադրողը:

ԲԱԼԵՐԻՆԱ-ՆՈ (իտ. ballerina-no, բալետի պարուհի, պարող) բալետի արտիստուհի, արտիստ, պարուհի, պարող:

ԲԱԼԼԱԲԻԼԵ (իտ. ballabile՝ պարային, բալետ) 1) բալետը եզրափակող ընդհանուր պար, կամ նրա գործողություններից մեկը, 2) օպերայի մեջ մտնող պարային *դիվերտիսմենտ:*


ԲԱԼԼԱԴ (ռուս. баллада, իտ. ballata, լատ. ballo-ից՝ պարում եմ) 1) միջնադարում այսպես էր կոչվում պարն ուղեկցող սովորական պարզ երգը (պարերգը) հետագայում՝ պատմողական բնույթի երգերը: Բ. ենթարկվել է մի շարք փոփոխությունների և տարբեր ժամանակաշրջաններում ու տարբեր երկրներում բնորոշվել է տարբեր հատկանիշներով: Պրոֆեսիոնալ երաժշտության մեջ բ. որպես երգեցողական ժանր սկսեց զարգանալ XVIII դ. վերջից: Ռոմանտիկ բ. քիչ տեղ չի գրավում նաև ֆանտաստիկ, հեքիաթային տարրը: Սովետական երաժշտության մեջ բ. մեկնաբանվում է որպես պատմողական բնույթի դրամատիկ, հերոսական ժանր, 2) դաշնամուրի կամ այլ նվագարանի (գործիքի) համար գրված, հիմնականում

պատմողական բնույթի ստեղծագործություն: Առաջին անգամ դաշնամուրային բ. է գրել Շոպենը, հետագայում՝ Լիստը, Գրիգը, Ֆորեն, Բաբաջանյանը և ուրիշներ:

ԲԱԼԼԱԴԱՅԻՆ ՕՊԵՐԱ (ռուս. балладная опера), անգլ. ballad opera) հատկապես XVIII դ. տարածված *կոմիկական օպերայի* անգլիական տարատեսակը, որում հիմնականում օգտագործվում էին մեծ ժողովրդականություն վայելող երգեր, ամենացայտուն օրինակը «Մուրացիկի օպերան» է (տեքստը գրել է Ջ. Գրեյը, ինքն էլ հարմարեցրել հանրահայտ երգերի եղանակներ): Ստեղծագործությանը հաճախ տալիս են «Մուրացիկների օպերա» ոչ ճիշտ անվանումը:

ԲԱՂԱԴՐՈՎԻ ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐ (ռուս. составные интервалы) իմաստով նույնն է՝ *բարդ ինտերվալներ:*

ԲԱՅԱՆ (ռուս. баян) կատարելագործված *խրոմատիկ հարմոնիկա* Ռուսաստանում (Տուլա, 1870 թ.): Անվանումը ստացել է ռուս առասպելական երգիչ-բանաստեղծ Բայանի (կամ՝ Բոյանի) պատվին: Բոլոր ստեղները կոճականման են, կան «պատրաստի», «ընտրովի» կամ «ազատ» բ., որոնք տարբերվում են միայն ձախ ձեռքի ստեղնաշարերի կառուցվածքով: Ընտրովի բ. ձեռքի համար պատրաստի ակորդներ չկան, ձախ ձեռքի բոլոր ստեղնները մի քանի օկտավանոց խրոմատիկ ձայնաշար է, և բայանահարը, դաշնակահա-





րի նման ինքն է կազմում հարկ եղած ակորդները, կան բ., որոնց բասերը ռեգիստրային փոխարկիչի միջոցով կարելի է հնչեցնել օկտավաներով կամ *կվինտդեցիմաներով,* համերգային բ. ունեն ավելի մեծ ձայնածավալ, նոտագրվում են երկու իրար միացված նոտակիրների վրա, ջութակի և բասի բանալիներով: Կան նաև «հնչերանգային» բ., որոնց հնչերանգը նմանվում է սիմֆոնիկ նվագախմբի այս կամ այն նվագարանին: Բ. օգտագործվում է որպես մենակատարային, նվագակցող, անսամբլային և նվագախմբային նվագարան (գործիք): Տես՝ *հարմոնիկա:*

ԲԱՅԱՆԱՀԱՐՆԵՐԻ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ (ռուս. оркестр баянистов) նվագախումբ, որի կազմի մեջ են մտնում *բայաններ, հարմոններ, ակորդեոններ և կոնցերտինաներ:*

ԲԱՆԱԼԻԻ ՆՇԱՆՆԵՐ (ռուս. ключевые знаки) ալտերացիա (1-ին իմաստով), *ալտերացիայի նշաններ,* որոնք դրվում են բանալիից անմիջապես հետո և բնորոշում *լադատոնայնությունը:* Բ. Ն. ազդեցությունը տարածվում է բոլոր օկտավաների նոտաների վրա և ամբողջ ստեղծագործության ընթացքում կամ մինչև բ. Ն. փոփոխումը: Բ. Ն. ունեն իրենց որոշակի հաջորդայնությունը և գրառման ձևը: Տես՝ *պատահական նշաններ, կվինտային շրջան:*

ԲԱՆԱԼԻՆԵՐ (ռուս. ключи) 1) երաժշտական *ձայնաշարի* այս կամ այն բարձրությունն արտահայտող պայմանական նշաններ, որոնք դրվելով նոտակիրի սկզբում (երբեմն և միջում, երբ փոխվում է բանալին), հինգ գծերից որևէ մեկի վրա, հնարավոր են դարձնում որոշել մնացած բոլոր բարձրությունների տեղերը: Երաժշտության մեջ օգտագործվում են շատ ավելի մեծ քանակությամբ տարբեր բարձրություն ունեցող հնչյուններ, քան կարելի է գրի առնել նոտակիրի և օժանդակ գծերի վրա, և այդ պատճառով գործ են ածվում երեք տարբեր բ.՝ *ֆա բանալի,* որը ցույց է տալիս փոքր օկտավայի *ֆա* նոտայի տեղը նոտակիրի վրա, *դո բանալի*՝ առաջին օկտավայի *դո* նոտայի տեղը և *սոլ բանալի*՝ առաջին օկտավայի *սոլ* նոտայի տեղը: Մեծ քանակությամբ օժանդակ գծերից խուսափելու համար, յուրաքանչյուր երգչաձայնի և նվագարանի ձայնածավալի համեմատ այդ բանալիները դրվում են նոտակիրի այս կամ այն տողի վրա, ըստ այդմ ձեռք բերելով իրենց նոր ու վերջնական անունները:





Այս բ. այժմ գործ են ածվում միայն չորսը՝ *ջութակինը, ալտինը, տենորինը և բասինը*, որոնցից անհամեմատ ավելի գործածական են ջութակի և բասի բ., 2) դաշնամուր, տավիղ, քանոն և նման այլ նվագարաններ (գործիքներ) լարելու հատուկ գործիք:


ԲԱՆԴԱ (իտ. banda՝ ջոկատ) 1) պղնձյա փողային և հարվածային նվագարաններից (գործիքներից) կազմված նվագախումբ, որն օգտագործվում է մի շարք օպերաներում (բեմի վրա և բեմի ետևում): Երբեմն մտցվում է սիմֆոնիկ նվագախմբի կազմի մեջ, որպես հավելյալ անսամբլ, տես՝ *բեմական փողային նվագախումբ*, 2) Իտալիայում, ԱՄՆ-ում, մի շարք երկրներում այդպես է կոչվում զինվորական փողային նվագախումբը:

ԲԱՆԴՈԼԱ (իտ. bandola) իտալական կիթառանման նվագարան:

ԲԱՆԴՈՒՐԱ (լեհ. bandura) ուկրաինական ժողովրդական կսմիթային բազմալար նվագարան, ձվաձև, կլոր կամ տանձանման հնչարկղով և համեմատաբար կարճ նվագակոթով (գրիֆ), առանց մատնաշեմերի: Հնչերեսի կենտրոնում կլոր կամ ծաղկաձև ձայնանցք ունի: Սկզբում 7—25, ներկայումս 40—50 լար ունի, բամբ լարերը ձգված են նվագակոթի վրայով, մնացած, հետզհետե կարճացող լարերը՝ հնչերեսի աջ կողմում, նվագում են երկու ձեռքերի մատներով: Ստեղծված են բ. նվագախմբային տարատեսակները՝ *բ. -պրիմա, բ.-ալտ, բ.-բաս, բ.-կոնտրաբաս:*

ԲԱՆԴՈՒՐԱՀԱՐ, 1) ուկրաինական ժողովրդական շրջիկ երգիչ-նվագող (հաճախ կույր, որը *բանդուրայով* կամ *կոբզայով* նվագակցում է իր երգին, 2) բանդուրա նվագող:

ԲԱՆՋՈ (իտ., անգլ. banjo) կսմիթային նվագարան, օգտագործվում է ամերիկյան ժողովրդական (ֆոլկ, քանթրի), ներկայումս ավելի սակավ՝ ջազային երաժշտության մեջ ռիթմիկ և ակորդային նվագակցության համար: Հնչարկղը նման է կաշվե երեսով փոքրիկ *դափի (տամբուրինի)*, որին միացված է մետաղյա մատնաշեմերով նվագակոթը (գրիֆը): Ստեղծվել է մոտավորապես XIX դ սկզբներին, տարատեսակներն են՝ ա) հինգ, վեց և յոթլարանի *բ. -սոպրանոները*, բ) *բ.-ալտերը*, գ) *բ.-մանդոլինը*, դ) *բ.-ուկուլելեն*, որն իր տեսքով նման է փոքր կիթառի: Նոտագրվում է ջութակի բանալիով և հնչում ըստ գրվածի, բացի *բ.-տենորի*,



որի նոտաները գրվում են իրական հնչումից մեկ օկտավա վեր: Բ.-ն մեծ տարածում է գտել սպիտակամորթ ամերիկացիների մոտ և օգտագործվում է որպես նվագակցող և մենակատարային նվագարան, ներկայումս բ. հաճախակի փոխարինվում է ջազային կիթառով:

ԲԱՍ (իտ. basso՝ ցածր) 1) արական ամենացածր երգչաձայն, բ. լինում են բարձր և ցածր, բարձր բ. կոչվում է *լիրիկական բ.*, կամ *բ.-կանտանտե*, ցածր բ. կոչվում է *բ.-պրոֆունդո*, գոյություն ունեցող «բնահատուկ» բ. կամ *բ.-բուֆ*, առաջին բ. կամ երկրորդ բ. հասկացությունները ստեղծվել են ըստ երգչախմբում կամ բեմում նրանց գրաված տեղի և *ամպլուայի*: Բացի դրանից, միայն երգչախմբերում օգտագործվում են բ.-օկտավաները, այլ կերպ՝ *օկտավիստները*, տես՝ *երգչախումբ*, 2) փողային նվագախմբի մեջ մտնող պղնձյա փողային նվագարաններ (գործիքներ)՝ *սի բեմոլ* և *մի-բեմոլ* լարվածքով (in B, in Es), նոտագրվում են բասի բանալիով, հնչում են ըստ գրվածի, տես՝ *հելիկոն, տուբա*, 3) ցածր ձայնասահմանի նվագարանները՝ *կոնտրաբասը, տուբան* և այլն, 4) *թվագրված բ.* կամ *գեներալ բ.*, 5) երաժշտական բազմաձայն ստեղծագործության ամենացածր ձայնը (պարտիան), 6) հարմոնիան ուսումնասիրելիս՝ քառաձայնի չորրորդ ձայնը:

ԲԱՍԱՅԻՆ ԴՈՄՐԱ, բաս-դոմրա (ռուս. басовая домра), տես՝ *դոմրա:*

ԲԱՍԱՅԻՆ ՏՐՈՄԲՈՆ, բաս-տրոմբոն (ռուս. басовый тромбон) տես՝ *տրոմբոն:*

ԲԱՍԱՅԻՆ ՓՈՂ, բաս-փող (ռուս. басовая труба), տես՝ *փող:*

ԲԱՍԱՅԻՆ ՖԼԵՅՏԱ, բաս-ֆլեյտա (ռուս. басовая флейта), տես՝ *ֆլեյտա:*


ԲԱՍ-ԲԱՐԻՏՈՆ, երգչաձայն, որն ունի բասի հնչերանգ, միևնույն ժամանակ կարող է համեմատաբար ազատ երգել բարիտոնի *ձայնահատվածում (տեսսիտուրայում)* գրված ստեղծագործություններ:

ԲԱՍ-ԲՈՒՖ, ԲՆԱՀԱՏՈՒԿ ԲԱՍ (իտ. basso buffo՝ ծիծա-

ղելի բաս), կոմիկական բաս, հասկացությունն ստեղծվել է երգչի կատարած դերի բնույթից: Սովորաբար այդ բասերի հնչերանգը ավելի չոր է ու կոպիտ, սակայն բ. բ. ավելի շարժուն է և ճկուն: Տես՝ *բաս* (1-ին իմաստով):

ԲԱՍԴԱՆՍ (ֆր. basse dance) մի շարք դանդաղ, սահուն և չափավոր-արագ պարահանդեսային պարերի ընդհանուր անվանումը XV — XVII դդ. Ֆրանսիայում, Բուրգունդիայում, Ֆլանդրիայում: Տես՝ *բռանլ, պավանա, ալեմանդա, կուրանտա, գալյարդա:*

ԲԱՍԵՏՀՈՌՆ (գերմ. Bassethorn), *ալտային կլարնետ, ալտ-կլարնետ,* փայտյա փողային նվագարան (գործիք), ստեղծված XVIII դ. երկրորդ կեսին: Սկզբնական շրջանում ուներ կիսաշրջանի ձև, հետագայում դարձավ անկյունաձև, վերջապես հիմնական մասը *կլարնետի* պես ուղղվեց, փողաբերանը առջևից վեր թեքվեց, իսկ մետաղյա *փողակը,* որի վրա հագցվում է *բերանոցը,* ետ շրջվեց: Փոխադրող նվագարան է. *ֆա լարվածքով* (in F) հնչում



է գրվածից *կվինտա* ցած, *մի բեմոլ* լարվածքով (in Es)՝ մեծ *սեքստա* ցած: *Զայնածավալներն* ըստ հնչողության՝ մեծ օկտավայի *ֆա*-ից մինչև երրորդ օկտավայի *դո*-ն (F-c_3) և մեծ օկտավայի *մի բեմոլից* մինչև երկրորդ օկտավայի *սի բեմոլը* (Es-b^2): Նոտաները գրվում են ջութակի բանալիով, in F՝ *կվինտա* վեր, in Es՝ մեծ *սեքստա* վեր:

ԲԱՍԵՐ ՕԿՏԱՎԻՍՏՆԵՐ (ռուս. басы октависты) միայն երգչախմբերում օգտագործվող ամենացածր բասերը, որոնք կարող են իջնել մինչև կոնտրօկտավայի *սոլ*-ը (*ֆա*-ն) ներառյալ: Օկտավիստների ձայները շատ գեղեցիկ և ազդեցիկ են հնչում հատկապես *ա կապելլա* կատարվող խմբերգերում: Տես՝ *բաս* (1-ին իմաստով):

ԲԱՍԻ ԲԱՆԱԼԻ (ռուս. басовый ключ) *ֆա* բանալին՝ դրված նոտակիրի չորրորդ գծի վրա: Տես՝ *բանալիներ:*

ԲԱՍ ԿԱՆՏԱՆՏԵ (իտ. basso cantante), երգուն բաս: Տես՝ *լիրիկական բաս:*

ԲԱՍ ԿԼԱՐՆԵՏ (իտ. clarinetto basso) կլարնետի բասային տարբերակը, ստեղծվել է 1772 թ. Փարիզում և երկար ժամանակ օգտագործվել տարբեր անունների տակ (basse tube, basse-guerriere, glici-barifono և այլն): Տոնայնափոխ նվագարան (գործիք)՝ *սի բեմոլ, լյա և դո* լարվածքներում (in B, in A, in C), ներկայումս օգտագործվում է *սի բեմոլ* լարվածքի (in B) բ. կ.: *Զայնածավալն* է՝ B_1-ից մինչև d^2 և էլ ավելի (կոնտրօկտավայի *սի բեմոլ*-ից մինչև երկրորդ օկտավայի *ռե*-ն և էլ ավելի), նոտագրվում է ջութակի բանալիով, իրական հնչումից մեծ *նոնա* վեր, կամ բասի բանալիով, իրական հնչումից մեծ *սեկունդա* վեր, ունի կլարնետի կառուցվածք, միայն լայն մետաղյա փողաբերանը ծռված է դեպի վեր, իսկ բերանոցը հագցվում է լատինական S տառի նման փողակի վրա: Լավ հնչում է ցածի *ձայնասահմանը (ռեգիստրը),* միջին *ձայնասահմանի* հնչերանգը մոտ է *կլարնետին,* միայն ավելի հագեցած հընչողությամբ, տեխնիկապես զիջում է *կլարնետին:*

ԲԱՍ ՊՐՈՖՈՒՆԴՈ (իտ. basso profondo՝ խորը բաս) ցածր *բաս,* ձայնածավալն է մեծ օկտավայի *ռե*-ից (*մի*-ից) մինչև առաջին օկտավայի *ռե*-ն (*մի*-ն): Հազվադեպ է օգտագործվում օպերայում: Տես՝ *բաս (1-ին իմաստով):*

ԲԱՍ ՊՐՈՖՈՒՆԴՈՅԻ ԲԱՆԱԼԻ (ռուս. басопрофундовый ключ) *ֆա* բանալին, դրված նոտակիրի հինգերորդ գծի վրա: Տես՝ *բանալիներ:*

ԲԱՍՈ ԿՈՆՏԻՆՈՒՈ (իտ. basso-continuo՝ մշտական բաս) *թվագրված բաս* ստեղնա-լարային նվագարանների (գործիքների) համար (*կլավիրների*), որի հիման վրա XVII—XVIII դդ. կատարողները հանպատրաստից հորինում և կատարում էին նվագակցությունը: Տես՝ *գեներալ բաս:*

ԲԱՍՈ ՕՍՏԻՆԱՏՈ (իտ. basso ostinato՝ համառ բաս) սովորաբար 4 — 8 տակտանի մեղեդի կամ նոտա բասում, որը երաժշտական ստեղծագործության կամ նրա որոշ հատվածի ընթացքում անընդհատ կրկնվում է, այն ժամանակ, երբ վերևի ձայներն ազատորեն շարժվում են, ձևափոխվում և մելոդիկ նորանոր գծեր կազմում: Բ. օ. ստեղծվել է XVII դ., որպես *պոլիֆոնիկ վարիացիայի* մի տեսակը: *Պասակալիա* և *չակոնա* հնագույն պարերն իրենցից ներկայացնում են վարիացիաներ բ. օ. վրա: Երբեմն կիրառվում է նաև ժամանակակից երաժշտության մեջ, օր. Շոստակովիչի ութերորդ սիմֆոնիայի 4-րդ մասում: Տես՝ *օստինատո, վարիացիաներ:*


ԲԱՍՏԱՐԴԱ, *վիոլա բաստարդայի* կրճատ անվանումը:

ԲԱՍ-ՕԿՏԱՎԱ, տես՝ *բասեր-օկտավիստներ:*

ԲԱՐԴ ԵՌԱՄԱՍ ՁԵՎ (ռուս. сложная трехчастная форма), տես՝ *եռամաս ձև:*

ԲԱՐԴ ԵՐԿՄԱՍ ՁԵՎ (ռուս. сложная двухчастная форма), տես՝ *երկմաս ձև:*

ԲԱՐԴ ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐ (ռուս. сложные интервалы) *ինտերվալներ,* որոնց մեծությունը մաքուր օկտավայից ավելի է և որոնք իրենցից ներկայացնում են որևէ պարզ *ինտերվալի*-ն մեկ, երկու կամ ավելի մաքուր օկտավա-



ն ե ր ի գումար: Երաժշտության մեջ հանդիպող բազմաթիվ բ. ի. միայն յոթն ունեն իրենց անուններն ու թվանշանային նշանակումները՝ *նոնա*—9, *դեցիմա*—10, *ունդեցիմա*—11, *դուոդեցիմա*—12, *տերցդեցիմա*—13, *կվարտդեցիմա*—14, *կվինտդեցիմա*—15: Բ. ի. հետ գործ ունենալիս, բոլոր դեպքերում ավելի հարմար է մտովի դրանք դարձնել *պարզ:* Տես՝ *ինտերվալ, պարզ ինտերվալներ:*

ԲԱՐԴ ԿԱԴԱՆՍՆԵՐ (ռուս. сложные кадансы), տես՝ *կադանս:*

ԲԱՐԴ ԿՈՆՏՐԱՊՈՒՆԿՏ (ռուս. сложный контрапункт) *պոլիֆոնիկ* երաժշտության մեջ՝ երկու կամ ավելի այնպիսի մեղեդիների զուգակցումը, որոնցից կարելի է կազմել նոր զուգակցումներ (այսինքն՝ փոփոխել այդ նույն մեղեդիների միջի *ինտերվալային* կամ *ռիթմիկ հարաբերակցությունները):* Բ. կ. լինում է երկու տեսակ՝ *շարժական կոնտրապունկտ* և *հակադարձ* կամ *հայելանման կոնտրապունկտ:* Տես նաև՝ *կոնտրապունկտ, պարզ կոնտրապունկտ, կրկնակի կոնտրապունկտ, եռակի կոնտրապունկտ, քառակի կոնտրապունկտ:*




ԲԱՐԴ ՉԱՓԵՐ (ռուս. сложные размеры), տես՝ *չափ:*

ԲԱՐԴ ՍՏՐԵՏՏԱ (ռուս. сложная стретта) *ստրետտա* (1-ին իմաստով), որում բացի հիմնական թ ե մ ա յ ի ց և պատասխանից, կան նաև դրանց ձևափոխությունները (*մեծացում, փոքրացում, հակաշարժում* և այլն): Տես՝ *կանոն, իմիտացիա:*



ԲԱՐԻՏՈՆ (իտ. baritono, հուն. baritonos-ից՝ ցածր հնչող) 1) *բասի* և *տենորի* միջին տեղը գրավող արական երգչաձայն, ձ ա յ ն ա ծ ա վ ա լ ն է մեծ օ կ տ ա վ ա յ ի *լյա*-ից մինչև առաջին օ կ տ ա վ ա յ ի *սոլ*-ը (*լյա բեմոլ*-ը): Երկու բնույթի բ. են զանազանվում՝ *լիրիկական և դրամատիկ բ.:* Նոտագրվում են բասի բանալիով, 2) փողային նվագախմբի կազմի մեջ մտնող պղնձյա փողային նվագարան (գործիք)՝ *սի բեմոլ լարվածքով* (in B), ձ ա յ ն ա ծ ա վ ա լ ն է մեծ օ կ տ ա վ ա յ ի *մի*-ից մինչև երկ-



րորդ օ կ տ ա վ ա յ ի *դո*-ն, նոտագրվում է ջութակի բանալիով և հնչում է մեծ *նոնա* ցած, օգտագործվում է թե որպես մենանվագող, թե նվագակցող նվագարան (գործիք), 3) բասային աղեղնային նվագարան, որը բացի 6—7 հիմնական լարերից, ուներ նաև 7 — 20 ու ավելի արձագանքող լարեր:

ԲԱՐԻՏՈՆԱՅԻՆ ՀՈԲՈՅ (ռուս. баритоновый гобой) տես՝ *հոբոյ, հեկկելֆոն:*

ԲԱՐԻՏՈՆԻ ԲԱՆԱԼԻ (ռուս. баритоновый ключ) *դո* բանալին՝ դրված ն ո տ ա կ ի ր ի հինգերորդ գծի վրա, կամ *ֆա* բանալին՝ դրված ն ո տ ա կ ի ր ի երրորդ գծի վրա: Տես՝ *բանալիներ:*

ԲԱՐԿԱՐՈԼԱ (իտ. barcarolla, barca-ից՝ մակույկ) 1) վենետիկյան մակույկավարների, թիավարների և ձկնորսների քնարական երգ, որի նվագակցության համաչափ օրորվող ռիթմում իրենց արտացոլումն են գտել ալիքների ծփանքն ու թիերի համաչափ շարժումը, չափը՝ 6/8 կամ 12/8, տեմպը՝ չափավոր, 2) նույն բնույթի և ձևի գործիքային ստեղծագործություն: Տես՝ *գոնդոլյերա:*

ԲԱՐՁՐԱԿԵՏ (ռուս. кульминация) երաժշտության ամենալարված պահը՝ զարգացման և իմաստային առումով: Երաժշտական ստեղծագործությունը կարող է ունենալ մի քանի բ.՝ ամբողջ ստեղծագործության բ., մասերից յուրաքանչյուրի, այս կամ այն պարբերության կամ նախադասության բ.:

ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. высота) ձայնի այն հատկությունը, որը կախված է տատանումների հաճախականությունից՝ որքան շատ լինի տատանումների քանակը մեկ վայրկյանում, ձայնն ավելի բարձր կլինի և հակառակը: Տարբերում են *բացարձակ բ.* (որոշվում է տատանումների քանակով) և *հարաբերական բ.* (որոշվում է ձայների *ինտերվալային հարաբերակցությամբ):* Երաժշտական սիս-

տեմի (այլ կերպ՝ երաժշտական ձայնաշարի) յուրաքանչյուր հնչյուն ունի իր բացարձակ բ., որը սահմանվում է որևէ հանձնաժողովի կողմից և կիրառվում է նվագարանները (գործիքները) լարելիս, որևէ նվագարանի կամ երգչաձայնի համար գրված ստեղծագործությունը մեկ ուրիշ նվագարանի կամ երգչաձայնի փոխադրելիս և այլն: Իսկ *լադերը* և *ինտերվալները*, որոնք երաժշտական մտածողության ամենակարևոր տարրերն են հանդիսանում, ինչպես նաև երաժշտություն կազմող հնչյունների հաջորդականությունը, ակորդների կառուցվածքը և այլն, որոշվում են հարաբերական բ.: Տես՝ *ձայն I*, *ձայնոց*:

ԲԱՐՈԿԿՈ (իտ. barocco՝ օտարոտի, արտասովոր) XVI դ. վերջից մինչև XVII դ. կեսը եվրոպական ճարտարապետության մեջ գերիշխող ոճ: Արևմտաեվրոպական երաժշտագիտությունն այդ հասկացությունը տարածում է նաև նույն ժամանակաշրջանի երաժշտության վրա, այդ ոճի տակ միավորելով միանգամայն տարբեր դպրոցներ և կոմպոզիտորների ստեղծագործություններ՝ XVI—XVII դդ. *մադրիգալիստներից* մինչև XVIII դ. կեսերի օպերային վարպետներին՝ Մոնտեվերդիից և Լյուլլիից մինչև Հենդել և Բախ:

ԲԱՑԱՐՁԱԿ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. абсолютная музыка) պայմանականորեն այսպես է կոչվում նվագարանային (գործիքային) այնպիսի երաժշտություն, որը կապված չէ որևէ ծրագրի հետ, և որը բառերով երգվող վոկալ երաժշտություն չէ: Տես՝ *ծրագրային երաժշտություն*, *մաքուր երաժշտություն*:

ԲԱՑԱՐՁԱԿ ԼՍՈՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. абсолютный слух), տես՝ *լսողություն*:

ԲԱՑ ԼԱՐ (ռուս. открытая струна), լար, որը հնչում է իր ամբողջ երկարությամբ (*լարակալից* մինչև *շեմիկը*): *Մատադրումը (ապլիկատուրան)* նշանակելիս, բ. լ. նշանակվում է 0 թվանշանով:

Բե, հայկական ձայնագրության հիմնական ձայնաշարի (*դո* նոտայով սկսվող *միքսոլիդիական լադ*) չորրորդ հնչյունը, լրիվ անունն է *բենկորճ*:

ԲԵԳՊԱՅՊ, տես՝ *պարկապզուկ*:

ԲԵԼԿԱՆՏՈ (իտ. bel canto՝ գեղեցիկ երգեցողություն) երգեցողական ոճ, երգելու հատուկ ձև, եղանակ, որը բնորոշվում է ընդգծված երգեցիկությամբ, գեղեցիկ հընչմամբ, թեթև, հաճելի, ձայնագարդերի վիրտուոզ կատարմամբ: Բ. ծաղկման շրջանն սկսվում է XVII դ. կեսերից և կապված է իտալական ազգային օպերայի զարգացման հետ: Բ. տարբերում են,ու ուղղություն. առաջինում գերիշխում է *կանտիլենա* երգեցողությունը, դանդաղ տեմպերում (largo, adagio) փոքր քանակությամբ ձայնագարդերով, երկրորդը կապված է *կոլորատուրայի* զարգացման հետ, որը XVIII դ. կեսերից մեծ տարածում գտավ եվրոպական բոլոր երկրներում: Պահպանելով իր հիմնական առանձնահատկությունները, բ. ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների, հարըստացել արտահայտչական նոր գծերով և գույներով, բ. իր խորն ազդեցությունն է ունեցել բազմաթիվ ժողովուրդների երգեցողական դպրոցների վրա:

ԲԵԿԱՐ (ֆր. béccare), տես՝ *ալտերացիայի նշաններ*:

ԲԵԿԱՐ-ԲԵՄՈԼ (ֆր. béccare-bémol, ռուս. бекар-бемоль) *դուբլ-բեմոլը* (𝄫) մեկ *բեմոլ* դարձնելու համար նախկինում դնում էին բ.-բ. (𝄪♭) նշանը, ներկայումս դնում են միայն *բեմոլ* (♭), առանց *բեկարի*: Տես՝ *ալտերացիայի նշաններ*:

ԲԵԿԱՐ-ԴԻԵԶ (ֆր. béccare-diése, ռուս. бекар-диез) *դուբլ-դիեզը* (𝄪) մեկ *դիեզ* դարձնելու համար նախկինում դնում էին բ.-դ. նշանը (𝄪♯), ներկայումս դնում են միայն *դիեզ* (♯), առանց *բեկարի*: Տես՝ *ալտերացիայի նշաններ*:

ԲԵՂ (ռուս. ус), տես՝ *ջութակ*:

ԲԵՄ (լատ. scaena, ռուս. сцена) *թատերաբեմ*, թատրոններում բարձր տախտակամած, որի վրա իրականացվում և ներկայացվում են օպերային, թատերական և այլ բեմադրություններ, բ. ունի վարագույր, դեկորացիաներ, բեմական կահույք, լուսավորության համակարգ, բեմադրության ընթացքն ապահովող զանազան հարմարանքներ: Տես՝ *էստրադա*:

ԲԵՄԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, տես՝ *թատերական երաժշտություն*:

ԲԵՄԱԿԱՆ ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ (ռուս. сценно-духовой оркестр) նույնն է՝ *բանդա* (1-ին իմաստով):

ԲԵՄՈԼ (ֆր. bémol, ռուս. бемоль), տես՝ *ալտերացիայի նշաններ*:


ԲԵՆԵԴԻԿՏՈՒՍ (լատ. «Benediktus qui venit»-ից՝ «Օրհնյալ է գալիքը») կաթոլիկ օրհներգություն, որը *սանկտուսի* հետ կազմում է *մեսսայի* հիմնական բաժիններից մեկը:

ԲԵՆԵՖԻՍ (ֆր. bénéfice՝ եկամուտ, օգուտ) ներկայացում, հանդես կամ համերգ այս կամ այն արտստի, աև կլեկտիվի օգտին, նյութական օգնության ձև, որն ուներ նաև մեծարման որոշակի տարր: Բ. իմաստը ներկայումս փոփոխված է:

ԲԵՆԿՈՐՃ, տես՝ *հայկական ձայնագրություն*:

ԲԵՎԵԿՆԱԽԵԺ (ռուս. канифоль) դեղնակարմիր կամ բաց շագանակագույն թափանցիկ փխրուն նյութ, որը քսում են աղեղի մազափնջին՝ լարի հետ շփումն ուժեղացնելու համար, որի հետևանքով ստացվում են ավելի մաքուր, հնչեղ և ջերմ ձայներ:

ԲԵՐԱՆՈՑ (ռուս. мундштук, գերմ. Mund՝ բերան և Stück՝ մաս) 1) պղնձյա փողային նվագարանների (գործիքների)՝ փողրակով վերջացող թասիկանման ծայրակալը, որը մտցվում է նվագարանի սկզբնանցքի մեջ, 2) երկայնակի ֆլեյտաների, կլարնետների,



սաքսոֆոնների և մի շարք նման՝ միակի պիպիչ ունեցող նվագարանների (գործիքների) կտուցանման սկզբնամասը, որը նվագելիս դնում են բերանը, 3) երբեմն այդպես են անվանում նաև հոբոյի, ֆագոտի և նման այլ նվագարանների կրկնակի պիպիչները:

ԲԵՐԳԱՄԱՍԿԱ (իտ. bergamasca) Իտալիայի Բերգամո գավառի ժողովրդական ուրախ երգ-պար 4/4 կամ 6/4 չափով, արագ *տեմպով*, հայտնի է XVI դ., հանդիպում է Իտալիայի և մի շարք այլ երկրների երաժշտության մեջ: XIX դ. պարն իր բնույթով մոտեցավ *տարանտելլային:*

ԲԻՍ (լատ. bis՝ երկու անգամ) 1) խրախուսական, հավանության բացականչություն, որով հասարակությունը պահանջում է կրկնել այս կամ այն համարը, հատվածը, 2) այն տակտը, որը նշված է «bis» բառով, պետք է կատարել երկու անգամ: Տես՝ *կրճատագրություն:*

ԲԻՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. битональность) նույնն է՝ *երկտոնայնություն:*

ԲԼՈՒԶ (անգլ. blues, blue devils բառերի կրճատ ձևը՝ մելամաղձոտություն) ամերիկյան նեգրերի քաղաքային թախծոտ, քնարական երգ-պար, որը սովորաբար կատարվում էր *բանջոյի* նվագակցությամբ: Տեմպը՝ դանդաղ է,



չափը՝ 4/4, 2/4, ստեղծվել է XIX դ. վերջում, բնորոշ գծերն են *մաժորա-մինորային լադը, սինկոպացված ռիթմերը* և 12 տակտանոց պարբերությունը: Մեծ ազդեցություն է ունեցել ջազային երաժշտության զարգացման վրա, որը մեծապես օգտագործել է բ. համարյա բոլոր բնորոշ կողմերը, հատկապես ռիթմիկ ֆորմուլաները և կատարման եղանակը: Սիմֆոնիկ և կամերային երաժշտության մեջ բ. ձևն օգտագործել են Ռավելը, Գերշվինը և ուրիշներ:

ԲԼՈՒԼ, սրինգանման նվագարան, այն տարբերությամբ, որ բ. փողը ձևավոր է, ունի օղանման գոտիներ,




իսկ երկու ծայրերը հաստացված են (վերինն ավելի, քան ցածինը), ձայնը փափուկ է, թավշյա, քիչ խլացված: Բ. նույնպես հովվական նվագարան է, թեև ավելի քիչ տարածված սրինգից:

ԲԿ, երկրորդ կողմ կամ ավագ կողմ: Տես՝ *ձայն* III:

ԲՁ, երկրորդ ձայն: Տես՝ *ձայն* III:

ԲՅՈՒԳԵԼՀՈՌՆ (գերմ. Bügelhorn, ֆր. bugle՝ ազդանշանային փող կամ գերմ. Horn՝ փող) տարբեր մեծության և փողային երաժշտական նվագարանների (գործիքների) ընտանիք, հիմնականում զինվորական փողային նվագախմբերում, XX դ. սկզբից իրենց տեղը զիջում են *սաքսհոռնին:*

ԲՆԱԿԱՆ ԼԱԴԵՐ (ռուս. натуральные лады) տարբեր կերպ դասավորված հինգ մեծ և երկու փոքր *սեկունդաներով* կառուցված յոթնաստիճան *դիատոնիկ լադեր,* որոնք հնագույն ժամանակներից մինչև օրս ընկած են բազմաթիվ ժողովուրդների երաժշտության հիմքում և որոնք գերազանցապես օգտագործվել են միջնադարյան պրոֆեսիոնալ երաժշտության մեջ (եկեղեցական և աշխարհիկ): Դրանք են՝



Անունները վերցված են հին հունական լադերից, չնայած դրանց կառուցվածքը բոլորովին այլ է: Բ. լ. կայուն են առաջին և հինգերորդ աստիճանները: Ելնելով այդ լադերի առաջին և երրորդ աստիճանների կազմած տերցիայի մեծությունից (փոքր կամ մեծ), երաժշտագիտությունը *լիդիական, իոնական* և *միքսոլիդիական լադերը* դասում է *մաժոր,* իսկ *դորիական, էոլական* և *փռյուգիական լադերը մինոր լադերի* շարքը: Յուրահատուկ կառուցվածք ունի *լոկրիական լադը,*

որի հինգերորդ աստիճանը առաջինի հետ կազմում է փոքրացրած կ վ ի ն տ ա:

ԲՆԱԿԱՆ ՁԱՅՆԱՇԱՐ (ռուս. натуральный звукоряд) մասնակի տոների հաջորդականությունը (օ բ ե ր տ ո ն ե ր ի ձ ա յ ն ա շ ա ր):


ԲՆԱԿԱՆ ՄԱԺՈՐ (ռուս. натуральный мажор) նույնն է՝ *բնական մաժոր լադ:*

ԲՆԱԿԱՆ ՄԱԺՈՐ ԼԱԴ (ռուս. натуральный мажорный лад) տես՝ *մաժոր լադ:*

ԲՆԱԿԱՆ ՄԻՆՈՐ (ռուս. натуралный минор) նույնն է՝ *բնական մինոր լադ:*

ԲՆԱԿԱՆ ՄԻՆՈՐ ԼԱԴ (ռուս. натуральный минорный лад), տես՝ *մինոր լադ:*

ԲՆԱԿԱՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ԳՈՐԾԻՔՆԵՐ) (ռուս. натуральные (музыкальные) инструменты) պղնձյա փողային նվագարաններ (գործիքներ), որոնց վրա չկան փողը մեխանիկորեն երկարացնելու կամ կարճացնելու հարմարանքներ, որոնք հնարավոր դարձնեին այդ նվագարանների ձ ա յ ն ա ծ ա վ ա լ ի սահմաններում ինչեցնել խ ր ո մ ա տ ի կ ձ ա յ ն ա շ ա ր ի յուրաքանչյուր հնչյունը: Բ. ն. կարելի է ստանալ միայն բ ն ա կ ա ն ձ ա յ ն ա շ ա ր ի առաջին ութ (հազվադեպ՝ տասնվեց)




տ ո ն ե ր ը (հնչյունները): Դա իրականացվում է օդը նվագարանի մեջ տարբեր ուժգնությամբ ներփչելով: Մինչև XIX դ. սկիզբը սիմֆոնիկ նվագախմբում օգտագործվում էին տարբեր մեծության ու լարվածքի *բնական վալտորնաներ (գալարափողեր)* և փողեր: Ամեն անգամ նվագողը վերցնում էր այն լարվածքի նվագարանը, որը համապատասխանում էր կատարվելիք ստեղծագործության տոնայնությանը: Բ. ն. այդ թերությունը վերացվեց *վենտիլների* գյուտով, որը և հնարավոր դարձրեց ակնթարթորեն, մեխանիկորեն փոխել նվագարանի լարվածքն ու հնչեցնել իր ձ ա յ ն ա ծ ա վ ա լ ի խ ր ո մ ա տ ի կ ձ ա յ ն ա շ ա ր ի բոլոր հնչյունները: Բ. ն. ներկայումս գործ են ածվում միայն *ազդանշանային նվագարանները:* Տես նաև՝ *բնական վալտորնա:*

ԲՆԱԿԱՆ ՖԼԱԺՈԼԵՏՆԵՐ (ռուս. натуральные флажолеты) տես՝ *ֆլաժոլետ:*

ԲՆԱՁԱՏՈՒԿ ԲԱՍ (ռուս. характерный бас) տես՝ *բաս բուֆ:*

ԲՆԱՁԱՏՈՒԿ ՏԵՆՈՐ (ռուս. характерный тенор), տես՝ *տենոր* (1-ին իմաստով):

ԲՈԼԵՐՈ (իսպ. bolero) իսպանական ժողովրդական զուգապար, չափավոր-արագ տեմպով, 3/4 չափով, ուղեկցվում է կ ի թ ա ռ ն ե ր ի նվագով, երբեմն՝ երգով, ռիթմն ընդգծվում է կ ա ս տ ա ն յ ե տ ն ե ր ո վ կամ մատների չրթոցով: Մի շարք կոմպոզիտորներ բ. ձևն օգտագործել են իրենց ստեղծագործություններում՝ Շոպենը, Ռավելը, Բեռլիոզը, Վերդին, Դելիբը, Գլինկան, Չայկովսկին և այլք: Բնորոշ երաժշտական ռիթմիկ պատկերներն են՝



ԲՈՅԱՆ (ռուս. боян) նույնն է՝ *բայան:*

ԲՈՍՏՈՆ, *վալս-բոստոն,* ամերիկյան վ ա լ ս ա ն մ ա ն պար (Բոստոն քաղաքի անունով), դանդաղ վ ա լ ս ի տարատեսակը, բնորոշ նրանով, որ նվագակցության մեջ տ ա կ տ ի երրորդ մասում պ ա ու զ ա է: Ստեղծվել է XIX դ. վերջին քառորդում:




ԲՌԱՆԼ (ֆր. branle, ռուս. бранль՝ ճոճում, խմբապար) ֆրանսիական հնագույն ժողովրդական շուրջպար, որը երբեմն ուղեկցվում էր երգով, տարատեսակների չափերը եղել են և երկմաս, և եռամաս: Հետագայում դարձել է նաև պալատական ու պարահանդեսային պար: Մեծ ժողովրդականություն է վայելել հատկապես XV—XVI դդ.: Տես՝ *բասդանս:*

ԲՐԵՎԻՍ (լատ. brevis՝ կարճ) 1) *մենոջրալ նոտագրության* նշաններից մեկը, 2) ժամանակակից նոտագրության մեջ բ. հավասար է երկու ամբողջ նոտայի տևողությանը՝ նշանակվում է 𝅜 կամ 𝅜 : Տես՝ *տևողություններ զույգ բաժանում:*

ԲՐՅՈՒԿԱ (ռուս. брёлка) 1900 թ. Վ. Վ. Անդրեևը կատարելագործել է *ժալեյկան* և անվանել բ., օգտագործվում է ռուսական ժողովրդական գործիքների նվագախմբերում, արտաքուստ նման է կեչու կեղևի վերնաշերտից պատրաստված *ժալեյկայի* և ունի նույն ձ ա յ ն ա ծ ա վ ա լ ը: Բացի նվագանցքերից ունի նաև *խփասարքեր (կլապաններ),* որոնց միջոցով կարելի է ստանալ *խրոմատիկ ձայնաշար, պիպիչը* կրկնակի է: Տես՝ *ժալեյկա:*


ԲՈՒԲԵՆ (ռուս. бубен, իտ. tamburino) փոքր դափ, որի շրջանակի (օղագոտու) մի կողմից, պտուտակային հատուկ սարքի միջոցով ձգված է կաշվե կամ փուչիկից թաղանթ: Շրջանակի ճեղքանման անցքերում (սովորաբար՝ վեց վեց) հարմարեցված են մետաղյա երկուական փոքրիկ ծնծղաներ (նաև՝ բոժոժիկներ, զանգուլակներ): Բ. ասիական ծագում ունի, թափառաշրջիկ երաժիշտների միջոցով մուտք է գործել Եվրոպա: XIX դ.



սկզբից օգտագործվում է զինվորական, հետագայում նաև սիմֆոնիկ նվագախմբերում նոտագրվում է ջութակի բանալիով, առաջին օկտավայի *լա* նոտայով, թեև բ. որոշակի բարձրություն չունի: Ներկայումս բ., ինչպես նաև որոշակի բարձրություն չունեցող բոլոր հարվածային նվագարանների (գործիքների) նոտաները գրվում են *միագծի* վրա: Տես՝ *միագիծ:*

ԲՈՒԿՑԻՆԱ (լատ. buccina) հնագույն կորացված փող, որը մտնում էր Հին Հռոմի զինվորական նվագախմբի կազմի մեջ:

ԲՈՒՌԼԱ, նույնն է՝ *բուռլեսկ* (1-ին, 2-րդ իմաստներով):



ԲՈՒՌԼԵՍԿ (իտ. burlesca, burla-ից՝ կատակ) 1) արտառոց, կատակային, փոքըր-ինչ կոպիտ բնույթի երաժշտական *պիես,* 2) բ. կամ *բուռլետտա*՝ ընդգրծված ծաղրական-բուֆոնային, կոմիկական, նաև՝ պարոդիական բնույթի փոքրածավալ օպերա:

ԲՈՒՌԼԵՏՏԱ (իտ. burletta) տես՝ *բուռլեսկ* (2-րդ իմաստով):

ԲՈՒՐԴՈՆ (ֆր. bourdon՝ թավ բաս) 1) մի շարք ժողովուրդների պարկապզուկների վրա հարմարեցված հատուկ բասային փող (1—3), որն ունի իր անփոփոխ բարձրությունը (սովորաբար՝ *տոնիկան* կամ *դոմինանտան*) և պարկապզուկը նվագելիս անընդհատ հնչում է, 2) անընդհատ հնչող որևէ (մեկ կամ ավելի) անփոփոխ բասային ձայն (սովորաբար *տոնիկան* կամ *դոմինանտան*) որն ուղեկցում է մեղեդուն, 3) երգեհոնի բասային *ձայնասահմանը (ռեգիստրը):* Տես՝ *բուրդոնային լարեր:*

ԲՈՒՐԴՈՆԱՅԻՆ ԼԱՐԵՐ (ռուս. бурдонные струны) մի շարք կսմիթային և աղեղնային նվագարանների (գործիքների), սովորաբար նվագակոթից (գրիֆից) դուրս դասավորված բասային լարեր, որոնք մատների սեղմումով չեն կարճացվում, այլ միշտ հնչում են իրենց ամբողջ երկարությամբ, որպես *դամ* պահող ձայն: Բ. լ. ունեն *վիոլան, աղեղնային քնարը* ինչպես նաև *թառը:* Տես՝ *բուրդոն:*


ԲՈՒՐՐԵ (ֆր. bourrée) ֆրանսիական ժողովրդական հնագույն շուրջպար, որը հայտնի է XVI դ. վերջից, XVIII դ. զգալիորեն փոփոխվելով դարձել է նաև պալատական



պար: Տեմպն աշխույժ է, սկսվում է 1/4 *նախատակտով:* Ժողովրդականի չափը 3/8 է, պալատական պարինը՝ 4/4, 2/2: Բ. օգտագործված է Լյուլլիի օպերաներում և բալետներում, ինչպես նաև Ռամոյի, Բախի և այլ կոմպոզիտորների *պարային սյուիտներում:*

Գ

ԳԱԳԱԹ (ռուս. вершина) *ինտերվալի* և *ակորդի* վերևի հնչյունը (ձայնը): Տես՝ *հիմք:*



ԳԱԼԱՐԱՓՈՂ (ՎԱԼՏՈՌՆ) (գերմ. Waldhorn՝ անտառի եղջրափող) պղնձյա փողային նվագարան (գործիք), որը ծագում է առել որսորդական եղջրափողից, առաջին անգամ նվագախմբում օգտագործել է Լյուլլին (1664 թ.): Սիմֆոնիկ նվագախմբում ամենագործածականը *ֆա* լարվածքով (in F) գ. է, երեք *վենտիլով:* Ձայնածավալը՝ կոնտրօկտավայի *սի*-ից մինչև երկրորդ օկտավայի *ֆա*-ն (H_1 — f^2): Փողային նվագախմբերում գ. *մի բեմոլ* լարվածքով է լինում (in Es), ձայնածավալը՝ կոնտրօկտավայի *լա*-ից մինչև երկրորդ օկ-



տ ա վ ա յ ի *մի բեմոլ*-ը (A_1 — es^2): Ներկայումս ավելի լայն տարածում ունի կրկնակի գ.՝ չորրորդ *վենտիլով*, որը հնարավորություն է տալիս *ֆա* լարվածքից անցնել *կվարտա* վեր՝ *սի բեմոլ* լարվածքի, օգտագործվում է նաև եռակի գ., որը հնարավորություն է տալիս հնչեցնել երեք լարվածք (in F, in Es, in B): Մինչև XIX դ. 30-ական թվականները օգտագործվում էր բնական գ. (առանց *վենտիլների*), որն ի վիճակի էր արտաբերել բ ն ա կ ա ն ձ ա յ ն ա շ ա ր ի ոչ մեծ քանակությամբ ձայներ:

ԳԱԼՅԱՐԴԱ (իտ. gagliarda, ռուս. гальярда) իտալական հնագույն ուրախ պար, 3/4 չափով: Տեմպը սկզբում չափավոր արագ էր, հետագայում ավելի աշխույժ և կայտառ դարձավ: XVI — XVII դդ. գ. արևմտաեվրոպական ամենատարածված պարերից էր: Գ. մտնում է երկմասանի գործիքային *սյուիտի* մեջ, որպես երկրորդ մաս (կատարվում է *պավանայից* հետո): Տես՝ *բասդանս:*

ԳԱԼՈՊ (ֆր. galop՝ քառատրոփ վազք) չափազանց արագ պարահանդեսային պար, 2/4 չափով, բնորոշ է պարող զույգերի թռիչքանման շարժումներով, երևան է եկել Ֆրանսիայում, XIX դ. սկզբներին և տարածվել Եվրոպայում, հաճախակի օգտագործվել բալետներում, նաև՝ որպես *կադրիլ* պարի վերջին, ամենաարագ մասը: Գ. հիանալի նմուշներ են թողել Շուբերտը, Լիստը, Չայկովսկին:



ԳԱՄԲԱ (իտ. gamba՝ ոտք) *վիոլա դա գամբայի* կրճատ անվանումը:

ԳԱՄՄԱ, հունական Գ տառի անվանումը, որով նշանակում էին միջնադարի երաժշտության ձ ա յ ն ա շ ա ր ի ամենացածր հնչյունը (մեծ օկտավայի *սոլ*-ը) հետագայում՝ նաև ամբողջ ձ ա յ ն ա շ ա ր ը (տես՝ *սոլմիզացում*), աստիճանական վերընթաց կամ վարընթաց շարժումը *լադի* աստիճաններով, սկսած որևէ աստիճանից և վերջացրած մեկ օ կ տ ա վ ա վեր՝ այդ նույն աստիճանով: Տես՝ *լադի գամմա, լադի ձայնաշար, դիատոնիկ գամմա, խրոմատիկ գամմա, ամբողջատոն գամմա:*

ԳԱՆԶ, հոգևոր բովանդակության երգ, որը երգվում է *պատարագից* հետո (չի մտնում *ժամագրքի* մեջ):


ԳԱՍՏՐՈԼ (գերմ. Gastrolle), *հյուրախաղ*, այլ քաղաքից կամ երկրից եկած արտիստի կամ կատարողական որևէ կոլեկտիվի ելույթը իր մշտական բնակավայրից դուրս:

ԳԱՎՈՏ (ֆր. gavotte) ֆրանսիական հնագույն ժողովրդական պար (սկզբնական շրջանում՝ շուրջպար), չափավոր շարժուն տեմպով, 4/4 կամ 2/4 չափով, երկու քառորդական նոտաների *նախտակտով*, հայտնի է XVI դ.:



XVII դ. Լյուլլին գ. մտցրեց օպերայի և բալետի մեջ, XVII — XVIII դդ. դարձավ պալատական նախընտրելի պարերից մեկը, XVIII դ. մտնում էր Բախի, Հենդելի և այլ կոմպոզիտորների պարային *սյուիտների* մեջ: Գ. հիանալի օգտագործել են Ռամոն, Գլյուքը, Չայկովսկին, Գլազունովը, Պրոկոֆևը: Երբեմն գ. միջին մասը, այսպես կոչված՝ «երկրորդ գավոտը», կամ դրան հաճախ փոխարինող *մյուզետը*, հովվերգական բնույթ ունի:

ԳԴԱԼՆԵՐ (ռուս. ложки) ռուսական ժողովրդական հարվածային նվագարան, կոմպլեկտը բաղկա ած է 2 — 5 փայտյա ճաշի գդալներից, որոնցից մեկը մեծ է մյուսներից, երբեմն կոթերին կապվում են բոժոժիկներ ու զանգակներ: Գ. օգտագործվում են որպես նվագակցող, անսամբլային և նվագախմբային նվագարան:



ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ (ռուս. художественная самодеятельность) տես՝ *երաժշտական ինքնագործունեություն:*

ԳԵՂԳԵՂԱՆՔ (ֆր. roulade, roule-ից, բառացի՝ գլորել ետ ու առաջ) երգեցողության մեջ արագ և վիրտուոզ *պասաժ*, հանդիպում է հիմնականում *կոլորատուրային սոպրանոյի պարտիաներում:*

ԳԵՆԵՐԱԼ ԲԱՍ (գերմ. Generalbass՝ գլխավոր, ընդհանուր բաս) 1) XVI — XVIII դդ. *հոմոֆոնիկ-հարմոնիկ* ոճի ձևավորման շրջանում կիրառվող տեխնիկական հնարք և ստեղծագործման մեթոդ, ըստ որի գրառվում էր *երգեհոնով, կլավեսինով, լյուտնյայով* կատարվող նվագակցության միայն ցածի ձայնը (բասը), որը նոտաների վերից կամ վարից դրված թվանշանների միջոցով ցույց էր տալիս, թե տվյալ նոտայի վրա ինչ ա կ ո ր դ պիտի կառուցել: Նվագակցող երաժիշտը, այդ ակորդները գարդարելով *ֆիգուրացիայով*, ինքն էր ստեղծում նվագակցությունը: Տվյալ ժամանակաշրջանում յուրաքանչյուր



երաժիշտ և կոմպոզիտոր պիտի տիրապետեր գ. բ. և դրա հիման վրա կարողանար հանպատրաստից ստեղծել և կրկին համապատասխան նվագակցություն կատարել, այլ կերպ կոչվում է *թվագրված բաս*, 2) հնում այսպես էր կոչվում *ներդաշնակագիտության (հարմոնիա)* դասընթացը: Տես՝ *թվագիր:*

ԳԵՐՔՉՈՒՄ (ռուս. передувание) փողային նվագարանների (գործիքների) մեջ բերանով փչվող օդի հոսանքի այս կամ այն չափի արագացումը, որի հետևանքով նվագարանի մեջ պարունակվող օդի սյունը բաժանվում է երկու, երեք, չորս և այլն առանձին տատանվող մասերի, որոնք հնչում են *հիմնական տոնից* ավելի բարձր և տալիս են *մասնակի տոների* մեջ մտնող այս կամ այն հնչյունը:

ԳԻՏԱՆԱ (իտ. gitana՝ գնչուհի) 1) իսպանական գնչուների պար, 2) պարուհի:

ԳԼԱՆԱՉԵՎ ԹՄԲՈՒԿ (իտ. tamburo rullante, ռուս. цилиндрический барабан) *փոքր թմբուկի* նախորդը, որն ունի բավական լայն շրջանակ, ձայնն ավելի նման է *մեծ թմբուկին*՝ ցածր և խուլ: Երկու կողմի կաշիները ձգվում են բարակ թոկերով: Ներքևի կաշվի վրայով լարեր չեն ձգված, նվագում են փոքր թմբուկի պես, երկու փայտիկներով: Գ. թ. ի կատար էին ածում մահապատիժները, մարմնական պատժի ենթարկվում զինվորները:

ԳԼԻՍԱՆԴՈ (իտալականացված ֆր. glissant՝ սահելով) նվագելու հատուկ ձև, որի ժամանակ նվագողն իր մեկ կամ մի քանի մատները թեթև ու արագ սահեցնում է տավիղի, քանոնի, ջութակի կամ նման այլ նվագարանների (գործիքների) լարերի վրայով, դաշնամուրի և նման նվագարանների ստեղնների վրայով, ի արդյունք ստացվում է հնչյունների ոչ թե հաջորդականություն, այլ վեր կամ վար սահող, բավական տպավորիչ, չընդհիջվող հընչյունագիծ: Տրոմբոնով գ. ստացվում է *կուլիսան* սահեցնելով: Նշանակվում է gliss. բառով, որը գրվում է գ. սկսող և ավարտող նոտաների արանքում: Տես՝ *պորտամենտո:*

ԳԼԽԱՎՈՐ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ (ռուս. главные ступени) *մաժոր և մինոր լադերի* առաջին, չորրորդ և հինգերորդ աստիճանները, այսինքն՝ *տոնիկան, սուբդոմինանտան և դոմինանտան*, որոնց վրա կառուցված եռահնչյունները *հարմոնիկ* մտածողության հիմքն են հանդիսանում: Ուստի երկրորդ, երրորդ, վեցերորդ և յոթերորդ աստիճաններն ունեն երկրորդական, օժանդակ նշանակություն, այդ պատճառով էլ կոչվում են *օժանդակ աստիճաններ*: Տես՝ *գլխավոր եռահնչյուններ:*

ԳԼԽԱՎՈՐ ԵՌԱՀՆՉՅՈՒՆՆԵՐ (ռուս. главные трезвучия) *մաժոր և մինոր լադերի* առաջին, չորրորդ և հինգերորդ աստիճանների վրա կառուցված եռահնչյունները, որոնք հանդիսանում են երեք *հարմոնիկ ֆունկցիաների (տոնիկային, սուբդոմինանտային, դոմինանտային)* հիմնական արտահայտիչները:

ԳԼԽԱՎՈՐ ԹԵՄԱ (ռուս. главная тема) *սոնատային ձևում գլխավոր պարտիայի թեմաներից* ամենաարտահայտիչը:

ԳԼԽԱՎՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ (ռուս. главное предложение) իմաստով նույնն է՝ *հարցական նախադասություն:*

ԳԼԽԱՎՈՐ ՊԱՐՏԻԱ (ռուս. главная партия) *սոնատային ալեգրոյի էքսպոզիցիայի* առաջին *թեման*, որը սովորաբար ներկայանալով որպես գլխավոր կերպար, առաջատար դեր է խաղում ստեղծագործական զարգացման ընթացքի մեջ: Գ. պ. մեծ մասամբ իրենից ներկայացնում է *պարբերություն* (տակտերի անսովոր քանակով՝ 10, 12 և այլն), երբեմն պարզ երկմաս կամ եռամաս ձև (հաճախ՝ ոչ սովորական): Այն տոնայնությունը, որով շարադրվում է գ. պ., հանդիսանում է ստեղծագործության *գլխավոր տոնայնությունը:* Գ. պ. կարող է կցված լինել մեկ կամ մի քանի *լրացումներ*, որոնք շարադրվում են *գլխավոր տոնայնությամբ:* Նրանք մի կողմից հանդիսանում են կարծես գ. պ. շարունակությունը, նրա երկրորդ նախադասությունը, մյուս կողմից՝ նրանցով սկսվում է կապող *պարտիան*:

ԳԼԽԱՎՈՐ ՍԵՊՏԱԿՈՐԴՆԵՐ (ռուս. главные септаккорды) *լադի* հինգերորդ աստիճանի (*դոմինանտսեպտակորդ*), *երկրորդ* աստիճանի (*սուբդոմինանտսեպտակորդ*) և յոթերորդ աստիճանի (*փոքր ձգտող* և *փոքրացրած ձգտող սեպտակորդներ*) ֆունկցիոնալ տեսակետից ամենահստակ *սեպտակորդները:*

ԳԼԽԱՎՈՐ ՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. главная тональность) 1) այն տոնայնությունը, որը գերիշխում է և որով սովորաբար սկսվում և վերջանում է երաժշտական ստեղծագործությունը: Գ. տ. հաճախ նշվում է ստեղծագործության անվանման, վերնագրի մեջ, օր. Բախի մի մի-

նոր (e-moll) պրելյուդը և ֆուգան, Մոցարտի սոլ մինոր (g-moll) սիմֆոնիան և այլն, 2) այն տոնայնությունը, որից կատարվում է *շեղում* (այսինքն՝ կարճատև անցում) դեպի մեկ այլ *օժանդակ* կոչվող տոնայնություն: Տես՝ *գլխավոր պարտիա, օժանդակ պարտիա:*

ԳԼՈԿԵՆՇՊԻԼ (գերմ. Glockenspiel, նույնն է՝ զանգակներ:

ԳԼՈՐԻԱ (լատ. Gloria՝ փառք) կաթոլիկ եկեղեցում երգվող փառաբանական օրիներգություն, *մեսսայի* հիմնական բաժիններից մեկը:

ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑ (ռուս. шедевр) 1) արվեստի, գրականության ասպարեզում անթերի, առավել կատարյալ գործ, գաղափարա-գեղարվեստական բացառիկ արժեքի ստեղծագործություն, 2) արվեստագետի, գրողի այն ստեղծագործությունը, որը թե բովանդակությամբ, թե ձևով առավել կատարյալ է, նրա գործերից լավագույնը:

ԳԾԱՅՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. линеарность) *մելոդիկ գիծը* կազմող ձայների հաջորդական շարժումը, սերտորեն կապված մեղեդու *լադային* և *ռիթմիկ* կառուցվածքի հետ: Մ. գ. բնույթը մեծ դեր է խաղում երաժշտական կերպարի ստեղծման համար:

ԳԾԻԿ (ռուս. линейка) նոտակիր կազմող հորիզոնական գծերից յուրաքանչյուրը:

ԳԾՎԱԾ ԿՐԿՆԱԿԻ ՄՈՐԴԵՆՏ (ռուս. двойной перечеркнутый мордент) տես՝ *մորդենտ:*

ԳԾՎԱԾ ՄՈՐԴԵՆՏ (ռուս. перечеркнутый мордент) տես՝ *մորդենտ:*

ԳԿ, *երրորդ կողմ* կամ *վառ ձայն*: Տես՝ *ձայն:*

ԳՉ, *երրորդ ձայն:* Տես՝ *ձայն* III:

ԳՆՉՈՒԿԱԿԱՆ ՌՈՄԱՆՍ (ռուս. цыганский романс) ռուսական *ռոմանսի* հատուկ ժանր, ծագել է XIX դ. կեսին պետերբուրգյան և մոսկովյան գնչուների ռուսական երգերի յուրահատուկ կատարման ազդեցության ներքո: Գ. ռ. բնորոշ գծերը զգացվում են Վառլամովի և Գուրիլյովի մի քանի գործերում:

ԳՈՆԳ (իտ. gong) մեծ մասամբ բրոնզե ինքնահունչ հարվածային նվագարան (գործիք), իր բազմազան և բազմաթիվ տարատեսակներով: Ցավա կղզում, ուր կա գ. արտադրություն, գործում են գոնգային նվագախմբեր, որոնց մասնակիցները կատարողական մեծ վարպետություն են դրսևորում: Գ. ունեն որոշակի բարձրություն՝ c — c^1 (փոքր *օկտավայի դո*-ից առաջին *օկտավայի դո*) սահմաններում, ձայնի բարձրությունը և բնույթը կարգավորվում է հասցրած հարվածի տեղով: Սիմֆոնիկ նվագախմբերում գ. օգտագործվում է 1791 թ., իսկ օպերային նվագախմբերում՝ 1831 թ.: Գ. խիստ արտահայտիչ նվագարան է, մասնավորապես հարուստ իր դինամիկ հնարավորություններով՝ հազիվ լսելի piano-ից մինչև հզորագույն forte, սիմֆոնիկ նվագախմբերում օգտագործվում է նաև գ. տարատեսակը՝ *տամ-տամը:* Երկուսն էլ նոտագրվում են կամ հնգագծի վրա, բասի բանալիով, կամ միագծի վրա:



ԳՈՆԴՈԼՅԵՐԱ (իտ. gondoliera, gondola-ից՝ մակույկ) նույնն է՝ *բարկարոլլե:*

ԳՈՍ, դհոլի մեծ տեսակը, որի ավելի հաստ փայտիկի հարվածող ծայրը ուռուցիկ է, իսկ բարակ փայտիկինը՝ ուղիղ:


ԳՈՎԵՐԳ (ռուս. хвалебная песнь, ода) *օդա,* տես՝ *ներբող:*

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ (լատ actus, իտ. atto, ռուս. действие) *արար, արարված,* թատերական ներկայացման (դրամատիկ ստեղծագործություն, օպերա, օպերետ, բալետ) յուրաքանչյուր առանձին մասը, որն սկսվում և վերջանում է առանց դադարի և մյուս մասերից բաժանվում է ընդմիջումով: Ներկայացումները սովորաբար ունենում են 1 — 5 գ.: Երբեմն գ. բաժանվում են պատկերների, որոնք սկզբունքորեն միմյանց պիտի հաջորդեն անընդմեջ:

ԳՐԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈ (ռուս. литературно-музыкальный вечер) համերգ, որի ծրագրում երաժշտական համարներից բացի տեղ են գտնում նաև գրական ստեղծագործություններ: Երբեմն այդ երեկոներին մասնակցում են նաև իրենք՝ բանաստեղծները և գրողները, գ. ե. ե. հաճախ կազմակերպվում են դպրոցներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, ակումբներում, ֆիլհարմոնիաներում և այլուր:

ԳՐԱՄՈՖՈՆ (ռուս. граммофон) հատուկ ձայնա-

ս կ ա վ ա ռ ա կ ի վրա գրի առնված ձայները (երաժշտություն, ասմունք, ճառ, երաժշտական ծավալուն ստեղծագործություններ և այլն) վերարտադրող ապարատ,



սարք, բաղկացած է արկղից, լայնացող փողից, զսպանակային սարքից, պտտվող սկավառակից և *ձայնահանից* (ձայնը վերահաղորդող սարքից): Հնարված է 1887 թ. Գերմանիայում:

ԳՐԱՆ ՊԱ (ֆր. grand pas՝ մեծ պար) բալետում ընդունված երաժշտական-պարային ծավալուն ձև, որին մասնակցում են գլխավոր և երկրորդական գործող անձինք, երբեմն նաև բալետախումբը (կ ո ր դ ը բ ա լ ե տ ը): Գ. պ. սովորաբար բաղկացած է լինում մուտքից (entrée), *ադաջոյից*, մի քանի *վարիացիաներից*, որոնք կատարում են մենակատարները կամ մի քանի մենակատարներ միասին, և *կոդայից*: Տես՝ *պա դը դեո, պա դը տրուա:*


ԳՐԱՎԵ (իտ. և ֆր. grave՝ ծանրակշիռ, հանդիսավոր, դանդաղ) պաթետիկ բնույթի հուզիչ և ազդու երաժշտության չափազանց դանդաղ տեմպ (ինչպես *լարգոն*):

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽՈՐԱԼ (ռուս. григорянский хорал) կաթոլիկ հոգևոր երաժշտության մեջ մտնող եկեղեցական օրհներգերի ընդհանուր անվանումը: Այդ երգերն ընտրվել, մշակվել են VII դ. երկրորդ կեսին, Հռոմի պապի՝ Գրիգոր Առաջին Մեծի ցուցումներով: Գ. խ. մի շարք ժողովուրդների բազմադարյան երգարվեստի գեղարվեստական բարձրարժեք նմուշներից է գոյացել, ուստիև չափազանց մեծ ազդեցություն ունեցել հավատացյալների վրա, կատարել են պրոֆեսիոնալ երգիչների արական երգչախմբեր միաձայն (*ունիսոն*): Գ. խ. գերիշխում են հավասար և երկար տևողությամբ ձայներ, այստեղից էլ նրա հետագա՝ *կանտուս պլանուս* անվանումը (լատ. cantus planus՝ հավասար, համաչափ, սահուն մեղեդի): Երբ կաթոլիկ եկեղեցում սահմանվեց բազմաձայն երգեցողությունը (X դ. վերջից) գ. խ. մնաց որպես պ ո լ ի ֆ ո ն ի կ հոգևոր ստեղծագործությունների թեմատիկ հիմքը: Տես՝ *կանտուս ֆիրմուս:*

ԳՐԻՖ (գերմ. Griff՝ կոթ, բռնակ), տես՝ *նվագակոթ:*

ԳՐՈՍՖԱՏԵՐ (գերմ. Grossvater՝ պապիկ) սկզբնական շրջանում կոչվել է *գրոսֆատերտանց*, XVII դ. հայտնի գերմանական պարերգ, XVIII և XIX դդ. սկզբում տարածված էր նաև Ռուսաստանում: Բաղկացած է երկու տարբեր բնույթի մասերից. առաջին դանդաղ, վ ա լ ս ա ն ը մ ա ն մասն ունի 3/4 չափ, երկրորդը՝ արագ, *էկոսեզի* նման, չափը՝ 2/4: Իրենց ստեղծագործություններում օգտագործել են Շումանը, Չայկովսկին և ուրիշներ:

ԳՐՈՒՊԵՏՈ (իտ. gruppetto) նոտաների փոքրիկ խումբ, ձ ա յ ն ա զ ա ր դ, որի հիմնական հնչյունին հաջորդում են վերին ու վարին օժանդակ հնչյունները: Բաղկացած է չորս (կամ՝ հինգ) հնչյուններից, նշանակվում է ∾ նշանով, որը դրվում է կամ նոտայից քիչ վեր, կամ երկու




նոտաների արանքում, ըստ այդմ էլ կատարվում տարբեր ձևով: Գ. վերևից կամ ներքևից դրված *ալտերացիայի նշանները* համապատասխանորեն վերաբերում են վերի կամ վարի օժանդակ հնչյուններին:

ԳՈՒԱՐԱՉԱ (իսպ. guaracha) 6/8 կամ 2/4 փոփոխական չափ ունեցող կուբայական պար (ամենայն հավանականությամբ, իսպանական ծագումով):

ԳՈՒԴԱՍՏՎԻՐԻ, տես՝ *պարկապզուկ:*

ԳՈՒԴԻԼՈ, տես՝ *գուդոկ:*
ԳՈՒԴԻՇՇԵ, տես՝ *գուդոկ:*

ԳՈՒԴՈԿ (ռուս. гудок) ռուսական ժողովրդական հնագույն աղեղնային նվագարան, երեք լարով, որոնցից առաջինը լարվում էր *կվինտա* վեր, մյուս երկուսը՝ *ունիսոնով* կամ *օկտավայով*, մեղեդին նվագում էին առաջին լարի վրա, մյուս երկուսը հանդիսանում էին *բուրդոնային լարեր:* Ժողովրդական երգարվեստի, *սկոմորոխների* երաժշտական պրակտիկայում գ. կիրառվում էր գլխավորապես որպես նվագակցող, ինչպես նաև մենանվագող




ու անսամբլային նվագարան: XIX դ. բոլորովին դուրս եկան գործածությունից, իսկ XX դ. սկզբին Ն. Պ. Ֆոմինը (1864 — 1934) կատարելագործեց և ստեղծեց գ. *քառյակ* կազմող չորս տարատեսակները՝ *գուդոչեկ (դիսկանտ), գուդոկ (ալտ), գուդիլո (բաս)* և *գուդիշշե (կոնտրաբաս),* որոնք նույնպես եռալար են, լարվում են *կվինտաներով*, գ. *քառյակը* ներկայումս նույնպես երբեմն մտնում է ռուսական ժողովրդական նվագարանների անսամբլների և նվագախմբերի կազմի մեջ:

ԳՈՒԴՈՂԵԿ, տես՝ *գուդոկ:*

ԳՈՒՆԱԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, ԳՈՒՆԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. цветомузыка, цветовая музыка) երաժշտության զուգակցումը գունալուսային էֆեկտների հետ: Դեռևս XVIII դ. երաժշտության տեսաբան, ֆրանսիացի Լ. Բ. Կաստելը փորձել է ստեղծել ապարատ, որը *կլավեսինի* հնչյունների հետ մեկտեղ պիտի տար նրանց գունային հաջորդականությունը, ըստ Նյուտոնի ձայնագունային պատկերացումների (տես՝ *գունավոր լսողություն*): Էլեկտրական ապա էլեկտրոնային ձայնա-գունային հատուկ սարքավորումներ ստեղծելու փորձերը ՍՍՀՄ-ում կատարվում են վաղուց, ներկայումս առկա են տարբեր սարքավորումներ և ապարատներ: Տես՝ *գունավոր լսողություն:*

ԳՈՒՆԱՎՈՐ ԼՍՈՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. цветной слух) *սինոպսիա*, տեսողական և լսողական տպավորությունների զուգորդում: Ձայնի և գույնի միջև եղած կապի ուսումնասիրությունը գալիս է դեռևս հին աշխարհից, *մաժորը* և *մինորը* հակադրելիս *մաժորը* սովորաբար ընկալվում է որպես «լուսավոր», «պայծառ» *լադ*, *մինորը*՝ «փայլատ», «մեղմ», «ստվերապատ» *լադ*, նման տպավորություն են թողնում նաև տարբեր ձայնաստիճանները, ինչերանգները և այլն, որոնք լայնորեն օգտագործվում են ծրագրային երաժշտություն գրելիս: Մի շարք երաժիշտներ ավելի սուբյեկտիվ տպավորություններ ունեն՝ յուրաքանչյուր տոնայնություն, ակորդ, ինչերանգ հարուցում է այս կամ այն գույնի կոնկրետ պատկերացումը և ընդհակառակն՝ օր. Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովը *դո մաժոր* տոնայնությունը պատկերացնում էր որպես ճերմակ գույն, *ռե մաժորը*՝ դեղին, արևագույն, *ֆա մաժորը*՝ բաց կանաչ, *լա մաժորը*՝ վարդագույն և այլն: Ա. Սկրյաբինի պատկերացումներն այլ էին, միայն *ռե*-ն էր համընկնում՝ ոսկեգույն, արևագույն, նա տարբերում էր դիեզավոր և բեմոլավոր տոնայնությունների, ինչպես նաև *էնհարմոնիկ հավասար տոնայնությունների* գույները: Դեռևս Նյուտոնը *դո*-ն կապում էր կարմիր գույնի, *ռե*-ն՝ նարնջագույնի, *մի*-ն՝ դեղինի հետ և այլն: Անգլիացի կոմպոզիտոր Ա. Բլիսսը գրել է «Գունային սիմֆոնիա» (1891 թ.),



ԳՈՒՅՈՒԼԿԱ (ռուս. гуцулька) Կարպատներում ապրող ուկրաինացիների՝ գուցուլների ուրախ, կրակոտ ժողովրդական պար, չափը՝ 2/4:



Դ

ԴԱՄ, հայկական, ինչպես նաև արևելյան մի շարք ժողովուրդների ազգային երաժշտության մեջ կիրառվող այնպիսի *ձայնառություն*, որն իրենից ներկայացնում է միաձայն մեղեդուն (նվագ, երգ) ուղեկցող, ձգվող ձայն: Սովորաբար մեղեդին կազմող հնչյունները դ. ավելի բարձր են լինում, դ. ձայնը հիմնականում *լադի տոնիկան* է, բաղկացած չորս մասից՝ ա) ծիրանագույն, բ) կարմիր, գ) երկնագույն, դ) կանաչ:

ԳՈՒՍԱՆ, ֆեոդալական շրջանի Հայաստանում ժողովրդական պրոֆեսիոնալ երաժիշտներ, բանաստեղծներ, դերասաններ, որոնք երգում, նվագում, երգեր և ոտանավորներ էին հորինում, ներկայացումներ տալիս և այլն: Տես՝ *վիպասան, տաղերգու, ողբերգակ, վարձակ, կաքավիչ:*

ԳՈՒՍԼԻ (ռուս. гусли) VI դ. հայտնի ռուսական ժողովրդական կսմիթային նվագարան, հնագույն գ. ունեին տափակ, քառանկյունաձև հնչարկղ, դիատոնիկ լարված մի քանի ջղալարերով: Սովորաբար «հնչեղ» («звончатые») կոչվող այդ գ. նվագակցում էին բիլինաներ պատմողների երգեցողությունը: XX դ. սկզբին հնչեղ գ. կատարելագործվեցին և ստեղծվեցին չորս տարատեսակները՝ *պիկոլո, պրիմա, ալտ և բաս:* Այժմյան նվագախմբերում օգտագործվում են սեղանաձև ստեղնային գ., որոնք հագեցած և ախորժալի հնչում ունեն և 5 — 7 *օկտավա խրոմատիկ ձայնաշար:* Գ. նման նվագարաններ ունեն ՍՍՀՄ մի շարք ժողովուրդներ. կարելները՝ *կանտելե*, էստոնացիները՝ *կաննել*, լատվիացիները՝ *կոկոլե*, լիտվացիները՝ *կանկլես:*

է, որը ներմուծում է յուրատեսակ երկձայնություն: Վարպետ դուդուկահարները ներկայումս դիմում են նաև երկձայն, երբեմն էլ եռաձայն դ.:

ԴԱՄՔԱԾ, *դամ* քաշող (*դամ* պահող դուդուկահար կամ զուռնահար):

ԴԱՅՐԱ, 1) վրացական ժողովրդական *դափանման* հարվածային նվագարան, որի տրամագծի առավել տարածված մեծությունն է 35 սմ, նվագելու տեխնիկան և կիրառումը նույնն է, ինչ դափինը, հաճախ նվագում են նաև կանայք, 2) թուրքմենական ժողովրդական հարվածային նվագարան, ներկայումս դ. օգտագործվում է նաև գործիքային անսամբլներում (դութար, գիջակ, դայրա):

ԴԱՇՆԱՄՈՒՐ (ռուս. фортепьяно) ժամանակակից ամենակատարյալ և ամենատարածված ստեղնա-լարային նվագարանների (գործիքների)՝ *ռոյալի* և *պիանինոյի* ընդհանուր անվանումը: Կառուցել է *կլավեսինի* վարպետ իտալացի Բարտոլոմեո Կրիստոֆորին (1655—1731), որի ստեղծած, դեռևս *կլավեսին* կոչվող չորս դ. երևան են եկել Ֆլորենցիայում, 1709 թ.: Ի տարբերություն մինչ այդ տարածված *կլավեսինի* և *կլավիկորդի*, դ. լարերը հնչեցվում են *ֆիլցով* (նուրբ թաղիք) պատված փայտե մուրճիկներով, ըստ ցանկության՝ մեղմ կամ ուժգին, այստեղից էլ pianoforte (հետագայում՝ fortepiano) կամ ուղղակի piano անվանումը: Ժամանակակից դ. ունեն կրկնակի *ռեպետիցիայի* մեխանիկա և սովորաբար երկու *ոտնակ*: Ձայնածավալը 5—$5^1/_2$-ից հասել է 7—$7^1/_3$ (հազվադեպ՝ ավելի) օկտավայի. սուբկոնտրօկտավայի *լա*-ից մինչև չորրորդ օկտավայի *լա*-ն կամ *դո*-ն (A_2 — a^4): Հաշվի առնելով, որ լարված վիճակում դ. լարերի ձգման ուժը հավասար է ավելի քան 20 տոննայի, լարերը ձգում են թուջե զանգվածեղ շրջանակի վրա: Շնորհիվ իր մեծ ձայնածավալի, հարուստ հնչողության, *ուժաբանական* լայն հնարավորությունների և տեխնիկական շարժունության, դ. դարձել է այն նվագարանը (գործիքը), որից օգտվում են ոչ միայն դաշնակահարները, այլև անխտիր բոլոր պրոֆեսիոնալ երաժիշտները, անկախ իրենց մասնագիտությունից (ջութակահարներ, երգիչներ, դիրիժորներ, խմբավարներ, կոմպոզիտորներ և այլն) և որը կարեվորագույն դեր է խաղացել և խաղում երաժշտական արվեստի զարգացման գործում: Նոտագրվում է ջութակի և բասի բանալիներով, երկու *նոտակիրների* վրա, որոնք միացվում են ձևավոր փակագծով (*ակոլադով*) և ընդհանուր տակտի գծերով: Կիրառվում է որպես մենակատարային, նվագակցող, անսամբլային և նվագախմբային նվագարան (գործիք): Տես՝ *խլարար, ռոյալ, պիանինո:*

ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ԱՆՍԱՄԲԼ (ռուս. фортепьянный ансамбль) դաշնակահարների անսամբլ, կամ անսամբլ դաշնամուրի մասնակցությամբ. *դաշնամուրային դուետ, դաշնամուրային տրիո, դաշնամուրային կվինտետ:*

ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ԴՈՒԵՏ (ռուս. фортепьянный дуэт) 1) երկու դաշնակահարներից բաղկացած անսամբլ, 2) երկու դաշնակահարների միաժամանակ կատարման համար գրված երաժշտական ստեղծագործություն:

ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ԿՎԱՐՏԵՏ (ռուս. фортепьянный квартет) տես՝ *կվարտետ:*

ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ԿՎԻՆՏԵՏ (ռուս. фортепьянный квинтет) տես՝ *կվինտետ:*

ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԿԱ (ռուս. фортепьянная механика) դաշնամուրի մեխանիզմի հիմնական մասը, որը դաշնակահարի՝ ստեղների վրա կատարած հարվածները վերափոխում է լարերի վրա մուրճիկների հարվածների:

ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ՏՐԻՈ (ռուս. фортепьянное трио) տես՝ *տրիո:*

ԴԱՍԱԿԱՆ (լատ. clasicus՝ օրինակելի) յուրաքանչյուր ժողովրդի ազգային երաժշտական արվեստի, ինչպես նաև համաշխարհային երաժշտական մշակույթի ընտրովի, դասական ստեղծագործությունները՝ ոսկե ֆոնդը: Դասական երաժշտության թվին են դասվում գլխավորապես անցյալի ականավոր կոմպոզիտորների ստեղծագործությունները, ժամանակի առաջատար կոմպոզիտորները, հենվելով նախորդների ավանդույթների վրա, ստեղծագործորեն են զարգացնում առկա նվաճումները, և իսկական նորարարական ստեղծագործությունները, հարստացնելով ազգային դասական արվեստը, ճանաչում են ստանում որպես նոր նմուշներ և դառնում դասական երկեր:

ԴԱՍԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ (ռուս. классический симфонический оркестр) տես՝ *սիմֆոնիկ նվագախումբ:*

ԴԱՐՍՎԱԾՔ (ռուս. сложение) երաժշտական *ֆակտուրայի* տեսակ, տերմինն օգտագործվում է *բազմաձայնության* (օր. *պոլիֆոնիկ, հոմոֆոնիկ ակորդային ենթաձայնային դարսվածք*) կամ *մելոդիկայի* (օր. *ռեչիտատիվային դարսվածք*) տեսակը որոշելու համար:

ԴԱՓ (ռուս. даф), *դաֆ, ղավալ*, հայկական ժողովրդական հարվածային միակող նվագարան, 5—8 սմ լայ-



նության շրջանաձև *խենի* մի կողմի վրա ձգված է կաշվե թաղանթ, *խենի* ներսի կողմից կախված են բոժոժիկներ կամ մետաղյա օղեր, որոնք նվագելիս զնգզնգում

են: Կան տարբեր տրամագծի դ՝ մոտավորապես 34—48 սմ: *Մազանդարների* անսամբլ կազմող երեք նվագարաններից մեկն է (*թառ, քյամանչա, դափ*), նաև մտնում է ժողովրդական նվագարանների տարբեր անսամբլների և նվագախմբերի կազմի մեջ: *Դափանման* նվագարաններ ունեն նաև մի շարք այլ ժողովուրդներ:

ԴԱՓԴԱՓՅՈՒՆ (ռուս. дробь) 1) երկու փայտիկներով նվագը թմբուկի վրա, որի ժամանակ հարվածները տեղում են համարյա անընդմեջ, 2) *բալալայկա* նվագելու տեխնիկական հնար, որի ժամանակ մատների արագ հաջորդականությամբ խփում են լարերին:

ԴԱՓՆԵԿԻՐ (ռուս. лауреат) պատվավոր կոչում, որը հատուկ *ժյուրիների* որոշմամբ շնորհվում է գիտության, գրականության, արվեստի և այլ ասպարեզներում աշխատող այն անձանց, որոնց աշխատանքները կամ կատարած գործունեությունը ստանում է առավել գերազանց գնահատական կամ, որոնք մրցույթներում մրցանակ են շահում (օր. միջազգային, միութենական, հանրապետական և այլ երաժշտական մրցույթներում):

ԴԵԲՅՈՒՏ (ֆր. debut, ռուս. дебют) առաջին կամ փորձնական ելույթ օպերային և օպերետային թատրոններում (երգչի, պարողի, դիրիժորի, նկարչի, բալետմայստերի և այլն) կամ որևէ այլ ասպարեզում (թատրոնի դերասանի, կրկեսի, էստրադայի արտիստի, կոմպոզիտորի և այլն):

ԴԵԲՅՈՒՏԱՆՏ, ԴԵԲՅՈՒՏԱՆՏՈՒՀԻ (ռուս. дебютант, дебютантка) տես՝ *դեբյուտ*:

ԴԵԿԱ (գերմ. Deke՝ կափարիչ, խուփ) տես՝ *հնչերեն*:

ԴԵԿՐԵՇԵՆԴՈ (իտ. decrescendo՝ նվազելով) հնչողության ուժգնության աստիճանական նվազեցում (հնչողության հետզհետե մեղմացում):

ԴԵՄՊՖԵՐ (գերմ. Dämpfer) տես՝ *խլարար*:

ԴԵՏԱՇԵ (ֆր. detaché՝ նջատ, առանձին) աղեղնային նվագարանների (գործիքների) բնորոշ *շտրիխ*՝ յուրաքանչյուր հնչյունից հետո աղեղը փոխում է շարժման ուղղությունն այնպես, որ հնչյունները չեն անջատվում միմյանցից, նոտագրական հատուկ նշանակում չունի, սակայն երբ անհրաժեշտ է լինում չոր, կոշտ հնչյուններ արտաբերել, ամեն անգամ աղեղը շարժում են միևնույն ուղղությամբ՝ կոճղիկից դեպի գլխիկը, վերից վար, ի հետևանք հնչյունները ինչ-որ տևողությամբ անջատվում են մեկը մյուսից: Դ. կատարման նման ձևը նոտագրվում է աղեղի շարժման ուղղությունը ցույց տվող նշանով: Դ. ժամանակ կարելի է օգտագործել աղեղն իր ամբողջ երկարությամբ կամ որոշ հատվածը, այստեղից էլ դ. տարատեսակները՝ *մեծ դ., միջին դ., մանր դ.*:

ԴԵՏՈՆԱՑԻԱ, տես՝ *կեղծձայնություն*:

ԴԵՏՈՆԱՑՈՒՄ (ֆր. détonner) տես՝ *կեղծձայնում*:

ԴԵՐԵԳ, տես՝ *պարտիա*:

ԴԵՑԻՄԱ (լատ. decima՝ տասներորդ) *դիատոնիկ գամմայի* յուրաքանչյուր հնչյունի տասներորդ աստիճանը, կամ դրանց հարաբերությունը, այլ կերպ տասն աստիճան ընդգրկող *ինտերվալ*: Դ. օկտավընդմեջ տերցիան է (օկտավա+տերցիա), օր. *դո* և օկտավա վեր *մի, սոլ* և օկտավա վեր *սի*: Տես՝ *բարդ ինտերվալներ*:

ԴԻԱԼՈԳ (հուն. diálogos՝ խոսակցություն երկու կամ մի քանի մարդկանց միջև) տես՝ *երկխոսություն*:


ԴԻԱՊԱԶՈՆ, տես՝ *ձայնածավալ*:

ԴԻԱՏՈՆԻԿԱ (հուն. diátonos) տարբեր անուններ կրող երաժշտական ձայների հաջորդականություն, այլ կերպ՝ տարբեր աստիճանների հաջորդականություն: Բոլոր այն *լադերի ձայնաշարերն ու գամմաները*, որոնք կառուցված են *դիատոնիկ կիսատոներով, դիատոնիկ տոներով* և *դիատոնիկ տոնուկեսերով*, մաժոր և մինոր լադերինը իրենց տարատեսակներով (*բնական հարմոնիկ, կրկնակի հարմոնիկ և մելոդիկ*), բնական բոլոր լադերինը՝ *իոնական, դորիական, փռյուգիական, լիդիական, միքսոլիդիական, էոլական, լոկրիական, պենտատոնիկայինը* և այլն): Տես՝ *խրոմատիկ կիսատոն*:

ԴԻԱՏՈՆԻԿ ԳԱՄՄԱ (ռուս. диатоническая гамма) *դիատոնիկ կիսատոներով, դիատոնիկ տոներով և դիատոնիկ տոնուկեսերով* կառուցված *գամմա*, օր. մաժոր և մինոր լադերի բոլոր տարատեսակները, բոլոր բնական լադերն ու *պենտատոնիկան*: Տես՝ *դիատոնիկա, խրոմատիկ գամմա*:



ԴԻԱՏՈՆԻԿ ՋԱՐՏՈՒՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. диатоническая модуляция) *դիատոնիկ մոդուլյացիա*, զարտուղություն, որ կատարվում է *դիատոնիկ քայլի* միջոցով: Զարտուղող դիատոնիկ քայլը ստացվում է *միջակա* և զարտուղող ակորդների միացման ժամանակ, ըստ որում միջակա ակորդը հին և նոր տոնայնությունների համար հանդիսանում է ընդհանուր ակորդ: Տեղի է ունենում աստիճանների հավասարեցում, այլ կերպ՝ միջակա ակորդի ֆունկցիայի փոփոխում, որից հետո գալիս է զարտուղող ակորդը և նոր տոնայնությունը հաստատող *կադանսը*: Տես՝ *զարտուղություն, խրոմատիկ զարտուղություն*:



ԴԻԱՏՈՆԻԿ ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐ (ռուս. диатонические интервалы) ի ն տ ե ր վ ա լ ն ե ր, որոնք գոյանում են *բնական մաժոր* և *բնական մինոր լադերի* աստիճանների վրա. բոլոր մաքուր, մեծ և փոքր *ինտերվալները*, մեծացրած *կվարտան* և փոքրացրած *կվինտան*: Տես՝ *ինտերվալ, խրոմատիկ ինտերվալներ, տրիտոն:*

ԴԻԱՏՈՆԻԿ ԿԻՍԱՏՈՆ (ռուս. диатонический полутон) տես՝ *կիսատոն:*

ԴԻԱՏՈՆԻԿ ՁԱՅՆԱՇԱՐ (ռուս. диатонический звукоряд) 1) *լադ* կազմող հնչյունների *դիատոնիկ* հաջորդականությունը, օր. մ ա ժ ո ր լ ա դ ի ձ ա յ ն ա շ ա ր ը դ ո տոնայնության մեջ կլինի *դո-ռե-մի-ֆա-սոլ-լա* և *սի*, տես՝ *դիատոնիկ գամմա*, 2) այդպես են կոչվում մի շարք նվագարանների ձ ա յ ն ա շ ա ր ե ր, որոնցում չկան խ ր ո մ ա տ ի կ ո ր ե ն փոփոխվող հնչյուններ (օր. հարմոնների, շրթհարմոնների, ժողովրդական լարային նվագարանների մի քանի տեսակները):

ԴԻԱՏՈՆԻԿ ՄՈԴՈՒԼՅԱՑԻԱ, տես՝ *դիատոնիկ զարտուղություն:*

ԴԻԴԻՄՅԱՆ ԿՈՄՄԱ (ռուս. Дидимова комма) տես՝ *կոմմա*, նույնն է՝ *սինտոնիկ կոմմա:*

ԴԻԵԶ (հուն. diésis՝ բարձրացում) տես՝ *ալտերացիայի նշաններ:*

ԴԻԵՍ ԻՐԱԵ (լատ. Dies irae՝ ցասման օր) միջնադարյան կաթոլիկ եկեղեցական օրհներգություն (*սեկվենցիա*), որը հետագայում դարձել է *ռեքվիեմի* մասերից մեկը:



Դ. ի. այս մռայլ եղանակը, բազմաթիվ ռեքվիեմների հեղինակներից բացի, իրենց սիմֆոնիկ, օպերային և այլ ստեղծագործություններում օգտագործել են նաև Բեռլիոզը, Սեն-Սանսը, Լիստը, Չայկովսկին, Ռախմանինովը, Խաչատրյանը, Շոստակովիչը, Հոնեգերը և այլք:

ԴԻԼԵՏԱՆՏ (իտ. dilettante, dilettare-ից՝ ուրախացնել, հաճույք պատճառել) տես՝ *սիրող:*

ԴԻԼԵՏԱՆՏԻԶՄ (ֆր. dilettantisme) տես՝ *սիրողականություն:*

ԴԻԿՑԻԱ (լատ. dictio-ից՝ ճառ արտասանելը, ճառի արտասանումը) տես՝ *առոգանություն:*

ԴԻՄԱԿ (ֆր. masque, ռուս. маска) 1) վոկալ մանկավարժության մեջ օգտագործվող տերմին, որը առնչվում է երգչի ձայնի հնչողությանը՝ դեմքի վերին մասում (կարծես՝ դիմակով ծածկված), 2) (հին լատ. mascus-ից) XVI — XVII դդ. անգլիական արքունիքում զվարճալի ներկայացում, որևէ հանդիսավոր տոնակատարության առթիվ, առասպելական կամ հովվերգական բնույթի սյուժեով:

ԴԻՄԱԿԱՁԱՆԴԵՍ (ռուս. маскарад կամ՝ бал-маскарад) պարահանդես, որտեղ հյուրերը (հասարակությունը) սովորաբար պարտավոր են ներկա գտնվել դիմակներով:

ԴԻՄԱՇԱՐ (ռուս. противосложение) *ֆուգայի* կամ մեկ այլ *պոլիֆոնիկ* ստեղծագործության թ ե մ ա յ ի կրկնումներին *կոնտրապունկտող ձայն*, այլ կերպ՝ այդ կրկնումներին ուղեկցող մելոդիկ գիծ՝ մեղեդի: Ֆ ու գ ա յ ի ընկըզբում դ. հանդիսանում է թ ե մ ա յ ի բնական շարունակությունը, անկախ դ. նշանակալիության աստիճանից, իր բնույթով տարբերվում է թ ե մ ա յ ի ց, միաժամանակ զուգակցվում է դրա հետ, ներդաշնակում: Դ. կարող է լինել *պահված*, երբ ուղեկցում է թ ե մ ա յ ի ն երկու և ավելի կրկնումների ժամանակ և *չպահված*, երբ ուղեկցում է թ ե մ ա յ ի ն միայն մի անգամ:



ԴԻՄԱՎՈՐՄԱՆ ՔԱՅԼԵՐԳ (ռուս. встречный марш) շարասյունային քայլերգի տարատեսակը, չափը՝ ¢ (alla breve), կատարվում է զինվորական հանդիսավոր արարողությունների, պատիվներ հանձնելու ժամանակ: Տես՝ *քայլերգ:*

ԴԻՄԻՆՈՒԵՆԴՈ (իտ. diminuendo՝ նվազեցնելով) հետզհետե մեղմացնելով հնչողությունը: Տես՝ *ուժաբանություն:*

ԴԻՆԱՄԻԿԱ, տես՝ *ուժաբանություն:*

ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՆՇԱՆՆԵՐ, տես՝ *ուժաբանություն:*

ԴԻՆԱՄԻԿ ՇԵՇՏ (ռուս. динамический акцент) շեշտ, որը ստացվում է հարվածի ուժը մեծացնելու միջոցով (շեշտի ավելի տարածված ձևը, նշանակվում է > կամ ∨ նշանով:):

ԴՈՂԼԻՊԻՏՈՆ, *նաղարա*, վրացական ժողովրդական հարվածային նվագարան, նման է հայկական նաղարային, կճուճներն ունեն միևնույն բարձրությունը՝ 23—25 սմ և տարբեր տրամագծեր՝ 9 և 17 սմ: Երբեմն միացնում են երրորդ՝ ամենափոքր կճուճը: Վրաստանի ժողովրդական երգի-պարի պետական անսամբլում օգտագործվում է տարբեր մեծության հինգ կճուճներից բաղկացած դ.:

ԴԻՍԿԱՆՏ (լատ. discantus) 1) մանկական (տղաների) բարձր ձայն, ձայնածավալն է առաջին օկտավայի (*դո*-ից) *ռե*-ից մինչև երկրորդ օկտավայի *սոլ*-ը (*լյա*-ն): Այդպես են կոչում նաև տվյալ ձայնն ունեցող երգիչներին, 2) խմբերգերի կամ երգչական անսամբլների այն *պարտիան*, որը պիտի կատարեն բարձր մանկական կամ բարձր կանացի ձայները (*սոպրանոները*):

ԴԻՍՀԱՐՄՈՆԻԱ (հուն. dis՝ բացասման նախածանցը և harmonia՝ ներդաշնակություն), տես՝ *աններդաշնակություն:*

ԴԻՍՈՆԱՆՍ (լատ. dissonare՝ տարաձայնություն) *հարմոնիկ ինտերվալ* կամ *ակորդ*, որոնց մեջ մտնող հնչյունները կարծես խանգարում են իրար, չեն միաձուլվում, աններդաշնակ են և անբարեհնչյուն: Բոլոր դ. *լուծման* կարիք են զգում: Տես՝ *կոնսոնանս, լուծում:*

ԴԻՍՈՆԱՆՍՈՂ ԱԿՈՐԴՆԵՐ (ռուս. диссонирующие аккорды) տես՝ *դիսոնանս:*

ԴԻՍՈՆԱՆՍՈՂ ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐ (ռուս. диссонирующие интервалы) տես՝ *դիսոնանս:*

ԴԻՎԵՐՏԻՍՄԵՆՏ (ֆր. divertissemente՝ զվարճալիք, զվարճություն) 1)երաժշտական և այլ համարներից կազմված (սովորաբար դյուրությամբ ընկալվող և զվարճալի) համերգ, որը հավելյալ տրվում է դրամատիկ կամ երաժշտական ներկայացումներից հետո, 2) օպերայի կամ բալետի մեջ մտցված պարային համարներ, որոնք սակայն անմիջականորեն կապված չեն սյուժեի հետ, 3) փողային և խառը անսամբլների և առանձին նվագարանների համար գրված, 5 — 6 և ավելի առանձին մասերից բաղկացած թեթև ժանրի *սյուիտանման* ստեղծագործություն, 4) դյուրությամբ ընկալվող, երբեմն վիրտուոզ բնույթի *պիես*, որը նման է *պոպուրիի* կամ *վարիացիաների*, օր. Բելլինիի «Սոմնամբուլա» օպերայի թեմաներով դաշնամուրի և լարային քառյակի համար գրված Գլինկայի «Փայլուն դիվերտիսմենտը», Շուբերտի «Հունգարական» դիվերտիսմենտը չորս ձեռքի համար և այլն:

ԴԻՎԻԶԻ (իտ. divisi՝ բաժանվածներ) նվագախմբերում լարային նվագարանների (գործիքների) *պարտիաներում* ցուցում այն մասին, որ նոտաների նշված հատվածում եղած կրկնակի նոտաները կամ ակորդները պիտի նվագի ոչ թե տվյալ ձայնախմբի (առաջին ջութակների, թավջութակների և այլն) մեջ մտնող յուրաքանչյուր երաժիշտ, այլ նախօրոք բաժանված երկու կամ ավելի ենթաձայնախմբեր, որոնցից յուրաքանչյուրը կատարում է կրկնակի նոտաների կամ ակորդի որևէ մեկ ձայնը: Դ. ազդեցությունը չեզոքանում է unisono (կրճատ՝ unis) կամ non divisi իտալերեն նշումով:

ԴԻՐԵԿՑԻՈՆ (ֆր. direction, բառացի՝ ղեկավարություն) 1) առաջին ջութակի, դաշնամուրի նվագախմբային պարտիայում հավելյալ հնգագիծ, որի վրա գրված է մյուս պարտիաների մեղեդիական հիմնական նյութը և մատնացույց է արված մուտք գործելու ժամանակը: Դ. հնարավորություն է տալիս սովորել և կատարել գործիքային փոքր կազմերի համար գրված պիեսներ, առանց *պարտիտուրի* և դիրիժորի, որևէ գործիքի բացակայության դեպքում կատարել այդ գործիքի պարտիան ուրիշ գործիքով, 2) փողային նվագախմբի համար նախատեսված ոչ մեծ ստեղծագործությունների (վալս, քայլերգ, պոլկա) կրճատ, սովորաբար 3—4 ձայնանի *պարտիտուրը*, դ. բոլոր ձայները գրվում են իրական հնչողությամբ (այսպես կոչված *պարտիտուր դո տոնում*, in C):

ԴԻՐԻԺՈՐ (ֆր. diriger-ից՝ ուղղություն տալ, ղեկավարել) 1) *նվագավար*, որևէ նվագախումբ կամ նվագախումբ ներառնող կատարողական այլ կոլեկտիվ (օպերա, օպերետ, և այլն) ղեկավարող երաժիշտ, արվեստագետ-կատարող, որն իր կամքը, գեղարվեստա-կատարողական ընկալումներն է թելադրում կոլեկտիվին, կազմակերպիչ է և դաստիարակ: Այդ ամենը դ. պահանջում են մասնագիտական հիմնավոր գիտելիքներ, բարձր ճաշակ, անառարկելի ձիրք և տաղանդ, անհատականություն, մարդկային արժանիքներ: XVIII դ. Եվրոպայում վոկալ կամ նվագային *կապելլաների* ղեկավարները կոչվում էին *կապելմայստերներ*, ներկայում այսպես կոչում են միայն փողային նվագախմբերի ղեկավարներին, 2) խմբավարը այլ կերպ կոչվում է *երգչախմբի դիրիժոր*, 3) ժամանակին այդպես էին կոչում նաև պարահանդեսներին պարերը ղեկավարող անձնավորությանը:

ԴԻՐՔ (լատ. positio, ռուս. позиция) *դրություն*, ձախ ձեռքի դրությունը լարային նվագարանի (գործիքի) *նվագակոթի (գրիֆի)* վրա: Յուրաքանչյուր դ., առանց ձախ ձեռքը տեղից շարժելու, կարելի է մատների շարժումով չորս լարի վրա նվագել *դիատոնիկ ձայնաշարի* 16 հնչյուն: Դ. սկսվում են *շեմիկից*, երբ առաջին մատը (ցուցամատը) գտնվում է *շեմիկի* կողքին, տվյալ դ. համարվում է առաջինը, և որքան ցուցամատը հեռանում է *շեմիկից*, այնքան ավելանում է դ. համարը:

Գամմաների նվագը չորս լարերի վրա ավելի բարձր դ. գործածական չէ, ութերորդ և ավելի բարձր դ. սովորաբար օգտագործվում են առաջին լարի վրա, դ. փոփոխումը կատարվում է աննկատելիորեն, դ. կարող են փոփոխվել ոչ միայն հերթականությամբ, այլև մեկընդմեջ ու ավելի: Դ. յուրացումը մեծապես օժանդակում և դյուրացնում է *նվագակոթի (գրիֆի)* տիրապետմանը:

ԴԻՖԻՐԱՄԲ (հուն. dithýrambos) Հին Հունաստանում խմբային երգեցողություն՝ Դիոնիս աստծո պատվին, դ. կատարման ժամանակ երգչախմբից զատվում էր *նախերգիչը*, դ. հանդիսացել է ողբերգության ստեղծման հիմքը:

ԴԿ, *չորրորդ կողմ* կամ *վերջձայն:* Տես՝ *ձայն* III:

ԴՀՈԼ, հայկական ժողովրդական երկկողմանի հարվածային նվագարան, 30 — 40 սմ լայնությամբ և 35 — 50 սմ տրամագծով փայտե գլանաձև *խենը* երկու կողմից պատվում է հորթի կամ ոչխարի կաշվով (ներկայումս՝ արհեստական թաղանթով), ըստ որում մի կողմինը մյուսից ավելի հաստ է լինում: Կաշիները ձգում են բարակ թոկով: Նվագելու երկու ձև կա. տարբեր մեծության երկու փայտիկներով (կոպալ և ճիպոտ), միայն ձեռքերի ափերով ու մատներով: Դ. հիմնականում օգտագործվում է զուռնահարների և դուդուկահարների, երբեմն նաև *սազանդարների* անսամբլներում, ժողովրդական նվագարանների (գործիքների) անսամբլներում: Դ.-անման ազգային նվագարաններ ունեն մի շարք այլ ժողովուրդներ: Տես՝ *գոս, դափ:*


ԴՁ, *չորրորդ ձայն:* Տես՝ *ձայն* III:

Դո (do) 1) ժամանակակից երաժշտական *ձայնաշարի* յոթ հիմնական հնչյուններից առաջինի վանկային անվանումը: Սկզբում կոչվել է *ուտ* (տես՝ *սոլմիզացիա*): Տառային նշանակումն է C կամ c, 2) *բանալիի* անուն:

ԴՈԴԵԿԱՖՈՆԻԱ (հուն. dōdéka՝ տասներկու և phóne՝ հնչյուն) երաժշտական մտածողություն, որի հիմքում ընկած է ոչ թե *լադային ձգողականությունը*, այլ *խրոմատիկ ձայնաշարի*՝ համարժեք ճանաչվող 12 հնչյունները, որոնց մեջ չկան *կայուն* և *անկայուն* հնչյուններ, չկա *տոնիկա:*

Այդ ուղղությամբ առաջին փորձերը (1912 թ.) կատարել է ավստրիացի կոմպոզիտոր Յո. Հաուերը, որը գրել է *ատոնալ* մի շարք ստեղծագործություններ, *ատոնալ* երաժշտության ձեռնարկ (1920 թ.), «Տասներկու տոնային տեխնիկա» գիրքը (1926 թ) և այլն: Դ. մշակեց և 1923 թ. իր op. 23 «Հինգ դաշնամուրային պիեսներով» և 8 գործիքների համար գրված «Սերենադով» կյանք մտցրեց ավստրիացի կոմպոզիտոր Ա. Շյոնբերգը, որը և համարվում է դ. հիմնադիրը: Դ. կամ *սերիային* երաժշտությունը ստեղծվում է տասներկու տարբեր հնչյուններից բաղկացած այսպես կոչված *սերիայից*, որ յուրաքանչյուր ստեղծագործության համար նախօրոք կազմում է կոմպոզիտորը: Տես՝ *սերիային տեխնիկա, պուանտիլիզմ:*

ԴՈԼԻ, վրացական, աբխազական, աջարական ժողովրդական *դհոլանման* հարվածային նվագարան:



ԴՈՄԻՆԱՆՏ (լատ. dominanta՝ իշխող) 1) *մաժոր* և *մինոր լադերի* գլխավոր աստիճաններից մեկի՝ հինգերորդ աստիճանի անունը, նշանակվում է լատինական D տառով կամ հռոմեական V թվանշանով (տես՝ *լադի աստիճաններ*), 2) *մաժոր* և *մինոր լադերի* V աստիճանի վրա կառուցված ակորդի անունը, ինչպես նաև *դոմինանտային ֆունկցիային* պատկանող III և VII աստիճանների վրա կառուցված ակորդների անունը: Տես՝ *հարմոնիկ ֆունկցիաներ:*

ԴՈՄԻՆԱՆՏԱՅԻՆ ԱԼՏԵՐԱՑՎԱԾ ԱԿՈՐԴՆԵՐ ՄԱԺՈՐՈՒՄ (ռուս. доминантовые альтерированные аккорды в мажоре) *մաժոր լադի* երկրորդ աստիճանի իջեցումը և բարձրացումը տալիս է *դոմինանտային ալտերացված ակորդների* հետևյալ շարքը՝ V^{-5}, V_7^{+5}, V^{+5}, V^{-5}, VII^{3}, VII_7^{-3}, VII^{-3}, VII_7^{+3}, իրենց *շրջվածքներով*, V_9^{-5}, V_9^{+5}, ըստ որում *ալտերացված* VII_7 և V_9 օգտագործվում են



թե *բնական*, թե *հարմոնիկ մաժորում:* Հնարավոր է երկրորդ աստիճանի բարձրացումը և իջեցումը միաժամա-

նակ (օր. $V_{4\,6}^{+5}$)։ *Լադի* IV աստիճանի բարձրացումը տալիս է *դոմինանտային ալտերացված* հետևյալ ակորդները՝ V_7^{+7}, երբեմն՝ V_7^{+5+7} (պրոկոֆևյան դոմինանտա), VII_7^{+5} կամ VII_7^{+3+5}

ԴՈՄԻՆԱՆՏԱՅԻՆ ԱԼՏԵՐԱՑՎԱԾ ԱԿՈՐԴՆԵՐ ՄԻՆՈՐՈՒՄ (ռուս. доминантовые альтерированные аккорды в миноре) մինորում *լադի* II *աստիճանը ալտերացիայի* է ենթարկվում միայն իջեցումով, այդ իսկ պատճառով մինորում նույն ակորդները (ինչ և մաժորում) կլինեն միայն իջեցումով։ Բացի II աստիճանից, մինորում *ալտերացիայի* է ենթարկվում *լադի* IV աստիճանը, որի հետևանքով ստացվում են V_7^7 և VII_7^{-5} ակորդներն՝ իրենց *շրջվածքներով*։



ԴՈՄԻՆԱՆՏԱՅԻՆ ՓՈՔՐԱՑՐԱԾ ՍԵՊՏԱԿՈՐԴ (ռուս. доминантовый уменьшенный септаккорд) հարմոնիկ մաժորի և մինորի յոթերորդ աստիճանի վրա կառուցված *փոքրացրած սեպտակորդ*, նշանակվում է՝ VII_7։

ԴՈՄԻՆԱՆՏԱՅԻՆ ՖՈՒՆԿՑԻԱ (ռուս. доминантовая функция) տես՝ *հարմոնիկ ֆունկցիաներ*։

ԴՈՄԻՆԱՆՏՍԵՊՏԱԿՈՐԴ, մաժորի և հարմոնիկ մինորի *դոմինանտաների* (V աստիճանների) վրա կառուցված *սեպտակորդը*, նշանակվում է D_7 կամ V_7։ Կառուցվածքով *փոքր մաժոր սեպտակորդ է*, դ. ունի երեք *շրջվածք*՝ *դոմինանտկվինտսեքստակորդ* (D_5^6), *դոմինանտտերցկվարտակորդ* (D_3^4), *դոմինանտսեկունդակորդ* (D_2), որոնք լուծվում են ըստ *լադային ձգողականության*։



Դ. (և նրա *շրջվածքները*) անհրաժեշտություն է ստեղծում *տոնիկայի* հանդես գալուն, դրանով իսկ հանդիսանում մաժոր և մինոր լադերի կարևորագույն ակորդը։ Երբ դ. և նրա *շրջվածքները* լուծվում են ոչ *տոնիկայի*, այլ որևէ ուրիշ աստիճանի ակորդի մեջ, դա ընկալվում է որպես հարմոնիկ շարժման բնական ընթացքի խախտում։ Տես՝ *ընդհատված կադանս*։

ԴՈՄԻՆԱՆՏՍԵՊՏԱԿՈՐԴԻ ԵՎ ՆՐԱ ՇՐՋՎԱԾՔՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ (ռուս. разрешения доминантсептаккорда и его обращений) տես՝ *դոմինանտսեպտակորդ*։

ԴՈՅՆԱ (ռում. dóina) ռումինացիների և մոլդավացիների ժողովրդական քնարական երգ, սովորաբար կազմված երկու մասից՝ առաջինը դանդաղ, թախծոտ, հովվի գանգատը պատկերող, երկրորդը՝ ուրախ, որը ներկայացնում է հովվի պարը հոտի վերադարձից հետո։ Դ. մեղեդիներն իրենց ստեղծագործություններում օգտագործել են մի շարք կոմպոզիտորներ։ Ներկայումս «Դոյնա» է կոչվում մոլդավական պետական *կապելլան*։

ԴՈՅՐԱ, 1) ուզբեկական ժողովրդական դափանման հարվածային նվագարան, որի թաղանթը պատրաստում են կենդանու ստամոքսից կամ ձկան կաշուց։ Նվագելու տեխնիկան նույնն է, ինչ *դափինը*, դ. ուղեկցում է պարին, երգեցողությանը, այլ նվագարանների նվագին, մտնում է



բոլոր նվագային անսամբլների և նվագախմբերի կազմի մեջ։ Դ. ձայնը ավելի հնչեղ դարձնելու համար երբեմն մատներին հագցնում են մատնոցանման մետաղե ծայրակալներ, 2) տաջիկական ժողովրդական հարվածային նվագարան, որը կառուցվածքով, նվագելու տեխնիկայով և կիրառմամբ նման է ուզբեկական դ.։

ԴՈՐԻԱԿԱՆ ԼԱԴ (ռուս. дорийский лад) տես՝ *միջնադարյան լադեր*։

ԴՈՐԻԱԿԱՆ ՍԵՔՍՏԱ (ռուս. дорийская секста) *դորիական մինոր լադում* առաջին և վեցերորդ (դեպի վեր) աստիճանների կազմած *մեծ սեքստան* (այդ *լադի* բնորոշ *ինտերվալը*)։

ԴՈՐԻԱԿԱՆ ՏԵՏՐԱԽՈՐԴ (ռուս. дорийский тетрахорд) տես՝ *տետրախորդ*։

ԴՈՓԱՊԱՐ (ռուս. чечётка) պար, որն իրենից ներկայացնում է կրունկների և ներբանների (կոշկատակերի) ռիթմիկ դոփյուն, որի ժամանակ ստացվում են ռիթմիկ բազմապիսի պատկերներ։

ԴՊԻՐ (ռուս. дьяк, дьячок) եկեղեցական երգիչ։

ԴՐԱՄԱՏԻԿ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. драмматическая музыка) դրամատիկ բնույթի երաժշտություն, դրամատիկ գործողության հետ կապված երաժշտություն։

ԴՐԱՄԱՏԻԿ ԲԱՐԻՏՈՆ, *բարիտոն*, որն ավելի քիչ շարժուն է *լիրիկական բարիտոնից*, սակայն ավելի ուժեղ է, թավ ու առնական, վերին նոտաներն իրենց բնույթով մոտենում են *բասերին*։ Տես՝ *բարիտոն*։

ԴՐԱՄԱՏԻԿ ՄԵՑՈ ՍՈՊՐԱՆՈ, տես՝ *մեցցո սոպրանո*։

ԴՐԱՄԱՏԻԿ ՍՈՊՐԱՆՈ, վարի ձայնաստիճանը

ինչում է առանձնապես լիքը, թավ և իր բնույթով մոտենում է *մեցցո սոպրանոյին*, նույնիսկ *կոնտրալտոյին*, ավելի քիչ շարժուն ձայն է, քան *լիրիկական սոպրանոն*, ձայնածավալն է փոքր օկտավայի (*լա*-ից) *սի*-ից մինչև երրորդ օկտավայի *դո*-ն (a—(h)—c^3):

ԴՐԱՄԱՏԻԿ ՏԵՆՈՐ (իտ. tenore diforza) առնական բնույթի *տենոր*, ձայնածավալն է՝ մեծ օկտավայի *սի*-ից մինչև երկրորդ օկտավայի *դո*-ն (H — c^2): Բնորոշվում է չափազանց մեծ հուզականությամբ, արտահայտչականությամբ և կրքով, ձայնածավալի համարյա բոլոր նոտաները հնչում են ուժեղ ու թավ, բնույթով որոշ նմանություն ունի *բարիտոնի* հետ, եթե դ. տ. կատարում է հերոսների դերերգեր, կոչվում է նաև *հերոսական տենոր*: Տես՝ *տենոր* (1-ին նշանակությամբ):

ԴՈՒԲԼ (ֆր. double) 1) XVII XVIII դդ. այսպես էր կոչվում փոքր *պիեսի* կամ մեծ ստեղծագործության որևէ մասի տարբերակը, դրա ձևափոխված կրկնությունը, 2) կրկնակի, օր. *դուբլ — բեկար, դուբլ — դիեզ, դուբլ — բեմոլ:*

ԴՈՒԲԼ ԲԵԿԱՐ (ֆր. double — becare՝ կրկնակի բեկար) տես՝ *ալտերացիայի նշաններ:*


ԴՈՒԲԼ ԲԵՄՈԼ (ֆր. double — bémol՝ կրկնակի բեմոլ) տես՝ *ալտերացիայի նշաններ:*

ԴՈՒԲԼ ԴԻԵԶ (ֆր. double — dièse՝ կրկնակի դիեզ) տես՝ *ալտերացիայի նշաններ:*

ԴՈՒԲԼՅՈՐ (ֆր. doubleur) տես՝ *փոխարինող, փոխնակ:*

ԴՈՒԴԱ, տես՝ *պարկապզուկ:*

ԴՈՒԴՈՒԿ, հայկական ժողովրդական, նաև անդրկովկասյան ժողովուրդների շրջանում տարածված փողային նվագարան, որը նման է *հոբոյի*, սակայն ավելի լայն, կըրկնակի *լեզվակ* ունի, պատրաստվում է ծիրանի փայտից, ունի *դիատոնիկ ձայնաշար, դեցիմայի* սահմաններում: Սովորաբար նվագում են երկու դուդուկահար, որոնցից մեկը նվագում է մեղեդին, մյուսը արտաբերում է նույն բարձրության, անընդհատ ձգվող ձայնը (*դամը*): Աչքի է ընկնում հուզական իր ազդեցությամբ, անկրկնելի երանգներով:



ԴՈՒԵՏ (գերմ. duett, իտ. duetto, լատ. duo-ից՝ երկու) 1) *երկյակ*, երկու կատարողների (երգիչ, երաժիշտ) անսամբլ, որ կարող է և գործիքային նվագակցություն ունենալ, 2) երկու երգիչների կամ նվագողների անսամբլի համար գրված երաժշտական ստեղծագործություն, 3) օպերաներում, օպերետներում, օրատորիաներում, կանտատներում հաճախակի հանդիպող վոկալ անսամբլ, որը հանդես է գալիս նվագախմբի նվագակցությամբ:

ԴՈՒԵՏԻՆՈ (իտ. duettino՝ փոքրիկ դուետ) *դուետի (երկյակի)* համար գրված երաժշտական փոքրածավալ ստեղծագործություն:

ԴՈՒՄԿԱ (ռուս. думка) 1) ուկրաինական և լեհական քնարա-էպիկական կամ քնարական բնույթի ժողովրդական երգ, 2) գործիքային և վոկալ մի քանի *պիեսների* / անվանում (դաշնամուրի համար): Այսպես է կոչվում նաև ուկրաինական երգչախմբային *կապելլան:*

ԴՈՒՈԴԵՑԻՄ (լատ. duodecima՝ տասներկուերորդ) *դիատոնիկ գամմայի* յուրաքանչյուր հնչյունի տասներկուերորդ աստիճանը, կամ դրանց հարաբերությունը, այլ կերպ՝ տասներկու աստիճան ընդգրկող *ինտերվալ*: Դ. օկտավընդմեջ *կվինտան* է (օկտավա + կվինտա), օր. *դո* և օկտավա վեր *սոլ, մի* և օկտավա վեր *սի:* Տես՝ *բարդ ինտերվալներ:*

ԴՈՒՊԼԵՔՍ ԼՈՆԳԱ, տես՝ *մենզուրալ նոտագրություն:*

Ե

ԵԶՐԱՁԱՅՆԵՐ (ռուս. крайние голоса) 1) բազմաձայն երաժշտության մեջ ամենավերևի և ամենաներքևի ձայները, 2) *ներդաշնակագիտության (հարմոնիայի)* ուսումնական դասընթացում կիրառվող *քառաձայնի սոպրանոն* և *բասը:*

ԵԶՐԱՄԱՍԵՐ (ռուս. крайние части) 1) եռամաս երաժշտական ձևի առաջին և երրորդ մասերը, 2) *ցիկլային* երաժշտական ստեղծագործությունների (բազմամաս *սոնատների, սիմֆոնիաների, կվարտետների* և այլն) առաջին և վերջին մասերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՊԱՐՏԻԱ (ռուս. заключительная партия) *սոնատային ալեգրոյի էքսպոզիցիայի* վերջին մասը՝ *օժանդակ պարտիայից* հետո եկող հատվածը, որը հաճախ ինքնուրույն նշանակություն չունի և ծառայում է որպես *օժանդակ պարտիայի* լրացում: Ե. պ. սովորաբար շարադրվում է *օժանդակ պարտիայի* տոնայնության մեջ և այդ դեպքում դառնում առավել ինքնուրույն: Ե. պ. շարադրելիս օգտագործվում է կամ մինչ այդ եղած թեմատիկ նյութը, կամ բոլորովին նոր նյութ: Ե. պ. հազվադեպ բացակայում է *էքսպոզիցիայում:*

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ (ռուս. заключение) 1) *թեմայի* վերջին *անցկացմանը* հաջորդող *ֆուգայի* բաժինը, 2) նույնն է՝ *կադանս:*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. церковная музыка) ժամասացության ընթացքում կատարվող երաժշտություն, յուրաքանչյուր եկեղեցի (ուղղափառ, լուսավորչական, կաթոլիկ, բողոքական և այլն) դարերի ընթացքում ստեղծել է պաշտամունքային, որոշակի հերթականությամբ և կանոններով կատարվող երաժշտություն (կրոնական բովանդակությամբ երգեր, աղոթքներ), ե. ե. ունի հուզական ներգործության մեծ ուժ, որովհետև ներծըծված է ժողովրդական երգի ամենաազնիվ, ամենավեհ ինտոնացիաներով: Հայկական ե. ե. նմուշներ և *Պատարագը* տարբեր կազմերի երգչախմբերի համար (խառը քառաձայն, արական եռաձայն և արական քառաձայն) մշակել են Մ. Եկմալյանը և Կոմիտասը: Այդ մշակումներն իրենցից ներկայացնում են գեղարվեստական-մշակութային բարձր արվեստ: Տես՝ *հոգևոր երաժշտություն, շարական, սաղմոս:*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԼԱԴԵՐ (ռուս. церковные лады) տես՝ *միջնադարյան լադեր:*


ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍՈՆԱՏ (ռուս. церковная соната) *ֆուգայանման* մասեր ունեցող մենակատարային կամ անսամբլային *սոնատ*, տարածված էր XVII—XVIII դդ.: Տես նաև՝ *տրիո-սոնատ:*

ԵՂԱՆԱԿ (ռուս. мотив) երաժշտական ստեղծագործության (երգ, պար, քայլերգ), մեղեդին, մելոդիկ գիծը: Տես՝ *պարեղանակ:*

ԵՂԵԳՆԱԹԹԵՂ (ռուս. трость) տես՝ *պիպիչ:*

ԵՂԵՐԵՐԳ, տես՝ *էլեգիա:*

ԵՂՋՐԱՓՈՂ (ռուս. рог) հնագույն երաժշտական նվագարան (գործիք), պատրաստվում էր կենդանու դատարկ եղջյուրից, հետագայում՝ բնափայտից, բնափայտի կեղեվից, ոսկրից կամ մետաղից: Սկզբում ե. առանց անցքե-



րի էին, հետագայում սկսեցին պատրաստել հատուկ կողային անցքեր, ձայնի բարձրությունը փոխելու համար: Ե. մեծ մասամբ օգտագործվում է որպես հովվական, որսորդական, փոստային և զինվորական ազդանշանային նվագարան, մի շարք փողային նվագարանների նախատիպն է:

ԵՂՋՐԱՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ (ռուս. роговый оркестр) նվագախումբ, կազմված ռուսական կատարելագործված որսորդական եղջրափողերից, առաջ է եկել Ռուսաստանում, XVIII դ. կեսերին: Ե. Ն. կազմում եղած յուրաքանչյուր եղջրափող արտաբերում էր *խրոմատիկ ձայնաշարի* մեկ ձայն, և լրիվ ե. ն. կազմված էր 91 եղջրափողից, ընդհանուր *ձայնածավալը* *կոնտրօկտավայի լա*-ից մինչև երրորդ *օկտավայի ռե*-ն: Ե. ն. կազմված էր լինում շուրջ 40 նվագողներից, որոնցից յուրաքանչյուրը փոխնիփոխ նվագում էր մեկ, երկու, երբեմն երեք եղջրափող:

ԵՆԹԱՁԱՅՆ (ռուս. подголосок) խմբական երգեցողության ժամանակ մեկ կամ մի քանի ձայների ժամանակավոր շեղումը հիմնական մեղեդուց, կամ ընդհանրապես հիմնական մեղեդու հետ հնչող քիչ թե շատ ինքնուրույն մեղեդային գիծ (կամ՝ գծեր), որը մնացած ձայների հետ կազմում է *պոլիֆոնիկ գիծ* (կամ՝ գծեր) և *պոլիֆոնիկ հնչողություն* (տես՝ *պոլիֆոնիա*): Ենթաձայնային խմբական երգեցողությունը բնորոշ է մի շարք ժողովուրդների: Տես՝ *կոնտրապունկտ:*

ԵՆԹԱՁԱՅՆԱՅԻՆ ՊՈԼԻՖՈՆԻԱ (ռուս. подголосочная полифония) տես՝ *ենթաձայն:*

ԵՌԱԿԵՏ (ռուս. тройная точка) տես՝ *կետ:*

ԵՌԱԿԻ ԿՈՆՑԵՐՏ (գերմ. Tripelkonzert, ռուս. тройной концерт) 1) *կոնցերտ* երեք մենակատարների համար (նվագախմբի մասնակցությամբ կամ առանց դրա):


ԵՌԱԿԻ ՎԱԼՏՈՐՆԱ (ռուս. тройная валторна) տես՝ *գալարափող:*

ԵՌԱԿԻ ԿԱԶՄ (ռուս. тройной состав) տես՝ *սիմֆոնիկ նվագախումբ:*

ԵՌԱԿԻ ԿՈՆՏՐԱՊՈՒՆԿՏ (ռուս. тройной контрапункт) *եռաձայնում* կիրառված *ուղղաձիգ-շարժական կոնտրապունկտ*, այսինքն՝ երեք այնպիսի մեղեդիների զուգակցում, որոնցից յուրաքանչյուրը *օկտավայի* տեղափոխման միջոցով կարող է գտնվել թե առաջին (վերևի), թե երկրորդ (միջին), թե երրորդ (ներքևի) ձայնում, օգտագործվում է ավելի սակավ, քան *կրկնակի կոնտրապունկտը:* Տես՝ *քառակի կոնտրապունկտ:*

ԵՌԱԿԻ ՖՈՒԳԱ (ռուս. тройная фуга) տես՝ *ֆուգա:*

ԵՌԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. трезвучие) երեք ձայնից բաղկացած *ակորդ*, թվանշանային անունն է *տերցկվինտակորդ*, նշանակվում է *I* կամ *i* թվերով: *Բնական, հարմոնիկ* և *մելոդիկ մաժորի* և *մինորի* աստիճանների վրա կառուցված ե. չորս տեսակ են. ա) *մեծ* կամ *մաժոր* ե., որը կազմված է հիմքից հաշված *մեծ տերցիա* + *մաքուր կվինտա*, բ) *փոքր* կամ *մինոր* ե., որը կազմված է հիմքից հաշված *փոքր տերցիա* + *մաքուր կվինտա*, գ) *փոքրացրած* ե., որը կազմված է հիմքից հաշված *փոքր տերցիա* + *փոքրացրած կվինտա*, դ) *մեծացրած* ե., որը կազմված է հիմքից հաշված *մեծ տերցիա* + *մեծացրած կվինտա*: Այս չորս տեսակներից բացի, *կրկնակի հարմոնիկ մաժորի* և *մինորի* աստիճանների վրա կառուցվում են նաև երկու տեսակ ե., որոնց կազմի մեջ մտնում են մեծ ու փոքրացրած *տերցիա-*




ն ե ր: *Կրկնակի հարմոնիկ մաժորում* այդ ե. կառուցվում են հինգերորդ և յոթերորդ աստիճանների վրա, իսկ կըրկնակի *հարմոնիկ մինորում* երկրորդ և չորրորդ աստիճանների վրա: Այս ե. չունեն իրենց հատուկ անուններն ու *ներդաշնակագիտության (հարմոնիա)* դասընթացում դիտվում են որպես *ալտերացված ե.:*

ԵՌԱՀՆՉՅՈՒՆԻ ՇՐՋՎԱԾՔՆԵՐ, *եռահնչյունի* այն դրությունները, երբ հիմքում (ցածի ձայնում) հիմնական տոնի փոխարեն գտնվում է մյուս ակորդային տոներից որևէ մեկը: *Եռահնչյունն* ունի երկու շրջվածք. առաջինը, որի հիմքում գտնվում է *տերցիային տոնը*, կոչվում է *սեքստակորդ*, նշանակվում է 6 թվանշանով, իսկ երկրորդը, որի հիմքում գտնվում է *կվինտային տոնը*, կոչվում է *կվարտսեքստակորդ*, նշանակվում է „4" կամ „$\frac{4}{3}$" թվերով: Տես՝ *ակորդ:*



ԵՌԱՆԿՅՈՒՆ (իտ. triangolo, ռուս. треугольник) որոշակի բարձրություն չունեցող հարվածային նվագարան, պողպատյա եռանկյունի, որը նվագելիս կախվում է և հնչեցվում մետաղե ձողիկի հարվածներով, ունի փայլուն հնչերանգ, լսելի է նույնիսկ նվագախմբային ամենաուժեղ tutti-ի ժամանակ: Ե. լավ են ստացվում ոչ շատ *բարդ ռիթմերն ու բավական արագ տրեմոլոն*, նոտագրվում էր ջութակի բանալիով, սովորաբար երկրորդ *օկտավայի դո* (c^2) կամ *մի* (e^2) նոտաներով, ներկայումս նոտագրվում է *միագծի* վրա: Սիմֆոնիկ նվագախմբերում սովորաբար օգտագործվում են տարբեր մեծության հինգ ե.:



ԵՌԱՄԱՍ ՁԵՎ (ռուս. трехчастная форма) ե. ձ. լինում է երկու տեսակ. *պարզ* և *բարդ:* Պ ա ր զ ե ռ ա մ ա ս է կոչվում այն ձևը, որի առաջին մասը հանդիսանում է *պարբերություն*, երկրորդ մասը՝ կամ *պարբերություն*, կամ մշակման բնույթ կրող երաժշտական կառուցվածք, իսկ երրորդ մասը մեծ մասամբ հանդիսանում է առաջին մասի ճշգրիտ կամ ձևափոխված կրկնությունը (*ռեպրիզան*): Պարզ եռամաս ձևի սխեման հետևյալն է.

I մաս	II մաս	III մաս
ա	բ	ա$_1$
պարբերություն	միջին մաս, պարբերություն կամ մշակման բնույթի երաժշտական կառուցվածք	կրկնություն (ռեպրիզա)

Շատ տարածված է *միաթեմային եռամաս ձևը*, որի բոլոր մասերը հիմնված են միևնույն թեմատիկ նյութի վրա, այդ պատճառով միջնամասը (II) չի հակադրվում եզրամասերին: Այդ ձևի ամենապարզ, ամենատարրական տարատեսակն իրենից ներկայացնում է միևնույն մեղեդու եռակի կրկնումը, ըստ որում միջին մասը շարադրվում է օժանդակ տոնայնությամբ (օր. Շոպենի op. 33 № 2 մազուրկայի 1-ին մասը (ռե մաժոր): Սակայն նման օրինակները հազվադեպ են: Կարևոր նշանակություն ունի միաթեմային ե. ձ. այն տեսակը, որի միջնամասում մշակման են ենթարկվում մասի թեմատիկ տարրերը: Մշակման ընթացքում այդ տարրերը հաճախ այնքան են փոխում իրենց *ինտերվալային հարաբերակցությունները, ռիթմը, հարմոնիան*, որ հնչում են նորովի, թարմ, դրանով իսկ հակադրվելով եզրամասերին: Նման միջնամասերում երբեմն կարող է հանդես գալ բոլորովին նոր՝ *էպիզոդային* (հետագայում չկրկնվող) թ ե մ ա, որն իր հերթին ուժեղացնում է հակադրությունը (օր. Շոպենի op. 33 № 1 մ ազ ու ր կ ա ն (սոլ դիեզ մինոր)): Միաթեմային եռամաս ձևի սխեման հետևյալն է.

I մաս	II մաս (միջնամաս)	III մաս
ա	ա$_1$	ա

Պարզ ե. ձ. ամբողջությամբ կարող է գրված լինել մեկ տոնայնության մեջ: Բարդ եռամաս ձևի I մասն իրենից ներկայացնում է պարզ երկմասանի կամ եռամաս ձև, II՝ միջին մասը հակադրվում է դրան, իսկ III մասը հանդիսանում է առաջինի կրկնությունը: Եթե միջին մասը գրված է պարբերության կամ պարզ երկմասանի կամ եռամաս ձևով, ապա դա կոչվում է *տրիո* (տես՝ 3-րդ իմաստով), անկախ նրանից, թե այդ անվանումը նշանակված է նոտաներում, թե ոչ, եթե ոչ կարող է կոչվել նաև alternativo, կամ maggiore, եթե մ ի ն ո ր ու մ գրված բարդ եռամաս ձևի միջնամասը մ ա ժ ո ր ու մ է, իսկ եթե մ ա ժ ո ր ու մ գրված բարդ եռամաս ձևի միջնամասը մ ի ն ո ր ու մ է, ապա՝ minore: Եթե միջնամասն իրենից ներկայացնում է ազատ երաժշտական կառուցվածք, որում իրար են հաջորդում մի շարք անկայուն դ ա ր ձ վ ա ծ ք ն ե ր և բացակայում են որոշակի ձև ունեցող կառուցվածքի մասերը, ապա դա կոչվում է *էպիզոդ:* Ի տարբերություն *տրիոյի, էպիզոդը*, որպես կանոն, չի կրկնվում: Եզրամասերի համեմատությամբ *էպիզոդի* մեղեդային գիծը հաճախ ավելի կտրատված է: Բարդ եռամաս ձևի միջին մասը գրվում է օ ժ ա ն դ ա կ տ ո ն ա յ ն ու թ յ ա ն մեջ: XIX դ. սկսած *տրիոյի* և *էպիզոդի* հատկանշական գծերը միախառնվում են, որի հետևանքով դրանց միջև եղած տարբերությունը համարյա վերանում է: Ե. ձ. կարող է ունենալ *սկզբնանվագ* և *կոդա:*

ԵՌԱՄԱՍ ՉԱՓ (ռուս. трехдольный размер) չափ, որի մեջ յուրաքանչյուր ուժեղ մասից հետո գալիս է երկու

թույլ մաս, օր. 3/4 (>—), 6/4 (≧ – –>– –) և այլն: Տես՝ *չափ, երկմասանի չափ:*

ԵՌԱՄԱՍ ՏԱԿՏ (ռուս. трехдольный такт) իմաստով նույնն է՝ *եռամաս չափ:*

ԵՌԵՐԳՈՒԹՅՈՒՆ (ռուս. трилогия) *տրիլոգիա*, ընդհանուր հերոսներով, գաղափարով և սյուժեի հաջորդականությամբ միավորված երեք ինքնուրույն երաժշտա-դրամատիկ ստեղծագործություն, օր. Ս. Տանեևի «Օրեստեան», որի մեջ մտնում են «Ագամեմնոն», «Քսեփորոսներ» և «Էվմենիդներ» օպերաները:

ԵՌՅԱԿ, երեք երաժիշտ կատարողներից բաղկացած ա ն ս ա մ բ լ, որոնք կարող են լինել տարբեր կազմի՝ լ ա ր ա յ ի ն (ջութակ, ալտ, թավջութակ), փ ո ղ ա յ ի ն (փող, վալտորնա, տրոմբոն կամ ֆլեյտա, կլարնետ, ֆագոտ) և խ ա ռ ը (ֆլեյտա, թավջութակ, դաշնամուր կամ ջութակ, կլարնետ դաշնամուր և այլն): Ամենատարածվածը դաշնամուրային ե. է (ջութակ, թավջութակ, դաշնամուր): Երգիչների ե. կոչվում է *տերցետ:*

ԵՐԱԺԻՇՏ (ռուս. музыкант) այն անձը, որի մասնագիտությունն է երաժշտության որևէ ճյուղը՝ նվագող, երգիչ, դիրիժոր, խմբավար, կոմպոզիտոր, երաժշտագետ, առօրյայում այսպես են կոչում համարյա յուրաքանչյուր նվագողի, օր. զինվորական և ինքնագործ փողային կամ այլ նվագախմբերի և անսամբլների անդամներին:

ԵՐԱԺՇՏԱԳԵՏ (ռուս. музыковед) երաժշտությամբ զբաղվող մասնագետ, ե. կարող է լինել երաժշտության պատմաբան, տեսաբան, ազգագրագետ, քննադատ, ինչպես նաև դասախոս, խմբագիր, մեթոդիստ և այլն: Տես՝ *երաժշտագիտություն:*

ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. музыкознание) երաժշտության մասին եղած բոլոր գիտությունների միակցության ընդհանուր անվանումը: ե. ներառնում է հետևյալ բնագավառները՝ *երաժշտության տեսություն, երաժշտության պատմություն, երաժշտական ձայնաբանություն (ակուստիկա), երաժշտական քննադատություն, երաժշտական ազգագրություն, երաժշտական հոգեբանություն* և այլն:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. музыкальная этнография) ժողովրդական երաժշտական ստեղծագործությունն ուսումնասիրող գիտական առարկա, ե. ա. ուսումնասիրության նյութը ժողովրդական երգն է, ժողովրդական երաժշտական կենցաղի պատմական զարգացումը:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱԿՆԹԱՐԹ (ռուս. музыкальный момент) *էքսպրոմտին* նմանվող դաշնամուրային *պիես:*

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐԿՂ (ռուս. музыкальный ящик) լեզվակ-կսմիթային մեխանիկական լարովի նվագարան, *երաժշտական գզրոցի* տարատեսակը, որի մետաղե լեզվակների շարքը կազմում է *խրոմատիկ ձայնաշար*, փշերով գլանը փոխարինված է երաժշտությանը համապատասխանող կարգով ծակոտված մետաղե ձայնասկավառակով, գործածությունից դուրս է եկել XX դ. սկզբից:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. музыкальная декламация) նույնն է՝ *մելոդեկլամացիա*, նույնն է՝ *ռեչիտատիվ:*

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳԶՐՈՑ (ռուս. музыкальная шкатулка) *երաժշտական արկղիկ*, լեզվակա-կսմիթային մեխանիկական նվագարան, իրենից ներկայացնում է փոքրիկ արկղ, որի մեջ տեղավորված են տարբեր երկարության մետաղյա լեզվակներ, փոքրիկ գլան և գլանը պտտեցնող լարովի մեխանիզմ: Գլանի վրա կան տվյալ մեղեդուն կամ երաժշտական պիեսին համապատասխան կարգով ամրացրած գամիկներ (փշիկներ), որոնք պտտվելիս, ըստ կարգի դիպչում են լեզվակներին և հնչեցնում: Լեզվակների շարքը կազմում է այն տոնայնության *դիատոնիկ ձայնաշարը*, որով գրված է *պիեսը:* Մեծ տարածում ուներ XVII — XVIII դդ.: Տես՝ *երաժշտական արկղ:*

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. музыкальная грамота) նախնական տեղեկություններ երաժշտության տարրական տեսությունից, որոնք անհրաժեշտ են սկսնակ աշակերտների հետ *սոլֆեջո* անցնելիս, այդ իսկ պատճառով ՍՍՀՄ մանկական երաժշտական դպրոցների ուսումնական ծրագրերում այդպիսի առանձին առարկա չկա, ամբողջությամբ մտնում է *սոլֆեջոյի* դասընթացի մեջ:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ (ռուս. музыкальная школа) ոչ լրիվ միջնակարգ, տասնամյա, որոշ երկրներում նաև բարձրագույն երաժշտական ուսումնական հաստատություն: ՍՍՀՄ-ում կան բազմաթիվ պետական մանկական երաժշտական դպրոցներ (յոթնամյա կամ ութնամյա) և «տասնամյակ» կոչվող միջնակարգ ե. դ., որտեղ աշակերտներին սովորեցնում են տիրապետել որևէ նվագարանի (գործիքի), դասավանդում են անհրաժեշտ երաժշտական տեսական և պատմական գիտելիքներ, ե. դ. ուսումնական ծրագրերի մեջ մտնում են նաև հանրակրթական առարկաներ:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՐԱՄԱ (ռուս. музыкальная драма) 1) *օպերայի* ամենասկզբնական անվանումներից մեկը (XVI — XVIII դդ.), որ հետագայում դուրս եկավ գործածությունից, 2) XIX դ. կեսից այդ անվանումը վերականգնեց Ռ. Վագները, նոր իմաստ հաղորդելով դրան: Ի տարբերություն օպերայի, ե. դ. յուրաքանչյուր տեսիլի և գործողության սահմաններում ավարտված երաժշտական համարները բացակայում են, այստեղից էլ՝ «անվերջ մեղեդի» հասկացությունը: Հերոսների, ինչպես նաև կարեվոր նշանակություն ունեցող զգացմունքների, գաղափարների գեղարվեստական կերպարների բնորոշումը տրվում է *լեյտմոտիվներով*, դրամատիկ զարգացման մեջ նվա-

գախումբը առաջնակարգ դեր է կատարում, վոկալ պարտիաներն իրենցից ներկայացնում են երաժշտական արտասանություններ, բացակայում են անսամբլային, խմբերգային ու բալետային համարներ և այլն, օր. Ռ. Վագների «Տրիստան և Իզոլդա», «Պարսիֆալ», «Հռենոսի ոսկին», «Աստվածների կործանումը» *քառագրությունը (տետրալոգիա)* որը հայտնի է «Նիբելունգների մատանին» ընդհանուր խորագրի տակ:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈ (ռուս. музыкальный вечер) նույնն է՝ *համերգ:*

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԹԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. музыкальный диктант) երաժշտական ոչ մեծ հատվածի գրի առնելը լսողությամբ, կիրառվում է *սոլֆեջոյի* պարապմունքների ժամանակ, ե. թ. լսողությունը զարգացնելու մեթոդներից մեկն է, օգնում է սովորողներին ըմբռնել երաժշտական տարբեր տարրեր *(ձայնատարություն, ռիթմ, հարմոնիա):* Ե. թ. լինում է մեկ, երկու, երեք, չորս ձայնանի, հարմոնիկ կամ պոլիֆոնիկ:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԼՍՈՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. музыкальный слух) երաժշտական ձայների բարձրությունը ընկալելու, պատկերացնելու և վերարտադրելու ընդունակություն: Կա երկու կարգի ե. լ.՝ բացարձակ, երբ մարդ ընդունակ է վերարտադրել կամ ճանաչել առանձին վերցրած մեկ կամ մի քանի ձայների բարձրությունը, չհամեմատելով մեկ այլ, բարձրությունը նախապես հայտնի ձայնի հետ, հարաբերական, երբ մարդ ընդունակ է վերարտադրել կամ ճանաչել առանձին վերցրած մեկ կամ մի քանի ձայների բարձրությունը, համեմատելով մեկ այլ, բարձրությունը նախապես հայտնի ձայնի հետ: Գոյություն ունի նաև այսպես կոչված ներքին լսողություն՝ առանց ռեալ կատարման, երաժշտությունը ներքինով լսելու, գիտակցության մեջ պատկերացնելու ունակությունը:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՈՄԵԴԻԱ (ռուս. музыкальная комедия) *օպերետի* այլ անվանումը, թեև կան կատակերգական բնույթի մի շարք երաժշտական ստեղծագործություններ, որոնք նույնպես կոչվում են ե. կ., օր. *կոմիկական օպերան, զինգշպիլը* և այլն: ՍՍՀՄ մի շարք օպերետային թատրոններ (այդ թվում և Երևանինը) կոչվում են *երաժշտական կոմեդիայի թատրոններ:*

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (ռուս. музыкальное образование) մասնագետ երաժիշտ (կատարող, կոմպոզիտոր, երաժշտագետ) դառնալու նպատակով, ինչպես նաև բազմակողմանի զարգացման համար ուսման ընթացքում ձեռք բերած երաժշտական գիտելիքների միակցությունը: Միջին դարերում եվրոպական համարյա բոլոր երկրներում ե. կ. կապված է եղել գլխավորապես կաթոլիկ եկեղեցու հետ (տես՝ *մետրիզա*): XVII դ. Իտալիայում կազմակերպվում է նոր ձևի երաժշտական ուսումնական հաստատություն՝ *կոնսերվատորիա*, հետագայում տարբեր տիպի երաժշտական ուսումնական հաստատություններ են բացվում բազմաթիվ այլ երկրներում, որտեղ սովորողները ստանում են տարրական, միջնակարգ և բարձրագույն ե. կ.: ՍՍՀՄ-ում ե. կ. ստանալու համար գոյություն ունեն բազմաթիվ երաժշտական դպրոցներ, երաժշտական ուսումնարաններ, կոնսերվատորիաներ (իրենց ասպիրանտուրաներով):

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. музыкальная память) երաժշտությունը հիշելու, ճանաչելու, առանց նոտաների կատարելու ընդունակություն: Ե. հ. ամենատարածված ձևը լսողականն է, երբ երաժշտական ստեղծագործությունը հիշվում է երաժշտության բոլոր տարրերի լսողական ամրապնդման ճանապարհով և հիմնվում է ընկալողի երաժշտականության, երաժշտական զարգացման տրամաբանությունն ընկալելու վրա: Կա նաև տեսողական ե. հ., երբ տեքստը, նոտաները հիշվում են տեսնելու միջոցով: Որևէ ստեղծագործություն անգիր կատարելու ժամանակ, տեսողական հիշողություն ունեցող նվագողը կամ երգիչը կարծես «տեսնում» է նոտային տեքստի էջերը, մեծ դեր է խաղում նաև մոտորային երաժշտական հիշողությունը, որը հիմնված է ձեռքի մատների շարժումների ավտոմատիկայի վրա, մեծ մասամբ սա վերաբերում է *ապլիկատուրային:*

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՁԱՅՆ (ռուս. музыкальный звук) տես՝ *ձայն* I:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՁԱՅՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. музыкальная акустика) *երաժշտական ակուստիկա*, ֆիզիկայի այն բաժինը, որն ուսումնասիրում է *երաժշտական ձայները, երաժշտական սիստեմները, երաժշտական լարվածքները* և համահնչյունները, որոնք երաժշտության տեսության հիմքն են հանդիսանում, ինչպես նաև երաժշտության ընկալման օրենքները: Տես՝ *ձայնաբանություն (ակուստիկա), ձայն (հնչյուն), բնական ձայնաշար, տեմպերացիա, զոնա, կոնսոնանս, դիսոնանս:*

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՁԵՎ (ռուս. музыкальная форма) երաժշտական ստեղծագործության կառուցվածքը, տարբեր մասերի հարաբերակցությունը, գաղափարա-հուզական բովանդակությունն արտահայտող բոլոր արտահայտչամիջոցների (*մեղեդի, հարմոնիա, ռիթմ, ֆակտուրա* և այլն) միակցությունը: Յուրաքանչյուր երաժշտական ստեղծագործություն ունի իր ուրույն և անկրկնելի ձևը, որը միասնություն է կազմում բովանդակության հետ: Սակայն ձևերի այդ բազմազանության մեջ կան բազմաթիվ այնպիսի ձևեր, որոնք կառուցվածքային շատ ընդհանուր գծեր ունեն, ինչը և հնարավոր է դարձրել ընդհանրացնել և առանձնացնել ձևերի մի շարք, որոնց կառուցվածքը և մասերի հարաբերակցությունը համեմատաբար կայուն է: Լինելով չափազանց ճկուն և նպատակահարմար, այդ ձևերը դարձել են տիպական և մեծ տարածում գտել: Ե. ձ. ընդունված է բաժանել երկու հիմնական խմբերի. ա) *պոլիֆոնիկ* ե. ձ.՝ *կանոնը* և *ֆուգան*, իրենց

բոլոր տարատեսակներով, *ֆուգետան, ինվենցիան, պոլիֆոնիկ վարիացիաները, չակոնան, պասակալիան* և այլն, բ) *հոմոֆոնիկ* ե. ձ.՝ *պարզ, երկմասանի ձևը, պարզ եռամաս ձևը, բարդ երկմասանի ձևը, բարդ եռամաս ձևը, ռոնդոն, սոնատը, թեման վարիացիաներով* և այլն: Բացի դրանցից կան նաև *ցիկլիկ ձևեր*, որոնք բաղկացած են որևէ ձևով գրված մի քանի առանձին ավարտված մասերից՝ *պարտիտան, սյուիտը, սոնատային ցիկլիկ ձևը* (որով գրվում են *սոնատը, սիմֆոնիան, կոնցերտը*), *վոկալ ցիկլիկ ձևը* և այլն:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ (ռուս. музыкальные конкурсы) տես՝ *մրցույթներ:*

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՊԻԵՍ (ռուս. музыкальная пьеса) տես՝ *պիես* (1-ին իմաստով):

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՍԱՆԴՂԱԿ (ռուս. музыкальная шкала) երաժշտության մեջ օգտագործվող որոշակի բարձրություն ունեցող բոլոր (շուրջ 100) հնչյունների շարքը: Տես՝ *երաժշտական սիստեմ, երաժշտական ձայնաշար:*

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՍԻՍՏԵՄ (ռուս. музыкальная система) 1) Նույնն է՝ *երաժշտական սանդղակ*, 2) *ձայնասիստեմ*, երաժշտական ձայների կազմակերպվածությունն ըստ բարձրության, *օկտավայի* սահմաններում նրանց ինտերվալային հարաբերակցությամբ և ձայնածավալով: Գոյություն ունեն երեք ձայնից բաղկացած ե. ս.՝ *տրիխորդային սիստեմ*, չորսից՝ *տետրախորդային սիստեմ*, հինգից՝ *պենտախորդային սիստեմ* կամ *պենտատոնիկա*, յոթից՝ *հեպտախորդային սիստեմ* կամ *հեպտատոնիկա* (տես՝ *դիատոնիկա*) և այլն: Ժամանակակից պրոֆեսիոնալ երաժշտության մեջ ընդունված է օկտավայում տասներկու հնչյունանի ե. ս., որը հավասարաչափ տեմպերացված է: Յուրաքանչյուր ե. ս. սահմաններում կան տարբեր լադեր: Տես՝ *տրիխորդ, տետրախորդ, պենտատոնիկա, հեպտատոնիկա, հավասարաչափ տեմպերացված լարվածք:*

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ռուս. анализ музыкальных форм) երաժշտական ստեղծագործությունների բովանդակության, ոճի, ձևի, երաժշտական լեզվի և նրա տարրերի վերլուծության գիտական հետազոտությունը:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. музыкальность) բացի երաժշտական տվյալներից (գերազանց լսողություն, ռիթմի զգացողություն, երաժշտական հիշողություն) երաժշտության բովանդակությունն իր բոլոր նրբերանգներով զգալու և վերարտադրելու ընդունակություն:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ (ռուս. музыкальное училище) ՍՍՀՄ-ում միջնակարգ մասնագիտական երաժշտական ուսումնական հաստատություն, որը պատրաստում է միջին որակավորման երաժշտական կադրեր (նվագողներ, երգիչներ, խմբավարներ, կոմպոզիտորներ, երաժշտագետներ) երաժշտական և այլ հիմնարկ-ձեռնարկությունների համար (մանկական երաժշտական դպրոցների դասատուներ, պրոֆեսիոնալ երգչախմբերի երգիչներ, նվագախմբերի արտիստներ, ինքնագործունեության ղեկավարներ, հանրակրթական դպրոցների երգ-երաժշտության դասատուներ և այլն): ՍՍՀՄ-ում գործում են շուրջ 200 ե. ու., որոնցից հինգը գտնվում են Հայաստանում (Երևանում, Լենինականում, Կիրովականում, Ղափանում): Տես՝ *երաժշտական դպրոց, կոնսերվատորիա, երաժշտական կրթություն:*

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՖՈՆԴ (ռուս. музыкальный фонд) ՍՍՀՄ ժողկոմխորհի 1939 թ. սեպտեմբերի 20-ի որոշմամբ ՍՍՀՄ Կոմպոզիտորների միության կից կազմակերպված հասարակական կազմակերպություն, որի նպատակն է օժանդակել կոմպոզիտորների և երաժշտագետների ստեղծագործական գործունեությանը, բարելավել նրանց նյութական, կենցաղային և աշխատանքային պայմանները, ինչպես նաև պրոպագանդել սովետական կոմպոզիտորների ստեղծագործությունները (հրատարակում, կատարում, տարածում և այլն): Ե. ֆ. իր դրամական միջոցները ձեռք է բերում կոմպոզիտորների այն հոնորարներից, որոնք ստանում են համերգներում, օպերային և այլ թատրոններում կատարվող նրանց ստեղծագործությունների համար, ինչպես նաև հրատարակություններից և անդամավճարներից:

ԵՐԱԺՇՏԱՄՈԼ (ռուս. меломан) մոլի երաժշտասեր, երաժշտության հանդեպ ընդգծված, գիտակցված, կայուն հետաքրքրություն ցուցաբերող անձ:

ԵՐԱԺՇՏԱՍԵՐ (ռուս. любитель музыки) երաժշտություն սիրող անձ, որն աշխատում է այլ մասնագիտությամբ, թեև կարող է ինքնագործ կարգով զբաղվել նաև երաժշտությամբ (երգել, նվագել, նաև՝ ստեղծագործել):

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (ռուս. история музыки) գիտություն, որն ուսումնասիրում է երաժշտական արվեստի զարգացումը և այդ զարգացման օրինաչափությունները, սկսած նրա ծագումից մինչև մեր օրերը, ընդգրկելով թե ժողովրդական, թե պրոֆեսիոնալ երաժշտությունը: Երաժշտության զարգացումը պայմանավորված է հասարակական զարգացման օրինաչափություններով, այդ իսկ պատճառով տարբեր ժողովուրդների երաժշտությունը զարգացել է տարբեր ուղիներով, և երաժշտական արվեստի զարգացման մեջ մեծ դեր է խաղացել երաժշտական տարբեր մշակույթների փոխազդեցությունը: Բացի *համընդհանուր երաժշտության պատմությունից*, ե. պ. ընդգրկում է նաև տարբեր ժողովուրդների և դարաշրջանների ե. պ., ինչպես նաև ուսումնասիրություններ, մենագրություններ առանձին կոմպոզիտորների, երաժշտական ժանրերի, ձևերի և ե. պ. հետ կապված բազմաթիվ այլ հարցերի մասին: Տես՝ *երաժշտագիտություն:*

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ (ռուս. элементарная теория музыки) ուսումնական առարկա, որն ուսումնասիրում է *նոտագրությունը* և երաժշտության հիմնական տարրերը՝ *լադեր, տոնայնություններ, ձայնաշարեր, գամմաներ, ինտերվալներ, ակորդներ, կոնսոնանսներ, դիսոնանսներ*՝ իրենց լուծումներով, *մետր, ռիթմ, տեմպ, դինամիկայի նշաններ* և այլն:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. (ռուս. теория музыки) 1) երաժշտական արվեստի տեսության տարբեր կողմերն ու տարրերն ուսումնասիրող գիտությունների միակցության ընդհանուր անվանումը: Ե. տ. ընդգրկում է *երաժշտության տարրական տեսությունը, հարմոնիան (ներդաշնակագիտությունը), պոլիֆոնիան* (նախկինում՝ *կոնտրապունկտ*), *երաժշտական ձևերը, գործիքագիտությունը, գործիքավորումը, սոլֆեջոն, մեղեդագիտությունը*, ինչպես նաև *երաժշտական ստեղծագործությունների վերլուծությունը*, նաև՝ գիտական, մեթոդական բոլոր այն աշխատանքները, որոնցում մշակված են այս կամ այն նվագարան (գործիք) նվագելու, երգելու, ընդհանրապես երաժշտական կատարողական արվեստի և նրա դասավանդման սկզբունքները, 2) առօրյայում երբեմն գործածվող *երաժշտության տարրական տեսության* ոչ ճիշտ անվանումը:


ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (հուն. musikḗ, musa-ից՝ մուսա, ռուս. музыка) արվեստի այն ճյուղը, որը գաղափարա-գեղարվեստական բովանդակությունն արտահայտում է երաժշտական ձայներից մարմնավորված երաժշտական կերպարների միջոցով, ե. հանդիսանում է մտածողության հատուկ ձև, որը իրականանում է երաժշտության մեջ գործածվող ձայների տարբեր բարձրությունների, տևողությունների, ինչերանգների և ուժգնության հարաբերակցությամբ: Տարբերում են *ժողովրդական ե.*, որը ստեղծում է ժողովուրդը և *պրոֆեսիոնալ ե.*, որն ստեղծում են անհատ կոմպոզիտորները: Ըստ կատարման ձևի ե. բաժանվում է երկու հիմնական խմբի՝ *գործիքային (նվագարանային) ե.* և *վոկալ ե.* կամ *երգեցողական ե.*, թեև երգեցողությունը մեծ մասամբ ուղեկցվում է նվագով (նվագակցությամբ): Ըստ երաժշտության մեջ միաժամանակ հնչող ձայների քանակի և նրանց տեսակի տարբերում են՝ *մոնոդիկ ե.* կամ *մոնոդիա* (միաձայն ե.) և *պոլիֆոնիկ ե.* կամ *պոլիֆոնիա* (բազմաձայն ե.), որի բոլոր ձայները համարժեք են, նաև՝ *հոմոֆոնիկ ե.* կամ *հոմոֆոնիա* (այնպիսի բազմաձայնություն, ուր գերիշխում է մեկ ձայն): Գոյություն ունեն բազմաթիվ *երաժշտական ձևեր* և *երաժշտական ժանրեր:* Որոշակի սյուժեով (գրական կամ այլ) գրված գործիքային երաժշտությունը կոչվում է *ծրագրային ե.* (տես նաև՝ *բացարձակ ե.*): Ե. հաճախ առնչություն ունի պոեզիայի (վոկալ ե., *ծրագրային ե.*) պարի, թատրոնի (*օպերա, բալետ, դրամատիկ թատրոն, օպերետ*) և կինոարվեստի հետ:

ԵՐԳ (ռուս. песня) բանաստեղծական կերպարը երաժշտության հետ միացնող վոկալ երաժշտության ամենամատչելի և տարածված ձևը, լինում են ժողովրդական և պրոֆեսիոնալ հեղափոխական, քնարական, ծագմամբ և կոչմամբ՝ գեղջկական, քաղաքային, զինվորական, մանկական և այլն: Ե. լինում են միաձայն և բազմաձայն, մեկ հոգու կամ խմբային կատարման համար, գործիքային նվագակցությամբ կամ առանց դրա: Տես՝ *մասսայական երգ:*

ԵՐԳ ԱՌԱՆՑ ԽՈՍՔԻ (ռուս. песня без слов) քնարական բնույթի երգանման փոքրիկ *պիես*, գրված որևէ նվագարանի (գործիքի) համար: Առաջին անգամ խորագիրն օգտագործել է Մենդելսոնը, 1830 թ., հայտնի է դաշնամուրի համար նրա գրած «Lieder ohne worte» («Երգեր առանց խոսքի») ժողովածուն, որն ընդգրկում է 48 ոչ մեծ *պիեսներ:*

ԵՐԳԱՐԱՆ (ռուս. песенник) հանրածանոթ երգերի, ռոմանսների, խմբական երգեցողության հանրածանոթ նմուշների ժողովածու: Ե. սովորաբար զետեղվում է երգերի տեքստերը, սակավ՝ նոտաները: Ներկայումս անվանումը օգտագործվում է նաև երգերի նոտային ժողովածուների համար:


ԵՐԳԵՀՈՆ (հուն. organon-ից՝ գործիք, ռուս. орган) փողային ստեղնային նվագարան (գործիք), ծավալով ամենամեծն է, կառուցվածքով՝ ամենաբարդը: Ե. գլխավոր մասերն են. ա) *երգեհոնային փողերը*, որոնց թիվը հասնում է մի քանի հազարի (ներկայումս կան ավելի քան 30000 փող ունեցող ե.), որոնցից յուրաքանչյուրն արձակում է այս կամ այն ինչերանգի մեկ ձայն, բ) *փուքսերը*, որոնք խտացած օդ են մատակարարում երգեհոնային փողերը հնչեցնելու համար (ժամանակակից ե. փուքսերը շարժման մեջ են դրվում էլեկտրականությամբ): Ե. փուքսերը լինում են երկու տեսակ՝ մղիչ կամ ներծծող փուքսեր, պահեստարանի կամ արկղի փուքսեր, գ) *կատարողական վահանը*, որի վրա կենտրոնացած է ե. ղեկավարման, ե. նվագելու ամբողջ մեխանիզմը: Վահանի



վրա տեղավորված են 1 — 5 *մանուալներ* (ձեռքի ստեղնաշարեր, որոնցից յուրաքանչյուրն ունի 48—77 ստեղն), 1—2 *ոտնակներ (ոտնաստեղնաշար)* և *ռեգիստրային փոխարկիչների* բազմաթիվ բռնակներ ու կոճակներ, որոնց միջոցով փոխում են ձայնի հնչերանգը, միացնում են տարբեր հնչերանգ ունեցող մի քանի (կամ բոլոր) *ռեգիստրները*, գործի դնում ձայնի հնչողությունն ուժգնացնող կամ թուլացնող սարքերը և այլն: Նոտագրվում է երեք հնգագծի վրա, ջութակի և բասի բանալիներով, սովորաբար առանց նշանակելու ռեգիստրավորումը: Ներկայումս պատրաստում են նաև էլեկտրական ե., որոնք չունեն ոչ երգեհոնափողեր, ոչ փուքսեր, ձայնը ստացվում է տարբեր հաճախականության էլեկտրական տատանումներից: Ե. պատմությունը սկսվում է շատ վաղ ժամանակներից, առավել մեծ տարածում է գտել XIV—XVIII դդ., արևմտաեվրոպական երկրներում, թե որպես եկեղեցական, թե որպես աշխարհիկ նվագարան (գործիք):

ԵՐԳԵՀՈՆԱՅԻՆ ՈՏՆԱԿ (ռուս. органная педаль) տես՝ *ոտնակ* (2-րդ իմաստով) նույնն է՝ *ոտնաստեղնաշար:*

ԵՐԳԵՀՈՆԱՓՈՂԵՐ (ռուս. органные трубы) *երգեհոնային փողեր*, փողեր, որոնք կազմում են երգեհոնի հնչող մասը, հիմնականում լինում են երկու տեսակ. ա) *պարզ կամ շրթնային, բ) լեզվակային:* Շրթնային փողերը լինում են փայտյա և մետաղյա, փակ և բաց, ըստ որում բաց



փողերը հնչում են փակերից մեկ *օկտավա* վեր: Շրթնային փողերն ունեն մոտավորապես նույն ձևը, ինչ և *ֆլեյտան*, որի բերանոցը նման է հայկական *թութակին:* Ձայնի բարձրությունը կախված է փողի երկարությունից՝ որքան կարճ է փողը, այնքան ավելի բարձր է ձայնը: Լեզվակային փողերում կան մետաղե լեզվակներ, որոնք օդի հոսանքից տատանվում են, ինչպես *կլարնետի պիպիչը: Ռեգիստր* կազմող ե. յուրաքանչյուր խումբը պատրաստվում է միևնույն նյութից, նույն ձևի և լայնության:

ԵՐԳԵՀՈՆԻԿ, փոքրիկ երգեհոն, տես՝ *պորտատիվ:*

ԵՐԳ ԵՐԳՈՑ (հին հրեերեն՝ «Շիր խաշիրիմ») Հին կտակարանի գրվածքներից մեկը, ե. ե. կերպարային բովանդակության հիմքում ընկած են հնագույն քնարական, հարսանեկան, ծիսական երգերի ընտրելագույն տարրերը, թեմաներն ու մոտիվները մշակվել են շատ ժողովուրդների կոմպոզիտորների և բանաստեղծների կողմից:

ԵՐԳԵՐԻ (ՌՈՄԱՆՍՆԵՐԻ) ՑԻԿԼ (գերմ. Liedercyklus) *երգաշար*, բնույթով, բովանդակությամբ կամ այլ հատկանիշով իրար նման երգերի (ռոմանսների) հավաքածուն և դրանց միավորումը մեկ ընդհանուր խորագրով, օր. Շուբերտի «Գեղեցկուհի ջրաղացպանուհին», «Ձմեռային ճանապարհը», Շումանի «Պոետի սերը», Մուսորգսկու «Մանկասենյակ», Շոստակովիչի «Հրեական ժողովրդական պոեզիայից», Սաթյանի «Արարատյան դաշտի երգեր» ցիկլերը և այլն:

ԵՐԳԵՑԻԿ ԽՈՒՄԲ, տես՝ *երգչախումբ:*

ԵՐԳԵՑՈՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ, տես՝ *վոկալ արվեստ:*

ԵՐԳԵՑՈՂԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, տես՝ *վոկալ երաժշտություն:*

ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. пение) երգեցողական (վոկալ) արվեստ, այլ կերպ՝ երաժշտության կատարումը մարդկային ձայնով (ոչ նվագարանով), սովորաբար կապված է խոսքի (բառերի, տեքստի) հետ, սակայն կան ստեղծագործություններ, որոնք գրված են երգելու համար, բայց բառեր չունեն, կոչվում են վոկալիզ: Ե. կարող է լինել ծորուն, *թվերգային* (այսինքն՝ նմանվել խոսակցական լեզվի ելևեջներին) և *կոլորատուրային*, ինչ իր բնույթով մոտենում է գործիքային նվագին: Տարբերում են ե. հետևյալ տեսակները (անկախ առկա նվագակցությունից)՝ *մեներգային ե., անսամբլային ե., խմբերգային ե.:* Տարբերում են նաև՝ *օպերային ե.*, որը կապված է թատերական ներկայացման դրամատիկ գործողության հետ և ընդգրկում է ե. բոլոր տեսակները, *կամերային ե.:*

ԵՐԳԻ ԱՆՍԱՄԲԼ (ռուս. ансамбль песни) արական, իգական կամ խառը փոքրաթիվ երգչախումբ, որը հիմնականում կատարում է ժողովրդական բազմաձայն երգեր, սովորաբար առանց խմբավարի: Ե. ա. մեջ կարող են մտնել նաև նվագակցող գործիքներ: Կան պետական ե. ա., ինքնագործ ե. ա.: Տես՝ *պերսիմֆանս, երգի-պարի անսամբլ:*

ԵՐԳԻՉ, ԵՐԳՉՈՒՀԻ (ռուս. певец, певица) անձ, որի մասնագիտությունը և զբաղմունքը երգելն է (պրոֆեսիոնալ երգիչ), միաժամանակ ե. կոչվում են այլ մասնագիտության և զբաղմունքի տեր մարդիկ, որոնք ունենալով հարկը պատշաճին ձիրք, որպես ե. ելույթներ են ունենում հասարակության առաջ:

ԵՐԳԻՈՆ, նույնն է՝ *երգեհոն:*

ԵՐԳԻ-ՊԱՐԻ ԱՆՍԱՄԲԼ (ռուս. ансамбль песни и пляски) սինթետիկ արվեստի նոր ձև, որը միավորում է եր-

գը, նվագը, պարը և արտասանությունը: Ստեղծվել է ՍՍՀՄ-ում 30-ական թ. սկզբից և տարածում գտել ոչ միայն մեր երկրում, այլև դեմոկրատական մյուս հանրապետություններում: ՍՍՀՄ-ում յուրաքանչյուր միութենական կամ ինքնավար հանրապետություն ունի մեկ կամ մի քանի պետական (պրոֆեսիոնալ) ե. պ. ա., նաև մի շարք ինքնագործ ե. պ. ա.. ե. պ. ա. օրինակով կան նաև *երգի անսամբլներ, պարի անսամբլներ:*

ԵՐԳԻ ՏՈՆ (ռուս. праздник песни) ինքնագործ և պրոֆեսիոնալ երգչախմբային կոլեկտիվների մասսայական ելույթներ, երգչախմբերից բացի ե. տ. հաճախ մասնակցում են սիմֆոնիկ, փողային, ժողգործիքների անսամբլներ, նվագախմբեր, պարային խմբեր, մեներգիչներ:

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ (ռուս. хор) վոկալ երաժշտություն կատարող, երգչական կոլեկտիվ, որն ըստ ձայների կազմի լինում է *միատարր* (կանանց, տղամարդկանց, մանկական) և խառը (*կանանց* և *տղամարդկանց* ձայներից): Խառը ե. սովորաբար կազմված է լինում երգչախմբային չորս պարտիայից՝ *սոպրանո* և *ալտ* (կանանց ձայներ), *տենոր* և *բաս* (տղամարդկանց ձայներ): Խառը ե. ամենափոքր կազմն ընդգրկում է 12 մարդ, ամենամեծը՝ 100 — 120:

ԵՐԳԱՁԱՅՆ (ռուս. певческий голос) մարդու ձայնը, որով նա երգում է, պրոֆեսիոնալ երգիչը պետք է ունենա առնվազն երկու *օկտավա* ձ ա յ ն ա ծ ա վ ա լ, անհրաժեշտ ուժգնություն և գեղեցիկ հնչերանգ: Ըստ ձ ա յ ն ա ծ ա վ ա լ ի, հնչման ուժգնության և բնույթի ե. բաժանվում են վեց հիմնական խմբերի, որոնցից երեքը իգական են կամ կանանց, երեքը՝ արական կամ տղամարդկանց: Կանանց ե. կոչվում են *սոպրանո, մեցցո-սոպրանո, կոնտրալտո*, տղամարդկանց ե.՝ *տենոր, բարիտոն, բաս:* Համապատասխանաբար տարատեսակներն են՝ *կոլորատուրային սոպրանո, լիրիկական սոպրանո, դրամատիկ սոպրանո, լիրիկական կամ բարձր մեցցո-սոպրանո, դրամատիկ կամ ցածր մեցցո-սոպրանո, տենոր-ալտինո* կամ *կոնտրալտինո, լիրիկական տենոր, լիրիկո-դրամատիկ տենոր, լիրիկական բարիտոն, դրամատիկ բարիտոն, լիրիկական բաս, կենտրոնական բաս, բաս-պրոֆունդո, օկտավիստ* և *բաս-բարիտոն:* Գոյություն ունեցող «բնահատուկ տենոր» «հերոսական տենոր», «առաջին տենոր», «երկրորդ տենոր», «բաս-բուֆ» («բնահատուկ բաս»), «առաջին բաս», «երկրորդ բաս» անվանումներն արտահայտում են ոչ թե ձայների նոր տարատեսակներ, այլ բեմում գրաված նրանց տեղն ու ստանձնած դերը: Ե. ձ ա յ ն ա ծ ա վ ա լ ն ե ր ը հիմնականում բաժանվում են երեք *ձայնասահմանների (ռեգիստրների)*՝ կրծքային (ներքևի), միքստ (միջին) և գլխային (վերին), տղամարդկանց ե. գլխային ձայնասահմանը կոչվում է *ֆալցետ:*

ԵՐԳԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ (ռուս. вокальное искусство) *վոկալ արվեստ*, երգչաձայնին վարպետորեն տիրապետելու արվեստ: Ե. ա. կատարողական ըմբռնում է, որը լինում է մենակատարային, անսամբլային և խմբական:

ԵՐԵՍ (ռուս. дека, գերմ. Decke-ից՝ կափարիչ, խուփ) տես՝ *հնչերես:*

ԵՐԵՍԱԴՐՈՒՄ (ռուս. ставка) թավջութակի և կոնտրաբասի նոտաներում հանդիպող հատուկ նշան (Ꝑ), որը ցույց է տալիս, որ նշված տեղը նվագելիս պետք է օգտագործել և բութ մատը: Տես՝ *մատադրություն:*

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴԱԿԱՆ ՆՈՏԱ, տես՝ *տևողությունների զույգ բաժանում:*

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴԱԿԱՆ ՊԱՈՒԶԱ, տես՝ *պաուզա:*

ԵՐԹԻ ՔԱՅԼԵՐԳ, նույնն է՝ *ռազմերթի քայլերգ:*

ԵՐԿ (ռուս. сочинение, произведение, լատ. opus-ից՝ գործ, աշխատություն) 1) գրական, գեղարվեստական կամ գիտական ստեղծագործություն, 2) տես՝ *օպուս:*

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ (ռուս. диалог) *դիալոգ*, օպերաներում, օպերետներում երկու կամ մի քանի անձանց խոսակցություն, որոշ կոմիկական օպերաներում և օպերետներում ե. խոսակցական է (օպերետներում՝ ավելի ծավալուն), իտալական հին օպերաներում ե. չոր թ վ ե ր գ ա յ ի ն էր (երաժշտական արտասանություն): Կա նաև երգային բնույթի թ վ ե ր գ ա յ ի ն ե., նվագախմբի նվագակցությամբ, որը մտցվում է օպերաների, ինչպես նաև կանտատների, օրատորիաների մեջ, ե. տվյալ ձևը լայնորեն կիրառվում է ժամանակակից օպերաներում: Ե. ամենաբնորոշ հատկանիշը համեմատական արագ ընթացքն է, որը մեծ չափով նպաստում է դրամատիկ գործողության զարգացման աշխուժացմանն ու արագացմանը:

ԵՐԿԱՅԱՆԿ (ֆր. répertoire-ից՝ թվարկ, ցուցակ, ռուս. репертуар) *ռեպերտուար*, 1) երաժշտական, գրական, դրամատիկ ստեղծագործությունների, էստրադային, կըրկեսային և բոլոր այն համարների ցանկը, որոնք տվյալ ժամանակահատվածում՝ սեզոնում կամ գաստրոլային ուղևորության ընթացքում պատրաստ են կատարման կամ ներկայացման համար: Յուրաքանչյուր օպերային և այլ թատրոն, կատարողական կոլեկտիվ, մենակատար ունի իր ե., որից ելնելով նշանակվում է տվյալ օրվա ներկայացումը, համերգային կամ այլ ծրագիրը, 2) օպերային կամ այլ թատրոնների յուրաքանչյուր արտիստի կատարած դերերգերի կամ դերերի ցանկը:

ԵՐԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ (հուն. di՝ կրկնակի և logos՝ խոսք) *դիլոգիա*, երկու ստեղծագործությունից բաղկացած երաժըշտական բեմական երկերի *ցիկլ*, օր. Բեռլիոզի «Տրոյացիներ» օպերային ե. («Տրոյայի գրավումը» և «Տրոյացիները Կարթագենում»):

ԵՐԿՄԱՍԱՆԻ ՁԵՎ (ռուս. двухчастная форма) ե. ձ. լինում է երկու տեսակ. *պարզ* և *բարդ, պարզ երկմասանի ձևը* բաղկացած է մեղեդիական տեսակետից ինչ-որ չափով իրար հակադրվող (կամ՝ իրար նման) երկու *պարբերությունից*, այսինքն՝ չորս *նախադասությունից*, մեծ

մասամբ 1-ին, 2-րդ և 4-րդ *նախադասությունների* մեղեդիները նման են, իսկ 3-րդը հակադրվում է նրանց թե մեղեդիով, թե տոնայնությամբ, կազմելով ե. ձ. միջատեղը, կենտրոնը: Նման դեպքերում ե. ձ. չպետք է շփոթել *եռամաս ձևի* հետ, քանի որ 3-րդ և 4-րդ *նախադասությունները* միասին կազմում են երկրորդ *պարբերությունը*, որ ամբողջությամբ հակադրվում է 1-ինին: Պարզ ե. ձ. են գրված Ա. Ալեքսանդրովի *«Սովետական Միության պետական հիմնը»* և Ա. Խաչատրյանի *«Սովետական Հայաստանի պետական հիմնը»: Բարդ երկմասանի ձևի* կամ երկու մասերն են գրված պարզ երկմասանի կամ եռամաս ձևով. կամ միայն մի մասն է գրված այդ ձևերից մեկով. իսկ մյուսը հանդիսանում է *պարբերությունը:* Բ. ե. ձ. շատ հազվադեպ է հանդիպում, օր. Չայկովսկու «Մենք նստած էինք ձեզ հետ» ռոմանսը, Նովիկովի «Դեմոկրատական երիտասարդության հիմնը» և այլն: Ե. ձ. կարող է ունենալ *սկզբնանվագ* և *կոդա:*

ԵՐԿՄԱՍԱՆԻ ՉԱՓ (ռուս. двухдольный размер) չափ, որում յուրաքանչյուր ուժեղ մասից հետո գալիս է մեկ թույլ մաս, օր. 2/4 (>—), 4/4 (>—>—) և այլն:

ԵՐԿՄԱՍԱՆԻ ՏԱԿՏ (ռուս. двухдольный такт) իմաստով նույնն է՝ *երկմասանի չափ:*

ԵՐԿՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ (ֆր. bitonalité, ռուս. битональность) երկու տարբեր տոնայնությունների միաժամանակյա զուգադրումը (այլ կերպ՝ հնչման միաժամանակությունը) երաժշտական ստեղծագործության մեջ, *բազմատոնայնության* առավել հաճախ հանդիպող տեսակը, օր. Ստրավինսկու «Պետրուշկայի» մեջ զուգադրվում են *ֆա դիեզ մաժորը* և *դո մաժորը:*

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ (ռուս. придаточное предложение) իմաստով նույնն է՝ *պատասխանական նախադասություն:*

ԵՐԿՐՈՐԴ ԲԱՍ, տես՝ *առաջին բաս:*

ԵՐԿՐՈՐԴ ԷՔՍՊՈԶԻՑԻԱ (ռուս. вторая экспозиция) նույնն է՝ *կոնտր-էքսպոզիցիա:*

ԵՐԿՐՈՐԴ ԿՈՂՄ կամ **ԱՎԱԳ ԿՈՂՄ,** կրճատ՝ ԲԿ, տես՝ *ձայն* III:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՄՈՆԻԱ (ռուս. вторая гармония) *հարմոնիայի (ներդաշնակության)* ուսումնական դասընթացի երկրորդ մասը, որն ուսումնասիրում է *զարտուղությունը* և *մեյոդիկ ֆիգուրացիաները:*

ԵՐԿՐՈՐԴ ՁԱՅՆ, կրճատ՝ ԲՁ, տես՝ *ձայն* III:

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՆՈՐ (ռուս. второй тенор) *տենոր,* որը երգչախմբում երգում է երկրորդ *տենորի պարտիան, ձայնածավալն* ավելի փոքր է, սակայն լավ հնչում են միջին *ձայնասահմանի* նոտաները: Տես՝ *տենոր:*

ԵՐԿՐՈՐԴ ՕԿՏԱՎԱ (ռուս. вторая октава) տես՝ *օկտավա* (2-րդ իմաստով):

ԵՐԿՕԿՏԱՎԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՆՇԱՆ (ռուս. знак переноса на две октавы) տես՝ *օկտավային փոխադրման նշան:*

ԵՐՐՈՐԴ ԿՈՂՄ կամ **ՎԱՌ ՁԱՅՆ,** կրճատ՝ ԳԿ: Տես՝ *ձայն* III:

ԵՐՐՈՐԴ ՁԱՅՆ, կրճատ՝ ԳՁ: Տես՝ *ձայն* III:


ԵՐՐՈՐԴ ՕԿՏԱՎԱ (ռուս. третья октава) տես՝ *օկտավա* (2-րդ իմաստով):

Զ

ԶԱԿՊՏԱՅՏԵ տես՝ *պարկապզուկ:*

ԶԱՆԳԵՐ (ռուս. колокола) հարվածային երաժշտական նվագարանների (գործիքների) հավաքածու, որն օգտագործվում է օպերային և սիմֆոնիկ երաժշտության մեջ, կազմված է 12—18 խրոմատիկ լարվածքով գլանաձև






Զ-երաժշտական բացատրական բառարան

փողերից, որոնք կախված են մետաղե կամ փայտե շրջանակից, ձայնն արտաբերվում է մուրճիկների հարվածով, ձայնածավալը 1 — 1,5 *օկտավա* է:

ԶԱՆԳԱԿՆԵՐ (ռուս. колокольчики) որոշակի բարձրություն ունեցող հարվածային նվագարան (գործիք), որն իրենից ներկայացնում է տարբեր մեծության մետաղյա թիթեղիկներ, որոնք երկշար, թույլ ամրացված են տափակ արկղի մեջ գտնվող փայտե ձողիկների կամ մե-



տաղե լարերի վրա, դաշնամուրի սև և սպիտակ ստեղների կարգով. և ինչեցվում են մետաղե (երբեմն՝ փայտե) մուրճիկներով: Կան նաև ստեղնաշարային զ., որոնք հընչում են ավելի թույլ, սակայն տեխնիկապես ավելի շարժուն են և որոնցով կարելի է հնչեցնել *ակորդներ:* Զ. ունեն զնգուն, վճիտ ձայն, որոնք նվագախմբին հաղորդում են փայլ և մեղմություն, նոտագրվում է ջութակի բանալիով, ձայնածավալը՝ 2—3 և ավելի *օկտավա*, կախված թիթեղիկների քանակից. ըստ գրության առաջին *օկտավայի դո*-ից մինչև երրորդ *օկտավայի դո*-ն (c^1 — c^3), հնչում է գրածից մեկ *օկտավա* վեր (երբեմն լսվում է երկու *օկտավա* վեր): Տես՝ *գլոկենշպիլ, կամպանելլի:*


ԶԱՐԿԵՂԱՆԱԿ, նվագազարկ, տես՝ *մատնազարկ:*

ԶԱՐՏՈՒՂՈՂ ԱԿՈՐԴ (ռուս. модулирующий аккорд) անցման *ակորդ* կամ *մոդուլացնող ակորդ, զարտուղման* ժամանակ *միջակա ակորդից* անմիջապես հետո հանդես եկող նոր տոնայնության առաջին *ակորդը*, որն իր մեջ պարունակում է նոր տոնայնությունը բնորոշող մեկ կամ մի քանի հնչյուններ: Տես՝ *զարտուղություն:*

ԶԱՐՏՈՒՂՈՂ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. модулирующий период) այն *պարբերությունը*, որն ավարտվում է նոր տոնայնության մեջ: Տես՝ *պարբերություն:*

ԶԱՐՏՈՒՂՈՂ ՍԵԿՎԵՆՑԻԱ (ռուս. модулирующая секвенция) տես՝ *սեկվենցիա:*

ԶԱՐՏՈՒՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. модуляция) *մոդուլյացիա*, անցում մեկ տոնայնությունից մեկ ուրիշը: Զարտուղության հետ կապված են հետևյալ հասկացությունները. ա) *նախորդ* կամ *հին տոնայնություն*՝ այն տոնայնությունը, որից կատարվում է զ., բ) *հաջորդ* կամ *նոր տոնայնություն*՝ այն տոնայնությունը, դեպի որը կատարվում է զ., գ) *միջակա ակորդ*՝ այդ երկու տոնայնությունների մեջ եղած այն ընդհանուր ակորդը, որը վերաիմաստավորվում է որպես նոր *ֆունկցիա* (աստիճանների հավասարեցման միջոցով) և դառնում հին տոնայնության վերջին ակորդը, դ) *անցման* կամ *զարտուղող ակորդ*՝ նոր տոնայնության առաջին ակորդը, որով և սկսվում է նոր տոնայնությունը: Զ. լինում են երեք տեսակ. ա) *զ. — անցում* կամ *կատարյալ զ.*, երբ զ. հետո նոր տոնայնությունն ամրապնդվում և հաստատվում է, բ) *զ. — շեղում կամ անկատար զ.*, երբ նոր տոնայնությունը չի հաստատվում և տեղի է ունենում վերադարձ դեպի հին տոնայնությունը կամ իրար հաջորդող շեղումներ, որից հետո միայն վերադարձ դեպի հին տոնայնությունը, գ) *զ.-զուգադրում* կամ *զ -համադրում* երբ փաստորեն ոչ մի զ. տեղի չի ունենում և առանց միջակա ու զարտուղող ակորդների, միանգամից հանդես է գալիս նոր տոնայնությունը (սովորաբար կիրառվում է *ցեզուրայից* հետո, նոր *ֆրազ, նախադասություն, պարբերություն* կամ *մաս* սկսելիս): Ըստ կատարման միջոցների տարբերում են. ա) *դիատոնիկ զ.*՝ կատարվում է աստիճանների հավասարեցման, այսինքն ֆունկցիաների փոփոխման միջոցով, որի հետևանքով զարտուղող քայլը ստացվում է *դիատոնիկ*, բ) *խրոմատիկ զ.*՝ կատարվում է *խրոմատիկ* քայլի միջոցով, գ) *էնհարմոնիկ զ.*՝ կատարվում է ակորդի *էնհարմոնիկ* փոփոխման միջոցով: Զ. արտահայտչական չափազանց մեծ հնարավորություններ ունի և հանդիսանում է երաժշտական մտքի զարգացման և երաժշտական ձևերի գոյացման կարևորագույն միջոցներից մեկը: Զ. օրինաչափությունները հասկանալու և կիրառելու համար անհրաժեշտ է գիտենալ *տոնայնությունների ազգակցությունը:*



ԶԱՐՏՈՒՂՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՈՒՄ (ռուս. модуляция переход) տես՝ *զարտուղություն:*

ԶԱՐՏՈՒՂՈՒԹՅՈՒՆ ԶՈՒԳԱԴՐՈՒՄ (ռուս. модуляция сопоставление) տես՝ *զարտուղություն:*

ԶԱՐՏՈՒՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԴՐՈՒՄ (նույնն է՝ *զարտուղության զուգադրում*):

ԶԱՐՏՈՒՂՈՒԹՅՈՒՆ ՇԵՂՈՒՄ (ռուս. модуляция отклонение) տես՝ *զարտուղություն:*

ԶԻՆԳՇՊԻԼ (գերմ. Singspiel, singen՝ երգել և spiel՝ խաղ) գերմանական երգիծական *օպերա*, որում երգն ու պարը զուգորդվում են սովորական երկխոսությանը: Զ. ինքնուրույն զարգացումը սկսվել է XVIII դ. 50-ական թ. (Ավստրիայում՝ Հայդնի «Կաղ սատանան», Գերմանիայում՝ Շտանդֆուսի «Սատանան ազատության մեջ»): Վիեննական զ. աչքի է ընկնում երաժշտական ձևերի բազմազանությամբ և բարդությամբ, զ. դասական նըմուշն է Մոցարտի «Առևանգումը հարեմից» օպերան:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. военная музыка) շարային պարապմունքների, մարտական գործողությունների, շքերթի, նաև զորանոցային ժամանցի համար նախատեսված երաժշտություն, զ. ե. կատարում են

զինվորական նվագախմբերը կամ առանձին երաժիշտներ (*հոռնահարը*):

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ (ռուս. военный оркестр) որևէ զորամասի փողային նվագախումբ:

ԶՈՐԱՇԱՆԴԵՍԱՅԻՆ ՔԱՅԼԵՐԳ (ռուս. парадный марш) նաև՝ *հանդիսակարգային քայլերգ*, շարային քայլերգի տարատեսակը, ավելի շեշտակի ռիթմով, կատարվում է զորամասերի հանդիսավոր երթերի, տոնակատարությունների և շքերթների ժամանակ: Տես՝ *քայլերգ*:

ԶՈՐԱՍՅՈՒՆԱՅԻՆ ՔԱՅԼԵՐԳ (ռուս. колонный марш) ռազմերթի քայլերգի տարատեսակը, չափը՝ 6/8, տեմպը՝ րոպեում 120 քայլ, կատարվում է զորահանդեսների և զորատեսերի ժամանակ: Տես՝ *քայլերգ*:

ԶՈՒԳԱՀԵՌ ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐ (ռուս. параллельные интервалы) որևէ *ինտերվալ* կազմող հնչյունների շարժումը միևնույն ուղղությամբ և միևնույն *ինտերվալով*, ըստ որում շարժվելիս *ինտերվալը* չի փոխում իր քանակական (աստիճանային) մեծությունը, այսինքն՝ *տերցիա* կազմող հնչյունները շարժվելուց հետո նորից կազմում են *տերցիա*, *սեքստաները*՝ *սեքստա*, *կվինտաները*՝ *կվինտա* և այլն: Լինում են նաև հակառակ զ. ի., երբ *ինտերվալ* կազմող հնչյունները շարժվում են ոչ թե միևնույն, այլ հակառակ ուղղությամբ, այդ դեպքում *տերցիա* կազմող հնչյունները շարժվելիս կազմում են *դեցիմա* (այսինքն՝ *օկտավընդմեջ տերցիա*, իսկ *դեցիման*՝ *տերցիա*, *կվինտան*՝ *դուոդեցիմա (օկտավընդմեջ կվինտա)*, իսկ *դուոդեցիման կվինտա* և այլն:

ԶՈՒԳԱՀԵՌ ՁԱՅՆԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. параллельное голосоведение) տես՝ *ձայնատարություն* (2-րդ իմաստով):

ԶՈՒԳԱՀԵՌ ՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ռուս. параллельные тональности) միևնույն *հնչյունակազմ* և միևնույն բանալու նշաններն ունեցող *մաժոր* և *մինոր* տոնայնություններ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր տարբեր *տոնիկան* (առաջին աստիճանը): Զ. տ. գտնվում են ամենամոտիկ ազգակցության մեջ, որովհետև ոչ միայն դրանց ձայնաշարերի բոլոր հնչյունները, այլև դրանց վրա կառուցված բոլոր *եռահնչյունները* (*սեպտակորդները* և այլն) համընկնում են:

ԶՈՒԳԱՀԵՌՈՒԹՅՈՒՆ (ռուս. параллелизм) ձայների շարժումը միևնույն ուղղությամբ, նույն *ինտերվալով* (օր. զուգահեռ *տերցիաներով*, *սեքստաներով*, *դեցիմաներով* և այլն): Ավելի նեղ իմաստով զ. ասելով ենթադրվում են



արգելված զ., օր. զուգահեռ *կվինտաները* և *օկտավանները* (վերջինս բարեհնչյունության նորմաներից մեկն է և անհրաժեշտորեն պահպանվում է *հարմոնիայի* և *պոլիֆոնիայի* ուսուցման ընթացքում): Առանձին կոմպոզիտորներ իրենց ստեղծագործություններում տարբեր նպատակներով խախտում են այդ նորմաները:

ԶՈՒԳԱՀԵՌ ՓՈՓՈԽԱԿԱՆ ԼԱԴ (ռուս. параллельно-переменный лад) տես՝ *փոփոխական լադ*:

ԶՈՒՅԳ ԿԱԶՄ (ռուս. парный состав) տես՝ *սիմֆոնիկ նվագախումբ*:

ԶՈՒՐՆԱ (ռուս. зурна) փողային գործիք, տարածված Անդրկովկասում և Միջին Ասիայում, Իրանում:



Է

Է, հայկական ձայնագրության հիմնական *ձայնաշարի* (*դո* նոտայով սկսվող *միքսոլիդիական լադ*) երկրորդ հնչյունը, լրիվ անվանումն է՝ *էկորճ*:

ԷԼԵԳԻԱ (հուն. elegéia) *ողբերգ*, *եղերերգ*, տխուր, թախծոտ բնույթի գործիքային կամ վոկալ փոքրածավալ երաժշտական ստեղծագործություն:

ԷԼԵԿՏՐԱԲԱՅԱՆ (ռուս. электробаян) էլեկտրական նվագարան, որը սովորական *բայանից* տարբերվում է հնչերանգների մեծ բազմազանությամբ, փաստորեն իրենից ներկայացնում է է. և *էլեկտրաերգեհոնի* զուգակցումը: Տես՝ *էլեկտրանվագարաններ*:

ԷԼԵԿՏՐԱԷՈԼԻՖՈՆ (ռուս. электроэолифон կամ эмофон) ՍՍՀՄ-ում պատրաստված էլեկտրոնային առաջին աղմկային նվագարանը, որն արձակում է աղմկաձայներ (ձայներ, որոնք ունեն խիստ անորոշ, բայց ինչ-որ բարձրություն), աղմկաձայնի բարձրությունը կարգավորվում է հատուկ լծակի միջոցով:

ԷԼԵԿՏՐԱԽՈՐԴ (ռուս. электрохорд) բազմաձայն *էլեկտրանվագարան*, որի ձայնն առաջանում է լարերի տատանումից, ունի ուժեղացուցիչ, բարձրախոս և դինամիկ կարգավորիչ, տարբեր հնչերանգներ ստանալու համար ունի 8 կարգավորիչ, ձայնածավալն է *սուբկոնտրօկտավայի լյա*-ից մինչև հինգերորդ *օկտավայի դո*-ն (A_2 — C^5), այսինքն՝ դաշնամուրի լրիվ ձայնածավալը: Տես՝ *էլեկտրանվագարաններ*:

ԷԼԵԿՏՐԱՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ռուս. электрические музыкальные инструменты, электронные музыкальные инструменты) նվագարաններ, որոնք հնչում են էլեկտրական ալիքները ձայնական ալիքների վերափոխելով, կարող են ունենալ թե սովորական լարային, փողային և այլ նվագարանների (գործիքների) թե բոլորովին նոր, յուրօրինակ և արտասովոր հնչերանգներ, լինում են *միաձայն* (մեծ մասամբ՝ նվագակոթով (գրիֆով)) և *բազմաձայն* (երգեհոններ, դաշնամուրներ, ստեղնների տարբեր զուգորդումներով) որոնցով համապատասխանաբար կատարվում է միաձայն և բազմաձայն երաժշտություն: XIX դ. վերջից մի շարք փորձեր են կատարվել է. ստեղծելու ուղղությամբ: ՍՍՀՄ-ում առաջինը *տերմենվոքս* կոչվող նվագարանն էր, որին հաջորդեցին *էմիրիտոնը, էլեկտրաէոլիֆոնը, էկվոդինը, սոնարը, վիոլենան, էլեկտրալինան, կամպանոլը, յունոստը* և այլն: Արտասահմանյան է. հարկ է առանձնացնել *Համմոնդի երգեհոնը* (էլեկտրաակուստիկ, էլեկտրաֆոնիկ), *տրաուտոնիումը, «Նեղ Բախը2-տեյն»*-ը, ստորիտոնը, էլեկտրական կիթառների ամենաբազմազան ձևերը, իոնիկան, պիանոֆոնը և բազմաթիվ այլ նորագույն նվագարաններ, որոնք աչքի են ընկնում ուժեղացուցիչների, ձայնափոխարկիչների, երանգավորման հարուստ ու բազմազան հնարավորությունների սիստեմներով: Է. օգտագործվում են ժամանակակից էստրադային նվագախմբերում և անսամբլներում, ջազային խմբերում:

ԷԼԵԿՏՐԱՆՎԱԳԱՐԿԻՉ (ռուս. электропроигрыватель) էլեկտրական սարք (ապարատ) ձայնասկավառակներ հընչեցնելու համար:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. электронная музыка) ժամանակակից երաժշտական ավանգարդիզմի ծայրահեղ արտահայտություններից մեկը՝ էլեկտրագեներացված հնչյունների զուգորդություններից կազմված «երաժշտություն», որն անմիջապես գրի է առնվում մագնիտաֆոնի ժապավենի վրա և կարող է հնչեցվել միայն բարձրախոսի միջոցով: Է. ե. ինչպես և կոնկրետ երաժշտությունը հնարավոր չէ վերարտադրել որևէ նվագարանով (գործիքով): Եթե սովորական երաժշտության մեջ օգտագործվում են տարբեր բարձրություն ունեցող 80 հնչյուններ և ուժգնության ամենաշատը 12 աստիճանավորում կա (ppppp — fffff), ապա է. ե. մեջ օգտագործվող ձայնաշարը կազմում են վայրկյանում 50-ից մինչև 15000 տատանումներ ունեցող բազմահազար հնչյուններ և 40-ից ավելի աստիճանավորումներ, դրանք սովորական հնչյուններ չեն, գուրկ են օբերտոններից, հետևաբար չունեն հնչերանգ և կոչվում են սինուսոիդային տոներ: Է. ե. սովորական նոտագրությամբ գրի առնել հնարավոր չէ, մշակված է գրաֆիկական գրառման նոր՝ ակուստիկ դիագրամների ձև:

ԷԿԶԵՐՍԻՍ (ֆր. exercice) նույնն է՝ *վարժություն:*

ԷԿԶՈՏԻԿ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. экзотическая музыка) օտարոտի, տարաշխարհիկ երաժշտություն, հեռավոր երկրների երաժշտություն, որը տվյալ ժողովրդի կողմից ընկալվում է որպես ոչ սովորական, տարօրինակ, օր. եվրոպացիներն այդպես են անվանում Արևելքի ժողովուրդների երաժշտությունը:

ԷԿՈՍԵԶ (ֆր. կրճատ (danse) écossaise՝ շոտլանդական (պար)) հնագույն շոտլանդական ժողովրդական արագ պար, *պարկապզուկի* նվագի տակ, *կոնտրդանսերի* տա-



րատեսակը, XVII դ. վերջում *անգլեզ* անվան տակ տարածվել է Ֆրանսիայում որպես *պարահանդեսային պար*, իսկ XVIII դ. սկզբից նաև Ռուսաստանում, XIX դ. տարածվել է շատ երկրներում ու կոչվել է.: Չափը սկզբում 3/4 էր, հետագայում դարձավ 2/4, է. ձևն իրենց ստեղծագործություններում օգտագործել են Բեթհովենը, Շուբերտը, Շոպենը, Լիստը և ուրիշներ:

ԷԿՈՐՃ, տես՝ *հայկական ձայնագրություն:*

ԷԿՎՈՐԴԻՆ, սովետական գյուտարար Ս. Ս. Վոլոդինի հընարած *էլեկտրանվագարանը*, որը Բրյուսելում կայացած համաշխարհային ցուցահանդեսում արժանացել է ոսկե մեդալի: Տես՝ *էլեկտրանվագարաններ:*

ԷՄԻՐԻՏՈՆ, սովետական մի խումբ գյուտարարների հնարած էլեկտրանվագարան, որն ունի դաշնամուրի տիպի ստեղնաշար, ձայնածավալը շուրջ 8 օկտավա, գործնականում մինչև հարյուր հնչերանգով: Տես՝ *էլեկտրանվագարաններ:*

ԷՆՀԱՐՄՈՆԻԶՄ (հուն. enarmonios՝ համընկնող) միևնույն բարձրություն ունեցող, բայ տարբեր անուններ կրող հնչյունների հավասարությունը, օր. *դո-դիեզ* և *ռե-բեմոլ*, կամ *մի դիեզ* և *ֆա*, և այլն: Հնչյունների նման *էնհարմոնիկ* հավասարությունը հնարավոր է միայն *հավասարաչափ տեմպերացված լարվածքում*, որովհետև *ոչ տեմպերացված լարվածքում դո-դիեզը* և *ռե-բեմոլը* կամ *մի-դիեզը* և *ֆա*-ն ունեն տարբեր բարձրություններ, հետևաբար իրար հավասարվել չեն կարող: Է. օգտագործվում է գլխավորապես *զարտուղության* մեջ (տես՝ *էնհարմոնիկ զարտուղություն*, նաև՝ մեծ քանակությամբ բանալիի նշաններ ունեցող տոնայնությունները ավելի քիչ նշաններ ունեցող տոնայնություններով փոխարինելու համար, օր. *դո-դիեզ մաժորը* (7 դիեզ) *ռե-բեմոլ մաժորով* (5 բեմոլ), *լյա-բեմոլ մինորը* (7 բեմոլ) *սոլ-դիեզ մինորով* (5 դիեզ) և այլն: Տես՝ *էնհարմոնիկ հավասար հնչյուններ, էնհարմոնիկ հավասար ինտերվալներ, էն-*

հարմոնիկ հավասար ակորդներ, էնհարմոնիկ հավասար տոնայնություններ:

ԷՆՀԱՐՄՈՆԻԿ ԶԱՐՏՈՒՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. энгармоническая модуляция) *էնհարմոնիկ մոդուլյացիա, զարտուղություն*, որը կատարվում է *միջակա* և *զարտուղող ակորդների էնհարմոնիկ հավասարեցման* միջոցով (այլ կերպ՝ *միջակա ակորդի էնհարմոնիկ* փոփոխման միջոցով): Է. զ. կարելի է կատարել երեք տարբեր ա կ ո ր դ ն ե ր ի միջոցով՝ *փոքրացրած սեպտակորդի, դոմինանտ սեպտակորդի* և *մեծացրած եռահնչյունի:* Տես՝ *զարտուղություն, դիատոնիկ զարտուղություն, խրոմատիկ զարտուղություն:*





ԷՆՀԱՐՄՈՆԻԿ ՄՈԴՈՒԼՅԱՑԻԱ, տես՝ *էնհարմոնիկ զարտուղություն:*

ԷՆՀԱՐՄՈՆԻԿ ՀԱՎԱՍԱՐ ԱԿՈՐԴՆԵՐ (ռուս. энгармонически равные аккорды) *ակորդներ*, որոնք հնչում են միատեսակ (ունեն միևնույն բարձրությունը), բայց անվանվում են տարբեր: Է. հ. ա. լինում են երկու տեսակ. ա) երբ *էնհարմոնիկորեն* փոփոխվում են *ակորդի* բոլոր հնչյունները, սակայն *ինտերվալային* կառուցվածքը մնում է անփոփոխ, բ) երբ *ակորդի* բոլոր կամ մի քանի հընչյունները *էնհարմոնիկորեն* այնպես են փոփոխվում, որ փոխվում է *ակորդի ինտերվալային* կառուցվածքը:



Տես՝ *էնհարմոնիզմ, էնհարմոնիկ հավասար հնչյուններ, էնհարմոնիկ հավասար ինտերվալներ, էնհարմոնիկ հավասար տոնայնություններ:*

ԷՆՀԱՐՄՈՆԻԿ ՀԱՎԱՍԱՐ ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐ (ռուս. энгармонически равные интервалы) *ինտերվալներ*, որոնք հնչում են միատեսակ (ունեն միևնույն բարձրությունը), բայց անվանվում են տարբեր: Է. հ. ի. երկու տեսակ են՝ ա) երբ նրանք ունեն միևնույն քանակական և որակական մեծություններ, օր. *դո-ֆա* և *սի դիեզ-մի դիեզ*, այսինքն՝ երկու դեպքում էլ մաքուր *կվարտա*, բ) երբ է. հ. ի. թե քանակական, թե որակական մեծությունները տարբեր են, օր. *դո-ռե* և *սի դիեզ-ռե*, այսինքն *մեծ սեկունդա* և *փոքրացրած տերցիա* և այլն:



Առաջին դեպքում տեղի է ունենում տոնայնությունների փոփոխում, երկրորդ դեպքում՝ *զարտուղություն:* Տես՝ *էնհարմոնիկ զարտուղություն:*

ԷՆՀԱՐՄՈՆԻԿ ՀԱՎԱՍԱՐ ՀՆՉՅՈՒՆՆԵՐ (ռուս. энгармонически равные звуки) հնչյուններ, որոնք հնչում են միատեսակ (ունեն միևնույն բարձրությունը) բայց անվանվում են տարբեր, օր. *ռե դիեզ* և *մի բեմոլ, սի* և *դո բեմոլ, մի դիեզ* և *ֆա* և այլն: *Օկտավայում* պարունակվող տասներկու հնչյուններից յուրաքանչյուրը *էնհարմոնիկ* հավասարեցման միջոցով կարող է ունենալ երեք անուն, բացառությամբ *սոլ դիեզ* և *լյա բեմոլ* հնչյունների, որոնք ունեն երկուական անուն:



ԷՆՀԱՐՄՈՆԻԿ ՀԱՎԱՍԱՐ ՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ռուս. энгармонически равные тональности) տոնայնություններ, որոնք հնչում են միատեսակ (ունեն միևնույն բարձրությունը) բայց անվանվում են տարբեր, օր. *ֆա դիեզ մաժորը* և *սոլ բեմոլ մաժորը*, կամ *լյա դիեզ մինորը* և *սի բեմոլ մինորը:* Է. հ. տ. բոլոր համապատասխան աստիճաններն ու նրանց վրա կառուցված *ինտերվալները* և *ակորդները էնհարմոնիկորեն* հավասար են: Տոնայնությունների *էնհարմոնիկ* փոփոխման ժամանակ դ ի ե-



զ ա վ ո ր տոնայնությունները դառնում են բ ե մ ո լ ա վ ո ր և հակառակը: Է. հ. տ. բանալիի նշանների գումարը հավասար է տասներկուսի: Տես՝ *էնհարմոնիզմ, էնհարմոնիկորեն հավասար հնչյուններ, էնհարմոնիկ հավասար ինտերվալներ, էնհարմոնիկ հավասար ակորդներ:*

ԷՈԼԱԿԱՆ ԼԱԴ (ռուս. эолийский лад) տես՝ *միջնադարյան լադեր:*

ԷՈԼՅԱՆ ՏԱՎԻՂ (ռուս. Эолова арфа) լարային նվագարան, նեղ ու երկարուկ *հնչարկղով*, որի վրա ձգված են 8—13 տարբեր հաստության աղիքե լարեր, որոնք տատանվում են օդի հոսանքի (քամու) միջոցով, այստեղից էլ անվանումը (ըստ դիցաբանության, Էոլը քամիների աստվածն էր): Ձգված լարերը արձակում են մի քանի մասնակի տոներ (*օբերտոններ*), որոնցից գոյացած համահնչյունները թողնում են հեքիաթային, դյութիչ տպավորություն, օդի հոսանքի ուժգնությանը համապատասխան այդ հնչյունները ամենամեղմ pianissimo-ից գերաճում են հուժկու forte-ի:

ԷՊԻԶՈԴ (հուն. epeisodion՝ միջադրում) խոշոր երաժշտական ձևի (օր. *սոնատային*) բաժին, որում փոխվում է տոնայնությունը, թ ե մ ա ն, երբեմն էլ տեմպը: *Ռոնդոյում ռեֆրենի* հետ հերթափոխվող բաժիններից յուրաքանչյուրը կոչվում է է.:

ԷՊԻՆԵՏ, տես՝ *սպինետ:*

ԷՍՏՐԱԴԱ (ֆր. estrada՝ հարթակ) 1) մշտական կամ ժամանակավոր բեմահարթակ համերգային ելույթների և փոքր ձևի թատերական ներկայացումների համար, 2) *էստրադային արվեստ:*

ԷՍՏՐԱԴԱՅԻՆ ԱՐՎԵՍՏ (ռուս. эстрадное искусство) հանրամատչելի բեմական արվեստ, որը միավորում է կատարողական արվեստի մի շարք ճյուղեր՝ երգ, նվագ, պար, գեղարվեստական ասմունք, կրկեսային համարներ, սկետչ, պարոդիա և այլն: Է. ա. սկսել է զարգանալ XIX դ. կեսերից Ֆրանսիայում, ուր սրճարաններում և կաբարեներում ելույթ էին ունենում քնարական, ժանրային և երգիծական երգերի (հետագայում նաև բալետային համարների) կատարողներ: XIX դ. վերջերից Եվրոպայում և Ամերիկայում էստրադային ներկայացումներ սկսեցին տալ վ ա ր յ ե տ ե ն ե ր ո ւ մ և մ յ ո ւ զ ի ք հ ո լ լ ե ր ո ւ մ: Ներկայումս է. ա. ընդգրկումների ավելի մեծ ծավալ ունի, բազմաթիվ ճյուղավորումներ և հանդիսանում է ժամանցի ֆունկցիոնալ միջոց:

ԷՍՏՐԱԴԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, տես՝ *թեթև երաժշտություն:*

ԷՍՏՐԱԴԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ (ռուս. эстрадный оркестр) տարբեր կազմի և մեծության նվագախումբ, որի նշանակումն է կատարել *թեթև երաժշտություն:* Բացի լարային նվագարանների (գործիքների) խմբից, է. ն. կազմի մեջ են մտնում սաքսոֆոններ, շեփորներ, տրոմբոններ, կիթառներ, հարվածային նվագարաններ (գործիքներ), էլեկտրանվագարաններ: Վերջին տասնամյակներում մեծ տարածում են գտել նաև էստրադային-սիմֆոնիկ նվագախմբերը, որոնք նվագակցելու ֆունկցիայից զատ, իրենց վրա են վերցրել նվագախմբային կոմպոզիցիաներ, փոխադրումներ կատարելու և ձայնագրելու գործը:

ԷՏՅՈՒԴ (ֆր. étude՝ սովորում, ուսում, վարժություն) նվագարանային (գործիքային) պիես, նախատեսված որպես վարժություն տեխնիկական այս կամ այն բարդությունը յուրացնելու, ընդհանրապես կատարողական վարպետությունը բարձրացնելու համար: Մանկավարժական պրակտիկայում հայտնի են Կլեմենտիի, Չեռնիի, Կրամերի, Մոշելեսի դաշնամուրային է., Կրայցերի, Ռոդեի ջութակի է. և այլն: Դրանցից զատ, գոյություն ունեն համերգային կատարման համար նախատեսված, գեղարվեստական բարձր արժեք ներկայացնող է., որոնք նույնպես բնորոշվում են կատարողական բարդությունների առկայությամբ (Շոպենի, Շումանի, Լիստի, Ռախմանինովի, Սկրյաբինի և այլոց է.):

ԷՔՍՊՈԶԻՑԻԱ (լատ. exposition՝ շարադրում) *սոնատային ձևի* կամ *ֆուգայի* առաջին բաժինը, որն իր մեջ պարունակում է *հիմնական թեմայի*, (կամ՝ թեմաների) շարադրումը: *Սոնատային ալեգրոյի* է. բաղկացած է մի քանի մասից՝ *գլխավոր պարտիայից*, որը շարադրում է հիմնական թ ե մ ա ն, *կապող պարտիայից*, որը զ ա ր տ ու ղ ու թ յ ա ն միջոցով բերում է նոր տոնայնություն, *օժանդակ պարտիայից*, որը *գլխավոր պարտիային* հակադրվող նոր թ ե մ ա է, նոր տոնայնության մեջ (մ ա ժ ո ր ու մ՝ մեծ մասամբ ութ տոնայնության, մ ի ն ո ր ու մ՝ զուգահեռ մ ա ժ ո ր տոնայնության մեջ) և վերջապես *եզրափակիչ պարտիայից*, որն ամրապնդում է՝ *օժանդակ պարտիայի* տոնայնությունը: *Եզրափակիչ պարտիան* կամ միավորում է *գլխավոր* և՝ *օժանդակ պարտիաների* նյութը կամ էլ պարունակում է եզրափակիչ բնույթի նոր թեմատիկ նյութ: Երբեմն է. կապող և եզրափակիչ մասերը բացակայում են:

ԷՔՍՊՐԵՍԻՈՆԻԶՄ (ֆր. expression՝ արտահայտություն) ուղղություն գրականության և արվեստի մեջ XX դ. առաջին քառորդին, որը մարդու սուբյեկտիվ հոգեկան աշխարհը միակ իրողությունն է համարում, իսկ դրա արտահայտումը արվեստի միակ նյութը, է. արտահայտում է անհատական ընդվզում կապիտալիզմի այլանդակությունների դեմ, սարսափի և դատապարտվածության զգացմունքներ՝ մարդու նվաստացման, պատերազմի արհավիրքների դեմ, է. սուբյեկտիվ-իդեալիստական դը-

րույթները հանգեցրին հիվանդագին լարվածության, գըրոտեսկի, իռռացիոնալ կերպարների, աշխարհի խեղված ընկալման, է. շատ ներկայացուցիչներ հույժ մոդեռնիստական, այդ թվում նաև աբստրակտ արտահայտումների հունը մտան: Մասնավորապես երաժշտության մեջ է. համեմատաբար ավարտված ձևով դրսևորվեց Ավստրիայի և Գերմանիայի կոմպոզիտորների ստեղծագործություններում, այսպես՝ Մալերի վերջին սիմֆոնիաներին և Ռ. Շտրաուսի օպերաներին բնորոշ են է. գծեր, ուղղության գլխավոր ներկայացուցիչները դարձան Շյոնբերգը և նրա դպրոցը՝ Բերգ, Վեբեռն և այլք:

ԷՔՍՊՐՈՄՏ (լատ. expromtus-ից՝ հանպատրաստի, ֆր. impromptu՝ առանց նախապատրաստման) անմիջական հուզականությամբ լի, պոռթկումնային, եռանդաշատ երաժշտական *պիես*, որը կարծես ստեղծվել է միանգամից, հանպատրաստից, արագ:

ԷՔՎԻՌԻԹՄԱՅԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. эквиритмический перевод) բառեր ունեցող վոկալ ստեղծագործության (օպերա, կանտատա, ռոմանս, երգ և այլն) տեքստի այնպիսի թարգմանություն, որի բառերի և երաժըշտության շեշտերը համընկնում են:

Ը

ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԷՔՍՊՈԶԻՑԻԱ(ռուս. расширенная экспозиция) *ֆուգայի էքսպոզիցիան*, որը պարունակում է *թեմայի* լրացուցիչ անցկացում *գլխավոր* կամ *դոմինանտային* տոնայնության մեջ, մեկ կամ մի քանի նախօրոք մուտք գործած ձայներով: Տես՝ *ֆուգա:*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՈՐԴ (ռուս. общий аккорд) երկու տարբեր տոնայնություններում գտնվող միևնույն *ակորդը*, օր. *ֆա-լյա-դո ակորդն* ընդհանուր է *դո մաժորի* (IV աստիճան) և *լյա մինորի* (VI) համար, կամ *ֆա մաժորի* (I) և *ռե մինորի* (III) համար և այլն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՈՒԶԱ (ռուս. генеральная пауза) ընդհանուր, երկարատև դադար, նվագախմբային, երգչախմբային կամ կամերային, անսամբլային ստեղծագործությունների կատարման ժամանակ, կրճատ նշանակվում է՝ G. r., ը. պ. տևողությունը մեկ *տակտից* պակաս չի լինում:

ԸՆԴՀԱՏՎԱԾ ԿԱԴԱՆՍ (ռուս. прерванный каданс) տես՝ *կադանս:*

ԸՆԴՄԻՋՈՒՄ (ֆր. entr'acte) *անտրակտ*, օպերային կամ այլ ներկայացման յուրաքանչյուր գործողությունից, ինչպես նաև համերգի կամ կրկեսային ներկայացման յուրաքանչյուր բաժնից հետո տեղի ունեցող դադար, որն անհրաժեշտ է արտիստների և հանդիսականի հանգստի համար և որի ընթացքում բեմի վրա կատարվում են անհրաժեշտ փոփոխություններ (դեկորացիաներ, զգեստներ և այլն): Տես՝ *անտրակտ:*

ԸՆՏՐՈՎԻ ԲԱՅԱՆ (ռուս. выборной баян) տես՝ *բայան:*

Թ

ԹԱԽԾԵՐԳ (ռուս. элегия) տես՝ *էլեգիա:*


ԹԱՂՄԱՆ ՔԱՅԼԵՐԳ (ռուս. похоронный марш) սգո քայլերգ, վիշտ և տխրություն արտահայտող հանդիսավոր քայլերգ, պարզորոշ *ռիթմով*, դանդաղ *տեմպով*, չափը՝ 4/4 հազվադեպ՝ 2/4) սովորաբար գրվում է եռամաս ձևով, եզրամասերը՝ *մինորում*, միջին մասը *(տրիոն)*՝ *մաժորում:* Կատարվում է հուղարկավորության ժամանակ, կան նաև համերգային կատարման համար նախատեսված թ. ք., որոնք գրված են առանձին նվագարանների (գործիքների) անսամբլների, սիմֆոնիկ և այլն նըվագախմբերի համար, կամ հանդիսանում են ցիկլային ստեղծագործությունների մասերից մեկը (սիմֆոնիայի, սոնատի, սյուիտի և այլն):

ԹԱՌ, 1) լարային կսմիթային երաժշտական նվագարան (գործիք), տարածված Կովկասում և Միջին Ասիայում, Պարսկաստանում, ունի 3 զույգ (կամ 3 զույգ և 1 առանձին) հիմնական *փարդաներ*, 2 զույգ *բուրդոնային լարեր*, նվագում են *հարիչով: Փարդաների* բազմազանության շնորհիվ առաջանում են կիսատոնից ավելի նեղ տարածություններ, որոնք մեղեդային յուրահատուկ հնարավորություններ են տալիս թ., 2) ոչ մեծ դափ (ղավալ) Եգիպտոսում և Սիրիայում:



ԹԱՎՋՈՒԹԱԿ (իտ. violoncello) լարային աղեղնավոր երաժշտական նվագարան (գործիք), *ջութակի* ընտանիքից, *բասա-տենորային ռեգիստրով*, ընդհանուր երկարությունն է 1550—1560 մմ, իրանի երկարությունը 760 մմ է, չորս լարերը լարված են *մաքուր կվինտաներով*, նվագելիս կատարողը թ. հենում է հատակին ոտիկի միջոցով

(մինչև XIX դ. երկրորդ կեսը նվագում էին ծնկների արանքում սեղմած): Թ. լայնորեն օգտագործվում է որպես մենակատարային, անսամբլային և նվագախմբային գործիք: Թ. երևան է եկել XVI դ. առաջին կեսին, իսկ



XVIII դ. աստիճանաբար դուրս մղեց *վիոլա դա գամբան:* Թ. դասական նմուշներ են ստեղծել XVII — XVIII դդ. մեծագույն վարպետներ Ա. և Ն. Ամատիները, Ջ. Գվարներին, Դ. Մոնտանյանան և Ա. Ստրադիվարիուսը:

ԹԱՏԵՐԱԲԵՄ (ռուս. сцена) տես՝ *բեմ:*

ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ (ֆր. troupe, ռուս. труппа) օպերային, դրամատիկ և այլ թատրոնների, կրկեսի դերասանական-արտիստական կազմը, ավելի լայն իմաստով՝ նշված թատրոններից յուրաքանչյուրի ստեղծագործական ամբողջ կոլեկտիվը:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. театральная музыка) 1) սովորաբար և հիմնականում՝ դրամատիկ թատրոնի ներկայացումների համար գրված երաժշտություն, որը նպաստում է պիեսի գաղափարա-գեղարվեստական եզրերի բացահայտմանը և ուժեղացնում ներկայացման հուզական ազդեցությունը հանդիսատեսի վրա: Թ. ե. գրել են մի ամբողջ շարք նշանավոր կոմպոզիտորներ, թ. ե. առանձին համարներ իրենցից ներկայացնում են ավարտված երաժշտական ստեղծագործություններ, օր. Բեթհովենի «Էգմոնտը», «Կորիոլանը» և այլն, 2) ավելի լայն իմաստով՝ ընդհանրապես երաժշտական թատրոնի համար գրված երաժշտություն (օպերա, բալետ, երաժշտական դրամա, երաժշտական կոմեդիա, օպերետ և այլն):

ԹԱՏԵՐԱՊԱՐ, տես՝ *բալետ:*

ԹԵԹԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ, երաժշտություն, որն իր ոչ բարդ բովանդակությամբ, պարզ ձևով, հեշտությամբ ընկալվող մեղեդիով, ռիթմական ոգևորիչ պատկերով դյուրըմբռնելի է ունկնդրող լայն զանգվածների համար, թ. ե. ընդգրկում է տարբեր ժանրի ստեղծագործություններ՝ քայլերգեր, փոքր նախերգանքներ, սյուիտներ, ռապսոդիաներ, պոպուրիներ, երգի և ռոմանսի առանձին տեսակներ, կոմպոզիցիաներ, դաշնավորումներ, հանրածանոթ մեղեդիների մշակումներ և այլն: Թ. ե.. հիանալի օրինակներ են թողել Մոցարտը, հայր և որդի Շտրաուսները, Օֆենբախը, Դունաևսկին և ուրիշներ: Ներկայումս թ. ե. հիմնականում էստրադային բացահայտումներ ունի: Տես՝ կենցաղային երաժշտություն:

ԹԵՄԱ (հուն. thema, բառացի՝ այն, ինչ հիմքում է) երաժշտական ստեղծագործության կամ նրա որևէ մասի հիմնական միտքն արտահայտող կառուցվածք, որն իր բնորոշ առանձնահատկությունների շնորհիվ սովորաբար հիմք է հանդիսանում *մշակման* համար: *Կոմպոզիցիայի* կարևորագույն բաղադրիչն է, երաժշտական ստեղծագործության որոշակի մտքի, գաղափարի, հերոսի կերպարի կրողը: Երաժշտական ստեղծագործության որակը մեծապես կախված է թ. արժանիքներից: *Պոլիֆոնիկ* ստեղծագործության (օր. *ֆուգայի*) թ. կարճ (սովորաբար 1—4 *տակտանի*) *մեղեդային կառուցվածք է, որն անցնում է մեկ ձայնից մյուսը, խոշոր ձևի ստեղծագործության մեջ (օր. սոնատ)* սովորաբար լինում են մի քանի, իրար հակադրվող թ.:

ԹԵՄԱՅԻ ՇՐՋՈՒՄ (ռուս. обращение темы) նույնն է՝ *թեմայի անցկացում հակաշարժման մեջ:* Տես՝ *հակաշարժում:*

ԹԵՄԱ ՎԱՐԻԱՑԻԱՆԵՐՈՎ (ռուս. тема с вариациями) տես՝ *վարիացիաներ:*

ԹԵՄԱՏԻԿ ԶԱՐԳԱՑՈՒՄ (ռուս. тематическое развитие) *թեմայի* առանձին մասերի (*ֆրազների, մոտիվների*) ձևափոխված կրկնությունը (կոտորակումը, սեղմումը, ընդլայնումը, լրացումը, ինտերվալների, ռիթմի, հարմոնիայի փոփոխումը:): Թ. զ. մեծ մասամբ օգտագործվում է *սոնատային* ձևի *մշակման* մասում:

ԹԵՄԱՏԻԿ ՄՇԱԿՈՒՄ (ռուս. тематическая разработка) *թեմատիկ զարգացման* ձևերից մեկը:

ԹԵՐԻ ԿԱԴԱՆՍՆԵՐ (ռուս. неполные каданcы) իմաստով նույնն է՝ *պարզ կադանսներ:*

ԹԵՐԻ ՍԵՊՏԱԿՈՐԴ (ռուս. неполный септаккорд) *սեպտակորդ,* բաց թողնված *կվինտային* (ավելի հազվադեպ՝ *տերցիային*) տոնով:

ԹԵՐԻ ՏԱԿՏ (ռուս. неполный такт) որևէ ստեղծագործության կամ նրա մասի առաջին կամ վերջին *տակտը,* որն իր տևողությամբ ավելի քիչ է տվյալ չափի լրիվ *տակտից:*

ԹԵՔՈՒՄ (ռուս. наклонение) 1) *լադի* տարատեսակ, որը բնորոշվում է I և III աստիճանների միջև ընկած մեծ *(մաժոր)* կամ փոքր *(մինոր) տերցիայով,* համապատասխանաբար գոյություն ունի երկու թեքում՝ *մաժոր* և *մինոր: Մաժոր թեքումով լադերին* բնորոշ է պայծառ, լուսավոր, առույգ բնույթի հնչողականություն, իսկ *մինոր թեքումով լադերը* հնչում են թախծոտ, տխուր, 2) *տետրա-*



խորդի և *լադի* տիպ հին հունական երաժշտության մեջ, որը որոշվում է *ձայնաշարի* աստիճանների միջև եղած

ինտերվալների մեծությամբ, գոյություն ուներ երեք թեքում՝ *դիատոնիկ, խրոմատիկ և էնհարմոնիկ:*

ԹՄԲՈՒԿ (ռուս. барабан) ձայնի որոշակի բարձրություն չունեցող մի շարք թաղանթավոր հարվածային նվագարանների (գործիքների) ընդհանուր անվանում: Տես՝ *մեծ թմբուկ, փոքր թմբուկ, գլանաձև թմբուկ, ռազմական թմբուկ:*

ԹՌՉՈՂ ՍՏԱԿԱՏՈ (իտ. staccato volante) աղեղնային նվագարաններով (գործիքներով) կատարվող *ստակատոյի* տարատեսակը՝ մեկ աղեղով (գլխավորապես՝ դեպի վեր) կատարված բազմաքայլ սրընթաց *ստակատո*, որի ժամանակ ամեն մի նոտայից հետո աղեղը ճկունորեն վեր է թռչում:

ԹՎԱԳԻՐ (ռուս. цифровка) *ակորդների* նշանակումը հռոմեական և արաբական թվանշաններով, կիրառվում է *ներդաշնակագիտության (հարմոնիա)* դասընթացի և *հարմոնիկ անալիզի* ժամանակ: Հռոմեական թվանշանները ցույց են տալիս, թե *լադի* որ աստիճանի վրա է կառուցված կամ պիտի կառուցվի *ակորդը*, իսկ աջ կողմի վարի մասում դրված արաբական թվանշանները ցույց են տալիս *ակորդի* տեսակները՝ V_3^5—հինգերորդ աստիճանի *տերցկվինտակորդ (եռահնչյուն)*, որ ներկայումս հազվադեպ է նշանակվում, I_6 — առաջին աստիճանի *սեքստակորդ*, IV_4^6 չորրորդ աստիճանի *կվարտսեքստակորդ*, V_7—հինգերորդ աստիճանի *սեպտակորդ*, V_5^6—հինգերորդ աստիճանի *կվինտսեքստակորդ*, V_3^4 հինգերորդ աստիճանի *տերցկվարտակորդ*, V_2 — հինգերորդ աստիճանի *սեկունդակորդ*, V_9 — հինգերորդ աստիճանի *նոնակորդ:* Հռոմեական թվանշանների աջ կողմի վերևի մասում արաբական թվանշաններով հարկ եղած դեպքում նշանակվում է *ակորդի մելոդիկ դրությունը՝ 1-հիմնական տոնի*, 3-տերցային տոնի, 5-*կվինտային տոնի*, 7-*սեպտիմային տոնի*, 9-*նոնային տոնի:* Եթե այդ թվանշաններից առաջ դրված են պլյուս (+) կամ դիեզ, մինուս (-) կամ բեմոլ, ապա այդ թվանշանները ցույց են տալիս, թե *ակորդի* որ տոնը համապատասխանորեն պիտի իջեցնել կամ բարձրացնել (կատարել *լադային ալտերացիա): Լադի* տարատեսակները նշանակվում են տառերով՝ Բ-*բնական*, Հ-*հարմոնիկ*, Մ-*մելոդիկ: Թվագրից* առաջ կարող են դրվել *ակորդի ֆունկցիան* մատնանշող լատինական տառեր՝ T-*տոնիկային ֆունկցիա*, S-*սուբդոմինանտային ֆունկցիա*, D-*դոմինանտային ֆունկցիա*, ըստ որում, որոշ դեպքերում *մաժոր ակորդները* նշանակվում են մեծատառերով, *մինորները*՝ փոքրատառերով: Տես՝ *օժանդակ դոմինանտներ, գեներալ-բաս:*

ԹՎԱԳՐՎԱԾ ԲԱՍ (ռուս. цифрованный бас) տես՝ *գեներալ-բաս:*

ԹՎԵՐԳ (ռուս. речитатив) *ռեչիտատիվ*, խոսելանման եղանակ, վոկալ երաժշտության այն տեսակը, որն իր բնույթով նման է երգանման արտասանության, օգտագործվում է *օրատորիաներում, կանտատներում, ռոմանսներում*, հատկապես *օպերաներում:* XVII—XVIII դդ. իտալական օպերայում տարբերում էին երկու տեսակի թ.՝ recitativo secco և recitativo accompagnato: Օպերայում թ. սովորաբար նախորդում է *արիային*, կամ երգային բնույթի այլ համարներին, մեղեդիապես զարգացած և երգուն թ. բնորոշ է *արիոզային:*

ԹՐԹԻՌ, ԹՐԹՌՈՒՄ (ռուս. вибрация) նույնն է՝ *վիբրացիա:*


ԹՈՒՅԼ ԺԱՄԱՆԱԿ (ռուս. слабое время) տես՝ *թույլ մաս:*

ԹՈՒՅԼ ՄԱՍ (ռուս. слабая доля) *տակտի* չշեշտված մասը, այլ կերպ՝ *թույլ ժամանակ:*

ԹՈՒ-ՍԹԵՓ (անգլ. two step՝ երկու քայլ) XX դ. սկզբին Հյուսիսային Ամերիկայում երևան եկած սալոնային պար, 20-ական թ. մեծ տարածում գտավ նաև Եվրոպայում: Չափը՝ 2/4, առաջին քառորդին տրվում է երկու քայլ, երրորդին՝ մեկ: Թ. ս. մտավ ջազային երաժշտության մեջ որպես մեղեդային և ռիթմիկ կառուցվածք:

ժ

ԺԱԼԵՅԿԱ (ռուս. жалейка) ռուսական և բելոռուսական ժողովրդական փողային նվագարան, ունի 3 — 7 անցք և միակի *պիպիչ*, ինչերանգը սուր է և ռնգային, կիրառվում է որպես նվագակցող, անսամբլային և մենակատարային նվագարան: Երկձայնանի նվագի համար կան *կըրկնակի ժ.*, որոնց փայտյա կամ եղեգնյա զույգ փողերը մտցվում են մեկ փողաբերանի մեջ:



ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ռուս. Ассоциация современных музыкантов-АСМ) կոմպոզիտորների և երաժշտական քննադատների միություն, կազմակերպված 1923 թ. Մոսկվայում և Լենինգրադում, հարում էր մոդեռնիստական ուղղությանը, մտնում էր «ժամանակակից երաժշտության միջազգային ընկերության» մեջ: Հրատարակում էր «Երաժշտական կուլտուրա» և «ժամանակակից երաժշտություն» ամսագրերը, 30-ական թ. սկզբին ժ. ե. մ. քայքայվեց:

ԺԻԳԱ (անգլ. jig) անգլիական հնագույն ժողովրդական արագ զուգապար (նավաստիների համար՝ մենապար), եռամաս չափով (3/8, 3/4, 6/8, 6/4 և այլն): XVII—XVIII դդ. ժ. դարձավ պարահանդեսային պար, նույն ժամանակաշրջանի պարային քառամաս *սյուիտներում* ժ. հանդիսանում էր չորրորդ մասը (հաջորդելով դանդաղ *սարաբանդային*):

Վ. Կորելլի. Ժիգա op. 5 № 5 սոնատից



ԺՅՈՒՐԻ (ֆր. և անգլ. jury, լատ. juro-ից՝ երդվում եմ) մասնագետների նշանակովի կամ ընտրովի հանձնաժողով, որը մրցույթներում որոշում և բաշխում է մրցանակները (մրցանակաբաշխության հանձնաժողով):

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ, տես՝ *հանրապետության ժողովրդական արտիստ:*

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. народная музыка) ժողովրդի երգային և գործիքային ստեղծագործությունը, ժ. ե. վոկալ և գործիքային ստեղծագործությունները ստեղծվում են պատմականորեն կուտակվող անընդհատ զարգացող գեղարվեստական ավանդույթների հիման վրա և բանավոր հաղորդման միջոցով անցնում մեկից մյուսին, տեղից տեղ, սերնդից սերունդ: Բազմաքանակ կատարումների պրոցեսում ժ. ե.. հղկվում է, հասնելով ոճական և գեղարվեստական ավարտվածության, արտահայտելով տվյալ ժողովրդի բնավորությունը, մտքերն ու զգացումները, կենցաղը, աշխատանքային գործունեությունը, հասարակական պայքարը, ժ. ե. ունի բացառիկ հարուստ ժանրեր, գեղարվեստական կերպարներ, արտահայտչամիջոցներ, պրոֆեսիոնալ երաժշտարվեստի հիմքն է հանդիսանում:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ (ռուս. народная песня) ոչ մեծ, սովորաբար *կուպլետային* երաժշտա-պոետիկ ստեղծագործության հիմնական ձև, աչքի է ընկնում բազմաժանրությամբ՝ էպիկական երգեր, քնարական, աշխատանքային, երգիծական, կենցաղային, ծիսական, պատմական և այլն: Որոշ ժանրեր կապված են դրամատիկ գործողության, պարի, նվագի հետ: Միաձայն ժ. ե. սովորաբար կատարում է մեկ երգիչ կամ երգողների խումբ՝ *ունիսոնով*, բազմաձայն ժ. ե. լինում է 2,3 և ավելի ձայնանի, կատարվում է տարբեր կազմերով, նվագակցությամբ կամ առանց դրա: ժ. ե. շատ սերունդների կոլեկտիվ ստեղծագործության արգասիք է:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ԳՈՐԾԻՔՆԵՐ) (ռուս. народные музыкальные инструменты) որևէ ժողովրդի ստեղծած ու նրա բնակված վայրերում տարածված երաժշտական նվագարաններ, որոնք լինում են լարային, փողային, հարվածային: Յուրաքանչյուր ժողովուրդ ունի նվագարանների իր կազմը, օր. ռուսները՝ *դոմրան, բայանը, բալալայկան, ժալեյկան*, ուկրաինացիները՝ *բանդուրան*, անդրկովկասյան ժողովուրդները՝ *թառը, դհոլը, քյամանչան, դուդուկը, քանոնը*, իսպանացիները՝ *կիթառը* և այլն:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ (ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐԻ) ԱՆՍԱՄԲԼ (ռուս. ансамбль народных инструментов) համերգային փոքր խմբեր, որոնց կազմի մեջ են մտնում 3 — 7 ժողովրդական նվագարաններ, երգիչ երգչուհիներ, պարողներ, պարուհիներ: Բացի պետական ժ. գ. ա. գոյություն ունեն նաև բազմաթիվ ինքնագործ ժ. գ. ա.:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ (ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐԻ) ՆՎԱԳԱԽՈՒՄԲ (ռուս. оркестр народных инструментов) որևէ ժողովրդի, ազգության ժողովրդական նվագարաններից կազմված նվագախումբ: Տես՝ *հայկական ժողովրդական գործիքների (նվագարանների) նվագախումբ, ռուսական ժողովրդական գործիքների (նվագարանների) նվագախումբ:*

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐԵՐ (ռուս. народные танцы) 1) ժողովրդի ստեղծած պարեր, որոնք մեծ տարածում ունեն կենցաղում (տես՝ *պար*): ժ. պ. ստեղծվել են *պարահանդեսային պարերը* և պրոֆեսիոնալ, *դասական պարը*, որը մինչև օրս էլ սնվում է ժ. պ. ակունքներից, հարստանալով ինքնատիպ, յուրօրինակ տարրերով, ազգային բալետի ստեղծման հիմքն է հանդիսացել, մեծ տեղ են գրավում պետական և ինքնագործ պարի, երգի-պարի և այլ անսամբլների երկացանկում, 2) ժողովրդի ստեղծած պարեղանակներն ու պարերգերը, որոնց տակ պարում են, տարբեր ազգերի ժ. պ. ունեն դարերի ընթացքում մշակված իրենց յուրօրինակ ռիթմերը, կառուցվածքը, բնույթը: Տես՝ *պարերաժշտություն:*

ԺՈՆԳԼՅՈՐ (ֆր. jongleur) *կատակաբան, զվարճաբան, 1) միջին դարերում ռոմանական մի շարք երկրներում բազմապիսի արվեստների տիրապետող դերասան (երգ, նվագ, պար, աճպարարություն և այլն), ժ. նաև բանաստեղծ կարող էր լինել, անպայման որևէ նվագարանի տիրապետող, տրուբադուրի կամ տրուվերի մոտ ծառայող ժ. կոչվում էր մենեստրել:* Տես՝ *հիստրիոն, շպիլման*, 2) կրկեսի արտիստ, ձեռնածու:

Ի

ԻՄԻՏԱՑԻԱ (լատ. imitatio՝ նմանեցում) *նմանակում*, մինչ այդ հնչած որևէ մեղեդային դարձվածքի (*թեմա, մոտիվ* և այլն) կրկնումը մեկ ուրիշ ձայնում, որի ժամանակ նրան նախորդող ձայնը համարյա միշտ պարունակում



է իր մեղեդային գիծը, կազմելով ի. *դիմաշարը*: Ի. *պոլիֆոնիկ* երաժշտության ամենաբնորոշ արտահայտչամիջոցներից մեկն է, որի վրա են հիմնված առավել զարգացած և ինքնուրույն *պոլիֆոնիկ* ձևերը: Ի. կարող է կատարվել ցանկացած *ինտերվալով*, վեր կամ վար, կիրառվում է ոչ միայն երկձայնում, այլև եռաձայնում, քառաձայնում, երբեմն հնգաձայնում (ավելի ձայներում՝ հազվադեպ):

Պոլիֆոնիկ երաժշտական ձևերի կազմավորման մեջ առավել մեծ նշանակություն ունի՝ *կվինտա* վեր (կամ՝ վար) կատարվող ի., որը կոչվում է *իմիտացիա դոմինանտային տոնայնության մեջ*: Այդ ի. կարող է լինել *իրական*, երբ թեման (մելոդիկ դարձվածքը) կրկնվում է նույնությամբ, *անփոփոխ*, և *տոնայնական*, երբ թեման կրկնվում է որոշ և որոշակի ձևի փոփոխություններով (տես՝ *իրական ֆուգա*, *տոնայնական ֆուգա*): Կիրառվում են նաև հատուկ ձևի ի., որոնցից են. ա) *շրջված* կամ *ընդհմաշարժ* ի., որի ժամանակ թեման կազմող բոլոր մեղեդային ինտերվալները վերցվում են հակառակ ուղղությամբ, բ) *մեծացված ի.*, որի ժամանակ թեման կազմող հնչյունների տևողությունները մեծացվում են, սովորաբար 2 կամ 4 անգամ, այսինքն թեման կրկնվում է 2 կամ 4 անգամ ավելի դանդաղ, գ) *փոքրացված ի.*, որի ժամանակ թեման կազմող հնչյունների տևողությունները փոքրացվում են 2 կամ 4 անգամ, այսինքն թեման կրկնվում է 2 կամ 4 անգամ ավելի արագ, դ) *կոմբինացված ի.*, որի ժամանակ միավորվում են մեծացրած ու շրջված, կամ փոքրացրած ու շրջված ի., ե) *ազատ ի.*, որի ժամանակ թեման կրկնվում է մեղեդու, երբեմն և ռիթմի փոփոխություններով, զ) *ռիթմիկ ի.* որի ժամանակ կրկնվում է թեմայի միայն ռիթմը, է) *խեցգետնաքայլ* կամ *հետադարձ ի.*, որի ժամանակ թեման կրկնվում է հետադարձ շարժումներով, այսինքն վերջից սկիզբ և այլն: Կան ի., որոնք սկսվում են մինչև թեմայի վերջանալը (այսինքն ավելի շուտ, քան սովորական ի., որն սկսվում է թեմայի ավարտից անմիջապես հետո կամ քիչ հետո) այդպիսի ի. կոչվում է *ստրետային*, այսինքն՝ սեղմված: Ի. կարող են լինել նաև կրկնակի, երբ կրկնում են միաժամանակ հնչող երկու տարբեր թեմաներ, եռակի և քառակի ի. հազվադեպ են: Ի. հաճախ օգտագործվում է նաև *հոմոֆոնիկ* երաժշտության մեջ: Տես՝ *ֆուգա*, *ֆուգետա*, *կանոն*, *պատասխան*, *հոմոֆոնիա*:

ԻՄՊՐԵՍԱՐԻՈ (իտ. impresario, impesa-ից՝ ձեռնարկում, ձեռնարկություն) կապիտալիստական երկրներում ներկայացումների և համերգների մասնավոր պրոֆեսիոնալ կազմակերպիչ, նաև տվյալ արտիստի կամ կոլեկտիվի գործակալ, նաև՝ տնօրեն, որը գործում է արտիստի կամ կոլեկտիվի անունից: Տես՝ *անտրեպրենյոր*:

ԻՄՊՐԵՍԻՈՆԻԶՄ (ֆր. impressionisme, impession-ից՝ տպավորություն) գեղարվեստական ուղղություն, որը արվեստի հիմնական նպատակ հռչակում է իրականության, երևույթների անմիջական արտացոլումն այն ձևով, ինչպես դրանք ներկայանում են արվեստագետին՝ վայրկենական տպավորություններում, զգայական սուբյեկտիվ ընկալումներում: Երաժշտական ի. առաջ է եկել XIX դ. 80 — 90-ական թ. Ֆրանսիայում, հետագայում տարածվել այլ երկրներում, ուղղության ամենաաչքի ընկնող ներկայացուցիչներն են Դեբյուսին և Ռավելը՝ Ֆրանսիայում, դը Ֆալյան՝ Իսպանիայում:

ԻՄՊՐՈՎԻԶԱՑԻԱ (իտ. improvisazione լատ. improvisus-ից՝ անակնկալ, հանկարծակի) գեղարվեստական ըստեղծագործության հատուկ ձև, որի դեպքում ստեղծագործումը կազմավորվում և մարմնավորվում է անմիջականորեն կատարման ընթացքում: Եվրոպական պրոֆեսիոնալ արվեստում ի. տարածում ուներ դեռևս միջին դարերում, իսկ ժամանակակից պրակտիկայում ի. մեծ տեղ է գրավում *ջազի* արվեստում:

ԻՆՆՅԱԿ, ինն կատարողներից (երաժիշտ կամ երգիչ) կազմված անսամբլ, գործիքային ի. կարող են լինել նույնատիպ կազմի և խառը կազմի, նույնը՝ վոկալ ի.:

ԻՆՎԵՆՑԻԱ (լատ. inventio-ից՝ հնարանք, գյուտ) Յ. Ս. Բախը այսպես է կոչել մանկավարժական նպատակներով *կլավիրի* համար գրված այն երկձայն ստեղծագործությունները, որոնք կառուցվածքով ինչ-որ բանով տարբերվել են *ֆուգայի*, *ֆուգետայի* և *պոլիֆոնիկ* այլ ձևերից, իսկ նույնատիպ եռաձայն ստեղծագործությունները, որոնք ինքը՝ Բախը «սիմֆոնիաներ» է կոչել, վաղուց ընդունված է անվանել «*եռաձայն ինվենցիաներ*»: Բոլոր ի., որոնք ինքնուրույն գեղարվեստական արժեք ունեն, գրված են որպես *ֆուգաներ* կատարելու նախապատրաստական վարժություններ:

ԻՆՏԵՐԼՅՈՒԴԻԱ (լատ. interludus-ից՝ միջնախաղ) 1) երաժշտական ստեղծագործության երկու ավելի կարևոր մասերի միջում ընկած փոքրիկ հատված, օր. առանձին *վարիացիաների* կամ *խորալի* երկու առանձին տների միջև, երբեմն նաև *ֆուգայի* երկու *անցկացումների* միջև, 2) թատրոնում՝ իմաստով նույնն է՝ *ինտերմեդիա*:

ԻՆՏԵՐՄԵԴԻԱ (լատ. intermedius-ից՝ միջնախաղ) 1) այս կամ այն մեծության միջանցիկ կառուցվածքներ, որոնք կարող են լինել *ֆուգայի* երեք մասերի, ինչպես նաև այդ մասերում եղած *անցկացումների* միջև և որոնց նշանակումն է նախապատրաստել և իրար հետ կապել այդ մասերն ու *անցկացումները* երբեմն կոչվում է նաև *ինտերլյուդիա*, 2) սովորաբար երգով ու նվագով ուղեկցվող, կոմիկական բնույթի փոքրիկ պիես, որը կատարվում է դրամատիկ և օպերային ներկայացումների ժամանակ:

ԻՆՏԵՐՄԵՑՑՈ (իտ. intermezzo՝ միջնախաղ, միջանկյալ) 1) օպերայի կամ այլ երաժշտական ստեղծագործության մեջ մտնող միջանցիկ նշանակության պիես (նվագային, նվագախմբային, խմբերգային), որն իր բնույթով սովորաբար հակադրվում է երաժշտությանը, 2) երբեմն այսպես են կոչվում դաշնամուրի կամ նվագախմբի համար գրված տարբեր բնույթի և բովանդակության ինքնուրույն պիեսներ:

ԻՆՏԵՐՎԱԼ (լատ. intervallum՝ տարածություն) երկու հնչյունների հարաբերակցումն ըստ բարձրության, կոչվում է *մելոդիկ*, երբ այդ երկու հնչյունները վերցվում են հաջորդաբար, մեկը մյուսից հետո (վերընթաց կամ վարընթաց շարժումով) և *հարմոնիկ*, երբ վերցվում են միաժամանակ: *Հարմոնիկ ի.* ցածի հնչյունը կոչվում է *հիմք*, վերինը՝ *գագաթ*: Երաժշտագիտության մեջ ընդունված ի. լատինական անվանումները ցույց են տալիս, թե *դիատոնիկ գամմայում* որերորդ աստիճանն է հանդիսանում ի. *գագաթը*, եթե *հիմքը* համարում ենք առաջինը: Երաժշտության մեջ գոյություն ունեցող բազմաթիվ ի. առաջին ութը հանդիսանում են *պարզ* կամ *հիմնական ի.*, մնացած բոլորը՝ *բարդ* կամ *բաղադրովի*: *Ըստ որակի ի.* կարող են լինել *մաքուր (պրիմա, կվարտա, կվինտա, օկտավա), փոքր* և *մեծ (սեկունդա, տերցիա, սեքստա, սեպտիմա), փոքրացրած, մեծացրած, կրկնակի փոքրացրած* և *կրկնակի մեծացրած*: Ի. ունի երկու մեծություն՝ քանակական կամ աստիճանային, որակական կամ տոնային: Տես՝ *հարմոնիկ ի., մեծացրած ի., կրկնակի փոքրացրած ի., կրկնակի մեծացրած ի., դիատոնիկ ի., խրոմատիկ ի., էնհարմոնիկ հավասար ի., ինտերվալների շրջում:*


ԻՆՏԵՐՎԱԼԻ ԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ (ռուս. ступеневая величина интервала) տես՝ *ինտերվալ:*

ԻՆՏԵՐՎԱԼԻ ԳԱԳԱԹ (ռուս. вершина интервала) տես՝ *ինտերվալ:*

ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ (ռուս. разрешение интервалов) *անկայուն հարմոնիկ ինտերվալների* անցումը *կայուն ինտերվալների: Անկայուն* են բոլոր *դիսոնանսող ինտերվալները*, որոնք հիմնականում լուծվում են ըստ *լադային ձգողականության*, այսինքն այդ *ինտերվալների* մեջ մտնող անկայուն հնչյունները (աստիճանները) անցնում են կայունների: Սակայն կան *դիսոնանսներ*, որոնք լուծվում են նաև անկախ տվյալ տոնայնության *լադային ձգողականությունից* (լուծվում են բարձր կարգի *լադային ձգողականությամբ*):

ԻՆՏԵՐՎԱԼԻ ՀԻՄՔ (ռուս. основание интервала) տես՝ *ինտերվալ:*

ԻՆՏԵՐՎԱԼԻ ՇՐՋՈՒՄ (ռուս. обращение интервала) *ինտերվալի հիմքը* մեկ *օկտավա* բարձրացնելը կամ *գագաթը* մեկ *օկտավա* իջեցնելը, որի հետևանքով նախկին *հիմքը* դառնում է *գագաթ*, նախկին *գագաթը՝ հիմք: Պարզ ինտերվալների* շրջման ժամանակ դիտվում են հետևյալ օրինաչափությունները. ա) շրջելիս *պրիման* տալիս է *օկտավա, սեկունդան՝ սեպտիմա, տերցիան՝ սեքստա, կվարտան՝ կվինտա*, և ընդհակառակն՝ *կվինտան կվարտա, սեքստան՝ տերցիա, սեպտիման՝ սեկունդա, օկտավան՝ պրիմա: Ինտերվալի* և նրա շրջվածքի գումարը միշտ հավասար է իննի, իսկ միասին վերցված դրանք կազմում են *օկտավա*, բ) շրջելիս *մաքուր ինտերվալները* տալիս են *մաքուր ինտերվալներ, փոքր ինտերվալները՝ մեծ ինտերվալներ, մեծերը՝ փոքր, փոքրացրածները՝ մեծացրած, մեծացրածները՝ փոքրացրած* և այլն:



Բարդ (կամ՝ *բաղադրովի*) *ինտերվալները* կարող են շրջել երկու կերպ. ա) *ինտերվալի* երկու հնչյուններն էլ տեղափոխվում են՝ *հիմքը* մեկ *օկտավա* բարձրանում է, իսկ *գագաթը* նույնքան իջնում, բ) տեղափոխվում է միայն մեկ հնչյունը՝ կամ *հիմքն* է բարձրանում երկու *օկտավա*, կամ *գագաթն* է նույնքան իջնում: *Բարդ ինտերվալները* շրջվելիս տալիս են *պարզ ինտերվալներ*, ըստ

որում, ինչպես և *պարզ ինտերվալների* շրջման ժամանակ՝ մաքուրները տալիս են մաքուր, փոքրերը՝ մեծ և այդպես:

ԻՆՏԵՐՎԱԼԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԿՈՂՄ (ռուս. качественная сторона интервала) իմաստով նույնն է՝ *ինտերվալի տոնային մեծություն:*

ԻՆՏԵՐՎԱԼԻ ՏՈՆԱՅԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ (ռուս. тоновая величина интервала) տես՝ *ինտերվալ:*

ԻՆՏԵՐՎԱԼԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԿՈՂՄ (ռուս. количественная сторона интервала) իմաստով նույնն է՝ *ինտերվալի աստիճանային մեծություն:*

ԻՆՏՈՆԱՑԻԱ (լատ. intono-ից՝ բարձրաձայն արտասանում եմ) լայն իմաստով՝ մտքի, զգացմունքի արտահայտումը երաժշտական ձայներով, կամ երաժշտա-գեղարվեստական կերպարի մարմնավորումը իր հնչման պրոցեսում, ա) ելևէջ, երաժշտության մեջ իրար հաջորդող երկու տարբեր բարձրությունների հարաբերության ճշտությունը նրանց իրական հնչման ժամանակ, այսինքն՝ երգելիս կամ նվագելիս (ինչպես նաև որևէ երաժշտական ձայնի ճշգրիտ վերարտադրումը), այստեղից էլ՝ *ճիշտ* կամ *մաքուր ի.* և *ոչ ճիշտ* կամ *կեղծ ի.* (այլ կերպ՝ *դետոնացիա*) հասկացությունները, բ) ելևէջ, երկու կամ ավելի ձայներից բաղկացած մելոդիկ դարձվածք, որը հանդիսանում է երաժշտական կերպարի ստեղծման կարևորագույն արտահայտչամիջոցներից մեկը և որի *լադային, ինտերվալային* և *ռիթմիկ* փոխհարաբերությունները բնորոշիչ են, օր. հայկական, ռուսական, վրացական և այլն, գ) նվագարանի ձայնաշարի հնչման միակերպությունը, նրա յուրաքանչյուր հնչյունի ճշտությունը և հավասարությունը, միասեռությունն ըստ բարձրության, հնչերանգի և ուժգնության, դ) նվագարանի ձայնաշարի հնչման միակերպությանն ու ճշտությանը հասնելու համար լարողների կողմից կիրառվող տեխնիկական հնարների համակցությունը:

ԻՆՏՐԱԴԱ (իտ. intrada, entrada՝ մուտք, մուտք գործել) XVI—XVII դդ այսպես էր կոչվում այն երաժշտությունը, որն ուղեկցում էր հանդիսավոր շքերթները, հետագայում ի. կոչվեցին վեհաշուք և հանդիսավոր բնույթի երաժշտական *պիեսները*, որոնք ժամանակին մտել են *սյուիտի* մեջ որպես *սկզբնամաս:*

ԻՆՏՐՈԴՈՒԿՑԻԱ (լատ. introductio-ից՝ ներածական) 1) սովորաբար դանդաղ *տեմպի* փոքր *նախանվագ*, որը նախորդում է խոշոր ձևի ստեղծագործությանը (*սոնատ, սիմֆոնիա* և այլն), 2) փոքր ծավալի օպերային կամ բալետային *նախերգանքի* մի տեսակ, որն անմիջականորեն ձուլվում է հաջորդող երաժշտությանը, 3) օպերայի սկզբի վոկալ անսամբլը կամ խմբերգային համարը:


ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ (ռուս. самодеятельность) տես՝ *երաժշտական ինքնագործունեություն:*

ԻՐԱՆ (ռուս. корпус) տես՝ *հնչարկղ:*


L

ԼԱԴ, տարբեր բարձրություն ունեցող հնչյունների փոխհարաբերության որևէ սիստեմ: Տարբեր դարաշրջաններում, տարբեր ժողովուրդներ ունեցել են և ունեն բազմաթիվ *լադեր*, որոնք իրարից տարբերվում են՝ ա) *լադ* կազմող հնչյունների քանակով, բ) նրանց *ինտերվալային* հարաբերակցությամբ, գ) նրանց ֆունկցիոնալ փոխհարաբերությամբ: Լ. ձայնաշարի յուրաքանչյուր հնչյուն հանդիսանում է նրա որևէ աստիճանը և համարակալվում է վարից վեր հռոմեական թվանշաններով: Լ. միմյանցից տարբերվում են աստիճանների քանակով և դրանց *ինտերվալային* և ֆունկցիոնալ փոխհարաբերությամբ: Լ. *ինտերվալային* փոխհարաբերությունը նշանակվում է լ. կառուցման բանաձևով, իսկ ֆունկցիոնալ փոխհարաբերություններն արտահայտվում են լ. կայուն և անկայուն աստիճանների առկայությամբ, ըստ որում անկայունները ձգտում են դեպի կայունները: Լ. ամենակայուն աստիճանը *տոնիկան* է (I աստիճանը), դեպի որը վերջին հաշվով ձգտում են մնացած բոլոր աստիճանները: Յուրաքանչյուր լ. ունի իր անունը: Տես՝ *մաժոր լադ, մինոր լադ, միջնադարյան լադեր, հին հունական լադեր, պենտատոնիկա, տրիխորդ, տետրախորդ, սեքստախորդ:*

ԼԱԴԱՅԻՆ ԱԼՏԵՐԱՑԻԱ (ռուս. ладовая альтерация) *լադի* անկայուն աստիճանների բարձրացումը կամ իջեցումը կես տոնով, նրանց ձգողականությունը դեպի կայուն աստիճանները ավելի սրելու համար: *Մաժոր լադում* II աստիճանը կարող է բարձրացվել կամ իջեցվել, IV-ը բարձրացվել է, VI-ը իջեցվել, *մինոր լադում* IV աստիճանը կարող է բարձրացվել և իջեցվել, VII-ը բարձրացվել, II-ը՝ իջեցվել: Բացի դրանից, *մելոդիկ մինորում* կարող է բարձրացվել նաև VI-ը, *հարմոնիկ* VII-ի միջոցով *տոնիկա* անցնելու նպատակով: Տես՝ *ալտերացված ակորդներ:*



ԼԱԴԱՅԻՆ ՋԱՐՏՈՒՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. ладовая модуляция) *լադային մոդուլյացիա, զարտուղություն* դեպի համանուն տոնայնությունը, օր. *դո մաժորից դո մինոր, մի մինորից մի մաժոր* և այլն: Լ. զ. ժամանակ փոխվում է միայն *լադը*, իսկ տոնայնությունը, որը բնորոշվում է *տոնիկայով*, մնում է անփոփոխ: Տես՝ *փոփոխական լադ* (5-րդ նշանակությամբ):




ԼԱԴԱՅԻՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ (ռուս. ладовые функции) *լադ* կազմող հնչյուններից յուրաքանչյուրի դերն ու նշանակությունը *լադում*, որն արտահայտվում է կայուն և անկայուն աստիճանների (հնչյունների) փոխհարաբերությամբ, *լադի* կենտրոնի հետ ունեցած նրանցից յուրաքանչյուրի հարաբերակցությամբ: *Լադի* կենտրոնը (ամենակայուն աստիճանը) I աստիճանն է՝ *տոնիկան*, որին ձգտում են մնացած բոլոր՝ կայուն թե անկայուն աստիճանները: Յոթնաստիճան *լադերում* V աստիճանը՝ *դոմինանտան* և IV աստիճանը՝ *սուբդոմինանտան*, ինչպես և *տոնիկան* հանդիսանում են *լադի* գլխավոր աստիճանները: *Տոնիկայի* և *դոմինանտայի* միջև է III աստիճանը՝ *մեդիանտան*, իսկ *տոնիկայի* և *սուբդոմինանտայի* միջև՝ VI աստիճանը՝ վարի *մեդիանտան*, *տոնիկային* անմիջականորեն շրջապատում են երկու ձգտող՝ VII VIII և II *տոնները* (տես՝ *լադի աստիճանների անուններ*): Երաժշտության մեջ «ֆունկցիա» տերմինը առավելապես կիրառվում է *ներդաշնակագիտության (հարմոնիայի)* մեջ, որն ուսումնասիրում է *լադի* աստիճանների վրա կառուցված *ակորդների* ֆունկցիաները, նրանց փոխհարաբերությունները և տրամաբանական հաջորդականությունները:

ԼԱԴԱՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. ладотональность) սակավ գործածական տերմին, որն ընդգրկում է *լադ* և *տոնայնություն* հասկացությունները, օր. ընդունված է ասել՝ *դո մաժոր* կամ *սոլ մինոր* տոնայնություն, սակայն տոնայնություն նշող բառերն են միայն *դո*-ն և *սոլ*-ը, իսկ *մաժոր* և *մինոր* բառերը նշում են *լադը*, ուստի *դո մաժորը* կամ *սոլ մինորը* լադատոնություններն են:

ԼԱԴԻ ԱՆԿԱՅՈՒՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ (ռուս. неустойчивые ступени лада) *մաժոր* և *մինոր լադերի* II, IV, VI, VII աստիճանները, որոնք ձգտում են դեպի մոտակա կայուն աստիճանները, ըստ որում միայն VII աստիճանն է ձգտում դեպի վեր, մնացածները ձգտում են դեպի վար: *Միջնադարյան լադերի* բոլոր աստիճանները անկայուն են, բացի I և IV աստիճաններից, իսկ *հիպո-լադերում*՝ բացի I և IV աստիճաններից: Տես՝ *լադի աստիճաններ, լադի կայուն աստիճաններ, լադ:*

ԼԱԴԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ (ռուս. ступени лада) *մաժոր* և *մինոր լադերը* բաղկացած են յոթ աստիճաններից, որոնք համարակալվում են վերընթաց շարժմամբ և որոնցից յուրաքանչյուրը, ըստ *լադում* գրաված տեղի և նշանակության, ունի իր անունը (տես՝ *լադի աստիճանների անուններ*): *Դրանցից* I, III, V աստիճանները կայուն են, II, IV, VI, VII-ը՝ անկայուն, I, IV, V աստիճանները հանդիսանում են գլխավոր աստիճաններ, II, III, VI, VII-ը՝ օժանդակ աստիճաններ:

ԼԱԴԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ (ռուս. название ступеней лада) *մաժոր* և *մինոր լադերի* յոթ աստիճաններից յուրաքանչյուրի անունը, ըստ *լադում* գրաված տեղի և նշանակության: Ամենակայուն աստիճանը, դեպի որը ձգտում են մնացած բոլոր աստիճանները, հանդիսանում է I աստիճանը, որը կոչվում է *տոնիկա, տոնիկայից կվինտա* վեր ու *կվինտա* վար գտնվում են *լադի* այսպես կոչված «իշխող» աստիճանները, այն է՝ V-ը և IV-ը, որոնցից առաջինը կոչվում է *դոմինանտա*, իսկ երկրորդը՝ *սուբդոմինանտա (վարի դոմինանտա): Տոնիկայի* և



սուբդոմինանտայի մեջտեղում են III և VI աստիճանները, որոնցից III-ը կոչվում է *մեդիանտա* (երբեմն՝ *վերի մեդիանտա*), VI-ը *վարի մեդիանտա կամ սուբմեդիանտա: Տոնիկայից սեկունդա* վեր և վար գտնվում են *լադի* VII և II աստիճանները, որոնցից առաջինը կոչվում է *ձգտող տոն*, իսկ երկրորդը՝ *վերին ձգտող տոն* (կամ՝ *վարընթաց ձգտող տոն*): Տես՝ *լադի աստիճաններ:*

ԼԱԴԻ ԳԱՄՄԱ (ռուս. гамма лада) վերընթաց կամ վարընթաց հաջորդական շարժումը *լադի* աստիճաններով, սկսած առաջին աստիճանից, վերջացրած մեկ *օկտավա* վեր կամ վար գտնվող առաջին աստիճանով (ըստ որում, վերի առաջին աստիճանը ընդունված է պայմանականորեն անվանել ութերորդ աստիճան): Տես՝ *լադի ձայնաշար, գամմա:*

ԼԱԴԻ ԿԱՅՈՒՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ (ռուս. устойчивые ступени лада) *մաժոր* և *մինոր լադերի* I, III, V աստիճանները, որոնցից ամենակայունը I աստիճանն է՝ *տոնիկան*, դեպի որը ձգտում են *լադի* բոլոր մնացած աստիճանները: *Միջնադարյան լադերում* կայուն աստիճաններն են I և V-ը, իսկ *հիպո-լադերում*՝ I-ը և IV-ը: Տես՝ *լադի աստիճաններ, լադի անկայուն աստիճաններ, լադ.*

ԼԱԴԻ ՁԱՅՆԱՇԱՐ (ռուս. звукоряд лада) այս կամ այն *լադը* կազմող հնչյունների աստիճանական դասավորումը, լ. ձ. կունենա ճիշտ այնքան հնչյուն, որքանից բաղկացած է տվյալ *լադը*, օր. *մաժոր* և *մինոր լադերը* կու-

նենան յոթ հնչյունանի ձայնաշարեր, քանի որ կազմված են յոթական աստիճաններից: Տես՝ *լադի գամմա, ձայնաշար:*

ԼԱԴԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԲԱՆԱՁԵՎ (ռուս. формула построения лада) տոներով և կիսատոներով չափվող *լադի գամմայի* աստիճանների *ինտերվալային* հարաբերությունները, օր. *բնական մաժորի* լ. կ. բ. կլինի՝ տոն-տոն-կես տոն-տոն-տոն-տոն-կես տոն (1 — 1 — 1/2 — 1 — 1 — 1 — 1/2), *բնական մինորինը*՝ տոն-կես տոն-տոն-տոն-կես տոն-տոն-տոն (1 — 1/2 — 1 — 1 — 1/2 — 1 — 1):

ԼԱՅՆԱՀԱՉԱՓ ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ԳՈՐԾԻՔՆԵՐ) (ռուս. широкомензурные духовые инструменты) գլանաձև պղնձյա խրոմատիկ նվագարաններ (գործիքներ), որոնց *փողակը* հետզհետե լայնանում է *բերանոցից* դեպի *փողաբերանը*, լ. փ. ն. կազմում են երաժշտական նվագարանների ընտանիք, որոնց մեջ են մտնում *ալտը, տենորը, բարիտոնը* և *տուբան*, փողային նվագախմբի հիմնական նվագարաններն են:

ԼԱՅՆ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. широкое расположение) իմաստով նույնն է՝ *ակորդի լայն դասավորություն:*


ԼԱԲՐԻՄՈԶԱ (լատ.՝ Lacrimosa-ից՝ հեկեկացող, ողբացող, լալագին) կաթոլիկ *ռեքվիեմի* մասերից մեկը, որը սկսվում է՝ Lacrimosa բառով, Մոցարտի Ռեքվիեմի լ. ամենահոռչակավորն է:

ԼԱՆԴԶԻ, տես՝ *լանցե:*

ԼԱՆՉԻԿ, տես՝ *լանցե:*

ԼԱՆՍԵ, ԼԱՆՍԵՅԱ, տես՝ *լանցե:*

ԼԱՆՑԵ (ֆր. lancier՝ ուլան, նիզակազեն հեծելազորային) անգլիական պարահանդեսային պար, որը XIX դ. երկրորդ կեսում մեծ տարածում գտավ եվրոպայում, ֆրանսիական *կադրիլի* տարատեսակը (կոչվում է նաև՝ *կադրիլլանսյե*), բաղկացած է հինգ հատվածից, որոնցից



առաջինի, երրորդի և չորրորդի չափը 6/8 է, իսկ երկրորդինը և հինգերորդինը՝ 3/4 և 4/4: Մի շարք երկրներում ժողովրդական կենցաղ է մտել. Ռուսաստանում ստեղծվել են լ. բազմաթիվ տարբերակներ: Տես՝ *լանցե:*

ԼԱՆՑԵ (աղավաղ. *լանսյե*) *կադրիլանման* ռուսական ժողովրդական պար, չափը՝ 2/4, սովորաբար բաղկացած



է հինգ հատվածից, որոնցից յուրաքանչյուրի եղանակը տարբեր է: Լ. իր տարբեր անունները և տարբերակումներն է ունեցել՝ *լանսե, լանչիկ, լանդզի, լանսեյա, լենտեյա* և այլն:

ԼԱՇՇԱՆ, տես՝ *պալոտաշ:*

ԼԱՎ ՏԵՄՊԵՐԱՑՎԱԾ ԼԱՐՎԱԾՔ (ռուս. хорошо темперированный строй) նույնն է՝ *հավասարաչափ տեմպերացված լարվածք:*

ԼԱՐ (ռուս. струна) պողպատից, աղիից, սաթից, սինթետիկ նյութերից պատրաստված հատուկ թել, որը ձգվելով նվագարանի վրա (ջութակ, դաշնամուր, թառ և այլն), դառնում է նրա ձայնաղբյուրը: Լ. տատանումների արագությունը կախված է երկարությունից, հաստությունից և ձգվածության աստիճանից, որքան ավելի երկար, հաստ ու թույլ ձգված լինի, այնքան ավելի քիչ տատանումներ կունենա մեկ վայրկյանում, հետևաբար ավելի ցածր կհնչի, և ընդհակառակն: Լ. երկարությունն ու հաստությունը չավելացնելով, ձգվածությունը չպակասեցնելով հանդերձ, ավելի ցածր հնչյուններ ստանալու համար լ. փաթաթում են *կլապիտոնով* (մետաղյա բարակ և փափուկ թել): Տես՝ *աղի:*

ԼԱՐԱԿԱԼ (ռուս. подставка) նաև՝ *հենարան*, լարային նվագարանային փայտյա դետալ, որը սահմանափակում է լարի հնչող մասի երկարությունը և ծառայում լարի տատանումները ռեզոնատորային արկղին հասցնելու համար: *Ֆիմբալի, դաշնամուրի, պիանինոյի* տիպի բազմալար նվագարաններում լարակալը կոչվում է *ստեգ:*

ԼԱՐԱՅԻՆ (ԱՂԵՂՆԱՅԻՆ) ՆՎԱԳԱԽՈՒՄԲ (ռուս. струнный (смычковый) оркестр) նվագախումբ, որի մեջ մըտնում են սիմֆոնիկ նվագախմբի լարային նվագարանները (գործիքները)՝ առաջին և երկրորդ ջութակներ, ալտեր, թավջութակներ և կոնտրաբասեր: Երբեմն այդ կազմի մեջ է մտնում նաև ուրիշ նվագարան, օր. Չայկովսկու Սերենադ լարային նվագախմբի համար, Է. Միրզոյանի Սիմֆոնիան լարային նվագախմբի և լիտավրների համար: Տես՝ *սիմֆոնիկ նվագախումբ, կամերային նվագախումբ:*

ԼԱՐԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ռուս. струнные (музыкальные) инструменты) նվագարաններ (գործիքներ), որոնք հնչում են ձգված լարի տատանումներից, ըստ հնչեցման եղանակների, լ. ն. բաժանվում են ա) *կըսմիթային նվագարանների, աղեղնային նվագարանների, հարվածային լարային նվագարանների* և աղեղնային լարային նվագարանների: Լ. ն. կարող են ունենալ տարբեր բարձրությամբ լարված 1-ից շուրջ 90 լարեր:

ԼԱՐԱՅԻՆ ԵՌՅԱԿ (ռուս. струнное трио) լարային երեք նվագարանից բաղկացած *անսամբլ* (ամենատարածվածը՝ ջութակ, ալտ և թավջութակ, երբեմն երկու ջութակ (1-ին և 2-րդ) և ալտ):

ԼԱՐԱՅԻՆ ԿՎԱՐՏԵՏ (ռուս. струнный квартет) 1) սովորաբար *սոնատային ցիկլիկ* ձևով լարային քառյակի համար գրված երաժշտական ստեղծագործություն, կան նաև մեկմասանի լ. կ., կամերային անսամբլի ամենատարածված ձևն է, 2) երբեմն այսպես է կոչվում սիմֆոնիկ նվագախմբի լարային (աղեղնային) խումբը, երբ թավջութակներն ու կոնտրաբասերն ունենում են միևնույն *պարտիան:*

ԼԱՐԱՅԻՆ ՔԱՌՅԱԿ (ռուս. струнный квартет) երկու ջութակներից (1-ին և 2-րդ) ալտից և թավջութակից բաղկացած անսամբլ:

ԼԱՐԱՊԱՀԻՉ (ռուս. струнодержатель) լարային նվագարանների (գործիքների) այն մասը, որին ամրացնում են լարերի ներքևի ծայրերը, ջութակի ընտանիքի լ. ամուր փայտից կամ պլաստմասսայից պատրաստված առանձին մասեր են, որոնց լայնացող ծայրի մասում ամրացվում են լարերը, իսկ ցածի մասը աղելարով ամրացվում է ներքևի կողի վրա գտնվող կոճակին, այլ նվագարանների լ. պատրաստված են մետաղից և ամրացվում են ներքևի կողին կամ *հնչերեսի(դեկա)* ցածի մասին, մի շարք նվագարանների *հնչերեսներին* ամրացված *լարակալները* միաժամանակ հանդիսանում են լ.:

ԼԱՐԱՅԻՆ ՏՐԻՈ (ռուս. струнное трио) սովորաբար *սոնատային ցիկլիկ* ձևով լարային եռյակի համար գրված երաժշտական ստեղծագործություն:

ԼԱՐԳԵՏՏՈ (իտ. larghetto) *լարգոյի* փոքրացուցիչը, չափավոր դանդաղ *տեմպ (լարգոյից* քիչ արագ, մոտավորապես *անդանտեի* նման):

ԼԱՐԳՈ (իտ. largo՝ լայն, ընդարձակ) 1) երաժշտության մեջ գործարկվող հինգ հիմնական *տեմպերից* ամենադանդաղը, 2) այդ *տեմպով* գրված երաժշտական *պիեսի* կամ *ցիկլային* (բազմամաս) ստեղծագործության (*սոնատ, սիմֆոնիա, կվարտետ* և այլն) որևէ մասի անվանումը, եթե դա ուրիշ անվանում չունի:

ԼԱՐԵՐԻ ԱԿՈՐԴ (ռուս. аккорд струн) տես՝ *ակորդ* (2-րդ իմաստով):

ԼԱՐՈՂ (ռուս. настройщик) դաշնամուր, երգեհոն և նըման այլ նվագարաններ լարող և նորոգող մասնագետ-վարպետ:

ԼԱՐՎԱԾՔ, ԼԱՐՔ (ռուս. строй) երաժշտական ձայնաշարի մեջ մտնող հնչյունների հարաբերակցությունն՝ ըստ բարձրության: Եվրոպայում հնագույնը հանդիսացել է *պյութագորասյան լ.*, որը ստացվում է մաքուր *կվինտաների* (2:3) հաջորդականությամբ և դրանց տեղափոխմամբ, մեկ օկտավայի սահմաններում: XVI դ. Իտալիայում առաջարկվում է *մաքուր լ.*, որը մաքուր *կվինտաների* և օկտավաների հետ մեկտեղ օգտագործում էր նաև մաքուր մեծ *տերցիան* (4:3): Սակայն այդ երկու լ. էլ չէին ստացվում *էնհարմոնիկ* հավասար հնչյուններ որի հետևանքով անիրականալի էր դառնում ստեղնային նվագարաններ (երգեհոն, կլավիր) լարելը, օր. մաքուր լ. օկտավան պիտի բաժանվեր ոչ թե 12, այլ շուրջ 85 մասի: *Էնհարմոնիզմի* միջոցով օկտավան ավելի քիչ մասերի բաժանելու համար XVI դ. ստեղծվեցին մի շարք *անհավասարաչափ տեմպերացված լարվածքներ,* որոնք սակայն ունեին մի շարք թերություններ: XVII դ. ստեղծվում է *հավասարաչափ տեմպերացված լարվածքը,* որը սկսած XVIII դ. հաստատվել է պրոֆեսիոնալ երաժշտության մեջ, 2) լարային նվագարանների (գործիքների) բաց լարերից յուրաքանչյուրի բարձրությունը և դրանց ինտերվալային հարաբերակցությունը, 3) մի շարք փողային նվագարանների (գործիքների) այն հնչյունի տառային կամ վանկային անունը, որն ստացվում է *դո* հնչյունը վերցնելիս (տես՝ *տոնայնափոխ նվագարաններ),* 4) երաժշտական ձայնաշարի յուրաքանչյուր հնչյունի տատանումների քանակը, որն ընդունված է որոշել առաջին օկտավայի *լյա* հնչյունի համեմատությամբ: ՍՍՀՄ-ում առաջին օկտավայի լյա-ի համար սահմանված է 440 տատանում մեկ վայրկյանում:


ԼԱՐՔ, տես՝ *լարվածք:*

ԼԱՈՒԴԱ (իտ. lauda, լատ. laudo-ից՝ գովերգում եմ) հոգեվոր խրատական բնույթի, հանրածանոթ *մոտիվներով* գրված քնարական հիմն: Միաձայն և բազմաձայն լ. տարածում էին գտել Իտալիայում, XIII և XIV դարերում:

ԼԵԶՎԱԿ (ռուս. язычек) 1) մի շարք օդաճնշիչ նվագարանների (ակորդեոն, բայան, ֆիսհարմոն, շրթհարմոն և այլն) ձայնաղբյուրը հանդիսացող բարակ ու նեղ թիթեղիկներ (պողպատից, արույրից, պլաստմասսայից), որոնք տատանվում են օդի հոսանքից, 2) տես՝ *պիպիչ:*

ԼԵԶՎԱԿԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ռուս. язычковые (музыкальные) инструменты) տես՝ *փողային նվագարաններ:*

ԼԵՅՏՄՈՏԻՎ (գերմ.՝ Leitmotiv՝ ղեկավար եղանակ (մոտիվ)) սովորաբար ցայտուն և հիշվող մեղեդային կամ հարմոնիկ ոչ մեծ հատուկ դարձվածք, որը կիրառվում է օպերաներում, օրատորիաներում, կանտատներում, ծրագրային երաժշտության մեջ՝ գործող անձանց, զգացմունքների, տրամադրությունների, բնության երեվույթների, նույնիսկ վերացական գաղափարների, խորհրդանշանների բնորոշման համար, որոնք ամեն անգամ հնչում են, երբ վերոհիշյալները հանդես են գալիս կամ նրանց հիշում են, օր. Չեռնոմորի լ. Գլինկայի «Ռուսլան



և Լյուդմիլա» օպերայում, սիրո տվայտանքի լ. Վագների «Տրիստան և Իզոլդա» օպերայում և այլն: Գործող անձի, երևույթի կերպարի զարգացումը կարող է փոփոխության ենթարկել լ., սովորաբար լ. առաջին անգամ հանդես է գալիս ամբողջությամբ, իսկ հետագայում կրկնվում, ձեվափոխվում կամ մշակվում է, կամ՝ ընդհակառակն. ձեվավորվում է աստիճանաբար:

ԼԵՆԴԼԵՐ (գերմ.՝ Ländler,՝ Lände-ից՝ մարզ արևմտյան Ավստրիայում) Գերմանիայում և Ավստրիայում տարածված գյուղական դանդաղ պար, 3/4 կամ 3/8 չափով, XIX դ. սկզբից քաղաքներում կատարում էին աշխույժ *տեմպով*: Լ. այն պարերից է, որոնք հիմք են հանդիսացել *վալսի* համար, իրենց ստեղծագործություններում լ. ձևը օգտագործել են Բեթհովենը, Շուբերտը, Շումանը և ուրիշներ:

ԼԵՆԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ (ռուս. Ленинские премии) ՍՍՀՄ ժողկոմխորհի 1925 թ. հունիսի 23-ի որոշմամբ սահմանված մրցանակներ՝ առավել աչքի ընկնող գիտական աշխատանքների համար, որոնք շնորհվում էին ամեն տարի, մինչև 1935 թ. ներառյալ: 1936 թ. լ. մ. չէին շնորհվում: ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների Սովետի 1956 թ. սեպտեմբերի 8-ի որոշմամբ, 1957 թ. լ. մ. վերականգնվեցին՝ գիտության, տեխնիկայի, գրականության և արվեստի առավել աչքի ընկնող աշխատանքների համար:

ԼԵՆՏԵՅԱ, տես՝ *լանցե:*

ԼԵՆՏՈ (իտ. lento՝ դանդաղ, անշտապ) 1) շատ դանդաղ *տեմպ*, *լարգոյից* քիչ ավելի արագ, *անդանտեից*՝ ավելի դանդաղ, 2) երբեմն այդ *տեմպով* գրված երաժշտական ստեղծագործության կամ նրա որևէ մասի անվանումը, եթե ուրիշ անվանում չունի:

ԼԻԲՐԵՏՏՈ (իտ. libretto, libro-ի (գիրք) փոքրացուցիչը) 1) օպերայի, օպերետի (հազվադեպ օրատորիայի) հիմքում ընկած գրական տեքստ, որը գլխավորապես գրվում է չափածո, երբեմն նաև արձակ (մեծ մասամբ օպերետներում), լ. սյուժեները կարող են վերցված լինել գեղարվեստական գրականությունից, կարող են լինել նաև ինքնուրույն, լ. ստեղծելիս հաշվի են առնվում այն երաժշտական ձևերը, որոնցով լ. պետք է ստանա իր երաժշտական մարմնավորումը (արիաներ, անսամբլներ, խմբերգեր, սիմֆոնիկ հատվածներ, բալետային համարներ և այլն): Երբեմն կոմպոզիտորներն իրենք են ստեղծում իրենց ստեղծագործությունների լ. (Վագներ, Մուսորգսկի և ուրիշներ), 2) երաժշտական դրամատիկ ստեղծագործության (օպերա, բալետ և այլն) սյուժեի համառոտ շարադրանքն ըստ գործողությունների, որ սովորաբար զետեղվում է ներկայացման ծրագրի մեջ կամ հրատարակվում է առանձին, 3) բալետի կամ մնջախաղի գրական սցենարը:

ԼԻԳԱ (իտ. liga՝ կապ) տարբեր երկարության աղեղանման գիծ, որը ա) դրվելով երկու կամ ավելի տարբեր բարձրություններ ունեցող նոտաների վրայից կամ տակից, ցույց է տալիս, որ այդ նոտաները պիտի կատարվեն *լեգատո*, այսինքն՝ կապակցված, բ) միացնելով միևնույն բարձրության երկու (իսկ մի քանի լ. և ավելի) նոտաներ, ավե-



լացնում է առաջինի տևողությունը երկրորդի (կամ բոլոր մնացածների) տևողության չափով, գ) վոկալ ստեղծագործություններում միացնում է մեկ վանկով երգվող երկու կամ ավելի նոտաները, դ) օգտագործվում է նաև երաժշտական ֆրազների և նախադասությունների սահմանները նշանակելու համար: Տարբեր նպատակներով օգտագործվող այդ լ. միակցությունը կոչվում է *լիգատուրա:*

ԼԻԳԱՏՈՒՐԱ (լատ. ligatura՝ կապ) տես՝ *լիգա:*

ԼԻԴԵՐՇՊԻԼ (գերմ.՝ Liederspiel,՝ Lied-երգ և spiel-խաղ) երգային ներկայացում, *զինգշպիլի* մի տեսակը: Առաջին հանրածանոթ լ. Ի. Ռեյհարդտի «Սեր և հավատարմություն» է, ըստ Գյոթեի տեքստի:

ԼԻԴԻԱԿԱՆ ԼԱԴ (ռուս. лидийский лад) տես՝ *միջնադարյան լադեր:*

ԼԻԴԻԱԿԱՆ ԿՎԱՐՏԱ (ռուս. лидийская кварта) *լիդիական լադի* I և IV աստիճանների միջև կազմված *մեծացրած կվարտան:*

ԼԻՆԵԱՐԻԶՄ (լատ. linearus-ից՝ գծային) երաժշտություն հորինելու սկզբունք, որը հիմնված է մեղեդու ոչ ճիշտ, միակողմանի ըմբռնման վրա և բացատրում է դա որպես հնչյունների աբստրակտ շարժվող գիծ, որպես վերացական գծանկար, բնորոշ է կոնստրուկտիվիստների և էքսպրեսիոնիստների ստեղծագործությանը:

ԼԻՏԱՎՐՆԵՐ (հուն. poli՝ շատ և taurea՝ թմբուկ, իտ. timpani, ռուս. литавры) որոշակի բարձրություն ունեցող հարվածային նվագարան, որն իրենից ներկայացնում է 2, 3, 4 և ավելի, տարբեր մեծության պղնձե (կամ այլ մետաղից պատրաստված) կիսագնդանման կաթսաների խումբ: Լ. վերևի մասը (երեսը) պատված է հատուկ պտուտակների միջոցով ձգված թաղանթով, նվագում են երկու փայտիկներով, որոնց ծայրերին թաղիքե գնդիկներ կան: Գործածվում են երեք տարբեր մեծության և ձայնածավալի լ.՝ մեծ, միջին և փոքր: Լ. ընդհանուր ձայնածավալն է մեծ օկտավայի *ֆա*-ից մինչև փոքր օկտավայի *սոլ*-ը (F—g), ինչում են գրվածից մեկ օկտավա ցած, պարտիտուրի սկզբում նշվում է լարվածքը, որը ստեղծագործության կա-

տարման ընթացքում կարող է փոխվել (ներկայումս օգտագործվում են *ոտնային լ.*, որոնք հատուկ լծակների միջոցով անմիջապես փոխում են լարվածքը): Նվագա-



րանը հնագույն ծագում ունի, Եվրոպայում հայտնի է XV դ., օպերային սիմֆոնիկ նվագախմբի կազմի մեջ է մտել XVII դ.:

ԼԻՏՈՒՐԳԻԱԿԱՆ ԴՐԱՄԱ (ռուս. литургическая драма) միջնադարյան (IX—XIII դդ.) երաժշտական ներկայացման տեսակ, առավելապես Եվրոպայում, լ. դ. մտնում էր եկեղեցական արարողության մեջ և իրենից ներկայացնում ավետարանական դրվագների բեմականացումը:

ԼԻՐԻԿ ԲԱՍ կամ ԲԱՍ ԿԱՆՏԱՆՏԵ (իտ. basso cantante՝ երգուն բաս) քնարական բնույթի բարձր բաս, ձայնածավալն է՝ մեծ օկտավայի (*ֆա*-ից) *սոլ*-ից մինչև առաջին օկտավայի *ֆա*-ն (*սոլ*-ը) ((F)G — f¹(g¹)), զարգացած ու հնչեղ են վերին ձայնասահմանի նոտաները, երգունությամբ մոտենում է *դրամատիկ բարիտոնին*, որից տարբերվում է ավելի թանձր հնչերանգով ու ձայնի փափկությամբ, օպերաներում գլխավորապես օգտագործվում են լ. բ.: Տես՝ *բաս:*

ԼԻՐԻԿ ԲԱՐԻՏՈՆ, *բարիտոն*, որն ունի քնքուշ, այսպես կոչված «թավշյա» հնչերանգ ու բավական շարժուն է, սովորաբար ցածի նոտաները հնչում են շատ թույլ, իր բնույթով լ. բ. նման է *դրամատիկ տենորին:* Տես՝ *բարիտոն:*

ԼԻՐԻԿ ՄԵՑՑՈ ՍՈՊՐԱՆՈ, տես՝ *մեցցո սոպրանո:*

ԼԻՐԻԿ ՍՈՊՐԱՆՈ, մեղմ ու քնքուշ հնչող, քնարական բնույթի թեթև *սոպրանո*, չափազանց արտահայտիչ՝ երգային հատվածներում, որը քիչ ավելի պակաս շարժուն է *կոլորատուրային սոպրանոյից*, բայց ավելի հընչեղ է, լիքը և զրնգուն, ձայնածավալն է՝ առաջին օկտավայի (*սի*-ից) *դո*-ից մինչև երրորդ օկտավայի *դո*-ն ((h)c — c³): Տես՝ *կոլորատուրային սոպրանո:*

ԼԻՐԻԿ ՏԵՆՈՐ (իտ. tenore di grazia) նուրբ ու թեթև հնչող, բավական շարժուն *տենոր*, ձայնածավալն է փոքր օկտավայի *դո*-ից մինչև երկրորդ օկտավայի *դո*-ն (c — c²): Տես՝ *տենոր:*

ԼԻՐԻԿՈ-ԴՐԱՄԱՏԻԿ ՍՈՊՐԱՆՈ, ձայն, որն իր մեջ միավորում է թե *լիրիկ սոպրանոյի*, թե *դրամատիկ սոպրանոյի* բնորոշ գծերը:

ԼԻՐԻԿՈ-ԴՐԱՄԱՏԻԿ ՏԵՆՈՐ, *լիրիկ* և *դրամատիկ տենորների* միջին տեղը գրավող *տենոր*, որն ունի այդ երկուսի բնորոշ գծերը: Տես՝ *լիրիկ տենոր, դրամատիկ տենոր:*

ԼԻՐԻԿՈ-ԿՈԼՈՐԱՏՈՒՐԱՅԻՆ ՍՈՊՐԱՆՈ, ձայն, որն իր մեջ միավորում է թե *լիրիկ սոպրանոյին*, թե *կոլորատուրային սոպրանոյին* բնորոշ գծեր:

ԼԻՐՈՒ, կարելական *պիպիչավոր* փողային նվագարան:


ԼՅԱ (la) ժամանակակից երաժշտական ձայնաշարի յոթ հիմնական հնչյուններից վեցերորդի վանկային անվանումը (տես՝ *սոլմիզացիա*), տառային նշանակումն է՝ A կամ a:

ԼՅԱՎՈՆԻԽԱ, բելոռուսական ուրախ, կրակոտ, դինամիկ երգ-պար, 2/4 չափով հիմնական շարժումը զույգերի պտույտի վրա կառուցված լինելու պատճառով կոչվում



է նաև *կրուտուխա:* Յուրաքանչյուր երաժշտական նախադասությունը բաղկացած է երեք տակտից, նախադասությունների վերջն ընդգծվում է ոտքերի թեթևակի դոփյունով:

ԼՅՈՒՏՆՅԱ (իտ. liuto, արաբ. al ud, լեհ. lutnia) *ալ ուդ*-ից, արդի, այդ թվում և հայկական *ուդի* նախատիպը հանդիսացող կսմիթային հնագույն նվագարան, ունի արևելյան ծագում (Հնդկաստան, Իրան, Արաբիա, Միջին Ասիա, Կովկաս), եղել են տարբեր քանակի լարեր ունեցող (4—24) և տարբեր լարվածքի լ., ըստ որում լարվածքը փոփոխվել է նաև ըստ կատարվող ստեղծագործության, գոյություն են ունեցել փաթաթովի *մատնաշեմերով (փարդա)* և առանց դրանց լ.: Մուտք է գործել Իսպանիա, որտեղից էլ հետագայում տարածվել եվրոպական երկրներում, ուր լ. նվագելու արվեստն իր գագաթնակետին հասավ XV—XVII դդ., այդ ժամանակա-



շրջանում լ. համար ստեղծվեցին բազմաթիվ ստեղծագործություններ, որոնք գրի էին առնվում *տաբուլատուրաների* միջոցով: Լ. օգտագործվում էր որպես մենանվագային, անսամբլային և նվագակցող նվագարան, հետագայում ստեղծվեցին լ. բասային տարատեսակները՝

տեորբան և կիտարոն, աստիճանաբար իր տեղը զիջեց *կիթառին:* Ադրիական եվրոպական լ. ունի 6 միակի լար և լարվում է վեցլարանի *կիթառի* նման:

ԼՅՈՖՏՊԱՈՒԶԱ (գերմ.՝ Luftpause, բառացի՝ օդային պաուզա) ոչ մեծ, հազիվ նշմարելի դադար երաժշտական ստեղծագործության կատարման ընթացքում, որն օգտագործվում է երաժշտական նոր նախադասության կամ միջադեպի առավել ցայտուն ընդգծման համար: Նոտանեռում լ. սովորաբար չի նշանակվում (երբեմն՝ ստորակետի ձևով), կախված է կատարողից:

ԼՈԿՐԻԱԿԱՆ ԼԱԴ (ռուս. Локрийский лад) տես՝ *միջնադարյան լադեր:*

ԼՈՆԳԱ, տես՝ *մենդուրալ երաժշտություն:*

ԼՍՈՂՈՒԹՅՈՒՆ, տես՝ *երաժշտական լսողություն:*

ԼՐԻՎ ԿԱԴԱՆՆԵՐ (ռուս. полные кадансы) իմաստով նույնն է՝ *բարդ կադանսներ:*

ԼՐԻՎ ՄԱԺՈՐ (ռուս. полный мажор) *մաժորի* երեք տարատեսակների (բնական, հարմոնիկ, մելոդիկ) միավորումը, երկու ձևի VI և VII աստիճաններով իննձայնանի *լադ:*




ԼՐԻՎ ՄԻՆՈՐ (ռուս. полный минор) *մինորի* երեք տարատեսակների (բնական, հարմոնիկ, մելոդիկ) միավորումը, երկու ձևի VI և VII աստիճաններով իննձայնանի *լադ:*



ԼՐԻՎ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ԳՈՐԾԻՔՆԵՐ) (ռուս. полные (музыкальные) инструменты) պղնձյա փողային նվագարաններ (գործիքներ), որոնցով կարելի է տատանել փողի մեջ գտնվող օդի սյունն իր ամբողջ երկարությամբ, դրա հետևանքով հնարավոր է դառնում հնչեցնել *բնական ձայնաշարը*, սկսած առաջին *մասնակի տոնից*, օն. *տենորային տրոմբոնը*, որի բնական ձայնաշարն է՝ G_1—f^2 (կոնտրօկտավայի *սոլ*-ից մինչև երկրորդ օկտավայի ֆա-ն), B_1 և E (կոնտրօկտավայի *սի բեմոլ*-ի և մեծ օկտավայի *մի*-ի) մեջ ընկած ձայների բացթողումով, բացի կոնտրօկտավայի *սի*-ից (H_1), որը լրացվում է *կվարտվենտիլի* օգնությամբ: Տես՝ *ոչ լրիվ նվագարաններ, փողային նվագարաններ:*

ԼՈՒԾՈՒՄ (ռուս. разрешение) 1) *լադի* անկայուն աստիճանի անցումը կայուն աստիճանի, որի հետևանքով անհանգիստ դրությունը փոխվում է հանգիստ դրության, տես՝ *լադային ձգողականություն*, 2) հարմոնիկ *դիսոնանսող ինտերվալների* անցումը *կոնսոնանսող ինտերվալների*, ինչպես նաև անկայուն կոնսոնանսների անցումը կայուն կոնսոնանսների, տես՝ *ինտերվալների լուծում*, 3) դիսոնանսող ակորդների անցումը կոնսոնանսող ակորդների, ինչպես նաև անկայուն կոնսոնանսող ակորդների անցումը կայուն կոնսոնանսող ակորդի (այլ կերպ՝ *մաժորում* II, III, IV, V, VI, *մինորում* III, IV, V, VI աստիճանների վրա կառուցված կոնսոնանսող եռահնչյունների անցումը տոնիկայի *եռահնչյուն*), տես՝ *դոմինանտ սեպտակորդի և նրա շրջվածքների լուծումներ, փոքրացրած եռահնչյուն, մեծացրած եռահնչյուն, փոքրացրած սեպտակորդ, փոքր ձգտող սեպտակորդ:*

ԼՈՒՐ, 1) հովվական եղջյուրի ընտանիքի փողային նվագարան, տարածված Սկանդինավիայում, 2) հնագույն ճողային նվագարան, բրգաձև պղնձյա խողովակով և ձագարաձև *բերանոցով*, ունի *բնական ձայնաշար:*



ԼՈՒՐԵ (ֆր. loure՝ պարկապզուկ) 1) ֆրանսիական պարկապզուկի տիպի հին նվագարան, 2) նորմանդական գյուղացիների շրջանում տարածված ժողովրդական պար, անվանումը ստացել է նվագարանից, որը սովորաբար նվագակցում էր պարին:

Խ

ԽԱԲԱՆԵՐԱ (իսպ. habanera, Habana-ից՝ Հավաննա) իսպանական ժողովրդական պարերգ, ստեղծվել ու ձևավորվել է Կուբա կղզում, ապա լայն տարածում գտել Իսպանիայում, չափը՝ 2/4, տեմպը՝ դանդաղ: Բնորոշ ռիթմական պատկեր ունի՝ շեշտն ընկնում է յուրաքանչյուր տակտի վերջին ութերորդականի վրա, խ. ուղեկցվում է երգով, շարժումները մեծ մասամբ իմպրովիզացիոն բնույթ են կրում:

ԽԱԶ, գիծ, գծանիշ *(նևմա)*, տես՝ *հայկական խազային նոտագրություն:*

ԽԱՂ, 1) գյուղական աշուղական երգ կամ աշխարհիկ բովանդակության գեղջկական երգ, որը սովորաբար մեներգվում է, 2) *ձայնագարդ*, ձայնի կլկլոց, 3) հայկական ձայնագրության հիմնական ձ ա յ ն ա շ ա ր ի (*դո*-ից սկսվող *միքսոլիդիական լադ*) երրորդ *(վերնախաղ)* և վեցերորդ *(ներքնախաղ)* հնչյունների անվանակոչման արմատը:

ԽԱՌԸ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. смешанное расположение) իմաստով նույնն է՝ *ակորդի խառը դասավորություն:*

ԽԱՌԸ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ (ռուս. смешанный хор) տես՝ *երգչախումբ:*

ԽԱՌԸ ՉԱՓԵՐ (ռուս. смешанные размеры) տես՝ *չափ:*

ԽԵՄ (ռուս. обечайка) տես՝ *շրջանակ:*

ԽԻՍՏ ՈՃ (ռուս. строгий стиль) 1) մինչ XVII դ. արևմտաեվրոպական պրոֆեսիոնալ պոլիֆոնիկ եկեղեցական խըմբերգային (*ա կապելլա*) երաժշտությունը, որն իր կատարյալ զարգացմանը հասավ XV — XVI դդ. (վերածնության շրջան): Խ. ո. երաժշտությունը բնորոշվում է նրանով, որ գրվում էր *դիատոնիկ եկեղեցական լադերում*, խուսափում էր հարմոնիկ-ֆունկցիոնալ հարաբերություններից, չնախապատրաստված *դիսոնանսներից* ու *խրոմատիզմից*, շարժվում էր համաչափ (հավասար տևողություններով), սահուն, պետք է ունենար ռ ի թ մ ի կ և ի ն տ ո ն ց ի ո ն տեսակետից պարզ մեղեդի և ընդհանուր ինչողականության հավասարակշռվածություն և բարեհնչյունություն: Դրան հասնելու համար մշակված էին մի շարք կանոններ, որոնք խստորեն պահպանվում էին խ. ո. շրջանի կոմպոզիտորների կողմից: Խ. ո. կարկառուն ներկայացուցիչներն են Պալեստրինան և Օռլանդո դի Լասսոն, տես՝ *ազատ ոճ*, 2) *պոլիֆոնիայի (կոնտրապունկտի)* ուսումնական դասընթացի առաջին բաժինը: Չնայած ներկայումս խ. ո. կանոնները կարող են թվալ բռնազբոսիկ, խորթ ու անհեթեթ, սակայն դրանք չափավորում և որոշ շրջանակի մեջ են դնում երաժշտի ստեղծագործական ֆանտազիան, մինչ նա ձեռք կբերի բազմաձայնության անհրաժեշտ գիտելիքներ և ունակություններ, որից հետո դյուրությամբ և գիտակցված կտիրապետի ազատ ոճին:

ԽԻՍ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, իմաստով նույնն է՝ *ակորդի խիտ դասավորություն:*

ԽԼԱՐԱՐ (գերմ. Dämpfer) *դեմպֆեր*, մեխանիկական հարմարանք մի շարք բազմալար նվագարանների (գործիքների) լարերի տատանումները դադարեցնելու (խլացնելու) համար: Դաշնամուրի յուրաքանչյուր հնչյուն, մինչև երրորդ օկտավայի *մի* նոտան ներառյալ, ունի իր առանձին թաղիքապատ խ., որը հատուկ սարքի միջոցով ամուր հպվում է լարերին, արգելակելով տատանումը: Ստեղնը սեղմելիս խ. հեռանում է լարից, և լարը հնչում է, ստեղնը թողնելիս, խ. նորից հպվում է լարին: Դաշնամուրի յջ ոտնակը սեղմելիս բոլոր խ. միանգամից հեռանում են լարերից և դրանք շարունակում են հնչել նաև ստեղնը բաց թողնելուց հետո: Տավղի խ. մեկ ընդհանուր թաղիքապատ շերտաձողիկ է, որը միանգամից հըպվում կամ հեռանում է լարերից:

ԽՄԲԱԿԱՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. хоровое пение) վոկալ երաժշտության կոլեկտիվ կատարում, լինում է միաձայն (*ունիսոն*) և բազմաձայն, առանց գործիքային նվագակցության *(ա կապելլա)* և գործիքային նվագակցությամբ:

ԽՄԲԱՊԱՐ (ռուս. хоровод) կլոր պար, շուրջպար, ժողովրդական պարարվեստի հնագույն ձևը: Խ. մեծ խումբ մարդկանց շարժումները զուգակցվում են դրամատիկ գործողության, երգի, պարի հետ, բնորոշ է շատ երկրների ժողովուրդների, առավելապես տարածված է սլավոնական ժողովուրդների մշակութային կենցաղում:

ԽՄԲԱՊԱՐԻ ՆԱԽԵՐԳԻՉ, ՆԱԽԵՐԳՈՒՀԻ (ռուս. хороводник, хороводница) խմբապարում երգն սկսող տղամարդ կամ կին:

ԽՄԲԱՎԱՐ (ռուս. хормейстер) երգչախմբի ղեկավար (երգչախմբի դիրիժոր):

ԽՄԲԱՎՈՐՈՒՄ (ռուս. группировка) տես՝ *նոտաների խմբավորում:*

ԽՄԲԵՐԳ, երգչախմբի համար գրված երաժշտական ստեղծագործություն, տարբերում են երկու տեսակի խ.՝ գործիքային նվագակցությամբ (դաշնամուր, նվագախումբ և այլն) և առանց նվագակցության (*ա կապելլա*): Խ. լինում են միաձայն, երկձայն, եռաձայն, քառաձայն, հինգ, վեց, յոթ, ութ և այլն ձայնանի:

ԽՄԲԵՐԳԻՉ, ԽՄԲԵՐԳՈՒՀԻ (ռուս. хорист, хористка) երգչախմբի երգիչ, երգչուհի:

ԽՈ, հայկական ձայնագրության հիմնական ձ ա յ ն ա շ ա ր ի *(դո* նոտայով սկսվող *միքսոլիդիական լադի)* հինգերորդ հնչյունը, լրիվ անունն է՝ *խոսրովային:*

ԽՈՍՐՈՎԱՅԻՆ, տես՝ *հայկական ձայնագրություն:*

ԽՈՏԱ (իսպ. jota) իսպանական ժողովրդական աշխույժ, դինամիկ զուգապար, 3/4 կամ 3/8 չափով: Պարն ուղեկցվում է երգով, կ ի թ ա ռ ի, մ ա ն դ ո լ ի ն ի նվա-



գով, սուր ռիթմն ուղեկցվում է *կաստանյետների* զարկերով: Խ. եղանակն իրենց ստեղծագործություններում օգտագործել են Գլինկան, Լիստը, Ռիմսկի-Կորսակովը և ուրիշներ:

ԽՈՐԱԼ (ուշ լատ. cantus choralis՝ խմբական օրհներգություն) հոգևոր օրհներգությունների ձև, որն առավելապես զարգացած է կաթոլիկ և բողոքական եկեղեցիներում: Կաթոլիկ եկեղեցում խ. երգում է երգչախումբը, լատիներեն, բողոքական եկեղեցում երգում են ժամերգությանը մասնակցող բոլոր ծխականները, մայրենի լեզվով: Տես՝ *գրիգորյան խորալ:*

ԽՈՐԱԼԱՅԻՆ ՊՐԵԼՅՈՒԴ (ռուս. хоральная прелюдия) *խորալի* նախանվագ (գլխավորապես՝ երգեհոնային), երաժշտական *պիես*, որը *կոնտրապունկտային* միջոցներով մշակման է ենթարկում որևէ *խորալի* եղանակ, խ. պ. մեծ ժառանգություն է թողել Բախը:

ԽՈՐԱԼԱՅԻՆ ՖԱՆՏԱԶԻԱ (ռուս. хоральная фантазия) որևէ *խորալի* թեմայով հորինված, ազատ ձևի նվագարանային (գործիքային) *պիես* (սովորաբար երգեհոնի համար):

ԽՈՐԴՈՖՈՆՆԵՐ (հուն. chorde՝ լար և phone՝ ձայն) երաժշտական այս նվագարանների (գործիքների) ընդհանուր անվանումը, որոնց ձայնի աղբյուրը լարն է:

ԽՈՐԵՅ (հուն. choréios) երկվանկ ոտ, առաջին վանկի շեշտումով, երաժշտության մեջ՝ շարժում տակտի ուժեղ մասից դեպի թույլ մասը:

ԽՈՐԵՈԳՐԱՖԻԱ (հուն. choréia՝ շուրջպար և grapho՝ գրում եմ) 1) սկզբնական իմաստը՝ պարի շարժումների գրառումը հատուկ նշանների միջոցով, 2) պարեր հորինելու և բալետային ներկայացումներ բեմադրելու արվեստ, 3) պարարվեստ:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ (ռուս. Народный артист Советского Союза) Խորհրդային Միության Գերագույն Սովետի նախագահության կողմից արվեստի առավել ականավոր գործիչներին (գլխավորապես հանրապետությունների ժողովրդական արտիստներին) շնորհվող պատվավոր բարձրագույն կոչում: Տես՝ *հանրապետության ժողովրդական արտիստ, արվեստի վաստակավոր գործիչ, վաստակավոր արտիստ:*


ԽԱՀՄ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ռուս. Союз композиторов СССР) Խորհրդային Միության բոլոր պրոֆեսիոնալ կոմպոզիտորներին և երաժշտագետներին միավորող հասարակական-ստեղծագործական միություն: Յուրաքանչյուր միութենական հանրապետություն ունի իր Կոմպոզիտորների միությունը, որն ընդգրկում է տվյալ հանրապետության մասնագետներին, օժանդակում նրանց ստեղծագործական աճին, պրոֆեսիոնալ վարպետության զարգացմանը, գաղափարական-քաղաքական դաստիարակմանը, ղեկավարում է նրանց ստեղծագործական և հասարակական գործունեությունը: Կոմպոզիտորների հանրապետական միությունները ստեղծվել են 1933 թ., համաձայն ՀամԿ(բ)Պ ԿԿ 1932 թ. ապրիլի 23-ի «Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» որոշման: Իսկ 1939 թ. ՍՍՌՄ ժողկոմխորհի որոշմամբ ստեղծվել է ՍՍՌՄ Կոմպոզիտորների միությունը, որը միավորում է բոլոր հանրապետությունների կոմպոզիտորների միություններն ու ղեկավարում նրանց գործունեությունը (մինչև 1957 թ. կոչվում էր ՍՍՌՄ սովետական կոմպոզիտորների միություն): ԽԱՀՄ Կոմպոզիտորների միության կից գոյություն ունի *ԽԱՀՄ Երաժշտական ֆոնդ*, որն իր բաժանմունքներն ունի բոլոր հանրապետություններում:

ԽԱՀՄ ՄԵԾ ԹԱՏՐՈՆ (ռուս. Большой театр СССР) Երաժշտական թատերական մշակույթի խոշորագույն կենտրոն, համաշխարհային օպերային և բալետային արվեստի հեղինակավոր օջախ, հայտնի իր լավագույն ավանդություններով և խոշոր նվաճումներով: Գտնվում է Մոսկվայում, տասնամյակներ շարունակ ԽԱՀՄ Մ. թ. կոլեկտիվը մեծ հաջողությամբ հանդես է գալիս աշխարհի ամենատարբեր երկրներում:

ԽՐՈՄԱՏԻԶՄ (հուն. chrómatos-ից՝ գույն, ներկ) *լադի* հիմնական յոթ հնչյունների այնպիսի կիսատոնային իջեցումը կամ բարձրացումը, որի ժամանակ հնչյունների հիմնական անունները մնում են անփոփոխ: Խ. կատարվում է *խրոմատիկ նշանների* միջոցով: Տես՝ *խրոմատիկ կիսատոն:*


ԽՐՈՄԱՏԻԶՄԻ ՆՇԱՆՆԵՐ (ռուս. знаки хроматизма) նույնն է՝ խրոմատիկ նշաններ:

ԽՐՈՄԱՏԻԿ ԱՄԲՈՂՋ ՏՈՆ (ռուս. хроматический целый тон) ամբողջ տոն, որը կազմվում է՝ ա) հիմնական



աստիճանի և նրա կրկնակի բարձրացման կամ իջեցման միջև, բ) մեկ հիմնական աստիճանից երկու ածանցյալ աստիճանների միջև, գ) մեկընդմեջ տեղադրված աստիճանների միջև:

ԽՐՈՄԱՏԻԿ ԳԱՄՄԱ (ռուս. хроматическая гамма) *խրոմատիկ* ու *դիատոնիկ* կիսատոներով կառուցված *գամմա: Մաժոր* և *մինոր* խ. գ. ունեն իրենց ուղղագրությունը, որ հիմնված է տոնայնությունների առաջին աստիճանի ազգակցության վրա (խ. գ. օգտագործվում են նիայն *ալտերացիայի* այն նշանները, որոնք կան առաջին աստիճանի ազգակից տոնայնություններում): Սակայն երաժշտական պրակտիկայում այդ ուղղագրությունը երբեմն խախտվում է և խ. գ. թե *մաժորում*, թե *մինորում* գրի են առնվում ավելի ճիշտ ձևով՝ վերընթաց շարժման ժամանակ ամբողջ տոն կազմող բոլոր աստիճանները խրոմատիկ կես տոնով բարձ-



րացվում են, իսկ վարընթաց շարժման ժամանակ՝ ամբողջ տոն կազմող բոլոր աստիճանները խրոմատիկ կես տոնով իջեցվում են: Տես՝ *խրոմատիկ կիսատոն, դիատոնիկ կիսատոն, դիատոնիկ գամմա:*

ԽՐՈՄԱՏԻԿ ՋԱՐՏՈՒՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. хроматическая модуляция) *զարտուղություն*, որը կատարվում է խրոմատիկ քայլի միջոցով: Զարտուղող խրոմատիկ քայլը ստացվում է միջակա և զարտուղող ակորդների միացման ժամանակ, ըստ որում վերցվում է այնպիսի *միջակա ակորդ*, որից հետո եկող նոր տոնայնության *դոմինանտային ակորդի* հնչյուններից գոնե մեկը լինի *միջակա ակորդի* խրոմատիկորեն փոփոխված հնչյունը: Խ. զ. նիշտ անկատար է, քանի որ զարտուղման ժամանակ ցույց է տրվում տոնայնության նոր *դոմինանտան* (առանց *սուբդոմինանտայի*): Տես՝ *զարտուղություն, դիատոնիկ զարտուղություն, էնհարմոնիկ զարտուղություն:*

ԽՐՈՄԱՏԻԿ ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐ (ռուս. хроматические интервалы) բոլոր *մեծացրած, փոքրացրած, կրկնակի մեծացրած, կրկնակի փոքրացրած ինտերվալները*, որոնք գոյանում են *դիատոնիկ ինտերվալների* հիմքը կամ գագաթը (կամ հիմքն ու գագաթը միաժամանակ) խրոմատիկ կիսատոնով կամ ամբողջ տոնով բարձրացնելու կամ իջեցնելու հետևանքով: Բացառություն են կազմում *մեծացրած կվարտան և փոքրացրած կվինտան*, որոնք *դիատոնիկ ինտերվալներ* են:

ԽՐՈՄԱՏԻԿ ԿԻՍԱՏՈՆ, տես՝ *կիսատոն:*

ԽՐՈՄԱՏԻԿ ՀԱՐՄՈՆԻԿԱ (ռուս. хроматическая гармоника) տես՝ *բայան:*

ԽՐՈՄԱՏԻԿ ՁԱՅՆԱՇԱՐ (ռուս. хроматический звукоряд) ձայնաշար, որը կառուցված է *խրոմատիկ և դիատոնիկ կիսատոներով:* Տես՝ *խրոմատիկ գամմա:*

ԽՐՈՄԱՏԻԿ ՄՈԴՈՒԼՅԱՑԻԱ, տես՝ *խրոմատիկ զարտուղություն:*


ԽՐՈՄԱՏԻԿ ՆՇԱՆՆԵՐ (ռուս. хроматические знаки) նույնն է՝ *ալտերացիայի նշաններ:*

ԽՐՈՄԿԱ (տես՝ *հարմոն):*

ԽՓԱՍԱՐՔ (գերմ. Klappe, ռուս. клапан) մի շարք փողային նվագարանների (գործիքների) ձայնանցքերը փակելու և բացելու հատուկ հարմարանք: Ֆլեյտայի, կլարնետի և նման փողային նվագարանների խ. իրենցից ներկայացնում են մետաղյա փոքրիկ լծակներ, որոնց մի ծայրում ամրացված են ձայնանցքերը փակող բարձիկավոր խփիկներ, օգտագործվում են XVI դարից: Երգեհոնների և լեզվակային օդաճնշական ստեղնային նվագարանների (ֆիսհարմոնիա, ակորդեոն, բայան և այլն) օդատար խողովակները փակող խ. ունեն մի կողմից եղջերվենով պատված շերտաձողիկների ձև:

Ծ

ԾՆԾՂԱՆԵՐ (ռուս. тарелки) նվագախմբի հարվածային նվագարան (գործիք), պղնձյա երկու սկավառակ, շուրջ 400 մմ տրամագծով, որոնց մեջտեղում կաշվե



փոկեր են ամրացված, միմյանց հարվածելիս ծ. երկարատև, զնգուն ձայն են արձակում: Հաճախ օգտագործվում է և մեկ ծնծղա, այս դեպքում ձայնն արտաբերվում է հարվածի միջոցով:

ԾՐԱԳԻՐ (հուն. programma հայտարարություն) 1) համերգի, էստրադային ներկայացման, ռադիոհաղորդման համարների հաջորդական ցանկ, որտեղ նշված են կատարողները, ինչպես նաև գործող անձանց, դերակատարների և ներկայացման ստեղծմանը մասնակցած անձանց անունները, 2) գործիքային երաժշտական ստեղծագործության թեմայի գրական շարադրումը (տես՝ *ծրագրային երաժշտություն*), ավելի լայն իմաստով՝ ծրագրային երաժշտական ստեղծագործության սյուժեն:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. программная музыка) գործիքային երաժշտություն, գրված որոշակի թեմայով, որը սովորաբար շարադրված է հատուկ ծրագրում և ստեղծագործության վերնագրում: Իր հիմքում ծրագիրը կարող է լինել ինքնուրույն, կամ որևէ գրական ստեղծագործության սյուժեով:

ԾՈՒՆԿ (ռուս. колено) 1) սովորաբար պարային ձև ունեցող (վալս, մազուրկա և այլն) երաժշտական պիեսի ավարտված մասը, որը մեծ մասամբ բաղկացած է 8 կամ 16 տակտանի պարբերությունից, 2) պարի այն ֆիգուրը, որն աչքի է ընկնում իր առանձնահատկությամբ:

Կ


ԿԱԲԱԼԵՏՏԱ (իտ. cabaletta) նույնն է՝ *կավատինետտա:*

ԿԱԴԱՆՍ (ֆր. cadence) երաժշտական միտքը եզրափակող *հարմոնիկ* կամ *մելոդիկ* դարձվածք, տեսակները որոշվում են կ. կազմող *ֆունկցիաների* քանակով և դրանց հաջորդականությամբ: Երկու *ֆունկցիաներից* բաղկացած կ. կոչվում են *պարզ* (կամ՝ *թերի*), բոլոր երեք *ֆունկցիաներից* բաղկացած կ. կոչվում են *բարդ* (կամ՝ *լրիվ*): Եթե կ. ընդհատվում է *դոմինանտայի* կամ *սուբդոմինանտայի* վրա, կոչվում է *ընդհատված:* Տոնիկայով



եզրափակվող կ. կոչվում են *կայուն կ.*, իսկ այլ աստիճաններով եզրափակվողները՝ *անկայուն կ.:* Կայուն կ. լինում են *կատարյալ*, երբ կ. եզրափակող *տոնիկան* գտնվում է ա) տ ա կ տ ի ուժեղ մասում, բ) հիմնական տ ո ն ի մելոդիկ դրությամբ և գ) երբ կ. կազմող ա կ ո ր դ ն ե ր ն ունեն *ֆունկցիոնալ բաս*, և *անկատար*, երբ նշված պայմաններից թեկուզ մեկը խախտվում է: Տես՝ *փոլուգիական կադանսներ:*

ԿԱԴԱՆՍԱՅԻՆ ԿՎԱՐՏԱԵՔՍԱԿՈՐԴ (ռուս. каданcовый квартсекстаккорд) արտաքուստ I♯ -ին նմանվող *կվարտսեքստակորդ*, որն օգտագործվում է թե մ ի ջ ն ա կ ա դ ա ն ս ում, թե եզրափակիչ կ ա դ ա ն ս ում, նշանակվում է՝ $К_4^6$ կամ $К_6^4$: Դրվում է տ ա կ տ ի ուժեղ կամ համեմատական ուժեղ մասում՝ *սուբդոմինանտայի* (երբեմն՝ *տոնիկայի*) և *դոմինանտայի* միջև: Կ. կ. երկֆունկցիոնալ ա կ ո ր դ է, բասում՝ *դոմինանտա*, իսկ վերևի ձայներում՝ *տոնիկա* (TD): Կ. կ. տեղի է ունենում երկու ֆունկցիաների բախում, որը կ. կ. դարձնում է ամենալարված ա կ ո ր դ ն ե ր ի ց մեկը: Կ. կ. ձգտում



է դեպի *դոմինանտա* (ուր և լուծվում է) ճիշտ այնպես, ինչպես *դոմինանտան* ձգտում է դեպի *տոնիկա*, մեծ չափով օժանդակում է *տոնիկայի* ավելի ուժեղ, կատարյալ հաստատմանը: Տես՝ *կադանս:*

ԿԱԴԵՆՑԻԱ (իտ. cadenza՝ վերջ, վերջավորություն) 1) նույնն է՝ *կադանս*, 2) վիրտուոզ բնույթի ազատ *իմպրովիզացիա*, որը, սովորաբար, առանց նվագակցության կատարում է մենակատարը անսամբլային որևէ խոշոր ստեղծագործության (գլխավորապես՝ կոնցերտների) մասերից մեկի (1-ին կամ 3-րդ) եզրափակիչ *կադենցիայի* ժամանակ: Սկզբում դա կոչվում էր *կադենցային ֆերմատա* (կանգառ), որը սովորաբար դրվում էր *կադանսային կվարտսեքստակորդի* վրա: Այդ *ֆերմատայի* ժամանակ մենակատարը, ելնելով կատարվող ստեղծագործության բնույթից և օգտագործելով նրա թեմատիկ մոտիվները, հանպատրաստից ստեղծագործելով, կատարում էր երաժշտական մի ընդարձակ հատված, ի ցույց դնելով իր կատարողական վարպետությունն ու փայլը: Առաջինը Բեթհովենը սկսեց գրել իր կոնցերտների կ., դարձնելով դա ստեղծագործության օրգանական և անբաժանելի մասը:

ԿԱԴՐԻԼ (իսպ. cuadrilla, ֆր. quadrille, ռուս. кадриль) չորս հոգուց կազմված խումբ, եվրոպական մի շարք ժողովուրդների մեջ տարածված, հիմնականում շարժուն պար, մասնակցում են երկուական զույգից կազմված մեկ կամ մի քանի խումբ: Սկզբնական շրջանում բաղկացած էր հինգ հատվածից, հետագայում ավելացավ *գալոպը*, որպես վեցերորդ (ամենաարագ) մաս: Մասերից յուրաքանչյուրն ունի իր անունը, առանձին եղանակը և չափը՝ 3/8, 6/8 և 2/4: XVII դ. վերջից մինչև XIX դ. վերջը կ. սալոնային ամենահարգի պարերից էր, հետագայում պահպանելով իր ձևը, կ. երաժշտությունը և պարը ձեռք բերեցին այս կամ այն մարզի, շրջանի ազգային առանձնահատկությունները՝ ռուսական, ուկրաինական, լիտվական, ուրալյան, վոլգյան և այլ կ.:

ԿԱԶԱՉՈԿ (ռուս. казачок) ուկրաինական և ռուսական ժողովրդական ուրախ պար, աշխույժ, հետզհետե արագացող տ ե մ պ ո վ, 2/4 չափով, XVIII դ. երկրորդ կե-



սից օգտագործվեց նաև ֆրանսիական բալետում: XIX դ. սկզբից կ. Ռուսաստանում սկսեցին կատարել որպես պարահանդեսային պար:

ԿԱԿՈՖՈՆԻԿ (հուն. kakos՝ գեշ, այլանդակ և phone՝ ձայն, հնչյուն) անախորժ ձայների աններդաշնակ խառնաշփոթ, անդուլ հնչյունների ժխոր, ոչ երաժշտական ձայների քաոսային միակցում:

ԿԱՄԲԻԱՏԱ (իտ. cambiare-ից՝ փոխել, փոփոխել) տ ա կ տ ի թույլ մասում հանդես եկող ոչ-ա կ ո ր դ ա յ ի ն հնչյուն, որը գտնվում է *ակորդային տոնից սեկունդա* վեր (հազվադեպ՝ վար) և առանց լուծվելու անցնում է հաջորդ ա կ ո ր դ ի *ակորդային տոներից* մեկի մեջ, շարժվելով *տերցիայով*, *կվարտայով* կամ *կվինտայով*, սովորաբար դեպի վար: Տես՝ *ֆիգուրացիա:*



ԿԱՄԵՐԱՅԻՆ ԱՆՍԱՄԲԼ (ռուս. камерный ансамбль) երաժիշտ-կատարողների ոչ մեծ ա ն ս ա մ բ լ ն ե ր, որոնք կատարում են կամերային երաժշտություն՝ վոկալ կամ գործիքային դուետ, եռյակ, քառյակ, հնգյակ և այլն, որոնցից առավել տարածված են *լարային քառյակը* և *դաշնամուրային եռյակը*, երբեմն կ. ա. են կոչվում փոքր կազմ ունեցող, գլխավորապես լարային նվագախմբերը, որոնք կատարում են կամերային բնույթի երաժշտական ստեղծագործություններ, 2) բոլոր այն երաժշտական ստեղծագործությունները, որոնք գրված են վերը նշված կ. ա. համար, այդ թվում նաև որևէ գործիքի և դաշնամուրի համար գրված *սոնատները*:

ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. камерная музыка) նվագարանային (գործիքային) կամ վոկալ երաժշտություն՝ կատարողների ոչ մեծ կազմի համար: Կ. ե. են պատկանում անսամբլները (զուգանվագներ, զուգերգեր, տրիոն, կվարտետը), ինչպես նաև երաժշտական մենակատար պիեսները՝ *սոնատը*, *ֆուգան*, *նոկտյուրնը* և այլն: Երաժշտական արվեստի կարևոր և ծավալեղ ճյուղերից մեկն է: 2) XVI դ. Իտալիայում, ի տարբերություն եկեղեցականի, այդպես էր կոչվում աշխարհիկ վոկալ, հետագայում նաև գործիքային երաժշտությունը:

ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. камерное пение) ի տարբերություն օպերային, վիրտուոզ-համերգային և էստրադային երգեցողության, կ. ե. իրենից ներկայացնում է երգեցողության այնպիսի ձև (եղանակ), որը կապված է սովորաբար դաշնամուրի նվագակցությամբ կատարվող ռոմանսի, երգի կամ վոկալ անսամբլի գեղարվեստական մեկնաբանման հետ: Կ. ե. բնորոշ գծերն են նուրբ, մանրամասված ֆրազավորումը և նրբերանգումը, որը զուգակցվում է դերասանական խաղի որոշ տարրերի հետ՝ ձեռքերի շարժուձև, դիմախաղ և այլն: Տես՝ *երգեցողություն*:

ԿԱՄԵՐԱՅԻՆ ԿԱՆՏԱՏ (ռուս. камерная кантата) մեծ մասամբ քնարական բնույթի *կանտատ*, որում բացակայում է երգչախումբը և նվագախմբին հաճախ փոխարինում է դաշնամուրը:

ԿԱՄԵՐԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ (ռուս. камерный оркестр) 12 — 20 երաժիշտներից բաղկացած փոքրիկ նվագախումբ, որի մեջ մտնում են լարային (աղեղնային) նվաեարանների (գործիքների) բոլոր տեսակները (ջութակներ, ալտեր, թավջութակներ, կոնտրաբասեր) մի քանի փողային (ֆլեյտա, հոբոյ և այլն) երբեմն մեկ կամ մի քանի հնագույն նվագարաններ (կլավիչեմբալո և այլն): Կ. ն. ստեղծվել է մեր դարի քսանական թ., կապված՝ մի կողմից սիմֆոնիկ նվագախմբի կազմը պակասեցնելու դիտավորության (տես՝ *սիմֆոնիկ նվագախումբ*), մյուս կողմից՝ այն մեծ հետաքրքրության հետ, որն առաջացել էր այդ տարիներին անսամբլային ու նվագախմբային հնագույն երաժշտության նկատմամբ: Ներկայումս կ. ն. հիմնականում կատարում են հնագույն շրջանի կոմպոզիտորների ստեղծագործությունները նվագախմբի այն կազմով, ինչ կազմի համար գրված են եղել, նաև արդիական ստեղծագործություններ:

ԿԱՄԵՐԱՅԻՆ ՍՈՆԱՏ (ռուս. камерная соната) տես՝ *տրիո-սոնատ*:

ԿԱՄԵՐԱՅԻՆ ՕՊԵՐԱ (ռուս. камерная опера) սովորաբար մեկ գործողությամբ փոքրածավալ օպերա, սակավաթիվ գործող անձանցով, նվագախմբի փոքր կազմով, երբեմն՝ փոքր երգչախմբով, օր. Ռիմսկի-Կորսակովի «Մոցարտը և Սալյերին», Բրիտտենի «Պտուտակի դարձը» և այլն:

ԿԱՄԵՐՏՈՆ (գերմ. Kammerton, Kammer՝ սենյակ և Ton՝ հնչյուն) որոշակի բարձրության այն *տոնը* (հնչյունը, որով լարում են նվագարանները (գործիքները), նույնն է՝ *ձայնոց*:

ԿԱՄՊԱՆԵԼԼԱ (իտ. campanella՝ զանգակ) երաժշտական *պիես*, որը նմանեցվում է զանգակների ղողանջին: Պագանինին այդպես է անվանել իր ջութակի *սի մինոր* կոնցերտի *ռոնդոն*, որը դաշնամուրի համար վերամշակել է Ֆ. Լիստը:

ԿԱՄՊԱՆԵԼԼԻ (իտ. campanelli) նույնն է՝ *զանգակներ*:

ԿԱՅԹ, 1) տես՝ պար (1-ին իմաստով), 2) թռչկոտել, ցատկոտել, ոստոստել, 3) երգի ժամանակ ձեռքերով ծափ տալը:

ԿԱՆԱՐԻ (ֆր. canarie, իտ. canario) XVI — XVII դդ. Ֆրանսիայում և Իտալիայում տարածված պարահանդեսային և բեմական պար: երաժշտական չափը Ֆրանսիայում երկմաս էր, Իտալիայում՝ եռամաս, արագ տեմպով: Լյուլլիի և Պերսելի օպերաներում, ինչպես նաև չ յ ու ի տ ն ե ր ու մ կ. դանդաղ ժ ի գ ա յ ի բնույթ էր կրում, 6/8 չափով:

ԿԱՆԱՆՑ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ (ռուս. женский хор) բացառապես կանանցից կազմված երգչախումբ: Տես՝ *երգչախումբ*:

ԿԱՆԽԻԿ (ռուս. предъём) հաջորդ *ակորդի* այն *ակորդային տոնը* (կամ՝ *տոնները*) որը հանդես է գալիս ժամանակից շուտ, դեռ նախորդ *ակորդի* հնչման ժամանակ և նրա համար դառնում ոչ *ակորդային* հնչյուն: Կ. կի-


րառվում է տակտի թույլ մասերում: Կ. օգտագործվում են նաև ոչ ակորդային հնչյունների՝ հապաղման, նրա լուծման, անցողիկի, օժանդակի համար: Կ. կարող են հանդես գալ նաև երկու, երեք



և չորս ձայներում միաժամանակ (վերջին դեպքում ստացվում է միևնույն ակորդի կրկնումը տակտի թույլ և ապա հաջորդ ուժեղ մասերում, և որովհետև այդ ակորդում բացակայում է *դիսոնանսող* ոչ ակորդային հնչյունը (կամ՝ հնչյունները) ակորդը զըրկվում է յուրահատուկ լարվածությունից): Այս դեպքում կ. արտահայտչականությունը դրսևորվում է նրա յուրօրինակ ռիթմիկ գծապատկերով: Տես՝ *Ֆիգուրացիա:*


ԿԱՆԿԱՆ (ֆր. cancan) ֆրանսիական պարահանդեսային արագ պար, 2/4 չափով, առաջացել է Փարիզում, XIX դ. 30-ական թ.: Ֆրանսիական դասական օպերետում լայնորեն օգտագործել է Օֆֆենբախը, երգիծական կերպարներ բնութագրելու համար: Հետագայում կ. անցավ էստրադա:

ԿԱՆԿԼԵՍ (լիտվ. kánklės) *գուսլիանման* ժողովրդական նվագարան Լիտվայում, հին կ. ունեին 4—5, հետագայում



մինչև 12 դիատոնիկ լարված լարեր: Ունի մեղմ, դուրեկան հնչում, ներկայումս կատարելագործված կ. են 22 լարանոց *պրիման*, 20 լարանոց *բասը* և 12—13 լարանոց *կոնտրաբասը:* Հիմնականում ժողովրդական այդ նվագարանն օգտագործվում է նաև անսամբլներում և նվագախմբերում:

ԿԱՆՆԵԼ (kannel, ռուս. каннель) *գուսլիանման* ժողովրդական նվագարան Էստոնիայում: Մինչև XIX դ. կե-



սը կ. ուներ 5—7 լար, հետո նվագարանը զգալի փոփոխությունների ենթարկվեց և լարերի թիվը հասավ 30-ի, ստեղծվեց նաև *ակորդային կ., մաժոր* և *մինոր* եռահնչյուններով: Կ. օգտագործվում է որպես մենակատարային, նվագակցող և անսամբլային նվագարան, ստեղծված են *խրոմատիկ* կ. տարատեսակներ՝ *սոպրանո, տենոր* և *բաս:*

ԿԱՆՈՆ (հուն. canŏn՝ սահմանված չափ, կանոն) երաժշտական ձև, երբ բոլոր ձայները տարբեր ժամանակ սկսելով, կատարում են միևնույն մեղեդին, յուրաքանչյուր թաջորդ ձայն մուտք է գործում նախքան նախորդ ձայնում մեղեդու ավարտվելը: Մուտք գործող մեղեդին կարող է սկսվել նույն նոտայից (կ. *պրիմայով*) կամ ուրիշ նոտայից (կ. *կվինտայով, օկտավայով* և այլն): Գոյություն ունի նաև կրկնակի կանոն, որում տարբեր ձայներում միաժամանակ կ. ձևով անցկացվում է երկու տարբեր մեղեդի: Տես՝ *անվերջ կանոն, հանելուկային կանոն, ռիսպոստա, պրոպոստա:*


ԿԱՆՏ (լատ. cantus-ից՝ երգ, երգեցողություն) երգչախմբային անսամբլով կամ երգչախմբով *ա կապելլա կատարվող հնագույն երգի մի տեսակ, որի բովանդակությունը սկզբնական շրջանում հոգևոր օրհներգությունն էր: Հետագայում տարբեր երկրներում տարբեր զարգացում և բովանդակություն է ստանում:* XVII դ. տարածվեց Ուկրաինայում և Ռուսաստանում, որտեղ ձեռք բերեց աշխարհիկ բնույթ և դարձավ կենցաղային երաժշտության ամենասիրված ձևերից մեկը: Ստեղծվեցին տարբեր բովանդակության բազմաթիվ կ. (սիրային-քնարական, կատակային, շնորհավորական, հովվերգական, կենաց և այլն), որոնց համար բնորոշ էր *կուպլետային ձևը, հստակ ու պարզորոշ ռիթմը և եռաձայնությունը, հետագայում բարդանալով կ. ձեռք բերեց ռոմանսի* բնույթ:

ԿԱՆՏԱԲԻԼԵ (իտ. cantabile՝ երգուն) 1) երաժշտության կատարման երգային բնույթը, 2) երբեմն այսպես են անվանում երգային բնույթի երաժշտական ստեղծագործությունը կամ նրա մասերից մեկը, օր. Չայկովսկու Անդանտե կանտաբիլեն 1-ին լարային կվարտետից:

ԿԱՆՏԱՏԱ (իտ. cantata, լատ. canto-ից՝ երգում եմ) որոշակի ձև չունեցող, համերգային խոշոր երաժշտական ստեղծագործություն, գրված մեներգիչների, երգչախմբի և նվագախմբի համար, որի բովանդակությունը սովորաբար որևէ փաստի, անհատի, քաղաքի, պատմական իրադարձության գովերգումն ու փառաբանումն է (օր. Բախի «Սուրճի» կ., Շոստակովիչի «Արևն է շողում մեր հայրենիքին» կ. և այլն): Կ. սովորաբար բաղկացած են մի քանի մասերից, որոնց մեջ մտնում են մեներգային, խմբերգային, անսամբլային և նվագախմբային համարներ, լինում են նաև մեկ մասանի կ.: Կառուցվածքով կ. մոտ է *օրատորիային* և *օպերային*, որոնցից տարբերվում

է ավելի փոքր ծավալով և սովորաբար, որոշակի և զարգացած սյուժեի բացակայությամբ: Ըստ բովանդակության, կ. լինում են հոգևոր և աշխարհիկ, իսկ ինում (XVI դ. վերջին և XVII դ. սկզբին) այդպես էին կոչվում ընդհանրապես բոլոր վոկալ ստեղծագործությունները, ի տարբերություն *սոնատի:*

ԿԱՆՏԵԼԵ (kantele) *գուսլիանման* ժողովրդական կսմիթային նվագարան Կարելիայում և Ֆինլանդիայում, հին կ. ունեն 5—13 *դիատոնիկ* լարված լարեր, հետագայում



նվագարանը կատարելագործվել է, ստեղծվել են դրա թինգ տարատեսակները՝ *պիկոլո, պրիմա, ալտ, բաս* և *կոնտրաբաս,* որոնք ունեն երկու օկտավանոց *խրոմատիկ* ձայնածավալ և օգտագործվում են տարբեր անսամբլներում և նվագախմբերում:

ԿԱՆՏԻԼԵՆԱ (լատ. cantilena՝ երգ, երգեցողություն) 1) երգուն մեղեդի, սահուն, կապակցված, մեղեդային երաժշտություն, 2) երաժշիության մելոդիկ կատարում, 3) շատ ճկուն, երգուն, դուրեկան ձայն, 4) քնարական-վիպերգային ժողովրդական երգ, որը միջին դարերում տարածված էր արևմտաեվրոպական երկրներում, հատկապես Ֆրանսիայում:

ԿԱՆՏՈՐ (լատ. cantor՝ երգիչ) 1) կաթոլիկ եկեղեցում՝ խմբերգիչ, 2) հրեական սինագոգում՝ գլխավոր երգիչ, որը հաճախ ղեկավարում է երգչախումբը, 3) բողոքական եկեղեցում՝ երգեհոնահար, երգեցողության ուսուցիչ-խմբավար, երբեմն նաև հոգևոր երաժշտություն հորինող կոմպոզիտոր:

ԿԱՆՏՈՒՍ ՊԼԱՆՈՒՍ (լատ. cantus planus՝ հավասար, համաչափ, սահուն մեղեդի) նույնն է՝ *գրիգորյան խորալ:*

ԿԱՆՏՈՒՍ ՖԻՐՄՈՒՍ (լատ. cantus firmus՝ հաստատուն, անխախտ եղանակ (մեղեդի)) *պոլիֆոնիկ* ստեղծագործության այն գլխավոր եղանակը (մեղեդին), որը մի շարք անգամներ անփոփոխ կրկնվելով (սովորաբար՝ *տենորում*) հիմք է ծառայում *կոնտրապունկտող* մի քանի ձայների ստեղծմանը: Կաթոլիկ հոգևոր երաժշտության մեջ, որպես կ. Ֆ., վերցվում է *կանտուս պլանուսը:* Տես՝ *գրիգորյան խորալ:*

ԿԱՆՑՈՆԱ (իտ. canzone, ֆրանս. chanson՝ երգ) XV—XVI դդ. իրենց բնույթով ժողովրդական երգին մոտեցող, գլխավորապես աշխարհիկ բովանդակության, պարզ բազմաձայն երգեր, XVI դ. վերջից կ. գրվում էին նաև առանձին նվագարանների (գործիքների) համար: Հետագայում, *հոմոֆոն* երաժշտության զարգացման ընթացքում կ. դարձավ երգելու կամ նվագելու համար գրված միաձայն ստեղծագործություն, որն ուղեկցվում էր նվագակցությամբ: Ներկայումս այդպես են կոչվում երգային լայնաշունչ բնույթի «երգ առանց խոսքի» բնույթի երաժշտական ստեղծագործությունները:

ԿԱՆՑՈՆԵՏՏԱ (իտ. canzonetta՝ փոքրիկ երգ) փոքրիկ *կանցոնա:*

ԿԱՉԱ (իտ. caccia՝ որս, հետապնդում) աշխարհիկ բովանդակության վոկալ պիեսների ժանր, նմանողական բնույթի՝ որսորդական, ժանրային, կենցաղային տեսարաններ պատկերող: Կ. սովորաբար երկձայն էր, նվագակցությամբ, ծրագրային երաժշտության տարրեր մտցրեց վերածնության ժամանակաշրջանի երաժշտության մեջ:

ԿԱՉՈՒՉԱ (իսպ. cachucha) իսպանական, ավելի ստույգ՝ անդալուսյան աշխույժ պար, 3/8 չափով, պարելիս ռիթմն



ընդգծվում է կրունկների դոփյունով և *կաստանյետների* զարկով, XIX դ. որպես պարահանդեսային և բեմական պար տարածվեց Եվրոպայում:

ԿԱՊԱԳԻՏ (ռուս. связка) տես *նոտաներ,*

ԿԱՊԵԼԼԱ (իտ. cappella՝ մատուռ) երգչախումբ, նվագողների խումբ, կամ՝ այդ երկուսը միասին: Միջին դարերում կ. էր կոչվում կաթոլիկ եկեղեցու այն մասը, ուր տեղավորվում էր երգչախումբը, հետագայում կ. անվանեցին բուն երգչախումբը: Միջնադարում կ. երգում էին յոանց նվագակցության, այստեղից էլ *ա կապելլա* արտահայտությունը, որ նշանակում է *կապելլայի* նման, այլ կերպ՝ միայն երգչախումբ, առանց նվագակցության: Հետագայում կ. դարձան երգչախմբի և նվագախմբի միավորումներ կամ միայն նվագախմբեր (օր. Ուկրաինայի բանդուրահարների կ.):

ԿԱՊԵԼՄԱՅՍՏԵՐ (գերմ. Kappellmeister, ռուս. капельмейстер) հնում՝ երգչախմբային կամ նվագախմբային *կապելլայի* ղեկավար, հետագայում՝ թատերական և սիմֆոնիկ նվագախմբերի ղեկավար, ավելի ուշ՝ փողային նվագախմբի ղեկավար:

ԿԱՊՈՂ ՊԱՐՏԻԱ (ռուս. связующая партия) *սոնատային ալեգրոյի էքսպոզիցիայի գլխավոր պարտիայից* հետո եկող այն հատվածը, որը կոչված է նախապատրաստել *օժանդակ պարտիայի* հանդես գալը և սահուն կերպով գլխավոր տոնայնությունից անցնելը օժանդակ տոնայնության, որում շարադրվում է *օժանդակ պարտիան:* Կ. պ. հաճախ օգտագործվում է *գլխավոր պարտիայի,* երբեմն

օժանդակ պարտիայի թեմատիկ նյութերը, կամ բոլորովին նոր նյութ: Եթե *գլխավոր պարտիային* կցված են լինում մեկ կամ մի քանի լրացումներ, դրանք համարվում են կ. պ. սկիզբը: Կ. պ. երբեմն բացակայում է *էքսպոզիցիայում* (հազվադեպ):


ԿԱՊՐԻՉՉՈ (իտ. capriccio՝ քմայք, քմահաճույք) 1) վիրտուոզ բնույթի փայլուն և տպավորիչ ստեղծագործություն, որը հաճախ հարուստ է տրամադրությունների անսպասելի, քմահաճ փոփոխություններով: Ձևն ազատ է՝ *ռիչերկարի, ֆանտազիայի* տիպի, կ. են գրվում առանձին նվագարանների (գործիքների) և տարբեր նվագախմբերի համար, 2) վիրտուոզ բնույթի *էտյուդ*, օր. Պագանինիի 24 կ. գրված ջութակի համար (առանց նվագակցության), որոնք Շումանը և Լիստը մշակել են դաշնամուրի համար և անվանել *էտյուդներ:*

ԿԱՊՐԻՍ (ֆր. caprice՝ քմայք, քմահաճույք) նույնն է՝ *կապրիչչո:*

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ (ռուս. построение) երաժշտության յուրաքանչյուր հատվածը, որը մյուսից բաժանված է *ցեզուրայով*, ըստ որում, մի քանի հատվածներ միանալով կազմում են ավելի մեծ կ., օր. *մոտիվ, ֆրազ, նախադասություն, պարբերություն:* Սակայն տերմինը հաճախ օգտագործվում է այն դեպքերում, երբ հատվածն իր անավարտությամբ ու հարմոնիկ անկայունությամբ չի նմանվում վերը նշված և ոչ մի սովորական ձևի: Այդպիսի կ. հաճախ լինում են ստեղծագործության՝ ներածական, կապակցող, միջին և մշակման բաժիններում:

ԿԱՍԱՑԻԱ (գերմ. Kassation) բացօթյա կատարման համար գրված երաժշտական բազմամաս զվարճալի ստեղծագործություն՝ անսամբլի համար, որն իր կառուցվածքով և բնույթով մոտ է *դիվերտիսմենտին* և *սերենադին:* Տարածված էր XVIII դ. Ավստրիայում և Գերմանիայում:

ԿԱՍՏԱՆՅԵՏՆԵՐ (իտ. castagnetti, ռուս. кастаньеты) որոշակի բարձրություն չունեցող հարվածային նվագարան, պատրաստված ամուր փայտից, ոսկրից, եղջյուրից կամ պլաստմասսայից, իրենից ներկայացնում է տափակ եզրերով խեցենման երկու տախտակ, որոնք երիզով ոչ ամուր միացված են միմյանց: Նվագողը մատների շարժումով մեկը մյուսին է զարկում ափի մեջ տեղավոր-



ված նվագարանը, արտաբերելով հնչեղ կտկտոց, բարդ և քմահաճ ռիթմեր: Տարածված է Իսպանիայում, Լատինական Ամերիկայում և Արևելյան Իտալիայում:

ԿԱՎԱՏԻՆԱ (իտ. cavatina, cavata) 1) սովորաբար քնարական-պատմողական բնույթի մեներգ օպերայում, որը տարբերվում է *արիայից* իր ավելի փոքր ծավալով, երգանման պարզ կառուցվածքով, տեխնիկապես դժվարին դարձվածքների բացակայությամբ և սկզբից մինչև վերջ նույն տեմպի պահպանումով, 2) գործիքային փոքրիկ, երգուն պիես: Տես՝ *կավատինետա, կաբալետա:*

ԿԱՎԱՏԻՆԵՏԱ (իտ. cavatinetta) *կավատինայի* փոքր տարբերակը:

ԿԱՏԱՐՅԱԼ ԶԱՐՏՈՒՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. совершенная модуляция) տես՝ *զարտուղություն:*

ԿԱՏԱՐՅԱԼ ԿԱԴԱՆՍ (ռուս. совершенный каданс) տես՝ *կադանս:*

ԿԱՏԱՐՅԱԼ ԿԱԴԵՆՑԻԱ (ռուս. совершенная каденция) նույնն է՝ *կատարյալ կադանս:*

ԿԱՏԱՐՈՂ (ռուս. исполнитель) բոլոր այն երաժիշտները, որոնք հանդիսանում են երաժշտական ստեղծագործության կամ առանձին *պարտիաների* (ձայների) կատարողները նվագախմբում, երգչախմբում, անսամբլում, օպերայում և այլն: Կ. երաժիշտներ են երգիչները, նվագողները, դիրիժորները, խմբավարները, կ. կարող են լինել պրոֆեսիոնալ երաժիշտներ և սիրողներ: Տես՝ *կատարում:*

ԿԱՏԱՐՈՒՄ (ռուս. исполнение) երաժշտության վերարտադրումը ձայնով, նվագարանով (գործիքով) այսինքն՝ երգեցողությունը, նվագը, կամ այդ երկուսը միասին: Երաժշտական արվեստը չի կարող գոյություն ունենալ առանց *միջնորդի*, ում դերն է նոտագրված կամ հիշողության մեջ եղած երաժշտությունը հնչեցնել և լսելի դարձնել ունկնդիրներին: Կ. կարող է լինել նաև կոմպոզիտորը, գուսանը, աշուղը, ինքնուս ստեղծագործողը: Կատարողը կոչված է վերարտադրել այն բովանդակությունը, մտքերը, ապրումները, հոգեվիճակը, տրամադրությունը, որն արտահայտել է հեղինակը: Յուրաքանչյուր կատարող երաժշտության բովանդակությունը դրսևորում է յուրահատուկ ձևով, ուրույն *ներբերանգներով*, որն էլ հենց մեկնաբանությունն է: Նա ղեկավարվում է կոմպոզիտորների նշումներով կամ ելնում ստեղծագործության բովանդակությունից ու բնույթից: Կ. գեղարվեստական արտահայտչամիջոցներն են *ագոգիկան, դինամիկան, արտիկուլյացիան, ֆրազավորումը, նրբերանգումը:* Բարձր գեղարվեստական կ. համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան երաժշտականություն, կուլտուրա, ձայնին կամ նվագարանին տիրապետելու վարպետություն: Տարբերում են կ. հետևյալ ձևերը՝ մենակատարում, անսամբլային կ., երգչախմբային կ., նվագախմբային կ.: Տես՝ կատարող, մեկնաբանում:

ԿԱՐԻՅՈՆ (ֆր. carillon՝ զանգերի հաջորդական զանգահարում) 1) որոշակի բարձրության հարվածային նվագարան, որն իրենից ներկայացնում է ոչ մեծ զանգերի հավաքածու: Դեռևս IX դ. կ. կատարում էին ոչ բարդ

մեղեդիներ, իսկ XV դ. մեծ տարածում ուներ կ. արևմտաեվրոպական երկրներում: Հետագայում կ. սկսեցին գործածել որպես մեխանիկական նվագարան՝ աշտարակային և պատի ժամացույցների մեջ:

ԿԱՓՈՒՅՐ (գերմ. Klappe, ռուս. клапан) փողային նվագարանների (գործիքների) *ձայնանցքերը* բացելու և փակելու հարմարանք, գործածության մեջ է մտել XVI դ.:

ԿԱՔԱՎ, 1) ընդհանրապես՝ *պար*՝ (1-ին իմաստով), 2) մենապար, կենտպար:

ԿԱՔԱՎԵՐԳՈՒԹՅՈՒՆ, պարերգություն, պարն ուղեկցող երգեցողություն:

ԿԱՔԱՎԻՉ, պարող, պարուհի:

ԿԵԿՈՒՈՒԿ (անգլ. cakewolk՝ բառացի «կարկանդակի ետևից», կարկանդակը՝ ընծա, լավ կատարման համար) 2/4 չափով, *սինկոպացված* ռիթմով պարահանդեսային

Կ. Դեբյուսի, Իրտվիլակ-տիկնիկի կեկ-ուոկը «Մանկական անկյուն»-ից



և բեմական պար, ստեղծված ամերիկյան նեգրերի կողմից XIX դ. վերջում, որը մեծ տարածում գտավ հետագայում Եվրոպայում, մի շարք կոմպոզիտորներ կ. օգտագործեցին իրենց ստեղծագործություններում:

ԿԵՂԾԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. детонация) *դետոնացիա*, իմաստով նույնն է՝ *կեղծաձայնում:*

ԿԵՂԾԱՁԱՅՆՈՒՄ (ռուս. детонирование) *դետոնացում*, մեղեդի կազմող հնչյունների ոչ ճշգրիտ, կեղծ ձայն կատարումը, վերարտադրությունը: Կ. հիմնական պատճառներն են վատ երաժշտական լսողությունը, թույլ *ամբուշյուրը*, ձայնի ոչ ճիշտ դրվածքը:

ԿԵՂԾԱՆՈՒՆ (ռուս. псевдоним) հորինովի անուն, որով հանդես է գալիս արվեստագետը, գրողը և այլն:

ԿԵՂԾ ԿԱԴԱՆՍ (ռուս. ложный каданс) նույնն է՝ *ընդհատված կադանս:*

ԿԵՆՏՊԱՐ, տես՝ *մենապար:*

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. бытовая музыка) կենցաղում տարածված երաժշտություն, որը կատարվում և հնչում է համերգային դահլիճներից, թատրոնից, բեմից դուրս, լայն իմաստով ընդգրկում է գրեթե ամբողջ ժողովրդական երաժշտությունը՝ աշխատանքային, քաղաքային, օրորոցային և այլ երգերը: Կ. ե. մեջ են մտնում նաև հանրամատչելի մասսայական, էստրադային երգերը, պարային երաժշտության մասսայական ձևերը, ներկայումս՝ թեթև երաժշտության զգալի հատվածը:

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՌՈՄԱՆՍ (ռուս. бытовой романс) կենցաղում, տնային պայմաններում, ընկերական շրջանակներում կատարվող *ռոմանս*, որը մեծ տարածում գտավ Ռուսաստանում XIX դ. (Տիտով, Գուրիլյով, Վառլամով և ուրիշներ): Ժամանակակից մասսայական շատ երգեր կարելի է դասել կ. ռ. շարքին:

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՕՊԵՐԱ (ռուս. бытовая опера) ընդունված է այսպես անվանել գյուղի և քաղաքի կենցաղը պատկերող ստեղծագործությունները, ի տարբերություն պատմական, հերոսական կամ հեքիաթային թեմաներով գրված *օպերաների:*

ԿԵՍ ՆՈՏԱ (ռուս. половинная нота) նոտա, որով նշանակում են ձայնի կես տևողությունը: Տես՝ *տևողությունների զույգ բաժանում:*


ԿԵՍ ՊԱՈՒԶԱ (ռուս. половинная пауза) լռության, դադարի նշան, որով նշանակվում է կես տևողություն ունեցող *պաուզան:*

ԿԵՏ (ռուս. точка) տևողության հավելյալ նշան, որի տևողությունը հավասար է այն նոտայի կամ *պաուզայի* տևողության կեսին, որից հետո դրված է կ.: Կիրառվում է նաև *կրկնակետը* (երկու կետ) և *եռակետը* (երեք կետ): Երկրորդ կ. տևողությունը հավասար է առաջին կ. տևողության կեսին, իսկ երրորդինը՝ երկրորդի կեսին:

ԿԵՐՊԱՐ (ԵՐԱԺՇՏԱԿԱՆ), իրականության երևույթների և մարդու հոգեկան աշխարհի ընդհանրացված վերարտադրումը երաժշտության մեջ: Գեղարվեստական-հնչունային կերպարը սկզբում բացահայտվում է երաժշտական թեմայի մեջ, շարադրման, ապա զարգացման, լրացման, տարբերակման պրոցեսում:

ԿՋԱԿԱԿԱԼ, ջութակի և ալտի հնչերեսի ցածի մասում, նվագողի կզակի հենման տեղում ամրացվող հատուկ հարմարանք, որը հնարավորություն է տալիս կզակով պահել նվագարանը:

ԿԻԹԱՌ (իտ. chitarra, ռուս. гитара) ութանման հընչարկղով լարային կսմիթային նվագարան, որը գոյություն ունի դեռևս VIII — IX դդ.: XVI դ. վերջից և հատկապես XVII դ. մեծ տարածում գտավ Եվրոպայում, ապա Ամերիկայի իսպանախոս երկրներում: Իսպանիայում և Լատինական Ամերիկայում կ. համարվում է ազգային



նվագարան: Գոյություն ունեն կ. մի քանի տարատեսակներ, որոնցից ամենատարածվածն են *վեցլարանի* (այսպես կոչված՝ իսպանական) և *յոթլարանի (այսպես կոչ-*

ված՝ գնչուական, ռուսական) կ.: Նոտագրվում է իրական հնչումից մեկ օկտավա վեր, օգտագործվում է որպես մենակատարային, անսամբլային և նվագախմբային նվագարան: Ներկայումս մեծ տարածում ունեն էլեկտրական և էլեկտրոնային կ. մի շարք տեսակներ: Տես՝ հավայան կիթառ:

ԿԻԼՖԼՅՈՒԳԵԼ (գերմ. Kielflügel) տես՝ *կլավեսին:*

ԿԻՍԱԼՈՒՐՋ ՕՊԵՐԱ, նույնն է՝ *օպերա սեմիսերիա:*

ԿԻՍԱԿԱԴԱՆՍ (ռուս. полукаданс) տես՝ *կադանս:*

ԿԻՍԱԿԱԴԵՆՑԻԱ (ռուս. половинная каденция) նույնն է՝ *կիսակադանս:*

ԿԻՍԱՏՈՆ (ռուս. полутон) *հավասարաչափ տեմպերացված լարվածքում ինտերվալների* որակական (տոնային) մեծության չափման ամենափոքր միավորը, հավասար է տարբեր բարձրություններ ունեցող ամենամոտիկ հընչյունների հարաբերությանը (մաքուր օկտավայի 1/12 մասին): Տարբերում են՝ ա) *դիատոնիկ կ.,* որն ստացվում է երկու տարբեր անուններ կրող հնչյունների (երկու տարբեր աստիճանների միջև) հավասար է փոքր *սեկունդայի* և բ) *խրոմատիկ կ.,* որն ստացվում է միևնույն հնչյունը (միևնույն աստիճանը) կես տոն բարձրացնելու կամ իջեցնելու հետևանքով (հավասար է մեծացրած *պրիմայի*):

ԿԻՍԱՓՈՔՐԱՑՎԱԾ ՍԵՊՏԱԿՈՐԴ (ռուս. полууменьшенный септаккорд) *սեպտակորդ,* որի կառուցվածքն է՝ հիմքից հաշված *փոքրացրած եռահնչյուն* և *փոքր սեպտիմա: Տես՝ սեպտակորդ, մեծացրած սեպտակորդ:*

ԿԻՏԱՌՈՆԵ (իտ. citarrone) բասային *լյուտնյա,* որը տարածված էր գլխավորապես Իտալիայում, XVI — XVII դդ., ուներ 14 և ավելի լարեր, 1600 — 2000 մմ երկարություն: Տես՝ *տեորբա:*


ԿԻՐԻԵ (հուն. «Kýrie eléison»-ից՝ «Տեր, ողորմեա մեզ») *մեսսայի* առաջին մասը:

ԿԼԱՊԻՏՈՆ (ռուս. капитель) բարակ և փափուկ մետաղյա (արծաթ, պղինձ և այլն) թել, որով փաթաթում են որոշ նվագարանների (գործիքների) լարերը:

ԿԼԱՍԻՑԻԶՄ (գերմ. Klassizismus, լատ. classicus-ից՝ օրինակելի) ուղղություն եվրոպական երկրների արվեստում և մշակույթի ասպարեզում XVII դ. առաջին կեսից մինչև XIX դ. կեսը: Կ. ներկայացուցիչները ձգտում էին անտիկ, դասական նմուշների օրինակով ստեղծել վեհ, իդեալական, բանականությամբ հստակ և ավարտուն գործեր: Կատարյալ ձևով կ. հանդես եկավ ֆրանսիական գրականության մեջ և արվեստում (այդ թվում երաժշտական թատրոնում): Կ. խոշորագույն ներկայացուցիչը օպերային արվեստում, XVII դ., Գլյուքն էր: Գաղափարական ուղղվածությամբ և ոճական առանձնահատկություններով կ. մոտ են նաև վիեննական դասական դպրոցների ներկայացուցիչների ստեղծագործությունները:

ԿԼԱՎԵՍԻՆ (ֆրանս. clavesin, լատ. clavicymbalum) իտալերեն կոչվում է *կլավիչեմբալո,* կամ կրճատ *չեմբալո,* գերմաներեն՝ *կիլֆլյուգել,* անգլերեն՝ *հարպսիկորդ, դաշնամուրին նախորդող ստեղնա-կամիթային նվագարան, ստեղծված* XV դ. սկզբին: Մեծ տարածում ուներ եվրոպական բոլոր երկրներում, արտաքուստ հիշեցնում է փոքր դաշնամուր, ունի երկու (հազվադեպ՝ երեք) ձեռքի ստեղնաշար (*մանուալ*) և *ռեգիստրային* փոխարկիչներ՝ վերին ձայնասահմանն ընդլայնելու, օկտավային կրկնապատկումներ և հնչերանգային փոփոխություններ կատարելու համար: *Կլավիկորդի* համեմատությամբ կ. ունի ավելի ուժգին ձայն, որը սակայն միապաղաղ է, քանի որ անկախ ստեղնին հարվածելու ուժից, միշտ հնչում է նույն ուժգնությամբ: Փոքրածավալ, հիմնականում քառանկյունի ձև ունեցող կ. որոնց ձայնածավալը ամենաշատը չորս *օկտավա* է, Ֆրանսիայում կոչվում են *սպինետ* կամ *էպինետ,* Անգլիայում՝ *վիրջինել:* Ուղղահայաց շրջանակի վրա ձգված լարերով կ. կոչվում է *կլավիցիտերիում,* օգտագործվում է որպես մենակատարային, անսամբլային ու նվագախմբային նվագարան: Դ. սկզբից կ. իր տեղը զիջեց դաշնամուրին, ներկայումս հաճախ օգտագործվում է հնագույն ստեղծագործություններ կատարելիս:

ԿԼԱՎԻԿՈՐԴ (ուշ լատ. clavichordum) նաև՝ *կլավիխորդ,* սովորաբար երկարավուն, քառանկյունի ձև ունեցող ստեղնային նվագարան, նախորդել է դաշնամուրին, հայտնի է XV դարից: 1725 թ. ստեղծվեց «ազատ» կոչվող կ., որի յուրաքանչյուր լարը միայն մեկ բարձրության



հնչյուն էր արձակում: Կատարելագործված կ. ունեն մոտ հինգ օկտավանոց ձայնաշար: *Կլավեսինի* համեմատությամբ, կ. ձայնն ավելի թույլ է և շուտ մարող, սակայն ունի *վիբրատոյի* և *պորտամենտոյի,* նաև՝ տարբեր ուժգնությամբ հնչեցնելու հնարավորություններ, դ. սկզբից իր տեղը զիջեց դաշնամուրին:

ԿԼԱՎԻՇԵՄԲԱԼՈ (իտ. clavichembalo) տես՝ *կլավեսին:*


ԿԼԱՎԻՐ (գերմ. Klavier) 1) ստեղնալարային նվագարանների *(կլավիկորդ, կլավեսին, դաշնամուր)* ընդհանուր անվանումը, 2) տես՝ *կլավիրաուսցուգ:*

ԿԼԱՎԻՐԱՈՒՍՑՈՒԳ (գերմ. Klavierauszug) կրճատ՝ *կլավիր,* վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործության *պարտիտուրը*՝ վերածված ձայնի և դաշնամուրի կամ միայն դաշնա-

մուրի համար: Մեզ մոտ ավելի գործածական է *կլավիր* անունը:

ԿԼԱՎԻՑԻՄԲԱԼ (ուշ լատ. clavicimbalum) նույնն է՝ *կլավիչեմբալո:*

ԿԼԱՎԻՑԻՏԵՐԻՈՒՄ (ուշ լատ. clavicitherium) *կլավեսին*, որի լարերը ձգված են ուղղաձիգ շրջանակի վրա:




ԿԼԱՐՆԵՏ (իտ. clarinetto) փայտյա փողային նվագարան (գործիք), որի գլանաձև փողը, սկսած միջին մասից դեպի փողաբերան, շատ քիչ լայնանում է: 1876 թ. կ. սկսում են պատրաստել հայտնի Ֆլեյտահար Բյոմի հնարած խ փ ա ս ա ր ք ե ր ի սիստեմով, նվագախմբում օգտագործվում է 1755 թ.: Փայտյա փողային բոլոր նվագարաններից ամենամեծ ձ ա յ ն ա ծ ա վ ա լ ն ունի (շուրջ 4 օկտավա), տոնայնափոխ նվագարան է: Կան չորս տարատեսակներ՝ ա) հիմնականը սովորական կ. է, կոչվում է *մեծ կ.* կամ *սոպրանային կ.*, ունի *սի բեմոլ* (in B), *լյա*(in A) կամ *դո*(in C) լարվածք, բ) *փոքր կ.* կամ *պիկկոլո կ.*, *ռե* (in D) կամ *մի բեմոլ* (in Es) լարվածքով, գ)*ալտային* կամ *տենորային կ.*, այլ կերպ՝ *բասետհոռն*, *ֆա* (in F) լարվածքով, դ) *բաս կ. (սի բեմոլ* (in B) լարվածքով: *Լյա* (in A) լարվածքի բաս կ.



գործածությունից դուրս է եկել: Ֆլեյտայից հետո կ. տեխնիկապես ամենադինամիկ փայտյա փողային նվագարանն է, ձայնը շատ արտահայտիչ է, հյութալի և ջերմ, բարձր ձ ա յ ն ա ս ա հ մ ա ն ու մ՝ վճիտ, պարզ, երբեմն՝ սուր, ցածրում՝ քիչ մռայլ, թախծոտ, թավ: Նոտագրվում է ջութակի բանալիով, օգտագործվում է որպես նվագախմբային, անսամբլային և մենակատարային նվագարան: Ստեղծվել է XVII դ. վերջում, սիմֆոնիկ նվագախմբի մեջ է մտել XVIII դ. վերջից, որտեղ օգտագործվում են 2–4 կ., այդ թվում և բաս կ.:

ԿՆՏՆՏՈՑ (ռուս. медиатор, плектр) կնտկնտոց, կտտոց, հարիչ, *մեդիատոր*՝ ոսկրից, պլաստմասսայից կամ այլ նյութից պատրաստված բարակ ու նուրբ շերտ, որի միջոցով հնչեցվում են լարերը (թառ, սազ, մանդոլին, ուդ, կիթառ և այլ նվագարաններ նվագելիս): Կան կ., որոնք ամրացվում են ցուցամատերին մատանիանման հատուկ օղերի միջոցով, կան նաև այնպիսիները, որոնց մի ծայրն ունի բաց մատանու ձև, բութ մատի կամ ցուցամատի ծայրերին հագցնելու համար (քանոն և նման մի շարք այլ նվագարաններ նվագելիս):



ԿՈԲԶԱ 1) Ուկրաինայում, Մոլդավիայում, նաև՝ Ռումինիայում, մասամբ Հունգարիայում տարածված *լյուտնյայի* տարատեսակը, ունի չորս զույգ լարեր, ըստ որում զույգ լարերից մեկը աղելար է, մյուսը (որ լարվում է օ կ տ ա վ ա վեր)՝ մետաղյա: Առաջին լարը հաճախ եռակի է, նույնպես մետաղյա է և լարվում է ջղալարի հետ *ունիսոն:* Նվագում են *հարիչով*, վիրտուոզ կատարողները՝ միաժամանակ 3-րդ, 4-րդ և 5-րդ մատներով, 2) *բանդուրայի* տարածված անվանումը, 3) Ուկրաինայում և Լեհաստանում այդպես են կոչում նաև *պարկապզուկը:* Տես՝ *կոբզար:*

ԿՈԲԶԱՐ (ռուս. кобзарь) *կոբզահար*, *կոբզա* նվագող, ժողովրդական թափառաշրջիկ երգիչ (հաճախ՝ կույր), որը *կոբզայով* նվագակցում է իր երգեցողությունը: Տես՝ *բանդուրա*, *բանդուրահար:*

ԿՈԴԱ (իտ. coda՝ պոչ, վերջ) 1) երաժշտական ստեղծագործության կամ նրա առանձին մասի հնարավոր հավելյալ եզրափակիչ մասը, որը սովորաբար սկսվում է գլխավոր տոնայնության *լրիվ կադանսից* (հազվադեպ՝ *ընդհատված կադանսից*) հետո և որում վերջնականապես հաստատվում է գլխավոր տոնայնությունը: Ոչ բոլոր երաժշտական ստեղծագործություններն ունեն կ., միայն այն դեպքում, երբ ստեղծագործության կամ առանձին որևէ մասի վերջում զգացվում են անկայունության տարրեր, հանդես է գալիս կ., որպես ստեղծագործությունը վերջնականապես ամփոփող ու եզրափակող մաս: Կ. մեծության չափերը տարբեր են, երբ կ. շատ մեծ է, *սոնատային ալեգրոն* եռամասից կարծես դառնում է քառամաս: Կ. սովորաբար մշակվում են ստեղծագործության համարյա բոլոր թեմաները, շատ կ. իրենց կառուցվածքով նման են *մշակման մասի*, *սկզբնական հատվածով*, *կենտրոնական* (կամ՝ *միջին*) *հատվածով*, *որի համար բնորոշ է հարմոնիկ* անկայունությունը (շեղումներ դեպի *սուբդոմինանտային* ոլորտ և այլն) և *եզրափակիչ հատվածով*, որում մի շարք *կադանսների* միջոցով հաստատվում է գլխավոր տոնայ-

նության *տոնիկան*: Երբեմն կ. կառուցվում է միանգամայն նոր թեմատիկ նյութից, հաճախ նշանակվում է նոտաներում «coda» բառով, հատկապես այն դեպքերում, երբ ստեղծագործությունը կրկնելիս, անհրաժեշտ է լինում բաց թողնել որոշ հատված և անցնել կ., օր.՝ *սկերցոներում*, որոնցում *տրիոներից* հետո կրկնվում է առաջին մասը, առանց *տրիոյի* կրկնման (այսինքն՝ բաց թողնելով *տրիոն* անցնում են կ. կատարմանը): Տես՝ da capo (sin) al segno poi (segue la) coda, 2) դասական պարեր՝ *պա-դը-դեում*, *պա-դը-տրուայում* և *գրանպայում վարիացիաներին* հաջորդող եզրափակիչ արագ պար, մեծ մասամբ վիրտուոզ բնույթի: Կ. կարող է լինել նաև բալետի գործողության (արարի) եզրափակիչ մասը, որի *ֆինալում* մասնակցում են բոլոր գործող անձինք և *կորդըբալետը*:

ԿՈԴԵՏՏԱ (իտ. codetta, coda-ի փոքրացուցիչը, փոքր կոդա, պոչիկ) երբեմն *ֆուգայի* թեմայից հետո եկող մեղեդային փոքր դարձվածք, որը նախապատրաստում է *պատասխանի* հանդես գալը *դոմինանտային* տոնայնության մեջ: Տես՝ *կոդա*:

ԿՈՋԱ, տես՝ *պարկապզուկ*:


ԿՈԼՈ (լեհ. kolo՝ շրջան) Լեհաստանում, Հարավսլավիայում, Ուկրաինայում և մի շարք այլ երկրներում տարածված շուրջպար, որը կատարվում է ժողովրդական նվագարանների նվագակցության կամ երգեցողության ուղեկցությամբ: Բուլղարիայում կոչվում է *խորո*, Մոլդավիայում և Ռումինիայում՝ այլ անուններ: Կան արագ և դանդաղ տեմպ, տարբեր չափ ունեցող կ.:

ԿՈԼՈՐԱՏՈՒՐԱ (իտ. coloratura՝ գունազարդում, զարդարանք) 1) երգեցողությունը զարդարող, տեխնիկապես բարդ, սակայն փայլուն և արագընթաց *պասաժներ*, *տրելներ*, սրընթաց *գամմաներ* և նման այլ *ֆիորիտուրաներ*: Նախկինում կ. հորինում էին իրենք՝ կատարող երգիչները, հաճախ հանպատրաստից, երգելու ընթացքում: Կ. տեղ ուի մի շարք ժողովուրդների երգարվեստում, ինչպես նաև՝ հայկական (գեղջկական, գուսանական, աշուղական և հոգևոր): Ժամանակակից պրոֆեսիոնալ երաժշտության մեջ է մտել XVI դ. վերջում, իտալական օպերայում և առավել զարգացում ստացել XVIII դ. և XIX դ. առաջին կեսին, 2) երգչաձայն, նույնն է՝ *կոլորատուրային սոպրանո*:

ԿՈԼՈՐԱՏՈՒՐԱՅԻՆ ՍՈՊՐԱՆՈ (ռուս. колоратурное сопрано) ամենաբարձր ձայնաստիճանն ունեցող *սոպրանո*, որը հեշտությամբ կատարում է *կոլորատուրաներ*: Ձայնածավալն է՝ առաջին *օկտավայի դո*-ից մինչև երրորդ *օկտավայի ֆա*-ն, երբեմն՝ *սոլ*-ը (c^1—f^3(g^3)): Շափազանց շարժուն և թեթև երգչաձայն է, հստակ և թափանցիկ հնչերանգով:

ԿՈԼՈՓՈՆ (հուն. Kolophōnia (phēfine)՝ կոլոփոնյան (խեժ), ռուս. канифоль, ֆր. colophane, հին հունական Կոլոփոն քաղաքի անունով) տես՝ *բևեկնախեժ*:

ԿՈԿԼԵ (kokle) *կուռկլե*, *գուսլիհանման* ժողովրդական կըսմիթային նվագարան Լատվիայում, հին կ. լարերը աղիքից էին, ժամանակակից կ.՝ մետաղյա, լարերի քանակը՝ 5—27, լարվածքը՝ *դիատոնիկ*, ունի զրնգուն, միաժամանակ փափուկ ձայն: Ներկայումս կատարելագործվել է



և ստեղծվել են նվագախմբային տարատեսակները՝ *պիկոլո*, *սոպրանո*, *ալտ*, *տենոր*, որոնք ունեն երկու և երեք օկտավանոց ձայնածավալ և հատուկ հարմարանք, լարվածքի տոնայնությունը փոփոխելու համար, նաև՝ *բաս ու կոնտրաբաս*, որոնք ունեն *խրոմատիկ* ձայնաշար:

ԿՈՁՂԻԿ (ռուս. колодочка) տես՝ *աղեղ*:

ԿՈՄԲԻՆԱՑԻՈՆ ՏՈՆ (ռուս. комбинационный тон) *համակցական հնչյուն*, երրորդ (ավելի ցած) հնչյունը, որը հաճախ առաջանում է երկու, բարձրությամբ մոտիկ ձայների միաժամանակյա, բավականաչափ ուժեղ հնչման պահին: Կ. տ. երևույթը հայտնաբերվել է XVIII դ. կեսին մի քանի տեսաբանների, այդ թվում Ջ. Տարտինիի կողմից:

ԿՈՄԵԴԻԱ—ԲԱԼԵՏ (ֆր. comedie ballet) խորեոգրաֆիկ տեսարաններով, երբեմն նաև վոկալ համարներով կոմեդիա, ժանրը ստեղծել է Մոլյերը («Երևակայական հիվանդ», «Քաղքենին՝ ազնվական» և այլն), կ. բ. համար երաժշտություն են հորինել Լյուլլին և Շարպանտյեն:

ԿՈՄԵՍ (լատ. comes) ուղեկից, տես՝ *ֆուգա*:

ԿՈՄԻԿԱԿԱՆ ՕՊԵՐԱ (ռուս. комическая опера) կոմիկական սյուժեով օպերա (օպերա-կատակերգություն), XVIII դ. ձևավորվեցին կ. օ. տարատեսակները՝ *օպերա-բուֆֆը* Իտալիայում, *բալադային օպերան* Անգլիայում, որի ցայտուն օրինակն է «Մուրացիկների օպերան», opera comique-ը Ֆրանսիայում, *կոմիկական օպերան՝ Ռուսաստանում*, *զինգշպիլը*՝ Գերմանիայում և Ավստրիայում, *տոնադիլիան*՝ Իսպանիայում: Կ. օ. սյուժեով և երաժշտությամբ մոտ է ժողովրդական ստեղծագործությանը, որոշ կ. օ. կան խոսակցական դրվագներ:

ԿՈՄՄԱ (հուն. kómma՝ մասնիկ, հատված) ամբողջ տոնի 1/8 մասից պակաս, լսողությամբ հազիվ տարբերվող *ինտերվալ*: Կան երկու տեսակ կ.՝ *Պյութագորասյան* և *Դիվիդյան* կամ *սինտոնիկ*: Միջին դարերում ստեղնավոր նվագարանները (երգեհոն, կլավիր) Պյութագորասյան լարվածքով (այսինքն՝ մաքուր կվինտաներով) լա-

րելիս, *դո* հնչյունից սկսած տասներկուերորդ *կվինտան* դեպի վեր՝ *սի դիեզը* քիչ ավելի բարձր էր, քան *դո*-ն, ինչպես նաև՝ տասներկուերորդ *կվինտան* դեպի վար՝ *ռե դուբլ-բեմոլը* քիչ ավելի ցածր էր, քան *դո*-ն, որի հետևանքով *սի դիեզ*-ը և *ռե դուբլ-բեմոլ*-ը *էնհարմոնիկորեն* չէին համընկնում *դո*-ի հետ: Առկա նվազ տարբերությունը կոչեցին *Պյութագորասյան կ.*, որի մեծությունը հավասար է ամբողջ տոնի մոտավորապես 1/9 մասին: Երբ լարում էին մաքուր լարվածքով, ապա Պյութագորասյան *մեծ տերցիայի* և բնական *մեծ տերցիայի* միջև նույնպես ստացվում էր փոքր տարբերություն, որը հավասար էր ամբողջ տոնի մոտավորապես 1/10 մասին: *Պյութագորասյան* և բնական *մեծ տերցիաների* միջև ստացված տարբերությունը անվանեցին *Դիվիդյան* կամ *սինտոնիկ կ.*:

ԿՈՄՈԴՈ (իտ. commodo՝ հարմար) անկաշկանդ, ազատ, առանց շտապելու: Տես՝ *ալլեգրո կոմոդո:*

ԿՈՄՊՈԶԻՏՈՐ (լատ. compositor՝ կազմող, կառուցող, հորինող) երաժշտություն հորինող, երաժշտական ստեղծագործության հեղինակ: Պրոֆեսիոնալ կ. դառնալու համար բնատուր օժտվածությունից բացի, անհրաժեշտ է ունենալ հատուկ կրթություն, որն ստանում են երաժշտական ուսումնական հաստատություններում (ուսումնարան, կոնսերվատորիա), կոմպոզիցիայի բաժիններում: ՍՍՀՄ բոլոր հանրապետություններն ունեն իրենց կոմպոզիտորների միությունները, որոնք հանդիսանում են ՍՍՀՄ Կոմպոզիտորների միության բաղկացուցիչ մասը: Տես՝ կոմպոզիցիա:

ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ռուս. Союз композиторов) տես՝ *ՍՍՀՄ Կոմպոզիտորների միություն:*

ԿՈՄՊՈԶԻՑԻԱ (լատ. compositio՝ ստեղծագործություն, հորինվածք, կառուցվածք) 1) ավարտված երաժշտական ստեղծագործություն, 2) երաժշտական ստեղծագործության կառուցվածքը, բաղկացուցիչ մասերի հարաբերակցությունը, երաժշտական ձևը, 3) երաժշտության հորինման ընթացքը, որն ուսումնասիրվում է երաժշտական ուսումնական հաստատությունների (հատուկ դպրոցներ, ուսումնարաններ, կոնսերվատորիա) ստեղծագործական դասարաններում: Տես՝ *կոմպոզիտոր:*

ԿՈՆԿՐԵՏ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. конкретная музыка) ժամանակակից երաժշտական ավանգարդիզմի ծայրահեղ արտահայտություններից մեկը՝ երաժշտություն, որն ստեղծվում է մի շարք ապարատների միջոցով, երաժշտական և ոչ-երաժշտական բազմատեսակ ձայներ, հնչյունախմբեր ձայնագրելով, ապա զանազան կոմբինացիաներ կատարելով, ժապավենը ետ ու առաջ պտտելով, դանդաղեցնելով կամ արագացնելով և այլն: Նման և այլ եղանակներով արտասովոր, հետաքրքրաշարժ և օրիգինալ հնչերանգներ, էֆեկտներ են ստացվում, ինչ հաջողությամբ կարելի է օգտագործել թատերական, կինոերաժշտության մեջ: Ժամանակակից իմաստով կ. ե. ստեղծվել է Փարիզում, ապա տարածվել Եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում:

ԿՈՆՉԵՐՏԻՆՈ (իտ. concertino) 1) փոքր ծավալի ոչ բարդ *կոնցերտ*, տես՝ *կոնցերտինո*, 2) նվագախմբի մենակատարող նվագարանների խումբ, տես՝ *կոնչերտո գրոսսո:*

ԿՈՆՉԵՐՏՈ ԳՐՈՍՍՈ (իտ. concerto grosso՝ մեծ կոնցերտ) XVII—XVIII դդ. մեծ տարածում գտած վիրտուոզ բնույթի բազմմասս ստեղծագործություն, որի մեջ հակադրվում են նվագախմբի տարբեր խմբերի հնչողությունները կամ մենակատարող նվագարանների *կոնչերտինո* (կամ՝ *կոնցերտինո*) կոչվող խմբի հնչողությունը: XVI դ. վերջից՝ Եվրոպայում գոյություն ունեցող եկեղեցական երգչախմբային կոնցերտը, որն իրենից ներկայացնում էր երկու երգչախմբերի հակադրումը, միմյանց, նրանց մրցակցումը: XVII դ. սկզբում երգչախմբային կոնցերտի սկզբունքները փոխադրվում են նվագախումբ, այն տարբերությամբ, որ նվագախմբերի փոխարեն իրար են հակադրվում նվագախմբի տարբեր խմբեր կամ մենակատարող երեք նվագարաններ (գործիքներ), օր.՝ երկու ջութակ, երկու հոբոյ և ֆագոտ: Սկզբնական շրջանում կ. գ. գրվում էին լարային նվագախմբի համար և բաղկացած էին 5 մասից, հետագայում ներմուծվեցին նաև փողային նվագարաններ, մասերը դարձան 3—4: Կ. գ. դասական օրինակներ են ստեղծել Կորելլին, Վիվալդին, Բախը, Հենդելը, ձևը հազվադեպ օգտագործում են նաև ժամանակակից կոմպոզիտորները:

ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ (իտ. conservatorio՝ որբանոց, լատ. conservo-ից՝ պահպանում եմ) բարձրագույն երաժշտական ուսումնական հաստատություն: XVI դ. Իտալիայում այդպես էին կոչվում որբանոցները, որտեղ երեխաներին արհեստներ էին սովորեցնում, XVII դ. նաև երաժշտություն: XVIII դ. իտալական կոնսերվատորիաները, որտեղ սովորում էին նաև եվրոպական այլ երկրներից եկած երաժիշտներ, սկսեցին մեծ դեր խաղալ կատարող երաժիշտներ և կոմպոզիտորներ պատրաստելու գործում: Առաջին կ., որն իրենից ներկայացրել է բարձրագույն երաժշտական ուսումնական հաստատություն, ստեղծվել է Փարիզում, XVIII դ. վերջին: Հետագայում կ. բացվեցին Եվրոպայի, ինչպես և բազմաթիվ այլ երկրների համարյա բոլոր մեծ քաղաքներում, որոնք սակայն երբեմն կըրում են այլ անվանումներ, օր. երաժշտական ակադեմիա, բարձրագույն երաժշտական դպրոց և այլն: Ռուսաստանում առաջին կ. հիմնադրվել է Պետերբուրգում, 1862 թ., հետո Մոսկվայում՝ 1886 թ.: Մինչ հեղափոխությունը, կ. լրիվ դասընթացն ավարտողներն ստանում էին ազատ արվեստագետի կոչում: Սովետական Հայաստանում Երեվանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան բացվել է 1921 թ. դեկտեմբերի 21-ին, մինչև 1923 թ. այն կոչվել է երաժշտական ստուդիա, իսկ 1923 թ.


հետո կոնսերվատորիա, որի դերը սովետահայ երաժշտական արվեստի բոլոր բնագավառների բուռն ծաղկման գործում չափազանց մեծ է: Տես՝ *երաժշտական դպրոց, երաժշտական ուսումնարան, երաժշտական կրթություն:*

ԿՈՆՍՈՆԱՆՍ ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐ (ռուս. интервалы консонансы) հարմոնիկ մաքուր *պրիման*, փոքր և մեծ *տերցիաները*, մաքուր *կվարտան* (ոչ միշտ), մաքուր *կվինտան*, փոքր ու մեծ *սեքստաները* և մաքուր *օկտավան*, որոնց կազմող հնչյունները, համաձուլվելով, կարծես համալրում են միմյանց և կազմում բարեհնչյուն համահնչյուն: Տես՝ *դիսոնանս ինտերվալներ:*

ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎԻԶՄ (լատ. constructio-ից՝ կառուցվածք) XX դ. սկզբին տարածում ստացած ուղղություն արվեստում և գրականության մեջ, կ. բնորոշ է կոշտ, դիսոնանսող համահնչյունների և բարդ ռիթմիկ պատկերների համակցումը, բնորոշ գծերից մեկը մեխանիկական շարժման, մեքենաների աղմուկի վերարտադրումն է երաժշտության մեջ (օր. Հոնեգգերի «Պասիֆիկ 231»-ը):

ԿՈՆՍՈՆԱՆՍ (լատ. consonare՝ համաձայնություն) հարմոնիկ ինտերվալ կամ ակորդ, որոնց մեջ մտնող հնչյունները, փոխադարձաբար լրացնելով միմյանց, կազմում են միաձույլ, ներդաշնակ բարեհնչունություն: Կ. ինտերվալները բաժանվում են *կատարյալ* (բոլոր մաքուր ինտերվալները՝ *պրիման, կվարտան, կվինտան, օկտավան*) և *անկատար կ.* (փոքր և մեծ *տերցիաները, սեքստաները*): *Կ. ակորդ են հանդիսանում կոնսոնանս ինտերվալներից* կազմվածները (*մաժոր* և *մինոր* եռահնչյունները և դրանց շրջվածքները):

ԿՈՆՏՐԱԲԱՍ (իտ. contrabasso) 1) ջութակի ընտանիքի ամենամեծ ծավալի (երկարությունը՝ 180 — 200 սմ և ավելի) և ամենաբամբ հնչող նվագարանը (գործիքը), կառուցված է հիմնականում ջութակի ձևով, միայն «ուսերը» շատ ավելի թեք են, թավջութակի պես սրածայր հենափայտ ունի, որը նվագելիս հենում են հատակին: Կ. չորս լարերը լարվում են *կվարտաներով*. չորրորդ լարը՝ *կոնտրօկտավայի մի*, երրորդ լարը՝ *կոնտրօկտավայի լա*, երկրորդ լարը՝ մեծ *օկտավայի ռե*, առաջին լարը՝ մեծ *օկտավայի սոլ*, ձայնածավալն է *կոնտրօկտավայի դո*-ից (*մի*-ից) մինչև փոքր *օկտավայի լա*-ն (սի բեմոլ-ը), նոտագրվում է իրական հնչումից մեկ օկտավա վեր՝ բասի, տենորի և ջութակի բանալիներով: Հիմնականում անսամբլային և նվագախմբային նվագարան (գործիք) է, հազվադեպ՝ մենակատարող, ջազային անսամբլներում հանդես է գալիս որպես ինքնուրույն ֆունկցիաներ կրող նվագարան (գործիք), 2) բասային ձայնաստիճան ունեցող մի շարք նվագարանների անվան կցորդ՝ կ.-բալալայկա, կ.-դոմրա, կ.-տրոմբոն, կ.-տուբա և այլն:




6-Երաժշտական բացատրական բառարան

ԿՈՆՏՐԱԼՏԻՆՈ, տես՝ *տենոր-ալտինո:*

ԿՈՆՏՐԱԼՏՈ (իտ. contralto) կանանց ամենացածր երգչաձայնը, ձայնածավալը փոքր *օկտավայի* (*մի*-ից) *ֆա*-ից մինչև երկրորդ *օկտավայի սոլ*-ը (*լա*-ն) ((e)f — $g^2(a^2)$), ամենաարտահայտիչ և ազատ հնչող ձայնաստիճանն է, կրծքայինը, առնական և ուժգին հնչողը, օպերաներում կ. հանձնարարում են նաև տղաների դերերգեր: Երգչախմբում կ. (ինչպես և *մեցցո-սոպրանոն*) կոչվում է *ալտ:*

ԿՈՆՏՐԱՊՈՒՆԿՏ (գերմ. Kontrapunkt, լատ. punctus contra punctum՝ կետը կետի դիմաց) 1) պոլիֆոնիկ երաժշտության մեջ՝ թեմայի հետ միաժամանակ հնչող մեղեդին, որն ունի ինքնուրույն արտահայտություն և հավասարազոր է թեմային, 2) բազմաձայն երաժշտական ոճ, նույնն է՝ *պոլիֆոնիա* (առաջին իմաստով), 3) նախկինում՝ *պոլիֆոնիա* առարկայի դասընթացը ՍՍՀՄ միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում, 4) երկու կամ ավելի ինքնուրույն մեղեդիների զուգակցումը: Տես՝ *պոլիֆոնիա, պարզ կոնտրապունկտ, բարդ կոնտրապունկտ:*

ԿՈՆՏՐԱՖԱԳՈՏ (գերմ. Kontrafagott) *ֆագոտի* տարատեսակը, փողի երկարությունը՝ մոտավորապես 500 — 593 սմ, ձայնածավալն է՝ *սուբկոնտրօկտավայի լա*-ից կամ *սի բեմոլ*-ից մինչև փոքր *օկտավայի ֆա*-ն կամ



սոլ-ը (A_2 կամ B_2 — f, կամ g), լինում են կ., որոնց ձայնածավալն է *կոնտրօկտավայի դո*-ից մինչև փոքր *օկտավայի ֆա*-ն (C_1 — f): Խփաարքերն ունեն *ֆագոտի* դասավորությունը, նոտագրվում է բասի բանալիով, իրական հնչումից մեկ օկտավա վեր: Տես՝ *սուբկոնտրաֆագոտ:*

ԿՈՆՏՐԴԱՆՍ (անգլ. country dance՝ գյուղական պար) անգլիական ժողովրդական պար 2/4 կամ 6/8 չափով, որն իրենից ներկայացնում է մի շարք պարերի շղթա: XVIII դ. սկզբին անցել է Ֆրանսիա, հետագայում տարածվել եվրոպական մի շարք երկրներում, որպես պա-

րահանդեսային պար, ըստ որում Ֆրանսիայում կոչվել է *անգլեզ* (anglaise), Գերմանիայում՝ *ֆրանսեզ* (Francaise): XIX դ. կ. ձուլվեց *կադրիլին:*

ԿՈՆՏՐ-ԷՔՍՊՈԶԻՑԻԱ, տես՝ *ֆուգա:*

ԿՈՆՏՐՕԿՏԱՎԱ, տես՝ *օկտավա* (երկրորդ իմաստով):

ԿՈՆՑԵՐՏ (լատ. concertare-ից՝ մրցել, մրցակցել, իտ. concerto՝ համախոհություն, ներդաշնակություն) 1) մենակատարի և նվագախմբի համար, մեծ մասամբ եռամաս, *սոնատային ցիկլի* ձևով գրված, վիրտուոզ բնույթի երաժշտական ստեղծագործություն, որը մենակատարին մեծ հնարավորություններ է ընձեռում ցուցադրել իր կատարողական վարպետությունը: Սովորաբար առաջին մասն ունի *սոնատային ալլեգրոյի* ձև, երկրորդը՝ քնարական բնույթի, դանդաղ, իսկ երրորդը՝ *ռոնդոյի* ձև ունեցող շատ արագ մաս է: Կան նաև երկու, չորս, հինգ, ինչպես նաև մեկ մասանի կ.: Առաջին մասի վերջում, հազվադեպ՝ այլ մասերում՝ կա *կադենցիա:* Պատահում են կոնցերտներ՝ երկու, հազվադեպ երեք և չորս մենակատարների և նվագախմբի համար, որոնք համապատասխանաբար կոչվում են *կրկնակի կ., եռակի կ., քառակի կ.:* Կան նաև կ. առանձին նվագարանների (գործիքների) համար, առանց նվագախմբի, և ընդհակառակն՝ կ. միայն նվագախմբի համար, առանց մենակատարների (տես՝ *կոնչերտո գրոսսո*):

ԿՈՆՑԵՐՏԱՅԻՆ ՍԻՄՖՈՆԻԱ (իտ. simfonia concertante) *սիմֆոնիա-կոնցերտ, սիմֆոնիա,* որն ունի մի շարք մենակատարող նվագարանների (գործիքների) *պարտիաներ:*

ԿՈՆՑԵՐՏԻՆԱ (անգլ. concertina) խրոմատիկ *հարմոնիկա,* առանց պատրաստի *ակորդների,* հնարված է Անգլիայում, 1829 թ. և այնտեղ էլ ամենաշատ տարածվածն է



եղել: Իրանը սովորաբար վեցանիստ է, ունի վեց տարատեսակ՝ *կ.-պիկոլոյից* մինչև *կ.-կոնտրաբաս,* որոնցից յուրաքանչյուրի ձայնածավալն է 2—4 օկտավա, օգտագործվում է որպես մենակատարային և նվագախմբային նվագարան (գործիք):

ԿՈՆՑԵՐՏՄԱՅՍՏԵՐ (գերմ. Konzertmeister, ռուս. концертмейстер) 1) սիմֆոնիկ կամ օպերային նվագախմբի մենակատար հանդիսացող առաջին ջութակահարը, որը միաժամանակ գլխավորում է առաջին ջութակների խումբը, 2) համապատասխան մասնագիտության երաժիշտներ, որոնք գլխավորում են սիմֆոնիկ կամ օպերային նվագախմբերի երկրորդ ջութակների, ալտերի, թավջութակների և կոնտրաբասերի խմբերը, 3) դաշնակահար, որն օգնում է երգիչներին, բալետի և նվագախմբի արտիստներին՝ սովորել իրենց պարտիաները, իսկ համերգներին նվագակցում է նրանց: Տես՝ *կորռեպետիտոր:*

ԿՈՆՑԵՐՏՇՏՅՈՒԿ (գերմ. Konzertstück) մենակատարի և նվագախմբի համար գրված, սովորաբար մեկմասանի կոնցերտի ձև ունեցող *պիես,* գրվում է նաև ազատ ձևով:

ԿՈՆՖԵՐԱՆՍ, 1) *կոնֆերանսյեի* ելույթի տեքստը, 2) *կոնֆերանսյեի* ֆունկցիայի կատարումը: Տես՝ *կոնֆերանսյե:*

ԿՈՆՖԵՐԱՆՍՅԵ (ֆրանս. conférancier՝ զեկուցող, ռուս. конферансье) արտիստ, որը վարում է էստրադային համերգի ծրագիրը, հաճախ կատարելով երգիծական բնույթի *սկետչներ, ինտերմեդիաներ:*


ԿՈՏՈՐԱԿՈՒՄ (իտ. rullante) տես՝ *դափդափյուն:*

ԿՈՏԻԼՅՈՆ (ֆր. cotillon, ռուս. котильон) *կոնտրդանսին* նմանվող ֆրանսիական պարահանդեսային զուգապար, հայտնի XVIII դ.: Կ. միացվում են մի շարք ինքնուրույն պարեր (*վալս, մազուրկա, պոլկա* և այլն) և խաղեր: Մեծ տարածում ուներ XIX դ. կեսին:

ԿՈՐՊԴԲԱԼԵՏ (ֆր. corps de ballet՝ բալետի կորպուսը, հիմնական մասը, անձնակազմը) նույնն է՝ *բալետախումբ:*

ԿՈՌՆԵՄՅՈՒԶ, տես՝ *պարկապզուկ:*

ԿՈՌՆԵՏ (իտ. cornetto) փողին նմանվող պղնձյա նվագարան (գործիք), սակայն կ. փողը քիչ ավելի լայն է ու կարճ, հնչերանգն՝ ավելի փափուկ է, քան փողինը, տեխնիկական հնարավորություններն ու ձայնածավալը համընկնում են: Կան *ռե, մի, ֆա, դո* (in D, in Es, in F,



in C) և այլ լարվածքի կ., ամենագործածականը *սի բեմոլ* (in B) լարվածքի կ. է, որը հնչում է գրվածից մեծ *սեկունդա* ցած: Նոտագրվում է ջութակի բանալիով, լայն կիրառում ունի փողային նվագախմբերում: Կան երկու տեսակի կ.՝ *վենտիլային* և *կոռնետ ա պիստոն* կափույրային (*պիստոնային*) մեխանիզմով: Տես՝ *վենտիլ, կափույրիկ, պիստոն:*

ԿՈՐԻՖԵՅ (հուն. koripháios՝ առաջնորդ, խմբապետ) 1) հին հունական ողբերգություններում՝ երգչախմբի ղե-

կավար և նախերգիչ, 2) *կորդըբալետի* առաջատար արտիստ, 3) փոխաբերական իմաստով՝ գիտության և մշակույթի ականավոր գործիչ:

ԿՈՐՈՒՊԵՏԻՏՈՐ (լատ. cor (cum)-ից՝ միասին և repeto-ից՝ կրկնում եմ) օպերային թատրոնի դաշնակահար, որը մենակատարների հետ պարապում է՝ յուրացնելու պարտիաները: Տես՝ *կոնցերտմայստեր:*

ԿՈՐՐԻԴՈ (իսպ. corrido) Մեքսիկայում և Լատինական Ամերիկայի մյուս երկրներում տարածված ժողովրդական *բալլադ*՝ անմիջական, օրվա թեմաներով:

ԿՌՈՆ(Ա) (գերմ. Krone՝ պսակիկ, վերնածայր) փոքր խողովակ, որը միացվելով մի շարք բնական պղնձյա փողային նվագարանների (գործիքների) երկարացնում է օդասյունը, այդպիսով փոխելով դրանց լարքը: Հարմարանքը մի շարք փոփոխություններ է կրել, և ժամանակակից կ. միացված են փողանցքին և կազմում են անբաժանելի մաս. *վենտիլների* միջոցով դրանք ակնթարթորեն երկարացնում կամ կարճացնում են փողանցքը, այդպիսով հնարավոր դարձնում ստանալ լրիվ խրոմատիկ ձայնաշարը: Երեք *վենտիլանոց* նվագարաններն իրենցից ներկայացնում են յոթ տարբեր լարվածք ունեցող պղնձյա փողային նվագարանների զուգակցություն: Կա նաև կ., որն օգտագործվում է նվագարանը ճշգրիտ լարելու և գործիքի մեջ հավաքված հեղուկը հեռացնելու համար:

ԿՈՒՄԲԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ռուս. щипковые (музыкальные) инструменты) լարային նվագարաններ, որոնք հնչեցվում են լարերը մատներով կամ հարիչով (*պլեկտր, մեդիատոր, մզրաբ*) կսմթելու միջոցով, ինչպիսիք են տավիղը, կիթառը, բալալայկան, թառը, սազը, քանոնը, մանդոլինը, ուդը և այլն:

ԿՎԱՐՏԱ (լատ. quarta՝ չորս) *դիատոնիկ գամմայի* յուրաքանչյուր հնչյունի չորրորդ աստիճանը, կամ դրանց հարաբերությունը, այսինքն՝ չորս աստիճան ընդգրկող *ինտերվալ:*

ԿՎԱՐՏԱ-ԿՎԻՆՏԱՅԻՆ ՇՐՋԱՆ (ռուս. кварто-квинтовый круг) տես՝ *կվինտային շրջան:*

ԿՎԱՐՏԱՅԻՆ ԱԿՈՐԴ (ռուս. квартовый аккорд) նույնն է՝ *կվարտային կառուցվածքի ակորդ:*

ԿՎԱՐՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱԿՈՐԴ (ռուս. аккорд квартового строения) *ակորդ,* որը դասավորված է կամ կարելի է դասավորել *կվարտաներով:*

ԿՎԱՐՏԱՅԻՆ ՀԱՐՄՈՆԻԱ (ռուս. квартовая гармония) նույնն է՝ *կվարտային կառուցվածքի ակորդ:*

ԿՎԱՐՏԱՅԻՆ ՇՐՋԱՆ (ռուս. квартовый круг) տես՝ *կվինտային շրջան:*

ԿՎԱՐՏԴԵՑԻՄԱ (լատ. quarta-decima՝ տասնչորսերորդ) *դիատոնիկ գամմայի* յուրաքանչյուր հնչյունի տասնչորսերորդ աստիճանը, կամ դրանց հարաբերությունը, այսինքն՝ տասնչորս աստիճան ընդգրկող *ինտերվալ:* Կ. օկտավընդմեջ *սեպտիմա* է (*օկտավա*+*սեպտիմա*): Տես՝ *բարդ ինտերվալներ:*

ԿՎԱՐՏԵՏ (գերմ. Quartett, իտ. quartetto, ռուս. квартет) 1) տես՝ *քառյակ,* 2) երաժշտական ստեղծագործություն գրված չորս կատարողների (երաժիշտ կամ երգիչ) համար: Գործիքային կ. գրված են գլխավորապես *ցիկլային սոնատային* ձևով, կ. կամերային երաժշտության ամենակատարյալ ու տարածված ձևերից մեկն է, 3) օպերաներում, օրատորիաներում և նման այլ ստեղծագործություններում հաճախակի հանդիպող վոկալ անսամբլ, սիմֆոնիկ նվագախմբի նվագակցությամբ:

ԿՎԱՐՏԵՏԻՆՈ (իտ. quartettino) քառյակի համար գրված, ավելի փոքրածավալ ու պարզ ձևի *կվարտետ:*

ԿՎԱՐՏԵՔՍՏԱԿՈՐԴ, տես՝ *եռահնչյունի շրջվածքներ:*

ԿՎԱՐՏՎԵՆՏԻԼ (ռուս. квартвентиль) *վենտիլ,* որը մեկ *կվարտայով* իջեցնում է նվագարանի (գործիքի) լարքը: *Կուլիսավոր տրոմբոնի* վրա եղած միակ *վենտիլն* է և *տուբայի* չորրորդ *վենտիլը:* Վերջերս պատրաստվում են նաև կ. ունեցող գալարափողեր (վալտորնաներ):


ԿՎԻՆՏԱ (լատ. quinta՝ հինգերորդ) 1) *դիատոնիկ գամմայի* յուրաքանչյուր հնչյունի հինգերորդ աստիճանը, կամ դրանց հարաբերությունը, այսինքն հինգ աստիճան ընդգրկող *ինտերվալ,* նշանակվում է 5 թվանշանով, 2) *ակորդի կվինտային տոնի* կրճատ անվանումը, 3) ջութակի առաջին (ամենաբարակ) լարի անվանումը (երկրորդ օկտավայի մի):

ԿՎԻՆՏԱՅԻՆ ԱԿՈՐԴ (ռուս. квинтовый аккорд) նույնն է՝ *կվինտային կառուցվածքի ակորդ:*

ԿՎԻՆՏԱՅԻՆ ՀԱՐՄՈՆԻԱ (ռուս. квинтовая гармония) նույնն է՝ *կվինտային կառուցվածքի ակորդ:*

ԿՎԻՆՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱԿՈՐԴ (ռուս. аккорд квинтового строения) *ակորդ,* որը դասավորված է կամ կարելի է դասավորել *կվինտաներով:*

ԿՎԻՆՏԱՅԻՆ ՇՐՋԱՆ (ռուս. квинтовый круг) երաժշտական պրակտիկայում գործածվող *բեմոլավոր* և *դիեզավոր* բոլոր *մաժոր* կամ *մինոր* տոնայնությունների շրջանաձև (կամ՝ պարույրաձև) դասավորությունը *կվինտաներով,* որոնցից յուրաքանչյուրը տարբերվում է նախորդ կամ հաջորդ տոնայնությունից *բանալու* մեկ նշանով: Կ. շրջանից օգտվում էին տոնայնությունների բանալու նշանները սովորելիս և տոնայնությունների ազգակցականությունն ուսումնասիրելիս: Նախկինում, ինչպես և հիմա, մի շարք տեսաբաններ կ. շ. են անվանում միայն *դիեզավոր* տոնայնությունների շրջանաձև շարքը, *բեմոլավորները* անվանելով *կվարտային շրջան,* իսկ այդ երկուսը մեկտեղ՝ *կվարտա-կվինտային շրջան:*



ԿՎԻՆՏԱՅԻՆ ՏՈՆ (ռուս. квинтовый тон) տես՝ *ակորդային տոներ:*

ԿՎԻՆՏԴԵՑԻՄ (լատ. quinta-decima՝ տասնհինգերորդ) *դիատոնիկ գամմայի* յուրաքանչյուր հնչյունի տասնհինգերորդ աստիճանը, կամ դրանց հարաբերությունը, այսինքն՝ տասնհինգ աստիճան ընդգրկող *ինտերվալ:* Կ. օկտավընդմեջ *օկտավան* է, այսինքն՝ երկու *օկտավա (օկտավա + օկտավա):* Տես՝ *բարդ ինտերվալներ:*

ԿՎԻՆՏԵՏ (գերմ. Quintett, իտ. quintetto, ռուս. квинтет) 1) տես՝ *հնգյակ,* 2) հինգ կատարողների (երաժիշտ կամ երգիչ) համար գրված երաժշտական ստեղծագործություն: Գործիքային կ., ինչպես և *կվարտետը* գրվում է գլխավորապես *ցիկլային սոնատային* ձևով և հանդիսանում է կամերային երաժշտության ամենազարգացած ձևերից մեկը: Որպես ավարտուն համարներ, վոկալ կ. մեծ մասամբ հանդիպում են օպերաներում:

ԿՎԻՆՏՈՆ (լատ. quinton) *վիոլայի* այն տարատեսակը, որն ուներ հինգ լար (այստեղից էլ՝ անվանումը) և որը պատրաստում էին ջութակահարների համար, հավանաբար *գամբային* անսամբլներում հարկ եղած դեպքում *սոպրանո-* և *ալտ-գամբաներին* փոխարինելու նպատակով: Կ. և բոլոր տարատեսակները նվագելու համար հեղնում են ուսին, գոյություն են ունեցել և ունեն երկու տեսակի կ.՝ *կվարտա-տերցիային* լարվածքի (ինչպես *վիոլա դա գամբան*) և *կվինտային* լարվածքի (ինչպես ջութակը):

ԿՎԻՆՏՍԵՔՍԱԿՈՐԴ, տես՝ *սեպտակորդի շրջվածքներ:*

ԿՏՆՏՈՑ, տես՝ *կնտնտոց:*


ԿՏՏՈՑ, տես՝ *կնտնտոց:*

ԿՐԱԿՈՎՅԱԿ (լեհ. krakowiak՝ կրակովյան) լեհական ազգային աշխույժ պար, 2/4 չափով, հաճախ՝ *սինկոպացված* ռիթմով: XIV դ. կ. տարածված էր լեհական ստորին ազնվականության (շլյախտայի) շրջանակներում, որպես ռազմաշունչ պար, կատարում էին տղամարդկանց զույգերը (ասպետ և զինակիր), հետագայում՝ տղամարդը և կինը: XIX — XX դդ. մեծ տարածում գտավ բազմաթիվ երկրներում, որպես պարահանդեսային պար: Կ. ձևն իրենց ստեղծագործություններում օգտագործել են շատ կոմպոզիտորներ:

ԿՐԵԴՈ (լատ. credo՝ հավատամք) կաթոլիկ օրիներգություն, որը *մեսսայի* հիմնական բաժիններից մեկն է.

ԿՐԵՇԵՆԴՈ (իտ. crescendo, կրճատ՝ cresc.) աստիճանաբար ուժգնացնելով հնչողությունը, նշանակվում է նաև ուժեղացման նշանով: Տես՝ *ուժաբանություն:* Հաճախ ոչ ճիշտ արտասանվում է *կրեշչենդո:*

ԿՈՒԺԱՉՈԿ (բել. крыж՝ խաչ, լեհ. krzyż խաչ) Բելոռուսիայում և Լեհաստանում տարածված, 2/4 կամ 4/4 չափով, ուրախ բնույթի ժողովրդական երգ-պար, որը սկզբում կատարվում է դանդաղ և հանդիսավոր, իսկ հետո աստիճանաբար արագանում և դառնում է տաքարյուն, դինամիկ պար: Զույգերը դասավորվում են խաչաձև:



ԿՐԿԵՍԱԽՈՒՄԲ, տես՝ *թատերախումբ:*

ԿՐԿՆԱԿ, նույնն է՝ *կրկներգ:*

ԿՐԿՆԱԿԵՏ (ռուս. двойная точка) տես՝ *կետ:*

ԿՐԿՆԱԿԻ ԲԵԿԱՐ (ռուս. двойной бекар) նույնն է՝ *դուբլ բեկար:*

ԿՐԿՆԱԿԻ ԲԵՄՈԼ (ռուս. двойной бемоль) նույնն է՝ *դուբլ բեմոլ:*

ԿՐԿՆԱԿԻ ԳԱԼԱՐԱՓՈՂ (ռուս. двойная валторна) տես՝ *գալարափող:*

ԿՐԿՆԱԿԻ ԴԻԵԶ (ռուս. двойной диез) նույնն է՝ *դուբլ դիեզ:*

ԿՐԿՆԱԿԻ ԴՈՄԻՆԱՆՏԱ (ռուս. двойная доминанта)



լադի V աստիճանի համար վերցված *դոմինանտան,* նշանակվում է DD, DD_7, $DDVII_7$, երբեմն՝ $V_7/_V$, $VII_7/_V$, տես



օժանդակ դոմինանտաներ: Կ. դ. լուծվում է կամ *կադանսային կվարտսեքստակորդի*, կամ D_{35}-ի, կամ էլ D_7 և նրա շրջվածքների մեջ, հանդիպում է նաև DD — SII_7 հաջորդականությունը:

ԿՐԿՆԱԿԻ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ (ռուս. двойной хор) երկու մասի բաժանված երգչախումբ, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է լրիվ կազմի խառը երգչախումբ, կատարում են ութնաձայն խմբերգեր, գրված 1-ին և 2-րդ սոպրանոների, 1-ին և 2-րդ ալտերի, 1-ին և 2-րդ տենորների, 1-ին և 2-րդ բասերի համար (Կոմիտասի «Սոնա յար» խմբերգը): Կ. ե. իր մեջ կարող է ընդգրկել տարբեր կազմերի մի շարք երգչախմբեր, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ուրույն հնչողականությունը՝ խառը քառաձայն երգչախումբ, տղամարդկանց քառաձայն երգչախումբ, կանանց քառաձայն երգչախումբ, մանկական քառաձայն երգչախումբ, ինչպես նաև տարակազմ երկձայն, եռաձայն, հինգ, վեց և ավելի ձայներով երգչախմբեր: Տես՝ *երգչախումբ:*

ԿՐԿՆԱԿԻ ԿԱՆՈՆ (գերմ. Doppelkanon, ռուս. двойной канон) չորս կամ ավելի ձայնով այնպիսի *կանոն*, որն



սկսվում է միաժամանակ հնչող երկու հակադիր մեղեդիներով (*պրոպոստաներով*), իսկ մնացած՝ *ռիսպոստա* կոչվող ձայները կնմանակեն (*իմիտացիա*) նրանց:

ԿՐԿՆԱԿԻ ԿՈՆՏՐԱՊՈՒՆԿՏ (ռուս. двойной контрапункт) երկձայնում կիրառված *ուղղաձիգ-շարժական կոնտրապունկտ*, որոնցից յուրաքանչյուրը կարող է գրտնըվել թե առաջին (վերևի), թե երկրորդ (ներքևի) ձայնում: Տեսականորեն կարելի է գրել ցանկացած ինտերվալի կ. կ., սակայն պրակտիկայում ամենից շատ օգտագործվել է՝ *օկտավայի* կ. կ., ապա *դուոդեցիմայի* և *դեցիմայի* կ. կ.: Տես՝ *եռակի կոնտրապունկտ, քառակի կոնտրապունկտ:*

ԿՐԿՆԱԿԻ ԿՈՆՑԵՐՏ (իտ. doppio concerto, ռուս. двойной концерт) երկու մենակատարների և նվագախմբի համար գրված կոնցերտ:

ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐՄՈՆԻԿ ՄԱԺՈՐ (ռուս. дважды гармонический мажор) նույնն է՝ *կրկնակի հարմոնիկ մաժոր լադ:*

ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐՄՈՆԻԿ ՄԱԺՈՐ ԼԱԴ (ռուս. дважды гармонический мажорный лад (տես՝ *մաժոր լադ*):

ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐՄՈՆԻԿ ՄԻՆՈՐ ԼԱԴ (ռուս. дважды гармонический минорный лад) տես՝ *մինոր լադ:*


ԿՐԿՆԱԿԻ ՄԵԾԱՑՐԱԾ ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐ (ռուս. дважды увеличенные интервалы) *ինտերվալներ*, որոնք խրոմատիկ ամբողջ տոնով մեծ են *մաքուր* և *մեծ ինտերվալներից* (այլ կերպ՝ խրոմատիկ կիսատոնով մեծ են մեծացրած ինտերվալներից): Կրճատ նշանակվում է Կ. մծ., օր.՝ Կ. $մծ^2$ (այսինքն՝ կրկնակի մեծացրած սեկունդա): Տեսականորեն կրկնակի մեծացրած կարող են լինել բոլոր ինտերվալները, առավել գործածական են կրկնակի մեծացրած պրիման, կվարտան և օկտավան: Տես՝ *ինտերվալ, խրոմատիկ կիսատոն, մեծացրած ինտերվալներ, կրկնակի փոքրացրած ինտերվալներ:*

ԿՐԿՆԱԿԻ ՄՈՐԴԵՆՏ (ռուս. двойной мордент) տես՝ *մորդենտ:*



ԿՐԿՆԱԿԻ ՆՈՏԱ (ռուս. двойная нота) գործիքից միաժամանակ արտաբերված երկու հնչյունի նշանակումը:

ԿՐԿՆԱԿԻ ՇԱՐԺԱԿԱՆ ԿՈՆՏՐԱՊՈՒՆԿՏ (ռուս. вдвойне подвижный контрапункт) այնպիսի շարժական *կոնտրապունկտ*, որում ուղղաձիգ շարժական *կոնտրապունկտը* և հորիզոնական շարժական *կոնտրապունկտը* կատարվում են միաժամանակ:



ԿՐԿՆԱԿԻ ՓՈՔՐԱՑՐԱԾ ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐ (ռուս. дважды уменьшенные интервалы) ինտերվալներ, որոնք խրոմատիկ ամբողջ տոնով փոքր են *մաքուր* և *փոքր* ինտերվալներից (այլ կերպ՝ խրոմատիկ կիսատոնով փոքր են փոքրացրած ինտերվալներից): Կրճատ նշանակվում է Կ. փծ., օր.՝ Կ. $փծ_8$ (այսինքն՝ կրկնակի փոքրացրած օկտավա):

Բացի պրիմայից և սեկունդայից, մնացած բոլոր ինտերվալները տեսականորեն կարող են լինել կրկնակի փոքրացրած, առավել գործածական են կրկնակի փոքրացրած կվինտան և օկտավան: Տես՝ *ինտերվալ, խրոմատիկ կիսատոն, փոքրացրած ինտերվալներ, կրկնակի մեծացրած ինտերվալներ:*

ԿՐԿՆԱԿԻ ՖՈՒԳԱ (գերմ. Doppelfüge, ռուս. двойная фуга) երկու թեմա ունեցող *ֆուգա*, որոնք կարող



են հանդես գալ միաժամանակ, ընդհանուր *էքսպոզիցիայում* և անջատ-անջատ՝ երկու, իրար հաջորդող *էքսպոզիցիաներում*, և այդ դեպքում թեմաները միասին (երկձայն) հանդես են գալիս *ռեպրիզայում:*

ԿՐԿՆԵՐԳ (ռուս. припев) *կուպլետային* ձև ունեցող երգերի երկրորդ մասը, որը սովորաբար երգվում է միշտ միևնույն տեքստով, ընդհանրացնելով և ընդգծելով երգի հիմնական միտքը: Երբեմն կ. կրկնում է երգի մեղեդին ամբողջությամբ, կան կ., որոնք ռիթմով, թեմպով տարբերվում են երգի առաջին մասից: *Կուպլետային* ձևի խմբերգերում երգի առաջին մասը սովորաբար կատարում է նախերգիչը (կամ մի քանիսը), իսկ կ.՝ երգչախումբը:

ԿՐՃԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ (իտ. abbreviatura, լատ. abbrevio-ից՝ կրճատում եմ, ռուս. аббревиатура) *աբրեվիատուրա*, նոտագրությունը կրճատող-պարզեցնող նշաններ: Դրանք են՝ ա) *ռեպրիզան*՝ երաժշտական ստեղծագործության կամ մասերի, առանձին հատվածների, նույնիսկ առանձին տակտերի կրկնության նշան (օր. 1), բ) մեկ տակտը կրկնելու նշան (օր. 2), գ) տակտի մեջ մի խումբ նոտաներ կրկնելու նշան (օր. 3), դ) ձայների՝ օկտավա վեր կամ վար տեղափոխելու նշան ե) ձայների օկտավային կրկնապատկման նշան, զ) *տրեմոլոն*, է) բոլոր *մելիզմները*, ը) նոտագրությունը կրճատող բառեր, օր. simile, legato և այլն, թ) կրճատագիր տերմիններ, օր. cresc.՝ crescendo-ի փոխարեն, Ped կամ P., Pedal-ի փոխարեն, T. Tonica-ի փոխարեն և այլն, ի) նվագարանների (գործիքների) կրճատ անվանումներ, օր. fl.՝ flauto-ի փոխարեն, C — b.՝ contrabassi-ի փոխարեն և այլն:




ԿՐՃԱՏՈՒՄ (ռուս. купюра) *կուպյուր*, 1) երաժշտական ստեղծագործության մեջ մտածված բացթողումները և սեղմումները, որի հետևանքով երաժշտությունը կատարվում է ոչ լրիվ: Կ. նշանակվում է vide (նայիր) բառով, ըստ որում «vi» վանկը դրվում է կրճատվող հատվածի սկզբում, իսկ «de» վանկը՝ վերջում, 2) այդպես է կոչվում նաև կրճատվող հատվածը:

ԿՐՅՈՒԿՆԵՐ (ռուս. крюки) հնում կիրառվող նոտագրության *նեվմայանման* նշաններ Ռուսաստանում, որոնք XI—XIII դդ. կիրառվում էին ուղղափառ եկեղեցում: Կ. ցույց են տալիս տարբեր բարձրություններ և տևողություններ ունեցող մեկից մի քանի հնչյուններ, ինչպես նաև՝ կատարման բնույթը և ռիթմը: Կ. երգելը կոչվում է *կրյուկային* կամ *զնամենային* երգեցողություն:



ԿՐՈՏԱ (անգլ. crowd) աղեղնային հնագույն նվագարան, որը մինչև XVIII դ. վերջը տարածված էր Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում, հատկապես Անգլիայում: Իրանն ուներ քառանկյունի արկղի ձև, որի վրա ձգված էին վեց լար, չորսն անցնում էին *գրիֆի* վրայով, երկուսը՝ կողքից:



ԿՈՈՒՏՈՒՎԱ, տես՝ *լավոնիխա:*

ԿՈՒԼԻՍ (ֆր. coulisse՝ հանովի, դուրս քաշովի) մի քանի ոչ *վենտիլային* պղնձյա փողային նվագարանների (գործիքների) U-անման շարժական ծունկ, որի միջոցով փոփոխում են նվագարանի խողովակի երկարությունը, հետևաբար և հնչեցվող ձայների բարձրությունը, կոչվում է նաև *ցուգ:* Ներկայումս կ. ունեցող նվագարաններից գործածվում են տարբեր ձայնածավալի *տրոմբոնները,* որոնք կոչվում են նաև *ցուգտրոմբոններ:* Տես՝ *կռոն:*

ԿՈՒԼՄԻՆԱՑԻԱ (լատ. culmen-ից՝ գագաթ, կատար, ռուս. кульминация) նույնն է՝ *բարձրակետ:*

ԿՈՒՅԱՎԻԱԿ (լեհ. kujawiak, ռուս. куявяк) Լեհաստանի Կույավիա մարզի ժողովրդական քնարական պար, չափավոր դանդաղ տեմպով, 3/4 չափով, նման է *մազուրկային,* բայց ավելի սահուն է մեղեդին և ճկուն՝ ռիթմը, շեշտվում են տակտի տարբեր մասերը: Տես՝ *օբերեկ:*



ԿՈՒՊԼԵՏ (ֆր. couplet) տուն, ոտանավոր կազմող մասերից (սովորաբար՝ քառյակներից) յուրաքանչյուրը, որոնց մեջ տաղաչափության ձևն ամբողջացված է և որոնք սովորաբար բաղկացած են լինում երկու, չորս և ավելի տողերից, օր.՝ «Մայր Արաքսի ափերով» բանաստեղծության յուրաքանչյուր կ. բաղկացած է չորս տողից: Տես՝ *կուպլետային ձև:*

ԿՈՒՊԼԵՏԱՅԻՆ ԵՐԳ (ռուս. куплетная песня) իմաստով նույնն և՝ *կուպլետային ձև:*

ԿՈՒՊԼԵՏԱՅԻՆ ՁԵՎ (ռուս. куплетная форма) երգի ամենատարածված ձևը, ըստ որի երգի բոլոր տները (տես՝ *կուպլետ*) երգվում են միևնույն եղանակով կամ տարբերակային փոքրիկ փոփոխությամբ: Եթե երգը բազմաձայն է կամ ունի նվագակցություն, ապա կրկնվելիս կարող են հանդես գալ թե տարբերակումներով, թե բոլորովին փոխված: Հաճախ կ. ձ. երգն ունենում է *նախերգ* և *կրկներգ:*

ԿՈՒՊԼԵՏԻՍՏ (ռուս. куплетист) *կուպլետներ* երգող արտիստ:

ԿՈՒՊԼԵՏՆԵՐ (ռուս. куплеты) երգիծական և ծիծաղելի երգ-քառյակներ՝ առօրյա հրատապ կամ կենսահույզ հարցերի մասին, որոնք կատարվում են բեմից, օպերետներում, վոդեվիլներում:

ԿՈՒՐԱՆՏԱ (ֆր. courant, իտ. corrente՝ հոսող, վազող) ֆրանսիական հնագույն արքունական սալոնային աշխուժ պար, որը XVI — XVII դդ. շատ տարածված էր մի շարք եվրոպական երկրներում: Սկզբում չափը 2/4 էր, հետագայում դարձավ 3/4, ձեռք բերելով հանդիսավոր, սահուն բնույթ: Կ. մտնում էր XVII — XVIII դդ. գործիքային պարային *սյուիտի* մեջ (որպես երկրորդ մաս, *ալեմանդայից* հետո, *սարաբանդայից* առաջ): Տես՝ *բասդանս:*



ԿՈՒՐԱՆՏՆԵՐ (ֆր. courant՝ հոսող, վազող) աշտարակի կամ սենյակի մեծ ժամացույցի հին անվանումը: Կ. լարված զանգերի միջոցով արտաբերում են որոշակի մեղեդիական հաջորդականություն կամ երաժշտական փոքրածավալ պիես կատարող զարկ: Ռուսաստանում առաջին կ. տեղադրվել են 1625 թ. Կրեմլի Սպասսկի աշտարակի վրա, որոնց զանգերը լարված են խրոմատիկ, երկու օկտավայի սահմաններում:

Շ

ՇԱԼԻՆԳ (նորվ. halling) նորվեգական տղամարդու մենապար, տարածված նաև Շվեդիայում, 2/4 կամ 6/8 չափով:

ՇԱԿԱԴԱՐՁԵԼԻ ԿԱՄ ՀԱՅԵԼԱՆՄԱՆ ԿՈՆՏՐԱՊՈՒՆԿՏ (ռուս. обратимый или зеркальный контрапункт) այնպիսի *բարդ կոնտրապունկտ,* որում բացի մեղեդիների նոր զուգակցումից, հենց իրենք՝ զուգակցվող մեղեդիները հանդես են գալիս հակաշարժումով ձևափոխված. այսինքն՝ նոր զուգակցման մեղեդիները կազմվում են սկզբնական մեղեդիների ինտերվալային հաջորդականությամբ, սակայն հակառակ ուղղությամբ, իսկ

ռիթմը մնում է անփոփոխ: Տես՝ *հակաշարժում:*

ՀԱԿԱՇԱՐԺՈՒՄ (ռուս. противодвижение) *թեմայի* (կամ՝ *մոտիվի*) ձևափոխված կրկնումը, որն ստացվում



է նրանց ինտերվալային հաջորդականությունը հակառակ ուղղությամբ շարժելու հետևանքով: Տես՝ *իմիտացիա, բարդ ստրետտա:*

ՀԱԿԱՌԱԿ ՁԱՅՆԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. противоположное голосоведение) տես՝ *ձայնատարություն* (2-րդ իմաստով):


ՀԱԿԱՍՈՒՄ (ռուս. перечение) *ձայնատարության* այնպիսի ձև, որի ժամանակ երկու հարևան ակորդների տարբեր ձայներում ստացվում է *խրոմատիկ քայլ:* Հ. հաճախ թողնում է կեղծ հնչողականության տպավորություն և այդ դեպքերում պետք է խուսափել դրանից: Հարմոնիայի (ներդաշնակագիտության) դասընթացն ուսումնասիրելիս հ. դասվում է արգելված քայլերի շարքին և ուսումնական պրակտիկայում չի կիրառվում:

ՀԱՄԶՆՉՅՈՒՆ (ռուս. созвучие) *համահնչունություն,* երաժշտության տեսության մեջ՝ երկու և ավելի տարբեր բարձրություններ ունեցող ձայների համատեղ հնչումը,



այլ կերպ՝ հարմոնիկ ինտերվալների, ակորդների և ձայների պատահական զուգորդումների ընդհանուր անվանումը:

ՀԱՄԱՆՈՒՆ ՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ռուս. одноименные тональности) *մաժոր* և *մինոր* այն տոնայնությունները, որոնք ունեն միևնույն *տոնիկան,* օր. *սի մաժոր* (5 դիեզ) և *սի մինոր* (2 դիեզ), *մի մինոր* (1 դիեզ) և *մի մաժոր* (4 դիեզ) և այլն: Հ. տ. միմյանցից տար-



բերվում են երեք նշանով. մինորը մաժորից երեք բեմոլով, մաժորը մինորից երեք դիեզով, օր. *դո մաժոր* (o) և *դո մինոր* (3 բեմոլ), *լա մինոր* (o) և *լա մաժոր* (3 դիեզ) և այլն:

ՀԱՄԱՉԱՓ ՏԱԿՏԵՐ (ռուս. симметричные такты) տես՝ *չափ:*

ՀԱՄԱՌ ԲԱՍ (ռուս. упорный бас) տես՝ *բասսո օստինատո:*

ՀԱՄԱՌԻԹՄ (ռուս. эквиритмичный) թարգմանություն, օպերային *լիբրետտոյի, ռոմանսի,* երգի թարգմանությունը, որի ժամանակ բառային շեշտերը համապատասխանում են երաժշտական *ֆրազների* ռիթմին: Հ. թարգմանության կանոնները չպահպանելու դեպքում տեքստի իմաստըն աղավաղվում է:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒԺԵՂ ՄԱՍ (ռուս. относительная сильная доля) բարդ և խառը չափերում, բացի առաջին պարզ չափի շեշտից, մնացած պարզ չափերի շեշտերը:

ՀԱՄԵՐԳ (ռուս. концерт, լատ. concerto-ից՝ մրցում եմ) երաժշտական ստեղծագործությունների, ինչպես նաև խորեոգրաֆիկ, էստրադային, դրամատիկ և այլ համարների կատարումը հասարակության առաջ: Վճարովի հ. կազմակերպումը լայն հասարակության համար սկսվել է XVII դ. վերջին քառորդից, Լոնդոնում: Մինչ այդ, հ. տեղի են ունեցել արքունիքներում և ազնվականների ապարանքներում, ուր ներկա էին լինում սահմանափակ թվով հատկապես հրավիրված անձինք: Հ. կարող են լինել սիմֆոնիկ, երգչախմբային, մենակատարային, կամերային, էստրադային և այլն: Տես՝ *կոնցերտ, համերգային դահլիճներ:*

ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԱՐԻԱ (ռուս. концертная ария) մեներգելու համար գրված օպերային արիայի բնույթի ինքնուրույն ստեղծագործություն՝ համերգային կատարման համար (սովորաբար սիմֆոնիկ նվագախմբի նվագակցությամբ): Տես՝ *արիա* (1-ին իմաստով):

ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԴԱՀԼԻՃՆԵՐ (ռուս. концертные залы) լավ հնչողականություն ունեցող հատուկ դահլիճներ (բաց բեմահարթակով, առանց վարագույրի և կուլիսների) համերգներ տալու համար: Հ. դ. սկսել են կառուցել XIX դ. առաջին կեսից: Ըստ ծավալի տարբերում են *փոքր* և *մեծ* հ. դ.:

ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՔԱՅԼԵՐԳ (ռուս. концертный марш) սիմֆոնիկ կամ փողային նվագախմբի համար գրված քայլերգ՝ նախատեսված համերգային կատարման համար:

ՀԱՄՐ ՍՏԵՂՆԱՇԱՐ (ռուս. немая клавиатура) դաշնակահարի մատները վարժեցնելու համար հատոկ ձևով պատրաստված դաշնամուրային անձայն դյուրակիր ըստեղնաշար, որից օգտվում են պրոֆեսիոնալ, նույնիսկ աշխարհահռչակ դաշնակահարները՝ համերգային ուղևորությունների ժամանակ: Մեծ տարածում ուներ XIX դ. և XX դ. սկզբում:

ՀԱՅԵԼԱՆՄԱՆ ԿՈՆՏՐԱՊՈՒՆԿՏ (ռուս. зеркальный контрапункт) տես՝ *հակադարձելի կամ հայելանման կոնտրապունկտ:*

ՀԱՅԵԼԱՆՄԱՆ ՌԵՊՐԻԶԱ (ռուս. зеркальная реприза) *սոնատային ալլեգրոյում* այն *ռեպրիզաները*, որոնք *էքսպոզիցիայի* հիմնական բաժինները կրկնում են հակառակ կարգով՝ սկզբում *օժանդակ պարտիան*, հետո՝ *գլխավորը:*

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱԶԱՅԻՆ ՆՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ, VIII դարում Հայաստանում ստեղծվել է *խազեր* կոչվող միջնադարյան *նևմային նոտագրության* ուրույն սիստեմ, որով դարերի ընթացքում գրի են առնվել հսկայական քանակությամբ հոգևոր, նաև աշխարհիկ երգեր (*շարականներ, տաղեր, գանձեր* և այլն): Ներկայումս միայն Մատենադարանում կան հազարի հասնող խազավորված ձեռագրեր (չհաշված **ԽԱՀՄ** և արտասահմանյան թանգարաններում և ձեռագրատներում եղածները): Սակայն պատմական մի շարք հանգամանքների բերումով, խազերի գործածության անհարմարությունների և դժվարությունների հետևանքով, սկսած XVI դարից, խ ա զ ե ր ը աստիճանաբար դուրս են գալիս գործածությունից և մոռացվում են: Խ ա զ ե ր ի վերծանման խնդրով զբաղվել են հայ և օտարազգի երաժշտագետներ, խ ա զ ե ր ի վերծանությանը նվիրված օտարազգի հեղինակի առաջին գիրքը լույս է տեսել դեռևս 1711 թ.: Այս ուղղությամբ չափազանց մեծ և արդյունավետ աշխատանք է կատարել Կոմիտասը, սակայն դժբախտաբար, խազերի վերծանմանը նվիրված նրա աշխատություններն անհետ կորել են: Խ ա զ ա բ ա ն ու թ յ ա ն ը վերաբերվող արժեքավոր աշխատանք են կատարել և կատարում սովետահայ երաժշտագետները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գրի առնելու միջոցով արևմտահայ եկեղեցական երաժշտությունը օտար ազդեցություններից և աղավաղումներից փրկելու, միաժամանակ երգերի ուսուցումը հեշտացնելու նպատակով 1813—1815 թթ. *Համբարձում Լիմոնճյանը* ստեղծեց ձայնագրության նոր սիստեմ: Մի շարք պատճառներով նա հրաժարվել է եվրոպական նոտագրությունից և վերցնելով հին հայկական *խազերից* մի քանիսը, նոր իմաստ է տվել դրանց: Հ. ձ. հիմնական ձայնանիշների անուններն են՝ *փուշ, էկորճ, վերնախաղ, բենկորճ, խոսրովային, ներքնախաղ* և *պարույկ:* Գործնականում կիրառվում էին սրանց միայն կրճատ տարբերակները՝ *փո, է, վե, բե, խո, նե, պա,* որոնք ընդունված է մոտավորապես հավասարեցնել եվրոպական հետևյալ նոտաներին՝ *դո, ռե, մի, ֆա, սոլ, լա, սի բեմոլ,* ըստ որում *մի* և *լա* հնչյունները քիչ ավելի ցած են, քան *տեմպերացված լարվածքում:* Հիմնական հնչյուններից մեկ օ կ տ ա վ ա ցած գտնվող հնչյունները նշանակելու համար, նույն ձ ա յ ն ա ն ի շ ե ր ի տակ դրվում էր գիծ, իսկ օ կ տ ա վ ա վեր նշանակելու համար՝ կետ (բացառությամբ ներքնախաղի, որի տակ կետ դնելու փոխարեն, հիմնական երկու խաղերին ավելացնում են յուրաքանչյուր հաջորդ օ կ տ ա վ ա յ ի համար մեկական խաղ): Երկու օ կ տ ա վ ա վեր կամ վար գտնվող հնչյունները համապատասխանորեն նշանակվել են երկու կետով կամ երկու գծով և այլն: Սակայն հ. ձ. առավել գործնական ձ ա յ ն ա ծ ա վ ա լ ն էր փոքր օ կ տ ա վ ա յ ի *սոլ-ից* մինչև երրորդ օ կ տ ա վ ա յ ի *դո*-ն:

Այդ սիստեմում գոյություն ունի *ալտերացիայի* ընդամենը մեկ նշան, որը նման է հայերենի բացականչական նշանին: Որոշ դեպքերում այն կիրառվում է որպես բարձրացման նշան և կոչվում է կ ի ս վ ե ր, որոշ դեպքերում որպես իջեցման նշան և կոչվում է կ ի ս վ ա ր՝ օր. եթե այդ նշանը դրված է խ ո (ս ո լ) ձ ա յ ն ա ն ի շ ի վրա, ապա ըստ պայմանների, կարտահայտի կամ խ ո կ ի ս վ ե ր կամ ն ե կ ի ս վ ա ր (ս ո լ դ ի ե զ կամ լ յ ա բ ե մ ո լ): Հ. ձ. ամանակի (տևողության) նշաններն են.

սուղ (ամբողջ տևողություն)	ստոր
եռակետ	կիսաթավ
զույգ կետ կամ երկկետ	երկստոր
կետ-ստոր	քառաթավ
կետ	ծունկ
թավ	ծնկներ



Այս նշանները միաժամանակ հանդիսանում են ձ ա յ ն ա հ ա տ ի (պ ա ո ւ զ ա) նշաններ. եթե դրված են ձ ա յ ն ա ն ի շ ի ց վեր, ապա ցույց են տալիս ձայնի տևողությունը, եթե դրված են ձ ա յ ն ա ն ի շ ի աջ կամ ձախ կողմում, նրա հետ միևնույն շարքում, ապա ցույց են տալիս պ ա ո ւ զ ա յ ի տևողությունը: Հայ երաժշտության պատմության մեջ հ. ձ. խոշոր դեր է կատարել, պատրաստվել են այդ սիստեմին լավ տիրապետող երաժշտական կադրեր, որոնք գրի են առել չափազանց մեծ արժեք ներկայացնող, ժողովրդական և հոգևոր մեծաքանակ երգեր և եղանակներ, դրանով իսկ փրկելով դրանք կորստից և աղավաղումներից: Սակայն հայկական պրոֆեսիոնալ երաժշտարվեստի զարգացման հետ մեկտեղ, հ. ձ. հետզհետե իր տեղը զիջեց եվրոպական նոտագրությանը, որն իր հնարավորություններով անհամեմատ կատարյալ է: Հ. ձ. օգտագործվել է շուրջ մեկ դար, այդ սիստեմով տպագրված են մի շարք դասագրքեր, այդ թվում և խորհրդային շրջանում:

ՀԱՆԴԻՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՔԱՅԼԵՐԳ (ռուս. церемониальный марш) տես՝ *զորահանդեսային քայլերգ:*

ՀԱՆԵԼՈՒԿԱՅԻՆ ԿԱՆՈՆ (ռուս. загадочный канон) տես՝ *կանոն:*

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ, նույնն է՝ *արվեստի վաստակավոր գործիչ:*

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ, միութենական կամ ինքնավար հանրապետությունների Գերագույն Խորհուրդների նախագահության կողմից արվեստի անանավոր գործիչներին (գլխավորապես վաստակավոր արտիստներին և արվեստի վաստակավոր գործիչներին) շնորհվող հանրապետության բարձրագույն պատվավոր կոչումը, սահմանված 1919 թ.: Մինչև «Խորհրդային Միության ժողովրդական արտիստ» պատվավոր կոչման սահմանումը (1936 թ.) այդ կոչումը շնորհում էր ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահությունը:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԱՐՏԻՍՏ, նույնն է՝ *վաստակավոր արտիստ:*

ՀԱՊԱՂՈՒՄ (ռուս. задержание) նախորդ ակորդի ակորդային այն տոնը (կամ՝ տոները), որը շարունակում է հնչել նոր ակորդի հանդես գալուց հետո, նրա հետ կազմելով ոչ ակորդային դիսոնանսող հնչյուն, որից հետո լուծվում է սեկունդա վար (հազվադեպ՝ վեր), նոր ակորդի համապատասխան ակորդային տոնի մեջ: Հ. կիրառվում են տակտի ուժեղ մասերում: Տարբերում են *նախապատրաստված* և *չնախապատրաստված* հ.: *Նախապատրաստված* հ. գոյանում է երեք պարագայից. ա) *նախապատրաստում* նախորդ ակորդում այն տոնի (կամ՝ տոների) առկայությունը, որը պիտի հապաղի, բ) *հապաղում*-նոր ա-



կորդի հանդես գալը նախորդ ակորդից մնացած ակորդային հնչյունի հետ, որը նոր ակորդում դառնում է ոչ ակորդային դիսոնանս և գ) *լուծում*-այդ դիսոնանսող (հապաղող) հնչյունի անցումը դեպի նոր ակորդի համապատասխան ակորդային տոնը: *Չնախապատրաստված* հ. մեջ հապաղող հնչյունը նախորդ ակորդում կարող է գտնվել մեկ այլ ձայնում կամ բոլորովին բացակայել, այսինքն՝ տակտի ուժեղ մասերում գտնվող յուրաքանչյուր ոչ ակորդային հնչյուն, եթե անցողիկ կամ օժանդակ չէ, կարելի է դիտել որպես չնախապատրաստված հ.: Հ. կիրառվում է նաև երկու, երեք և հազվադեպ չորս ձայներում միաժամանակ:

ՀԱՋՈՐԴ ԿԱՄ ՆՈՐ ՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. последующая или новая тональность) տես՝ *զարտուղություն:*

ՀԱՎԱՅԱՆ ԿԻԹԱՌ (ռուս. гавайская гитара) վեցլարանի կիթառ, որը նվագելիս դնում են ծնկներին, իսկ մետաղյա լարերը կարճացվում են ոչ թե ձախ ձեռքի մատների սեղմումով, այլ մետաղյա հատուկ գլանիկով, որը լարերին սեղմելիս տատանում են: Լարվում է՝ E — A — e — a — cis^1 — e^1 (մեծ օկտավայի մի, լյա, փոքր օկտավայի մի, լյա, առաջին օկտավայի դո դիեզ, մի), նոտագրվում է իրական հնչումից մեկ օկտավա վեր, օգտագործվում է գլխավորապես էստրադային, մասամբ ջազային նվագախմբերում, նաև որպես մենակատարային նվագարան:


ՀԱՎԱՍԱՐԱՉԱՓ ՏԵՄՊԵՐԱՑՎԱԾ ԼԱՐՎԱԾՔ (ռուս. равномерно темперированный строй) լարվածք, որում օկտավան բաժանվում է տասներկու հավասար կիսատոների, տվյալ լարվածքում *պյութագորասյան կոմման* հավասարապես բաժանված է *օկտավայի* մեջ մտնող տասներկու հնչյունների միջև: Դրա հետևանքով տասներկուերորդ *կվինտան* դեպի վեր՝ *սի դիեզը*, իսկ դեպի վար՝ *ռե դուբլ-բեմոլը* համընկնում են *դո*-ի հետ, համընկնում են նաև բոլոր *դիատոնիկ* և *խրոմատիկ* կիսատոները, այսինքն՝ բոլոր *էնհարմոնիկ* հնչյունները (*ֆա-ֆա դիեզ*-ը և *ֆա-սոլ բեմոլ*-ը հավասար կիսատոներ են, որովհետև այդ լարվածքում *ֆա դիեզ*-ը *էնհարմոնիկորեն* հավասար է *սոլ բեմոլ*-ին): Հ. տ. լ. բոլոր նույնանուն ինտերվալները (օր. բոլոր *մեծ տերցիաները* կամ բոլոր *փոքր սեքստաները*) հավասար են: Հ. տ. լ. միայն *օկտավան* է լարված մաքուր, այսինքն այնպես, ինչպես բնական ձայնաշարում, իսկ մնացած բոլոր *ինտերվալները* «տեմպերացված» են, այսինքն՝ աննշան փոքրացված կամ մեծացված են (օր. բոլոր *կվինտաները* փոքրացված են ամբողջ տոնի 1/108 մասով, իսկ *կվարտաները* նույնքան մեծացված են), ըստ որում բոլոր *տեմպերացված* հնչյունները այնքան քիչ են տարբերվում բնականներից, որ նույնիսկ լավ լսողություն ունեցողների համար աննկատելի են և երաժշտական տեսակետից՝ միանգամայն ընդունելի: Բայց հնչյունների այդ աննշան անճշտությունների փոխարեն հ. տ. լ. անսպառ հնարավորություններ է բացել երաժշտական արվեստի զարգացման ու ծաղկման համար, որի հետևանքով իր լայն տարածումն է գտել համարյա ամենուրեք և հաստատվել որպես ժամանակակից պրոֆեսիոնալ երաժշտության առավել կատարյալ ու միակ լարվածքը:

ՀԱՎԱՍԱՐԱՉԱՓ ՏԵՄՊԵՐԱՑՎԱԾ ՁԱՅՆԱՇԱՐ (ռուս. равномерно темперированный звукоряд) *հավասարաչափ տեմպերացված լարվածքի ձայնաշարը:*

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԼՍՈՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. относительный слух) տես՝ *երաժշտական լսողություն:*

ՀԱՐԻՉ (ռուս. медиатор) ոսկրից, պլաստմասսայից, մետաղից, փայտից կամ կոշտ կաշվի շերտից պատրաստված նուրբ ֆիգուր, որի մի կողմը հետզհետե նեղանալով վերջանում է սուր կամ կիսակլոր ծայրով, որով կսմթում կամ հարվածում են լարերին, դրանք հնչեցնելու համար: Հ. օգտագործում են *թառ, մանդոլին, դոմրա, կիթառ* և նման այլ նվագարաններ նվագելիս: Տես՝ *կնտնտոց:*

ՀԱՐՄՈՆ, ՀԱՐՄՈՆԻԿԱ, ՀԱՐՄՈՆԻԱ (ռուս. гармонь, гармоника, гармония) Ռուսաստանում և մի շարք այլ երկրներում տարածված նվագարան, որի մետաղյա լեզվակները տատանման մեջ են դրվում փուքսի միջոցով առաջացած օդի հոսանքով: Ստեղները կոճակաձև են, սովորաբար միևնույն ստեղնով կարելի է հնչեցնել երկու



տարբեր բարձրություններ, նայած փուքսը ձգվում է, թե սեղմվում: Աջ ձեռքի ստեղնաշարով (*դիատոնիկ* ձայնաշար) կատարում են մեղեդին, ձախ ձեռքի ստեղներով, որոնք երեք շարք են կազմում, նվագակցում են: Ձախ ստեղնաշարի առաջին շարքում բասային հնչյուններն են, երկրորդ և երրորդ շարքերում՝ պատրաստի *մաժոր* և *մինոր* ակորդներ: Հ. Ռուսաստան է մուտք գործել 1780 թ. կատարելագործվել և հարմարեցվել է ռուսական, թաթարական, մարիական և այլ ժողովուրդների երաժշտության լադային առանձնահատկություններին:

ՀԱՐՄՈՆԻԱ (հուն. harmonia՝ կապ, համապատասխանություն, ներդաշնակություն, ռուս. гармония) 1) երաժշտական արտահայտչամիջոցների բնագավառ, հիմնված հնչյունների օրինաչափ միացման միջոցով համահնչյուններ կազմելու և այդ համահնչյունների փոխադարձ կապի, դրանց փոխհարաբերակցության վրա, 2) *ներդաշնակագիտություն* — ուսմունք ակորդների, դրանց կառուցվածքի, ֆունկցիոնալ փոխհարաբերությունների և միացման կանոնների, ինչպես նաև *զարտուղության, ֆիգուրացիայի* և պատահական զուգորդումների մասին: Որպես ուսումնական առարկա, անցնում են ԽՍՀՄ բոլոր միջնակարգ և բարձրագույն երաժշտական ուսումնական հաստատություններում, 3) ներդաշնակող ակորդներից յուրաքանչյուրը, երբ բնորոշում են դա, օր. սովորական հ., հետաքրքիր հ., պայծառ հ. և այլն, 4) տես՝ *հարմոն:*

ՀԱՐՄՈՆԻԶԱՑԻԱ (ռուս. гармонизация) տես՝ *ներդաշնակում:*

ՀԱՐՄՈՆԻԿԱ, ՀԱՐՄՈՆԻ (հուն. harmonikós՝ ներդաշնակային) մի շարք նվագարանների ընդհանուր անվանում, որոնցից *հարմոնը, շրթհարմոնը, կոնցերտինոն, բայանը, ակորդեոնը* և *ֆիսհարմոնը* ունեն մետաղյա հնչող լեզվակներ, իսկ ապակյա *հարմոնիկան՝* հնչող ապակյա կիսագնդեր:

ՀԱՐՄՈՆԻԿ ԻՆՏԵՐՎԱԼ (ռուս. гармонический интервал) *ինտերվալ,* որի հնչյունները վերցվում են միաժամանակ: Հ. ի. գոյանում են միայն բազմաձայն երաժշտության մեջ: Տես՝ *մելոդիկ ինտերվալ:*

ՀԱՐՄՈՆԻԿ ՀԱՐԱՀՆՉՅՈՒՆՆԵՐ (ռուս. гармонические призвуки) տես՝ *օբերտոններ:*

ՀԱՐՄՈՆԻԿ ՄԱԺՈՐ (ռուս. гармонический мажор) նույնն է՝ *հարմոնիկ մաժոր լադ:*

ՀԱՐՄՈՆԻԿ ՄԱԺՈՐ ԼԱԴ (ռուս. гармонический мажорный лад) տես՝ *մաժոր լադ:*

ՀԱՐՄՈՆԻԿ ՄԱՆԱՀՆՉՅՈՒՆՆԵՐ (ռուս. гармонические созвуки) նույնն է՝ *օբերտոններ:*

ՀԱՐՄՈՆԻԿ ՄԻԱՑՈՒՄ (ռուս. гармоническое соединение) իմաստով նույնն է՝ *ակորդների հարմոնիկ միացում:*

ՀԱՐՄՈՆԻԿ ՄԻՆՈՐ (ռուս. гармонический минор) նույնն է՝ *հարմոնիկ մինոր լադ:*

ՀԱՐՄՈՆԻԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ռուս. гармонический анализ) երաժշտական ստեղծագործության հարմոնիկ կառուցվածքի վերլուծություն, երաժշտության գիտական ուսումնասիրության մեթոդներից մեկը, ինչպես նաև ներդաշնակագիտության (հարմոնիայի) ուսումնական պարապմունքների ձևերից մեկը:

ՀԱՐՄՈՆԻԿ ՄԻՆՈՐ ԼԱԴ (ռուս. гармонический минорный лад) տես՝ *մինոր լադ:*

ՀԱՐՄՈՆԻԿ ՖԻԳՈՒՐԱՑԻԱ (ռուս. гармоническая фигурация) տես՝ *ֆիգուրացիա:*

ՀԱՐՄՈՆԻԿ ՖԻԳՈՒՐԱՑԻՈՆ, նույնն է՝ *հարմոնիկ ֆիգուրացիա:*

ՀԱՐՄՈՆԻԿ ՖՈՒՆԿՑԻԱ (ռուս. гармоническая функция) *մաժոր* և *մինոր լադերում* ակորդների դերը՝ հարմոնիկ շարժման ընթացքում, դրանց լադային նշանակությունը, հիմնական հ. ֆ. են՝ ա) *տոնիկային ֆունկցիան,* որն արտահայտվում է լադի I աստիճանի եռահնչյունով և նշանակվում է լատիներեն T տառով, բ) *սուբդոմինանտային ֆունկցիան,* որն

արտահայտվում է IV աստիճանի եռահնչյունով և իր անկայունությամբ խախտում հավասարակշռությունը, կարծես դուրս բերելով տվյալ տոնայնությունից, նշանակվում է լատիներեն S տառով, գ) *դոմինանտային ֆունկցիան*, որն արտահայտվում է V աստիճանի եռահնչյունով, իր անկայունությամբ ստեղծում է հավասարակշռությունը վերականգնելու, այլ կերպ ասած՝ *տոնիկայի* հանդես գալու անհրաժեշտություն, նշանակվում է լատիներեն D տառով: Տես՝ *տերցիային սխեմա, գլխավոր եռահնչյուններ, օժանդակ եռահնչյուններ:*

ՀԱՐՄՈՆԻՈՒՄ (ռուս. гармониум, գերմ. Harmonium) նույնն է՝ *ֆիսհարմոն:*

ՀԱՐՊՍԻԽՈՐԴ (անգլ. harpsichord, ռուս. арпсихорд) տես՝ *կլավեսին:*

ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ռուս. ударные инструменты) բոլոր այն նվագարանները, որոնք հնչեցվում են անմիջականորեն դրանց հարվածելու միջոցով՝ փայտյա կամ մետաղյա ձողիկներով, թակիչով, ուղղակի ափով կամ մատներով, բաժանվում են երկու տեսակի՝ ա) հ. ն., որոնք ունեն որոշակի բարձրություն (*լիտավրներ, զանգեր, զանգակներ, վիբրոֆոն, տուբոֆոն, չելեստա, քսիլոֆոն, մարիմբոֆոն, գոնգ* և այլն, բ) հ. ն., որոնք որոշակի բարձրություն չունեն (*մեծ թմբուկ, փոքր թմբուկ, բուբեն, տամ-տամ, եռանկյունի, ծնծղաներ, կաստանյետներ* և այլն): Առաջինները նոտագրվում են հնգագծի վրա, համապատասխան բանալիով, երկրորդները, որոնք հիմնականում ծառայում են ռիթմն ընդգծելու համար, ներկայումս նոտագրվում են միագծի վրա: Հ. ն. են հանդիսանում նաև ժողովրդական բազմաթիվ նվագարաններ (*ցիմբալ, սանթուր, դհոլ, դափ, դոլրա, դիպլիպիտո, նաղարա* և այլն) տես՝ *միագիծ:*

ՀԱՐՑԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ (ռուս. вопросительное предложение) պայմանականորեն այսպես է կոչվում պարբերության առաջին նախադասությունը: Տես՝ *պարբերություն:*

ՀԵԼԻԿՈՆ (հուն. helix-ից՝ պարույր, գալարագիծ, ռուս. геликон) շրջանաձև ոլորված պղնձյա փողային նվագարան, *տուբայի* ձայնածավալով, օգտագործվում է




փողային (հատկապես՝ զինվորական) նվագախմբերում: Ձախ ձեռքը և գլուխը անցկացնելով հ. միջով, նվագողը գցում է ուսին, ինչ շատ հարմար է քայլելիս կամ ձիու վրա նստած նվագելիս: Կա *բաս հ.*, մի բեմոլ (in Es) լարվածքով և *կոնտրբաս հ.*, սի բեմոլ (in B) լարվածքով, նոտագրվում է բասի բանալիով, ըստ իրական հնչողության:

ՀԵԾԵԼԱՋՈՐԱՅԻՆ ՎԱՐԳ (ռուս. кавалерийская рысь) երաժշտական ստեղծագործություն, որը կատարվում է զորահանդեսների ժամանակ, հեծելազորի՝ վարգով անցնելիս, չափը՝ 2/4, տեմպը՝ չափավոր:

Ա. Ռուբինշտեյն, Հեծելավարգ



ՀԵԾԵԼԱՓՈՂ (ռուս. кавалерийская труба) ազդանշանային պղնձյա փողային բնական նվագարան, մի բեմոլ լարվածքով (in Es), ձևով նման է բնա-



կան փողին (առանց *վենտիլների*), ձայնաշարը շեփորինն է (թե գրությամբ, թե հնչողությամբ): Տես՝ *բնական նվագարաններ:*

ՀԵԿԿԵԼՖՈՆ (ռուս. геккельфон, իտ. oboe basso) *հոբոյի* տարատեսակը, կատարելագործված *բարիտոնային հոբոյ*, որը 1904 թ. պատրաստել է գերմանացի գյուտարար վարպետ Վ. Հեկկելը: Ձայնածավալը մեկ օկտավա ցածր է *հոբոյից*, նոտագրվում է ջութակի բանալիով, իրական հնչումից մեկ օկտավա վեր, երբեմն օգտագործվում է սիմֆոնիկ և օպերային նվագախմբերում: Կա նաև *հեկկելֆոն-պիկկոլո*, որի ձայնածավալը անգլիական փողակից մեկ օկտավա վեր է, ունի ֆա լարվածք (in F), նոտագրվում է ջութակի բանալիով, իրական հնչումից կվարտա ցածր, երբեմն օգտագործվում է փողային նվագախմբերում, կոչվում է նաև *փոքր հոբոյ:*

ՀԵՂԻՆԱԿ (ռուս. автор) անձնավորություն, որն ստեղծել, հորինել է տվյալ ստեղծագործությունը: Տես՝ *կոմպոզիտոր:*

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԵՐԳ (ռուս. авторский концерт) համերգ, որի ընթացքում կատարվում են մեկ կոմպոզիտորի ստեղծագործություններ, հ. հ. ժամանակ մեծ մասամբ հանդես են գալիս իրենք՝ հեղինակները, որպես նվագավարներ, կատարողներ և այլն:


ՀԵՄԻՏՈՆԱՅԻՆ ՁԱՅՆԱՇԱՐ (հուն. hemi՝ կիսա, tónos՝ տոն, հնչյուն, ռուս. гемитонный звукоряд) կիսատոններով ձայնաշար, հակառակ հասկացությունն է՝ *անհեմիտոնային ձայնաշարը*՝ առանց կիսատոների ձայնաշարը: Տես՝ *պենտատոնիկա:*

ՀԵՆԱՐԱՆ (ռուս. подставка) տես՝ *լարակալ:*

ՀԵՊՏԱԽՈՐԴ (հուն. hepta՝ յոթ և chorda՝ լար) յոթնաստիճան ձայնաշար: Տես՝ *հեպտատոնիկա:*

ՀԵՊՏԱՏՈՆԻԿԱ (հուն. hepta՝ յոթ և tónos՝ տոն (հընչյուն), ռուս. гептатоника) յոթ տարբեր բարձրության հնչյունների ձայնասիստեմ, որը երաժշտական պրակտիկայում համընկնում է *դիատոնիկայի* հետ:

ՀԵՏԵՎԱԿԱՔՈՂԱԿ (ռուս. пехотный рожок) ազդանշանային պղնձյա փողային բնական նվագարան՝ *դո* (in C),



հազվադեպ *սի բեմոլ* (in B) լարվածքով, նման մյուս նվագարաններից տարբերվում է կոնաձևությամբ և փողաբերանի բացակայությամբ:

ՀԵՏԵՐՈՖՈՆԻԿ (հուն. heteros՝ այլ և phōnē՝ ձայն) հիմնականում միաձայն մեղեդու միատեղ կատարումը, *ունիսոնից* որոշ շեղումներով: Հ. առաջանում է միատեղ երգեցողության, միատեղ նվագի տարբեր ձևերում: Հարմոնիայի տարրերը հ. էպիզոդիկ բնույթ են կրում, մինչդեռ բազմաձայնության մեջ համահնչյունների հաջորդականության ժամանակ ձայների զուգորդումը նորմա է հանդիսանում:

«ՀԵՐՈՍԱԿԱՆ» ՏԵՆՈՐ (ռուս. «героический тенор») տես՝ *դրամատիկ տենոր:*

ՀԵԿՍԱԽՈՐԴ (հուն. hexa՝ վեց և chorda՝ լար) վեցնահնչյուն ձայնաշար (*սեքստայի* սահմաններում)՝ տոն, տոն, կես տոն, տոն, տոն փոխհարաբերությամբ, ներմուծվել է Գվիդո դե Արեցոյի կողմից և օգտագործվել մինչև XVIII դ., որպես *սոլմիզացիայի* հիմք:

ՀԻԴՐԱՎԼՈՍ (հուն. hydraulos, hydro՝ ջուր և aulos՝ փող, ռուս. гидравлос) *ջրերգեհոն, երգեհոն, որի փուքսերը օդի փոխարեն ճնշվում են ջրային մամլիչով,* հնարել է հին հունական մեխանիկ Կտեսիբիոսը, մ. թ. ա. II դ., մեծ տարածում ուներ հին Հռոմում, մ. թ. IV դ. սկզբներին դուրս եկավ գործածությունից:

ՀԻՄՆ (հուն. hýmnos-ից՝ օրհներգ, ռուս. гимн) 1) հանդիսավոր երգ, որն ընդունված է որպես պետության կամ դասակարգի, կուսակցության միասնության խորհրդանիշ: Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխությունից մինչև 1944 թ. Խորհրդային Միության հիմնն էր «Ինտերնացիոնալը»: 1944 թ. հաստատվեց ԽՍՀՄ նոր Հիմնը, որի երաժշտությունը գրել է Ա. Վ. Ալեքսանդրովը, իսկ «Ինտերնացիոնալը» մնաց որպես Խորհրդային Միության Կոմունիստական Կուսակցության Հիմն: Միութենական բոլոր հանրապետությունները նույնպես ունեն իրենց Հիմները, Խորհրդային Հայաստանի Պետական Հիմնի երաժշտության հեղինակն է Ա. Խաչատրյանը, 2) ընդհանրապես՝ օրհներգություն, գովերգ, փառաբանական հանդիսավոր երգ, որը կատարվում է ի պատիվ կամ նշանավորումն պատմական այս կամ այն իրադարձության, դասակարգի, հերոսի, գաղափարի հաղթանակի և այլն: Ֆրանսիական հեղափոխության շրջանում ստեղծվեցին մի շարք հ., այդ թվում՝ «Հիմն ազատությանը», «Հիմն բանականությանը», և նշանավոր «Մարսելյոզը»: Կան նաև բազմաթիվ պաշտամունքային, կրոնական բովանդակություն ունեցող հ.:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱԿՈՐԴ (ռուս. основной аккорд) նույնն է՝ *ակորդի հիմնական դրություն:*

ՀԻՄՆԱԿԱՆ ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐ (ռուս. основные интервалы) իմաստով նույնն է՝ *պարզ ինտերվալներ:*


ՀԻՄՆԱԿԱՆ ՏՈՆ (ռուս. основной тон) 1) տես՝ *ակորդային տոներ,* 2) այն տոնը (հնչյունը), որն ստացվում է, երբ տատանվում է փողային նվագարանի մեջ գտնվող օդի սյունը՝ իր ամբողջ երկարությամբ:

ՀԻՄՆԱԿԱՆ ՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. основная тональность) նույնն է՝ *գլխավոր տոնայնություն* (1-ին իմաստով):

ՀԻՄՔ (ռուս. основание) ինտերվալի և ակորդի ներքևի հնչյունը (ձայնը): Տես՝ *գագաթ:*

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕԿՏԱՎԱ (ռուս. пятая октава) տես՝ *օկտավա* (2-րդ իմաստով):

ՀԻՆ ՀՈՒՆԱԿԱՆ ԼԱԴԵՐ (ռուս. древнегреческие лады) հին հունական երաժշտության *լադեր,* յուրաքանչյուր *լադի գամման* բաղկացած էր երկու *տետրախորդից,* ըստ որում հունական *տետրախորդները* (ինչպես *գամմանները*), ի տարբերություն մերի, կառուցվում էին վերից վար:



Այն *լադերը,* որոնք կառուցվում էին երկու միանման *տետրախորդներից,* համարվում էին հիմնական, դրանք էին *դորիականը, փռյուգիականը* և *լիդիականը* (պատկանում են *դիատոնիկ* թեքմանը): Տարբեր *տետրախորդներ* միացնելով և դրանք վեր կամ վար տեղափոխելով, ստացվում էին այլ *լադեր:* Այդ անուններով են կոչվել նաև *միջնադարյան լադերը* և *բնական լադերը,* չնայած կառուցվածքային տարբերությանը:


ՀԻՆ ՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ, նույնն է՝ *նախորդ կամ հին տոնայնություն:*

ՀԻՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲԱՆԱԼԻ, *սոլ բանալին*, դրված նոտակիրի առաջին գծի վրա: Տես՝ *բանալիներ:*

ՀԻՊՈ-ԼԱԴԵՐ (հուն. hypo՝ ներքևում, ցածից, ռուս. гипо-лады) *լադեր*, որոնց *գամմաներն* իրենցից ներկայացնում են նույն *միջնադարյան լադերը*, որոնք սակայն սկսվում և ավարտվում են իրենց հինգերորդ աստիճաններով, պահպանելով նախկին կայուն աստիճանները: Տես՝ *միջնադարյան լադեր:*

ՀԻՍՏՐԻՈՆ (լատ. histrio, ռուս. гистрион) 1) Հին Հռոմում դերասան, որը հանդես էր գալիս կատակերգություններում և ողբերգություններում, կենցաղային-կատակերգական ներկայացումներում, 2) վաղ միջնադարի արևմտաեվրոպական երկրների թափառաշրջիկ ժողովրդական պրոֆեսիոնալ երաժիշտ-դերասան, որը միաժամանակ տիրապետում էր մի շարք արվեստների (երգիչ, երաժիշտ, լարախաղաց, մարզիկ, գազան վարժեցնող և այլն): Հ. երբեմն միավորվում էին «եղբայրությունների» մեջ: Ֆրանսիայում հ. անվանում էին *ժոնգլյորներ*, Գերմանիայում հ. համապատասխանում էր *շպիլմանը*: Տես՝ *վագանտներ:*

ՀՆԳԱԳԻԾ (ռուս. нотный стан) *նոտակիր*, հինգ զուգահեռ հորիզոնական գծերի միակցությունը, որը հանդիսանում է նոտագրական տող: Գծերը համարակալվում են վարից վեր: Բացի հիմնական հ., գոյություն ունեն նաև



օժանդակ գծեր, հ. առաջին գծից դեպի ներքև և հինգերորդ գծից դեպի վերև: Հ. վրա պարզ երևում է հնչյունների շարժման ուղղությունը և դրանց *ինտերվալային* հարաբերակցությունը:

ՀՆԳԱՍՏԻՃԱՆ ԼԱԴ (ռուս. пятиступенный лад) տես՝ *պենտատոնիկա:*

ՀՆԳՅԱԿ, հինգ կատարողներից (երաժիշտ կամ երգիչ) բաղկացած անսամբլ, գործիքային հ. կարող են լինել նույնատիպ կազմի (լարային, փայտյա փողային, պղնձյա փողային) և խառը կազմի: Լարային հ. մեջ են մտնում 1-ին ջութակ, 2-րդ ջութակ, 1-ին ալտ, կամ երկու ջութակ, մեկ ալտ և երկու թավջութակ, խառը կազմի հ. ամենատարածվածը դաշնամուրային հ. է, բաղկացած լարային քառյակից և դաշնամուրից:

ՀՆՁԱՐԿՂ, *ձայնադարձային արկղ*, լարային նվագարանների (գործիքների) այն մասը, որը նման է այս կամ այն ձևն ունեցող արկղի (տուփի) և որի նշանակումն է ուժեղացնել և երանգավորել լարերի տատանումներից առաջացած հնչյունները: Նվագարանի (գործիքի) ամենահիմնական մասն է՝ *իրանը* (*կորպուսը*): Թառի և քյամանչայի հ. կոչվում է *չանախ*: Տես՝ *ձայնադարձություն:*

ՀՆՉԵՐԱՆԳ (ռուս. тембр) *տեմբր*, ձայնի այն հատկությունը, որի շնորհիվ զանազանում են տարբեր նվագարանների (գործիքների), տարբեր մարդկանց ձայները միմյանցից, հ. ձայնի բնորոշ «գույնն» է, որը կախված է *օբերտոնների* քանակից և հարաբերական ուժգնությունից, հնչող մարմնի նյութից, հնչեցման ձևից և մի շարք այլ հանգամանքներից ու պատճառներից: Յուրաքանչյուր ձայն ունի իր ուրույն հ., որով տարբերվում է մյուսներից: Գեղեցիկ, գրավիչ, հարուստ հ. էական նշանակություն ունի երաժշտական ստեղծագործության բովանդակությունն առավել գեղարվեստականորեն մատուցելու, ներկայացնելու համար:

ՀՆՁԵՓԵՆ (գերմ. Deke-ից՝ կափարիչ, խուփ, ռուս. дека) մի շարք լարային նվագարանների (գործիքների) հնչարկղների վերևի մասը, որի վրայից ձգվում են լարերը և որի վրա հաճախ լինում են ձայնադարձային անցքեր՝ *ձայնանցքեր:* Հ. պատրաստվում է փայտից (*ջութակ, կիթառ, ուդ* և այլն), կաշվից (*բանջո, թառ, քյամանչա* և այլն) և ծառայում է ձայներն ուժգնացնելուն և տարածելուն: Լարերի տատանումները հ. հաղորդվում են մեծ մասամբ *լարակալի* միջոցով: *Ռոյալի* հ. գտնվում է լարերի տակ, իսկ դաշնամուրինը՝ հետևում: Կան լարային նվագարաններ (գործիքներ), որոնց հնչարկղի տակի մասը պայմանականորեն կոչվում է *ստորին հնչերես* (ջութակի ընտանիք, կիթառ և այլն):

ՀՆՉՅՈՒՆ, նույնն է՝ *ձայն* (1-ին իմաստով):

ՀՆՉՅՈՒՆԱՇԱՐ, նույնն է՝ *ձայնաշար:*

ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ, նույնն է՝ *ձայների տարային նշանակում:*

ՀՈՒՐՈՅ (ֆր. hautbois-ից՝ բարձր փայտ, այսինքն, բարձր ձայնաստիճանի փայտյա փողային նվագարան, ռուս. гобой) *պիպիչավոր* կոնաձև փայտյա փողային նվագարան (գործիք), փողաբերանը քիչ ավելի լայնացրած, երկարությունը (առանց պիպիչի) 56—61 սմ. է: Հ. անմիջական նախորդն է համարվում Կովկասում և Միջին Ասիայում շատ տարածված *զուռնան:* Ստեղծվել է Ֆրանսիայում, XVII դ. սկզբին և լայն կիրառում գտել անսամբլներում և նվագախմբերի կազմում, հիմնականում որպես մենակատար նվագարան, մինչև XVIII դ. սկիզբը հ. ուներ միայն 2 *խփասարք*, հետագայում դրանց թիվն ավելացավ, իսկ 1844 թ. ձեռք բերեց *Բյոմի* սիստեմի *խփասարքային մեխանիզմ:* Հ. բաղկացած է միմյանց մեջ հագցվող երեք մասերից՝ հետզհետե լայնացող վերևի երկու մասերի վրա տեղադրված են *նվագանցքերը* և *խփասարքերը*, իսկ երրորդ մասը *փողաբերանն* է: Եղեգնյա կրկնակի *պիպիչը*, որի երկարությունը 6—7 սմ. է, մտցվո մ է փողի նեղ ծայրի անցքը: Թեկուզ փոքր-ինչ

բարձրացնել կամ իջեցնել հ. լարվածքը, հնարավոր չէ, ուստի նվագախմբի բոլոր երաժիշտները իրենց նվագարանները լարում են ըստ հ. *լյա* հնչյունի: Ձայնածավալն է՝ փոքր օկտավայի (*սի բեմոլ*-ից) *սի*-ից մինչև երրորդ օկտավայի. *ֆա*-ն (*սոլ*-ը)՝ b(h)—f^3(g^3): Սիմֆոնիկ և օպերային նվագախմբերում



սովորաբար օգտագործվում են 2—3 հ., որոնցից վերջինը հարկ եղած դեպքում հ. փոխարինում է *անգլիական փողակով*: Նոտագրվում է ջութակի բանալիով, ըստ իրական հնչողության: Տարատեսակներն են՝ *ալտային հ.* կամ *անգլիական փողակը*, *հ. դ'ամուրը*, որը հնչում է սովորականից փոքր տերցիա ցած, *բարիտոնային հ.*, որը հետագայում կատարելագործվեց և կոչվեց *հեկկելֆոն* և *փոքր հ.*, որը հանդիսանում է *հեկկելֆոնի* տարատեսակը և կոչվում է *հեկկելֆոն-պիկկոլո* կամ *փոքր հ.*:

ՀՈԲՈՅ Դ'ԱՄՈՒՐ (ֆր. hautbois d'amour՝ սիրո հոբոյ) տես՝ *հոբոյ*:

ՀՈԳԵՎՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. духовная музыка) կրոնական պաշտամունքի հետ կապված երաժշտություն, օր. եկեղեցական երաժշտությունը կամ կենցաղում կատարվող կրոնական բովանդակության երգեր՝ սաղմոսներ, աղոթքներ և այլն:

ՀՈԳԵՎՈՐ ՀԱՄԵՐԳՆԵՐ (ռուս. духовные концерты) Փարիզում 1725 թ. կոմպոզիտոր Ֆիլիդորի հիմնած համերգները, որոնք տրվում էին Թյուիլրիում, հոգևոր տոների ժամանակ: Հ. հ. ծրագիրը կազմվում էր հոգևոր երաժշտությունից և աշխարհիկ գործիքային ստեղծագործություններից, հ. հ. իրենց գոյությունը պահպանեցին մինչև 1791 թ.: Փարիզյան հ. հ. օրինակով նույնաբնույթ համերգներ կազմակերպվեցին նաև Լայպցիգում, Վիեննայում, Ստոկհոլմում:

ՀՈՄՈՖՈՆԻԱ (հուն. homos՝ հավասար, միատեսակ, phone՝ ձայն, հնչյուն, ռուս. гомофония) բազմաձայնության այն տեսակը, որում հիմնական մեղեդին (անկախ, թե որ ձայնում է գտնվում) ունի կարևորագույն նշանակություն, իսկ մնացած բոլոր ձայները՝ երկրորդական: Դրանք միայն ուղեկցում, նվագակցում են հիմնական մեղեդուն, որը հանդիսանում է երաժշտության գաղափարական բովանդակության հիմնական արտահայտիչը: Տես՝ *բազմաձայնություն*, *պոլիֆոնիա*, *մոնոդիա*:



ՀՈՄՈՖՈՆԻԿ ՁԵՎԵՐ (ռուս. гомофонические формы) տես՝ *երաժշտական ձև*:

ՀՈՌՆ (գերմ. Horn՝ եղջյուր) ազդանշանային փողային նվագարան (փող առանց *վենտիլի*), օգտագործվում է բանակում և պիոներական ճամբարներում:

ՀՈՌՆՊԱՅՊ (անգլ. horn՝ եղջյուր և pipe՝ փող) 1)անգլիական ժողովրդական փողային լեզվակային նվագարան,



2) անգլիական ժողովրդական պար, որը կատարվում է հ. նվագակցությամբ, չափը սկզբնական շրջանում 3/2, հետագայում՝ 2/4 կամ 4/4:

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ (ռուս. горизонталь) թե միաձայնուս, թե բազմաձայնում մեղեդի կազմող հնչյունների հաջորդականության պատկերավոր անվանումը: Բազմաձայնում դառնում է ակորդների հաջորդականություն: Տես՝ *ուղղաձիգ*:

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ-ՇԱՐԺԱԿԱՆ ԿՈՆՏՐԱՊՈՒՆԿՏ (ռուս. горизонтально подвижный контрапункт) տես՝ *շարժական կոնտրապունկտ*:

ՀՐԵՏԱՆԱՓՈՂ (ռուս. артилерийская труба) ազդանշանային փողային բնական նվագարան *ռե բեմոլ* լարվածքով (in Des), ձևով նման է բնական փողի (առանց *վենտիլների*), ձայնաշարը գրությամբ նույնն է, ինչ շեփորինը, սակայն հնչում է փոքր սեկունդա վեր: Տես՝ *բնական նվագարաններ*:

ՀՈՒՄՈՐԵՍԿ (գերմ. Humoreske, ռուս. юмореска) նվագարանի (գործիքի), անսամբլի կամ նվագախմբի համար գրված կատակային, երգիծական բնույթի երաժշտական փոքրածավալ ստեղծագործություն:

ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԳԱՄՄԱ (ռուս. венгерская гамма) ցածի *տետրախորդի* (2—3 կամ 3—4 աստիճանների միջև), և վերի *տետրախորդի* (6—7 աստիճանների միջև), մեծացրած սեկունդա պարունակող գամմայի պայմանական անվանումը: Այլ կերպ կոչվում է նաև *գընչուական գամմա*:



ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՊԱՐ (ռուս. венгерский танец) տես՝ *պալոտաշ*:

ՀՈՒՇԱՐԱՐ (ֆր. souffleur՝ փչել, հուշել, ռուս. суфлер) դերի տեքստը հուշող և ներկայացման ու փորձերի ընթացքին հետևող թատրոնի, երաժշտական թատրոնի աշխատակից, որը ներկայացման ժամանակ գտնվում է հուշարարական խցիկում:

Ձ

ՁԱՅՆ I (ռուս. звук) *հնչյուն*, լսողության օրգանով ընկալվող երևույթ, որն առաջանում է որևէ առաձգական մարմնի տատանումներից (ձգված լարի, ձգված կաշու, մետաղի, փողի մեջ գտնվող օդի սյան և այլն), ըստ որում մարդկային ականջն ընկալում է 16—20000 տատանումներ ունեցող ձայները: Ձ. ունի չորս հիմնական հատկանիշ՝ *բարձրություն, ուժգնություն, հնչերանգ (տեմբր)* և *տևողություն*: Ձ. լինում են երկու տեսակ՝ *երաժշտական* և *ոչ երաժշտական*, թեև երկուսն էլ օգտագործվում են երաժշտության մեջ: Երաժշտական են կոչվում որոշակի բարձրություն ունեցող ձայները, որոնց տատանումների թիվը հնչման ընթացքում մնում է անփոփոխ (ջութակ, կլարնետ, դաշնամուր և այլն): Ոչ երաժշտական ձ. որոշակի բարձրություն չունեն և կոչվում են աղմկային ձ. (փոքր և մեծ թմբուկներ, դափ, դհոլ, ծնծղա, կաստանյետ և այլն): Տես՝ *մասնակի հնչյուններ:*

ՁԱՅՆ II (ռուս. голос, партия) 1) տես՝ *երգչաձայն*, 2) բազմաձայնություն կազմող յուրաքանչյուր առանձին մելոդիկ գիծը (երկձայն երգ, եռաձայն ֆուգա, քառաձայն խմբերգ և այլն), 3) նվագախմբում, երգչախմբում և անսամբլում բազմաձայն երաժշտության առանձին ձայները (մելոդիկ գծերը) կատարող երգիչները, երաժիշտները կամ նրանց առանձին խմբերը. օր. երգչախմբերում՝ առաջին ձ., երկրորդ ձ. և այլն (այլ կերպ՝ սոպրանոներ, ալտեր և այլն), սիմֆոնիկ նվագախմբում՝ առաջին ջութակներ, երկրորդ ջութակներ, առաջին կլարնետ, երկրորդ ֆլեյտա և այլն, լարային քառյակում՝ առաջին ջութակ, երկրորդ ջութակ, ալտ, թավջութակ, 4) երգչախմբային, նվագախմբային և անսամբլային ստեղծագործությունների առանձին ձայների (պարտիաների) նոտաները: Տես՝ *պարտիա:*

ՁԱՅՆ III (ռուս. глас) հին հայկական երաժշտության տեսության մեջ՝ ութ տիպական մեղեդիները, որոնք ընկած էին հայկական հոգևոր և ժողովրդական երաժշտության հիմքում.

Առաջին ձայն — կրճատ՝ Ա՛ձ
Առաջին կողմ — կրճատ՝ Ա՛կ
Երկրորդ ձայն — կրճատ՝ Բ՛ձ
Երկրորդ կամ ավագ կողմ — կրճատ՝ Բ՛կ
Երրորդ ձայն — կրճատ՝ Գ՛ձ
Չորրորդ ձայն — կրճատ՝ Դ՛ձ
Չորրորդ կողմ կամ վերջձայն — կրճատ՝ Դ՛կ

ՁԱՅՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ, նույնն է՝ *երաժշտական ակուստիկա:*

ՁԱՅՆԱԳԻՐ (ռուս. фонограф) *ֆոնոգրաֆ*, հատուկ ապարատ, որով գրի են առնում և վերահնչեցնում ձայները (երգ, նվագ, խոսակցություն և այլն), լայն կիրառում է գտել ազգագրագիտության մեջ: Հայաստանում ժողովրդական երգեր գրի առնելու համար առաջինն օգտագործել է Սպ. Մելիքյանը: Հնարել է Թ. Ա. Էդիսոնը, 1877 թ.: Ձ. հիման վրա հետագայում ստեղծվել են *գրամոֆոնը* և ձայների մեխանիկական գրառման և վերահնչեցման մի շարք այլ ապարատներ: Տես՝ *ձայնագրվածք:*

ՁԱՅՆԱԳՐՎԱԾՔ (ռուս. фонограмма) *ֆոնոգրամ* 1) մոմե գլանիկ, որի վրա ձայնագրի միջոցով գրի է առնված հիմնականում երաժշտական բանահյուսություն և որի միջոցով վերահնչեցնում են գրի առնվածը, 2) ներկայումս այդպես է կոչվում նաև ձայնագրված ժապավենը: Տես՝ *ձայնագիր:*

ՁԱՅՆԱԴԱՐՁԱՅԻՆ ԱՆՑՔ (ռուս. резонаторное отверстие) նույնն է՝ *ձայնանցք:*

ՁԱՅՆԱԴԱՐՁԱՅԻՆ ԱՐԿՂ (ռուս. резонансный ящик) տես՝ *հնչարկղ:*

ՁԱՅՆԱԴԱՐՁԱՅԻՆ ԼԱՐԵՐ (ռուս. резонансовые струны) լարեր, որոնց չեն դիպչում նվագելիս, որոնք սակայն արձագանքում են հիմնական լարերի հնչմանը: Ձ. լ. սովորաբար գտնվում են նվագալարերի տակ և սկսում են տատանվել ինքնագրգռմամբ, երբ տատանման մեջ են դրվում նվագալարերը: Ձ. լ. նվագարանի (գործիքի) հնչերանգը հարստացնելու նպատակ են հետապնդում և յուրօրինակ գունավորում տալիս, որոշ չափով ուժգնացնում են ընդհանուր հնչողությունը:

ՁԱՅՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ (ռուս. резонанс) *ռեզոնանս*, ձայնի հնչման ուժեղացումը, որը հետևանք է հնչող մարմնի տատանումներն ավելի մեծ ծավալ կամ արձագանքող մակերես ունեցող մարմնին հաղորդելուն, օր. լարի տատանումները հաղորդվում են նվագարանի (գործիքի) *հնչարկղին* (ձայնադարձային արկղին), որն ուժգնացնում և երանգավորում է հնչյունները:

ՁԱՅՆԱԶԱՐԴՈՒԹՅՈՒՆ (լատ. ornamentum-ից՝ զարդ, զարդարանք, ռուս. орнаментика) հիմնական մեղեդին զարդարող մելոդիկ դարձվածքների (ձայնազարդերի) միակցությունը: Ձ. ընդգրկում է երկու տեսակի ձայնազարդեր՝ ա) *մելիզմներ*, բ) ավելի ազատ ձևի և ավելի մեծ քանակությամբ հնչյուններից կազմված մելոդիկ դարձվածքներ (ձայնազարդեր)՝ զանազան *ֆիգուրացումներ, ֆիորիտուրաներ, գամմայանման պասսաժներ* և այլն, որոնք սովորաբար գրի են առնվում փոքրիկ նոտաներով: Ձ. այս ձևն ընդունված է անվանել *բարդ մելիզմներ*, որոնք իրենց կայուն ձևը չունեն:

ՁԱՅՆԱԾԱՎԱԼ (հուն. dia pasón-ից՝ բոլոր լարերի վրա-

յով, ռուս. диапазон) *դիապազոն*, ձայների այն շարքը (ամենացածրից մինչև ամենաբարձրը), որը կարելի է հնչեցնել այս կամ այն նվագարանով (գործիքով), երգչաձայնով և այլն: Ձ. որոշվում է նրանց ամենաստորին և ամենավերին հնչյուններով, օր. դաշնամուրի ձ. է՝ *սուբկոնտրօկտավայի լա*-ից մինչև *հինգերորդ օկտավայի դո*-ն: Իրենց ձ. ունեն նաև երգչախմբերը, նվագախմբերը, անսամբլները և այլն:

ՁԱՅՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (ռուս. звуковая система) նույնն է՝ *երաժշտական սիստեմ:*

ՁԱՅՆԱԿԱՐԳ, նույնն է՝ *երաժշտական սիստեմ:*


ՁԱՅՆԱՀԱՆ (ռուս. звукосниматель, адаптер) էլեկտրամեխանիկական սարք, որով վերահնչեցնում են *ձայնասկավառակները*: Գրամոֆոնի վրա այն մասն է, որին ամրացրել են ասեղը:

ՁԱՅՆԱՀԱՏՎԱԾ, տես՝ *տեսիտուրա:*

ՁԱՅՆԱՆՑՔ (ռուս. голосник) մի շարք նվագարանների (հատկապես լարային) *հնչարկղների* վրա բացված մեկ կամ ավելի հատուկ *ձայնադարձային անցքերը*, որոնք լավացնում և ուժգնացնում են հնչողությունը: Տարբեր նվագարաններ ունենում են տարբեր ձևի և քանակի ձ., տարբեր է նաև դրանց դասավորությունը: Ջութակի ընտանիքին պատկանող նվագարանների ձ. կոչվում են *էֆեր:*

ՁԱՅՆԱՇԱՐ (ռուս. звукоряд) բոլոր այն հնչյունների հաջորդականությունը, որոնք կազմում են տվյալ *լադը* (լադի ձ.), *երաժշտական սիստեմը* (երաժշտական ձ.), մեղեդին (մեղեդու ձ.), կամ որոնք կարող են հնչեցվել տվյալ նվագարանով (նվագարանի ձ.), այս կամ այն կազմի երգչախմբով (երգչախմբի ձ.) և այլն: Տես՝ *բնական ձայնաշար, լադի ձայնաշար, լադի գամմա:*

ՁԱՅՆԱՄՈՒԹՅՈՒՆ (ռուս. органный пункт) բասում երկարատև ձգվող կամ բազմիցս կրկնվող հնչյուն, որի ժամանակ վերևի ձայները շարունակում են իրենց շաղկապված և օրինաչափ շարժումը տարբեր *ակորդներով* կամ *կոնտրապունկտող* ձայներով, անկախ նրանից, թե այդ բասային հնչյունը մտնում է վերևի ձայներում հնչող *ակորդի* մեջ, թե՝ ոչ: Ձ. ժամանակ վերևի ձայներում կարող են տեղի ունենալ նաև *զարտուղություններ* (անցում, շեղում) դեպի առաջին աստիճանի, երբեմն էլ՝ ավելի հեռու ազգակցության մեջ գտնվող տոնայնություններ: Որպես ձ. առավելապես կիրառվում են *տոնիկան* և *դոմինանտան*, հազվադեպ՝ այլ աստիճաններ, օր. *մեդիանտան* կամ *սուբդոմինանտան*: Տոնիկայի ձ. սովորաբար կիրառվում է. ա) ստեղծագործության սկզբում, որի ժամանակ տեղի է ունենում ուժերի կուտակում՝ երաժշտության հետագա զարգացման համար և բ) ստեղծագործության վերջում՝ շարժման իներցիան կասեցնելու նպատակով: *Դոմինանտայի* ձ. սրում, ավելի լարված է դարձնում ֆունկցիաների անկայունությունը, դրանով իսկ չափազանց ուժեղացնելով *տոնիկայի* հանդես գալու անհրաժեշտությունը: Հաճախ օգտագործվում է ստեղծագործության սկզբնանվագում, կամ ստեղծագործության միջում՝ *տոնիկայի* հանդես գալուց առաջ





(*սոնատային ալեգրոյում ռեպրիզայից* և *կոդայից* առաջ, ինչպես նաև *ռեպրիզայի* միջում՝ *օժանդակ պարտիայից* առաջ): Կիրառվում է նաև միաժամանակ կամ հաջորդաբար հնչող *տոնիկա-դոմինանտային* կրկնակի ձ.: Ձ. կարող է լինել ձևավորված (ֆիգուրացված): Ձ. է համարվում նաև *օստինատային բասը:* Ձ. կարող է լինել նաև վերևի ձայներում:

ՁԱՅՆԱՈՒԱՇՄԱՆ (ռուս. регистр, լատ. registrum՝ ցուցակ, ցանկ) *ռեգիստր*, 1) երգչաձայնի կամ նվագարանի *ձայնածավալի* տարբեր հատվածներ, որոնք իրարից տարբերվում են բարձրությամբ, *հնչերանգով (տեմբրով)*, լարվածությամբ և այլն: Սովորաբար նվագարանների *ձայնածավալները* բաժանվում են ստորին,

միջին և վերին (բարձր) ձ., իսկ երգչաձայներինը՝ կըրծքային, միջին և գլխային (ֆ ա լ ց ե տ), 2) տարբեր բարձրություն ունեցող փողերի (երգեհոն), լարերի (կլավեսին) և լեզվակների (ֆիսհարմոն) առանձին խմբեր, որոնք ունեն միևնույն հ ն չ ե ր ա ն գ ը (տեմբրը):

ՁԱՅՆԱՍԱՆԴԱԿ (ռուս. шкала (скала) звуков) 1) նույնն է՝ *ձայնաշար*, 2) որոշ դեպքերում՝ երաժշտության մեջ օգտագործվող կայուն բարձրության բոլոր հնչյունների ձ ա յ ն ա շ ա ր ը:

ՁԱՅՆԱՄԻՏԵՄ (ռուս. музыкальная система) տես՝ *երաժշտական սիստեմ* (2-րդ իմաստով):

ՁԱՅՆԱԿԱՎԱՌԱԿ (ռուս. пластинка) պլաստմասսայից կամ հատուկ այլ նյութից պատրաստված բարակ սկավառակ (200—300 մմ տրամագծով), որի յուրաքանչյուր կողմում արված պարուրագիծրակոսը հանդիսանում է ձայների (երաժշտության, խոսքի) մեխանիկական ձայնակիրը: Երբ ձայնահանի ասեղը որոշ արագությամբ սահում է ակոսով, հնչում է մեխանիկական ճանապարհով ձայնագրվածը: Ձ. լինում են տարբեր չափերի՝ փոքր, միջին և մեծ (գիգանտ):

ՁԱՅՆԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. голосоведение) 1) բազմաձայն երաժշտության մեջ յուրաքանչյուր ձայնի շարժումը որոշ սկզբունքներով և կանոններով, որոնք մշակվել են գեղարվեստական պրակտիկայում, 2) ձայների համատեղ շարժման ձևերը, այն է՝ ա) *ձայների ուղիղ շարժում*, երբ երկու ձայներն էլ շարժվում են նույն ուղղությամբ (վեր կամ վար), բայց տարբեր ի ն տ ե ր վ ա լ ն ե ր ո վ, բ) *ձայների զուգահեռ շարժում*, երբ երկու ձայներն էլ շարժվում են նույն ուղղությամբ և նույն ի ն տ ե ր վ ա լ ն ե ր ո վ, գ) *ձայների շեղ շարժում*, երբ ձայներից մեկը մնում է տեղում (անշարժ), իսկ մյուսը շարժվում է վեր կամ վար, դ) *ձայների հակառակ շարժում*, երբ ձայները շարժվում են հակառակ ուղություններով՝ մեկը վեր, մյուսը՝ վար: Ձայների համատեղ շարժման այս ձևերը այլ կերպ կոչվում են *ուղիղ ձ., զուգահեռ ձ., շեղ ձ., հակառակ ձ.*:



ՁԱՅՆԵՐԻ ԶՈՒԳԱՀԵՌ ՇԱՐԺՈՒՄ (ռուս. параллельное движение голосов) տես՝ *ձայնատարություն* (2-րդ իմաստով):

ՁԱՅՆԵՐԻ ՀԱԿԱՌԱԿ ՇԱՐԺՈՒՄ (ռուս. противоположное движение голосов) տես՝ *ձայնատարություն* (2-րդ իմաստով):

ՁԱՅՆԵՐԻ ՇԵՂ ՇԱՐԺՈՒՄ (ռուս. косвенное движение голосов) տես՝ *ձայնատարություն* (2-րդ իմաստով):

ՁԱՅՆԵՐԻ ՎԱՆԿԱՅԻՆ ԱՆՈՒՆՆԵՐ (ռուս. слоговое название звуков) տես՝ *սոլմիզացիա*:

ՁԱՅՆԵՐԻ ՏԱՌԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ (ռուս. буквенное обозначение звуков), երաժշտության մեջ օգտագործվող տարբեր բարձրության հնչյունների նշանակումը տառերով, որը կիրառվել է դեռևս Հին Հունաստանում: Եվրոպայում սկսած X դ. երաժշտական ձայները նշանակում են լատինական տառերով՝ a — b — c — d — e — f g: Դարերի ընթացքում ձայների տառային նշանակման ձևը մի շարք փոփոխությունների է ենթարկվել և իր ժամանակակից տեսքն ընդունել XVII դ. սկզբին: Այդ ժամանակաշրջանում «b» հնչյունը սկսել են օգտագործել երկու կերպ՝ ավելի ցածր հնչող «b»-ն կոչվում էր «b» mollis կամ «b» rotundum (փափուկ «b» կամ՝ կլոր «b»)՝ ֆրանսերեն — b-moll, որտեղից և առաջացել է *բեմոլ* տերմինը: Ավելի բարձր հնչող «b»-ն կոչվում էր «b» durum, կամ «b» quadratum (կոշտ «b» կամ քառակուսի «b»)՝ ֆրանսերեն b-carré, որտեղից և առաջացել է *բեկար* տերմինը: Հետագայում բարձր «b»-ն, այսինքն *սի* հնչյունը նշանակեցին «h» տառով, իսկ ցածրի (*սի բեմոլի*) համար պահեցին «b» տառը: *Ալտերացված* հնչյունները նշանակվում են հետևյալ կերպ. *դիեզի* դեպքում տառին ավելացվում է is վանկը, իսկ *դուբլ-դիեզի* դեպքում՝ isis վանկերը, օր. c, cis, cisis (*դո, դո դիեզ, դո դուբլ-դիեզ*) և այլն: *Բեմոլի* դեպքում տառին ավելացվում է es վանկը, իսկ *դուբլ-բեմոլի* դեպքում՝ eses վանկերը, բացառությամբ *մի բեմոլի* և *մի դուբլ-բեմոլի*, որոնք նշանակվում են ուղղակի es և eses վանկերով, *լա բեմոլի* և *լա դուբլ-բեմոլի*, որոնք նշանակվում են as և asas վանկերով, *սի բեմոլի* և *սի դուբլ-բեմոլի*, որոնք նշանակվում են b և bb (կամ՝ bes) տառերով, օր. d, des, deses (*ռե, ռե բեմոլ, ռե դուբլ-բեմոլ*): Երաժշտական ձայնաշարի փոքր *օկտավայի* հնչյունները նշանակվում են փոքրատառերով՝ c, d, e, f և այլն: Առաջինից հինգերորդ *օկտավայի* հնչյունները նշանակելիս փոքրատառերի վերևից դրվում են համապատասխան քանակի հորիզոնական գծիկներ, կամ վերևի աջ կողմից հայերենի շեշտ կետադրական նշանի նման (՛) գծիկներ, կամ այդ նշանների քանակին համապատասխան թվանշաններ, օր. առաջին *օկտավայի ռե*-ն կարելի է նշանակել d, կամ d՛, կամ d^1, երրորդ *օկտավայի լա*-ն՝ $\bar{\bar{a}}$, կամ $\bar{\bar{\bar{a}}}$, կամ a^3 և այլն: Մեծ *օկտավայի* հնչյունները նշանակվում են մեծատառերով՝ C, D, E և այլն: *Կոնտրօկտավայինը*՝ նշանակելիս մեծատառերի տակից դրվում է մեկ հորիզոնական գծիկ, կամ տառի ներքևից 1 թվանշանը: *Սուբկոնտրօկտավայինը* նշանակելիս երկու գծիկ կամ 2 թվանշան. օր. G, կամ G_1, A, կամ A_2 և այլն:

ՁԱՅՆԱՀԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԱԼՏԵՐՆԱՏԻՎ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

վանկային	տառային	վանկային	տառային
դո	C	ֆա բեմոլ	fes
դո դիեզ	cis	սոլ	g
դո դուբլդիեզ	cisis	սոլ դիեզ	gis
դո բեմոլ	ces	սոլ դուբլդիեզ	gisis
ռե	d	սոլ բեմոլ	ges
ռե դիեզ	dis	սոլ դուբլբեմոլ	geses
ռե դուբլդիեզ	disis	լյա	a
ռե բեմոլ	des	լյա դիեզ	ais
ռե դուբլբեմոլ	deses	լյա դուբլդիեզ	aisis
մի	e	լյա բեմոլ	as
մի դիեզ	eis	լյա դուբլբեմոլ	asas
մի բեմոլ	es	սի	h
մի դուբլբեմոլ	eses	սի դիեզ	his
ֆա	f	սի բեմոլ	b
ֆա դիեզ	fis	սի դուբլբեմոլ	bes կամ Bb
ֆա դուբլդիեզ	fisis		

տես՝ *ձայների վանկային անվանում, սոլմիզացիա:*

ՁԱՅՆԵՐԻ ՈՒՂՂ ՇԱՐԺՈՒՄ (ռուս. прямое движение голосов) տես՝ *ձայնատարություն* (2-րդ իմաստով):

ՁԱՅՆԻ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. высота звука) տես՝ *բարձրություն:*

ՁԱՅՆԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ռուս. свойства звука) տես՝ *ձայն* I:

ՁԱՅՆԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. длительность звука) այն ժամանակամիջոցը, որի ընթացքում հնչում է տվյալ ձայնը: Ձ. տ. բացարձակ մեծությունները չափվում են ժամանակի չափերով՝ վայրկյան, րոպե և այլն: Երաժշտության մեջ կարևորագույն արտահայտչական նշանակություն ունի ձ. տ. հարաբերական մեծությունը, որն արտահայտում է հնչյունների հարաբերակցությունն ըստ տևողության: Տես՝ *ձայն* I, *նոտաներ* (1-ին իմաստով):

ՁԱՅՆԻ ՈՒԺԳՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. громкость (сила) звука) տես՝ *ուժգնություն:*

ՁԱՅՆՈՑ (ռուս. камертон) երաժշտական ձայնի բարձրության էտալոնը (չափօրինակը), որն իրենից ներկայացնում է պողպատյա երկմատնյա փոքրիկ գործիք, միաձույլ պողպատե կոթով. հարվածելիս կամ երկմատնյայի ծայրերը միաժամանակ կսմթելիս, տատանվում և արձակում է միշտ միևնույն բարձրությունն ունեցող հնչյունը, որով օգտվում են նվագարանները (գործիքները) լարելիս, *ա կապելլա* երգեցողության ժամանակ: Ձ. հիմնական



նում ունենում են a^1 (առաջին *օկտավայի լյա*) բարձրությունը: Տարբեր ժամանակներում և երկրներում այդ *լյա* հնչյունի համար սահմանված են եղել տարբեր քանակի տատանումներ (մոտավորապես 420 — 456 տատանում մեկ վայրկյանում): ԽՍՀՄ-ում, 1936 թ. հունվարի 1-ից առաջին *օկտավայի լյա*-ի համար սահմանված է վայրկյանում 440 տատանում: Երգիչները և խմբավարները օգտագործում են նաև c^2 (երկրորդ *օկտավայի դո*) բարձրություն ունեցող ձ.: Կան նաև *խրոմատիկ* ձ.: Ձ. հնարել է անգլիացի երաժիշտ Ջ. Շորը, 1711 թ.: Հետագայում սկսեցին օգտագործել նաև լեզվակային (փչովի) ձ.: Տես՝ *կամերտոն:*

ՁԳՏՈՂ ՏՈՆ (ռուս. вводный тон) *լադի* յոթերորդ աստիճանը: Բնական, հարմոնիկ և կրկնակի հարմոնիկ մաժորի և հարմոնիկ, կրկնակի հարմոնիկ և մելոդիկ մինորի ձ. տ. սուր կերպով ձգտում են դեպի *տոնիկան*, որովհետև գտնվում են նրանից փոքր սեկունդա ցածր: Ձ. տ. վրա կառուցված ակորդները կատարում են *դոմինանտային ֆունկցիա:* Տես՝ *վերին ձգտող տոն, լադի աստիճանների անուններ:*


ՁՈՆ (ռուս. посвящение) գրական կամ երաժշտական ստեղծագործության սկզբում ընծայական ուղերձ, նվիրված որևէ մեկին, որպես սիրո և հարգանքի նշան, օր. ջութակի և դաշնամուրի համար իր №9 սոնատը Բեթհովենը ձոնել է հայտնի ջութակահար Ռ. Կրայցերին (այստեղից էլ՝ «Կրայցերյան սոնատ» անվանումը):

ՁԵՎ (ռուս. форма) տես՝ *երաժշտական ձև:*

Ղ

ՂԱՋԱԽ, ադրբեջանական ժողովրդական տղամարդկանց խմբապար, վերջում արագացող աշխույժ տեմպով, չափը՝ 6/8:

ՂԱՎԱԼ (ռուս. хавал) 1) հարվածային նվագարան Դա-



ղըստանում, երկկողմանի թմբուկի մի տեսակը: 2) հայկական և ադրբեջանական հարվածային նվագարան: Տես՝ դափ:

Ճ

ՃՉԱՆԱԿ (ռուս. трещотка) հարվածային նվագարան, որը իրենից ներկայացնում է թոկի վրա շարված մի շարք փայտյա թիթեղիկներ (20 և ավելի): Ճ. նվագողը բռնում է թոկի երկու ծայրերից և հարվածի միջոցով արտաբերում չոր, շրխկան հնչյուններ, օգտագործվում է ժողովրդական պարերի ռիթմիկ նվագակցության համար, տարածված է տարբեր ժողովուրդների երաժշտական կենցաղում:

Մ

ՄԱԴՐԻԳԱԼ (իտ. madrigale) սկզբում միաձայն, իսկ XVI դ. բազմաձայն աշխարհիկ երգ, որ երգվում էր մայրենի լեզվով (ի տարբերություն լատիներեն երգվող հոգևոր բնույթի երգերից) և ուներ սիրային-քնարական բովանդակություն: Հետագայում մտցվեց նաև գործիքային նվագակցություն: Մ. դրամատիզացման հետևանքով (XVI դ. վերջում) ստեղծվեց *մադրիգալային կոմեդիան*, որը հանդիսացավ օպերային ժանրի սկզբնաղբյուրներից մեկը:


ՄԱԴՐԻԳԱԼԵՏՏՈ (իտ. madrigaletto) փոքրիկ մադրիգալ:

ՄԱԵՍՏՐՈ (իտ. maestro՝ վարպետ, ուսուցիչ, ռուս. маэстро) արվեստի տարբեր բնագավառների ականավոր գործիչների պատվավոր անվանումը:

ՄԱԶՈՒՐ, տես՝ *մազուրկա:*

ՄԱԶՈՒՐԵԿ, տես՝ *մազուրկա:*

ՄԱԶՈՒՐԿԱ (լեհ. mazur՝ Մազովիայում ապրող լեհեր) մազուրների ժողովրդական պար 3/4 կամ 3/8 չափով, որը հետագայում դարձավ համալեհական սիրված և ամենաարտահայտիչ պարերից մեկը: Լեհերն այդ պարը կոչում են նաև *մազուր* կամ *մազուրեկ*: Մ. տեմպը կարող է լինել չափավորից մինչև սրընթաց, բնորոշվում է սուր




(հատու) ռիթմով, հատկապես տակտի թույլ՝ երկրորդ կամ երրորդ մասերի շեշտվածությամբ: XIX դ. մեծ տարածում գտավ բազմաթիվ երկրներում, որպես պարահանդեսային պար: Մ. ձևն օգտագործված է բազմաթիվ կոմպոզիտորների կողմից, օպերաներում, բալետներում և այլ ստեղծագործություններում:

ՄԱԺՈՐ (իտ. maggiore՝ մեծ) այսպես են կոչվում՝ ա) այն *լադերն* ու տոնայնությունները, որոնց I և III աստիճանները կազմում են մեծ *տերցիա*, բ) այն եռահնչյունը, որի կայուն ձայները կազմում են *մաժոր* եռահնչյուն:

ՄԱԺՈՐ ԱԿՈՐԴ (ռուս. мажорный аккорд) նույնն է՝ *մաժոր եռահնչյուն:*


ՄԱԺՈՐ ԵՌՀՆՉՅՈՒՆ (ռուս. мажорное трезвучие) տես՝ *եռահնչյուն:*

ՄԱԺՈՐ ԼԱԴ (ռուս. мажорный лад) յոթնաստիճան *լադ*, որի I և III աստիճանները կազմում են մեծ *տերցիա* և I աստիճանի վրա կառուցված եռահնչյունը *մաժոր* է: Մ. լ. ունի չորս տարատեսակ՝ ա) *բնական մ. լ.*,



բ) *հարմոնիկ մ. լ.*, որի VI աստիճանը բնականի համեմատությամբ ցածր է, գ) *կրկնակի հարմոնիկ մ. լ.*, որի II և VI աստիճանները ցածր են (իջեցված են), դ) *մելոդիկ մ. լ.*, որի VI և VII աստիճանները ցածր են (իջեցված են):


ՄԱԼԱԳՈՒԵՆՅԱ (իսպ. malagueña, Malaga-ից՝ իսպանական մարզի անունը, ռուս. малагуэнья) *մալագենյա*, իսպանական ժողովրդական արագ երգ-պար, 3/8 կամ 3/4



չափով: Պարողը (իբր՝ ցլամարտիկը) ամեն կերպ աշխատում է տեսնել պարուհու դեմքը, իսկ պարուհին ջանում է թաքցնել դեմքը պարողի հայացքից: Պարն ընդմիջվում է երգով:

ՄԱՅՍՏԵՐԶԻՆԳԵՐ (գերմ. Meisterzinger՝ վարպետ երգիչ ռուս. майстерзингер) միջնադարյան Գերմանիայում՝ երաժշտության երկրպագու համքարային արհեստավորը, որը միաժամանակ բանաստեղծ, երգ հորինող և երգիչ էր, հանդիսանում էր իր նման երաժշտասերների գրական-


երաժշտական ընկերության անդամ: Մ. երգերը միաձայն էին, նվագակցությունն արգելվում էր, նախքան մ. կոչմանը հասնելը, հարկ էր անցնել փորձությունների տեվական շրջան: XIV — XV դդ. մ. ստեղծագործություննե-



րը կարող էին ունենալ միայն կրոնական բովանդակություն, իսկ ռեֆորմացիայի շրջանում (XVI դ.) քաղաքային մշակույթի ընդհանուր վերելքի հետ մեկտեղ փոխվեց նաև մ. պոեզիայի բովանդակությունը, դարձավ ազատ և բազմակողմանի, հանդես եկան պատմա-հերոսական, կենցաղային և այլ թեմաներ: «Նյուրնբերգյան մայստերզինգերները» օպերայում Ռ. Վագները, փառաբանելով մ. արվեստը, միաժամանակ ծաղրում է նրանցից շատերին հատուկ քաղքենիական մանրախնդրությունը: XVI դ. վերջից սկսվում է մ. արվեստի անկումը:

ՄԱՆԴԱԼԱ (իտ. mandola) նաև՝ *մանդորա, պանդուրա, լյուտնյայից* սերված հնագույն կսմիթային նվագարան, ավելի փոքր *հնչարկղով*, կարճ և լայն բ ռ ն ա կ ո թ ով: Մ ա ն դ ո լ ի ն ի նվագախմբային տարատեսակներից մեկը նույնպես կոչվում է մ.:

ՄԱՆԴՈԼԻՆ (իտ. mandolino, mandola-ի փոքրացուցիչը, փոքր մանդոլա) իտալական ժողովրդական կսմիթային նվագարան, որ սերել է *լյուտնյայից*, ստեղծվել ու վերջնական ձևավորումը ստացել է XVI — XVII դդ: Սկսած XVIII—XIX դդ մ. դարձավ աշխարհի բազմաթիվ երկրների ամենաժողովրդական նվագարաններից մեկը: Կան մի քանի տեսակի մ., որոնք տարբերվում են լարերի քանակով, լ ա ր վ ա ծ ք ո վ և արտաքին ձևով, ամենատարածվածը *նեապոլյան մ.* է, որի հնչարկղը նման է փոքրածավալ *ուդի:* Ունի չորս զույգ մետաղյա լարեր, որոնք լարվում են ջութակի նման, նվագում են *հարիչով*, նոտա-



գրվում է ջութակի բանալիով, օգտագործվում է որպես մենանվագային, անսամբլային և նվագախմբային նվագարան: Իտալիայում և մի շարք այլ երկրներում գոյություն ունեն մ. և *կիթառներից* կազմված, այսպես կոչված *նեապոլյան նվագախմբեր:* Կան մ. նվագախմբային տարատեսակները՝ *ալտային մ.* (լարվում է ա լ տ ի պես), *մանդոլա* (լարվում է ջ ու թ ա կ ի մեկ օ կ տ ա վ ա ցածր), *մանդոլոնչելլո* (լարվում է թ ա վ ջ ու թ ա կ ի պես) և *մանդոլոնա* (լարվում է կ ո ն տ ր ա բ ա ս ի պես):

ՄԱՆԴՈԼՈՆԱ, տես՝ *մանդոլին:*

ՄԱՆԴՈԼՈՆՉԵԼԼՈ, տես՝ *մանդոլին:*

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ, տես՝ *երաժշտական դպրոց:*

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՄԲԵՐ (ռուս. **детские певческие голоса**) պրոֆեսիոնալ երգչախմբերում *սոպրանոների* և *ալտերի* պարտիաները կատարող 8—14 տարեկան տղաների՝ *դիսկանտ* և *ալտ* կոչվող երգչաձայները: Իրենց յուրօրինակ հ ն չ ե ր ա ն գ ով, կատարողական լայն հնարավորություններով մ. ե. կարևոր դեր ունեն երգչախմբային արվեստում: ԽՍՀՄ-ում կան հատուկ երգչախմբային ուսումնարաններ, որտեղ փոքրահասակ տղա-երգիչները ստանում են համապատասխան մասնագիտական կրթություն:

ՄԱՆԿԱԿԱՆ ՁԱՅՆԵՐ, նույնն է՝ *մանկական երգչաձայներ:*

ՄԱՆՐԱՆՎԱԳ (ռուս. **миниатюра (инструментальная)**) որևէ նվագարանի (գործիքի), անսամբլի կամ նվագախմբի համար գրված, համեմատաբար փոքր *պիես*, որը սովորաբար բնորոշվում է յուրօրինակ գեղեցկությամբ, գուներությամբ և ցայտուն արտահայտչականությամբ: Տես՝ *մանրերգ, մինիատյուր:*

ՄԱՆՐ ԴԵՏԱՇԵ (ֆր. **petit détaché**, ռուս. **мелкое деташе**) *դետաշե*, որը կիրառելիս օգտագործվում է աղեղի հնարավորին չափ փոքր հատվածը՝ հիմնականում գլխիկի մոտ: Հատու շեշտված և յուրաքանչյուր նոտայից հետո կանգառներով մ. դ. կոչվում է *մարտելե:*

ՄԱՆՐԵՐԳ (ռուս. **миниатюра (вокальная)**) վոկալ ստեղծագործություն, որը տարբերվում է ոչ միայն իր ծավալի համեմատական փոքրությամբ, այլև ինքնատիպ գեղեցկությամբ և յուրօրինակ արտահայտչականությամբ (Ռ. Մելիքյանի «Ջառ-վառ» մ. շարքը): Տես՝ *մանրանվագ, մինիատյուր:*

ՄԱՆՈՒԱԼՆԵՐ (լատ. **manualis**-ից՝ ձեռքի, ռուս. **мануалы**) 1) *երգեհոնի* այն ստեղնաշարերը, որոնց վրա նվագում են ձեռքերով (ի տարբերություն *ոտնակի*, այլ կերպ՝ *ոտնաստեղնաշարի*): Երգեհոնի մ. թիվը կարող է հասնել հինգի, մ. դասավորվում են աստիճանաձև, 2) մ. են կոչվում նաև *ֆիսհարմոնի* և *կլավեսինի* ստեղնաշարերը:

ՄԱՍ (ռուս. **часть**) երաժշտական ստեղծագործության կազմի մեջ մտնող պիեսներից յուրաքանչյուրը, ց ի կ լ ա յ ի ն ձ և ի ինքնուրույն բաժիններից յուրաքանչյուրը, որն ունի յուրահատուկ տեմպ, տոնայնություն և որոշակի ձև, նշանակվում է հերթական համարով, (օր.՝ ս ո ն ա տ ի 1-ին մասը), տ ե մ պ ի անունով (օր.՝ ա ն դ ա ն տ ե սիմֆոնիայից), ժանրի անունով (օր. սկերցո լարային կվարտետից): Սովորաբար յուրաքանչյուր մաս ունի ավարտված բնույթ և հաջորդ մասից բաժանվում է փոքր դադարով: Երբեմն մ. չի ունենում լրիվ եզրափակում և անմիջականորեն անցնում է հաջորդին: Այս տերմինը օգտա-

գործվում է նաև երաժշտական կառուցվածքի քիչ թե շատ ավարտուն բաժնի վերաբերյալ:

ՄԱՍՆԱԿԻ ՀՆՉՅՈՒՆՆԵՐ (ռուս. частичные звуки) տես՝ *օբերտոններ:*

ՄԱՍՆԱԿԻ ՏՈՆԵՐ (ռուս. частичные тоны) տես՝ *օբերտոններ:*

ՄԱՍՆԱՏՈՒՄ (ռուս. дробление) որևէ կառուցվածքի և նրան հաջորդող երկու կամ ավելի կարճ կառուցվածքների (որոնք գումարով հաճախ հավասար են այդ կառուցվածքին) հաջորդականությունը:

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԵՐԳ (ռուս. массовая песня) երգ, որը նախատեսված է ժողովրդական լայն զանգվածների մեջ տարածելու համար: Մ. ե. խորհրդային դարաշրջանի արգասիք է, տարածում գտած նաև սոցիալիստական երկրներում: Բովանդակության ժողովրդայնությունը, ազգային վառ կոլորիտը, հանրամատչելիությունը թույլ են տալիս մ. ե. դիտել որպես դասական վոկալ բանահյուսության և հեղափոխական երգի շարունակությունն ու զարգացումը: Մ. ե. երաժշտական ձևը *կուպլետային է* (պարզ պարբերություն, կամ՝ երկմասանի կառուցվածք), սովորաբար իրար են հաջորդում մեներգիչն ու երգչախումբը:

ՄԱՏԱԴՐՈՒՄ (լատ. applico-ից՝ սեղմում եմ, գերմ. Applikatur, ռուս. аппликатура) *ապլիկատուրա*, մատների դասավորությունը և օգտագործման հաջորդականությունը նվագելիս: Կատարողական արվեստում մ. շատ կարևոր նշանակություն ունի. հարմար մ. հնարավորություն է տալիս կատարողին նվազագույն ուժ գործադրելով, հաղթահարել թե տեխնիկական, թե ստեղծագործական բարդություններ: Մ. ընտրությունը կախված է մի կողմից՝ կատարվելիք ստեղծագործության մեկնաբանումից, մյուս կողմից՝ կատարողի ֆիզիկական և տեխնիկական հնարավորություններից: Ամենահեշտ մ. ունեն երեք կամ չորս վենտիլանոց պղնձյա փողային նվագարանները (գործիքները), քիչ ավելի դժվար է փայտյա փողայիններինը և բարդ ու դժվարին է ստեղնային և լարային նվագարաններինը: Մ. նշվում է արաբական թվանշաններով, որոնք դրվում են նոտաներից քիչ վեր կամ վար:

ՄԱՏԼՈՏ (Ֆր. matelote, matelot-ից՝ նավաստի) Ֆրանսիական նավաստիների աշխույժ դռփապար, 2/4 կամ C չափով, տարածված էր XIX դ. որպես ժանրային պար, XX դ. դարձավ պարահանդեսային և էստրադային պար:



ՄԱՏՆԱՁԱՐԿ (Ֆր. toucher-ից՝ ձեռք տալ, դիպչել, ռուս. туше) *զարկեղանակ, նվագազարկ*, դաշնամուրի ստեղներին մատներով զարկելու (սեղմելու) եղանակը, որից մեծ չափով կախված է հնչման որակը: Յուրաքանչյուր դաշնակահար ունի իր ուրույն մ., որը կախված է նրա բնական տվյալներից, գեղարվեստական հակումներից և մի շարք այլ հանգամանքներից:

ՄԱՏՆԱՇԵՄՆԵՐ (ռուս. лады) մի շարք լարային նվագարանների (գործիքների) նվագակոթին ամրացված փայտյա, մետաղյա կամ ոսկրե փոքրիկ, բարակ ձողիկներ, որոնց սեղմվելիս, լարը փոխում է իր երկարությունը և ձայնի բարձրությունը: Ամրացված մ. ունեցող նվագարանների (գործիքների) լարվածքն ու ձայնաշարը մշտական են, անփոփոխ (*բալալայկա, մանդոլին, կիթառ* և այլն): Կան նաև փաթաթովի մ. (աղելարով, աբրեշումե թելով, ձիու մազով), որոնք քիչ վեր կամ վար շարժելով, փոփոխում են նվագարանի լարվածքն ու ձայնաշարը (օր.՝ *թառինը):*

ՄԱՐՏԵԼԱՏՈ (իտ. martellato՝ մուրճով հարվածել) նույնն է՝ *մարտելե:*

ՄԱՐՏԵԼԵ (Ֆր. martele՝ որոշակիորեն շեշտել) փոքրիկ մուրճիկի հարվածներ հիշեցնող շեշտված *ստակատո*, բնորոշ է աղեղնային նվագարաններին (գործիքներին): Նշանակվում է սեպաձև ու երկարացված կետերով, որոնք դրվում են նոտաներից քիչ վեր կամ վար, սուր կողմով դեպի նոտան, ինչպես նաև martele բառով: Տես՝ *մանր դետաշե:*

ՄԱՔՍԻՄԱ (ռուս. максима) տես՝ *մենզուրալ նոտագրություն:*

ՄԱՔՈՒՐ (ռուս. чистый) *պրիմայի, կվարտայի, կվինտայի, օկտավայի, ունդեցիմայի, դուոդեցիմայի, կվինտդեցիմայի դիատոնիկ* տարատեսակի անվանումը:

ՄԱՔՈՒՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. чистая музыка) նույնն է՝ *բացարձակ երաժշտություն:*

ՄԱՔՈՒՐ ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐ (ռուս. чистые интервалы) պարզ և բարդ մաքուր *պրիմայի, կվարտայի, կվինտայի* և *օկտավայի* ընդհանուր անվանումը: Տես՝ *ինտերվալ, բարդ ինտերվալներ, ինտերվալների աղյուսակ:*

ՄԱՔՈՒՐ ԼԱՐՎԱԾՔ (ռուս. чистый строй) տես՝ *լարվածք:*

ՄԵԴԻԱՆՏԱ (լատ. media-ից՝ միջինը) *մաժոր* և *մինոր լադերի* երրորդ և վեցերորդ աստիճանը: Մ. վրա կառուցված ակորդը փոփոխական ֆունկցիա ունի. T—D՝ վերին *մեդիանտա*, T—S՝ ստորին մեդիանտա:

ՄԵԴԻԱՏՈՐ (լատ. mediator՝ միջնորդ) նույնն է՝ *հարիչ:*

ՄԵԴԻՈՒՄ (լատ. medius՝ միջինը) կանանց երգչաձայների միջին ձայնաստիճանը նշանակելու համար

օգտագործվող տերմին: Սոպրանոների մ. համարվում է $ֆա^1$-ից մինչև $ֆա^2$, մեցցո սոպրանոներինը՝ $ֆա^1$-ից մինչև $ռե^2$-ը:

ՄԵԼԻԶՄՆԵՐ (հուն. melos-ից՝ երգ, մեղեդի, ռուս. мелизмы) 1) *ձայնազարդ*, մեղեդին զարգացնելու հատուկ մելոդիկ դարձվածքներ, որոնք երաժշտության մեջ կիրառվում են դեռևս հնագույն ժամանակներից, սկզբնական շրջանում՝ գլխավորապես վոկալ երաժշտության մեջ, հետագայում, հատկապես XVII — XVIII դդ. մեծ տարածում գտան նաև երաժշտության մեջ ընդհանրապես: Նախկինում կիրառվել են բազմաթիվ, բազմապիսի մ., որոնցից, սկսած XVIII դ. լայն տարածում գտան հետևյալները. *ֆորշլագը* (կարճ և երկար), *մորդենտը* (չգծված և գծված), *կրկնակի մորդենտը* (չգծված և գըծված), *գրուպետոն* և *տրելը*: Նշված մ. յուրաքանչյուրը կարելի է կատարել տարբեր ձևերով, այդ իսկ պատճառով, սկսած XIX դ. երկրորդ կեսից կոմպոզիտորներն սկսել են ավելի քիչ օգտագործել որոշ մ., դրա փոխարեն լրիվ գրի առնելով մ. կազմող բոլոր նոտաները: Այդ նույն ժամանակաշրջանից սկսեցին օգտագործել ավելի բարդ մ., որոնք բաղկացած են ավելի մեծ թվով հնչյուններից և գրի են առնվում փոքրիկ նոտաներով: Տես՝ *ձայնազարդություն*, 2) *զարդանշան*, այսպես են կոչվում նաև այն նշանները և փոքր նոտաները, որոնցով գրի են առնըվում մ.:

ՄԵԼՈԴԵԿԼԱՄԱՑԻԱ (հուն. melos՝ երգ և լատ. declamatio՝ արտասանություն) երաժշտության ուղեկցությամբ կատարվող ասմունք, գեղարվեստական արտասանություն): Այսպես են կոչվում նաև մ. համար գրված ստեղծագործությունները, որոշ երկրներում դա կոչվում է *համերգային մելոդրամա* (օր. Շումանի և Լիստի բալլադները): Ռուսաստանում դա ստացավ մ. անվանումը:

ՄԵԼՈԴԻԱ (հուն. melodia՝ երգեցողություն, երգ, ռուս. мелодия) 1) նույնն է՝ մեղեդի, 2) երաժշտական պիես, օր. melodia per pianoforte՝ պիես դաշնամուրի համար: Սովորաբար նման պիեսը կոչվում է մելոդիա (մեղեդի), օր. մելոդիա ջութակի համար, դաշնամուրի նվագակցությամբ:

ՄԵԼՈԴԻԿ ԻՆՏԵՐՎԱԼ (ռուս. мелодический интервал) *ինտերվալ*, որի հնչյունները վերցվում են հաջորդաբար, մեկը մյուսից հետո: Միաձայն երաժշտության (երգ, նվագ) և բազմաձայնի յուրաքանչյուր առանձին ձայն կազմված են մ. ի.. Տես՝ *հարմոնիկ ինտերվալ*:

ՄԵԼՈԴԻԿ ՄԱԺՈՐ (ռուս. мелодический мажор) նույնն է՝ *մելոդիկ մաժոր լադ*:

ՄԵԼՈԴԻԿ ՄԱԺՈՐ ԼԱԴ (ռուս. мелодический мажорный лад) տես՝ *մաժոր լադ*:

ՄԵԼՈԴԻԿ ՄԻԱՑՈՒՄ (ռուս. мелодическое соединение) իմաստով նույնն է՝ *ակորդների մելոդիկ միացում*:

ՄԵԼՈԴԻԿ ՄԻՆՈՐ (ռուս. мелодический минор) նույնն է՝ *մելոդիկ մինոր լադ*:

ՄԵԼՈԴԻԿ ՄԻՆՈՐ ԼԱԴ (ռուս. мелодический минорный лад) տես՝ *մինոր լադ*:

ՄԵԼՈԴԻԿ ՖԻԳՈՒՐԱՑԻԱ (ռուս. мелодическая фигурация) տես՝ *ֆիգուրացիա*:

ՄԵԼՈԴԻՈՆ, բազմաձայն ստեղնային էլեկտրանվագարան, ունի էլեկտրական (էլեկտրոնային) *ձայնահարուցիչ*, դինամիկ և վիբրացիոն ոտնակներ, *ուժեղարար* և տասը կարգավորիչներ (փոխարկիչներ, ռեգիստրներ)՝ տարբեր հնչերանգներ ստանալու համար: Ձայնածավալն է՝ C — c^3 (մեծ *օկտավայի դո*-ից մինչև երրորդ *օկտավայի դո*-ն): Ձայնի ուժեղացումը ստացվում է ստեղներին սեղմելով: Տես՝ *էլեկտրանվագարաններ*:

ՄԵԼՈԴՐԱՄԱ (հուն. melos՝ երգ, եղանակ և drama՝ գործողություն, դրամա) 1) դրամատիկ փոքրածավալ երկ, որի մենախոսություններն ուղեկցվում էին երաժշտությամբ: Ստեղծվել է Ֆրանսիայում, XVIII դ. վերջին, ուներ դեմոկրատական բովանդակություն, 2) XIX դ. այսպես էր կոչվում բարոյախոսական թեմաներով, խրթին և խըճըճված ինտրիգով, հաճախ չափազանցրած և անհավատալի բեմական իրավիճակներով լի դրամատիկ երկ, որի գործող անձինք սխեմատիկ կերպով մարմնավորում էին չարագործությունը և բարձրագույն բարությունն ու ազնվությունը, վերջիններիս անպայման հաղթանակով: Նման թատերախաղերում երաժշտությունը զգալի տեղ էր գրավում, 3) XVII — XVIII դդ. այսպես էր կոչվում նաև օպերան (Իտալիայում այդ անվանումը պահպանվել է մինչև օրս), 4) օպերաներում և օպերետներում այսպես են կոչվում այն տեսիլները, որոնցում երաժշտության ուղեկցությամբ, մեներգիչները երգելու փոխարեն արտասանում են, 5) որոշ երկրներում այդպես է կոչվում *մելոդեկլամացիան*:

ՄԵԼՈՄԱՆ (հուն. melos՝ երգ, մեղեդի և mania՝ մոլագարություն) նույնն է՝ *երաժշտամոլ*:

ՄԵԼՈՍ (հուն. melos՝ երգ, մեղեդի) երաժշտության երգայնությունը, նրա մեղեդայնությունն ընդհանրացնող հասկացություն:

ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԴԱՇՆԱՄՈՒՐ (ռուս. механическое фортепиано) կցված կամ տեղադրված սարքով հատուկ դաշնամուր, առանց դաշնակահարի նվագելու համար: Հայտնի էին «Ֆոնոլա», «Վելտե-մինիոն», «Պիանոլա» ֆիրմաների մ. դ.: Ձայնասկավառակների և մագնիտոֆոնային ձայնագրությունների երևան գալուց հետո մ. դ. դուրս եկան գործածությունից:

ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. механическая звукозапись) ձայնագրության միջոց, որի ժամանակ ձայնային տատանումները վերածվում են մեխա-

նիկական տատանումների: Մ. ձ. գյուտը պատկանում է ֆրանսիացի գյուտարար Կրային (1877 թ.):

ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ռուս. механические (музыкальные) инструменты) հատուկ կառուցվածք ունեցող նվագարաններ, որոնք հնարավոր են դարձնում երաժշտական ստեղծագործության կատարումը, առանց երաժշտի: Մ. ն. նույնպես լինում են լարային, փողային, լեզվակային, ըստ ձայնաղբյուրի և ինչարտաբերման ձևի:

ՄԵԾԱՍԱՐ, տես՝ *խորեյ:*

ՄԵԾԱՎԵՐՋ, տես՝ *յամբ:*

ՄԵԾԱՑՐԱԾ ԵՌԱՀՆՉՅՈՒՆ (ռուս. увеличенное трезвучие) *եռահնչյուն*, որը կազմված է երկու մեծ *տերցիաներից* կամ հիմքից՝ մեծ *տերցիայից* և մեծացրած *կվինտայից:* Կառուցվում է *հարմոնիկ մաժորի* VI և *հարմոնիկ մինորի* III աստիճանների վրա, հանդիսանում է *դիսոնանսող ակորդ*, լուծվում ըստ *լադային ձգողականության. մաժորում՝ տոնիկային կվարտսեքստակորդի*, իսկ *մինորում՝ տոնիկային սեքստակորդի* մեջ: Մ. ե. հիմնականում հանդիպում է *էնհարմոնիկ զարտուղության* ժամանակ:

ՄԵԾԱՑՐԱԾ ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐ (ռուս. увеличенные интервалы) *ինտերվալներ*, որոնք *խրոմատիկ կիսատոնով* ավելի մեծ են, քան *մաքուր* և *մեծ ինտերվալները*, կրճատ նշանակվում է մծ տառերով կամ գումարման (+) նշանով, օր.՝ մծ5, +2 (այսինքն՝ մեծացրած *կվինտա*, մեծացրած *սեկունդա*): Մեծացրած կարող են լինել բոլոր *ինտերվալները:* Մ. ի. լուծվելիս լայնանում են: Տես՝ *ինտերվալ, խրոմատիկ ինտերվալներ, փոքրացրած ինտերվալներ:*


ՄԵԾԱՑՐԱԾ ՍԵՊՏԱԿՈՐԴ (ռուս. увеличенный септаккорд) ընդունված է այսպես անվանել կիսամեծացրած *սեպտակորդը*, որի կառուցվածքն է՝ հիմքից՝ մեծացրած *եռահնչյուն* և մեծ *սեպտիմա:*

ՄԵԾԱՑՈՒՄ (ռուս. увеличение) *թեման* կամ *մոտիվը* կրկնելիս, դրանք կազմող հնչյունների և պաուզաների տևողությունների մեծացումը՝ սովորաբար 2 կամ 4 անգամ, որի հետևանքով դրանք կրկնվում են 2 կամ 4 անգամ ավելի դանդաղ: Տես՝ *իմիտացիա, ֆուգա:*

ՄԵԾ ԴԵՏԱՇԵ (ֆր. grand détaché, ռուս. большое деташе) *դետաշե*, որը կիրառելիս աղեղն օգտագործվում է իր ամբողջ երկարությամբ:

ՄԵԾ ԵՌԱՀՆՉՅՈՒՆ (ռուս. большое трезвучие) նույնն է՝ *մաժոր եռահնչյուն:*

ՄԵԾ ԹՄԲՈՒԿ (իտ. gran cassa, ռուս. большой барабан) ձայնի որոշակի բարձրություն չունեցող, ցածր ձայնաստիճանի հնագույն հարվածային նվագարան (գործիք), փայտյա կամ մետաղյա գլանաձև, բավական լայն (40 սմ) շրջանակը, որի երկու կողմերին կաշի



է ձգված, ունի 75 և ավելի սմ տրամագիծ: Մ. թ. ունի դինամիկ մեծ հնարավորություններ, որանով կարելի է ստանալ շատ մեղմ և խուլ (pp) ինչումից մինչև չափազանց ուժգինը (fff), նոտագրվում էր բասի բանալիով, մեծ օկտավայի *դո* նոտայով, իսկ ներկայումս, ինչպես որոշակի բարձրություն չունեցող բոլոր նվագարանները՝ *միագծի* վրա: Օգտագործվում է սիմֆոնիկ, փողային և մի շարք այլ նվագախմբերում: Կան մ. թ., որոնց մի կողմին է միայն կաշի ձգված:

ՄԵԾ ԿԱՄ ՄԱԺՈՐ ԵՌԱՀՆՉՅՈՒՆ (ռուս. большое или мажорное трезвучие) տես՝ *եռահնչյուն:*

ՄԵԾ ԿԼԱՐՆԵՏ (ռուս. большой кларнет) տես՝ *կլարնետ:*

ՄԵԾ ՍԵՊՏԱԿՈՐԴՆԵՐ (ռուս. большие септаккорды) *սեպտակորդներ*, որոնց *սեպտիմային տոնը* հիմնական *տոնի* հետ կազմում է մեծ *սեպտիմա*, դրանք են՝ *մեծ մաժոր սեպտակորդը*, *մեծ մինոր սեպտակորդը* և *մեծացրած սեպտակորդը:* Տես՝ *սեպտակորդ:*

ՄԵԾ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ (ռուս. большой симфонический оркестр) տես՝ *սիմֆոնիկ նվագախումբ:*

ՄԵԾ ԵՎ ՓՈՔՐ ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐ (ռուս. большие и малые интервалы) նույնն է՝ *փոքր և մեծ ինտերվալներ:*

ՄԵԾ ՕԿՏԱՎԱ (ռուս. большая октава) տես՝ *օկտավա* (2-րդ իմաստով):

ՄԵԾ ՖԼԵՅՏԱ (ռուս. большая флейта) տես՝ *ֆլեյտա:*

ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ (լատ. interpretario՝ պարզաբանում, բացատրում, ռուս. интерпретация) կատարման միջոցով երաժշտական ստեղծագործության բովանդակությունը այս կամ այն կերպ դրսևորելը, ներկայացնելը, մեկնաբանելը: Յուրաքանչյուր կատարող միաժամանակ և մեկնաբան է, քանի որ ստեղծագործության կատարման ժամանակ, հաշվի առնելով այդ ստեղծագործության կատարման օբյեկտիվ տվյալները, ելնում է նաև իր անհատական գեղարվեստական հակումներից, գեղագիտական հայացքներից, ինչպես նաև կատարողական ուրույն հնարավորություններից, ստեղծագործությունը ներկայացնելով ըստ իր հայեցակետի, մեկնաբանելով յուրովի:

ՄԵՂԵԴԻ (հուն. melos՝ երգ, երգեցողություն, ռուս. ме-

лодия) *եղանակ*՝ հիմնական երաժշտական միտքն արտահայտող երաժշտական հնչյունների կապակցված հաջորդականություն: Մ. երաժշտարվեստի հիմքն է և սկզբնաղբյուրը, ամենակարևոր արտահայտչամիջոցը: Մ. երաժշտական մտքի, երաժշտության գաղափարա-հուզական բովանդակության միաձայն արտահայտումն է: Բազմաձայն երաժշտությունն իրենից ներկայացնում է կամ՝ միաժամանակ հնչող երկու կամ ավելի ինքնուրույն մ. միակցություն (*պոլիֆոնիա*)', կամ բաղկացած է մ. և նվագակցությունից (*հոմոֆոնիա*): Մ. մեծագույն և ամենահարուստ գանձարանն է ժողովրդական երաժշտական ստեղծագործությունը, որից լայնորեն օգտվել են բոլոր ժամանակների կոմպոզիտորները: Յուրաքանչյուր մ. վառ կերպով բնորոշում է երաժշտության ոճը, ժանրը, ազգային կոլորիտը: Տես՝ *մելոդիա* (2-րդ իմաստով):

ՄԵՂՄՈՑ (ռուս. сурдина) հատուկ հարմարանք, որը մեղմացնում է նվագարանների (գործիքներ) հնչողությունը և այս կամ այն չափով փոխում հ ն չ ե ր ա ն գ ը (տ ե մ բ ր ը): Նվագարանների առանձին ընտանիքներ ունեն տարբեր ձևերի մ., օր. *վալտորնա* նվագողները չեն օգտագործում մ., դրա փոխարեն բռունցքն են մտցնում փողաբերանի մեջ, *լիտավրների* համար որպես մ. գործածվում է մահուդի կամ ֆլանելի կտոր, որով ծածկում են կաշին: Մ. գործածման սկիզբը նոտաներում նշանակվում է con sordino (իտ.՝ *կոն սորդինո*, այսինքն՝ մեղմոցով), իսկ վերացումը՝ senza sordino (իտ. *սենցա սորդինո*, այսինքն՝ առանց մեղմոցի) բառերով: Դաշնամուրի համար մ. դեր է կատարում *մոդերատորը*:

ՄԵՆԱԿԱՑԱՐ (ռուս. солист,ка) 1) մենակատարող երաժիշտ, մեներգիչ, մեներգուհի, 2) օպերայում ինքնուրույն դերերգեր (պ ա ր տ ի ա ն ե ր) կատարող երգիչ, երգչուհի, 3) բալետում առաջին կամ երկրորդ դերեր, ինչպես նաև մենապարեր կատարող:

ՄԵՆԱՀԱՄԵՐԳ (ռուս. сольный концерт) համերգ, որի ընթացքում ելույթ է ունենում մեկ մենակատար (դաշնակահար, ջութակահար, երգիչ, երգչուհի և այլն), ըստ որում նկատի չեն առնվում նրանց նվագակցող երաժիշտները (կոնցերտմայստեր, անսամբլ կամ նվագախումբ):

ՄԵՆԱՆՎԱԳ, 1) մեկ կատարողի նվագ (նվագակցությամբ կամ առանց դրա), 2) երաժշտական ստեղծագործություն, հորինված մեկ կատարողի համար (նվագակցությամբ կամ առանց դրա): Տես՝ *մեներգ*:

ՄԵՆԱՊԱՐ, պար՝ նախանշանակված մեկ պարողի կամ պարուհու համար:

ՄԵՆԵՍՏՐԵԼ (ֆր. menestrel, անգլ. minstrel՝ ծառայության մեջ գտնվող, ծառա, ռուս. менестрель) բազմապիսի արվեստների տիրապետող ժողովրդական թափառաշրջիկ երաժիշտ (երգիչ, նվագող, բանաստեղծ, ասմունքող, կատակաբան և այլն) միջնադարյան Ֆրանսիայում և Անգլիայում (հիմնականում XIII — XIV դդ): Մ. ծառայում էին *տրուբադուրներին*, կատարելով նրանց հորինած երգերը և *վիոլայով* նվագակցելով թե իրենց, թե *տրուբադուրների* երգեցողությանը: Հետագայում, մինչև XVIII դ. ներառյալ Ֆրանսիայում և Անգլիայում մ. ասելով հասկանում էին պրոֆեսիոնալ երաժիշտ, հատկապես ջութակահար, վիոլահար:

ՄԵՆԵՐԳ, 1) մեկ երգչի, երգչուհու երգեցողություն (նվագակցությամբ կամ առանց դրա), 2) մեկ կատարողի՝ երգչի, երգչուհու համար հորինված վոկալ ստեղծագործություն (նվագակցությամբ կամ առանց դրա): Տես՝ *մենանվագ*:

ՄԵՆԶՈՒՐԱ (լատ. menzura՝ չափ) 1) հաշվետվյալներ՝ նվագարանների ձայնաղբյուրի չափային մեծությունը որոշելու համար: Մ. հիմնական պարամետրերն են. լարային նվագարանների համար՝ տրամագիծը, երկարությունը և լարերի ձգվածությունը, փողային նվագարանների համար՝ հատվածքը, օդանցքի տրամագիծը և երկարությունը, լեզվակային նվագարանների համար՝ լեզվակի լայնությունն ու երկարությունը, 2) միջնադարյան բազմաձայն երաժշտության մեջ ռիթմիկ տևողությունների որոշումը (տես՝ *մենզուրալ նոտագրություն*):

ՄԵՆԶՈՒՐԱԼ ՆՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. мензуральная нотопись, լատ. menzura-ից՝ չափ) ժամանակակից նոտագրությանը նախորդած նոտագրության ձև, որը կիրառվում էր միջնադարյան Եվրոպայում, XII — XIV դդ: Մինչ այդ գրի էին առնվում սոսկ ձայնի բարձրությունները (առանց նշելու դրանց տևողությունը): Բազմաձայն երաժշտության զարգացման հետևանքով անհրաժեշտություն ստեղծվեց հնչյունների բարձրության հետ մեկտեղ նշել նաև նրանց տևողության չափը: Ստեղծվեցին մ. ն. հետևյալ հիմնական նշանները, որոնք կրում են լատինական անուններ՝ (maxima) *մաքսիմա* ամենամեծը, ամենաերկարը, կամ (duplex longa) *դուպլեքս լոնգա* կրկնակի երկարը:

(longa) *լոնգա*՝ երկարը:

(brevis՝) *բրեվիս*՝ կարճը:

(semibrevis) *սեմիբրեվիս*՝ կիսակարճը, կարճի կեսը: Հետագայում մտցվեցին տևողության ավելի մանր չափեր.

(minima) *մինիմա*՝ ամենափոքրը:

(semiminima) *սեմիմինիմա*՝ կիսամինիման, ամենափոքրի կեսը:

Մոտավորապես XV դ. կեսին այս սև նշանները (նոտաները) փոխարինվեցին սպիտակներով, բացառությամբ ամենափոքր տևողության նշանների:

— *մաքսիմա*

— *լոնգա*

— *բրեվիս*

— *սեմիբրեվիս* (մեր ժամանակակից ամբողջ նոտան)

— *մինիմա* (մեր կես նոտան)

կամ — *սեմիմինիմա* (մեր քառորդական նոտան)

կամ — *ֆուգա* (մեր ութերորդական նոտան)
կամ — *սեմիֆուգա* (մեր տասնվեցերորդական նոտան):

Ստեղծվեցին նաև պաուզայի նշաններ: Նոտագրության կլոր ձևը հիմնականում գործածելի դարձավ XVI դ. վերջին: Մ. ն. հիման վրա ձևավորվել է մեր ժամանակակից նոտագրությունը:

ՄԵՆՈՒԵՏ (ֆր. menuet) ժողովրդական ծագում ունեցող ֆրանսիական հնագույն սահուն պար, 3/4 կամ 3/8 չափով, շատ չափավոր տեմպով: Մ. բառը առաջացել է pas menus (*պա մենու*՝ մանր քայլեր) բառերից: XVI — XVIII դդ մ. հանդիսանում էր ամենասիրված և տարածված պարը, XVII դ. վերջին մ. դարձավ արքունական հանդիսապար, հետագայում տարածվեց նաև բուրժուական շրջաններում: Պարում էին մեկ, իսկ ավելի ուշ մի քանի զույգերով, մեծ հանդիսավորությամբ, հետագայում մ. մեջ ներմուծվեցին սեթևեթ տարրեր, պա-




րում էին չափավոր տեմպով: Մ. դասական օրինակներ է ստեղծել Լյուլլին, մ. լայնորեն ներկայացված է *կլավիրային* երաժշտության մեջ (Կուպերեն և ուրիշներ): Մ. մտավ XVIII դ. *նվագային սյուիտի* մեջ (Բախ, Հենդել և ուրիշներ), ինչպես նաև հանդիսանում էր *սոնատային-սիմֆոնիկ ցիկլային ձևի* սովորաբար 3-րդ մասը (Հայդնի, Մոցարտի, մասամբ Բեթհովենի սիմֆոնիաներում, կվարտետներում): Ոճավորված մ. են գրել Գրիգը, Ռավելը, Դեբյուսին, Պրոկոֆևը:

ՄԵՍՍԱ (իտ. messa՝ պատարագ) 1) կաթոլիկ *պատարագ*, որի կատարման երկու ձևերն են. ա) *մեսսա պիանա* (messa piana)՝ թիվ պատարագ, այսինքն՝ արտասանվող, ասվող պատարագ (առանց երգեցողության) և բ) *մեսսա կանտատա* (messa cantata)՝ ձայնավոր պատարագ, այսինքն՝ երգվող պատարագ, 2) խմբերգային բազմամաս ստեղծագործություն (նվագակցությամբ կամ առանց դրա), երբեմն՝ մեներգիչների մասնակցությամբ, գրված լատիներեն, կատարվող ձայնավոր պատարագի ժամանակ: Մ. հիմնական բաժիններն են՝ *կիրիեն, գլորիան, կրեդոն, սանկտուսը, բենեդիկտուսը, ագնուս դեին:* Բացի դրանցից, մտցվում են նաև եկեղեցական այս կամ այն օրվան, տոնին համապատասխան հավելյալ համարներ: Մ. են գրել տարբեր դարաշրջանների խոշորագույն կոմպոզիտորներ: Չնայած հոգևորականների դիմադրությանը, հաճախ մ. մեջ ներմուծվել են աշխարհիկ երաժշտության տարրեր, որի հետևանքով մ. դուրս էր գալիս եկեղեցական շրջանակներից և ձեռք բերում համերգային բնույթ: Այդպիսի ստեղծագործություններից առավել ակնառու են Բախի *Սի մինոր Մեսսան* և Բեթհովենի *Հանդիսավոր Մեսսան:* Հոգեհանգստի մ. կոչվում է *ռեքվիեմ:*

ՄԵՏԱԼՈՖՈՆ (լատ. metallum՝ մետաղ և հուն. phoné ձայն) երաժշտական նվագարան (գործիք), կազմված մի շարք համապատասխան լարք ունեցող մետաղյա թիթեղիկներից: Մ. նվագում են մրճիկներով:

ՄԵՏՐ (ֆր. métre, հուն. metron-ից՝ չափ) երաժշտության մեջ՝ ժամանակի բաժանումը հավասար կամ անհավասար հատվածների, որոնք կոչվում են *տակտեր*: Յուրաքանչյուր տակտում կան երկու կամ ավելի իրար հաջոր-



դող ուժեղ և թույլ հավասար մասեր, որոնց քանակն ու տևողությունն արտահայտվում են չափով: Տակտի ամենաուժեղ մասն առաջին մասն է: Մ. հանդիսանում է ռիթմի չափանիշը, չափավորում է ռիթմի շարժումը: Մ. երաժշտության ժամանակային հենքն է, որի վրա «գործվում» են բազմապիսի ռիթմապատկերներ: Տես՝ *չափ, տակտ, ռիթմ:*

ՄԵՏՐԻԿԱ (հուն. metrikós՝ չափին վերաբերող) 1) ուսմունք *մետրի* մասին, 2) *մետրի* կոնկրետ դրսևորումների միակցությունը երաժշտական ստեղծագործության մեջ:

ՄԵՏՐՈՆՈՄ (հուն. metrós՝ չափ և nómos՝ օրենք) տես՝ *չափահար:*

ՄԵՑՑԱ ՎՈՉԵ (իտ. a mezza voce՝ կիսաձայն, կես ձայնով) այնպիսի մեղմ երգեցողություն, որի ժամանակ օգտագործվում է ձայնի կեսը, երգչից տեխնիկական մեծ վարպետություն պահանջող ձև է դա, օգտագործում են

նաև նվագող երաժիշտները: Իտալերենի «a» մասնիկը տվյալ դեպքում չի օգտագործվում և նրբերանգը կոչվում է *մեցցա վոչե*:

ՄԵՅՑՈ ՊԻԱՆՈ (իտ. mezzo piano, կրճատ՝ mp) ոչ շատ մեղմ: Տես՝ *դինամիկա*:

ՄԵՅՑՈ ՍՈՊՐԱՆՈ (իտ. mezzo soprano՝ միջին սոպրանո) կանացի երգչաձայն, որն իր ձայնածավալով գրավում է միջին տեղ՝ *սոպրանոյի* և *կոնտրալտոյի* արանքում, լինում է երկու տեսակ՝ *լիրիկ* և *դրամատիկ*: *Լիրիկ* կամ *բարձր մ. ս.* ձայնածավալը քիչ ավելի մեծ է՝ փոքր *օկտավայի լյա*-ից մինչև երկրորդ *օկտավայի սի բեմոլ*-ը (երբեմն՝ *սի*-ն), բնույթով և ինչերանգով մոտենում է *դրամատիկ սոպրանոյին*, տարբերվում է նրանով, որ մ. ս. առաջին *օկտավայում* ինչում է ավելի հուժկու, քան *դրամատիկ սոպրանոն*: *Դրամատիկ* կամ *ցածր մ. ս.* ձայնն ավելի թավ է և հուժկու, ձայնածավալը հասնում է մինչև երկրորդ *օկտավայի լյա*-ն (հազվադեպ՝ *սի բեմոլ*) բնույթով ավելի մոտ է *կոնտրալտոյին*: *Սոպրանոների* համեմատությամբ մ. ս. ձայնը ավելի լիքն է, հարուստ ինչերանգային գունեղությամբ: Երգչախմբերում մ. ս. կոչվում է *ալտ*:


ՄԵՅՑՈ ՍՈՊՐԱՆՈՅԻ ԲԱՆԱԼԻ (ռուս. меццо-сопрановый ключ) *դո* բանալին՝ դրված *նոտակիրի* երկրորդ գծի վրա:

ՄԻ (mi), ժամանակակից *երաժշտական ձայնաշարի* յոթ հիմնական հնչյուններից երորդի վանկային անվանումը (տես՝ *սոլմիզացիա*), տառային նշանակումն է՝ E կամ e:

ՄԻԱԳԻԾ (ռուս. нитка՝ թել, թելիկ) ի տարբերություն *հնգագծի*, մեկ հորիզոնական գիծ (*պարտիտուրներում*, *պարտիաններում*), որի վրա նոտագրվում են որոշակի բարձրություն չունեցող հարվածային նվագարանների (գործիքների) *պարտիաները*:

ՄԻԱԳՈՒՄԱՐՈՒՄ (ռուս. суммирование) երկու կամ մի քանի կառուցվածքների և դրանցից հետո եկող ավելի երկար կառուցվածքի (որը հաճախ հավասար է այդ կառուցվածքներին) հաջորդականությունը:

ՄԻԱԼԱՐ (հուն. monochordos՝ մեկլարանի, ռուս. монохорд) 1) հատուկ գործիք՝ երաժշտական ձայներն ուսումնասիրելու համար, որն իրենից ներկայացնում է փայտյա երկարուկ ձայնադարձային արկղ (հնչարկղ), երեսի երկու ծայրամասերում ունի *շեմիկներ* և շարժա-



կան *լարակալ* (հենարան), որոնց վրայով ձգված է մեկ լար: *Լարակալը* լարը բաժանում է երկու առանձին հնչող մասերի, լարի տակ, արկղի երեսին տրված են բաժանումներ, *լարակալի* շարժման կետերը նշելու համար: Կարճացված և ամբողջ լարերի հնչման բարձրությունը համեմատելու համար երբեմն մ. վրա ձգում են երկրորդ լարը, առանց *լարակալի*: Մ. հայտնի էր դեռևս Հին Հունաստանում, 2) մեկլարանի նվագարանների ընդհանուր անվանումը:

ՄԻԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. одноголосие) այնպիսի երաժշտություն (վոկալ կամ գործիքային, կամ այդ երկուսը միասին), որն ունի միայն մեկ մելոդիկ գիծ, մեկ մեղեդի: Միաձայն երաժշտության մեջ, բացի *հարմոնիկ պրիմայից* և *օկտավայից*, *ուրիշ համահնչյուններ* բացառվում են: Մ. կարելի է կատարել մեներգելով, մենանվագելով — խմբակային (*ունիսոն* և *օկտավային*) երգեցողությամբ և նվագով: Տես՝ *մոնոդիա*:

ՄԻԱՂԻ, նույնն է՝ *միալար*:

ՄԻԱՍԵՌ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ (ռուս. однородный хор) երգչախումբ, որը բաղկացած է միայն կանանց կամ միայն տղամարդկանց, կամ միայն մանկական երգչաձայներից: Տես՝ *միասեռ երգչաձայներ*:

ՄԻԱՍԵՌ ԵՐԳՉԱՁԱՅՆԵՐ (ռուս. однородные певческие голоса) տարբեր բնույթի և ձայնածավալի՝ ա) տղամարդկանց երգչաձայներ՝ *տենոր*, *բարիտոն*, *բաս* բ) կանանց երգչաձայներ՝ *սոպրանո*, *մեցցո սոպրանո*, *կոնտրալտո*, *ալտ*, գ) մանկական (փոքր տղաների) երգչաձայներ՝ *դիսկանտ* (այլ կերպ՝ *սոպրանո*), *ալտ*:

ՄԻԱՏՈՆԱՅՆԱԿԱՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. одноголосный период) այն պարբերությունը, որն ավարտվում է նույն տոնայնությամբ, տոնայնությունը չի փոխվում:

ՄԻՆԻԱՏՅՈՒՐ (ֆր. miniature, իտ. miniatura) տես՝ *մանրանվագ*, *մանրերգ*:

ՄԻՆՈՄ, տես՝ *մենզուրալ նոտագրություն*:

ՄԻՆԻՊԻԱՆՈ (լատ. minimus-ից՝ ամենափոքր և ֆր. piano՝ դաշնամուր, ռուս. минипиано) ամենափոքր չափի *պիանինո*, երկարությունը՝ 120—125 սմ, բարձրությունը՝ 82,5 — 90 սմ, լայնությունը՝ 39 — 40 սմ: Ձայնածավալն է 6—7 *օկտավա*: *Դաշնամուրային մեխանիկան* տեղադրված է ստեղնաշարի տակ, լարերն ու ստեղները կարճացված են, քաշն է՝ 120 — 125 կգ, առաջին անգամ պատրաստվել է ԱՄՆ-ում և եվրոպական մի շարք երկրներում 1930-ական թվականներին: Տես՝ *մինյոն* (1-ին իմաստով):

ՄԻՆՅՈՆ (ֆր. mignon՝ պստիկ, ռուս. миньон) 1) ամենափոքր չափի *ռոյալ*, երկարությունը՝ 120 — 145 սմ. (տես՝ *մինիպիանո*), 2) *վալսանման* ռուսական հանդիսապար, 3/4 չափով, ստեղծվել է XIX դ. վերջին, 3) ամենափոքր չափի *ձայնասկավառակ*:

ՄԻՆՆԵԶԻՆԳԵՐ (գերմ. Minnezinger՝ սիրո երգիչ) բանաստեղծ-երգիչ միջնադարյան Գերմանիայում, XII — XIV դդ, որի ստեղծագործության բովանդակությունն է կինն ու ասպետական սերը: Մ. հանդիսանում էին ասպետական քնարերգության, այսպես կոչված *միննեզանգի* հորինողներն ու կատարողները: Մոտավորապես XV դ. սկզբից մ. պոեզիան հանգում է անկման: Տես՝ *տրուբադուր:*

ՄԻՆՈՐ (իտ. minore՝ փոքր) այսպես են կոչվում՝ ա) այն *լադերն ու տոնայնությունները*, որոնց I և III աստիճանները կազմում են փոքր *տերցիա*, բ) այն եռահնչյունը, որի կայուն ձայները կազմում են *մինոր եռահնչյուն:*

ՄԻՆՈՐ ԱԿՈՐԴ (ռուս. минорный аккорд) նույնն է՝ *մինոր եռահնչյուն:*

ՄԻՆՈՐ ԵՌԱՀՆՉՅՈՒՆ (ռուս. минорное трезвучие) տես՝ *եռահնչյուն:*

ՄԻՆՈՐ ԼԱԴ (ռուս. минорный лад) յոթնաստիճան *լադ*, որի I և III աստիճանները կազմում են փոքր *տերցիա* և I աստիճանի վրա կառուցված եռահնչյունը *մինոր* է: Մ. լ. ունի չորս տարատեսակ՝ ա) *բնական մ. լ.*, բ) *հարմոնիկ մ. լ.*, որի VII աստիճանը բարձր է բնականի համեմատ, գ) *կրկնակի հարմոնիկ մ. լ.*, որի IV և VII աստիճանները բարձր են (բարձրացված են), դ) *մելոդիկ մ. լ.*, որի VI և VII աստիճանները բարձր են (բարձրացված են):



ՄԻՋԱՊԵՂ (ռուս. эпизод) տես՝ *էպիզոդ:*

ՄԻՋԱՆԽԱՂ, տես՝ *ինտերմեդիա:*


ՄԻՋԱԿԱ ԱԿՈՐԴ (ռուս. посредствующий аккорд) *միջնորդող ակորդ, զարտուղման* ժամանակ հին տոնայնության վերջին *ակորդը*, որն ընդհանուր է երկու տոնայնությունների համար: Մ. ա. հետո գալիս է *զարտուղող ակորդը*: Տես՝ *զարտուղություն:*

ՄԻՋԻՆ ԴԵՏԱՇԵ (ֆր. détaché mayen, ռուս. среднее деташе) *դետաշե*, որը կիրառելիս օգտագործվում է աղեղի մոտավորապես կեսը կամ մեկ երրորդը:

ՄԻՋԻՆ ՁԱՅՆԵՐ (ռուս. средние голоса) 1) բազմաձայն երաժշտության մեջ ամենավերին և ամենաստորին ձայների միջև գտնվող մնացած բոլոր ձայները (երկձայնում մ. ձ. լինել չի կարող), 2) *ներդաշնակագիտության (հարմոնիայի)* դասընթացում՝ քառաձայնի *տենորը* և *ալտը:*

ՄԻՋԻՆ ՄԱՍ (ռուս. средняя часть) եռամաս ձևի երկրորդ մասը, *ֆուգաներում* այդ մասը սկսվում է *էքսպոզիցիայից* հետո: Տես՝ *ֆուգա:*

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԼԱԴԵՐ (ռուս. средневековые лады) այլ կերպ՝ եկեղեցական *լադեր*, միջնադարի ժողովրդական և պրոֆեսիոնալ երաժշտության մեջ կիրառվող, յոթնաստիճան *դիատոնիկ բնական լադեր*, որոնք երկու տեսակ են՝ *ավտենտիկ* (գլխավոր, հիմնական) և *պլագալ (ավտենտիկից* ածանցված, օժանդակ): *Ավտենտիկ լադերի* կայուն աստիճաններն էին I-ը և V-ը, իսկ *պլագալներինը*՝ I-ը և IV-ը: Յուրաքանչյուր *ավտենտիկից պլագալ* ստանալու համար, *լադը* պիտի սկսել *ավտենտիկի* V աստիճանից:



Անունները վերցված են հին հունական *լադերից*, չնայած նրանց կառուցվածքը բոլորովին այլ է: Միջնադարյան բոլոր *ավտենտիկ լադերը* իրենց կառուցվածքով համապատասխանում են բնական *լադերին:*

ՄԻՋՆՈՐԴՈՂ ԱԿՈՐԴ, տես՝ *միջակա ակորդ:*


ՄԻՍՍԱԼ (լատ. missal՝ մեսսա) կաթոլիկ եկեղեցում պատարագի տեքստերը և մեղեդիները բովանդակող գիրք, հայտնի է X դարից:

ՄԻՍՏԵՐԻԱ (հուն. mystḗrion՝ գաղտնիք) միջնադարյան երաժշտական ներկայացման տեսակ Արևմտյան Եվրոպայում, առաջ է եկել XIII դ., սյուժեները վերցվում էին Աստվածաշնչից կամ Ավետարաններից: Ներկայացումները բեմադրվում էին քաղաքների հրապարակներում, մասնակիցները հիմնականում արհեստավորներ էին: XVI դ. մ. համարյա բոլոր երկրներում արգելվեցին, XIX — XX դդ որոշ օպերաներ իրենց կրոնական, միստիկ բնույթով մոտենում էին մ., օր.՝ Ռ. Վագների «Պարսիֆալը»:

ՄԻՔՍՈԼԻԴԻԱԿԱՆ ՍԵՊՏԻՄԱ (ռուս. миксолидийская септима) 1) *միքսոլիդիական լադի* I և VII աստիճանների միջև ընկած փոքր *սեպտիման*, 2) այսպես է կոչվում նաև մաժոր լադի իջեցրած VII աստիճանը:

ՄԻՔՍՈԼԻԴԻԱԿԱՆ ԼԱԴ (ռուս. миксолидийский лад) տես՝ *միջնադարյան լադեր:*

ՄՅՈՒԶԵՏ (ֆր. musette՝ պարկապզուկ) 1) երկփողանի *պարկապզուկանման* նվագարան, որի մեջ օդը փչում են ոչ թե բերանով, այլ պարկին միացրած հատուկ փուքսով: *Բուրդոնային փողերի* փոխարեն ունի մի փողրակ, որը



կարող է լարվել կատարվող մեղեդու համեմատ: XVII — XVIII դդ մ. շատ տարածված էր Ֆրանսիայում, որտեղ օգտագործվում էր նաև օպերային նվագախմբում, 2) պարզեցված *հոբոյի* տիպի փողային նվագարան, 3) ֆրանսիական ինագույն ժողովրդական պար, արագ տեմպով, 2/4, 6/4 կամ 6/8 չափով, կատարվում էր *մյուզետ* նվագարանի նվագակցությամբ, XVIII դ պարը մտավ արքունա-

Ժ. Ֆ. Դանդրիո. Մյուզետ



կան օպերային և բալետային *դիվերտիսմենտների* մեջ, իսկ ֆրանսիացի կոմպոզիտորները *սոնատների* կամ *սյուիտների* այս կամ այն մասը գրում էին մ. ձևով, նրան բնորոշ *ձայնառությամբ:* Ուներ հովվերգական բնույթ, օգտագործվում էր նաև որպես *գավոտ* պարի երկրորդ մաս:

ՄՅՈՒԶԻՔ ՀՈԼԼ (անգլ. music-hall՝ համերգային դահլիճ, ռուս. мюзик-холл) էստրադային թատրոն, որի ծրագրում միավորվում են թեթև ժանրի երգն ու նվագը, պարը և ասմունքը, կրկեսային և էստրադային բազմազան այլ համարներ:

ՄՆՋԱԽԱՂ (ռուս. пантомима) *պանտոմիմա,* 1) արտահայտիչ շարժումների և դիմախաղի միջոցներով զգացմունքների և մտքերի արտահայտման արվեստ, 2) երաժշտա-թատերական ներկայացում, որում բացակայում է խոսակցությունը և խոսքերով ուղեկցվող երգեցողությունը, գործողությունը կատարվում է արտահայտիչ շարժումների և դիմախաղի միջոցով, 3) մի շարք պարերի բաղկացուցիչ մաս, որի միջոցով պատկերում են որոշ աշխատանքային կամ այլ գործողություններ (օր. իլիկով թել մանելը, սանդ ծեծելը և այլն): Նման մ. կոչվում է *պարային մ.,* 4) բալետային ներկայացման տարրերից մեկը, որը դրսևորվում է կամ որպես *պարային մնջախաղ,* կամ որպես ինքնուրույն արտահայտչամիջոց, կապված չէ պարի հետ և իրենից ներկայացնում է որևէ մնջախաղային տեսարան: Տես՝ *պանտոմիմա:*

ՄՇԱԿՈՒՄ I (ռուս. разработка *(սոնատային ալեգրոյի) սոնատային ձևի*) միջին (երկրորդ) մասը, որում տեղի է ունենում *գլխավոր* և *օժանդակ թեմաների (պարտիաների)* մոտիվային, տոնայնական և հյուսվածքային զարգացումը: Միջին մասում այդ թեմաներից վերցված առանձին հատվածները (մոտիվները) բախվում են իրար, ենթարկվում մի շարք ձևափոխումների, հակադրվում տարբեր *լադա-տոնայնություններում,* երաժշտական ձևի զարգացման մեջ մտցնելով լարվածություն և դինամիկա: Միջին մասը կառուցվում է ազատ ձևով, հաճախակի փոփոխվում են տոնայնությունները, որի հետևանքով զգացվում է տոնայնական անկայունություն, թեմաները տրվում են մասնատված ձևով: Մ. մաս ունի նաև *ֆուգան:*

ՄՇԱԿՈՒՄ II (ռուս. обработка) հիմնականում ժողովրդական (նաև՝ գուսանական, աշուղական) երաժշտության (երգ, պարեղանակ և այլն) յուրովի ներդաշնակումն ու հարմարեցումը այս կամ այն կազմով կատարելու համար (երգչախմբի, մենակատարի, որևէ անսամբլի և այլն), ինչպես նաև այդ ժողովրդական եղանակների մեջ որոշ փոփոխություններ մտցնելը: Տես՝ *վերադաշնակում, արանժեվորում, նվագադարձում, տրանսկրիպցիա:*

ՄՈԴԵՐԱՏՈ (իտ. moderato՝ չափավոր, զուսպ) չափավոր տեմպ, *անդանտինոյի* և *ալեգրետտոյի* միջինը: Տես՝ *ալեգրո մոդերատո:*

ՄՈԴԵՐԱՏՈՐ (լատ. moderator՝ մեղմացնող, զսպող) դաշնամուրների ձայնը խլացնող (մեղմացնող) սարքավորում:

Մ. փայտյա շերտաձողիկի վրա փակցված թաղիքե նուրբ ժապավեն է, որը հատուկ հարմարանքի միջոցով մըտնում է մուրճիկների և լարերի արանքը: Մուրճիկների հարվածները թաղիքի միջոցով են կպչում լարերին, որի հետևանքով ձայները ստացվում են մեղմ, խուլ: Կան ձեռքով և ոտքով գործող մ.: Սարքավորումն ունեն ոչ բոլոր դաշնամուրները: Տես՝ *մեղմոց:*

ՄՈԴԵՌՆԻԶՄ (ֆր. moderne՝ նորագույն, ժամանակակից) ժամանակակից արվեստում (սկսած XIX դ. վերջից) եղած տարբեր հոսանքների ընդհանուր անվանումը: Այդ հոսանքները (էքսպրեսիոնիզմ, կոնստրուկտիվիզմ, կուբիզմ և այլն) հանդես են գալիս նորարարության, արդիականության նշանաբանի տակ՝ ընդդեմ ակադեմիկ կանոնների, գործնականում այս կամ այն չափով հեռանալով արվեստի ռեալիստական հիմքերից: Մ. ծայրահեղ ուղղությունները հանգեցնում են ֆորմալիզմի:

ՄՈԴՈՒԼԱՑՆՈՂ ԱԿՈՐԴ (ռուս. модулирующий аккорд) տես՝ *զարտուղող ակորդ:*

ՄՈԴՈՒԼԱՑՎՈՂ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. модулирующий период) նույնն է՝ *զարտուղվող պարբերություն:*

ՄՈԴՈՒԼՅԱՑԻԱ (լատ. modulatio՝ չափվածություն, իտ. modulazione՝ ելևէջ, գեղգեղանք) *մոդուլյացիա*, տես՝ *զարտուղություն:*

ՄՈՆՈԴԻԱ (հուն. monōdia, monos՝ մեկ և ōdos՝ երգիչ, մեկ երգչի երգ 1) միաձայն երաժշտություն, որը ձևավորվել է բացառապես մելոդիկայի միջոցներով, 2) այդպես է ընդունված անվանել մենակատարային, ինչպես նաև *ունիսոնային* կամ *օկտավային* խմբական երգեցողությունը կամ նվագը, միաձայնություն: Երբ մ. ուղեկցվում է նվագով, դառնում է *հոմոֆոնիա:*

ՄՈՆՈԴԻԿ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. монодическая музыка) միաձայն երաժշտություն (տես՝ *մոնոդիա*, 1-ին իմաստով), բազմաթիվ ժողովուրդների երաժշտական մշակույթի հիմնական ձևը: Մ. ե. մեջ բազմաձայնության տարրեր են մտնում, երբ խմբական երգեցողության կամ նվագի ժամանակ (*ունիսոնային, օկտավային*), այս կամ այն կատարողը մի ակնթարթ կամ քիչ ավելի երկար ժամանակով պատահականորեն շեղվում է հիմնական եղանակից, կատարում է նրա փոքրիկ հատվածի տարբերակը, կամ *խաղ (ձայնազարդ)* է մտցնում դրա մեջ: Մ. ե. արվեստում *դամը* միակ արտահայտչամիջոցն է, որը ոչ պատահական ձևով մ. ե. դարձնում է երկձայն:

ՄՈՆՈԽՈՐԴ (հուն. monochordos, monos՝ մեկ և chorda՝ լար) նույնն է՝ *միալար:*

ՄՈՏԵՏ (ֆր. motet, mot-ի փոքրացուցիչը՝ բառ, խոսք) XII — XIV դդ. Եվրոպայում (սկզբնական շրջանում՝ Ֆրանսիայում) տարածված երգ (ավելի հաճախ եռաձայն, քան երկձայն կամ քառաձայն), որը միաժամանակ զուգակցում էր միմյանցից անկախ ստեղծված և տարբեր բառեր ունեցող մեղեդիներ, ըստ որում *տենոր* կոչվող ցածի ձայնը երգում էր եկեղեցական որևէ երգ լատինական բառերով, իսկ *մոտետ* կոչվող միջին և *տրիպլում* կոչվող վերին ձայները ֆրանսիական խոսակցական լեզվով երգում էին սիրային կամ կատակային երգեր: XV դ. կաթոլիկ




եկեղեցին այդ «գռեհիկ մ.» հակադրեց նոր տիպի մ. բոլոր ձայները երգում էին միևնույն լատիներեն տեքստը: Մինչև XVI դ. մ. գրվում էին *պոլիֆոնիկ* (երբեմն՝ ա կ ո ր դ ա յ ի ն) դարսվածքով, *ա կապելլա* երգեցողության համար, իսկ հետո երգչախմբին միացան նաև առանձին նվագարաններ: Հետագայում մ. կոչվեցին տարբեր բնույթի բազմաձայն պ ո լ ի ֆ ո ն ի կ ստեղծագործություններ, գլխավորապես *ա կապելլա* կատարման համար:

ՄՈՏԻՎ (գերմ. Motive՝ դրդապատճառ, պատրվակ) 1) երաժշտության կարևորագույն տարր, որը նրա ստեղծման հիմքն է հանդիսանում, իրենից ներկայացնում է մի քանի նոտայից բաղկացած ամենափոքր երաժշտական կառուցվածքը, որը միավորվում է մեկ շեշտով և հանդիսանում երաժշտական թեմայի ամենաբնորոշ մասը:

ՄՈՏԻՎԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄ (ռուս. мотивная разработка) թ ե մ ա յ ի առանձին մասերի (մ ո տ ի վ ն ե ր, ֆ ր ա զ ն ե ր) ձևափոխված կրկնությունը, թեմատիկ զարգացման ձևերից մեկը:

ՄՈՐԴԵՆՏ (իտ. mordente՝ սուր, կծող) *ձայնազարդերից* մեկը, ունի տարատեսակներ. ա) *մ.*, բ) *գծված մ.*, գ) *կրկնակի մ.*, դ) *գծված կրկնակի մ.*: Մ. վերևից կամ ներքևից դրված *ալտերացիայի* նշանները համապատաս-



խանորեն բարձրացնում կամ իջեցնում են մ. օժանդակ հնչյունները: Հազվադեպ կիրառվել է *եռակի մ.:*

ՄՈՐԵՆԴՈ (իտ. morendo՝ նվազելով, մարելով) այսինքն՝ հետզհետե թուլացնելով հնչողությունը և դանդաղեցնելով տեմպը:

ՄՐՑՈՒՅԹ (ռուս. конкурс) երաժշտական մրցակցություններ, երաժիշտ-կատարողների, կոմպոզիտորների, նվագարաններ (գործիքներ) պատրաստող վարպետների միջև, որոնք անց են կացվում ըստ նախօրոք հայտարարված պայմանների: Մ. լինում են ազգային, որոնց կարող են մասնակցել մեկ պետության երաժիշտներ և միջազգային, որոնց կարող են մասնակցել տարբեր երկրների երաժիշտներ: ԽՍՀՄ-ում անցկացվում են հանրապետական, միջհանրապետական և համամիութենական մրցույթներ: Բացի դրանից, 1958 թ. չորս տարին մեկ անգամ անց է կացվում Պ. Ի. Չայկովսկու անվան երաժիշտ կատարողների միջազգային մ.: Մ. լավագույն մասնակիցներին և հաղթողներին *ժյուրին* տալիս է մրցանակ և շնորհում *դափնեկրի* կոչում, իսկ նրանք, ովքեր աչքի են ընկել իրենց կատարողական վարպետությամբ, սակայն մրցանակ չեն շահել, ստանում են դիպլոմ և տվյալ մրցույթի *դիպլոմանտի* կոչում:

ՄՈՒՂԱՄ, 1) Արևելքի մի շարք ժողովուրդների ազգային և մասնագիտացված երաժշտության *լադ*, գոյություն ունեն ավելի քան 70 *լադեր*, *մուղամներ*: Գլխավոր մ. թվին են պատկանում *ռաստը*, *շուրը*, *սեգահը*, *չահարգահը*, *բայաթի շիրազը*, *շուշտարը* և այլն: Այդ մ. շա-



տերի ձայնաշարը չի տեղավորվում մեկ *օկտավայի* սահմաններում, 2) այդ *լադերի* հետ վոկալ-գործիքային *ցիկլիկ պիեսներ*, յուրաքանչյուր պիես գրված է որևիցե *լադով* և կրում է դրա անունը: Մ. հիմնականում կազմված է իմպրովիզացիոն բնույթի մեծ մասերից, որոնք ընդմիջվում են պարային և երգային բնույթի մասերով:

«ՄՈՒՐԱՅԻԿՆԵՐԻ ՕՊԵՐԱ» (ռուս. «опера нищих») տես՝ *բալադային օպերա*:

Յ

ՅԱՄԲ (հուն. iambos) երկվանկ ոտք, երկրորդ վանկի շեշտումով, երաժշտության մեջ՝ շարժում տ ա կ տ ի թույլ մասից դեպի ուժեղ մասը:

ՅՈԴԼ, ՅՈԴԼԵՐ (գերմ. Jodl, Jodler) Հարավային Բավարիայի, Շվեյցարիայի և Ավստրիայի ալպիական լեռնցիների ժողովրդական երգի մի տեսակը, որը երգվում է *ֆալցետով*:

ՅՈԹՆՅԱԿ, յոթ կատարողներից (երաժիշտ կամ երգիչ) կազմված անսամբլ, գործիքային յ. կարող են լինել նույնատիպ կազմի և խառը կազմի, նույնը՝ վ ո կ ա լ յ.:

ՅՈՆԻԱԿԱՆ ԼԱԴ (ռուս. ионийский лад) նաև՝ ի ո ն ա կ ա ն լ ա դ, տես՝ մ ի ջ ն ա դ ա ր յ ա ն լ ա դ ե ր:

ՅՈՆԻԱԿԱՆ ՏԵՏՐԱԽՈՐԴ (ռուս. ионийский тетрахорд) նաև՝ ի ո ն ա կ ա ն տ ե տ ր ա խ ո ր դ, տես՝ տ ե տ ր ա խ ո ր դ:

ՅՈՒԲԻԼՅԱՅԻ (լատ. jubilatio՝ ցնծություն) ցնծալից գեղգեղանքներ, որոնք կատարվում են գ ր ի գ ո ր յ ա ն խ ո ր ա լ երգելիս, ա լ ե լ ո ւ յ ա յ ի վերջին վանկի վրա: Հեշտ հիշելու համար յու. տեքստավորում էին, յուրաքանչյուր հնչյունի տակ մեկ վանկ դնելով: Այստեղից է ծագել ս ե կ վ ե ն ց ի ա ն (2-րդ իմաստով):

Ն

ՆԱԽԱԲԱՆ (հուն. prologos՝ մուտք գործել, ռուս. пролог) թատերական պիեսի հիմնական գործողություններն ազդարարող պատկեր, ն. լինում է կամ այլաբանական բնույթի (օր. XVII — XVIII դդ իտալական և ֆրանսիական մեծ օպերաներում), կամ էլ ներկայացնում իրադարձություններ, որոնք նախապատրաստում են հիմնական գործողությունը (օր. «Բորիս Գոդունով» օպերայի 2-րդ գործողության ն., կամ «Պայացներ» օպերայի 1-ին գործողության ն.):

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ (ռուս. предложение) տես՝ *պարբերություն*:

ՆԱԽԱՆՎԱԳ (ռուս. прелюд, прелюдия) տես՝ *պրելյուդ*:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՀԱՊԱՂՈՒՄ (ռուս. приготовленное задержание) տես՝ *հապաղում*:

ՆԱԽԵՐԳ (ռուս. запев) խմբերգի մենակատարային (երբեմն անսամբլային՝ *դուետ*, *տերցետ*, *կվարտետ*) սկիզբը,

ինչպես նաև մենակատարային այլ հատվածները (սովորաբար ժողովրդական և մասսայական երգերում):

ՆԱԽԵՐԳԱՆՔ (ֆր. ouverture՝ բացում, սկիզբ, ռուս. увертюра) 1) որևէ խոշոր երաժշտական կամ դրամատիկ ստեղծագործության (օպերա, օպերետ, բալետ, օրատորիա, կանտատ, դրամա, կինոֆիլմ և այլն) նախաբանը մուտքը հանդիսացող նվագախմբային երաժշտական պիես, գրված *սոնատային* ձևով, ստեղծվել է XIX դ. սկզբին, իսկ *սոնատային* ձևը վերջնականապես հաստատվել է XIX դ. երկրորդ կեսին: Որպես կանոն, ն. ընդհանրացված ձևով տրվում է կատարվող ստեղծագործության գաղափարա-հուզական բովանդակությունը: Ոչ սոնատային ձևով գրված ն. սովորաբար կոչվում են *պրելյուդիա* (նախանվագ), *ինտրոդուկցիա* (սկզբնանվագ), 2) նվագախմբի համար գրված մեկմասանի ինքնուրույն երաժշտական ստեղծագործություն, որը հանդիսանում է ծրագրային երաժշտության կարևորագույն ժանրը, ձևավորվել է XIX դ. սկզբին, մեծ զարգացում ստացել ռոմանտիկ կոմպոզիտորների՝ Շուբերտի, Բեռլիոզի, Շումանի երկերում:

ՆԱԽԵՐԳԻՉ (ռուս. запевала) երգչախմբի երգիչ, որին հանձնարարվում է կատարել խմբերգի նախերգը (մենակատարային հատվածները):


ՆԱԽՇԼԱԳ (գերմ. Nachschlag՝ հաջորդող հարված) տես՝ *տրել:*

ՆԱԽՈՐԴ ԿԱՄ ՀԻՆ ԶԱՐՏՈՒՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. предыдущая или старая тональность) տես՝ *զարտուղություն:*

ՆԱԽՏԱԿՏ (ռուս. затакт) 1) ոչ լրիվ *տակտ*, որով հաճախ սկսվում է երաժշտական ստեղծագործությունը: Ն. երաժշտությունն սկսվում է *տակտի* թույլ կամ համեմատական ուժեղ մասից և որպես կանոն գրավում է ամենաշատը՝ *տակտի* կեսը (հազվադեպ՝ ավելին): Շատ հաճախ ն. սկսվող ստեղծագործությունը ավարտվում է ոչ լրիվ *տակտով*, որը ն. հետ կազմում է լրիվ *տակտ:*



ՆԱՂԱՐԱ (ռուս. нагара) 1) հայկական ժողովրդական հարվածային նվագարան, իրենից ներկայացնում է միացված երկու տարբեր ծավալի խեցե փոքրիկ կճուճներ, որոնց վերին՝ բաց կողմերը (բերանները) պատված են բարակ փոկերով ձգված կաշվով (մեծ մասամբ՝ ուղտի), բարձրությունն է մոտավորապես 17 սմ, տրամագծերը. փոքրինը՝ 7 սմ, մեծինը՝ 12 սմ: Որոշակի բարձրություն չունի, նվագում են իլիկաձև երկու փայտիկով,



կճուճների արանքում երբեմն զանգիկ են կախում: 1925 թ. Վ. Բունու վերակառուցված ժողովրդական նվագարաններից ստեղծված արևելյան սիմֆոնիկ նվագախմբում կիրառվում էր *տոնիկա-դոմինանտային լարվածք* ունեցող փայտյա ն., որի թաղանթը (ձկան կաշի) ձգվում էր մետաղյա պտուտակային հատուկ սարքավորման միջոցով, ինչպես լիտավրներինը, 2) ադրբեջանական ժողովրդական դհոլանման հարվածային նվագարան:

ՆԱՎԱՏՈՐՄԱՓՈՂԱԿ (ռուս. флотский рожок) *տորմափողակ*, ազդանշանային պղնձյա փողային բնական նվագարան, սի բեմոլ (in B) լարվածքով, ձևով, ձայնաշարով և հնչերանգով նման է հետևակափողակին:

ՆԱՏՈՒՐԱԼԻԶՄ (լատ. natura՝ բնություն) կյանքի երևույթների վերարտադրումն արվեստում, առանց այդ երևույթների էության, օրինաչափությունների ներքին իմաստի բնորոշ գծերի բացահայտման: Որպես գեղարվեստական ստեղծագործական ուղղություն, ծագել է անցյալ դարի 60-ական թ. և հիմնավորում գտել Է. Զոլայի տեսական աշխատություններում: Ն. որոշ գծեր կան Ռ. Շտրաուսի ստեղծագործություններում («Տնային սիմֆոնիա», «Մահ և հայտնություն»):

Նե, *հայկական ձայնագրության* հիմնական ձայնաշարի (*դո* նոտայով սկսվող *միքսոլիդիական լադ*) վեցերորդ հնչյունը: Լրիվ անունն է *ներքնախաղ:*

ՆԵԱՊՈԼՅԱՆ ԵՌԱՀՆՉՅՈՒՆ (ռուս. неаполитанское трезвучие) տես՝ *սուբդոմինանտային ալտերացված ակորդներ մինորում և մաժորում:*

ՆԵԱՊՈԼՅԱՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ (ռուս. неаполитанский оркестр) տարբեր ձայնածավալ ունեցող մանդոլիններից և կիթառներից կազմված նվագախումբ:

ՆԵԱՊՈԼՅԱՆ ՍԵՊՏԱԿՈՐԴ (ռուս. неаполитанский септаккорд) տես՝ *սուբդոմինանտային ալտերացված ակորդներ մինորում և մաժորում:*

ՆԵԱՊՈԼՅԱՆ ՍԵՔՍՏԱԿՈՐԴ (ռուս. неаполитанский сек-

стаккорд) *մինորում* և *հարմոնիկ մաժորում* իջեցված երկրորդ աստիճանի *մաժոր սեքստակորդը*, նշանակվում է *մինորում*՝ II_6^{-1}, *մաժորում*՝ $II_6^{\sharp 1}$ (♯) այլ կերպ (*մինորում և մաժորում*)՝ N_6 կամ NII_6: Սկզբում կիրառվել է միայն *մինորում*, շատ ավելի ուշ՝ նաև *մաժորում*: Ն. է կոչվում, որովհետև առաջին անգամ օգտագործվել է XVIII դ.



նեապոլյան օպերային դպրոցի կոմպոզիտորների՝ Ա. Սկառլատիի, Ս. Ստրադելլայի և ուրիշների ստեղծագործություններում, հանդիսանում է *սուբդոմինանտային ալտերացված ակորդներից* մեկը՝ *մինորում* և *մաժորում*: *Տես՝ նեապոլյան եռահնչյուն, նեապոլյան սեպտակորդ, սուբդոմինանտային ալտերացված ակորդներ մաժորում:*

ՆԵՂ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. тесное расположение) իմաստով նույնն է՝ *ակորդի նեղ դասավորություն:*

ՆԵՆԻԱ (լատ. nenia կամ naenia՝ թաղման երգ) մի շարք ժողովուրդների սգո երգ, որ երգում են հարազատները (հատկապես՝ կանայք) կամ հատուկ ողբասացները թաղման ժամանակ:

ՆԵՈԿԼԱՍԻՑԻԶՄ (հուն. neos՝ նոր և կլասիցիզմ) հոսանք XX դ. երաժշտական արվեստում, որը ձգտում է վերածնել դասական ժամանակաշրջանի երաժշտության գեղարվեստական կերպարները, ձևերը և ոճական հնարները: Ն. լավագույն նմուշներ են ստեղծել (Պրոկոֆևը («Դասական սիմֆոնիա»), Ստրավինսկին (օկտետ փողային նվագարանների համար, «Էդիպ արքա» օպերա-օրատորիան) և այլն:

ՆԵՐԲՈՂ (ռուս. ода) *օդա, գովերգ*, քնարական բնույթի հանդիսավոր գովաբանական կամ փառաբանական երգ, նվիրված որևէ անհատի կամ իրադարձության:

ՆԵՐԴԱՇՆԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. учение о гармонии) տես՝ *հարմոնիա* (2-րդ իմաստով):

ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒՄ (ռուս. гармонизация) *հարմոնիզացիա*, մեղեդին (օր. ժողովրդական երգը) բազմաձայն դարձնելը, նրա համար հարմոնիկ համապատասխան նվագակցում հորինելը: Ն. հարստացում և տարբեր երանգավորում է տալիս մեղեդուն, ն. բազմապիսությունը հնարավոր է դարձնում տարբեր տեսանկյուններով ընկալել նրա բովանդակությունը, հանդիսանում է երաժշտական ուսումնական հաստատություններում դասավանդվող *հարմոնիա* առարկայի դասերին կատարվող վարժությունների հիմնական ձևը:

ՆԵՐԴԻՐ ՀԱՄԱՐ (ռուս. вставной номер) *ագուցիկ համար*, 1) օպերային կամ այլ բեմադրության մեջ մտցված երաժշտություն, որը վերցված է մեկ այլ ստեղծագործությունից, 2) նոր, հավելյալ երաժշտական համար, որը գրում է կոմպոզիտորը, իր կամ ուրիշի ստեղծագործության մեջ մտցնելու նպատակով:

ՆԵՐՔԻՆ ԼՍՈՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. внутренний слух) տես՝ *երաժշտական լսողություն:*

ՆԵՐՔՆԱԽԱՂ, տես՝ *հայկական ձայնագրություն:*

ՆՅՈՒԱՆՍ (ֆր. nuance՝ երանգ), տես՝ *նրբերանգ:*

ՆՅՈՒԱՆՍԱՎՈՐՈՒՄ, տես՝ *նրբերանգավորում:*

ՆՇԱԳՐՈՒՄ (ռուս. нотация) տես՝ *նոտագրություն:*

ՆՈԿՏՅՈՒՌՆ (ֆր. nocturne՝ գիշերային) *ցայգերգ, ցայգանվագ*, 1) XVIII դ. այսպես էր կոչվում փողային (հատկապես՝ վալտորնաների) անսամբլների, ինչպես նաև աղեղնային նվագարանների (գործիքների) համար գրված՝ մի շարք փոքրիկ պիեսներից բաղկացած *սյուիտանման ցիկլը*, որը կատարում էին բացօդյա՝ երեկոյան կամ գիշերը (ինչպես *սերենադը*): Այդպիսի ն. գրել են Հայդնը, Մոցարտը և ուրիշներ, 2) XIX դ. այսպես են կոչվում ոչ մեծածավալ, մենակատարային պիեսները, որոնք ունեն քնարական, երազկոտ բնույթ, երգուն, լայնաշունչ մեղեդի, ավելի շատ դաշնամուրի համար (Ֆիլդ, Շոպեն, Չայկովսկի և ուրիշներ): Ն. են գրվել նաև այլ նվագարանների, անսամբլների, նվագախմբերի, ինչպես նաև երգեցողության համար: Տես՝ *ցայգերգ, ցայգանվագ:*

ՆՈՆԱ (լատ. nona՝ իններորդ) 1) *դիատոնիկ գամմայի* յուրաքանչյուր հնչյունի իններորդ աստիճանը, կամ նրանց հարաբերությունը, այսինքն հնն աստիճան ընդգրկող *ինտերվալ*, 2) *ակորդի նոնային տոնի* կրճատ անվանումը:

ՆՈՆԱԿՈՐԴ, հինգ ձայնից բաղկացած ակորդ, *հնգահնչյուն*, նշանակվում է 9 թվանշանով: Գործ են ածվում *մեծ* (մեծ նոնաչյով) և *փոքր* (փոքր նոնաչյով) *դոմինանտնոնակորդները* (D_9 — V_9) և *մեծ սուբդոմինանտ-*



նոնակորդը (SII_9), որոնք կառուցվում են *բնական մաժորի* V և II, *հարմոնիկ մաժորի* և *մինորի* V աստիճանների վրա (օգտագործվում են միայն հիմնական դրությամբ): Մնացած բոլոր ն. և նրա շրջվածքները հիմնականում դիտվում են որպես *պատահական զուգորդումներ:*

ՆՈՆԱՅԻՆ ՏՈՆ (ռուս. ноновый тон) տես՝ *ակորդային տոներ:*

ՆՈՆԵՏ (իտ. nonetto) 1) *իններյակ*, ինը կատարողներից բաղկացած վոկալ կամ նվագարանային անսամբլ, 2) ինը կատարողների համար, *սոնատային ձևով* գրված ստեղծագործություն (այդ թվում և որպես օպերային անսամբլ):

ՆՈՆ ԼԵԳԱՏՈ (իտ. non legato՝ չկապակցված, չմիացված) հնչյունների հաջորդականության չկապակցված (ընդհատումներով) կատարումը, սակայն առանց ընդգծված կերպով կտրատելու, մեկը մյուսից անջատելու: Նշանակվում է non legato բառերով (նոտագրվում է առանց *լիգայի* և այլ *շտրիխների* նշանների), արագ շարժման ժամանակ ն. լ. դառնում է *ստակատո*, կամ նրա տարատեսակը: Տես՝ *լեգատո:*


ՆՈՎԵԼԵՏ (իտ. noveletta՝ փոքրիկ պատմվածք) փոքրածավալ երաժշտական ստեղծագործություն, որն ունի քնարական-պատմողական, դրամատիկ կամ ժանրային բնույթ:

ՆՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. нотное письмо, нотация) *նշագրում*, երաժշտությունը գրի առնելու միջոցը, որ տարբեր դարաշրջաններում և տարբեր երկրներում կիրառել են հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Հին Հունաստանում գոյություն ուներ բավական զարգացած *տառային ն.*, որից մինչև X դ. օգտվում էին նաև արևմտաեվրոպացիները, որից հետո հունական տառերը փոխարինեցին լատինական այբուբենի տառերով: Տառային ն. բացի միջին դարերում մեծ տարածում ուներ նաև *նևմային ն.*, որով սակայն հնարավոր չէր նշանակել հնչյունների ճշգրիտ բարձրությունները: Տառային և նևմային ն. միացումից ծագեց ու զարգացավ *մենզուրալ ն.*, որի հիման վրա էլ ստեղծվեց մեր այժմյան ն.: VIII դ. սկսած Հայաստանում կիրառվել է հայկական *խազային ն.*, որը մի շարք պատմական պատճառներով, մոտավորապես XVII դ. վերջին մոռացության է մատնվել: Օգտագործելով խազային ն. մի քանի նշաններ և այլ իմաստ տալով դրանց, 1815 թ. Հ. Լիմոնճյանը ստեղծեց *հայկական ձայնագրություն* կոչվող ն., որը մեծ դեր խաղաց ժողովրդական և հոգևոր բազմաթիվ երգեր գրի առնելու և կորստից փրկելու գործում: *Խազային (Նևմային)* ն. ունեցել են նաև ռուսները, վրացիները և մի շարք այլ ժողովուրդներ: Տես՝ *կրյուկներ:*

ՆՈՏԱԿԱԼ (ֆր. pupitre, գերմ. Pult, ռուս. пульт, пюпитр) *պուլտ, պյուպիտր*, փայտյա կամ մետաղյա շարժական հենարան, որի վրա դրվում են նոտաները: Մի շարք նվագարաններ ունեն իրենց վրա հարմարեցված ն. (դաշնամուր, երգեհոն, ֆիսհարմոն և այլն):

ՆՈՏԱԿԻՐ (ռուս. нотописец) նույնն է՝ *հնգագիծ:*

ՆՈՏԱՆԵՐ (լատ. nota-ից՝ գրանշան, ռուս. ноты) 1) հատուկ նշաններ, որոնցով գրի են առնում ձայնի տևողությունը: Բացի *բրեվիսից*, մնացած բոլոր ն. գլխիկ կոչվող մասը ձվաձև է կամ կլոր: Տես՝ *տևողության նշաններ, տևողությունների զույգ բաժանում, տևողությունների ոչ զույգ բաժանում, տևողությունների բաժանման հատուկ ձևեր, նոտաների ռիթմիկ բաժանում*, 2) յոթ հիմնական



հնչյունների և նրանց ձևափոխումների ընդհանուր անունը: Ն. դրվելով հնգագծի վրա, բացի ձայնի տևողությունից, ցույց են տալիս նաև ն. բարձրությունը, 3) տպագրված կամ ձեռագիր երաժշտական ստեղծագործություն, օր. Չայկովսկու «Կարապի լիճը» բալետի ն., Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի ն., Շոստակովիչի Յոթերորդ սիմֆոնիայի ն. և այլն:

ՆՈՏԱՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ (ռուս. группировка нот) *տակտի* մեջ՝ տևողության նշանների գրառման (ինչպես նաև կապագծերով՝ ութերորդական և ավելի փոքր տևողությունների միացման) կանոնները, որոնք հեշտացնում, ավելի հարմար են դարձնում նոտաների ընթեռնումը: Գոյություն ունի ն. խ. երկու ձև՝ ա) նվագային երաժշտության և բ) վոկալ երաժշտության: Նվագային երաժշտության *պարզ տակտերում* յուրաքանչյուր մասը գրի է առնվում առանձին, իսկ *բարդ տակտերում*՝ առանձին գրի են առնվում այդ բարդ տակտը կազմող պարզ տակտերը: Բառեր ունեցող վոկալ երաժշտության մեջ ն. խ. կախված է նրանից, թե մեղեդու մեջ ինչպես են դասավորված տեքստի վանկերը. եթե տեքստի յուրաքանչյուր վանկին ընկնում է մեղեդու մեկ հնչյուն, ապա այդ հընչյունները գրի են առնվում առանձին-առանձին, եթե յուրաքանչյուր վանկին համընկնում է մեղեդու մի քանի



հնչյուն, ապա այդ հնչյունները միացնում են կապագծերով կամ *լիգայով*: Առանց բառերի վոկալ երաժշտության (տես՝ *վոկալիզ*) նոտաները խմբավորվում են գործիքային երաժշտության խմբավորման կանոններով:

ՆՈՏԱՆԵՐԻ ՌԻԹՄԻԿ ԲԱԺԱՆՈՒՄ (ռուս. ритмическое деление нот) իմաստով նույնն է՝ *տևողությունների զույգ բաժանում:*

ՆՈՏԱՆԵՐԻ ՏԱՌԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ (ռուս.буквенное обозначение нот) նույնն է՝ *հնչյունների տառային նշանակում:*

ՆՈՐ ՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. новая тональность) նույնն է՝ *հաջորդ կամ նոր տոնայնություն:* .

ՆՎԱԳԱՐԱՐՁՈՒՄ (ռուս. транскрипция) *վերամշակում*, տես՝ *տրանսկրիպցիա:*

ՆՎԱԳԱՁԱՐԿ, *զարկեղանակ*, տես՝ *մատնազարկ:*

ՆՎԱԳԱԽՄԲԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. оркестровая музыка) որևէ կազմի նվագախմբի համար գրված երաժշտություն (սիմֆոնիկ, փողային, էստրադային, ժողովրդական նվագարանների և այլն):

ՆՎԱԳԱԽՄԲԱՅԻՆ ՓՈՍ (ռուս. оркестровая яма) տես՝ *օրկեստր* (2-րդ իմաստով):

ՆՎԱԳԱԽՄԲԻ ԱՐՏԻՍ (ռուս. артист оркестра) նվագախմբի կազմի մեջ մտնող երաժիշտ:

ՆՎԱԳԱԽՈՒՄԲ (հուն. orchḗstra, ռուս. оркестр) նվագող երաժիշտների խումբ, որի խնդիրն է կազմակերպված ձևով կատարել տվյալ կազմի ն. համար հորինված կամ փոխադրված երաժշտական ստեղծագործություններ: Այդպես է կոչվում նաև ն. մեջ մտնող նվագարանների (գործիքների) համակ կազմը: Ն. կարող է կազմված լինել տարբեր ձայնածավալ ունեցող միակերպ նվագարաններից, օր. դոմրային ն., լարային (աղեղնային) ն. և այլն, նաև՝ տարբեր նվագարաններից, օր. սիմֆոնիկ ն. (որի կազմի մեջ են մտնում լարային, փայտյա փողային, պղնձյա փողային և տարբեր տիպի հարվածային նվագարաններ), *փողային* ն. (որի կազմի մեջ են մտնում պղնձյա փողային, փայտյա փողային և հարվածային նվագարաններ) և այլն: Ի տարբերություն *կամերային անսամբլների* (*քառյակներ*, *հնգյակներ* և այլն), ն. կան մի շարք նույն նվագարանների ենթախմբեր, որոնք կատարում են նույն *պարտիան* (ձայնը), այսինքն նվագում են *ունիսոն*(ջութակները, թավջութակները, թառերը, քյամանչաները, դուդուկները և այլն): Որպես կանոն, ն. ղեկավարում է *նվագավարը*՝ *դիրիժոր*, *կապելմայստեր* (տես՝ *պերսիմֆանս*): Ըստ նվագարանների կազմի, տարբերում են հետևյալ ն.՝ *սիմֆոնիկ ն.*, *լարային* (աղեղնային) ն., փողային ն., կամերային ն., ժողովրդական նվագարանների կազմի, տարբերում են հետևյալ ն.՝ *սիմֆոնիկ ն.*, *լարային* (աղեղնային) *ն.*, *փողային ն.*, *կամերային ն.*, *ժողովրդական նվագարանների ն.*, *էստրադային ն.*, *ջազային ն.*, *բայանահարների ն.*, *նեապոլյան ն.* և այլն: Տես՝ *օպերային ն.:*


ՆՎԱԿՈՒԹ (գերմ. Griff՝ կոթ, բռնակ) 1) լարային և կսմիթային նվագարանների (գործիքների)՝ փայտից կամ պլաստմասսայից պատրաստված երկար թիթեղիկ, սոսընձված վզիկի վերին մասին (այն մասին, որի վրա ձգվում են լարերը), 2) հարմոնի, բայանի, ակորդեոնի իրանի դետալ, որի վրա ամրացվում է աջ ձեռքի ստեղնաշարը, 3) փողային նվագարանների՝ գլանաձև վենտիլային մեխանիզմի հանգույց (տես՝ *վենտիլ*), 4) էլեկտրական նվագարանների՝ կոնտակտային ձողիկ կամ ժապավեն, որին դիպչում է կատարողը մատներով, նվագելու ժամանակ:

ՆՎԱԿԱԿՅՈՒՄ (ռուս. аккомпанирование) նվագակցության կատարման ընթացքը:

ՆՎԱԿԱԿՅՈՂ (ֆր. accompagnateur, ռուս. аккомпаниатор) նվագակցութուն կատարող երաժիշտը:

ՆՎԱԿԱԿՅՈՒԹՅՈՒՆ (ռուս. аккомпанемент) 1) *հոմոֆոնիկ* երաժշտության մեջ՝ հիմնական մեղեդուն, հիմնական երաժշտությանն ուղեկցող երաժշտություն, ըստ որում հիմնական երաժշտությունը կարող է լինել թե միաձայն, թե բազմաձայն: Կոմպոզիտորների հորինած համարյա բոլոր ստեղծագործությունները, որոնք գրված են մեներգիչների, մենակատարների և մի շարք անսամբլների համար, ունեն իրենց ն., խմբերգերն ու երգչային անսամբլները լինում են՝ ա) որոնք ունեն նվագարանային նվագակցություն, բ) որոնք չունեն այդպիսին և պիտի կատարվեն *ա կապելլա*: Ն. երաժշտության այն մասն է, որն ավելի գեղեցկացնում, հարստացնում է հիմնական երաժշտական գիծը, խորացնում գեղարվեստական բովանդակությունը: Բարձրարժեք երաժշտական ստեղծագործություններում հիմնական մեղեդին և ն. միասնություն են կազմում, հաճախ ն. դադարում է կատարել սոսկ «ուղեկցի» դեր և վերաճում է անսամբլի համահավասար ինքնուրույն *պարտիայի*, 2) այսպես է կոչվում նաև ն. կատարումը:

ՆՎԱԳԱՎԱՐՈՒՄ (ռուս. дирижирование) երաժշտական ստեղծագործության կոլեկտիվ կատարումը (երգչախումբ, նվագախումբ, օպերա) ղեկավարելու արվեստը: Ն. իրագործվում է դիրիժորի կողմից, հիմնված է ժեստերի, դիմախաղի հատուկ մշակված սիստեմի վրա, որոնց մի-



ջոցով դիրիժորն իրականացնում է երաժշտական ստեղծագործության կատարման ղեկավարումը:

ՆՎԱԳԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (ԳՈՐԾԻՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ) (ռուս. инструментоведение) գիտություն, որն ուսումնասիրում է նվագարանները (գործիքները), դրանց կառուցվածքը, ձայնածավալը, տեխնիկական և ակուստիկ հնարավորությունները, հատկությունները, կատարողական և արտահայտչական միջոցները, ինչպես նաև դրանց դասակարգման սկզբունքները:

ՆՎԱԳԱՐԱՆԱՀԱՐ (ռուս. инструменталист) որևէ նվագարան (գործիք) նվագող երաժիշտ:

ՆՎԱԳԱՐԱՆԱՅԻՆ (ԳՈՐԾԻՔԱՅԻՆ) ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. инструментальная музыка) նվագելու համար նախորոշված երաժշտական ստեղծագործություն, կարող է լինել մենակատարային (նվագակցությամբ կամ առանց դրա), անսամբլային (եռյակ, քառյակ, հնգյակ և այլն) և նվագախմբային:

ՆՎԱԳԱՐԱՆԱՎՈՐՈՒՄ (ԳՈՐԾԻՔԱՎՈՐՈՒՄ) (ռուս. инструментовка) 1) որևէ նվագախմբի համար գրված ստեղծագործության *պարտիտուրի* ստեղծումը, ստեղծման պրոցեսը, նվագախմբի կազմի մեջ մտնող յուրաքանչյուր նվագարանի և նվագարանային խմբի *պարտիաների* ստեղծումը, գրառումն ու ի մի բերումը *պարտիտուրում*, 2) որևէ ոչ նվագախմբային ստեղծագործության (օր. դաշնամուրային պիեսի, երգի և այլն) վերածումը նվագախմբայինի: ԽՍՀՄ-ում Ն. որպես ուսումնական առարկա, մտնում է կոնսերվատորիաների և երաժշտական ուսումնարանների մի քանի ֆակուլտետների և բաժինների ուսումնական ծրագրերի մեջ, 3) տես՝ *վերանվագարանավորում*:

ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ԳՈՐԾԻՔՆԵՐ) (ռուս. музыкальные инструменты) երաժշտական գործիքներ, նվագելու համար պատրաստված տարբեր ձևի և ծավալի հատուկ գործիքներ: Ն. կարելի է բաժանել հետևյալ հինգ խմբերի՝ *լարային, փողային, հարվածային, լեզվակային* և *էլեկտրական-էլեկտրոնային*, որոնք հետագա դասակարգման ժամանակ կարող են բաժանվել ենթախմբերի և տեսակների: *Լարային* Ն. ունեն հետևյալ ենթախմբերն ու տեսակները՝ *աղեղնային* (վիոլա, ջութակ, ալտ, թավջութակ, կոնտրաբաս, բյամանի, բյամանչա և այլն), *կսմիթային* (տավիղ, արֆա, գուսլի, քանոն, բալալայկա, թառ, սազ և այլն), *կսմիթային-ստեղնային* (կլավեսինն՝ իր տարատեսակներով), *հարվածային* (սանթուր, ցիմբալ և այլն), *հարվածային-ստեղնային* (կլավիկորդ, դաշնամուր): *Փողային* Ն. ենթախմբերն ու տեսակներն են՝ *փայտյա փողային* (թեև ներկայումս դրանք պատրաստվում են նաև մետաղից, պլաստմասսայից, ապակուց), որոնք իրենց հերթին բաժանվում են. *սուլող փայտյա փողային* (ֆլեյտան իր տարատեսակներով, սրինգ բլուլ, թութակ, Պանի ֆլեյտա և այլն), *միակի պիպիչավոր փայտյա փողային* (հոբոյ, ֆագոտ՝ իրենց տարատեսակներով, հեկկելֆոն, դուդուկ, զուռնա և այլն), *պղնձյա փողային* (վալտորն, փող, տրոմբոն, տուբա, կոռնետ, հելիկոն և այլն), *բազմաձայն փողային* են հանդիսանում երգեհոնը և բուրդոնային փողը (փողեր) ունեցող պարկապզուկը: *Հարվածային* Ն. ենթախմբերն ու տարատեսակներն են՝ *թաղանթավոր հարվածայինները*, որոնք իրենց հերթին բաժանվում են *որոշակի բարձրություն ունեցող* (լիտավր) և *որոշակի բարձրություն չունեցող* (մեծ և փոքր թմբուկներ, բուբեն, դհոլ, դափ և այլն) Ն., *ինքնահունչ հարվածայիններ*, որոնք նույնպես բաժանվում են երկու տեսակի՝ *որոշակի բարձրություն ունեցող* (զանգեր, զանգակներ, վիբրոֆոն, չելեստա, քսիլոֆոն, գոնգ և այլն) և *որոշակի բարձրություն չունեցող* (տամ-տամ, եռանկյունի, ծնծղաներ, կաստանյետներ և այլն) Ն.: *Լեզվակային* Ն. ենթախմբերն են՝ *շրթնային-լեզվակային* (շրթհարմոն), *ստեղնային-լեզվակային* (ֆիսհարմոն, ակորդեոն, բայան և այլն): *Էլեկտրական-էլեկտրոնային* Ն. հնչում են էլեկտրական ալիքները ձայնականի փոխարինելու միջոցով:

ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐԻ (ԳՈՐԾԻՔՆԵՐԻ) ԸՆՏԱՆԻՔ (ռուս. семейство музыкальных инструментов) երաժշտական նվագարանների (գործիքների) խումբ, որոնք կառուցվածքի և ձայնի արտաբերման սկզբունքով նույնն են, իսկ մեծությամբ տարբեր, որի հետևանքով Ն. ը. կազմի մեջ մտնող նվագարանները (գործիքները) օժտված են համանման ձայներանգով, սակայն ձայնածավալի տեսակետից տարբեր ձայնաշարով: Ն. ը. են կազմում ֆլեյտաները, հոբոյները, կլարնետները, ֆագոտները, փողերը, տրոմբոնները, ջութակները և այլն:

ՆՐԲԵՐԱՆԳ (ֆր. nuance, ռուս. нюанс) *նյուանս*, երաժշտության կատարման ժամանակ տեղի ունեցող հնչողության ուժգնության, շարժման արագության և կատարման բնույթի նրբազգաց փոփոխություններից յուրաքանչյուրը: Նոտաներում Ն. հիմնականում գրի են առնըվում լրիվ կամ կրճատագիր (գլխավորապես՝ իտալերեն) և հատուկ նշաններով, որոնք վերաբերում են *ուժաբանությանը* (օր. p, mp, f, cresc., decresc. և այլն) շարժման արագությանը՝ *տեմպին* (օր. ritenuto, riten., rit., accelerando, acceler. և այլն) և կատարման բնույթին (օր. dolce, scherzoso, rabbiozo և այլն): Բառերն ու նշանները յուրաքանչյուր արտիստ կատարում է յուրովի, բացի դրանից, կատարման մեջ մտցնում բազմապիսի չնշված Ն., որոնք սովորաբար առկա են նշված Ն. սահմաններում: Տես՝ *նրբերանգավորում*:

ՆՐԲԵՐԱՆԳԱՎՈՐՈՒՄ (ռուս. нюансировка) *նյուանսավորում*, երաժշտության կատարման ժամանակ տեղի ունեցող *ուժաբանական, տեմպի*, կատարման բնույթի բազմազան նրբին փոփոխությունների միագումարը: Ն. մեծ չափով կախված է տվյալ արտիստի կատարողական ոճի անհատական առանձնահատկություններից: Տես՝ *նրբերանգ*:

Շ

ՇԱԿՈՆՆԱ (ֆր. chaçonne, իսպ. chacona-ից) իսպանական հնագույն պար, որը XVII դ. հանդիսանում էր բալետի եզրափակիչ համարը, չափը՝ 3/4, պարաքայլերը՝ դանդաղ և սահուն: Շ. երաժշտական ձևը *վարիացիայի* մի տեսակ է: Տես՝ *չակոննա:*

ՇԱՆՍՈՆ (ֆր. chanson՝ երգ) 1) ֆրանսիական երգային ժանր, որն իր մեջ ներառնում է թեմատիկ բազմազանություն, դեմոկրատական բովանդակություն, XIX դ. վերջից, XX դ. սկզբում հատկապես, մեր ժամանակներում նաև՝ լայն տարածում գտած երգարվեստի տեսակ: Շ. կատարողները (մեծ մասամբ՝ տղամարդիկ) հաճախ հանդես են գալիս որպես իրենց երգերի տեքստի և երաժշտության հեղինակներ, 2) ռուս երաժշտական գրականության մեջ տերմինը կիրառում է սովորաբար ֆրանսիական որոշ երգային ժանրեր բնորոշելիս, օր. XV—XVI դդ. ֆրանսիական բազմաձայն երգը:

ՇԱՆՍՈՆԵՏՈՒՀԻ (ֆր. chansonette, ռուս. шансоньетка) 1) թեթև, հաճախ բաց բովանդակության երգ, որը կատարելիս երգչուհին երգն ուղեկցում է պարային շարժումներով, 2) մինչ հեղափոխական Ռուսաստանում կաֆե-շանտաններում բաց բովանդակության երգեր կատարող երգչուհի:

ՇԱՆՍՈՆՅԵ (ֆր. chansonere, ռուս. шансонье) *շանսոններ* երգող երգիչ, որը հաճախ նաև կատարվող երգերի տեքստի և երաժշտության հեղինակն է: Մեծահամբավ շ. է Շ. Ազնավուրը:

ՇԱՊՊԱՐ, տես՝ *պարկապզուկ:*

ՇԱՐԱԿԱՆ, 1) այս կամ այն եկեղեցական հանդիսության, տոնի համար սահմանված և եկեղեցում երգվող երգ, որը մտնում է նույնաբնույթ երգաշարի մեջ, որտեղից էլ՝ շ. անվանումը, 2) շ. ժողովածու, գիրք, որի մեջ ամփոփված են շ., այլ կերպ՝ *Շարակնոց:*

ՇԱՐԱԿՆՈՑ, տես՝ *շարական* (2-րդ իմաստով):

ՇԱՐԱՍՅՈՒՆԱՅԻՆ ՔԱՅԼԵՐԳ (ռուս. колонный марш) ռազմական քայլերգ, որը կատարվում է զորատեսերի և ռազմական շքահանդեսների կատարման ժամանակ, *տեմպը*՝ սովորաբար 120 քայլ մեկ րոպեում, չափը՝ 6/8:



ՇԱՐԺԱԿԱՆ ԿՈՆՏՐԱՊՈՒՆԿՏ (ռուս. подвижной контрапункт) այնպիսի *բարդ կոնտրապունկտ*, որում մեղեդիների նոր զուգակցումը կատարվում է միևնույն մեղեդիների տեղափոխմամբ: Շ. կ. լինում է երկու տեսակ՝ ա) *ուղղաձիգ-շարժական կոնտրապունկտ*, երբ մեղեդիները փոխում են իրենց տեղերը. ցածինը տեղափոխվում է *օկտավա, դուոդեցիմա* կամ *դեցիմա* վեր(հազվադեպ՝ այլ *ինտերվալով*, կամ՝ վերինը վար), բ) *հորիզոնական-շարժական կոնտրապունկտ*, երբ փոխվում է զուգակցվող մեղեդիների սկզբնական զուգակցման համեմատությամբ, նրանցից մեկը մուտք է գործում քիչ ավելի շուտ կամ ուշ: Տես՝ *պարզ կոնտրապունկտ, կրկնակի շարժական կոնտրապունկտ:*

ՇԱՐԻՎԱՐԻ (ֆր. charivari՝ մոտավորապես՝ մեծ աղմուկ) աղմկային նվագարանների օգտագործմամբ, ընդգծված կեղծ ձայն երաժշտություն, որը կատարվում է ծաղրանքով, սերենադի ձևով, այլ կերպ՝ *կատվահամերգ:*

ՇԱՐՄԱՆԿԱ (ռուս. шарманка) մեխանիկական փողային նվագարան (գործիք), առանց ստեղնային մեխանիզմի, կազմված է արկղից, որի մեջ զետեղված են ինչափողեր, փուքս և գլանիկներ, որոնք շարժման մեջ են դրվում բռնակը պտտեցնելու միջոցով: Շ. կատարվող յուրաքանչյուր մեղեդի ունի իր գլանիկը: Երևան է եկել XVIII դ., արևմտյան Եվրոպայում և դարձել թափառական երաժիշտների նախընտրած նվագարանը: Ռուսաստան է մուտք գործել XIX դ. առաջին կեսին, շ. անունը գալիս է ֆրանսիական «Charmant Catherin» (շարման Կատրին) հանրածանոթ երգից, որը Ռուսաստանում շ. կատարվող առաջին երգն էր:

ՇԵՂ ՁԱՅՆԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. косвенное голосоведение) տես՝ *ձայնատարություն* (2-րդ իմաստով):

ՇԵՂՈՒՄ (ռուս. отклонение) տես՝ *զարտուղություն:*

ՇԵՄՔԻԿ (ռուս. порожек) լարային և որոշ կսմիթային նվագարանների (գործիքների) փայտյա, ոսկրյա կամ պլաստմասսայից պատրաստված դետալ, որը սահմանափակում է լարի տատանվող մասը և ծառայում լարերը *գրիֆի* վրա բարձր պահելու համար:

ՇԵՇՏ (լատ. accentus՝ հարված) որևէ ձայնի կամ ակորդի առանձնացումը, զատումը, ընդգծումը: Շ. լինում են *դինամիկ* և *ագոգիկ:*

ՇԵՍՏՅՈՐԿ, տես՝ *կադրիլ:*

ՇԵՓՈՐ (ռուս. фанфара) ազդանշանային պղնձյա փողային բնական նվագարան (գործիք), առանց *վենտիլների*, որով կարելի է հնչեցնել *բնական ձայնաշարը*, նման է քիչ երկարացված *փողի:* Լարվածքը *մի բեմոլ* է (in Es), բացի ազդանշաններ տալուց, օգտագործվում է փողային նվագախմբերում հանդիսավոր (զորահանդեսային) քայլերգեր, շեփորային քայլերգեր կատարելիս:

ՇԵՓՈՐԱՅԻՆ ՔԱՅԼԵՐԳ (ռուս. фанфарный марш) շեփորներով կատարվող ազդանշանային բնույթի, հանդիսավոր թեմաներով զինվորական շարասյունային քայլերգ:

ՇԵՓՈՐԱՆՎԱԳ (ռուս. фанфара) հանդիսավոր կամ ռազ-

մական բնույթի ազդանշանային երաժշտական դարձվածքներ (թեմաներ), որոնք հաճախ օգտագործվում են օպերաներում, սիմֆոնիաներում և այլ ստեղծագործություններում:



ՇԻՄՄԻ (անգլ. shimmy) *ֆոքստրոտի* տարատեսակը, որպես սալոնային հանդիսապար մեծ տարածում ուներ դարասկզբին, չափը՝ 2/4:

ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԼԱԴ (ռուս. шотландский лад) տես՝ *պենտատոնիկա:*

ՇՊԻԼՄԱՆ (գերմ. Spielmann՝ նվագող մարդ, ռուս. шпильман) միջնադարյան Գերմանիայում՝ ժողովրդական պրոֆեսիոնալ թափառաշրջիկ երաժիշտ և երգիչ, որը միաժամանակ նաև դերասան էր: Տես՝ *հիստրիոն:*

ՇՎԻ (ռուս. свирель) տես՝ *սրինգ:*



ՇՏՐԻԽ (գերմ. Strich՝ գիծ, հատկանիշ) աղեղնային նվագարաններ (գործիքներ) նվագելիս աղեղի շարժման ձևը, որից կախված է *ֆրազավորումը* և հնչողության բնույթը: Շ. ընտրությունը պայմանավորվում է կատարվող ստեղծագործության բովանդակությամբ և կատարողի գեղարվեստական մտահղացմամբ, ամենակարևոր շ. են՝ ա) *«պառկած»* շ.-եր՝ *լեգատոն, դետաշեն, մարտելե, ստակատոն,* բ) *«ցատկող»* շ.-եր՝ *սալտանդոն, սոտիյե, սպիկատոն, ռիկոշեն:* Շ. տերմինը կիրառվում է նաև այլ նվագարանների (գործիքների) և երգեցողության վերաբերյալ: Տես՝ *արտիկուլյացիա (առոգանություն):*

ՇՐԹՀԱՐՄՈՆ (ռուս. губная гармошка) *հարմոնի*

սկզբունքով պատրաստված փոքրիկ նվագարան, որի մետաղյա լեզվակները տատանման մեջ են դրվում շըր-



թունքների արանքով փչվող ու հետ քաշվող օդի հոսանքով: Կան *միաշար, երկշար-օկտավային* և *երկշար-տրեմոլացնող* շ.: Կենցաղում օգտագործվող համարյա բոլոր շ. ունեն *դիատոնիկ ձայնաշար: Դիատոնիկ (միաշար)* շ. յուրաքանչյուր մըղանցքից օդը ներս փչելիս և հետ քաշելիս ստացվում են երկու տարբեր բարձրության հնչյուններ: Նվագախմբերում գործածվում են *խրոմատիկ շ. մի քանի տարատեսակներ:*



ՇՐԹՆԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ԳՈՐԾԻՔՆԵՐ) (ռուս. амбушурные (музыкальные) инструменты) տես՝ *փողային նվագարաններ (գործիքներ):*

ՇՐՋԱՆԱԿ (ռուս. обечайка) նվագարանների (գործիքների) դետալ, որը իրանի կողմասն է հանդիսանում, լինում է կորացրած և բաղկացուցիչ, օր. *կիթառի* շրջանակը կազմված է երկու մասից (աջ և ձախ), *ջութակի* ընտանիքին պատկանող նվագարանների շ. կազմված է վեց մասից (2 վերին, 2 միջին և 2 վարին): Թմբուկի շ. կոչվում է *կադռ:* Տես՝ *խեմ:*

ՇՐՋԱՆԱՁԵՎ ԿԱՆՈՆ, տես՝ *անվերջ կանոն:*

ՇՈՒՐՋՊԱՐ (ռուս. хоровод) տես՝ *խմբապար:*

ՇՈՒՐՋՊԱՐԻ ՆԱԽԵՐԳԻՉ (ռուս. хороводник) տես՝ *խմբապարի նախերգիչ:*

ՇՈՒՐՋՊԱՐԻ ՆԱԽԵՐԳՉՈՒՀԻ (ռուս. хороводница) տես՝ *խմբապարի նախերգչուհի:*

Ո

ՈՂԲԱՍԱՑ, ժողովրդական հնագույն կենցաղում՝ լաց, ողբ կատարող, որին հրավիրում էին թաղման, ինչպես նաև հարսանեկան որոշ արարողությունների մասնակցելու համար: Ո. արվեստին բնորոշ է ազատ իմպրովիզացիան: Սովորաբար ո. հանդիսանում էին ֆոլկլորային այլևայլ ժանրերի (երգեր, բիլիններ) գիտակ:

ՈՂԲԵՐԳ, ողբի երգ, տխուր երգ, *էլեգիա:*

ՈՂԲԵՐԳԱԿ (ռուս. вопленик, -ница) 1) միջնադարյան Հայաստանի ողբերգական թատրոնի դերասան, 2) ողբերգությունների հեղինակ, 3) ողբի երգեր հորինող, 4) ողբասաց, ողբ երգող կին, տղամարդ:

ՈՁ (լատ. stilus, հուն. stylos՝ հիմնական նշանակությունը՝ փայտ, գրիչ), գաղափարական բովանդակության միասնությամբ պայմանավորված, գեղարվեստական արտահայտչամիջոցների, հնարների կերպարային կարգի պատմականորեն ձևավորված կայուն ընդհանրությունը: Ո. հասկացությամբ են որոշվում արվեստի տվյալ ուղղու-


թյան, դպրոցի զարգացման խոշոր փուլերը (կլասիցիզմ, ռոմանտիզմ, բարոկկո, ռոկոկո, ֆորմալիզմ, կոնստրուկտիվիզմ և այլն): *Պոլիֆոնիայում՝* խիստ ոճ, (ազատ ոճ): Այս տերմինով է խոսվում նաև կոմպոզիտորի անհատական գրելաձևի մասին (օր. Մոցարտի ոճը) կամ մաներային բնորոշ առանձնահատկությունները (օր. կամերային ոճ, ռեչիտատիվային ոճ) և այլն:

ՈՉ ԱԿՈՐԴԱՅԻՆ ՀՆՉՅՈՒՆՆԵՐ (ռուս. неаккордовые звуки) նույնն է՝ *ոչ ակորդային տոներ:*


ՈՉ ԱԿՈՐԴԱՅԻՆ ՏՈՆԵՐ (ռուս. неаккордовые тона) տոներ (հնչյուններ), որոնք չեն մտնում տվյալ ակորդի կազմության մեջ: Ո. ա. տ. կիրառվում են որպես *անցողիկ նոտա, օժանդակ նոտա, հապաղում, կանխիկ* և *կամբիատա: Տես՝ ակորդային տոներ, ֆիգուրացում, մելոդիկ ֆիգուրացում:*

ՈՉ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՁԱՅՆ (ռուս. немузыкальный звук) տես՝ *ձայն:*

ՈՉ ԼՐԻՎ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ԳՈՐԾԻՔՆԵՐ) (ռուս. неполные (музыкальные) инструменты) պղնձյա փողային նվագարաններ, որոնցով անհնար է տատանել փողի մեջ գտնվող օդի սյունն իր ամբողջ երկարությամբ, երբեմն նաև նրա կեսը, որի հետևանքով անհնար է դառնում հնչեցնել *բնական ձայնաշարի* սկզբի մեկ կամ երկու մասնակի տոները. *ֆա վալտորնայի* բնական ձայնաշարը՝ ըստ հնչողության



մի բեմոլ շեփորի բնական ձայնաշարը՝ ըստ հնչողության





Ո. լ. ն. այլ տեսակ են կազմում *կլարնետները*, որոնցով կարելի է հնչեցնել միայն *կենտ մասնակի տոներ:* Տես՝ *լրիվ նվագարաններ, փողային նվագարաններ:*

ՈՏՆԱԿ (լատ. pedalis՝ ոտքի, ռուս. педаль) 1) մի շարք նվագարանների լծակային սարքավորման այն մասը, որը շարժման մեջ է դրվում ոտքերով. ա) դաշնամուրի և նման այլ նվագարանների ձախ ո. թուլացնում, մեղմում է նվագարանի ընդհանուր հնչողությունը, նշանակվում է una corda բառերով, աջ ո. լարերից հեռացնում է միանգամից բոլոր *խլարարները*, որի հետևանքով, անկախ ստեղների դրությունից (սեղմված կամ չսեղմված) լարերը շարունակում են հնչել, մինչև տատանումների վերջնական մարումը, այդպիսով ոչ միայն երկարացնում են հնչման տևողությունը, այլև շատ ավելի լսելի դարձնում *օբերտոները*, որոնք նոր գունավորում են տալիս հնչողությանը, աջ ո. սեղմումը նշանակվում է ped կամ p (pedal-ի կրճատը) բառով, իսկ հանումը՝ աստղանշանով (*), բ) տավղի և լիտավրների ո. փոխում են տվյալ նվագարանների լարվածքը (տես՝ mutain), գ) մի շարք նվագարանների ո. շարժման մեջ են դրվում նրանց *փուքսերը* (ֆիսհարմոն, շարժական փոքր երգեհոն, մեխանիկական դաշնամուր), 2) երգեհոնային ո., *ոտնաստեղնաշար:*

ՈՏՆԱՍՏԵՂՆԱՇԱՐ (ռուս. ножная клавиатура կամ педаль) երգեհոնի այն ստեղնաշարը, որը նվագում են ոտքերով: Ո. գտնվում է կատարողական վահանի ներքևի մասում, կատարողի ոտքերի տակ և ընդգրկում է սովորաբար 32 ստեղն: Ժամանակակից խոշոր երգեհոններն ունենում են երբեմն երկու ո.: Ո. կոչվում է նաև երգեհոնային ոտնակ կամ ուղղակի՝ ոտնակ: Տես՝ երգեհոն:

Չ

ՉԱԿՈՆԱ (իսպ. chacona, իտ. ciaccona, ֆր. chaconne) 1) հնագույն իսպանական աշխույժ պարերգ, 3/4 չափով, որն ուղեկցվում էր *կաստանյետների* զարկերով: XVII դ. Լյուլլին չ. օգտագործել է իր բալետներում, որպես դանդաղ և սահուն բնույթի եզրափակիչ համար, 2) անփոփոխ կրկնվող, հարմոնիկ հիմքում կամ բասում անփոփոխ կրկնվող թեմայով *պոլիֆոնիկ վարիացիաների* ձևով գրված երաժշտական ստեղծագործություն (տես՝ *բասսո-օստինատո*), ունի վեհաշուք-դանդաղ տեմպ և սովորաբար 3/4 չափ, կառուցվածքով և բնույթով մոտ է *պասակալիային:* Տարածված էր XVII—XVIII դդ. արևմտաեվրոպական երկրներում (օր. Յ. Ս. Բախի աշխարհահռչակ Չակոնան, որը հանդիսանում է նրա՝ ջութակի համար գրված *ռե մինոր պարտիտայի* մասերից մեկը): Չ. ձևով են գրված բազմաթիվ այլ ստեղծագործություններ, որոնք սակայն այդ խորագիրը չունեն, օր. Բեթհովենի «32 վարիացիաները»:

ՉԱՍՏՈՒՇԿԱ, ժողովրդական ռուսական երգ՝ ուրախ կամ քնարական, որը սովորաբար կատարվում է մեկմասանի (ավելի հազվադեպ՝ երկմասանի) մեղեդիով: Չ. համար բնորոշ է պոետիկ և երաժշտական կերպարների անընդ-

հատ փոփոխումը և անմիջական կապը արդիականության հետ, չ. երգում են *բալալայկայի* կամ *հարմոնի*, երբեմն էլ գործիքային անսամբլի նվագակցությամբ:

ՉԱՐԴԱՇ (հունգ. csardas, csarda՝ պանդոկ, գինետուն) հունգարական ժողովրդական պար, ստեղծված XIX դ. կեսին, հանդիսանում է *պալոտաշ* պարի ձևափոխությունը, բաղկացած է երկու մասից՝ առաջինը դանդաղ է և մելամաղձոտ, կոչվում է *լաշշան* (չափը՝ 4/8), ուղեկցվում է տղամարդու հանդարտ մենապարով, երկրորդը,

Ս. Լայոշ, Չարդաշ



որը հանդիսանում է պարի հիմնական մասը և ունի ճշտորոշ ռիթմ՝ սրընթաց է, կրակոտ, կայտառ, կոչվում է *ֆրիշկա* (չափը՝ 2/4), որը պարում են զույգերով: XX դ. սկզբից չ. տարատեսակներից մեկը մեծ տարածում է գտել Ռուսաստանում և կոչվել *պարահանդեսային* չ., ինչպես նաև՝ *վենգերկա*: Իրենց ստեղծագործություններում չ. օգտագործել են Լիստը, Բրամսը, Դելիբը, Չայկովսկին և ուրիշներ:

ՉԱՐԼՍՏՈՆ (անգլ. charleston) ամերիկյան պարահանդեսային պար, Չարլստոն քաղաքի անունով, ուր առաջին անգամ երևան է եկել չ. 1920-ական թվականներին, նեգ-

Ռ. Գլիեր, չարլստոն «Կարմիր կակաչ» բալետից




րերի պարերի հիման վրա և մինչև 30-ական թվականների ավարտը մեծ տարածում գտավ նաև Եվրոպայում: Ունի *սինկոպացված ռիթմ*, չափը՝ 4/4 կամ ¢: Չ. որոշ տարրեր մտել են արագ *ֆոքստրոտի* մեջ:

ՀԱՐՉԱՐԱՆՔՆԵՐ» (լատ. passion, ռուս. «страсти») *պաստիոն, օրատորիա*, որի սյուժեն է Քրիստոսի չարչարանքներն ու մահը: Ստեղծվել է մոտ VIII դ., որպես դրամատիկ ներկայացում, մի քանի միաձայն երգեցողական համարներով (հրեշտակների երգեցողություն և այլն): Հետագայում (XVI դ.) այդ ներկայացումների երաժշտական մասն ավելանում է, մտցվում է նվագակցություն, ապա իր կատարյալ ձևը ձեռք բերում Յ. Ս. Բախի «Yohannespassion»-ում («Չարչարանքներն ըստ Հովհաննու, 1723 թ.), հատկապես «Matthauspassion»-ում («Չարչարանքներն ըստ Մատթեոսի», 1729 թ.):

ՉԱՓ (ռուս. размер) *մետրի* կոնկրետ արտահայտությունը, նշանակվում է կոտորակի ձևով, համարիչը ցույց է տալիս *տակտի* մասերի քանակը, հայտարարը՝ յուրաքանչյուր մասի տևողությունը: Ինչպես *մետրը*, չ. նույնպես լինում է *պարզ, բարդ, խառը* և *փոփոխվող*: Պարզ *մետր* արտահայտող չ. կոչվում են պ ա ր զ չ., բարդ կամ համաչափ մ ե տ ր արտահայտող բոլոր չափերը կոչվում են *բարդ* չ.: Բարդ չ. բաղկացած են երկու միանման պարզ չ.: Խառը կամ անհամաչափ *մետր* արտահայտող բոլոր չ. կոչվում են *խառը* չ., որը կազմվում է երկու կամ մի քանի ոչ միանման պարզ չ. միացումից: Փոփոխվող *մետր* արտահայտող չ. կոչվում են *փոփոխվող* չ.: Ստեղծագործության ընթացքում փոփոխվող չ. հաջորդականությունը կարող է լինել հավասարաչափ և անհավասարաչափ:

ՉԱՓԱՉԱՓ, *մետրոնոմ*, մեխանիկական հատուկ սարք, որի ճոճանակը լսելի համաչափ զարկերով չափում է ժամանակը և հնարավոր դարձնում նշել *տեմպի* ճշգրիտ արագությունը: Ճոճանակի շարժման արագությունը կախված է նրա վրա շարժվող ծանրուկի տեղից՝ որքան վեր է ծանրուկը, շարժումն այնքան դանդաղ է և ընդհակառակն: Ճոճանակի կամ առանձին ցուցանակի վրա եղած բաժանմունքներում նշանակված են թվեր (սովորաբար՝ 40 — 208), որոնք ցույց են տալիս զարկերի քանակը մեկ րոպեում: Կան չ., որոնց զանգի զնգոցով հնարավոր է նշել յուրաքանչյուր *տակտի* ուժեղ մասը: Ստեղծվել է XVII դ. վերջում, 1816 թ. կատարելագործել է



վիեննական վարպետ Ի. Մելցելը: Չ. ցուցիչը նշանակվում է երաժշտական ստեղծագործության սկզբում, *տեմպի* նշանակումից հետո և միջում, եթե փոխվում է *տեմպը* (լատիներեն M. M. տառերով, այսինքն՝ Մելցելի մետրոնոմ), որից հետո նշվում է, թե տված տևողությունը րոպեի որ մասն է կազմում (օր. = 120 կամ = 40 և այլն): Նշանակում են նաև մեկ M.-ով, նույնիսկ առանց *տեմպի* և տառի նշանակման՝ = 92 կամ = 160 և այլն:

ՉԵԼԵՍՏԱ (իտ. celesta, celeste-ից՝ երկնային) որոշակի բարձրություն ունեցող ստեղնա-հարվածային նվագարան

(գործիք), նման է փոքրիկ դաշնամուրի, որի մեջ լարերի փոխարեն հարմարեցված են թավշակաշվով պատված մետաղյա կամ ապակյա թիթեղիկներ: Չ. մուրճիկների մեխանիկան պարզեցված է, որի հետևանքով իր կատարողա-տեխնիկական հնարավորություններով զիջում է դաշնամուրին: Չայնը մեղմ է, եթերային, ձայնածավալն ըստ գրության՝ C — C^4 (փոքր *օկտավայի դո*-ից մինչև չորրորդ *օկտավայի դո*-ն) հնչում է գրվածից մեկ (երբեմն լսվում է՝ երկու) *օկտավա* վեր, նոտագրվում է, ինչպես դաշնամուրը: Ստեղծվել է 1886 թ. և հիմնականում օգտագործվում է սիմֆոնիկ նվագախմբում:

ՉԵՄԲԱԼՈ (իտ. cembalo) կրճատ՝ *կլավիչեմբալո* (տես):

ՉԵՉՈՏԿԱ, տես՝ *դոփապար:*

ՉԵՏԿՅՈՒՊ, տես՝ *կադրիլ:*

ՉԻՖՈՆԻ, տես՝ *պարկապզուկ:*

ՉԻՄՊՈՅ, տես՝ *պարկապզուկ:*

ՉԻՆԱԿԱՆ ԼԱԴ (ռուս. китайский лад) տես՝ *պենտատոնիկա:*

ՉԻԿՉԻԿԱՆ, տես՝ *ճչանակ:*

ՉՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՀԱՊԱՂՈՒՄ (ռուս. неприготовленное задержание) տես՝ *հապաղում:*

ՉՊԱՀՎԱԾ ԴԻՄԱՇԱՐ (ռուս. неудержанное противосложение) տես՝ *դիմաշար:*

ՉՈՐՐՈՐԴ ԿՈՂՄ կամ **ՎԵՐՋՉԱՅՆ**, կրճատ՝ ԴԿ, տես՝ *ձայն* III:

ՉՈՐՐՈՐԴ ՉԱՅՆ, կրճատ՝ ԴՉ, տես՝ *ձայն* III:

ՉՈՐՐՈՐԴ ՕԿՏԱՎԱ (ռուս. четвертая октава) տես՝ *օկտավա* (2-րդ իմաստով):

Պ

ՊԱ (ֆր. pas՝ քայլ) որևէ առանձին շարժում պարի ժամանակ:

ՊԱ I, *հայկական ձայնագրության հիմնական ձայնաշարի* (*դո* նոտայով սկսվող *միքսոլիդիական լադ*) յոթերորդ հնչյունը: Լրիվ անունն է *պարույկ:*

ՊԱ ԴԱԿՑԻՈՆ (ֆր. pas d'action, ռուս. па д'аксьон) բալետի բաղկացուցիչ հատվածներից մեկը, որը հաճախ իրենից ներկայացնում է գործողության ծավալուն ավարտ, ֆինալ (թեև կարող է լինել գործողության միջում), որին մասնակցում են թե գլխավոր, թե երկրորդական գործող անձինք և որում լուծվում են բալետային ներկայացման հիմնական դրամատիկ հանգույցները: Երաժշտության *տեմպը* մեծ մասամբ դանդաղ է՝ *ադաջո*, որ երբեմն փոխվում է հակադիր *տեմպերի*՝ էպիզոդիկ տեսիլները բնորոշելու համար:

ՊԱ ԴԵ ԴԵՅ (ֆր. pa de deux՝ երկուսի պար, ռուս. па де дё) բալետում ընդունված երաժշտական-պարային ձև, որը բաղկացած է պարող զույգի մուտքից, adagio կոչվող զուգապարից, պարողի *վարիացիաներից* (մենապար), պարուհու *վարիացիաներից* (մենապար) և *կոդայից*՝ պարի եզրափակիչ մասը:

ՊԱ ԴԵ ՏՐՈՒԱ (ֆր. pas de trois՝ երեքի պար, ռուս. па де труа) բալետում ընդունված երաժշտական-պարային ձև, որն իր կառուցվածքով հիմնականում նույնն է, ինչ *պա դը դյո*-ն, այն տարբերությամբ, որ երկուսի փոխարեն ունի մենապարային երեք *վարիացիա:*

ՊԱ ԴԵ ՔԱՏՐԸ (ֆր. pas de quatre՝ չորսի պար, ռուս. па де катр) բալետում այսպես է կոչվում չորս կատարողների պարը: Նաև՝ XIX դ. երկրորդ կեսում տարածված հանդիսապար:


ՊԱԹԵՏԻԿ ՍՈՆԱՏ, «Մեծ պաթետիկ սոնատ»՝ Բեթհովենի դաշնամուրային № 8 մի մինոր սոնատը (op. 13, 1799 թ.):

ՊԱԼՈՏԱԾ (հունգ. palotas, palota-ից՝ ապարանք, պալատ) հունգարական պարահանդեսային պար, ստեղծվել է XIX դ. սկզբին, բաղկացած է երեք տարբեր բնույթի շարժումներ արտահայտող մասերից՝ *լաշշան* (lassan՝ դանդաղ), *չիֆրա* (cifra՝ զարդարանք) և *ֆրիշ* կամ *ֆրիշկա* (fris, frisska՝ զվարթ, առույգ): Առաջին երկու մասերի չափն է՝ 4/4, երրորդինը՝ 2/4, պարում էին զույգերով, որոշ փոփոխություններով բնմադրվելիս կոչվել է «Հունգարական պար»: *Չարդաշը* ծագել է պ.: Պ. մշակումներ կան Լիստի «Հունգարական ռապսոդիաներում», Գլազունովի «Ռայմոնդա» բալետում:

ՊԱՀՎԱԾ ԴԻՄԱՇԱՐ (ռուս. удержанное противосложение) տես՝ *դիմաշար:*

ՊԱՆԻ ՍՐԻՆԳ (ռուս. Флейта Пана) եղեգնից, փայտից, ոսկրից կամ այլ նյութից պատրաստված բազմափող սրինգ, փողերից յուրաքանչյուրն ունի տարբեր երկարություն (հազվադեպ տարբեր տրամագիծ), ուստին՝ տարբեր լարվածք: Փողերը կամ միացվում են իրար, կամ նվագողն է հավաքում ձեռքի մեջ, ըստ հարմարության: Փողերի մի կողմի ծայրերը փակ են, մյուս կողմինը՝ նվագելու համար հպում են շրթունքներին: Ձայնածավալը կախված է փողերի քանակից և լարվածքից, կան նաև տարբեր լարվածք ունեցող Պ. ս. անուններ: Կոչվում է ա[illegible] Պանի անունով, որն

ըստ հին հունական դիցաբանության, սիրահարվում է չքնաղ Սիրինքսին, վերջինս դառնում է եղեգն, չսիրած Պանից ազատվելու համար, որից Պանը սրինգ է պատրաստում և այն կոչվում է *սիրինքս:* Պ. ս. տարատեսակներն են ռուսական *ցեվնիցան, կուգիկլին,* վրացական *լարչեմին, սոինարին,* լիտվական *սկուդուչալը,* մոլդավական և ռումինական *մուակալը* և *նայը:*



ՊԱՆՏՈՄԻՄԱ (հուն. pantomimos-ից՝ վերարտադրել ընդօրինակելով) տես՝ *մնջախաղ:*

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. культовая музыка) կրոնական պաշտամունքի հետ կապված երաժշտություն: Տես՝ *եկեղեցական երաժշտություն:*

ՊԱՊՅԵ (ֆր. passe-pied, ռուս. паспье) ֆրանսիական ժողովրդական հնագույն պար, XVII դ. երկրորդ կեսից թեթևակի փոփոխված ձևով կատարվում էր արքունական պարահանդեսներին, հետագայում տարածվեց որպես սալոնային և բեմական պար: Չափը՝ 3/8, *տեմպը*՝ ավելի արագ, քան *մենուետինը:* Պ. ձևը բալետային երաժշտության մեջ օգտագործել են Կամպրան, Լյուլլին, Ռամոն և ուրիշներ:

Ա. Կամպրա, պասպյե «Բարեկիրթ եվրոպա» օպերա-բալետից



ՊԱՍԱԺ (ֆր. passage՝ անցում) սովորաբար՝ կատարողական տեսակետից դժվարին ու բարդ՝ հնչյունների կամ ակորդների արագընթաց շարժում:

ՊԱՍԱԿԱԼԻԱ (իտ. passacaglia, իսպ. pasa՝ անցնել և calle՝ փողոց) 1) իսպանական ծագում ունեցող հնագույն դանդաղ պար (XVII—XVIII դդ.) չափը՝ եռամաս, որպես մենապար մեծ տարածում ուներ Ֆրանսիայում, XVIII դ., 2) երգեհոնի կամ կլավիրի համար *վարիացիոն ձևով* գրված վեհաշուք բնույթի երաժշտական ստեղծագործություն 3/4, 3/2, երբեմն՝ 4/4 չափով: Պ., ինչպես և *չակոնան,* հիմնված է *բասսո-օստինատոյի* վրա, երբեմն դրանք դժվար է իրարից տարբերել: Թե պ., թե *չակոնայի* թեման երբեմն կարող է բասից անցնել վերևի ձայներին: Տես՝ *վարիացիաներ, պոլիֆոնիկ վարիացիաներ:*

ՊԱՍՍԻՈՆ (իտ. passione, գերմ. Passion՝ չարչարանքներ), տես՝ «Չարչարանքներ»:

ՊԱՍՏՈՐԱԼ (լատ. pastoralis-ից՝ հովվական, ռուս. пастораль) 1) գյուղական անդորր կյանքն ու բնությունը նկարագրող գործիքային *պիես* կամ *ցիկլային* ստեղծագործություն (սոնատի, սիմֆոնիայի, կոնցերտի և այլ երկերի մի մասը): Պ. մեղեդին սովորաբար սահուն ընթացք ունի, համաչափ է և գրվում է 6/8, 9/8 կամ 12/8 չափերով: Պ. շատ են ստեղծվել XVII—XVIII դդ.: Պ. երաժշտությունն իր արտացոլումն է գտել նաև XIX դ. սիմֆոնիկ և գործիքային ստեղծագործություններում, օր. Բեթհովենի «Հովվերգական սիմֆոնիան» (№ 6, 1808 թ.), № 15 դաշնամուրային սոնատը, որը նույնպես կոչվում է «Պաստորալային» (հովվերգական), 2) XVII—XVIII դդ. արքունական հանդեսներում մեծ տեղ գրավող փոքրիկ օպերա, բալետ, մնջախաղ, կամ դրանց առանձին տեսիլը, որ գրվում էր խաղաղ, գյուղական իդիլիական կյանքից վերցված սյուժեներով:

ՊԱՍՏՐԻՉՉՈ (իտ. pastriccio՝ փոխաբ. իմաստով՝ խառնուրդ) օպերա, որի երաժշտությունը փոխառնված է մինչ այդ գրված տարբեր օպերաներից (արիաներ, զուգերգեր և այլ համարներ՝ նոր տեքստով) կամ գրված մի քանի կոմպոզիտորների ուժերով (սովորաբար յուրաքանչյուրը գրում է մեկական գործողություն): Պ. օրինակ է հանդիսանում «Մուցի Սցեվալա» օպերան (1721 թ., Լոնդոն), որը գրել են Մատեին, Բոնոնչինին և Հենդելը: Երբեմն պ. կազմվում էր մեկ կոմպոզիտորի ստեղծագործություններից, օր. Ռոսինիի «Շամիրամ», «Մովսես», «Տանկրեդ», «Գող կաչաղակ» օպերաների երաժշտությունն օգտագործելով, Պուչչինին վերադաշնավորել է «Այվենգո» օպերան:

ՊԱՍՏՈՒՐԵԼ (ֆր. pastaurelle՝ հովվուհի) *տրուբադուրների* և *տրուվերների* ստեղծագործության մեջ զարգացում ստացած պրովանսյան և ֆրանսիական միջնադարյան երգ:

Պաստուրել Սենժերմենյան երգարանից (XIII դ.)



ՊԱՎԱՆԱ (իսպ. pavana, լատ. pavo-ից՝ սիրամարգ) հնագույն իսպանական պարահանդեսային պար, 2/4 չափով, շատ դանդաղ տեմպով, միաժամանակ պարում էին մեկ կամ երկու զույգ, վեհապանծ և հանդիսավոր շարժումներով: XVI դ. պ. տարածվեց նաև Ֆրանսիայում: Երկմասանի գործիքային *սյուիտում* պ. հանդիսանում է առաջին մասը (կատարվում է *գալյարդայից* առաջ): Տես՝ *բասդանս:*

ՊԱՏԱՀԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ (ռուս. случайные знаки) *ալ-*

տերացիայի նշաններ, որոնք հարկ եղած դեպքում դրվում են այս կամ այն նոտայի ձախ կողմում: Պ. ն. ազդում են միայն մեկ *տակտի* մեջ և այն *օկտավայի* նոտայի վրա, որից առաջ դրված են: Տես՝ *ալտերացիա* (2-րդ իմաստով), *բանալիի նշաններ:*

ՊԱՏԱՍԽԱՆ (ռուս. ответ) տես՝ *ֆուգա:*

ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ (ռուս. ответное предложение) երկու *նախադասություններից* բաղկացած *պարբերություններում* պայմանականորեն այդպես է կոչվում երկրորդ նախադասությունը: Տես՝ *պարբերություն:*

ՊԱՏԱՐԱԳ (ռուս. литургия, обедня) 1) հնում այդպես էր կոչվում աստծուն մատուցված ընծան, զոհը, 2) ներկայումս քրիստոնեական եկեղեցիներում կատարվող արարողություն, ընթացքը երկու ձևով՝ ա) *թիվ պ.*, այսինքն՝ արտասանվող, ասվող պ. (առանց երգեցողության) և բ) *ձայնավոր պ.*, այսինքն՝ երգվող պ., 3) հոգևոր երգերի (օրհներգությունների) շարք, որը բազմաձայն կամ միաձայն (նվագակցությամբ կամ առանց դրա) կատարվում է ձայնավոր պ. ժամանակ: Հայկական եկեղեցու միաձայն պ. բազմաձայնել են Մ. Եկմալյանը (1856 — 1905) և Կոմիտասը (1869—1935): Տես՝ *մեսա:*

ՊԱՏԿԵՐ (ռուս. картина) 1) թատերական (օպերա, բալետ, դրամա և այլն) արարվածի մեջ մտնող առանձին ավարտված մաս, որը մյուս պ. բաժանվում է ոչ թե ընդմիջումով, այլ կարճ դադարով, 2) տես՝ *սիմֆոնիկ պատկեր, էտյուդ (էտյուդ-պատկեր):*

ՊԱՐ (ռուս. танец, пляска) 1) *կաքավել, կայթ*, արվեստի այն տեսակը, որը մարդու հոգեվիճակը, նրա հույզերն ու ապրումները արտահայտում է մարմնի բազմապիսի շարժումներով: Պ. սկզբնաղբյուրները եղել են աշխատանքի հետ կապված մարդու շարժումները և շրջապատող իրականությունից նրա ստացած տպավորությունները, որոնք պ. ժամանակ էապես փոխվել և գեղարվեստական ընդհանրացման են ենթարկվել: Պ. սերտորեն կապված է երաժշտության (երգի, նվագի) հետ: Պ. լինում են՝ *մենապարեր, զուգապարեր, շուրջպարեր* և այլն: Իրենց պատմական զարգացման ընթացքում ձևակերպվել են պարերի հետևյալ տեսակները՝ ա) *ժողովրդական պարեր*, բ) *պարահանդեսային պարեր*, գ) *պրոֆեսիոնալ* բեմական պարարվեստի ամենազարգացած ձևը՝ *դասական պարը*, 2) երբեմն գործ է ածվում *պարերաժշտության* իմաստով, 3) երաժշտական *պիես*՝ գրված պարեղանակներին հատուկ ռիթմերով, *տեմպերով* և բնույթով: Նման *պիեսները* ստեղծված են ոչ թե պարելու համար, դրանք կարծես պատկերում են պ. և նախատեսված են համերգային կատարման համար (օր. Խաչատըրյանի ջութակի և դաշնամուրի համար գրված Պարը):

ՊԱՐԱԳԼՈՒԽ, խմբապարի գլուխ, ղեկավար, որի շարժումներին հետևում են մյուս պարողները, *պարբաշի:*

ՊԱՐԱՀԱՆԴԵՍԱՅԻՆ ՀԱՐՒԱԾ (ռուս. бальный чардаш) տես՝ *չարդաշ:*

ՊԱՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. танцевальная музыка) տես՝ *պարերաժշտություն:*

ՊԱՐԱՍԱՅ, պարի ժամանակ խաղ ասողը, երգողը, խմբապարի մեներգիչ:

ՊԱՐԱՖՐԱԶ (հուն. paraphrasis՝ նկարագրություն) համեմատաբար պարզ կառուցվածք ունեցող *վիրտուոզ ֆանտազիա*, որում սովորաբար օգտագործվում են մեկ կամ մի քանի օպերային կամ երաժշտական թեմաներ: Պ. առավել բարձր զարգացման է հասել Լիստի դաշնամուրային ստեղծագործության մեջ, պ. ընդունված ժանր է նաև ժամանակակից կոմպոզիտորների համար:

ՊԱՐԲԱՇԻ, տես՝ *պարագլուխ:*

ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ (հուն. periodos՝ ժամանակաշրջան, շրջադարձում, ռուս. период) *պարբերույթ*, ավարտված *հոմոֆոնիկ* երաժշտական կառուցվածքներից ամենափոքրը (սովորաբար 8 կամ 16 տակտ) որը կարող է հանդես գալ թե որպես ավելի խոշոր ստեղծագործության հատված, (մաս, բաժին), թե որպես ինքնուրույն ստեղծագործություն: Պ. հիմնական խոշոր մասերը կոչվում են *նախադասություններ:* Պայմանականորեն առաջին նախադասությունը կոչվում է հարցական նախադասություն, երկրորդը՝ պատասխան նախադասություն: Տարբերում են ա) *կրկնվող կառուցվածքի պ.*, որում երկու նախադասությունների մեղեդիները հիմնականում համընկնում են և տարբերվում են միայն կադանսներով, բ) *չկրկնվող կառուցվածքի պ.*, որում երկու նախադասությունների մեղեդիները տարբեր են: Երբ պ. ավարտվում է այն տոնայնության մեջ, որով սկսված էր, կոչվում է *միատոնայնական պ.*, իսկ երբ ավարտվում է նոր տոնայնության մեջ՝ *զարտուղող պ.: Համաչափ* է կոչվում այն պ., որի երկու նախադասություններն ունեն հավասար քանակի տակտեր և *ընդլայնված*, երբ նրա, սովորաբար երկրորդ նախադասությունը տակտերի քանակով ավելի մեծ է: Գոյություն ունեն երեք նախադասություններից կազմված պ., ինչպես նաև նախադասությունների չբաժանվող պ., որոնցում մեղեդին անընդհատ զարգանում է, սա կոչվում է *անընդհատ զարգացող պ.*: Կա պ., որի յուրաքանչյուր նախադասությունը կարող է հանդես գալ որպես ինքնուրույն պ.՝ կոչվում է *բարդ պ.*: Պ. կարող է հանդես գալ որպես ինքնուրույն ձև: Այդ ձևով հորինված են բազմաթիվ երգեր (հատկապես ժողովրդական), մի շարք ռոմանսներ, պրելյուդներ ու նման այլ պիեսներ: Տես՝ *երկմասանի ձև, եռամաս ձև:*

ՊԱՐԲԵՐՈՒՅԹ (ռուս. период) տես՝ *պարբերություն:*

ՊԱՐԵՂԱՆԱԿ (ռուս. плясовая) պարելու համար ստեղծված եղանակ, պարն ուղեկցող եղանակ:

ՊԱՐԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. танцевальная музыка) *պարային երաժշտություն*, պարելու համար հորինված երաժշտություն, որում ճշտորոշ կերպով արտահայտված է յուրաքանչյուր պարին բնորոշ *ռիթմը, տեմպը*, շարժումների բնույթը: Յուրաքանչյուր պ. ունի իր ռիթմային գծապատկերը, որն անընդհատ կրկնվում կամ տարբերակվում է: Պ. հիմնականում գործիքային է, ժողովրդական կենցաղում տարածված են նաև պարերգեր (երգպարեր), որոնք կարող են ունենալ կամ չունենալ նվագակցություն: Պարում են նաև միայն հարվածային նվագարանների ուղեկցությամբ (դափ, դհոլ, կաստանյետ, ծափազարկ): Իր մեջ ընդգրկող ձևերի բազմազանությամբ, արտահայտչական հարստությամբ և ցայտունությամբ պ. ամենախոշոր և ամենակատարյալ ձևը *բալետն* է: Պ. իր մեծ ազդեցությունն է ունեցել գործիքային երաժշտության ձևավորման մեջ: Տարաբնույթ պարեղանակներից ստեղծվել են բազմաթիվ *սյուիտներ*: Համարյա բոլոր *ցիկլային* ձևի երաժշտական ստեղծագործությունների մասերից մեկը կամ պ. է, կամ կրում է պարային բնույթ:

ՊԱՐԵՐԳ, պար, որն ուղեկցվում է երգով, նաև՝ երգ, որի տակ պարում են:

ՊԱՐԶ ԵՌԱՄԱՍ ՁԵՎ (ռուս. простая трехчастная форма) տես՝ *եռամաս ձև:*

ՊԱՐԶ ԵՐԿՄԱՍԱՆԻ ՁԵՎ (ռուս. простая двухчастная форма) տես՝ *երկմասանի ձև:*

ՊԱՐԶ ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐ (ռուս. простые интервалы) *ինտերվալներ*, որոնց մեծությունը մ[illegible] *օկտավայից* ավելի չէ: Պ. ի. սնուններն ու թվային նշանակումներն են՝ *պրիմա-1, սեկունդա-2, տերցիա-3, կվարտա-4, կվինտա-5, սեքստա-6, սեպտիմս-7, օկտավա-8:*


ՊԱՐԶ ԿԱԴԱՆՆԵՐ (ռուս. простые каденсы) տես՝ *կադանս:*

ՊԱՐԶ ԿՈՆՏՐԱՊՈՒՆԿՏ (ռուս. простой контрапункт) *պոլիֆոնիկ* երաժշտության մեջ՝ Երկու կամ ավելի այնպիսի մեղեդիների զուգակցումը, որոնցից նոր զուգակցում կատարել հնարավոր չէ: Տես՝ *բարդ կոնտրապունկտ, կոնտրապունկտ:*

ՊԱՐԶ ՖՈՒԳԱ (ռուս. простая фуга) տես՝ *ֆուգա:*

ՊԱՐԿ, Նույնն է՝ *պարկապզուկ:*

ՊԱՐԿԱՊԶՈՒԿ կամ ՏԻԿ, ժողովրդական փողային նվագարան, կենդանու մորթուց պատրաստված պարկ, որի առջևի ոտներից մեկի մեջ ագուցված են իրար կպցրած երկու փայտյա կամ եղեգնյա փողեր, սովորաբար հինգ միակերպ դասավորված ձայնանցքերով՝ նվագելու համար: Որոշ ժողովուրդներ իրենց նույնանման նվագարաններին ագուցում են 1—3 *բուրդոնային փողեր* (*[illegible]*, որ ակտում՝ *տոնիկա, դոմինանտա*): Պ. տարածված է շատ ժողովուրդների երաժշտական կենցաղում և պատրաստվում է նաև կաշվե պարկից կամ փուչիկից: Ռուսները պ. անվանում են *վոլինկա* կամ *դուդա*, ադրբեջանցիները՝ *թուլում*, վրացիները՝ *գուդաստվիրի*,



աջարները՝ *չիբոնի*, չուվաշները՝ *շապպար* կամ *սարնայ*, մոլդավները՝ *չիմպոյ*, էստոնացիները՝ *տարուպիլ*, չեխերը՝ *դուդիլ*, բուլղարները՝ *հայդա*, լեհերը՝ *կոզա*, գերմանացիները՝ *զակպֆեյֆե* կամ *դուդելզակ*, անգլիացիները՝ *բեգփայփ*, ֆրանսիացիները՝ *կոռնեմյուզ* և այլն: Շոտլանդիայում գոյություն ունեն պ. զինվորական նվագախմբեր: Տես՝ *մյուզետ:*

ՊԱՐԿԱՊԿՈՒ, Նույնն է՝ *պարկապզուկ:*

ՊԱՐԿԱՊՈՆ, 1) Նույնն է՝ *պարկապզուկ*, 2) Նույնն է՝ *տկզար* (2-րդ իմաստով):

ՊԱՐՈԴԻԱ (հուն. para՝ հակա և don՝ երգ) արվեստի որևէ ստեղծագործության երգիծական, ծաղրական ընդօրինակումը, արտաքին ձևի պահպանմամբ: Պ. ժամանակակից ձևը որևէ երաժշտության ոճի, ժանրի, առանձին երաժշտական ստեղծագործության կամ կատարման ձևի չափազանցրած, երգիծական ընդօրինակումն է: XVII դ. վերջին և XVIII դ. սկզբին Ֆրանսիայում պ. էին գրում բոլոր հանրահայտ օպերաների երաժշտության վրա: Երաժշտական պ. որպես ժանր տեղ ունի նաև էստրադային արվեստում, տիկնիկային ներկայացումներում, երաժշտական ֆիլմերում, *կոնֆերանսում* և այլն:

ՊԱՐՏԻԱ (լատ. part, partis՝ մաս, խումբ, ռուս. партия) *ձայն* (1-ին ձայն 2-րդ ձայն և այլն իմաստով), այն եղանակը, երաժշտությունը, որը նվագախմբում, երգչախմբում կամ որևէ այլ անսամբլում պիտի կատարվի այս կամ այն նվագարանով (ջութակ, հոբոյ և այլն) կամ դրանց խմբով, այս կամ այն երգչաձայնով (*սոպրանո, ալտ* և այլն) կամ դրանց խմբով: Այն պ., որոնք օպերաներում, օրատորիաներում, կանտատներում և այլն կատարում են մեներգիչները, կոչվում են դերերգեր, 2) *սոնատային ալեգրոյի էքսպոզիցիայում*՝ առաջին և երկրորդ թեմաները. *առաջին պարտիա, երկրորդ պարտիա:*

ՊԱՐՏԻՏՈՒՐԱ (իտ. partita՝ մասնատված, մասերի բաժանված) 1) այսպես է կոչել Յ. Ս. Բախը գլխավորապես պարային *պիեսներից* կազմված իր 6 *սյուիտները*: Պ. երբեմն օգտագործում են նաև ժամանակակից երաժշտության մեջ, որպես *սյուիտի* սարատեսակ, օր. իտալացի

կոմպոզիտորներ Կազելլան և Դալլիպիկոլան, S. Մանսուրյանը, 2) XVII — XVIII դդ. երգեհոնի համար *խորալային* մեղեդու հիման վրա գրված *վարիացիաներ* (Ֆրեսկոբալդի, Պախելբել, Բախ):

ՊԱՐՏԻՏՈՒՐ (իտ. partitura՝ բաշխում, բաժանում, դասավորում) նվագախմբի, երգչախմբի, կվարտետի, գործիքային և երգչական այլևայլ անսամբլների համար գրված բազմաձայն ստեղծագործության համահավաք նոտաներ: Պ. ի մի են հավաքված այն բոլոր առանձին *պարտիաները* (ձայները), որոնց միասնությունը կազմում է տվյալ բազմաձայն ստեղծագործության ամբողջությունը: Պ. առանձին պ ա ր տ ի ա ն ե ր ը գրում են իրար տակ, ըստ սահմանված կարգի: Նվագախմբային պ. նվագարանների (գործիքների) *պարտիաները* դասավորվում են ըստ խմբերի, յուրաքանչյուր խմբում՝ ըստ նվագարանի ձ ա յ ն ա ծ ա վ ա լ ի բարձրության:

ՊԱՐՅԱԼ ՏՈՆԵՐ (ռուս. парциальные тоны) նույնն է՝ *օբերտոններ:*

ՊԱՐՏԻՑԿ, տես՝ *հայկական նոտագրություն:*

ՊԱՈՒԶԱ (հուն. pausis-ից՝ կանգառ, ընդհատում) 1) երաժշտական ստեղծագործության մեկ, մի քանի կամ բոլոր ձայների հնչեցման դադարեցումը որոշակի տևողությամբ (այլ կերպ՝ լռություն), 2) հատուկ նշան, որն արտահայտում է լռության տևողությունը: Երբ նվագախմբային, երգչախմբային կամ անսամբլային ստեղծագործության որևէ առանձին ձայնում, երկու կամ ավելի տակտ *պաուզա* է, սովորաբար դա նշանակվում է կըրճատագրությամբ՝

Արաբական թվանշանները ցույց են տալիս տակտերի քանակը:

ՊԵԴԱԼ (գերմ. pedal, ռուս. педаль) 1) նույնն է՝ *ոտնակ,* 2) *ձայնառություն:*

ՊԵՆՏԱՏՈՆԱՅԻՆ ՁԱՅՆԱՇԱՐ (ռուս. пентатонный звукоряд) հնգաստիճան *լադ* կազմող հնչյունների շարքը (հաջորդականությունը): Տես՝ *պենտատոնիկա:*

ՊԵՆՏԱՏՈՆԻԿԱ (հուն. pente՝ հինգ և tonos՝ հնչյուն) հնգաստիճան *լադ, լադ,* որը բաղկացած է հինգ տարբեր բարձրություն ունեցող հնչյուններից՝ *օկտավայի*

պենտատոնիկայի ձայնաշարը



սահմաններում: Տարբերում են երկու տեսակ պ.՝ ա) *հեմիտոնային* (այսինքն՝ կիսատոներով) և բ) *ոչ հեմիտոնային* (այսինքն՝ առանց կիսատոների): *Ոչ հեմիտոնային* պ., որ անհամեմատ ավելի տարածված է, անվանում են նաև *չինական լադ* և *շոտլանդական լադ,* թեև այդ լադերն ունեն և լայնորեն կիրառում են բազմաթիվ այլ ժողովուրդներ նույնպես՝ Մոնղոլիայում, Կորեայում, Իռլանդիայում, Հունգարիայում և այլուր: Ճապոնիայում դրա հետ մեկտեղ օգտագործում են նաև *հեմիտոնային* պ.:

ՊԵՐՊԵՏՈՒՈՒՄ ՄՈԲԻԼԵ (լատ. perpetuum mobile՝ անընդհատ շարժում) արագ *տեմպ* ունեցող գործիքային *պիես,* որը սկզբից մինչև վերջ շարժվում է միատեսակ փոքր տևողություններով (սովորաբար՝ տասնվեցերորդականներով), թողնելով անընդմեջ հնչյունային հոսքի տպավորություն:

ՊԵՐՄՖԱՆՍ (ռուս. Персимфанс, Первый симфонический оркестр Моссовета — Մոսսովետի առաջին սիմֆոնիկ անսամբլ) սիմֆոնիկ նվագախումբ առանց դիրիժորի, ստեղծվել է 1922 թ., գոյություն ուներ մինչև 1932 թ.:

ՊԻԱՆԻՆՈ (իտ. pianoforte-ի կրճատը, կամ piano՝ փոքրիկ դաշնամուր) ուղղաձիգ դաշնամուր, պ. ստեղծելու առաջին փորձը կատարվել է 1870 թ. Գերմանիայում, իսկ 1800 թ. Ֆիլադելֆիայում կառուցվել է «սենյակային



դաշնամուր» կոչվող, երկաթե շրջանակով պ.: Սակայն առաջին իսկական *պիանինոյանման* նվագարանը կառուցել է անգլիացի վարպետ Ռոբերտ Ուդրնումը Լոնդոնում, 1826 թ.: Վերջին 20—25 տարիների ընթացքում արտադրվում են փոքրածավալ պ., որոնց բարձրությունը 85—90 սմ-ից ավելի չէ, իսկ ձ ա յ ն ա ծ ա վ ա լ ը՝ 6,5 *օկտավա:* Պ. իր հնչողությամբ գիջում է *ռոյալին:*

ՊԻԱՆԻՍՍԻՄՈ (իտ. pianissimo, կրճատ՝ pp) շատ մեղմ, տես՝ *ուժաբանություն:*

ՊԻԱՆՈ (իտ. piano, կրճատ՝ p) մեղմ, տես՝ *ուժաբանություն:*

ՊԻԱՆՈ ՊԻԱՆԻՍՍԻՄՈ (իտ. piano pianissimo, կրճատ՝ ppp) չափազանց մեղմ, տես՝ *ուժաբանություն:*

ՊԻԵՍ (ֆր. piece՝ ինչ-որ բան, կտոր, ռուս. пьеса) 1) փոքր ձևի ավարտված երաժշտական ստեղծագործություն, 2) փոքր ձևի գործիքային երաժշտական ստեղծագործության խորագիր, 3) դրամատիկ ստեղծագործություն, թատրոնում բեմադրելու համար:

ՊՅՈԹԱԳՈՐԱՅԱՆ ԿՈՄՄԱ (ռուս. Пифагорова комма) տես՝ *կոմմա:*

ՊԻԿԿՈԼՈ (իտ. piccolo՝ փոքրիկ) 1) մի քանի նվագարանների (գործիքների) այն տարատեսակը, որը տվյալ նվագարանային ընտանիքում ծավալով ամենափոքրն է, իսկ ձայնածավալով՝ ամենաբարձրը, օր. *դոմրա-պ., կլարնետ-պ.* և այլն, 2) երաժշտական պրակտիկայում այդպես է կոչվում փոքր ֆլեյտան, տես՝ *ֆլեյտա:*

ՊԻԿԿՈԼՈ ԿԼԱՐՆԵՏ, նույնն է՝ *կլարնետ պիկկոլո:*

ՊԻԿԿՈԼՈ ՖԼԵՅՏԱ, նույնն է՝ *ֆլեյտա պիկկոլո:*

ՊԻՊԻՀ (ռուս. трость) *եղեգնաթիթեղ*, մի շարք փողային նվագարանների (գործիքների) վրա հարմարեցված եղեգնյա բարակ լեզվակ, որը տատանվելով առաջացնում է ձայն: Պ. լինում են *միակի* (կլարնետ, սաքսոֆոն և այլն), *կրկնակի* (հոբոյ, ֆագոտ, դուդուկ և այլն):

ՊԻՍՏՈՆ (ֆր. piston) 1) *կափուրիկ*, մի շարք պղնձյա փողային նվագարանների (գործիքների) *պոմպային վենտիլի* մի մասը, գլանաձև շրջապատյանում տեղավորված մխոց, որի ծայրին (արտաքին մասին) ամրացված է բևեռակ (կոճակ): Սովորաբար այդպիսի նվագարաններն ունենում են երեք պ., որոնց սեղմելով, նվագողը փոփոխում է ձայնի բարձրությունը, տես՝ *վենտիլ*, 2) *կոռնետ ա պիստոն* նվագարանի կրճատ անվանումը:

ՊԻՑՑԻԿԱՏՈ (իտ. pizzicato՝ կսմթելով) 1) աղեղնավոր լարային նվագարաններ նվագելու երեք (arco՝ աղեղով, con legno՝ աղեղնափայտով) ձևերից մեկը, որի ժամանակ լարերը տատանման մեջ են դնում կսմթելով դրանք աջ (երբեմն ձախ) ձեռքի մատներով: Նոտաներում կրճատ նշանակվում է pizz. բառով: Պ. ձախ ձեռքի մատներով կատարելու համար յուրաքանչյուր նոտայի մոտ դրվում է փոքրիկ խաչ (+), 2) այդ եղանակով կատարվող երաժշտական *պիեսի* անվանում, օր. Շտրաուս եղբայրների «Պիցցիկատո-պոլկան», Դելիբի «Սիլվիա» բալետի «Պիցցիկատոն» և այլն, 3) բալետում այսպես է կոչվում մենապարուհու *վարիացիան*, որը նա կատարում է ոտքերի մատների վրա:

ՊԻՖՖԵՐՈ, ՊԻՖՖԱՐՈ (իտ. piffero, piffaro) *պարկապզուկի* իտալական տարատեսակը:

ՊԼԱԳԱԼ ԼԱԴԵՐ (ռուս. плагальные лады) տես՝ *միջնադարյան լադեր:*

ՊԼԱԳԱԼ ԿԱԴԱՆՍ (հուն. plagios-ից՝ կողմնակի, անուղղակի, ռուս. плагальный каданс) տես՝ *կադանս:*

ՊԼԵԿՏՐ (հուն. plektron, plesso-ից՝ հարվածում եմ, ռուս. плектр) նույնն է՝ *կնտնտոց:*

ՊԼԿԱՆ, ուռենու, բարդու և նման այլ ծառերի դալար ճյուղերի վրայից հանած կեղևը, որից սրինգ են պատրաստում:

ՊՂՆՁՅԱ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ԳՈՐԾԻՔՆԵՐ) (ռուս. медные (музыкальные) инструменты) նույնն է՝ *պղնձյա փողային նվագարաններ (գործիքներ):*

ՊՂՆՁՅԱ ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ԳՈՐԾԻՔՆԵՐ) (ռուս. медные духовые (музыкальные инструменты) արույրից կամ այլ մետաղներից պատրաստված շրթնային նվագարանները (գործիքները), որոնք մտնում են սիմֆոնիկ, փողային, էստրադային, ջազային և այլ նվագախմբերի ու տարբեր անսամբլների կազմի մեջ. *կոռնետը, փողը, վալտորնան, ալտը, տենորը, բարիտոնը, տրոմբոնը, տուրան, հելիկոնը* և մի շարք ազդանվագարաններ՝ *շեփորը, հեծելափողը, հրետանափողը* և այլն: Պ. փ. ն. փողային նվագախմբի հիմքն են կազմում: Տես՝ *փողային նվագախումբ:*

ՊՅՈՒՊԻՏՐ, տես՝ *նոտակալ:*

ՊՈԵՄ (հուն. poiema՝ հորինվածք, ռուս. поэма) 1) որևէ նվագարանի (գործիքի) համար ազատ կառուցվածք ունեցող պատմողական բնույթի քնարական *պիես*, օր. Սկրյաբինի Պոեմը դաշնամուրի համար, Խաչատրյանի Պոեմը ջութակի համար և այլն, 2) մեծ մասամբ ծրագրային բովանդակություն ունեցող մեկմասանի խոշոր ստեղծագործություն նվագախմբի համար (սիմֆոնիկ պոեմ), կամ մենակատարի և նվագախմբի համար (Շասսոնի Պոեմը ջութակի և նվագախմբի համար) և այլն, 3) վոկալ կամ վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործություններ (Շոստակովիչի «Տասը պոեմը երգչախմբի համար», «Ստեպան Ռազինի մահապատիժը» պոեմը բասի, երգչախմբի և նվագախմբի համար) և այլն:

ՊՈԶԻՏԻՎ (ֆր. positif) փողային ստեղնային նվագարան, միջնադարյան ոչ մեծ երգեհոն:

ՊՈԶԻՑԻԱ (լատ. positio՝ դրություն, ռուս. позиция) նույնն է՝ *դիրք:*

ՊՈԼԻՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ (հուն. poly՝ շատ, բազում, ռուս. политональность) նույնն է՝ *բազմատոնայնություն:*

ՊՈԼԿԱ (ռուս. полька) չեխական հնագույն ժողովրդական աշխույժ պար, չափը՝ 2/4, XVIII դ. 40-ական թ. պ. արագորեն տարածվեց ամբողջ Եվրոպայում, որպես հանդիսապար: Իրենց ստեղծագործություններում օգտագործել են Սմետանան, Գլինկան, Բորոդինը, Բալակիրևը, Ռախմանինովը և ուրիշներ:



ՊՈԼԿԱ-ՄԱԶՈՒՐԿԱ (ռուս. полька-мазурка) հանդիսապար, որը զուգակցում է *պոլկայի* շարժումները *մազուրկայի ռիթմերի* հետ, ստեղծվել է Ֆրանսիայում, Ռուսաստանում տարածված էր պ.-մ. տարատեսակը, որը զու-



գակցում էր այդ երկու պարերի շարժումները, չափը՝ 3/4 կամ 3/8, տեմպը՝ աշխույժ, կենդանի, թեթև, պարում են զույգերով:

ՊՈԼՈՆԵԶ (ֆր. polonaise, կրճատված dance polonaise-ից՝ լեհական պար) լեհական հնագույն հանդիսավոր պար-շքերթ, դեռևս XVI դ. մուտք գործեց Ֆրանսիա և մի շարք եվրոպական երկրներ. որպես պալատական



պար, չափը՝ 3/4, տեմպը՝ չափավոր (*անդանտեից* քիչ ավելի արագ): Պ. XVII դ.. հայտնի է որպես ինքնուրույն գործիքային *պիես*, լայնորեն օգտագործված Բախի և Հենդելի *սյուիտներում* և *պարտիտաներում:* Գոյություն ունեն նաև գործիքային, նվագախմբային պ.:

ՊՈԼԻԹԵՄԱՏԻԶՄ (հուն. poly՝ շատ և thema՝ նախադասություն, ռուս. политематизм) նույնն է՝ *բազմաթեմայնություն:*

ՊՈԼԻՄԵՏՐԻԱ (հուն. poly՝ շատ և մետր) նույնն է՝ *բազմաչափություն:*

ՊՈԼԻՌԻԹՄԻԱ (հուն. poly՝ շատ և ռիթմ) նույնն է՝ *բազմառիթմություն:*

ՊՈԼԻՖՈՆԻԱ (հուն. poly՝ շատ, phone՝ ձայն, ինչյուն) 1) բազմաձայնության այն տեսակը, որում միաժամանակ հնչող և շարժվող ձայներն ունեն համահավասար, համարժեք նշանակություն: Նրանցից յուրաքանչյուրը, ներդաշնակցելով մնացած ձայների հետ, սովորաբար ունի իր ուրույն մեղեդային գիծը: Պ. ստեղծվել է ժողովրդական երաժշտության ընդերքում և մեծ զարգացում ստացել վաղ միջնադարից: Պ. տարատեսակներն են *իմիտացիան, կոնտրապունկտը* և *ենթաձայնային պ.*, տես նաև՝ *պոլիֆոնիկ ձևեր, խիստ ոճ, ազատ ոճ, հոմոֆոնիա, շարժուն կոնտրապունկտ, հետերոֆոնիա, դիաֆոնիա, գծայնություն,* 2) ուսմունք *պոլիֆոնիայի* մասին, 3) ուսումնական դասընթաց, որը մասամբ ավանդվում է միջնակարգ մասնագիտական, իսկ հիմնականում բարձրագույն երաժշտական ուսումնական հաստատություններում: Նախկինում այդ դասընթացը կոչվել է *կոնտրապունկտ:*

ՊՈԼԻՖՈՆԻԿ ՁԵՎԵՐ (ռուս. полифонические формы) տես՝ *երաժշտական ձև:*


ՊՈԼԻՖՈՆԻԿ ՎԱՐԻԱՑԻԱՆԵՐ (ռուս. полифонические вариации) *վարիացիաներ*, որոնցում *թեմայի* յուրաքանչյուր անցկացման ժամանակ տրվում է նոր *պոլիֆոնիկ ֆակտուրա:* Պ. վ. են հանդիսանում բոլոր *չակոնաները* և *պասակալիաները*, հիմնված *բասո-օստինատոյի* վրա, որը հանդիսանում է պ. վ. տարատեսակը: Տես՝ *վարիացիաներ:*

ՊՈԼՍԿԱ (չվեդ. polsca՝ պոլկա) շվեդական ժողովրդական պար, 3/4 կամ 4/4, երբեմն խառը չափով, պա-



րում են երգելով, որի բովանդակությունը աշխատում են այս կամ այն չափով արտահայտել շարժումներով: Պ. տարածված է նաև Ֆինլանդիայում:

ՊՈՇԵՏՏԱ, ՊՈՇԵՏ (ֆր. pochette, pocheter-ից՝ կրել, պահել գրպանում) աղեղնային փոքրաչափ նվագարան, որն օգտագործում էին XVI—XVIII դդ. պարուսույցները:



Կոչվում էր նաև «գրպանի ջութակ», թեև պ. հնչարկղներն ունեին տարբեր ձևեր՝ ջութակի, վիոլայի և այլն: Ամենափոքր պ. երկարությունը 35 սմ է, XIX դ. սկզբից պ. դուրս են եկել գործածությունից:


ՊՈՊՈՒՐԻ (ֆր. pot-pourri յոթ տարբեր տեսակի ուտեստեղեններից պատրաստված կերակուր, խառնուրդ) հավաքական երաժշտական *պիես*, կազմված հանրահայտ և հանրամատչելի օպերաների, օպերետների, բալետների, կինոֆիլմերի երաժշտության հատվածներից, ժողովրդական երգերից, պարեղանակներից և այլն: Մեծ տարածում

ուներ XIX դ.: Ներկայումս մեծ մասամբ կատարում են փողային և էստրադային նվագախմբերը:

ՊՈՍՏԼՅՈՒԴԻԱ (լատ. postludium) *հետնվագ*, երաժշտական ստեղծագործության վերջում տրվող ինքնուրույն բնույթի, համեմատաբար փոքր երաժշտական հավելում (սովորաբար՝ երգեցողությունից հետո գործիքային եզրափակում): Տես՝ *պրելյուդ:*

ՊՈՐՏԱՄԵՆՏՈ (իտ. portamento՝ տեղափոխում) հարթ (առանց մատնատեղերի) *գրիֆ* ունեցող լարային և *կուլիսա* ունեցող փողային նվագարաններ (գործիքներ) նվագելիս, ինչպես նաև երգելիս դանդաղեցված սահումով մեկ հնչյունից մյուսին անցնելը: Պ. ուժեղացնում է կատարման արտահայտչականությունը, սակայն չարաշահման և անտեղի գործածման դեպքում իջեցնում է կատարման գեղարվեստական արժեքը: Տես նաև՝ *գլիսանդո:*

ՊՈՐՏԱՏԻՎ (ֆր. orgues portatives, լատ. porto-ից՝



տանում եմ, փոխադրում եմ) XV դ. առավել տարածված փոքրաչափ, դյուրակիր երգեհոն:

ՊՈՐՏԱՏՈ (իտ. portato, portare-ից՝ արտահայտել, հաստատել) *ստակատտոյի* և *լեգատոյի* միջին *շտրիխ*, նշանակվում է հորիզոնական փոքր գծիկներով, որոնք դրվում են *լիգայի* տակ գտնվող նոտաներից քիչ վեր կամ վար, կատարվում է աղեղի մեկ շարժմամբ (գլխավորապես դեպի վեր) և հնչյունները համարյա չեն անջատվում մեկը մյուսից, բայց միևնույն ժամանակ յուրաքանչյուր նոտան թեթևակիորեն ընդգծվում է: Աղեղնային նվագարաններով (գործիքներով) կատարվող այդ *շտրիխը* կոչվում է loure: Պ. չափազանց արտահայտիչ *շտրիխ* է, երբեմն պ. սխալմամբ շփոթում են *պորտամենտոյի* հետ:

ՊՍԱԼՄՈԴԻԱ, տես՝ *սաղմոսերգություն:*

ՊՐԵԼՅՈՒԴ (լատ. praeludo-ից՝ նախապես նվագում եմ) նախավագ, սկզբնական շրջանում այսպես էր կոչվում որևէ գործիքային ստեղծագործությունից առաջ կատարվող իմպրովիզացիոն բնույթի երաժշտական հատվածը, որով կատարողը (ջնարահար, կլավեսինահար, երգեհոնահար) կարծես նախապատրաստում, համապատասխան տրամադրություն էր ստեղծում ունկնդրելու պ. հաջորդող ստեղծագործությունը: Հետագայում, XVII — XVIII դդ. զարգանալով, պ. դարձավ ազատ կառուցվածքի ինքնուրույն երաժշտական պիես, որպես նախանվագ մտնելով մի քանի ցիկլային ստեղծագործությունների մեջ (օր. *սյուիտի, ֆուգայի*): Կան նաև պ., որոնք իրենցից ներկայացնում են բոլորովին ինքնուրույն *պիեսներ* (մեծ մասամբ դաշնամուրի համար) և որոնք հաճախ գրվում են 24 տարբեր տոնայնություններով, կազմելով պ. մի ամբողջ շարք:

ՊՐԵՄՅԵՐԱ (ֆր. premiere՝ առաջին, ռուս. премьера) օպերայի, օպերետի, բալետի և դրամատիկ այլ ստեղծագործության առաջին (սովորաբար՝ առաջին 2—3) ներկայացումը, ինչպես նաև էստրադային, կրկեսային և մի շարք այլ անսամբլների, նաև կինոնկարների առաջին (կամ՝ առաջին 2—3) կատարումը, համերգը, ներկայացումը, ցուցադրումը:

ՊՐԵՍՏԻՍՍԻՄՈ (իտ. prestissimo, presto-ի գերադրական աստիճանը) չափազանց արագ, *պրեստոյից* ավելի արագ *տեմպ:*

ՊՐԵՍՏՈ (իտ. presto՝ շուտ, արագ) 1) սրընթաց վազքի համապատասխանող շատ արագ տեմպ, 2) այդ տեմպով գրված երաժշտական *պիես*, եթե ուրիշ անվանում չունի:

ՊՐԻՄԱ (լատ. prima՝ առաջին) 1) *դիատոնիկ գամմայի* յուրաքանչյուր հնչյունի առաջին աստիճանը կամ նրանց հարաբերակցությունը (այլ կերպ՝ միևնույն անվանումն ունեցող երկու հնչյունների հարաբերակցությունը) այսինքն՝ մեկ աստիճան ընդգրկող *ինտերվալ*, նշանակվում է 1 թվանշանով: *Հարմոնիկ* (միաժամանակ հնչող) մաքուր պ. կոչվում է նաև *ունիսոն*, 2) *ակորդի* հիմնական *տոնը* նվագախմբերում, 3) գործիքային անսամբլներում սոպրանայինձայնասահմանի մի շարք նվագարանների (գործիքների) անվան հավելում, օր. *բալալայկա-պրիմա:*

ՊՐԻՄԱԴՈՆՆԱ (իտ. primadonna, բառացի՝ առաջին տիկին) օպերայում կամ օպերետում գլխավոր դերերգեր կատարող երգչուհի:

ՊՐՈՊՈՍՏԱ (իտ. proposta՝ առաջարկ, առաջադրանք) տես՝ *կանոն:*

ՊՈՒԱՆՏԻԼԻԶՄ (ֆր. point-ից՝ կետ) *սերիային տեխնիկայի* տարատեսակը, որի ժամանակ յուրաքանչյուր նոտա բաժանվում է հաջորդ նոտայից, սովորաբար համապատասխան տևողություն ունեցող *պաուզայով:* Այդպիսով, *դոդեկաֆոնիայի* և *սերիային տեխնիկայի* հիմնական սկզբունքը, ըստ որի *խրոմատիկ գամմայի* 12 հնչյուններից յուրաքանչյուրը պիտի լինի անկախ և ինքնուրույն և ոչ մի ֆունկցիոնալ կապ չպետք է ունենա մնացած հնչյունների հետ, ընդգծվի յուրովի:


Ջ

ՋԱԶ (անգլ. jazz) 1) ռիթմիկ և հարմոնիկ բազմազանությամբ հագեցած երաժշտական ժանր, սկիզբ է առել XIX դ. 80-ական թ. ԱՄՆ հարավային նահանգ Նյու Օռլեանի Սթորիվիլլ թաղամասում: Ջ. ակունքները գալիս են նեգրական ժողովրդական ծիսական, կենցաղային և հոգևոր երգասացություններից և աֆրիկյան ռիթմերից: Արագորեն տարածվելով ջ. շուտով գրավեց ամբողջ ԱՄՆ, ապա անցավ Եվրոպա և այլ մայրցամաքներ, երևան եկան նաև սպիտակամորթ երաժիշտների կատարողական-ստեղծագործական անսամբլներ և նվագախմբեր: Ջ. յուրահատուկ արտահայտչամիջոցներ ունի, *սինկոպաներով* հարուստ *մետրո-ռիթմիկա, ալտերացված հարմոնիկ* հաջորդականություններ, գործիքավորման առանձնահատկություններ, կատարման հնարների հարուստ զինանոց, յուրօրինակ գործիքներ: Նախնական հիմնական ուղղություններն էին *ռեգթայմը*, դաշնամուրային վիրտուոզ կատարողականից առաջացած *դիքսիլենդը* (հիմնական առանձնահատկությունը փողային երեք նվագարանների՝ փող, կլարնետ, տրոմբոն, և նվագակցող ռիթմի՝ եռյակի կամ քառյակի միաժամանակյա վարիացիաների կատարումն է ընտրված թեմայով), ապա *սվինգը* (բառացի՝ ճոճք, ճոճում), որն առաջ եկավ նվագախմբային մեծ կազմերի հիմնադրման հետ (հիմնական առանձնահատկությունն է ռիթմիկ հենքը և տակտի թույլ և ամենաթույլ մասերի շեշտավորման շնորհիվ առաջացող կայուն ճոճքի զգացողությունը): Հետագա ուղղություններից հիշատակելի են *բի-բոպը, քուլ* (սառը) և *հոթ* (տաք) ոճերը, *պրոգրեսիվ ջ., մոդեռն ջ.* և *էքսպերիմենտալ ջ.* (ավելի մոտ սիմֆոնիկ մտածողությանը) և այլն: Ջ. բնորոշ առանձնահատկությունները և գործիքավորման հնարները հաճախ օգտագործվում են սիմֆոնիկ երաժշտության մեջ, բ) ջազային նվագախումբ, տես՝ *ջազբանդ:*

ՋԱԶ ԲԱՆԴ (անգլ. jazz-band) *ջազային նվագախումբ*, նվագախումբ, որի խնդիրն է կատարել ջազային երաժշտություն: Ջ. բ. սովորաբար կազմված էր լինում 3—6 սաքսոֆոններից, 2—4 փողերից, 2—3 տրոմբոններից, հավայան կիթառից, դաշնամուրից, մի շարք հարվածային նվագարաններից: Ջ. բ. կազմը կարող է լինել շատ ավելի մեծ և ավելի փոքր:

ՋՆԱՐ, տես՝ *լյուտնյա:*

ՋՈՒԹԱԿ (իտ. violino, ռուս. скрипка) *սոպրանային ձայնասահմանի* ամենակատարյալ և ամենատարածված լարային աղեղնային նվագարան (գործիք), որն իր ընտանիքին պատկանող տարբեր մեծության, բայց ճիշտ իր կառուցվածքն ունեցող ալտի, թավջութակի և կոնտրաբասի հետ մեկտեղ կարևորագույն դեր է խաղացել պրոֆեսիոնալ երաժշտարվեստի զարգացման պրոցեսում: Մի շարք երկրներում մինչև օրս էլ ջ. օգտագործվում է նաև որպես ժողովրդական նվագարան: Ջ. ընտանիքին պատկանող նվագարանները սիմֆոնիկ նվագախմբերի և լարային ու մի շարք կամերային անսամբլների հիմքն են հանդիսանում: Նոտագրվում է ջ. *բանալիով*: Ջ. կարելի է կատարել *կրկնակի նոտաներ (հարմոնիկ ինտերվալներ), ակորդներ*, ինչպես նաև *ֆլաժոլետներ: Մեղմոցի* կիրառումը ոչ միայն մեղմացնում է ջ. ձայնը, այլև փոխում հնչերանգը: Ջ. (և նրա ընտանիքի նվագարանները) հնչեցնում են երեք ձևով. ա) հիմնականը՝ աղեղը լարերին քսելով, նշանակվում է col arco կամ arco բառերով, բ) երբ լարերը կսմթում են աջ (երբեմն՝ ձախ) ձեռքի մատներով, նշանակվում է pizzicato (կրճատ՝ pizz) բառերով, գ) երբ լարերին հարվածում են աղեղնափայտով, նշանակվում է col legno բառերով: Կիրառվում են աղեղով նվագելու տարբեր եղանակներ, որոնք կոչվում են *շտրիխներ*: Ջ. ազնվաբարո, բացառիկ արտահայտիչ հնչերանգը, տեխնիկական հսկայական հնարավորությունները, նրբերանգներով հարուստ ձայնը նրան դարձրել են մեներգակատարային առաջնակարգ նվագարան, որի համար բազմաթիվ ստեղծագործություններ են գրել բոլոր ժամանակների մեծագույն կոմպոզիտորները: Ջ. առաջնակարգ տեղ է գրավում նաև որպես անսամբլային և նվագախմբային նվագարան: Ռոմանական նպատակներով ստեղծվել են նաև «համր» ջ., որոնք չունեն վերին և վարին *հնչերեսներ:* XVI—XVIII դդ. Հյուսիսային Իտալիայում ստեղծվել են ջ. վարպետների երկու խոշորագույն դպրոցներ՝ առաջինը Բրեշի քաղաքում հիմնել է հայտնի վարպետ Գասպարո Բերտոլոտտին (1542—1609), այս դպրոցի ամենահայտնի վարպետը Ջովաննի Պաոլո Մաջինին էր (1580—1632): Երկրորդը՝ Կրեմոն քաղաքում հիմնել է ջ. դասական ձևը ստեղծող Անդրեա Ամատին



(1520 — 1580): Կրեմոնյան դպրոցը տվել է հռչակավոր վարպետների մի ամբողջ շարք՝ Ամատիի որդիները՝ Անտոնիոն և Յերոնիմը, Անդրեա և Ջուզեպե Գվարներիները, Ամատիի թոռ Նիկոլոն և անգերազանց Ստրադիվարիուսը (1644 — 1737), որի պատրաստած ջ., ալտերից, թավջութակներից և կոնտրաբասերից, լյուտնյաներից և կիթառներից առ այսօր պահպանված են 1150 նվագարան: Հետագայում ջ. առաջնակարգ վարպետներ տվեցին իտալական մի շարք քաղաքներ, ինչպես նաև Ֆրանսիան, Գերմանիան, Անգլիան, եվրոպական այլ երկրները, այդ թվում և Ռուսաստանը (Բատով, Կիտտել, Լեման և ուրիշներ):

ՋՈՒԹԱԿԻ ԲԱՆԱԼԻ, *սոլ բանալին* դրված *նոտակիրի* երկրորդ գծի վրա, տես՝ *բանալիներ:*

Ռ

ՌԱԶՄԱԿԱՆ ԹՄԲՈՒԿ (ռուս. военный барабан, իտ. tamburo militare) տես՝ *փոքր թմբուկ:*

ՌԱԶՄԱԿԱՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ (ռուս. военный оркестр) տես՝ *փողային նվագախումբ:*

ՌԱԶՄԵՐԹԻ ՔԱՅԼԵՐԳ (ռուս. походный марш) կամ *արագ քայլերգ*, շարային քայլերգի տարատեսակը, 2/4 կամ ¢ չափով, տեմպը՝ 110 — 120 քայլ մեկ րոպեում (սահմանված է Խորհրդային Բանակի շարային կանոնադրությամբ): Սովորաբար կատարվում է զորամասերի ռազմերթի ժամանակ: Տես՝ *քայլերգ:*

ՌԱԼԼԵՆՏԱՆԴՈ (իտ. rallentando՝ դանդաղեցնելով) *տեմպը* (շարժման արագությունը) դանդաղեցնելով:

ՌԱՊՍՈԴ (հուն. rhapsödos) հին Հունաստանում որևէ լարային նվագարանի նվագակցությամբ էպիկական պոեմներից հատվածներ երգող ժողովրդական թափառական երգիչներ, վիպերգուներ: Ռ. երգում էին արդեն պատրաստի ստեղծագործություններ, կային նաև սեփական հորինումներ կատարողներ: Տես՝ *ռապսոդիա:*

ՌԱՊՍՈԴԻԱ (հուն. rhapsödia, կազմված է կարել, կարկատել և երգեցողություն արմատներից) հին Հունաստանում՝ էպիկական պոեմների այն հատվածները, որոնք երգում էին *ռապսոդները*՝ ժողովրդական թափառական երգիչները: Ժամանակակից երաժշտության մեջ ռ. սովորաբար առանձին նվագարանների (գործիքների) կամ նվագախմբի համար ազատ ձևով գրված, վիրտուոզային բնույթի ստեղծագործություն է: *Ֆանտազիայից* հիմնականում տարբերվում է նրանով, որ ռ. օգտագործվում են ժողովրդական մեղեդիներ, ավելի ազատ մշակմամբ, իսկ տարբեր հատվածներ առավել կոնտրաստային են: Հայտնի են հունգարական և իսպանական ժողովրդական մեղեդիների հիման վրա գրված Լիստի ռ.-ները, Դվորժակի, Ռախմանինովի, Ռավելի և այլոց նույնաբնույթ երկերը:

Ռե (re) ժամանակակից երաժշտական ձայնաշարի յոթ հիմնական հնչյուններից երկրորդի վանկային անվանումը (տես՝ *սոլմիզացիա*): Տառային նշանակումն է՝ D կամ d:

ՌԵԱԼ ՊԱՏԱՍԽԱՆ (ռուս. реальный ответ) տես՝ *ֆուգա:*

ՌԵԱԼ ՖՈՒԳԱ (ռուս. реальная фуга) *ֆուգա, որի պատասխանը (ուղեկիցը) ռեալ է:*

ՌԵԲԱԲ (արաբ. rebab) աղեղնային հնագույն նվագարան՝ հնդկա-իրանական ծագումով, *հնչերեսը* կաշվից է, ունի 1 — 3 լար: երկու և երեք լարանի ռ. լարվում են *կվարտաններով* կամ *կվինտաններով*, տարածված է Հնդկաստանում, եգիպտոսում, Աֆրիկայի հյուսիս-արևմուտքում և այլուր:

ՌԵԲԵԿ (իտ. pebec) աղեղնային հնագույն նվագարան, որն իր ազդեցությունն է ունեցել ջութակի ընտանիքի նվագարանների ստեղծման և ձևավորման վրա, տարածված էր դեռևս XII դ. արևմտաեվրոպական երկրներում, համարյա մինչև XVIII դ.: Տանձաձև *հնչարկղի* միաձույլ վերևի նեղ մասը վզիկի (բռնակոթի) դեր էր կատարում: *Հնչերեսի* վրա կան երկու փակագծանման ձ ա յ ն ա ն ց ք ե ր, ունի *կվինտաներով* լարված երեք լար: Տարատեսակներն են՝ *ռ.-դիսկանտ, ռ.-տենոր, ռ.-բաս:*

ՌԵԳԱԼ (ֆր. regal) միջնադարյան ոչ մեծ երգեհոն, որի փողերն ունեն «խփող» լեզվակներ:

ՌԵԳԵՆՏ (լատ. regens՝ կառավարող) սովորաբար՝ եկեղեցական երգչախմբի ղեկավար:

ՌԵԳԹԱՅՄ (անգլ. ragtime՝ կտրտված ռիթմ) 1) XIX դ. վերջին ստեղծված ամերիկյան նեգրերի քաղաքային կենցաղային պարերաժշտության ձև, որը *ջազի* նախակարապետներից մեկը հանդիսացավ: Ռ. յուրահատուկ սուր *սինկոպացված* մեղեդի է, իրար չհամընկնող երկու ռիթմիկ գծով՝ մեկը սուր ռիթմով, որը կարծես «կտրտված» մեղեդին է, մյուսը՝ պարզորոշ, սրընթաց քայլի ճշգրիտ և հավասար ռ ի թ մ ո վ ընթացող նվագակցությունը: Ռ. ձևը օգտագործել է Դվորժակը իր «Նոր աշխարհից» սիմֆոնիայում և լարային կվարտետում, 2) ռ. պարերաժշտության ձևից ծագած ամերիկյան սալոնային պար, որից առաջ եկան *ուան-ստեպը, թուաթեփը* և ֆ ո ք ս տ ր ո տ ը: Այս պարի բնորոշ առանձնահատկություններն օգտագործել է Ստրավինսկին իր «Ռեգթայմ 11 նվագարանի համար» և «Ասք փախստական զինվորի և սատանայի մասին» ստեղծագործություններում:

ՌԵԳԻՍՏՐ, տես՝ *ձայնասահման:*

ՌԵԶՈՆԱՆՍ (ֆր. résonance՝ ձայնի անդրադարձում, արձագանք) տես՝ *ձայնադարձություն:*

ՌԵԶՈՆԱՏՈՐԱՅԻՆ ԱՆՑՔԵՐ, նույնն է՝ *ձայնադարձային անցքեր:*

ՌԵԶՈՆԱՆՍԱՅԻՆ ԱՐԿՂ, նույնն է՝ *ձայնադարձային արկղ:*

ՌԵԶՈՆԱՆՍԱՅԻՆ ԼԱՐԵՐ, նույնն է՝ *ձայնադարձային լարեր:*

ՌԵԺԻՍՈՐ, (ֆր. regisseur, լատ. rego-ից՝ կառավարել, ռուս. режиссер) թատերական ներկայացումներ (օպերա, օպերետ, բալետ, դրամատիկ պիեսներ), կինոնկարներ և հեռուստատեսային հաղորդումներ բեմադրող, նկարահանող մասնագետ: Օպերային ռ., *դիրիժորի* հետ մեկտեղ գլխավորում և ղեկավարում է նոր ներկայացում ստեղծելու համար ամբողջ թատրոնի աշխատանքը, նպատակ ունենալով բեմադրությամբ արտահայտել, ներկայացնել օպերային երաժշտության բովանդակությունը, դրամատուրգիան:

ՌԵՉԻՏԱՏԻՎ (իտ. recitativo, recitare-ից՝ բարձրաձայն կարդալ, արտասանել) *«թվել»* (այլ կերպ՝ պատմել), տես՝ *թվերգ:*

ՌԵՊԵՐՏՈՒԱՐ, նույնն է՝ *երկացանկ:*


ՌԵՊԵՏԻՑԻԱ (լատ. repetitio-ից՝ կրկնություն) դաշնամուրի մուրճիկների՝ լարերին հարվածելուց հետո նախնական վիճակին վերադառնալու արագությունը, որից և կախված է միևնույն հնչյունը կրկնելու արագության աստիճանը: Ռ. լինում է *պարզ* և *կրկնակի: Պարզ ռ.* ունեցող դաշնամուրով միևնույն հնչյունը կարելի է կրկնել մեկ վայրկյանում 6 — 8 անգամ, *կրկնակի ռ.*՝ մինչև 12 անգամ:

ՌԵՊՐԻԶԱ (ֆր. reprise՝ կրկնություն) *վերականգնում*, 1) երաժշտական ստեղծագործության, նրա որևէ մասի կամ հատվածի կրկնությունը, տես՝ կրճատագրություն, 2) սոնատային ալեգրոյի երրորդ մասը (*էքսպոզիցիա, մշակում, ռեպրիզա*), որն իրենից ներկայացնում է *էքսպոզիցիայի* ձևափոխված կրկնությունը: Ռ. *օժանդակ պարտիան* սովորաբար գլխավոր տոնայնությամբ է լինում, որի հետևանքով երկու թեմաների կոնտրաստը թուլանում է: Այլ տոնայնության հարաբերությունները սակավ են և նորմայից դուրս, 3) *ֆուգայի* եզրափակիչ մասը, որում թեմաները անց են կացվում մեծ մասամբ գլխավոր տոնայնության մեջ, չնայած երբեմն հանդիպում են նաև ռ., որոնցում թեմաները անց են կացվում *էքսպոզիցիայի* նման՝ *տոնիկա-դոմինանտային* կամ *տոնիկա-սուբդոմինանտային* տոնայնության հարաբերությամբ:

ՌԵՔՎԻԵՄ (լատ. requiem՝ հանգիստ, լատիներեն «Requiem aetecnam dona eis, domine՝ «Հանգիստ հավիտենական տուր նրանց, տեր» տեքստի առաջին բառը) *սգերգ*, 1) հոգեհանգստի մեսսա, այն տարբերությամբ, որ ռ. սովորական *մեսսայի* գլխավոր մասերից հանված են *«գլորիան»* և *«կրեդոն»* և դրանց փոխարեն մտցված են մի քանի այլ մասեր, այդ թվում և *«Դիես իռե» սեկվենցիան* (2-րդ իմաստով): Գեղարվեստական բարձր արժանիքներ են ներկայացնում Լասսոյի, Պալեստրինայի, Մոցարտի, Բեռլիոզի, Վերդիի գրած ռ., 2) երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար գրված, խոշոր ձևի սգո երաժշտական ստեղծագործություն, որի բառերն ու բովանդակությունը ոչ մի կապ չունեն պաշտամունքի հետ և սովորաբար մի շարք կոմպոզիտորներ, զոհված հերոսների փառաբանումը դարձնելով կոչ՝ նրանց օրինակով պայքարելու հանուն ազատության, երջանիկ և լուսավոր ապագայի:

ՌԵՖՐԵՆ (ֆր. refrain՝ կրկներգ) 1) *ռոնդոյի* հիմնական թեման, որը փոխնեփոխ մի շարք այլ հատվածների հետ բազմիցս կրկնվում է, 2) նույնն է՝ *կրկներգ:*

ՌԻԳՈԴՈՆ (ֆր. rigodon կամ rigaudon) ժողովրդական ծագում ունեցող ֆրանսիական պար, չափը՝ 4/4 կամ 2/2, սկսվում է մեկ քառորդ *նախտակտով*, *տեմպն* ու կատարման բնույթը՝ շատ աշխույժ, ուրախ, կրակոտ:



XIXդ. վերջին ռ. դարձավ պարահանդեսային պար *(կոնտրդանսի* տարատեսակը), նույն ժամանակաշրջանում էլ մտնելով գործիքային *սյուիտի* և բալետի մեջ: Իրենց օպերաների՝ պարային *դիվերտիսմենտներում* ռ. ևս օգտագործել են ֆրանսիացի կոմպոզիտորներ Ռամոն, Դեմարեն, Ֆիլիդորը:

ՌԻԹՄ (հուն. rhythmós-ից՝ համաչափություն, բարեկազմություն) տևողությունների հարաբերակցությունը, երաժշտության մեջ ռ. հանդիսանում է արտահայտչական և ձևագոյացման հիմնական միջոցներից մեկը: Ռ. երաժշտական հնչյունների ժամանակային հաջորդականության կազմակերպվածությունն է: Առանձնացված ռ. կիրառվում է որպես ազդանշան, որպես երթերի ուղեկցություն, որպես մի շարք ժողովուրդների պարերի նվագակցություն: Նեղ իմաստով՝ հնչյունների ռիթմիկ կազմակերպվածությունն արտահայտվում է նրանց հարաբերակցությամբ *տակտում* կամ *մոտիվում*, ավելի լայն իմաստով՝ հասկացությունն ընդգրկում է ուժեղ և թույլ մասերի հաջորդականությունն ու ամբողջական երաժշտական ստեղծագործության առանձին մասերի (ֆրազ, նախադասություն, պարբերություն, և այլն) հարաբերությունը: Ռ. արտահայտչականությունը սերտորեն կապ-

ված է *տեմպի* հետ: Երաժշտության ռ. նշանակվում է *նոտաներ* կոչվող տևողության նշաններով: Տես՝ *ռիթմիկ բաժանում, ռիթմիկա:*

ՌԻԹՄԻԿԱ (հուն. rhithmikos-ից՝ գեղակազմ, համաչափ) 1) ուսմունք *ռիթմի* մասին, 2) երաժշտական այս կամ այն ժանրի, առանձին կոմպոզիտորի ստեղծագործության կամ որևէ երաժշտական երկի ռիթմական բնորոշ առանձնահատկությունների միակցությունը, 3) XX դ. սկզբից սահմանված ռիթմիկ դաստիարակման սիստեմ, որը երաժշտության ուղեկցությամբ կատարվող ֆիզիկական մի շարք հատուկ վարժությունների միջոցով զարգացնում է երաժշտական լսողությունը և հիշողությունը, ռիթմի զգացողությունը, ուշադրությունը, շարժումների վայելչությունը: ԽՍՀՄ-ում ռ. հանդիսանում է մանուկների և գեղարվեստական ուսումնական հաստատությունների (երաժշտական, խորեոգրաֆիկ, թատերական) աշակերտների և ուսանողների գեղագիտական դաստիարակության միջոցներից մեկը: Տես՝ *ռիթմ:*

ՌԻԹՄԻԿ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՁԵՎԵՐ (ռուս. особые виды ритмического деления (նույնն է՝ *տևողությունների բաժանման հատուկ ձևեր:*

ՌԻԹՄԻԿ ՊԱՏԿԵՐ (ռուս. ритмический рисунок (ձայնային տևողությունների հաջորդականությունը, անկախ այդ ձայների բարձրությունների հարաբերակցությունից:

ՌԻԹՄԻԿ ՖԻԳՈՒՐԱՑԻԱ (ռուս. ритмическая фигурация (տես՝ *ֆիգուրացիա):*

ՌԻԿՈՇԵՏ-ՍԱԼՏԱՏՈ (ֆր. ricochet՝ անդրադարձ հարված), լարի վրա աղեղի մեկ գցումով առաջ բերած մի շարք արագորեն իրար հաջորդող ցատկումներ:

ՌԻՉԵՐԿԱՐ (ֆր. ricercar, ricercare-ից փնտրել, որոնել) *լյուտնյայի, կլավիրի,* գործիքային անսամբլի, հատկապես երգեհոնի համար գրած *պոլիֆոնիկ* երաժշտական պիես, որը *ֆուգայանման* մշակում ուներ, իսկ հետագայում նրանից ոչնչով չէր տարբերվում: XVI դ. հայտնի էին նաև *իմիտացիոն* ձևի վոկալ ռ.: Տես՝ *ռիչերկատա:*

ՌԻՉԵՐԿԱՏԱ (իտ. ricercata, ricercare-ից՝ փնտրել, որոնել) *ֆուգայի* տարատեսակը, որը նրանից տարբերվում է կոմպոզիցիայի առանձնահատուկ վարպետություն պահանջող բարդ տեխնիկայով (թեմաների մեծացում, շրջում, *ստրետտա*ների՝ տեխնիկապես բարդ և հմուտ մշակում և այլն): Տես՝ *ռիչերկար:*

ՌԻՊԻԵՆՈ (իտ. ripieno՝ լիքը, լեցուն) 1) XVII—XVIII դդ. նվագախմբային երաժշտության մեջ տերմինն ուներ նույն իմաստը, ինչ այժմ *տուտտին:* Ռ. հակադրվում է *կոնչերտինոյին (կոնցերտինոյին)* և նշանակում էր, որ մենակատարների խմբի նվագից հետո համապատասխան հատվածը պիտի կատարել նվագախմբի ամբողջ կազմով, 2) այդպես է կոչվում նաև ջութակահարների խումբը:

ՌԻՊՊՈՍՏԱ (իտ. risposta՝ պատասխան, առարկություն) տես՝ *կանոն:*

ՌԻՏԱՐԴԱՆԴՈ (իտ. ritardando՝ հապաղելով, ուշանալով) հետզհետե դանդաղեցնելով *տեմպը* (շարժման արագությունը):

ՌԻՏԵՆՈՒՏՈ (իտ. ritenuto, ritenere-ից՝ կասեցնել, պահել) աստիճանաբար դանդաղեցնել *տեմպը,* ավելի աննշան, քան *ռիտարդանդոն:*

ՌԻՏՈՒՐՆԵԼ (ֆր. ritournelle, իտ. ritorno-ից՝ վերադարձ, կրկնում) 1) որևէ վոկալ ստեղծագործության (երգ, ռոմանս, արիա և այլն) յուրաքանչյուր տնից առաջ, ինչպես նաև ամենավերջում կատարվող միևնույն գործիքային հատվածը, 2) պարերաժշտության մեջ՝ գործիքային հատված, որը կատարվում է մինչև պարը սկսվելն ու նրանից հետո, 3) XVII դ. վերջի և XVIII դ. բալետում՝ պարի սկզբնանվագը:

ՌՈԿՈԿՈ (ֆր. rococo) XVIII դ. արքունական ազնվականական մշակույթի հետ կապված երաժշտական ոճ, որը համապատասխանում է նույնանման ոճին ճարտարապետության մեջ և կերպարվեստում: Ռ. բնորոշ է նուրբ զգացմունքների, հաճելի հույզերի, պոետիկ նրբագեղ կերպարների արտահայտումը: Ռ. գործիքային և վոկալ ստեղծագործություններն առատ են *մելիզմ*ներով, ռ. լավագույն նմուշներ են ստեղծել ֆրանսիական *կլավեսինիստ*ները (ամենանշանավորները՝ Կուպերեն և Ռամո), Իտալիայում այդ ոճի ներկայացուցիչներն էին Սկառլատտին և Բոկկերինին: Ռ. ոճի երաժշտության մեջ *հոմոֆոնիան* հետին պլան է մղում *պոլիֆոնիան,* մշակվում է պարզ, թեթև *ֆակտուրա,* հստակ ձև, որում արդեն նշմարվում են *սոնատային ալեգրոյի* ուրվագծերը:

ՌՈՄԱՆԵՍԿԱ (իտ. romanesco-ից՝ հռոմեական) իտալական ժողովրդական պար, *գալլարդայի* տարատեսակը. տարածված էր Հռոմի մերձակայքում: Երաժշտական չափը՝ 2/4 կամ 2/2: Հնագույն ռ. լավագույն նմուշ է Գլազունովի «Ռայմոնդա» բալետի ռ.:



ՌՈՄԱՆՍ (իսպ. romance՝ ռոմանական միջնադարում իսպաներենը հաճախ կոչում էին ռոմանական) 1) սկզբնական շրջանում Իսպանիայում ռ. էին կոչվում բոլոր այն երգերը, որոնք երգվում էին իսպաներեն ի տարբերություն լատիներենի: Հետագայում XVI դ. այդպես սկսեցին կոչվել սիրային, կատակային և երգիծական բովանդակության այն երգերը, որոնք ունեին նվագակցություն: Իսպանիայից ժանրը անցավ այլ երկրներ, XIX դ. սկզբից Ռուսաստանում այդպես անվանեցին նվագակցություն

ունեցող՝ մեծ մասամբ քնարական կամ քնարական-դրամատիկ բնույթի, գլխավորապես սիրային բովանդակության փոքր ձևի վոկալ ստեղծագործությունները: Ռ. կառուցվածքը, ի տարբերություն երգի, սովորաբար ավելի բարդ է, ավելի հանգամանորեն մշակված գեղարվեստական երկ է: Երգին բնորոշ է *կուպլետային ձևը*, իսկ ռ.՝ ոչ: *Էլեգիան, բալլադը* և մի շարք այլ անուններ կրող փոքր ձևի վոկալ ստեղծագործությունները հանդիսանում են ռ. տարատեսակները, ռ. վոկալ կամերային երաժշտության հիմնական ժանրն է: Երբեմն ռ. հանդիսանում է օպերայի բաղկացուցիչ մաս (օր. Անտոնիդայի ռ. Գլինկայի «Իվան Սուսանին» օպերայում): Գերմանիայում ռ. և երգն ունեն մեկ ընդհանուր անուն՝ Lied *(լիդ)*, 2) ռ. են կոչվում նաև փոքր ձևի և երգային բնույթի մի շարք գործիքային ստեղծագործություններ, օր. Բեթհովենի, Գլիերի, Շոստակովիչի՝ ջութակի համար գրված ռ. (դաշնամուրի նվագակցությամբ):

ՌՈՄԱՆՆԵՐԻ ՑԻԿԼ, տես՝ *երգերի (ռոմանսների) ցիկլ:*

ՌՈՅԱԼ (ֆր. royal՝ թագավորական) դաշնամուրի հիմնական տեսակը, *հորիզոնական դաշնամուր*, որի լարերը ձգված են թուջե շրջանակի վրա, հորիզոնական դիրքով: Լարերի տակ գտնվում է ռ. *հնչերեսը, մի շարք ռ. ունեն մոդերատոր*, լինում են տարբեր մեծության, ամենափոքրը կոչվում է *մինյոն:* Վիեննայում պատրաստված այն համերգային ռ., որոնց *ձայնածավալը* սկսվում էր *սուբկոնտրօկտավայի ֆա* նոտայից, իրենց չարդարացրեցին, որովհետև ամենացածի *ֆա, ֆա ♯, սոլ, սոլ ♯ հընչյունները* լսողությամբ դժվար են ընկալվում և դժվար լարվում: ԽՍՀՄ-ում ռ. (այդ թվում և համերգային) հիմնականում արտադրվում են Լենինգրադում, Տալլինում և Ռիգայում:

ՌՈՆԴԵՆՅԱ (իսպ. rondeña, Rondo-ից՝ քաղաք Իսպանիայում) նույնն է՝ *մալագուենյա:*

ՌՈՆԴՈ (իտ. rondo, ֆր. rondeau, rond՝ շրջան) երաժշտական ձև, որտեղ *գլխավոր թեման (ռեֆրենը)* զուգադրվելով տարբեր բովանդակությամբ *էպիզոդների* հետ, բազմիցս կրկնվում է, *գլխավոր թեման* անց է կացվում ոչ պակաս քան երեք անգամ, գլխավոր տոնայնության մեջ, իսկ *էպիզոդները*՝ երկուսից չորս, ավելի հաճախ այլ տոնայնություններում: Հնագույն, կամ *կուպլետային* ռ. մեծ զարգացման հասավ XVII — XVIII դդ. Ֆրանսիական *կլավեսինիստների* ստեղծագործություններում: XVIII — XIX դդ. դասական երաժշտության մեջ ռ. կառուցվածքը փոխվում է, *թեմայի* և *էպիզոդների* միջև երևան են գալիս կապող մասեր, որոնք իրենց բնույթով հաճախ մոտ են մշակմանը: *Էպիզոդներն* ընդարձակվում են և հակադրվում թե թեմային, թե միմյանց: Ռ. վերջում ավելանում է *կոդան:* Ռ. ձևով գրվում են որոշ գործիքային ստեղծագործություններ, ինչպես նաև շատ սիմֆոնիաների և սոնատների *ֆինալներ:* Ռ. աչքի է ընկնում աշխույժ, թեթև, շարժուն բնույթով, իր մեջ համատեղելով երգային և պարային տարրեր ու գծեր:

ՌՈՆԴՈ ՍՈՆԱՏԱՅԻՆ ՁԵՎ (ռուս. рондо-сонатная форма) *ռոնդոյի* և *սոնատային ձևի* նշանները համատեղող խառը երաժշտական ձև, ունի *էքսպոզիցիա, ռեպրիզա* և *ռոնդոյի* նման *ռեֆրենը* անց է կացվում երեք անգամից ոչ պակաս, գլխավոր տոնայնության մեջ: Ռ. ս. ձ. *ռոնդոյի ռեֆրենը* և առաջին *էպիզոդը* համապատասխանում են *սոնատային ձևի գլխավոր* և *օժանդակ պարտիաներին* (առաջին *էպիզոդը էքսպոզիցիայում* անց է կացվում ստորադաս տոնայնության մեջ, իսկ *ռեպրիզայում*՝ գլխավոր տոնայնության մեջ), ըստ որում ընդհանրապես լինում է նաև *կապող մաս:* Միջին (երկրորդ) *էպիզոդը* հաճախ փոխարինվում է *մշակոմով: Ռեպրիզայից* հետո սովորաբար լինում է *կոդա:* Ռ. ս. ձ. ավելի հաճախ օգտագործվում է որպես *սոնատային ցիկլիկ ձևի ֆինալ:*

ՌՈՒԲԱՏՈ (իտ. rubato) տես՝ tempo rubato:

ՌՈՒՄԲԱ (իսպ. rumba) XX դ. 20-ական թ. ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայում մեծ տարածում գտած պարահանդեսային պար, 4/4 չափով և սուր սինկոպացված ռիթմով, տեմպը չափավոր է, որը վերջում միանգամից արագանում է, ստեղծվել է Լատինական Ամերիկայի երկրներում:

Ս

ՍԱՋ, Հայաստանում, Ադրբեջանում և Դաղստանում տարածված հնագույն կսմիթային լարային նվագարան, ունի խորը, տանձաձև *հնչարկղ* և երկար *նվագակոթ:* Հայաստանի ս. տարբեր մեծության են՝ 55 — 110 սմ երկարությամբ, *նվագակոթի* վրա փաթաթված են 10—13 աղելարե *մատնաշեմեր (փարդաներ):* Ձայնը արծաթահնչուն է, զնգուն, փափուկ: Գուսանները և աշուղները գլխավորապես ս. էին նվագակցում իրենց երգեցողությունը, օգտագործվել է նաև կենցաղում: 1925 թ. Վ. Բունին վերակառուցեց ս. և պատրաստեց ս. մի ամբողջ ընտանիք՝ արևելյան սիմֆոնիկ նվագախմբի համար, որոնք սակայն լայն տարածում չգտան:



ՍԱԶԱՆԴԱՐ, սազ նվագող, առհասարակ՝ նվագածու, Հա-

յաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Իրանում և արևելյան մի շարք երկրներում տարածված երաժշտական եռյակի մեջ մտնող նվագողներից յուրաքանչյուրը՝ թառ, քյամանչա և դափ (դհոլ): Ս. ունեն բավական ընդարձակ երգացանկ, կատարում են տվյալ ժամանակաշրջանում տարածված բոլոր ժողովրդական, աշուղական և քաղաքային երգերն ու պարեղանակները, հին վարպետների գործեր, հարևան ժողովուրդների երգեր և այլն:

ՍԱԼՈՆԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. салонная музыка) արիստոկրատական, բուրժուական սալոններում կատարվող մելոդրամատիկ, սենտիմենտալ, փոքր ծավալի գործիքային կամ վոկալ երաժշտություն, որը մեծ տարածում էր գտել XIX դ. և XX դ. սկզբին: Այդ ժամանակաշրջանում ստեղծվել են մեծ քանակությամբ մենակատարային «սալոնային» պիեսներ, գլխավորապես ջութակի և դաշնամուրի համար: Ս. ե. մեծ տեղ է գրավել նաև համերգային բեմահարթակներում (1830 — 1860), ստեղծելով կատարողական փոքր-ինչ մակերեսային արվեստ, ուր գերիշխում է արտաքին վիրտուոզ փայլը: Ժամանակի առաջադեմ գործիչները պայքարել են ս. ե. դեմ, որպես անկումային արվեստի արտահայտություն (Շուման, Սերով և այլք): Ընդհանրապես, հետագայում «սալոնային» բնորոշումը կիրառվեց անբովանդակ, արտաքին փայլի վրա հիմնված արվեստը որակելիս: Տես՝ *թեթև երաժշտություն, կենցաղային երաժշտություն:*

ՍԱԼՈՆԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ (ռուս. салонный оркестр) զվարճացնող երաժշտությունից մինչև լուրջ, դասական երաժշտություն կատարող՝ տարբեր կազմի և մեծության նվագախումբ: XIX դ. ընթացքում ձևավորվել են երեք տիպի ս. ն. ա)*վիեննական*-դաշնամուր, ֆիսհարմոն, մեկ 1-ին ջութակ և մեկ ջութակ *օբլիգատո*, թավջութակ *(ադ լիբիտում)*, հարվածային նվագարաններ, բ)*բեռլինյան*-դաշնամուր, ֆիսհարմոն, 1-ին և 2-րդ ջութակներ, ալտ, թավջութակ, կոնտրաբաս, ֆլեյտա, կոռնետ, հարվածային նվագարաններ, գ)*փարիզյան*-դաշնամուր, ջութակ, թավջութակ, կոնտրաբաս, ֆլեյտա, կոռնետ, հարվածային նվագարաններ: Երբեմն ս. ն. բաղկացած էին լինում չորս (դաշնամուրային քառյակ), նույնիսկ երեք (դաշնամուրային եռյակ) նվագարաններից: Ս. ն. մեծ տարածում գտան հատկապես XIX դ. վերջից՝ ակումբներում, սրճարաններում, ռեստորաններում, հյուրանոցներում, կինոթատրոններում, ամառանոցներում և այլուր: Կատարում էին հանրամատչելի երաժշտություն՝ *պոպուրիներ*, օպերային և օպերետային թեմաներով *ֆանտազիաներ*, պարային երաժշտություն և այլն: Դրա հետ մեկտեղ կատարում էին նաև դասական երաժշտության փոխադրումներ:

ՍԱԼՏԱՆԴՈ, ՍԱԼՏԱՏՈ (իտ. saltando, saltato՝ ցատկոտելով, թռչելով) աղեղնային նվագարանով կատարվող այնպիսի *ստակատո*, որի ժամանակ աղեղը յուրաքանչյուր հնչյունից հետո թեթևակի անջատվում է լարից:

ՍԱԼՏԱՐԵԼԼՈ (իտ. saltare-ից՝ ցատկել, թռչել, ռուս. сальтарелло) իտալական ժողովրդական հնագույն աշխույժ պար, չափը՝ 3/8, 6/8, 12/8, տեմպը՝ արագ



(որ հետզհետե ավելի է արագանում): Պարող տղան միաժամանակ *կիթառ* է նվագում, իսկ աղջիկը՝ *տամբուրին:* Մենդելսոնն իր «Իտալական սիմֆոնիայի» Presto-ում մշակել է ս. երաժշտությունը:

ՍԱՂՄՈՍ (ռուս. псалом) նվագ՝ լարային նվագարանով, նաև՝ երգ, գովերգություն նվագարանի ընկերակցությամբ: Այդպես է կոչվում նաև Հին Կտակարանի գրքերից մեկը *(Սաղմոսարան)*, որն իրենից ներկայացնում է հոգևոր երգերի և աղոթքների ժողովածու, ս. է կոչվում նաև այդ գրքում զետեղված յուրաքանչյուր երգն ու աղոթքը:

ՍԱՂՄՈՍԱԳԻՐՔ (ռուս. псалтирь կամ псалтырь) *սաղմոսների* գիրք, հոգևոր երգերի և աղոթքների ժողովածու:

ՍԱՂՄՈՍԱՐԱՆ (հուն. psaltḗrion, ռուս. псалтерий) 1) տասը լարանի *քանոնանման* նվագարան, որով նվագակցել են *սաղմոսերգությանը*, 2)*Սաղմոսագիրք, սաղմոսներ* բովանդակող եկեղեցական գիրք:

ՍԱՂՄՈՍԵՐԳՈՒ (ռուս. псалмопевец) *սաղմոս* երգող, ինչպես նաև *սաղմոսներ* հորինող:

ՍԱՂՄՈՍԵՐԳՈՒԹՅՈՒՆ (հուն. psalmodia, ռուս. псалмодия) *պսալմոդիա, սաղմոս* երգելը, 1) *սաղմոս* երգելու հատուկ ձև՝ երգանման արտասանություն, որի ռիթմը որոշվում է տեքստի քերականական և տրամաբանական շեշտերով, 2)*սաղմոսներ* երգելը, երկու երգչախմբերի կամ մեներգչի և երգչախմբերի փոխեփոխ երգեցողությունը: Տես՝ *անտիֆոն:*

ՍԱՂՄՈՍԱՍԱՑ (հուն. psalmologos) նաև՝ *փոխասաց (սաղմոսներն* ասում են փոխեփոխ):


ՍԱՂՄՈՍԱՍԱՑՈՒԹՅՈՒՆ, *փոխասացություն*, տես՝ *սաղմոսասաց, սաղմոսերգություն* (2-րդ իմաստով):

ՍԱՄԲԱ (իսպ. zamba) կուբայական նեգրական ժողովրդական աշխույժ պար, դիմակահանդեսների ժամանակ ամենատարածվածը, հետագայում տարածվեց Լատինական Ամերիկայի բոլոր երկրներում և մուտք գործեց նաև ամերիկյան և եվրոպական երկրներ:

ՍԱՄԲՐԱ (իսպ. zambra) մավրական աշխույժ պար:

ՍԱՆԴՂԱԿ (լատ. scala, ռուս. шкала, скала՝ սանդուղք) տարբեր բարձրություններ ունեցող երաժշտական ձայների աստիճանական հաջորդականություն: Տես՝ *ձայնասանդղակ, երաժշտական սանդղակ:*

ՍԱՆԹՈՒՐ, հայկական ժողովրդական լարային հարվածային նվագարան, սրանկյուն եռանկյունու ձև ունեցող տափակ *հնչարկղով, ձայնանցքերն* արված են փայտյա *հնչերեսի* կամ *խենի* վրա, ունի 16 — 24 հնչյուններից բաղկացած *խրոմատիկ ձայնաշար* և մեկ, երկու կամ երեք լար՝ յուրաքանչյուր հնչյունի համար: Լարերն ունեն հատուկ հարմարանքներ (փոխարկիչներ), որոնց միջոցով արագորեն բարձրացնում կամ իջեցնում են լարվածքը: Լարերը հնչեցվում են հատուկ փայտիկներով, որոնց ծայրերը քիչ վեր են թեքված: Օգտագործվում է սովորաբար որպես երգեցողությանը նվագակցող նվագարան: Ս. որպես ժողովրդական նվագարան կիրառություն ունի նաև Վրաստանում, Ադրբեջանում, Հնդկաստանում, Իրանում և մի շարք արևելյան երկրներում:




ՍԱՆԿՏՈՒՍ (լատ. sanctus՝ սուրբ) կաթոլիկ օրիներգություն, որը *Բենեդիկտուսի* հետ միասին կազմում է *մեսսայի* հիմնական բաժիններից (մասերից) մեկը:

ՍԱՊԱՏԵԱԴՈ (իսպ. zapateado) իսպանական ժողովրդական պար, կրունկների և կոշկատակերի ռիթմիկ դոփյունով *(դոփապար, չեչոտկա):*

ՍԱՐԱԲԱՆԴԱ (իսպ. zarabanda) իսպանական ժողովրդական հնագույն պար, 3/4 կամ 3/2 չափով, սկզբում պարում էին միայն կանայք, *կաստանյետների* նվագակցությամբ: XV—XVI դդ. ս. հանդիսանում էր կատակերգությունների պարտադիր երաժշտական մուտքի համար: XVII դ. Ֆրանսիայում ս. փոփոխման ենթարկվեց, սկսեցին պարել նոր՝ *մենուետի* ձևով, զույգերով, դանդաղ և հանդիսավոր: XVII—XVIII դդ. ս. դառնում է նաև արքունական-պալատական պար, օգտագործվում է բալետում և XIX դ. մտնում է գործիքային սյուիտի մեջ, որպես երրորդ մաս՝ *կուրանտայի* և *ժիգայի* միջև:

ՍԱՐԱՄԲԵԿԵ (իսպ. zarambegue) նեգրական ուրախ և ռիթմիկ պար:

ՍԱՐՅՈՒՍՈՖՈՆ (ֆր. sarrussophone) սկզբում՝ *հոբոյանման* մետաղյա նվագարան, կրկնակի *եղեգնաթիթեղով* և *բյոմի սիստեմով* տեղադրված 18 *խփասարքերով*, պատրաստել է Պ. Լ. Գոտրոն, 1856 թ. Փարիզում, զինվորական *կապելմայստեր* Սարյուսի առաջարկությամբ: Գոյություն ունի ս. 6 տարատեսակ՝ սոպրանային (inB), *ալտային* (inEs), *բասային* (inB) *կոնտրաբասային* (inEs), հիմնականում օգտագործվում է Ֆրանսիայի փողային նվագախմբերում, ֆրանսիական սիմֆոնիկ *պարտիտուրներում* երբեմն *կոնտրաֆագոտի* փոխարեն օգտագործվում է ս.:



ՍԱՐՆԱՅ, տես՝ *պարկապզուկ:*

ՍԱՐՍՈՒԵԼԱ (իսպ. zarzuela) իսպանական օպերայի հնագույն ժանր, որտեղ երգեցողությունը և պարը ընդմիջվում էին երկխոսությամբ, XVII դ. ս. բնույթով քնարական պիեսներ էին (հետագայում՝ նաև կոմեդիաներ):

ՍԱՔՍՀՈՌՆ (գերմ., անգլ. Saxhorn, ռուս. саксгорн) տարբեր մեծության ձվաձև փողային *մունդշտուկային* նվագարանների մի ամբողջ ընտանիք, որը ստեղծել է բելգիացի վարպետ Սաքսը, 1845 թ. (այստեղից էլ՝ անվանումը) ս. ունեն միանգամից լայնացող փողաբերան, հիմնականում փողային նվագախմբերում են օգտագործվում (ամբողջ խմբով՝ ֆրանսիական զինվորական նվագախմբերում): ԽՍՀՄ փողային նվագախմբերում օգտագործվում են ս. հետևյալ չորս տարատեսակները՝ *ալտ, տենոր, բարիտոն* և *բաս:*

ՍԱՔՍՈՖՈՆ (ֆր. saxophone) մետաղյա կոնաձև փողային նվագարան (գործիք), որը հնարել է բելգիացի վարպետ Ա. Սաքսը (այստեղից էլ՝ անվանումը) 1840 թ.: Ունի *կլարնետի* նման կտցաձև *բերանոց,* միակի *պիպիչով* և ձայնանցքերը փակող շուրջ 26 *խփասարք: Ստեղծված են Ս. ութ տարատեսակները, որոնք անկախ իրենց իրական հնչողից, նոտագրվում են ջութակի բանալիով:* Բոլոր ս. ձայնածավալները՝ ըստ գրության համարյա նույնն են. փոքր *օկտավայի սի բեմոլ*-ից մինչև երրորդ *օկտավայի ֆա*-ն (b-f^3), սակայն ըստ տարատեսակի և լարվածքի, հնչում են տարբեր: Ս. ունեն



հյութալի, հնչեղ, երգուն և թրթռուն ձայն, արտահայտիչ ձայներանգն աչքի է ընկնում արտասովոր ինքնատիրությամբ, նվագի տեխնիկան դյուրաշարժ է և ճկուն: Առաջին համաշխարհային պատերազմից հետո ս. դարձավ *ջազային նվագախմբերի,* անսամբլների և նշանավոր մենակատարների նախընտրելի նվագարանը (գործիքը), մեծապես նպաստելով ժանրի զարգացմանը և հարստացմանը: Հաճախ օգտագործվում է փողային նվա-

գախմբերում, ավելի սակավ՝ սիմֆոնիկ *պարտիտուրներում:*

ՍԳԵՐԳ, նույնն է՝ *ողբերգ,* տես՝ *ռեքվիեմ:*

ՍԳՈ ՔԱՅԼԵՐԳ (ռուս. траурный марш) տես՝ *թաղման քայլերգ:*

ՍԵԳԻԴԻԼՅԱ (իսպ. seguidilla) իսպանական (անդալուսյան) ժողովրդական աշխույժ պարերգ, 3/4 կամ 3/8 չափով, պարում են տղամարդ և կին, կամ երկու կին, պարն ուղեկցվում է *կիթառի* նվագով, երգով և *կաստանյետների* զարկով: Իրենց ստեղծագործություններում ս. մշակել են Վեբերը, Գլինկան, Ալբենիսը և ուրիշներ:

ՍԵԿՎԵՆՑԻԱ (լատ. sequentia՝ հետևել, հետքով գնալ) 1) երաժշտական որևէ դարձվածքի կրկնումը *լադի* տարբեր աստիճաններից, ըստ որում կրկնումների ժամանակ *ինտերվալների* քանակական մեծությունը սովորաբար մնում է անփոփոխ, իսկ որակականը փոփոխվում է: *Տոնայնական* է կոչվում այն ս., որի բոլոր օղակները գտնվում են միևնույն տոնայնության մեջ, *զարտուղող,* երբ ս. թեմատիկ զարգացման պրոցեսում կապում է



մի քանի տոնայնություններ, *խրոմատիկ,* երբ յուրաքանչյուր օղակը գտնվում է նոր տոնայնության մեջ: Ս. հանդիսանում է *մելոդիկ* և *հարմոնիկ* զարգացման կարևոր հենարաններից մեկը, 2) միջնադարյան կաթոլիկ օրհներգությունների տարատեսակը (օր. Stabat mater-ը, Dies irae-ն): Տես՝ *յուբիլյացիա:*

ՍԵԿՈՒՆԴԱ (լատ. secunda՝ երկրորդ) 1) *դիատոնիկ գամմայի* յուրաքանչյուր հնչյունի երկրորդ աստիճանը կամ նրանց հարաբերությունը, այսինքն՝ երկու աստիճան ընդգրկող *ինտերվալ,* 2) երկրորդ ձայն կատարող մի շարք նվագարանների (գործիքների) *պարտիաները,* օր. երկրորդ ջութակի *պարտիան կվարտետում,* ինչպես նաև չորս ձեռքի համար գրված դաշնամուրային ստեղծագործությունների վարի կամ ձախ կողմի *պարտիան,* 3) որոշ նվագարանների (գործիքների) այն տարատեսակը, որը հատուկ պատրաստված է երկրորդ ձայնի *պարտիան* կատարելու համար՝ *բալալայկա-սեկունդա:*

ՍԵԿՈՒՆԴԱԿՈՐԴ, տես՝ *սեպտակորդի շրջվածքներ:*

ՍԵՂՄ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. сжатое расположение) նույնն է՝ *ակորդի սեղմ դասավորություն:*

ՍԵՄԻՄԻՆԻՄա, տես՝ *մենզուրալ նոտագրություն:*

ՍԵՄԻՏՈՒՆԶա, տես՝ *մենզուրալ նոտագրություն:*

ՍԵՆՏԻՄԵՆՏԱԼԻԶՄ (ֆր. sentimentalisme, sentiment-ից՝ զգացմունք) հոսանք XVIII դ. երկրորդ կեսի եվրոպական արվեստում և գրականության մեջ, արտացոլում էր «երրորդ խավի» դեմոկրատական զանգվածների գաղափարախոսությունը: Երաժշտական ս. կամ զգայական ոճը բնորոշ կերպով արտահայտվել է Ֆրանսիայում, Գերմանիայում և Իտալիայում:

ՍԵՊՏԱԿՈՐԴ (ռուս. септаккорд) չորս ձայնից բաղկացած *ակորդ,* նշանակվում է 7 թվանշանով: *Բնական, հարմոնիկ և մելոդիկ մաժորի* և *մինորի* աստիճանների վրա կառուցված ս. յոթ տեսակ են՝ ա) *մեծ մաժոր ս.,* կազմված է *մաժոր եռահնչյունից* և *մեծ սեպտիմայից* (հիմքից հաշված), բ) *փոքր մաժոր ս.՝ մաժոր եռահնչյունից* և *փոքր սեպտիմայից,* գ) *մեծ մինոր ս.՝ մինոր եռահնչյունից* և *մեծ սեպտիմայից,* դ) *փոքր մինոր ս.՝ մինոր եռահնչյունից* և *փոքր սեպտիմայից,* ե) *կիսափոքրացրած ս.՝ փոքրացրած եռահնչյունից* և *փոքր սեպտիմայից,* զ) *փոքրացրած ս.՝ փոքրացրած եռահնչյունից* և *փոքրացրած սեպտիմայից,* է) *կիսամեծացրած ս.,* ընդունված է անվանել *մեծացրած,* կազմված է *մեծացրած եռահնչյունից* և *մեծ սեպտիմայից:*



ՍԵՊՏԱԿՈՐԴԻ ՇՐՋՎԱԾՔՆԵՐ (ռուս. обращения септаккорда) *սեպտակորդի* այն դրությունները, երբ նրա հիմքում (ցածի ձայնում) *հիմնական տոնի* փոխարեն գտնվում է մյուս՝ *ակորդային տոներից* որևէ մեկը: *Սեպտակորդն* ունի երեք շրջվածք՝ ա) հիմքում գտնվում է *տերցիային տոնը,* կոչվում է *կվինտսեքստակորդ,* նշանակվում է $^{5}_{6}$ կամ $^{5}_{6}$ թվերով, բ) հիմքում գտնվում է *կվինտային տոնը,* կոչվում է *տերցկվարտակորդ,* նշանակվում է $^{3}_{4}$ կամ $^{3}_{4}$ թվերով, գ) հիմքում գտնվում է *սեպ-*



տիմային տոնը, կոչվում է *սեկունդակորդ*, նշանակվում է 2 թվանշանով:

ՍԵՊՏԵՏ (գերմ. septett, լատ. septem-ից՝ յոթ) երաժշտական ստեղծագործություն յոթ կատարողների (նվագող կամ երգիչ) համար: Գործիքային ս. գրվում են տարբեր կազմերի համար, սովորաբար *ցիկլային սոնատային ձևով*, վոկալ ս. հանդիպում է գլխավորապես օպերայում:

ՍԵՊՏԻՄ (լատ. septima՝ յոթերորդ) 1) *դիատոնիկ գամմայի* յուրաքանչյուր հնչյունի յոթերորդ աստիճանը կամ նրանց հարաբերությունը, այսինքն՝ յոթ աստիճան ընդգրկող *ինտերվալ*, նշանակվում է 7 թվանշանով, 2) *ակորդի սեպտիմային տոնի* կրճատ անվանումը:

ՍԵՊՏԻՄԱՅԻՆ ՏՈՆ (ռուս. септимовый тон), տես՝ *ակորդային տոներ:*

ՍԵՐԵՆԱԴ (ֆր. serenada, իտ. serenata-ից՝ երեկոյան, գիշերային երգ, alsereno՝ բացօթյա) *ցայգերգ, գիշերերգ*, 1) սկզբում՝ որևէ անձնավորության պատվին, նրա լուսամուտների տակ, երեկոյան, կամ գիշերը բացօթյա կատարվող վոկալ կամ գործիքային երաժշտական ստեղծագործություն, հետագայում՝ 2) հիմնականում սիրային երգեր, որոնք առանձնապես տարածված էին Իտալիայում և Իսպանիայում, երգվում էին *լյուտնյայի, կիթառի* կամ *մանդոլինի* նվագակցությամբ, 3) *սյուիտի* կամ *դիվերտիսմենտի* տիպի բազմամաս գործիքային ստեղծագործություն անսամբլի կամ փոքր նվագախմբի համար, 4) հովվերգական բնույթի *կանտատ*, 5) XIX դ. թե վոկալ, թե գործիքային ս. դառնում է համերգային ժանրի ստեղծագործություն, օր. Շուբերտի Սերենադը ձայնի համար, Բեթհովենի Սերենադները գործիքային տարբեր անսամբլների համար, Չայկովսկու Սերենադը լարային նվագախմբի համար և այլն:

ՍԵՐԻԱ (իտ. serie՝ շար) *խրոմատիկ գամմայի* 12 չկրկնվող ինքնուրույն հնչյունների այս կամ այն հաջորդականությունը, շարը, որն ամեն անգամ ստեղծագործելուց առաջ սահմանում է կոմպոզիտորը և որը *դոդեկաֆոնային, սերիային* և *պուանտիլիստական* երաժշտության հիմքն է հանդիսանում: Ս. կազմվում է հետևյալ սկզբունքով. ա) բոլոր հնչյունները պիտի ունենան հավասար նշանակություն, չպետք է լինեն կայուն և անկայուն հնչյուններ, բ) ս. և ոչ մի հնչյունը չպետք է կրկնվի, մինչև մնացած տասնմեկ հնչյունների օգտագործումը, ըստ որում սկզբունքը տարածվում է ոչ միայն հնչյունների շարժման հաջորդականության, այլև համահնչյունների վրա: Տես՝ *դոդեկաֆոնիա, սերիային երաժշտություն, պուանտիլիզմ:*

ՍԵՐԻԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. серийная музыка) *շարային երաժշտություն, սերիային տեխնիկայով* գրված երաժշտություն:

ՍԵՐԻԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱ (ռուս. серийная техника) *շարային տեխնիկա*, ավստրիացի կոմպոզիտոր Ա. Շյոնբերգի ներմուծած *դոդեկաֆոնիայի* տարատեսակը, որում բացի ձայնի բարձրությունից, շարային *(սերիային)* սկզբունքի են ենթարկվում նաև ձայնի մնացած բոլոր հատկությունները՝ տևողությունը, ուժգնությունը, հնչերանգը, հնչեցման եղանակը, ինչպես նաև ստեղծագործության ամբողջ կառուցվածքը: Շարի յուրաքանչյուր հնչյունին կցված է հատուկ ռիթմ, ուժգնություն, հնչերանգ և այլն: Հետագայում ս. տ. ավելի է բարդանում՝ միաժամանակ կիրառվում են մի քանի շարեր *(սերիաներ)*, կատարվում է նրանց տեղափոխումը *(տրանսպոզիցիան)*, հնչյունները միմյանցից բաժանվում են աննշան դադարներով *(պուանտիլիզմ)* և այլն:

ՍԵՔՍՏ (լատ. sexta՝ վեցերորդ) *դիատոնիկ գամմայի* յուրաքանչյուր հնչյունի վեցերորդ աստիճանը, կամ նրանց հարաբերությունը, այսինքն՝ վեց աստիճան ընդգրկող *ինտերվալ*, նշանակվում է 6 թվանշանով:

ՍԵՔՍՏԱԿՈՐԴ (ռուս. секстаккорд) տես՝ *եռահնչյունի շրջվածքներ:*

ՍԵՔՍՏԵՏ (գերմ. sextett, լատ. sextus-ից՝ վեցերորդ) երաժշտական ստեղծագործություն վեց կատարողների (նվագող կամ երգիչ) համար, գործիքային ս. գրվում են տարբեր կազմերի համար, սովորաբար *սոնատային* ցիկլիկ ձևով, վոկալ ս. հանդիպում է գլխավորապես օպերայում:

ՍԻ(si) ժամանակակից *երաժշտական ձայնաշարի* յոթ հիմնական հնչյուններից յոթերորդի վանկային անվանումը (տես՝ *սոլմիզացիա*), տառային նշանակումն է H կամ h:

ՍԻՄ, պղնձե բարակ լար, որը ձգում են սազի, թառի և նման այլ նվագարանների վրա: Տես՝ *աղի, աղելար:*

ՍԻՄՖՈՆԻԱ (հուն. symphonia՝ համահնչյուն) XVI — XVII դդ. Իտալիայում ս. էին կոչվում խոշոր խմբերգերի և պարային *սյուիտների նախանվագները*, XVIII դ. սկզբին ս. (symphonia) էր կոչվում օպերային *նախերգանքը:* Առանձնանալով օպերայից, ս. դարձավ համերգային ինքնուրույն ժանր: Ժամանակակից իմաստով ս. է կոչվում խոշոր նվագախմբային ստեղծագործությունը, գրված *սոնատային ցիկլի* ձևով: Սովորաբար բաղկացած է լինում չորս մասից, թեև կան 1 — 7 մասեր ունեցող ս., երբեմն մասնակցում են նաև մեներգիչներ և երգչախումբ: Հիմնականում ս. գրվում են *սիմֆոնիկ նվագախմբերի* համար, սակայն գոյություն ունեն նաև լարային, փողային, նաև ժողովրդական նվագարանների համար գրված ս., ինչպես նաև մենակատարող նվագարանի և նվագախմբի համար գրված ս.: Ս. կազմավորման, լինելության, զարգացման գործում կարևորագույն դեր են խաղացել *վիեննական դասական դպրոցի* ներկայացուցիչներ Հայդնը,

Մոցարտը, հատկապես Բեթհովենը, որի ինն ս. XIX դ. սիմֆոնիկ երաժշտության բարձունքն են հանդիսանում: Բեթհովենից սկսած, ս. դառնում է գործիքային երաժշտության ամենաբարձր ու կատարյալ ձևը: Կան բազմաթիվ ծրագրային ս., որոնք գրված են գրականությունից վերցված կամ կոմպոզիտորի կողմից հորինված սյուժետային գծով (Բեռլիոզի «Ֆանտաստիկ» ս., Լիստի «Faուստ» և «Դանտե» ս. և այլն): Ռուս կոմպոզիտորների ստեղծագործություններում ս. ձևավորվել է XIX դ. և իր ազդեցությունն ունեցել ս. հետագա զարգացման վրա, հատկապես Չայկովսկու ստեղծագործությամբ, ռուս ականավոր սիմֆոնիստներ են Բորոդինը, Գլազունովը, Տանեևը, Սկրյաբինը, Ռախմանինովը և ուրիշներ: Խորհրդային երաժշտության մեջ ս. ակնառու տեղ է գրավում, խորհրդային սիմֆոնիկ ոճի ստեղծման գործում մեծ դեր են կատարել Մյասկովսկու, Շոստակովիչի, Պրոկոֆևի, Խաչատրյանի ս.:

ՍԻՄՖՈՆԻԱ-ԿՈՆՑԵՐՏ (ռուս. симфония-концерт) տես՝ *կոնցերտային* սիմֆոնիա:

ՍԻՄՖՈՆԻԵՏՏԱ (իտ. sinfonietta, sinfonia-ի փոքրացուցիչը) փոքր սիմֆոնիա:

ՍԻՄՖՈՆԻԿ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. симфоническая музыка) սիմֆոնիկ նվագախմբի համար գրված երաժշտություն, որը կարող է ունենալ մոնումենտալ ձև և հագեցած լինել գաղափարական շեշտված բովանդակությամբ և խորը հուզականությամբ (սիմֆոնիա, նախերգանք, կոնցերտ, ֆանտազիա և այլն), նաև՝ լինել փոքր ձևի թեթև, հանրամատչելի երաժշտություն (պարեր, քայլերգեր, դիվերտիսմենտներ և այլն):

ՍԻՄՖՈՆԻԿ ՀԱՄԵՐԳ (ռուս. симфонический концерт) համերգ սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ, որին կարող են մասնակցել նաև մենակատարներ: Ս. հ. կատարվում են սիմֆոնիաներ, սիմֆոնիկ պոեմներ, նախերգանքներ, կոնցերտներ, ընդհանրապես՝ սիմֆոնիկ նվագախմբի համար գրված ստեղծագործություններ: Տես՝ *սիմֆոնիկ երաժշտություն:*

ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ (ռուս. симфонический оркестр) տեխնիկական-կատարողական հնարավորություններով, հնչերանգներով ամենահարուստ, ամենակատարյալ և տարածված նվագախումբը, որը ընդգրկում է նվագարանների չորս հիմնական խմբեր՝ ա) *լարային*, բ) *փայտյա փողային*, գ) *պղնձյա փողային* և դ) *հարվածային:* Մինչև իր ձևավորումը, որը տեղի ունեցավ XVIII դ. երկրորդ կեսին, ս. ն. անցել է պատմական զարգացման մեծ ուղի: Առաջին այն ս. ն., որի կազմը հաստատել է դեռևս Հայդնը, այժմ կոչվում է *դասական* կամ *փոքր ս. ն.* և որի օրինակելի կազմն է հետևյալը. առաջին ջութակներ-10, երկրորդ ջութակներ-8, ալտեր-6, թավջութակներ-5,6, կոնտրաբասեր-3,4, փայտյա և պղնձյա փողային նվագարանների (գործիքների) այսպես կոչված *զույգ կազմ՝* 2 ֆլեյտա, 2 ֆագոտ, 2 վալտորնա, 2 փող և 2 լիտավր: Երբ փոքր (կամ դասական) ս. ն. ավելացնում են ևս երկու վալտորնա, երկու կամ երեք տրոմբոն և տուբա, արդեն կոչվում է *մեծ ս. ն.:* Ներկայումս գոյություն ունեն տարբեր կազմերի ս. ն.: Ընդհանուր հնչողության հավասարակշռությունը պահպանելու համար, լարային նվագարանների (գործիքների) քանակը որոշվում է փողայինների (գլխավորապես՝ փայտյա) քանակով: Գոյություն ունեն մեծ ս. ն. փողայինների հետևյալ՝ ամենագործածական կազմերը՝ զույգ կազմ, եռակի կազմ, քառակի կազմ: XIX դ. երկրորդ կեսի և XX դ. կոմպոզիտորները, ձգտելով էլ ավելի հարստացնել ս. ն. նոր, ինքնօրինակ հնչերանգներով, կազմի մեջ մտցրել են հետևյալ բազմաթիվ նվագարաններ (գործիքներ)՝ *ալտային, բասային, և պիկոլո ֆլեյտաներ, անգլիական փողակ, սիրո հոբոյ, հեկկելֆոն, պիկոլո և բաս կլարնետներ, բասետհորն, սաքսոֆոններ, կոնտրաֆագոտ, սարյուսաֆոն,* տարբեր տեսակի *փողեր, գալարափողային տուբաներ, տավիղներ,* դաշնամուր, *չելեստա, երգեհոն,* հարվածային մի ամբողջ շարք նվագարաններ նաև ժողովրդական առանձին նվագարաններ: Դրա հետ մեկտեղ, արդի կոմպոզիտորներից ոմանք ընդհակառակն, ձգտում են քանակապես պակասեցնել ս. ն., կազմը, նպատակ ունենալով ավելի բազմակողմանի օգտագործել յուրաքանչյուր առանձին նվագարանը: Ս. ն. հնչողությունն ավելի միաձույլ, հավասարաչափ դարձնելու համար կարևոր նշանակություն ունի նվագախմբի դասավորությունը բեմահարթակի վրա: Գոյություն են ունեցել ս. ն. դասավորման մի քանի ձևեր: Ներկայումս շատ տարածված են երկու ձև, որոնք միմյանցից տարբերվում են հիմնականում լարային խմբի դասավորությամբ: Տես՝ *օպերային* (սիմֆոնիկ) նվագախումբ, պարտիտուր:

ՍԻՄՖՈՆԻԿ ՊԱՏԿԵՐ (ռուս. симфоническая картина) սիմֆոնիկ նվագախմբի համար գրված մեկմասանի երաժշտական ստեղծագործություն, որն ունի որոշակի սյուժե (ծրագիր) և պատկերավոր կամ նկարագրողական բնույթ, օր. Բորոդինի, «Միջին Ասիայում» Մուսորգսկու «Գիշերը լերկ լեռան վրա», Սպենդիարյանի «երեք արմավենի ս. պ.: *Սիմֆոնիկ պոեմից* տարբերվում են նրանով, որ առաջինի բովանդակությունն ավելի միատարր է և բաղկացած է ավելի քիչ հատվածներից (մասերից) չնայած հաճախ դժվար է տարբերել այդ երկու ժանրերը: Տես՝ *սիմֆոնիկ ֆանտազիա:*

ՍԻՄՖՈՆԻԿ ՊՈԵՄ (ռուս. симфоническая поэма) խոշոր ձևի միակողմանի սիմֆոնիկ ստեղծագործություն, գրված որոշակի սյուժեով: Վերջինս կարող է վերցված լինել գրականությունից, կամ ստեղծվել իր՝ կոմպոզիտորի կողմից: Ս. պ. ձևը կախված է նրա հիմքում ընկած

սյուժեի դրամատուրգիայի զարգացման ընթացքից: Առաջին ս. պ. գրել է Լիստը, ապա ընդհանուր թվով ստեղծել 13 ս. պ.՝ «Պրելյուդները» (ըստ Լամարտինի), «Պրոմեթևսը» (ըստ Գերդերի), «Մազեպան» (ըստ Հյուգոյի) և այլն: Հետագայում ս. պ. դարձավ *ծրագրային երաժշտության* ամենահիմնական տարատեսակը, բազմապիսի թեմատիկայով (Սմետանայի «Իմ հայրենիքը» ընդհանուր խորագիրը կրող վեց ս. պ.) Չայկովսկու «Ճակատագիրը», Սկրյաբինի «երազանքները» և «Կրակի պոեմը»: Խորհրդային կոմպոզիտորները նույնպես լայնորեն օգտագործում են այդ ժանրը, ընդլայնելով սահմանները, ս. պ. մեջ մտցնելով երգչախումբ, մեներգիչներ, ասմունքող, այդպիսով ստեղծելով նոր տիպի ս. պ., որն իր ընդհանուր բնույթով մոտենում է *կանտատին* և *օրատորիային:* Ս. պ. ազգակից ժանրեր են *սիմֆոնիկ պատկերը* և *սիմֆոնիկ ֆանտազիան*, ըստ որում այդ ժանրերի տերմինոլոգիան կայուն չէ, օր. Բալակիրևն իր «Ռուսաստան» («Русь») կոչվող ստեղծագործությունը սկզբում անվանել է նախերգանք, հետո՝ սիմֆոնիկ պատկեր, ի վերջո ս. պ.:

ՍԻՄՖՈՆԻԿ ՖԱՆՏԱԶԻԱ (ռուս. симфоническая фантазия)սիմֆոնիկ նվագախմբի համար գրված մեկմասանի երաժշտական-ստեղծագործություն, որն ունի որոշակի սյուժե և հաճախ պարունակում է ֆանտաստիկ տարրեր: Ս. ֆ. համար բնորոշ է երաժշտական ավանդական ձևերի ազատ օգտագործումը, ազգակից ժանր է *սիմֆոնիկ պոեմին: Ֆանտազիա* կամ ս. ֆ. է կոչվում հաճախ նաև սիմֆոնիկ նվագախմբի համար գրված մեկմասանի ստեղծագործությունը, հիմնված գլխավորապես ժողովրդական մեղեդիների լայն և ազատ մշակման վրա: Ս. ֆ. լավագույն նմուշներ են Չայկովսկու «Փոթորիկը» և «Ֆրանչեսկա դա Ռիմինին», Ռախմանինովի «Քարափը» և այլն: Տես՝ *սիմֆոնիկ պատկեր:*

ՍԻՆԿՈՊԱ (հուն. synkope՝ կրճատում, կտրատում) *տակտի* ուժեղ կամ համեմատական ուժեղ մասի շեշտի տեղափոխումը նրան նախորդող թույլ մասը, ս. կարող է ստացվել ինչպես հարևան տ ա կ տ ե ր ի միջև, այնպես էլ մեկ տ ա կ տ ու մ: Ս. առաջանում է՝ ա) երբ նախորդ տ ա կ տ ի թույլ մասում գտնվող նոտան շարունակում է



հնչել հաջորդ տ ա կ տ ի ուժեղ մասում, բ) երբ թույլ մասի նոտան ունի ավելի մեծ տևողություն, քան նախորդ ուժեղ մասի նոտան կամ պաուզան, գ) երբ թույլ մասերում գտնվող նոտաների վրա դրվում են շեշտեր: Ս. խախտում է մ ե տ ր ի նորմալ ընթացքը, ռ ի թ մ ի մեջ մտցնելով անակնկալություն և յուրօրինակ սրություն: Մեծ տեղ է գրավում *ջազային երաժշտության մեջ:*

ՍԻՆՈՊՍԻՍ (հուն. syn՝ միասին և opsis՝ հայացք) տես՝ *գունալիր լսողություն:*


ՍԻՆՏՈՆԻԿ ԿՈՄՄԱ (ռուս. синтоническая комма) տես՝ *կոմմա*, նույնն է՝ *Դիդիմյան կոմմա:*

ՍՈՒՊ ՀՈԲՈՅ (իտ. oboe d'amur (*հոբոյի* տարատեսակը, հնչում է սովորական *հոբոյից* փոքր *տերցիա* ցած, ունի նուրբ և քնքուշ *տեմբր*, առաջին անգամ օգտագործել է Յ. Ս. Բախը, ապա նաև մեր ժամանակների մի շարք կոմպոզիտորներ: Տես՝ *հոբոյ:*

ՍԻՐՈՂ (ռուս. *любитель*, իտ. dilettante) *դիլետանտ*, որևէ արվեստ կամ գիտության որևէ ճյուղ սիրող անհատ, որն իր հիմնական աշխատանքից ազատ ժամերին զբաղվում է դրանցով, չունենալով համապատասխան պրոֆեսիոնալ պատրաստություն: Մինչև XIX դ. սկիզբը ս. (դիլետանտ) բառը ներկայիս նաև արհամարհական իմաստը չուներ: Այդպես էին կոչվում երաժշտություն (նաև նկարչություն, թատրոն և այլն) սիրող անձնավորությունները, որոնք միավորվելով կազմում էին ակադեմիաներ, ֆիլհարմոնիկ ընկերություններ և այլն: Ս. մեջ եղել են նաև երաժշտական հիմնավոր պատրաստություն ունեցող երաժիշտներ, որոնք սակայն չեն կարողացել իրենց երաժիշտ, արտիստ համարել, ազնվական դասին պատկանելու պատճառով:

ՍԻՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. *любительство, любительщина, дилетантство, дилетантизм*) *դիլետանտիզմ*, որևէ արվեստով մակերեսորեն զբաղվելը, բնագավառի մասին թռուցիկ և անկազմակերպ տեղեկություններ իմանալը: Ներկայումս մեծ մասամբ օգտագործվում է հեգնական իմաստով, որ նկավորելով երաժշտության, թատերական ներկայացման վատ, մակերեսային, ոչ պրոֆեսիոնալ կատարումը: Տես՝ *սիրող:*

ՍԻՑԻԼԻԱՆԱ (իտ. siziliana՝ սիցիլիական) հովվերգական բնույթի հնագույն իտալական պար, 6/8, 9/8, 12/8 չափով, տեմպը՝ չափավոր: XVII — XVIII դդ. շատ տարած-



ված և սիրված գործիքային և վոկալ երաժշտական ձևերից մեկը, որը հաճախ մտնում էր *սոնատների, կոնցերտների* դանդաղ մասերի մեջ, քնարական դանդաղ *արիաներում* (Սկառլատտի, Բախ, Հենդել և ուրիշներ):

ՍԿԵՐՑԻՆՈ (իտ. scherzino, scherzo-ի փոքրացուցիչը) փոքրիկ *սկերցո:*

ՍԿԵՐՑՈ (իտ. scherzo՝ կատակ) սովորաբար աշխույժ, կրակոտ, սրընթաց, կատակային բնույթի երաժշտական

պիես, սուր և պարզորոշ ռիթմով, ցայտուն հակադրություններով: Ստեղծելով ս. դասական ձևը, Բեթհովենը *մենուետի* փոխարեն դա մտցրել է *սոնատային ցիկլիկ ձևի* մեջ, որպես միջին մասերից մեկը: Չնայած իր անվանը, ս. կարող է ունենալ հերոսական բնույթ (Բեթհովենի 9-րդ, Չայկովսկու 6-րդ սիմֆոնիաներում) դրամատիկ և քնարական բնույթ (Շոպենի *ա մոլ մինոր դաշնամուրային սոնատում*): Բեթհովենից հետո ս. գրվում է նաև որպես ինքնուրույն ստեղծագործություն տարբեր նվագարանների, անսամբլների և նվագախմբի համար:

ՍԿԶԲՆԱԳԻԾ (ռուս. начальная черта) *նոտակիրի* սկզբում (ձախից) դրված ուղղահայաց գիծը, որը միացնում է *նոտակիրի* հինգ գծերը:

ՍԿԶԲՆԱՆՎԱԳ (ռուս. вступление) երաժշտական ստեղծագործության գլխավոր թեմային կամ նրա որևէ մասին նախորդող սկզբնական *էպիզոդ*: Վոկալ-սիմֆոնիկ և բեմական խոշոր ստեղծագործություններում (օպերա, կանտատ, օրատորիա, բալետ, դրամա) ս. նախերգանքի տեսակ է: Ս. բնույթով տարբեր են. ոչ մեծ ստեղծագործություններում ս. սովորաբար կազմված է մի քանի տակտից, ըստ որում կարող է լինել ավարտված երաժշտական կառուցվածք: Խոշոր գործիքային ստեղծագործություններում ս. ավելի ծավալուն է, երբեմն նախապատրաստում է գլխավոր թեման, երբեմն հակադրված է ստեղծագործության հիմնական բաժնին: Ս. հաճախակի ավարտված երաժշտական պիես բնույթ է կրում:

ՍԿՈՄՈՐՈՒԽՆԵՐ (ռուս. скоморохи) միջնադարյան Ռուսաստանի (XI—XVII դդ.) ժողովրդական թափառաշրջիկ պրոֆեսիոնալ խեղկատակներ, որոնք տիրապետում էին բազմապիսի արվեստների՝ երգ, նվագ, դերասանություն, աճպարարություն, ակրոբատիկա և այլն: Ս. արվեստը ռուսական բանահյուսության հետաքրքիր ճյուղերից մեկն է:

ՍԿՈՐԴԱՏՈՒՐԱ (իտ. scordatura, scordare-ից նվագարանը լարից գցել) լարային նվագարանի (գործիքի) սովորական լարվածքի ժամանակավոր փոփոխումը, որի հետևանքով կատարումը դառնում է ավելի հարմար, ընդլայնվում է *ձայնածավալը* (սովորաբար մեկուկես *տոնի* սահմաններում) և որոշ չափով փոխում նրա հնչերանգը: Ս. կիրառվում է կիթառի, ջութակի, բյամանչայի և մի շարք այլ նվագարանների համար գրված ստեղծագործություններում:

ՍՅՈՒԻՏ (ֆր. suite՝ հաջորդականություն, շար, ռուս. сюита) բազմամաս երաժշտական ստեղծագործություն, որում հակադրության սկզբունքով իրար են հաջորդում տարբեր բնույթի, տեմպի ու չափի մի քանի առանձին, ավարտված պիեսներ, որոնք միավորվում են մեկ ընդհանուր գեղարվեստական մարմնացումով: Հնում Իտալիայում սովորություն կար պարեղանակները նվագել ոչ միայն պարելու, այլ նաև միայն ունկնդրելու համար: Եվ դա ավելի հետաքրքիր և իմաստալի դարձնելու համար, XVI դ. սկզբին սկսեցին իրար միացնել 2/4 չափ ունեցող դանդաղ և հանդիսավոր *պավանան* և 3/4 չափ ունեցող աշխույժ *գալյարդան*, որոնք հաջորդում էին միմյանց, կազմելով առանձին երկու մասերից կազմված գործիքային ստեղծագործություն՝ այդպես ստեղծվեց ս.: XVII դ. ս. միավորում էր հետևյալ չորս պարերի շարը՝ հանդարտ ու սահուն *ալեմանդան*, ավելի շարժուն *կուրանտան*, վեհ ու հանդիսավոր *սարաբանդան*, ապա արընթաց *ժիգան*: Հետագայում այդ պարային կոչվող ս. մեջ մտցվում են նոր, երբեմն ոչ պարային բնույթի մասեր, այսպես, *ալեմանդային* հաճախ նախորդում էր *պրելյուդը* (երբեմն՝ *ֆուգայով*), *սարաբանդայի* և *ժիգայի* արանքում մտցվում էր *մենուետը* կամ *բուրրեն, գավոտը, պոլոնեզը, ռիգոդոնը*, երբեմն՝ *արիան, ռոնդոն, կապրիչչոն*: Հանդիպում են նաև *դուբլ* կոչվող մասեր, որոնք իրենցից ներկայացնում են ս. մասերից որևէ մեկի ձեվավորված կրկնությունը: Ս. գրվում էին հիմնականում *լյուտնյայի, կլավեսինի*, նվագախմբի, ինչպես նաև մի շարք նվագարանների և գործիքային անսամբլների համար: Գեղարվեստական բարձր արժանիքներ են ներկայացնում Յ. Ս. Բախի և Հենդելի ս. (XVIII դ. առաջին կես): Բախն իր մի քանի ս. անվանել է *պարտիտաներ*: Ս. ձևով են գրվել *սերենադները, նոկտյուռնները, կասացիաները* և այլն: XVII — XVIII դդ. պարային ս. խոշոր դեր է խաղացել *ցիկլային* (սոնատ, սիմֆոնիա) և նման այլ խոշոր ձևերի ստեղծման գործում, որոնց նա, XVIII դ. վերջում գիջեց իր տեղը: Սակայն XIX դ. երկրորդ կեսից ստեղծվում է ս. նոր տեսակ, որը միավորում է տարբեր ժանրերի բազմապիսի երաժշտական պիեսներ, այդ թվում նաև ժամանակակից և տարբեր ժողովուրդների ազգային պարեր և մեղեդիներ, նրանց երաժշտության թեմաներով գրված *պիեսներ*: Շատ հաճախ ս. կազմվում են օպերաների, բալետների, դրամատիկ թատրոնի և կինոֆիլմերի համար գրված երաժշտության առանձին հատվածներից, լինում են նաև վոկալ ս. (հաճախ խմբերգային):

ՍՅՈՒՆԿ (ռուս. дужка) լարային նվագարանների փայտյա մաս, տեղադրվում է նվագարանի իրանի ներսում, համարյա ուղղահայաց: Ս. չափը և տեղադրումը զգալիորեն ազդում է նվագարանի հնչման որակի վրա:

ՍՈԼ (sol) 1) *ժամանակակից երաժշտական ձայնաշարի* յոթ հիմնական հնչյուններից հինգերորդի վանկային անվանումը (տես՝ *սոլմիզացիա*): Տառային նշանակումն է G կամ g, 2) *բանալիի* անուն:

ՍՈԼՄԻԶԱՑԻԱ (*սոլ* և *մի* նոտաների վանկային անուններից կազմված բառ) 1) XI դ. առաջին կեսում Գվիդո դ'Արրեցոյի (990 — 1050) մտցրած նոտաների հետևյալ վանկային անունները՝ ut, re, mi, fa, sol, la (*ուտ, ռե,*

մի, ֆա, սոլ, լա), որոնք սակայն, ժամանակակից իմաստը չունեին և կիրառվում էին հեշտացնելու ամբողջ և կես տոների և *ինտերվալների* ընկալումը նոտաներով երգել սովորողների համար: Նա օգտագործել է երգիչների այն հիմնը, որով խնդրում էին սրբ. Յոհաննին՝ պաշտպանել իրենց ձայնը խռպոտությունից: Այդ հիմնի առաջին վեց տողերից յուրաքանչյուրի մեղեդային գիծը սկսվում է մեկը մյուսից մեծ *սեկունդա* վեր, բացի 4-րդ գծից, որը 3-րդի հետ կազմում է փոքր *սեկունդա* (այն ժամանակ օգտագործում էին վեց հնչյունանոց ձայնաշար՝ *հեքստախորդ*: Հետագայում ձայների վանկային անուն-



Հիմն սուրբ Հովհաննես (ստեղծ. մոտ 700 թ. տարվավոց Պավելի)

ները ձեռք բերեցին ժամանակակից իմաստը (այսինքն, սկսեցին արտահայտել c, d, e, f, g, a, h տառերին համապատասխան որոշակի բարձրություններ), արտասանության համար անհարմար *ut* (*ուտ*) վանկը փոխարինվեց ավելի հարմար do (*դո*) վանկով, իսկ յոթերորդ հնչյունի si (*սի*) վանկային անունը կազմվեց այդ հիմնի յոթերորդ տողը կազմող երկու բառերի առաջին տառերով, 2) նոտաների ռիթմիկ ընթերցումը վանկային անուններով (առանց երգելու), հիմնականում կիրառվում է մանկավարժական պրակտիկայում: Տես՝ *ձայների տառային նշանակում:*

ՍՈԼՖԵՋՋՈ (իտ. solfeggio՝ *սոլ* և *ֆա* նոտաների վանկային անուններից կազմված բառ) 1) երգելով նոտաներ կարդալու վարժություններ, որի ժամանակ արտասանվում են երգվող նոտաների անունները և որի նպատակն է զարգացնել լսողությունը և նոտաներով երգելու ունակությունը, 2) բոլոր երաժշտական ուսումնական հաստատություններում ավանդվող առարկա, որն ընդգրկում է երգելով նոտաներ կարդալը (միաձայն, երկձայն, և այլն), երաժշտական թելադրություն գրելը (միաձայն, երկձայն, և այլն), լսողությամբ *ինտերվալներ, ակորդներ* և *ակորդների* հաջորդականություն որոշելը, տված նոտայից *ինտերվալներ, ակորդներ,* և նրանց հաջորդականությունը երգելը: Տես՝ *սոլմիզացիա:*

ՍՈՆԱՏ (իտ. sonata, sonare-ից՝ հնչել) XVI դ. վերջից մինչև XVII դ. վերջը՝ գործիքային ստեղծագործությունները, ի տարբերություն վոկալ գործերի, որոնք կոչվում էին *կանտատաներ*: XVII դ. վերջին ս. որպես իրար հակադրվող 4 — 6 առանձին մասերից կազմված *ցիկլային* (բազմմաս) երկ, պարզորոշ կերպով ձևավորվեց իտալացի կոմպոզիտորների ստեղծագործություններում (Կորելլի, Տորելլի, Վիվալդի, Տարտինի): Այդ ս. շատերը գրված են չորս նվագարանի համար, *սյուիտի* ձևվ. ս. հետագա զարգացման համար կարևոր նշանակություն ունեցան Սկառլատտիի մեծմասանի և Ֆ. Է. Բախի բազմմաս ս.: Դասական ս. ձևավորվեց վիեննական դպրոցի կոմպոզիտորներ Հայդնի և Մոցարտի ստեղծագործության մեջ: Այդ ժամանակից ս. է կոչվում մեկ կամ երկու նվագարանի (գործիքի) համար գրված, սովորաբար *ցիկլային* այն ստեղծագործությունը, որի գոնե մեկ մասը (սովորաբար՝ առաջին) շարադրված է *սոնատային ալեգրոյի* ձևով (կան այդ ձևով գրված նաև մեկմասանի ս.): Դասական ս. առավել մեծ զարգացման հասավ XIX դ. առաջին քառորդում, Բեթհովենի ստեղծագործության մեջ: Ամենամեծ քանակությամբ ս. գրվել են դաշնամուրի, ջութակի և դաշնամուրի, թավջութակի և դաշնամուրի, որևէ այլ նվագարանի (գործիքի) և դաշնամուրի համար: Երբեմն ս. տրվում են անվանումներ, օր., «Պաթետիկ», «Ապասիոնատա», «Ավրորա» և այլն: Տես՝ *սոնատային ցիկլիկ ձև:*

ՍՈՆԱՏԱՅԻՆ ԱԼԵԳՐՈ (ռուս. сонатное аллегро) նույնն է՝ *սոնատային ձև:*

ՍՈՆԱՏԱՅԻՆ ԶՈՒԳԱՆՎԱԳ (ռուս. сонатный дуэт) *սոնատ* երկու երաժիշտներից կազմված անսամբլի համար:

ՍՈՆԱՏԱՅԻՆ ՁԵՎ (ռուս. сонатная форма) երեք հիմնական մասերից կազմված այնպիսի ձև, որի *էքսպոզիցիա* (ցուցադրում) կոչվող առաջին մասում շարադրվում են իրար հակադրվող երկու *թեմաներ*, տարբեր տոնայնություններում (առաջինը՝ գլխավոր, երկրորդը՝ օժանդակ), *մշակում* կոչվող երկրորդ մասում տեղի է ունենում *թեմաների* ազատ մշակումը (զարգացումը), ըստ որում այս մասը տոնայնապես անկայուն է հաճախակի կատարվող *զարտուղումների* հետևանքով, և վերջապես *ռեպրիզա* (կրկնում) կոչվող երրորդ մասում կրկնվում է *էքսպոզիցիան*, սակայն տոնայնական նոր հարաբերակցությամբ, ըստ որում առավել տիպական է այդ երկու թեմաների շարադրումը գլխավոր տոնայնության մեջ: Երբեմն միջին մասն իրենից ներկայացնում է նոր, *միջադեպային* կոչվող թեմայի շարադրում և մշակում: Եվ ընդհակառակն, լինում են ս. ձ., որոնցում միջին մասը բացակայում է: Հաճախ ս. ձ. եզրափակվում է *կոդայով*, երբեմն ունենում է *նախանվագ:* Հայդնի և Մոցարտի ստեղծագործություններում հաս-

տատված այս դասական ս. ձ. գլխավոր և օժանդակ *պարտիաները* (առաջին և երկրորդ թեմա) մեղեդային առումով համընկնում էին, կամ քիչ էին տարբերվում միմյանցից և այդ տեսակետից իրար հակադրվել չէին կարող: Այդ նույնական թեմաները հակադրվում էին միմյանց միայն նրանով, որ շարադրվում էին տարբեր տոնայնություններով: Դասական ս. ձ. առավել մեծ զարգացման հասավ Բեթհովենի ստեղծագործություններում, որը բավականին ընդլայնեց և առավել նշանակալից դարձրեց մշակման մասը, հասցնելով դրամատիկ ուժեղ լարվածության և *կոդան* դարձնելով ստեղծագործությունը սինթեզող մաս: Ս. ձ. են գրվում գլխավորապես *սոնատների, սիմֆոնիաների, կոնցերտների, տրիոների, կվարտետների* և գործիքային այլ անսամբլների առաջին մասերը, որոնց տեմպը սովորաբար allegro-ն է, այստեղից էլ՝ ս. ձ. մեկ այլ անունը՝ *սոնատային allեգրո:* Հաճախ ս. ձ. են գրվում հիշատակված ժանրերի *ֆինալները*, երբեմն միջին մասերը, ինչպես նաև մի շարք մեկմասանի ստեղծագործություններ (նախերգանքներ, սիմֆոնիկ պոեմներ և այլն): Ս. ձ. մինչև օրս էլ մնում է երաժշտական ամենակատարյալ ձևերից մեկը: Տես՝ *սոնատային ցիկլիկ ձև:*

ՍՈՆԱՏԱՅԻՆ ՑԻԿԼ (ռուս. сонатный цикл) *սոնատային ցիկլիկ ձև* կազմող, մի քանի մասից բաղկացած երաժշտական ստեղծագործություն:

ՍՈՆԱՏԱՅԻՆ ՑԻԿԼԻԿ ՁԵՎ (ռուս. сонатная циклическая форма) բազմամաս երաժշտական ստեղծագործության առավել զարգացած և կատարյալ ձևը: Իրենից ներկայացնում է 4 կամ 3 (կարող է լինել 4-ից ավելի, հազվադեպ՝ 2) առանձին ինքնուրույն մասերից կազմված և միասնական գաղափարա-հուզական բովանդակությամբ միավորված այնպիսի ստեղծագործություն, որի գոնե մեկ մասը գրված է *սոնատային allեգրոյի* ձևով: Հիմնականում այդ ձևով է գրվում *դասական ս. ց. ձ. առաջին*՝ արագ մասը, որը սովորաբար ունենում է դրամատիկ, կոնֆլիկտային բնույթ: *Երկրորդ*՝ դանդաղ մասը, որն արտահայտում է գլխավորապես մարդու հույզերն ու խոհերը, նրա ներքնաշխարհը, մեծ մասամբ քնարական է, երգային, գրված է լինում պարզ կամ բարդ եռամաս *վարիացիոն* կամ *սոնատային allեգրոյի* ձևով (հազվադեպ՝ երկմասանի): *Երրորդ* մասը՝ *մենուետը* կամ *սկերցոն*, երբեմն՝ *վալսը*, մեծ մասամբ ունենում են շարժուն, աշխույժ բնույթ և գրված են լինում առավելապես բարդ եռամաս ձևով: *Չորրորդ*՝ նույնպես արագ մասը, որը կոչվում է *ֆինալ*, սովորաբար ունենում է հանդիսավոր, եզրափակիչ բնույթ, և զուրկ չէ պարային և երգային տարրերից: Եռամաս ս. ց. ձ. բացակայում է երրորդ՝ պարային մասը, որի բնույթը հաճախ շարադրվում է *ֆինալում* (օր. Խաչատրյանի ջութակի կոնցերտի երրորդ մասը): Վերը նշված ս. ց. ձ. մասերն ու նրանց հաջորդականությունը կարող են փոփոխվել, կարող են ներմուծվել բոլորովին նոր մասեր: Եթե ս. ց. ձ. ունեցող ստեղծագործությունը գրված է մեկ կամ երկու նվագարանի (գործիքի) համար, կոչվում է *սոնատ*, երեք նվագարանի համար՝ *տրիո*, չորսի՝ *կվարտետ*, հինգի՝ *կվինտետ*, վեցի՝ *սեքստետ*, յոթի՝ սեպտետ, ութի՝ *օկտետ*, իննի՝ *նոնետ*, նվագախմբի համար՝ *սիմֆոնիա:*

ՍՈՆԱՏԻՆԱ (իտ. sonatina, sonata-ի փոքրացուցիչը) *փոքր սոնատ*, գրվում է ավելի պարզ ու սեղմ ձևով (մշակման սեղմ մասով կամ առանց դրա), կատարման տեսակետից դյուրին է, հիմնականում օգտագործվում է ուսումնական նպատակներով (Կլեմենտիի կամ Կուլաուի ս.), սակայն կան ս., որոնք նախատեսված են համերգային կատարման համար (Ռավել, Խաչատրյան, Կաբալևսկի, Մանսուրյան և այլք):

ՍՈՊՐԱՆԻՍՏՆԵՐ (ռուս. сопранисты) տես՝ *ամորձատ երգիչներ:*

ՍՈՊՐԱՆՈ (իտ. soprano, sopra-ից՝ վերևում, վեր) 1) կանացի ամենաբարձր երգչաձայնը, տարատեսակներն են՝ *կոլորատուրային և լիրիկո դրամատիկ*, 2) մանկական ամենաբարձր երգչաձայնը, ըստ որում տղաներինը կոչվում է *դիսկանտ*, 3) *ամորձատ երգիչների* ձայները, որոնք կոչվում էին *սոպրանիստներ*, 4) կանանց կամ խառը երգչախմբի ամենաբարձր *պարտիան*, 5) *հարմոնիան* ուսումնասիրելիս քառաձայնի առաջին (ամենավերին) ձայնը:

ՍՈՊՐԱՆՈՅԻ ԲԱՆԱԼԻ, *դո բանալին* դրված *նոտակիրի* առաջին գծի վրա: Տես՝ *բանալիներ:*

ՍՈՍՏԵՆՈՒՏՈ (իտ. sostenuto՝ պահված, զսպված) 1) չափավոր-դանդաղ *տեմպ*, *անդանտեից* քիչ ավելի արագ, 2) նշում այն մասին, որ պիտի կատարել կենտրոնացած և ճշգրիտ ռիթմով, պահպանելով *տեմպը* (չափավոր-դանդաղ):

ՍՈՏԻԵ (ֆր. sautille, sautiller-ից՝ ցատկոտել, թռչկոտել) աղեղի գլխիկի մոտ կատարվող շատ թեթև, սրընթաց *սպիկատ:* Ս. *շտրիխը* կատարելիս աղեղի թռչկոտումը տեղի է ունենում մեխանիկորեն՝ աղեղի ճկունության և շարժման արագության հետևանքով, իսկ *սպիկատոյի* ժամանակ կատարողն ինքն է տնօրինում աղեղի թռչկոտումը:

ՍՈՐՏՍԻԿՈ (իսպ. zortzico) *պունկտիրային ռիթմով*, երբեմն *սինկոպաներով*, իսպանական ինագույն պար, չափը՝ 5/8: Ս. երաժշտական ձևն օգտագործված է XVIII դ.

Լ. Բեթհովեն (9-րդ սիմֆոնիայից)



տոնադիլլաներում, Ալբենիսի դաշնամուրային ստեղծագործություններում, Սարասատեի ջութակի *պիեսներում* կան բազմաթիվ ս.:

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵԱԼԻԶՄ (ռուս. социалистический реализм) խորհրդային գրականության և արվեստի ստեղծագործական հիմնական մեթոդը, որն ստեղծագործողից պահանջում է հեղափոխական զարգացման մեջ գտնվող իրականության ճշմարտացի և պատմականորեն կոնկրետ պատկերումը: Ս. ռ. ներկայացուցիչներն իրենց ստեղծագործություններում ղեկավարվում են կուսակցականության, գաղափարականության և ժողովրդականության սկզբունքներով: Նրանց խնդիրն է կարողանալ տեսնել և արտացոլել կյանքի նոր, առաջավոր երևույթները, մարդկանց նոր փոխհարաբերությունները, հասարակության առաջընթացը, ս. ռ. նոր պայմաններում շարունակում է ռեալիզմի ավանդույթները, հանդիսանալով ռեալիզմի նոր, առավել բարձր փուլը, ավելի լայն ընդգրկելով իրականությունը՝ բազմակողմանի դրսևորումներով, անհատի և հասարակության բազմազան կապերը, զարգացման տենդենցները: Ս. ռ. արվեստը հնարավորություն է տալիս օգտագործել ազգային ձևերի, գեղարվեստական ոճերի, ժանրերի անսպառ բազմազանություն, հնարավորություններ ընձեռում անհատականություն դրսևորելու համար: Ս. ռ. զարգանում է նաև սոցիալիզմի ուղին բռնած և կապիտալիստական մի շարք երկրների արվեստագետների ստեղծագործության մեջ:

ՍՊԻԿԱՏՈ (իտ. spiccato, spiccare-ից՝ պոկել, անջատել) աղեղնային նվագարանով (գործիքով) կատարվող այնպիսի *ստակատո*, որի ժամանակ յուրաքանչյուր նոտայի համար աղեղը վեր է բարձրանում և ընկնում լարերի վրա (թռչող շտրիխ), նշանակվում է ինչպես *ստակատոն*՝ կետերով, միայն առանց *լիգայի*: Տես՝ *սոտիյե*:

ՍՊԻՆԵՏ (իտ. spinetta) *էպինետ*, քառանկյունի, հազվադեպ՝ եռանկյունի ձև ունեցող փոքրիկ *կլավեսին*:



ՍՊԻՐԻՏՈՒԵԼՍ (անգլ. spirituals, spirit՝ հոգևոր) նեգրական հոգևոր երգ, նեգրական երաժշտական բանահյուսության հիմնական ժանրերից, ծագել է ստրկատիրական շրջանում, բովանդակությունը վերցված է ավետարանից, սակայն ս. սյուժեն և կերպարները ֆոլկլորային վերամշակման ենթարկվելով մոտեցվել են նեգրերի կյանքի և կենցաղի պայմաններին: Ս. հագեցած են քնարականությամբ, դրամատիկ, հաճախ ողբերգական շունչ ունեն, ս. ոճն իր ազդեցությունն է ունեցել նեգրական ֆոլկլորի ժանրերի, այդ թվում բողոքի երգերի, ինչպես նաև ջազային արվեստի, արդիական երգի մի քանի տարատեսակների վրա:

ՍՏԱԲԱՏ ՄԱՏԵՐ (լատ. Stabat mater) կաթոլիկ եկեղեցում մինչ այժմ պահպանված մի քանի *սեկվենցիաներից* (2-րդ իմաստով) այն, որն սկսվում է «Stabat mater dolorosa» («Կանգնած էր տիրամայրը սգավոր») բառերով: Տեքստը, որը միջնադարում մեծ տարածում ուներ կաթոլիկների մեջ, XIV դ. եղանակավորվում է: Դարերի ընթացքում բազմաթիվ կոմպոզիտորներ այդ տեքստով խմբերգային բազմաթիվ ստեղծագործություններ են գրել, որոնցից առավելապես հայտնի են Դեպրեի, Պալեստրինայի և Աստորգայի գրածները: Հետագայում Ս. մ. մեջ մտցվեց նաև *մեներգ*, և իր ձևով դա մոտեցավ *կանտատին*: Այս ձևով գրվածներից առավել հայտնի են Պերգոլեզիի, Հայդնի, Շուբերտի, Ռոսինիի, Վերդիի, Դվորժակի և այլոց Ս. մ.:

ՍՏԱԿԱՏՈ (իտ. staccato՝ պոկված, անջատված) հնչյունների ընդհատ-ընդհատ կատարում, որի հետևանքով նրանց միջև ստացվում են կարճ *պաուզաներ*: Ս. կատարվող հնչյունները տևում են շատ ավելի կարճ (մոտ երկու անգամ), քան գրված են և հնչում են կտրուկ, հատիկ-հատիկ: Ս. հանդիսանում է կատարման հիմնական ձևերից մեկը, հակադրվում է *լեգատոյին*: *Նշանակվում է կետերով, որոնք դրվում են նոտաներից քիչ վեր կամ վար (գլխիկների մոտ), ինչպես նաև* staccato բառով: Աղեղնային նվագարաններով, աղեղի մեկ շարժման ընթացքում (վեր կամ վար) կատարվում են մի քանի հնչյուններ, ըստ որում աղեղը միշտ կպած է լինում լարին, իսկ շարժումը կատարվում է հրումներով: Նշանակվում է *լիգավորված կետերով*: Ս. տարատեսակներն են *մարտելեն կամ մարտելատոն, սալտանդոն, ռիկոշե-սալտանդոն, սպիկատո, սոտիյեն*:




ՍՏԵՂՆ (լատ. clavis՝ բանալի, ռուս. клавиша, клавиш) մի շարք նվագարանների (գործիքների) վրա հարմարեցված լծակներից յուրաքանչյուրը, որոնց սեղմելով կամ հարվածելով նվագում են: Ս. որոշ հաջորդականությամբ դասավորված սպիտակ և սև գույնի փայտաշերտիկներ են (դաշնամուր) կամ կոճակի ձև ունեն (բայան): Տես՝ *ստեղնաշար, ստեղնային նվագարաններ*:

ՍՏԵՂՆԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ռուս. клавишные инст-

рументы) նվագարաններ (գործիքներ), որոնք հնչեցվում են *ստեղների* օգնությամբ, լինում են *լարային* (դաշնամուր, կլավիկորդ և այլն), *փողային* (երգեհոն), *լեզվակային* (ֆիսհարմոն, բայան, ակորդեոն և այլն) և *հարվածային* (զանգակներ, չելեստա): Տես՝ *ստեղն, ստեղնաշար:*

ՍՏԵՂՆԱՇԱՐ (գերմ. Klaviatur, ռուս. клавиатура) մի շարք նվագարանների (գործիքների) վրա որոշակի հերթականությամբ դասավորված *ստեղներ* կոչվող լծակների շարքը, որոնց օգնությամբ նրանց հետևի ծայրերում գտնվող մուրճիկները հարվածում են լարերին (դաշնամուր մետաղե կամ ապակյա թիթեղիկներին (զանգակներ,



չելեստա), իսկ փքսավոր նվագարանների ստեղների միջոցով բացում են օդի մուտքը դեպի համապատասխան հնչափողը կամ լեզվակը (երգեհոն, բայան, ակորդեոն): Առաջին անգամ կիրառվել է XII դ. երգեհոնների մեջ, որոնք բացի ձեռքի ստեղնաշարերից *(մանուալ)*, ունեին նաև ոտքի ստեղնաշար՝ *ոտնակ (պեդալ):* Տես՝ *ստեղն, ստեղնային նվագարաններ:*

ՍՏՐԵՏՏԱ (իտ. stretta՝ սեղմում), *ստրետտո* 1) *ֆուգայում թեմայի* (առաջնորդ և ուղեկից) կանոնաձև անցկացումը, որի ժամանակ յուրաքանչյուր հաջորդ ձայնում *թեման* մուտք է գործում ավելի շուտ, քան նախորդ ձայնում ավարտվում է նրա շարադրումը: Ստացվում է, որ *թեման* դառնում է ինքն իր *կոնտրապունկտը*, և *թեմայի*

Մ. Գլինկա, «Իվան Սուսանին»




առանձին հատվածներ տարբեր ձայներում հնչում են միաժամանակ: Ս. ավելի լարված, ավելի դինամիկ է դարձնում երաժշտության ընթացքը, 2) երաժշտական ստեղծագործության կամ նրա որևէ եզրափակիչ հատվածը, որը կատարվում է արագացված, սրընթաց տեմպով:

ՍՏՐԵՏՏԱՅԻՆ ՖՈՒԳԱ (ռուս. стреттная фуга) *ֆուգա*, որում պատասխանը հանդես է գալիս ավելի շուտ, քան *թեմայի* շարադրման ավարտումը, այսինքն՝ *ստրետտային ձևով:* Տես՝ *ստրետտա* (1-ին իմաստով):

ՍՏՐԵՏՏՈ (իտ. stretto՝ նեղ, անձուկ) 1) *տեմպի արագացում*, 2) տես՝ *ստրետտա:*

ՍՐՆԻԳ, հայկական ժողովրդական փողային նվագարան, որն իրենից ներկայացնում է եղեգնից, փայտից կամ մետաղից պատրաստված գլանաձև փող, որի երկու ծայրերն էլ բաց են: Կան տարբեր երկարության ս. (380—650 մմ), ունեն 7 կամ 8 նվագանցք, որոնցից մեկը՝ տա-



կից, *ձայնաշարն* է՝ առաջին *օկտավայի լյա*-ից սկսվող *դորիական լադի դիատոնիկ գամման*, ավելացրած *մեծ նոնա:* Փչում են վերևի ծայրի անցքի կողքից, որոշ թեքությամբ, ըստ որում հնչեցման տեխնիկան բավական դժվարին է: Տես՝ *բլուլ:*

ՍՑԵՆԱՐ (իտ. scenario) 1) օպերային սյուժեի դրամատուրգիական պլանը, 2) բալետի սյուժեի մանրամասն շարադրումը պարերի և մնջախաղի տեսիլների նկարագրությամբ:

ՍՈՒԲԴՈՄԻՆԱՆՏ (լատ. subdominanta՝ ներքևի դոմինանտա) 1) *մաժոր* և *մինոր լադերի* գլխավոր աստիճաններից մեկի՝ չորրորդ աստիճանի անվանումը, նշանակվում է լատիներեն S տառով կամ հռոմեական IV թվանշանով (տես՝ *լադի աստիճաններ),* 2) երեք հիմնական ֆունկցիաներից մեկը, ս. *ֆունկցիային* են պատկանում նաև II և VI աստիճանների վրա կառուցված *ակորդները:* Տես՝ *հարմոնիկ ֆունկցիաներ:*

ՍՈՒԲԴՈՄԻՆԱՆՏԱՅԻՆ ԱԼՏԵՐԱՑՎԱԾ ԱԿՈՐԴՆԵՐ ՄԱԺՈՐՈՒՄ (ռուս. субдоминантовые альтерированные аккорды в мажоре) *մաժոր լադի* երկրորդ աստիճանի իջեցումն ու բարձրացումը և չորրորդ աստիճանի բարձրացումը տալիս են *սուբդոմինանտային ալտերացված ակորդների* շարք՝ իրենց շրջվածքներով (թե *բնական*, թե *հարմոնիկ մաժորում*), որը այլ կերպ կոչվում է *մե-*



ծացրած սեքստայով ակորդ: Հարմոնիկ մաժորում իջեցված երկրորդ աստիճանի *սեքստակորդը* կոչվում է *նեապոլյան սեքստակորդ, եռահնչյունը՝ նեապոլյան եռահնչյուն,* իսկ *սեպտակորդը՝ նեապոլյան սեպտակորդ:* Տես՝ *լադային ալտերացիա, ալտերացված ակորդներ, սուբդոմինանտային ալտերացված ակորդներ մինորում:*

ՍՈՒԲԴՈՄԻՆԱՆՏԱՅԻՆ ԱԼՏԵՐԱՑՎԱԾ ԱԿՈՐԴՆԵՐ ՄԻՆՈՐՈՒՄ (ռուս. субдоминантовые альтерированные аккорды в миноре) *մինոր լադի* երկրորդ աստիճանի իջեցումը և չորրորդ աստիճանի իջեցումն ու բարձրացումը տալիս են *սուբդոմինանտային ալտերացված ակորդների* շարք՝ իրենց շրջվածքներով, որն այլ կերպ



կոչվում է *մեծացրած սեքստալով ակորդ: Իջեցված երկրորդ աստիճանի սեքստակորդը* կոչվում է *նեապոլյան սեքստակորդ, եռահնչյունը՝ նեապոլյան եռահնչյուն, իսկ սեպտակորդը՝ նեապոլյան սեպտակորդ:* Օգտագործվում է նաև *մինոր նեապոլյան եռահնչյուն (կան այդ ակորդի կիրառման եզակի դեպքեր և մաժորում):*

ՍՈՒԲԴՈՄԻՆԱՆՏԱՅԻՆ ՓՈՔՐԱՑՐԱԾ ՍԵՊՏԱԿՈՐԴ (ռուս. субдоминантовый уменьшенный септаккорд) *փոքրացրած սեպտակորդի* կառուցվածք ունեցող *սուբդոմինանտային ալտերացված ակորդներ մաժորում* և *մելոդիկ մինորում*, նշանակվում է *մաժորում՝* II_7^{+3}, *մինորում՝* $IV_7^{+1(\flat)}$ (ըստ որում այդ երկու *ակորդները էնհարմոնիկ* հավասար են): Տես՝ *սուբդոմինանտային ալտերացված ակորդներ մինորում, սուբդոմինանտային ալտերացված ակորդներ մաժորում, դոմինանտային փոքրացրած սեպտակորդ:*



ՍՈՒԲԴՈՄԻՆԱՆՏԱՅԻՆ ՖՈՒՆԿՑԻԱ (ռուս. субдоминантовая функция) տես՝ *հարմոնիկ ֆունկցիաներ:*

ՍՈՒԲԿՈՆՏՐՕԿՏԱՎԱ (ռուս. субконтроктава) տես՝ *օկտավա* (2-րդ իմաստով):

ՍՈՒԲՐԵՏՈՒՐ (Ֆր. soubreto-ից՝ ճարպիկ, ժիր, խորամանկ) տիրուհուն հավատարիմ աղախին կատակերգություններում, միաժամանակ այդպես է կոչվում նման դերեր խաղացող դերասանուհին, ս. վառ օրինակներից մեկը Ոզինան է Ռոսինիի «Սևիլյան սափրիչ» օպերայում:

ՍՈՒԼԻՉ (ռուս. свисток) թ ն ե թ ա կ ի վերևի մասին նման գործիք, որը փչելիս սուլում է:

ՍՈՒԼՈՂ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ԳՈՐԾԻՔՆԵՐ) (ռուս. свистящие (музыкальные) инструменты). տես՝ փ ո ղ ա յ ի ն ն վ ա գ ա ր ա ն ն ե ր:

ՍՈՒՐԴԻՆԱ (իտ. sordina, sordo-ից՝ խուլ) տես՝ մ ե ղ մ ո ց:

ՍՖՈՐՋԱՆԴՈ, ՍՖՈՐՋԱՏՈ (իտ. sforzando, sforzato, sforzare-ից՝ ջանալ, ճիգ գործադրել, ուժերը լարել) մեկ հնչյունի կամ ա կ ո ր դ ի հանկարծակի ուժգնացում (ուժեղ շեշտում), որից հետո շարունակվում է մինչ այդ եղած ուժգնությամբ, կրճատ նշանակվում է sfz կամ sf, կամ fz: Տես՝ ու ժ ա բ ա ն ու թ յ ու ն:

Վ

ՎԱԳԱՆՏՆԵՐ (լատ. vagantes՝ թափառողներ, թափառաշրջիկներ) Արևմտյան Եվրոպայում (գլխավորապես՝ Ֆրանսիայում) միջնադարում (XI — XIV դդ.) այդպես էին կոչվում թափառաշրջիկ, փախստական կղերականները և թերուս ուսանողները, որոնք լատիներեն հորինում ու երգում, տարբեր ներկայացումներ էին տալիս, ծաղրելով եկեղեցականներին, գովերգելով երկրային կյանքի ուրախությունները, սերը, գինին: Եկեղեցին ըստ ամենայնի հետապնդում էր նրանց, XIII դ. վ. մասամբ ձուլվեցին *հիստրիոնների* հետ:

ՎԱԹՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴԱԿԱՆ ՊԱՈՒԶԱ (ռուս. шестьдесятчетвертая пауза) տես՝ *պաուզա:*

ՎԱԹՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴԱԿԱՆ ՆՈՏԱ (ռուս. шестьдесятчетвертая нота) տես՝ *տևողությունների զույգ բաժանում:*

ՎԱԼՍ (գերմ. walzer-ից՝ պտտվել, Ֆր. valse, ռուս. вальс) ամենատարածված պարահանդեսային զույգ պար, 3/4 չափով: Կան դանդաղ, չափավոր արագ և արագ տեմպի վ.: Ձարգանալով գերմանական, ավստրիական և չեխական ժողովրդական պարերից (տես՝ *լենդլեր*), վ. վերջնականորեն ձևավորվեց XVIII դ. երկրորդ կեսին, իսկ XIX դ. տարածվեց ամբողջ Եվրոպայում: Մեծ հռչակ են վայելում *ցիկլիկ ձևի վիեննական* վալսերը («Walzer-Kette»՝ «վալսերի շղթա»), որոնք ստեղծել է կոմպոզիտոր Լանները և զարգացրել են հայր և որդի Շտրաուսները: Վ. ձևը բազմիցս օգտագործվել և օգտագործվում է օպերաներում, բալետներում, օպերետներում, կի-

Ֆ. Շոպեն. վալս «Վիեննական անտառի հեքիաթները»



նոնկարներում և թատերական երաժշտության մեջ, բազմաթիվ վ. են հորինված համերգային կատարման համար՝ դրանք դաշնամուրի և առանձին այլ նվագարանների, գործիքային անսամբլների և սիմֆոնիկ նվագախմբի համար գրված ստեղծագործություններ են, մի շարք սիմֆոնիաների առանձին մասեր:

ՎԱԼՍ-ԲՈՍՏՈՆ (ռուս. вальс-бостон) տես՝ *բոստոն:*

ՎԱԼՍ-ՄԱԶՈՒՐԿԱ (ռուս. вальс-мазурка) XIX դ. Ֆրանսիայում ստեղծված պարահանդեսային պար, 3/4 կամ 3/8 չափով, *մազուրկայի տեմպով: Մեծ տարածում գտավ*



եվրոպական մնացած երկրներում, հատկապես մեծ հաջողություն էր վայելում վ.-մ. առաական տարատեսակը, որի յուրաքանչյուր չորս տակտը պարում էին փոփոխակի՝ մեկ *մազուրկայի,* մեկ *վալսի* շարժումներով:

ՎԱԼՏՈՐՆ (գերմ. Waldhorn՝ բառացի-անտառային եղջրափող) տես՝ *գալարափող:*

ՎԱԿԽԱՆԱԼԻԱ (լատ. Bacchanalia) Հին Հունաստանում այդպես էին կոչում գինու և զվարճության աստծու՝ Բաքոսի պատվին կատարվող տոներն ու խրախճանքները: Հետագայում և մինչև օրս այդպես են կոչվում անզուսպ և աղմկալից ուրախությունը, ցոփությունը, զեղխությունը, հարբեցումը: Օպերայում, բալետում՝ խորեոգրաֆիկ տեսարան, պատկեր կամ պար, որն իրենից ներկայացնում է անզուսպ խրախճանք՝ էրոտիկ տարրերով, և ունի կրքոտ, կայծկլտուն, շատ դինամիկ բնույթ, արագ տեմպ, տարբեր չափեր և ազատ ձև: Վ. ձևն իրենց բալետներում և օպերաներում օգտագործել են Քերուբինին, Վագները, Գունոն, Սեն-Սանսը, Խաչատրյանը:

ՎԱՌ ՀԱՅՆ, տես՝ *երրորդ կողմ:*

ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԱՐՏԻՍՏ (ռուս. заслуженный артист) միութենական և ինքնավար հանրապետությունների Գերագույն Խորհուրդների կողմից արվեստի աշխատողներին շնորհվող պատվավոր կոչում (հանրապետության թատրոնի, կինոյի, էստրադայի, երաժշտական-կատարողական կոլեկտիվների, կրկեսի ռեժիսորներին և արտիստներին, որոնք դրսևորել են կատարողական բարձր վարպետություն և իրենց գործունեությամբ նպաստել արվեստի զարգացմանը):

ՎԱՐԴԱՋԱՐԴ (ֆր. rosette՝ բառացի-վարդ, ռուս. розетка) լարային նվագարանների (գործիքների) *ձայնադար-*



ձային անցքերի մոտ գտնվող զարդ, որը միաժամանակ պաշտպանում է անցքի եզրերը մեխանիկական վնասվածքներից):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ (ռուս. упражнение) որևէ նվագարանի (գործիքի) համար գրված հատուկ երաժշտություն, նախատեսված կատարողական տեխնիկան զարգացնելու համար: Տես՝ *վոկալիզ:*

ՎԱՐԸՆԹԱՑ ՉԳՏՈՂ ՏՈՆ (ռուս. нисходящий вводный тон) նույնն է՝ *վերին ձգտող տոն:*

ՎԱՐԻԱՑԻԱՆԵՐ (լատ. variatio-ից՝ փոփոխում, ռուս. вариации) *վարիացիոն ձև,* երաժշտական ձև, որը բաղկացած է ամբողջական երաժշտական կերպար արտահայտող թեմայից ու նրա մի շարք ձևափոխված կրկնություններից, որոնք և կոչվում են *վարիացիաներ* (տարբերակումներ): Դասական վ. թեմաները ունեն մեծ մասամբ երկմասանի ձև, հազվադեպ՝ պարբերություն կամ եռամաս ձև: Հաճախ վ. թեման վերցնում են ժողովրդական կամ մեկ այլ կոմպոզիտորի գրած երաժշտությունից (օր. Ռախմանինովի «Վարիացիաներ Շոպենի թեմայով» դաշնամուրային ստեղծագործությունը): Վ. ձևով գրված բազմաթիվ ստեղծագործություններ կոչվում են *թեմա՝ վարիացիաներով:* Հաճախ վ. անվան մեջ մըտնում է դրանց քանակը, երբեմն էլ բնույթը (օր. «32 վարիացիաներ», «լուրջ վարիացիաներ», «փայլուն վարիացիաներ» և այլն): Վ. կոչվող ստեղծագործություններում սովորաբար թեման նշանակվում է *«թեմա»* բառով, իսկ հաջորդող վ. համարակալվում են: Բացի ինքնուրույն ստեղծագործություններից, վ. ձևով գրվում են նաև *ցիկլային* (բազմամաս) ստեղծագործությունների առանձին մասեր (սիմֆոնիա, կոնցերտ, սյուիտ, սոնատ, տրիո, կվարտետ և այլն), այդ մասերի ա-

ռանձին հատվածներ, օպերային համարներ և այլն: Տարբերում են երկու տեսակի վ.՝ *խիստ* և *ազատ: Խիստ վ.* յուրաքանչյուր վ. իրենից ներկայացնում է թեմայի նոր տարբերակումը՝ նոր *ֆակտուրայով, հարմոնիկ* հիմքի տարբեր ձևավորումներով *(ֆիգուրացումներով)*, մելոդիկ գծի և ռիթմիկ գծապատկերի բազմաթիվ ձևափոխումներով և այլն: Չնայած դրան, խիստ վ. պահպանվում են թեմայի կառուցվածքը, տևողությունը, *տեմպը, մետրը*, տոնայնությունը, այդ իսկ պատճառով թեման միշտ այս կամ այն չափով մնում է ճանաչելի: Ազատ վ. թեման կաշկանդված չէ որևէ սահմանափակումներով. կարող է փոփոխվել ամեն ինչ՝ *թեմայի* տևողությունը, *տեմպը, մետրը*, տոնայնությունը, կառուցվածքը: Վ. *թեման* կարող է հասնել անճանաչելիության աստիճանի և ձեռք բերել ժանրերի բնորոշ գծեր *(սկերցո, վալս, մազուրկա, քայլերգ, նոկտյուրն* և այլն), այդպիսով դառնալով ինքնուրույն ստեղծագործությունների շարք: Ազատ վ. կարծես բացահայտվում են տարբեր երաժշտական կերպարներ, որոնցից յուրաքանչյուրն իր վառ արտահայտչականությամբ հակադրվում է մնացածներին: Ազատ վ. բնորոշ են ռոմանտիկ կոմպոզիտորներին, թեև սովորաբար ազատ վ. զուգակցվում են *խիստ* և *ազատ* ձևերը, ձգտելով դրանով հասնել *վարիացիոն ցիկլի* միասնության և հարուստ ու բազմազան արտահայտչականության: Լինում են նաև *կրկնակի վ.*, որոնցում հաջորդաբար տարբերակվում են երկու թեմաներ: Վ. ձևը, ինչպես և նրա հիմքում ընկած վարիացիոն մշակման սկզբունքն իր խոր արմատներն ունի ժողովրդական երաժշտության մեջ: Տես՝ *պոլիֆոնիկ վարիացիաներ:*

ՎԱՐԻԱՑԻՈՆ ՁԵՎ (ռուս. вариационная форма) տես՝ *վարիացիաներ:*

ՎԱՐԻՆ ԴՈՄԻՆԱՆՏ (ռուս. нижняя доминанта) նույնն է՝ *սուբդոմինանտա:*

ՎԱՐԻՆ ՁԱՅՆ (ռուս. нижний голос) *ցածր ձայն*, 1) բազմաձայն երաժշտական ստեղծագործության ամենացածր ձայնը, 2) *հարմոնիայի* (ներդաշնակագիտություն) դասընթացն ուսումնասիրելիս, քառաձայնում այդպես է կոչվում *բասը:*

ՎԱՐԻՆ ՄԵԴԻԱՆՏ (ռուս. нижняя медианта) *մաժոր* և *մինոր լադերի վեցերորդ աստիճանը, վ. մ. վրա կառուցված ակորդն* ունի *փոփոխական ֆունկցիա* (T — S), նայած ակորդային շրջապատմանը: Տես՝ *մեդիանտա, լադի աստիճանների անուններ, ընդհատված կադանս:*

ՎԱՐԻՆ ՏԵՏՐԱԽՈՐԴ (ռուս. нижний тетрахорд) տես՝ *տետրախորդ:*


ՎԱՐՁԱԿ, հին Հայաստանում կին-գուսան, որը խնջույքներում և հասարակական վայրերում երգում, նվագում, պարում, խեղկատակություն էր անում, կամ թատրոնում հանդես գալիս որպես դերասանուհի:

ՎԱՐՅԵՏԵ (ֆր. variété՝ բազմազանություն, խառնուրդ) թեթև ժանրի թատրոն, որի ծրագրում միավորվում են փոքր ձևի թատերական արվեստը էստրադային այլ համարների հետ (երգ, նվագ, պար, ասմունք, կրկեսային համարներ և այլն):

ՎԵ, *հայկական ձայնագրության հիմնական ձայնաշարի (դո* նոտայով սկսվող *միքսոլիդիական լադ)* երրորդ հնչյունը, լրիվ անունն է՝ *վերնախաղ:*

ՎԵՆԳԵՐՎԱ, տես՝ *չարդաշ:*

ՎԵՆՏԻԼ (գերմ. Ventil, լատ. ventus-ից՝ քամի) մեխանիկական հարմարանք, որով ակնթարթորեն փոխում են մի շարք պղնձյա փողային նվագարանների (գործիքների) փողանցքների երկարությունը (ուրեմն և լարքը) և որը հնարավոր է դարձնում հնչեցնել նվագարանի ձայնածավալի *խրոմատիկ ձայնաշարը:* Վ. լինում



են երկու տեսակ. ա) մխոցի երկայնակի շարժումով՝ *պոմպային վ.*, կոչվում է նաև *պիստոն*, բ) պտտվող մխոցով *գլանաձև վ.:* Այդ նվագարանները սովորաբար երեք վենտիլանոց են: Միաժամանակ երկու և ավելի վ. տարբեր զուգակցումները ձայնը կարող են իջեցնել մինչև հինգ ու կես տոն: Կան վ., որոնցով ձայնը բարձրացնում են: Որոշ նվագարաններ ունեն չորս և ավելի վ.: Պոմպային վ. հնարված է 1790 թ., գլանաձևը՝ 1813 թ.: Տես՝ *կոռն, բնական նվագարաններ, կվարտվենտիլ:*

ՎԵՐԱԴԱՇՆԱՎՈՒՄ, տես՝ *արանժեվորում:*

ՎԵՐԱՄՇԱՎՈՒՄ (ռուս. транскрипция) *նվագադարձում*, տես՝ *տրանսկրիպցիա:*

ՎԵՐԱԳՈՐԾԻՔԱՎՈՐՈՒՄ (ռուս. переинструментовка) 1) վաղ շրջանի կոմպոզիտորների ստեղծագործությունների հարմարեցումը ժամանակակից նվագախմբով կատարելու համար, հանելով այդ ստեղծագործությունների *պարտիտուրներից* գործածությունից ելած նվագարանները, 2) նվագախմբային ստեղծագործության հարմարեցումը այլ կազմի նվագախմբով կատարելու համար (օր. սիմֆոնիկ նվագախմբի համար գրված ստեղծագործությունը փողային նվագախմբով կատարելու համար):

ՎԵՐԵՎԻ ՁԱՅՆԵՐ (ռուս. верхние голоса) 1) բազմաձայն երաժշտության մեջ այն բոլոր ձայները, որոնք վեր են (բարձր են) ամենացածր ձայներից, 2) *հարմոնիայի (ներդաշնակության)* դասընթացն ուսումնասիրելիս այդպես են կոչվում *բասից* վեր գտնվող ձայները՝ *տենորը, ալտը, սոպրանոն:*

ՎԵՐԻԶՄ (իտ. vero-ից՝ իսկական, ճշմարտացի) նատուրալիզմի ազդեցության տակ առաջացած ուղղություն՝ իտալական գրականության մեջ և արվեստում: Վ. ամենամեծ հռչակ ձեռք բերեց Մասկանյիի, Լեոնկավալլոյի, Պուչչինիի օպերաներում: *Վերիստների* օպերաներին բնորոշ է ընդգծված հուզականությունը, դրամատիկ իրադարձությունների սրումը, քնարական բարձրակետերի առատությունը: Վ. նման հոսանքներ գոյություն ունեին Ֆրանսիայում, Գերմանիայում և այլ երկրներում:

ՎԵՐԻՆ ԶԳՏՈՂ ՏՈՆ (ռուս. верхний вводный тон) *մաժոր* և *մինոր լադերի* երկրորդ աստիճանը, սուր կերպով ձգտում է դեպի *տոնիկան*, միայն *կրկնակի հարմոնիկ մաժորի* վ. ձ. տ., որովհետև գտնվում է նրանից փոքր *սեկունդա* վեր: Վ. ձ. տ. վրա կառուցված *ակորդները* կատարում են *սուբդոմինանտային ֆունկցիա:* Տես՝ *ձգող տոն, լադի աստիճանների անուններ:*

ՎԵՐԻՆ ՄԵԴԻԱՆՏԱ (ռուս. верхняя медианта) նույնն է՝ *մեդիանտա:*

ՎԵՐԻՆ ՏԵՏՐԱԽՈՐԴ (ռուս. верхний тетрахорд) տես՝ *տետրախորդ:*

ՎԵՐՆԱԳԻՐ տես՝ *հայկական ձայնագրություն:*

ՎԵՐՆԱՄԱՍ (ռուս. хоры) դահլիճի կամ եկեղեցու վերևի մասում բաց պատշգամբ, սրահ, որտեղ սովորաբար տեղավորվում են երգեհոնը, երգիչները և երաժիշտները:

ՎԵՐՋԱԲԱՆ (հուն. epilogos՝ եզրափակում) թատերական պիեսի հիմնական գործողությունը լրացնող պատկեր, հազվադեպ հանդիպում է նաև օպերայում (օր. Գլինկայի «Իվան Սուսանին» օպերայում, որտեղ վերջաբանը *ապոթեոզի* բնույթ է կրում):

ՎԵՐՋՉԱՅՆ, տես՝ *չորրորդ կողմ:*

ՎԵՑՆՅԱԿ (գերմ. Sextett, լատ. sextus-ից՝ վեցերորդ) վեց կատարողներից (երաժիշտ կամ երգիչ) բաղկացած անսամբլ:

ՎԶԻԿ (ռուս. шейка) լարային և կսմիթային նվագարանների (գործիքների) մաս, որին սովորաբար սոսնձվում է *գրիֆը*, վ. կպցվում է գործիքի իրանին, կամ նրա հետ կազմում մեկ ամբողջություն:

ՎԻԲՐԱՑԻԱ (լատ. vibratio՝ թրթռում, տատանում) ձայնի այնպիսի տատանում, որի ժամանակ նրա բարձրությունը հազիվ նշմարելի, պարբերաբար փոփոխվում է, վ. ձայներին տալիս է յուրահատուկ գեղեցկություն և արտահայտչականություն:

ՎԻԲՐԱՖՈՆ (իտ. vibrafono) *քսիլոֆոնի* կամ *զանգակների* տիպի, որոշակի բարձրություն ունեցող հարվածային նվագարան (գործիք), մետաղյա թիթեղների երկշարք, որոնցից առաջինում *դիատոնիկ* հնչյուններն են, երկրորդում՝ *խրոմատիկ* (ինչպես դաշնամուրի սև և սպիտակ ստեղները): Թիթեղիկների տակից ուղղաձիգ կախված են համապատասխան մեծության (երկարություն և հաստություն) *ձայնադարձային* խողովակներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր, մեկ ընդհանուր սռնակին ամրացված կափարիչը: Սռնակը պտտվելիս կափարիչները մեկ փակում, մեկ բացում են խողովակների միջի մետաղյա թիթեղների տատանումներից առաջացած ձայնալիքների ելքը: Սռնակի ոչ այնքան արագ պտտվելու հետևանքով ձայնը հաջորդաբար ուժեղանում և թուլանում է և ստացվում է *դինամիկ վիբրացիա* (այստեղից էլ՝ անունը): Սռնակը պտտվում է էլեկտրական կամ զսպանակային շարժիչով, որը գործի է դրվում հատուկ ոտնակով կամ լծակով: Ունի նաև *խլարարային ոտնակ:* Ձայնածավալն է փոքր *օկտավայի ֆա*-ից մինչև երրորդ *օկտավայի ֆա*-ն, կամ առաջին *օկտավայի դո*-ից մինչև երրորդ *օկտավայի լյա*-ն ($f — f^3$ կամ $c^1 — a^3$), նոտագրվում է ջութակի բանալիով, ըստ իրական հնչողության (հազվադեպ՝ մեկ *օկտավա* վեր): Ստեղծվել է ԱՄՆ-ում, 1924 թ.:

ՎԻԼԱՆԵԼԼԱ (իտ. villanella՝ գյուղական երգ) XVI դ. և XVII դ. առաջին կեսի նեապոլյան բազմաձայն երգ, ուներ



աշխույժ բնույթ, քնարական, հումորիստական ցայտուն կերպարներ: Վ. սովորաբար կիրառվում էր եռաձայնությունը և ձայների զուգահեռ շարժումը:

ՎԻԼԼՈՏԱ (իտ. villotta) XV դ. վերջին և XVI — XVII դ. հյուսիսային Իտալիայում, հատկապես Վենետիկում, Պադուայում, Մանտուայում տարածված բազմաձայն (սովորաբար 4 ձայն) երգ պար:

ՎԻՆ, տես՝ *լյուտնյա:*

ՎԻՈԼԱ (իտ. viola) հինավուրց աղեղնային նվագարան, տես՝ *վիոլաներ:*

ՎԻՈԼԱ ԲԱՍՏԱՐԴԱ (իտ. viola bastarda) *վիոլայի* տարատեսակը, *տենորային գամբայից* քիչ ավելի մեծ (XVI—XVII դդ.), սովորաբար բացի վեց նվագալարերից, ուներ

Նաև մի շարք *ձայնադարձային* լարեր, կոչվում էր նաև *բասային վիոլ դամուր:*

ՎԻՈԼԱ ԴԱ ԲԱՐԴՈՆԵ (իտ. viola da bardone) *վիոլայի* տարատեսակը, ստեղծված XVII դ., իսկ XIX դ. սկզբում իր տեղը զիջեց ջութակի ընտանիքի նվագարաններին: Ուներ *տենորային վիոլա դա գամբայի* մեծությունը, բացի 6 կամ 7 նվագալարերից, ևս 7 — 20 *ձայնադարձային* լարերով: Տարբերվում էր *վիոլ դ'ամուրից* նրանով, որ սրա *ձայնադարձային լարերի վրա հնարավոր էր նվագել* pizzicato, ձախ ձեռքի բթամատով: Ձայնը մելամաղձոտ բնույթի էր, կարծես միացրած *վիոլա դա գամբայի* և *ցիտրայի* ձայները, կոչվում են նաև *բարիտոն:* Այս նվագարանի համար Հայդնը գրել է շուրջ 200 ստեղծագործություն:

ՎԻՈԼԱ ԴԱ ԳԱՄԲԱ, տես՝ *վիոլաներ:*


ՎԻՈԼԱ Դ'ԱՄՈՐԵ (իտ. viola d'amore՝ սիրո վիոլա) նույնն է՝ *վիոլ դ'ամուր:*

ՎԻՈԼԱ ԴԱ ՍՊԱԼԱ (իտ. viola da spalla) *վիոլայի* տարատեսակը, ունի ջութակի տեսք, սակայն քիչ ավելի մեծ է *ալտից,* հինգ լարանի է, օգտագործվում էր XVII — XVIII դդ. գլխավորապես որպես նվագակցող նվագարան, մեծ տարածում չգտավ:


ՎԻՈԼԱՉԱՐ (ռուս. виолист) *վիոլա* նվագող:

ՎԻՈԼԱՆԵՐ (իտ. եզակին՝ viola) ջութակի ընտանիքին նախորդող և նրա նախատիպը հանդիսացող տարբեր մեծության և ձայնածավալի աղեղնային նվագարանների մի ամբողջ ընտանիք, որը մեծ տարածում ուներ արևմտաեվրոպական երկրներում XV — XVII դդ. (որոշ տեղերում մինչև XIX դ. սկիզբը): Վ. առաջին հերթին պետք է նշել *վիոլա դա գամբան* (իտ. viola da gamba՝ ոտքի վիոլա), որի *սոպրանային (դիսկանտային), ալտային, տենորային* և *բասային* տարատեսակները մեծ տարածում ունեին ոչ միայն պրոֆեսիոնալ երաժիշտների շրջանում, այլև կենցաղում: Վ. կազմվում էին բազմապիսի անսամբլներ: Փոքր չափերի *վիոլա դա գամբաները* նվագելիս դնում էին ծնկներին, մեծերը՝ պահում ծնկների արանքում, ինչպես թավջութակը: Վերջինից տարբերվում են ավելի մեծ (լայն և խորը) *հընչարկղով,* որի վերևի մասը (ուսերը) հետզհետե նեղանում է, ավելի լայն *նվագակոթով (գրիֆով),* որի վրա կան *մատնաշեմեր (փարդաներ),* վերին *հնչերեսը* քիչ ուռուցիկ է, իսկ վարինը՝ գրեթե տափակ, գլխիկները խխունջաձևի փոխարեն քանդակագրվագ գլուխներ են (տղամարդու, կնոջ, առյուծի և այլն), *հենարանները* համարյա ուղիղ են, ինչ հնարավոր է դարձնում վերցնել *ակորդներ* նեղ դասավորությամբ և մի շարք այնպիսի *ինտերվալներ,* որոնք անհնար են թավջութակով: Ձայնը թույլ է, բայց քնքուշ և դուրեկան:

Վիոլա դա գամբաներն ունեն վեցական լար և հետևյալ լարքը.




Վիոլայի տարատեսակներից *վիոլ դ'ամուրը, վիոլա բաստարդան* և *վիոլա դա բարդոնեն,* բացի նվագալարերից, ունեն նաև *ձայնադարձային* լարեր: Կան վ., որոնք նվագելիս ջութակի պես հենում են ուսին (viola da braccio՝ *վիոլա դա բրաչչո՝* ձեռքի *վիոլա,* կամ viola da spalla՝ *վիոլա դա սպալլա՝* ուսի *վիոլա*), դրանք են *վիոլ դ'ամուրը, վիոլա դա սպալան, վիոլա պոմպոզան*



և *կվինտոնն* իր տարատեսակներով: Վերջին տասնամյակներում մեծ հետաքրքրություն է առաջացել հնագույն երաժշտության նկատմամբ, հետևապես և այն նվագարանների նկատմամբ, որոնց համար գրված են եղել այդ ստեղծագործությունները: Այդ իսկ պատճառով ներկայումս օգտագործվում են վ. մի քանի տարատեսակներ, որոնք վաղուց մոռացված էին:

ՎԻՈԼԱ ՊՈՄՊՈԶԱ (իտ. viola pomposa) Յ. Ս. Բախի նախաձեռնությամբ 1724 թ. պատրաստված *վիոլայի* տարատեսակը, որն իրենից ներկայացնում էր քիչ ավելի մեծ *վիոլա դա սպալա,* ընդհանուր երկարությունը՝ շուրջ 75 սմ, որից 45,5 սմ *հնչարկղի* երկարությունն է: Ունի *կվինտաներով* լարվող 5 լար, լարվածքն է՝ c-g-d^1-a^1-e^2 (փոքր *օկտավայի դո, սոլ,* առաջին *օկտավայի ռե, լա,* երկրորդ *օկտավայի մի*): Նվագելիս հենում են ուսին, ինչպես *ալտը:*

ՎԻՈԼ Դ'ԱՄՈՒՐ (ֆր. viole d'amour՝ սիրո վիոլա) *վիոլայի* տարատեսակը, ստեղծվել է XVII դ., ձայնասահմանը մոտավորապես համապատասխանում է *ալտին,* ունի 14 լար, որոնցից 7-ը նվագալարեր են, մնացածը՝ *ձայնադարձային:* Լարքն է՝ d-fis-a-d^1-fis^1-a^1-d^2 (փոքր *օկտավայի ռե, ֆա դիեզ, լա,* առաջին *օկտավայի ռե, ֆա դիեզ, լա,* երկրորդ *օկտավայի ռե*): Նվագելիս ջութակի պես հենում են ուսին, ձայնը փափուկ է, քնքուշ, դուրեկան: Բացառապես մենակատարային նվագարան էր, մինչև XIX դ. կեսը տարածված էր հատկապես երաժշտասեր-



ների շրջանում, հետագայում երբեմն օգտագործվում էր սիմֆոնիկ և օպերային նվագախմբերում, որպես մենակատարող նվագարան: Նոտագրվում է ջութակի բանալիով, ներկայումս հազվադեպ կիրառվում է մենակատարային համերգներում:


ՎԻՊԱՍԱՆ, հին Հայաստանում ժողովրդական պրոֆեսիոնալ զրուցասաց-երգիչ, որը երգում և պատմում էր առասպելներ, պատմական բնույթի ստեղծագործություններ:

ՎԻՎԱՉԵ (իտ. vivace՝ կենդանի, աշխույժ) պայծառ, շողշողուն բնույթի շատ արագ տեմպ (*ալլեգրոյի* և *պրեստոյի* միջինը):

ՎԻՎԱՉԻՍՍԻՄՈ (իտ. vivacissimo, vivace-ի գերադրական աստիճանը) չափազանց արագ *տեմպ:*

ՎԻՎՈ (իտ. vivo՝ կենդանի, աշխույժ) նույնն է՝ *վիվաչե:*

ՎԻՐՋԻՆԵԼ (անգլ. virginal) *վիրգինալ, վյորջինել,* քառանկյունի փոքր *կլավեսինի* անգլիական տարատեսակի



անվանումը, ուներ մեղմ, քնքուշ ձայն, օգտագործվում էր գլխավորապես ընտանեկան հավաքույթներին նվագելիս:

ՎԻՐՏՈՒՈԶ (իտ. virtuoso՝ քաջասիրտ, արի, զորավոր) իր արվեստին կատարելապես տիրապետող երաժիշտ կատարող, որն ազատորեն, դյուրությամբ և անթերի կատարում է տվյալ նվագարանի կամ երգչաձայնի համար գրված ստեղծագործությունները, անկախ տեխնիկական դժվարություններից:


ՎԻՐՏՈՒՈԶԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. виртуозная музыка) տեխնիկական դժվարություններով լի երաժշտություն, որի կատարումը պահանջում է վիրտուոզի վարպետություն, այնպիսի երաժշտություն, որն ստեղծված է կատարողի տեխնիկական վարպետությունը ցուցադրելու նպատակով: Նման երաժշտության մեջ տեխնիկական էֆեկտներն ու արտաքին փայլը զուգակցվում են գաղափարա-հուզական խորը բովանդակության հետ: Վ. ե. ժանրին են պատկանում *կոնցերտը, էտյուդը, կապրիսը, ֆանտազիան, պարաֆրազը, կոլորատուրային արիան* և այլն:

ՎԻՈՒԵԼԱ (իսպ. viuela) իսպանական կսմիթային նվագարան, *կիթառի* տարատեսակը, սովորաբար ունենում է 6 լար, որոնք լարվում են *վիոլայի* նման: Վ. առավել տարածման շրջանը XVI և XVIII դարերն էին:

ՎՈԴԵՎԻԼ (ֆր. voudeville) թեթև կոմեդիայի տեսակ, որը կատարվում է երաժշտության նվագակցությամբ, XVIII դ. երկրորդ կեսին դարձավ պրոֆեսիոնալ թատրոնի ժանր: Ռուսաստանում վ. երևան եկավ XIX դ. երկրորդ կեսին, հետզհետե իր դերը զիջելով ռեալիստական կոմեդիային և օպերետին:

ՎՈԼԻՆԿԱ (ռուս. волынка) տես՝ *պարկապզուկ:*

ՎՈԼՏԱ (իտ. volta՝ անգամ, ռուս. вольта) նշան, որը հնարավոր է դարձնում օգտագործել կրկնության նշանը *(ռեպրիզան)* և այն դեպքերում, երբ երաժշտական ստեղծագործությունը կամ նրա հատվածը կրկնվում է տար-



բեր վերջավորություններով: Այն ստեղծագործությունը կամ հատվածը, որը պիտի կրկնվի, առաջին անգամ ավարտվում է 1-ին վ., իսկ կրկնելիս 1-ին վ. բաց է թողնվում և ավարտվում է 2-րդ վ.:

ՎՈԿԱԼ (ռուս. вокальный) երգչաձայնական, երգեցողական, ըստ կատարման միջոցի երաժշտությունը բաժանվում է երկու հիմնական խմբերի՝ ա) *վոկալ,* այսինքն մարդկային ձայնով կատարվող երաժշտություն և բ) *գործիքային:* Տես՝ *վոկալ երաժշտություն, վոկալ արվեստ:*

ՎՈԿԱԼ ԱՆՍԱՄԲԼ (ռուս. вокальный ансамбль) մի շարք վոկալիստներից կազմված խումբ, որոնք ելույթ են ունենում միասնաբար, խումբը կարող է բաղկացած լինել չորս հոգուց (վոկալ քառյակ) երեք հոգուց (վոկալ եռյակ) և այլն: Վ. ա. կարող են լինել տղամարդկանց և կանանց, ավելի հազվադեպ խառը:

ՎՈԿԱԼ ԱՐՎԵՍՏ, տես՝ *երգչային արվեստ:*

ՎՈԿԱԼ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. вокальная музыка) երգեցողական երաժշտություն, երգելու համար ստեղծված երաժշտություն, անկախ նրանից կունենա գործիքային նվագակցություն, թե՝ ոչ: Սակայն կան այսպես կոչված երգա-գործիքային երաժշտական ստեղծագործություններ, երբ նվագը երգին հավասարարժեք է, օր. *օպերա, օրատորիա կոնցերտ* և այլն:

ՎՈԿԱԼԻԶ (լատ. vocalis՝ ձայնավոր) առանց բառերի երգելու համար գրված երաժշտական ստեղծագործություն,

երգվում է որևէ ձայնավորով կամ նոտայի անվանումով: Կան բազմաթիվ վ.՝ *վարժություններ, էտյուդներ, պիեսներ*, որոնք գրված են ուսումնական նպատակներով, ձայնի արտահայտչականությունը և երգչային վարպետությունը զարգացնելու համար: Կան նաև ինքնուրույն գեղարվեստական արժեք ներկայացնող վ., որոնք գրված են համերգային կատարման համար, օր. Ռավելի «Խաբաներան», Ռախմանինովի «Վոկալիզը», Գլիերի Կոնցերտը ձայնի և նվագախմբի համար և այլն:

ՎՈԿԱԼԻԶԱՑԻԱ (ռուս. вокализация) երգեցողություն, որի ժամանակ բառերի փոխարեն արտասանվում է որևէ ձայնավոր՝ ա, է, ի և այլն:

ՎՈԿԱԼԻՍՏ (ռուս. вокалист,-ка) մշակված ձայն ունեցող մասնագետ երգիչ,-ուհի:

ՎՈԿԱԼ ՔԱՌՅԱԿ (ռուս. вокальный квартет) չորս *վոկալիստներից* բաղկացած *անսամբլ*, ամենատարածված վ. ք. են տղամարդկանց վ. ք. (երկու տենոր, բարիտոն, բաս) կանանց վ. ք. (երկու սոպրանո, մեցցո սոպրանո, կոնտրալտո), հազվադեպ լինում է նաև խառը վ. ք. (սոպրանո, մեցցո-սոպրանո, տենոր, բաս): Նման վ. ք. համար գրված ստեղծագործությունները կոչվում են *վոկալ կվարտետ:*

ՎՈՍՄՅՈՐԿ, տես՝ *կադրիլ:*

ՎՈՒՆԴԵՐԿԻՆԴ (գերմ. Wunderkind, Wunder՝ հրաշք, Kind՝ մանուկ) հրաշամանուկ, երաժշտության կամ որևէ այլ բնագավառում արտակարգ ընդունակություններ դրսևորված երեխա, որը վաղ հասակից հանդես է գալիս երաժշտության ասպարեզում որպես վիրտուոզ կատարող, կամ իր արվեստին տիրապետող կոմպոզիտոր, կամ՝ երկուսը միասին: Այն, որ փոքրահասակների երաժշտական-կատարողական արվեստը կարող է գտնվել հասուն վարպետների բարձրության վրա, ապացուցում է երեխաների կողմից երաժշտական տպավորությունների ընկալման և հաղորդման արտակարգ ուժն ու բացառիկ շնորհքը: Մյուս արվեստների ասպարեզում վ. հազվադեպ են լինում, միաժամանակ նրանց արվեստը տարբերվում է մեծերի արվեստից: Շնորհալի, բացառիկ երեխաների ներդաշնակ զարգացման համար դեռևս 1931 թ. Մոսկվայի և Լենինգրադի կոնսերվատորիաներին կից կազմակերպվեցին այդպիսի երեխաների խումբ կոչվող հատուկ բաժիններ (Երևանի կոնսերվատորիային կից կազմակերպվել է 1935 թ.), որոնք հետագայում դարձան միջնակարգ երաժշտական դպրոցներ (տասնամյակներ): Այդ դպրոցները տվել են բազմաթիվ ականավոր երաժիշտներ:

S

ՏԱԲՈՒԼԱՏՈՒՐԱ (ֆր. tabulature, գերմ. Tabulatur, լատ. tabule-ից՝ տախտակ, աղյուսակ) գործիքային երաժշտության գրառման տառային կամ թվանշանային հնագույն սիստեմ, օգտագործվել է XV — XVII դդ. հետզհետե իր տեղը զիջելով ավելի պարզ՝ նոտաների օգնությամբ երաժշտության գրառման համաեվրոպական սիստեմին:

ՏԱԿՏ (գերմ. Takt, լատ. tactus-ից՝) տես՝ *մետր:*

ՏԱԿՏԻ ԳԻԾ (ռուս. тактовая черта) տես՝ *մետր:*

ՏԱՂ, միջնադարյան Հայաստանում տարածված քնարական կամ դրամատիկ բնույթի բազմաթեմային միաձայն երգ, որն ունի լայնաշունչ և ձայնագարդերով հարուստ մեղեդի, *լադային* բարդ կառուցվածք: S. քաղաքային երգեր էին, որ հորինում էին *տաղերգու կոչվող պրոֆեսիոնալ հեղինակները: Փոքրածավալ տ. կոչվում է տաղիկ:*

ՏԱՂԱՍԱՑ, *տաղեր* երգող:

ՏԱՂԵՐԳՈՒ, *տաղեր* հորինող:

ՏԱՂԻԿ, տես՝ *տաղ:*

ՏԱՄԲՈՒՐԻՆ (ֆր. tambourin) տես՝ *բուբեն:*

ՏԱՄ-ՏԱՄ (իտ. tam-tam) *տամտամ, գոնգի* տարատեսակը, ձայնը որոշակի բարձրություն չունի, հարվածելիս արձակում է խորը, ղողանջանման, շատ ցածր ձայն, որը մինչև մարելը քանիցս աստիճանաբար ուժգնանում և մեղմվում է:

ՏԱՆԳՈ (իսպ. tango) *խաբաներայի* տիպի հնագույն իսպանական ժողովրդական դանդող պար, սովորաբար 3/4 չափով, *ռիթմը* հաճախ *սինկոպացված* է: Հետագայում, փոփոխված ձևով տարածվելով Արևելյան Ամերիկայում, XX դ. տ. արագորեն տարածվեց ամբողջ աշխարհում՝ *«արգենտինյան տ.»* անվան տակ, դառնալով սալոնային



և էստրադային ամենամոդայիկ պարը: S. պարում են զույգերով, աչքի է ընկնում իր հուզականությամբ, տրտմության թեթևակի երանգով: Ժամանակի ընթացքում քանիցս նկատվել է տ. տարածման նվազումը, ապա՝ կրկին հրապարակ գալը և մեծ ասպարեզներ նվաճելը:

ՏԱՊԱՆԱԳԻՐ (հուն. epitaphios, epi՝ վրա, taphos՝ գերեզման) գրական տապանագրի ոգով գրված երաժշտական ստեղծագործություն, երաժշտական հնագույն տ. քանդակված է եղել դամբարանի վրա, շուրջ 100 տարի մ. թ. ա.: S. թվին են պատկանում Լիստի «Ռ. Վագների գերեզմանի մոտ» (դաշնամուրի համար), Ստրավինսկու «Դամբանական երգը» (նվագախմբի համար, Ռիմսկի-Կորսակովի հիշատակին), Գնեսինի «Վ. Ի. Լենինի հիշատակին սիմֆոնիկ մոնումենտը» և այլ ստեղծագործություններ:

ՏԱՊՅՈՐ (ֆր. tapeur, taper-ից՝ հարվածել, թխկթխկացնել) 1) պարերեկույթներին պարեր նվագող դաշնակահար, 2) դաշնակահար, որի նվագի տակ ցուցադրվել են համր կինոնկարները:

ՏԱՌԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ (ռուս. буквенные музыкальные темы) այնպիսի հնչյուններից կազմված երաժշտական *թեմաներ*, որոնց տառային կամ վանկային անունները կազմում են՝ սովորաբար որևէ կոմպոզիտորի անուն կամ ազգանուն, օր. BACH *(սի բեմոլ, լյա, դո, սի)* ազգանունը որպես տ. ե. թ. օգտագործել են Յ. Ս. Բախը, Շումանը, Լիստը, Ռիմսկի-Կորսակովը և ուրիշներ:

ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴԱԿԱՆ ՆՈՏԱ (ռուս. шестнадцатая нота) տես՝ *տևողությունների զույգ բաժանում:*

ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴԱԿԱՆ ՊԱՈՒԶԱ (ռուս. шестнадцатая пауза) տես՝ *պաուզա:*

ՏԱՎՂԱՀԱՐ (ռուս. арфист) *տավիղ* նվագող երաժիշտ:

ՏԱՎՂԱՀԱՐՈՒՀԻ (ռուս. арфистка) *տավիղ* նվագող կին երաժիշտ:


ՏԱՓՂ, 1) հնում այդպես էին կոչվում պատերազմական թմբուկը, տասնաղյա *քնարը, սանթուրանման* սաղմոսարանը (լարային նվագարան էր), 2) ժամանակակից իմաստով՝ *արֆա:*

ՏԱՐԱՆՏԵԼԱ (իտ. tarantella, իտալական Taranto քաղաքի անունից) արագ ու սրընթաց ժողովրդական պար



Իտալիայում, չափը՝ 3/8, ավելի հաճախ՝ 6/8: Պարն ուղեկցվում է *կիթառի* նվագով, *կաստանյետների* զարկով, *տամբուրինի* հարվածներով, երբեմն նաև՝ երգով: S. ձևն իրենց ստեղծագործություններում օգտագործել են Ռոսսինին, Շոպենը, Գլինկան, Պրոկոֆևը և ուրիշներ:

ՏԱՐՈԳԱՏՈ (հունգ. tárogató) հունգարական ազգային փողային նվագարան, ունի 5 ձայնանցք, տարածված է նաև Ռումինիայում և Հարավսլավիայում:



ՏԵՄԲՐ, տես՝ *հնչերանգ:*

ՏԵՄՊ (լատ. tempus-ից՝ ժամանակ, իտ. tempo) երաժշտական ստեղծագործության կատարման արագության աստիճանը: Ստեղծագործության կամ նրա առանձին մասերի տ. նշանակում են XVII դ. գործածության մեջ մտած իտալերեն տերմիններով: Հիմնական տ. են *դանդաղ տ.* և *արագ տ.*: Որոշ դեպքերում տ. նշանակման համար օգտագործվում են որոշակի արագություն ունեցող *պիեսների* անուններ. օր. *մենուետի* տ.-ով, *քայլերգի* տ.-ով և այլն: Միաժամանակ տ. կարող է հանդիսանալ ստեղծագործության կամ նրա առանձին որևէ մասի անվանումը (Largo կամ Allegro և այլն): Ճշգրիտ տ. մատնանշվում է չափահարի օգնությամբ:

ՏԵՄՊԵՐԱՑԻԱ (լատ. temperare-ից՝ կարգի բերել, չափավորել) երաժշտական ձայնաշարի մեջ մտնող հնչյունների հարաբերակցության կանոնավորումը՝ ըստ բարձրության, այլ կերպ՝ երաժշտական ձայնաշարի լարվածքի սահմանումը, կամ որ նույնն է՝ նրա յուրաքանչյուր առանձին հնչյունի բարձրության սահմանումը: Դրա կարիքը զգացվեց, երբ միջին դարերում Եվրոպայում մեծ տարածում գտան երգեհոնները (ինչպես նաև ստեղնավոր այլ նվագարաններ), որոնց լարելու համար անհրաժեշտ էր մեկընդմիշտ սահմանված բարձրություններ ունեցող երաժշտական համակարգ ստեղծել, համաձայն այդ նվագարանների տեխնիկական, կատարողական և գեղարվեստական հնարավորությունների, պահանջների: Հնում երգեհոնը լարում էին *Պյութագորասի լարվածքով*, այսինքն՝ *բնական ձայնաշարի մաքուր կվինտաներով: Երաժշտական հարմոնիկ մտածողության զարգացումը* (XVI դ.) ստիպեց հրաժարվել դրանից և սահմանել *մաքուր լարվածքը:* Պյութագորասյան մեծ *տերցիաները չափազանց լարված էին, այդ իսկ պատճառով անպետք՝ մաժոր* և *մինոր եռահնչյուններ* կառուցելու համար: Հետագայում, երբ երաժշտական արվեստի զարգացումը նոր պահանջներ առաջադրեց, պարզվեց, որ *մաքուր լարվածքում* երկրորդ կարգի *զարտուղություն*, կամ առկա տոնայնությունից ցանկացած այլ տոնայնության փոխադրելու համար, *օկտավայի* սահմաններում պիտի տեղավորել 85 տարբեր բարձրության հնչյուններ,

ինչ անասելի կբարդացներ ստեղնավոր նվագարանների կառուցվածքը, համարյա անհնար դարձնելով նվագը: Ստիպված էին հրաժարվել նաև մաքուր լարվածքից և սկսեցին օգտագործել *օկտավայում* 12 հնչյունանոց հնչյունաշարի *ինտերվալային* հարաբերությունների տ. (կարգավորումը): Սկզբում ստեղծվեցին մի շարք *անհավասար տեմպերացված լարվածքներ*, իսկ հետո *հավասարաչափ տեմպերացված լարվածքը*: Տես նաև՝ *կոմա*:

ՏԵՆՈՐ (իտ. tenore, լատ. tenere-ից՝ ուղղություն տալ, պահել) 1) տղամարդու բարձր երգչաձայն, միջին դարերում (XII — XVIII դդ. սկիզբը) եվրոպական, գլխավորապես հոգևոր խմբերգերում տ. հանձնարարում էին հիմնական մեղեդու պարտիան *(կանտուս ֆիրմուս՝* ուղղություն տվող եղանակ), որից ելնելով գրում էին մնացած ձայների *պարտիաները*: *Տ. տարատեսակներն են՝ տ.-ալտինո, լիրիկական տ., դրամատիկ տ. լիրիկո-դրամատիկ տ.*, գոյություն ունեցող *«բնորոշ տ.»*, *«հերոսական տ.»* և *«երկրորդ տ.»* հասկացությունները ստեղծվել են ըստ երչախմբում և բեմում նրանց գրաված տեղի և *ամպլուայի*: Եթե տ. *պարտիան* նոտագրվում է ջութակի բանալիով, ապա այն հնչում է մեկ *օկտավա* վեր, եթե *տենորի* կամ *բասի* բանալիով, ապա հնչում է այնպես, ինչպես գրված է, տես՝ *երգչախումբ*, 2) փողային նվագախմբի մեջ մտնող պղնձյա փողային նվագարան *սի բեմոլ* (in B) լարվածքով, ձայնածավալն է մեծ *օկտավայի մի*-ից մինչև առաջին *օկտավայի սի բեմոլ*-ը (E-b^{1}), նոտագրվում է ջութակի բանալիով և հնչում է մեծ *նոնա* վար, հիմնականում օգտագործվում է որպես նվագակցող նվագարան, եթե չի կատարում 1-ին տենորի պարտիանները (ըստ *պարտիտուրի*), 3) նվագախմբային մի շարք նվագարանների (գործիքների) տարատեսակների անվան կցորդ՝ *դոմրա-տենոր, տենոր-սաքսոֆոն, տենոր-տրոմբոն* և այլն, 4) *հարմոնիան* ուսումնասիրելիս՝ քառաձայնի վերից երրորդ ձայնը:


ՏԵՆՈՐ-ԱԼՏԻՆՈ, *կոնտրալտինո, տենորինո, ալտինո-տենոր*, երգչաձայն, որն ունի ամենաբարձր ձայնաստամանը և հնչում է շատ քնքուշ (փոքր *օկտավայի դո*-ից մինչև երկրորդ *օկտավայի մի*-ն): Յուրահատուկ առանձնահատկությունն է *ֆալցետով* երգելու ունակությունը:

ՏԵՆՈՐ-ՏՐՈՄԲՈՆ (ռուս. теноровый тромбон) տես՝ *տրոմբոն*:

ՏԵՆՈՐԻ ԲԱՆԱԼԻ, *դո* բանալին՝ դրված *նոտակիրի* չորրորդ գծի վրա, տես՝ *բանալիներ*:

ՏԵՆՈՐԻՆՈ (իտ. tenorino) 1) փոքր երգչաձայն ունեցող *տենոր-երգիչ*, 2) *ֆալցետով* երգող *տենորները*, որոնք մինչև *ամորձատ երգիչների*՝ եկեղեցական երգչախմբում երգելու թույլտվություն ստանալը, փոխարինում էին մանկական երգչաձայներին, հետագայում կոչվեցին alti naturali *(բնական ալտեր)*, ի տարբերություն *ամորձատ-երգիչների (սոպրանիստներ և ալտիստներ)* որոնց երգչաձայները ստացվում էին անբնական ձևով:

ՏԵՈՐԲԱ (իտ. tiorba) *լյուտնյայի* բասային տարատեսակ, ուներ երկու գլխիկ, երկրորդը՝ *բուրդոնային* լարերի համար: *Կիթառոնից* տարբերվում էր ավելի մեծ




հնչարկղով և ավելի կարճ *բռնակոթով*, ուներ 12 զույգ և 2 միակի լարեր, օգտագործվում էր որպես նվագակցող և անսամբլային նվագարան XVI — XVIII դդ.:

ՏԵՍԱՐԱՆ, 1) թատերական բեմի ձևավորումը դեկորացիաներով, կահույքով, ռեկվիզիտով, լուսավորությամբ, ինչ ներկայացնում է գործողության կատարման տեղը, 2) նույնն է՝ *տեսիլ*:

ՏԵՍԻԼ (ռուս. явление) ներկայացման յուրաքանչյուր գործողության առանձին մասերը, որոնցում հանդես են գալիս տարբեր գործող անձինք, տես՝ *տեսարան*:

ՏԵՍԻՏՈՒՐԱ (իտ. tessitura՝ հյուսվածք, գործվածք) *ձայնահատված*, երգչաձայնի կամ նվագարանի (գործիքի) *ձայնածավալի* այն մասը, որն օգտագործված է երաժշտական տվյալ ստեղծագործության մեջ (նրա յուրաքանչյուր հատվածում): Երգչաձայնի կամ նվագարանի բնույթին և տեխնիկական հնարավորություններին համապատասխանող տ. մեծապես նպաստում է գեղարվեստական բարձրորակ կատարմանը և ընդհակառակն: Այստեղից էլ՝ հարմար տ. բարձր տ., ցածր տ. արտահայտությունները:

ՏԵՏՐԱԽՈՐԴ (հուն. tetrachordon, tetra՝ չորս և chorde՝ լար (յոթնաստիճան *դիատոնիկ լադերի գամմաների*՝ առաջին չորս կամ երկրորդ չորս հնչյունների հաջորդականությունը: Առաջին չորսը կոչվում են *վարին տ.*, իսկ երկրորդը՝ *վերին տ.*: *Դիատոնիկ տ.* լինում են երեք տեսակ. ա) *իոնական տ.*, որում երկու մեծ սեկունդաներին հաջորդում է մեկ փոքրը, բ) *դորիական տ.*, որում մեծ *սեկունդային* հաջորդում է փոքրը, ապա, նորից մեծը, գ) *փռյուգիական տ.*, որում փոքր *սեկունդային*



հաջորդում են երկու մեծ *սեկունդաներ: Գոյություն ունի* դեռևս հին Հունաստանում իշխող այն տեսակետը, որ յոթնաստիճան *դիատոնիկ լադերի գամմաները* կառուցվում են երկու միատեսակ կամ տարբեր տեսակի տ., օր. *իոնական, դորիական և փռյուգիական լադերի գամմաները* կազմված են միատեսակ տ., իսկ *լիդիական, միքսոլիդիական և էոլական լադերի գամմաները*՝ տարբեր տեսակի տ. և այլն: Տես՝ *միջնադարյան լադեր, հին հունական լադեր:*


ՏԵՐՄԵՆՎՈՔ (ռուս. Термен՝ գյուտարարի ազգանունը և լատ. vox՝ ձայն) միաձայն էլեկտրանվագարան, որով առաջին անգամ էլեկտրականության միջոցով հնչեցվել են տարբեր ձայներ և երաժշտություն, հնարել է խորհրդային գիտնական Տերմենը, 1920 թ.: S. չունի ոչ լար, ոչ ստեղն, կատոդային լամպերով փոքրիկ սարք է, ուղղաձիգ անտենայով և մետաղյա կամարով: Նվագում են աջ ձեռքը անտենային մոտեցնելով և հեռացնելով, իսկ մետաղյա կամարի վրա պահված ձախ ձեռքի շարժումներով փոխում են ձայնի ուժգնությունը: Տես՝ *էլեկտրանվագարաններ:*

ՏԵՐՑԴԵՑԻՄԱ (լատ. tertia-decima՝ տասներեքերորդ) 1) *դիատոնիկ գամմայի* յուրաքանչյուր հնչյունի տասներեքերորդ աստիճանը, կամ նրանց հարաբերությունը, այսինքն տասներեք աստիճան ընդգրկող *ինտերվալ:* S. *օկտավընդմեջ սեքստան է (օկտավա + սեքստա):* Տես՝ *բարդ ինտերվալներ,* 2) *ակորդի տերցդեցիմային տոնի* կրճատ անվանումը:

ՏԵՐՑԵՏ (գերմ. Terzett, իտ. terzetto, լատ. tertius՝ երրորդ) 1) երեք կատարողների (հիմնականում՝ երգիչների) անսամբլի համար գրված երաժշտություն, 3) օպերաներում, օպերետներում, օրատորիաներում և կանտատներում հաճախակի հանդիպող վոկալ անսամբլ՝ սիմֆոնիկ նվագախմբի նվագակցությամբ:

ՏԵՐՑԻԱ (լատ. tertia՝ երրորդ) 1) *դիատոնիկ գամմայի* յուրաքանչյուր հնչյունի երրորդ աստիճանը, կամ նրանց հարաբերությունը, այսինքն՝ երեք աստիճան ընդգրկող *ինտերվալ,* նշանակվում է 3 թվանշանով, 2) *ակորդի տերցիային տոնի* կրճատ անվանումը:

ՏԵՐՑԻԱՅԻՆ ՍԽԵՄԱ (ռուս. терцовая схема) սխեմա, որը ցույց է տալիս *մաժոր* և *մինոր լադերի* աստիճանների վրա կառուցված եռահնչյունների *հարմոնիկ ֆունկցիաները* և նրանցից յուրաքանչյուրի լարվածության աստիճանը: S. ս. կենտրոնում գտնվում է *տոնիկան* (աստիճանը), որից *տերցիայի* հաջորդականությամբ դասավորված են դեպի վեր՝ *դոմինանտային* ֆունկցիային պատկանող III, V և VII աստիճանների եռահնչյուները, իսկ դեպի վար՝ *սուբդոմինանտային* ֆունկցիային պատկանող VI, IV և II աստիճանների եռահնչյուները: Բացի եռահնչյունից *տոնիկային* ֆունկցիային են պատկանում նրանից *տերցիա* վար և



տերցիա վեր գտնվող VI և III աստիճանների եռահնչյունները, որոնք փոփոխական ֆունկցիա ունեն: S. ս. եռահնչյունները որքան հեռանում են *տոնիկայից, այնքան լարվածությունն ավելի մեծանում է* (որովհետև *ակորդում* ավելանում է անկայուն հնչյունների քանակը): Այս կամ այն ֆունկցիային պատկանող եռահնչյունների յուրաքանչյուր խմբի կենտրոնում գտնվում է տվյալ ֆունկցիայի գլխավոր աստիճանը: Տես՝ *հարմոնիկ ֆունկցիա:*

ՏԵՐՑԻԱՅԻՆ ՏՈՆ (ռուս. терцовый тон) տես՝ *ակորդային տոներ:*

ՏԵՐՑԿՎԱՐՏԱԿՈՐԴ, տես՝ *սեպտակորդի շրջվածքներ:*

ՏԵՐՑԿՎԻՆՏԱԿՈՐԴ, տես՝ *եռահնչյուն:*

ՏԻԿ՝, տես՝ *պարկապզուկ:*

ՏԻՐԱԴԱ (իտ. tirata՝ մեկ շնչով) 1) *գամմայանման պասսաժ,* 2) մի քանի ձայներից բաղկացած *ֆորշլագ:*

ՏԻՐՈԼՅԵՆ (ֆր. tyrolienne՝ տիրոլյան) գերմանական շուրջպար 3/4 չափով, *լենդլերի* տարատեսակը:



ՏԿԶԱՐ, 1) Նույնն է՝ *պարկապզուկ,* 2) *պարկապզուկ* նվագող:

ՏՈԿԱՏ (իտ. toccata, toccare-ից՝ դիպչել, շոշափել, խփել) սկզբում տ. էր կոչվում ամեն մի *պոլիֆոնիկ* երաժշտական *պիես,* որն անկախ բնույթից և ձևից, գրված էր որևիցե ստեղնանվագարանի համար, XVI — XVIII դդ. տ. գրվում էր ազատ իմպրովիզացիոն ձևով, որը մոտ էր



պրելյուդին կամ *ֆանտազիային:* Հետագայում տ. աստիճանաբար ձևավորվեց, որպես արագ և համաչափ մոտորային շարժում ունեցող վիրտուոզային պիես, որում գերիշխում է կատարման «հարվածային» տեխնիկան: XIX — XX դդ. տ. գրված են *հոմոֆոնիկ* ոճով:

ՏՈԿԱՏԻՆ (իտ. toccatina, toccata-ի նվազականը) փոքրիկ *տոկատ:*

ՏՈՆ (հուն. tónos՝ շեշտ, ձայնի բարձրացում) 1) որոշակի բարձրություն ունեցող ձայն (հնչյուն), այսինքն՝ երաժշտական ձայն (հնչյուն) 2) *հավասարաչափ տեմպերացված լարվածքում ինտերվալների* որակական (տոնային) մեծության չափման միավոր, կոչվում է նաև ամբողջ տ., հավասար է օկտավայի 1/6 մասին, պարունակում է երկու *կիսատոն*, 3) *լադի* աստիճան, օր. VII աստիճանը կոչվում է *ձգտող տ.*, 4) *ակորդ* կազմող հընչյունները (տոները)՝ *հիմնական տ., տերցիային տ., կվինտային տ.* և այլն: Տես՝ *կիսատոն:*

ՏՈՆԱԴԻԼՅԱ (իսպ. tonadilla՝ բառացի՝ երգ) XVIII — XIX դդ. իսպանական երաժշտական կոմեդիան, որը հանրամատչելի էր և մեծ հաջողություն ուներ: S. իրենց զարգացումն են ստացել իսպանական երաժշտության ռիթմիկ ինտոնացիոն բազմաթիվ տարրեր:

ՏՈՆԱՅՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ (ռուս. тональный ответ) տես՝ *ֆուգա:*

ՏՈՆԱՅՆԱԿԱՆ ՍԵԿՎԵՆՑԻԱ (ռուս. тональная секвенция) տես՝ *սեկվենցիա:*

ՏՈՆԱՅՆԱԿԱՆ ՖՈՒԳԱ (ռուս. тональная фуга) *ֆուգա*, որի պատասխանը (ուղեկիցը) տոնայնական է:

ՏՈՆԱՅՆԱՓՈԽ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ռուս. транспонирующие (музыкальные) инструменты) նվագարաններ, որոնք հնչում են նոտաներում գրվածից որոշ *ինտերվալով* բարձր կամ ցածր, գլխավորապես փողայինները, որոնց փողանցքերը հիմնական նվագարանից այս կամ այն չափով ավելի երկար կամ կարճ են, հետևաբար հնչում են համապատասխանորեն ավելի բարձր կամ ցածր, այլ կերպ ասած՝ փոխում են իրենց լարվածքը: Եվ որպեսզի հիմնական նվագարան (գործիք) նվագող երաժիշտը կարողանա նույն *մատադրումով* նվագել նաև տարատեսակները, նրանց համար նոտաները գրում են համապատասխանորեն ավելի բարձր կամ ցածր տոնայնությունում և այդ նոտաներում նշում են, թե ինչ լարվածքի տարատեսակով պիտի նվագել, օր. Clarinetto in A, Corno in F, Tromba in B և այլն: Տես՝ *օկտավային փոխադրում:*

ՏՈՆԱՅՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ (ռուս. транспозиция կամ транспонировка) երաժշտական ստեղծագործության բոլոր ձայների փոխադրումը որոշակի *ինտերվալով* վեր կամ վար: Ամեն մի տ. ժամանակ (բացի օկտավայի տոնայնափոխությունից) ստեղծագործության տոնայնությունը փոխվում է: Տոնայնափոխության նպատակն է հարմարեցնել տվյալ ստեղծագործությունն ավելի բարձր կամ ցածր ձայնի, այլ ձայնածավալով գործիքի կամ էլ հեշտացնել նոտաների ընթերցումը:

ՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. тональность) *երաժշտական սիստեմի ձայնաշարի* այս կամ այն աստիճանի վրա *գլխավոր տոնի (տոնիկայի)* դիրքով որոշվող *լադի* հնչյունների բարձրությունը: *Լադ* հասկացությունն արտահայտում է միայն տվյալ *ձայնաշարի* աստիճանների փոխհարաբերությունն ըստ բարձրության և նրանց փոխադարձ ֆունկցիոնալ կապը: S. հասկացությունն արտահայտում է *լադի* աստիճանների կոնկրետ բարձրությունը, երկու հասկացությունների միասնությունն արտահայտվում է *լադատոնայնություն* տերմինով: Գործնականում սակայն օգտագործում են տ. տերմինը՝ ավելի լայն իմաստով: S. անվանումը կազմվում է *տոնիկա* և *լադ* անուններից (օր. *դո մաժոր, ֆա դիեզ մինոր* և այլն):

ՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱԿՑՈՒԹՅՈՒՆ (ռուս. родство тональностей) ընդհանուր *ակորդների* քանակով և նշանակությամբ որոշվող երկու տոնայնությունների հարաբերությունը: Գոյություն ունի տոնայնությունների երեք աստիճանի ազգակցություն: *Առաջին աստիճանի* ազգակցության մեջ (տվյալ տոնայնության հետ) կարող են գտնվել այն տոնայնությունները, որոնց *տոնիկային եռահնչյունները* մտնում են տվյալ տոնայնության կազմի մեջ և այդ տոնայնության *տոնիկային եռահնչյունն* իր հերթին մտնում է այդ տոնայնությունների կազմի մեջ: Յուրաքանչյուր *մաժոր* և *մինոր* տոնայնություն, ունի առաջին աստիճանի 6 ազգակից տոնայնություն: *Երկրորդ աստիճանի* ազգակցության մեջ (տվյալ տոնայնության հետ) կարող են գտնվել այն տոնայնությունները, որոնք ունեն գոնե մեկ ընդհանուր *եռահնչյուն* տվյալ տոնայնության հետ (ոչ *տոնիկական բնական* կամ *հարմոնիկ լադում*): Յուրաքանչյուր *մաժոր* և *մինոր* տոնայնություն ունի երկրորդ աստիճանի 11 ազգակից տոնայնություն: *Երրորդ աստիճանի* կամ հեռավոր ազգակցության մեջ են գտնվում այն տոնայնությունները, որոնք *դիատոնիկ* սիստեմում ընդհանուր ոչ մի *եռահնչյուն* չունեն:

ՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ (ռուս. сопоставление тональностей) *զարտուղության* այն տեսակը, երբ նոր տոնայնությունը հանդես է գալիս առանց նախապատրաստման: *Զարտուղության* այս ձևը սովորաբար կիրառվում է երկու կառուցվածքների միջև, *ցեզուրայից* հետո, սակայն երբեմն և հանդիպում է կառուցվածքի ներսում:



ՏՈՆԻԿԱ (հուն. tónos՝ տոն) 1) *լադի* գլխավոր կայուն ձայնը (I աստիճանը), 2) *լադի* I աստիճանի վրա կառուցված *եռահնչյունը* (սովորաբար *մաժոր* կամ *մինոր*), *լադի հիմնական ակորդը:*

ՏՈՆԻԿԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱ (ռուս. тоническая функция) տես՝ *հարմոնիկ ֆունկցիաներ:*

ՏՈՐՄԱՓՈՂԱԿ, տես՝ *նավատորմափողակ:*

ՏՈՐՈՒՊԻԼ, տես՝ *պարկապզուկ:*

ՏՐԱՆՍԿՐԻՊՑԻԱ (լատ. transcriptio՝ արտագրում) 1) նույնն է՝ *արանժեվորում*, 2) որևէ ստեղծագործության այնպիսի ազատ և ստեղծագործական վերամշակում (հիմնականում՝ վիրտուոզային բնույթի), որն իր բարձր գե-



ղարվեստականությամբ իրավունք է տալիս վերամշակողի անունը կցել կոմպոզիտորի անվան հետ, օր. Բախ-Բուզոնի, Շուբերտ-Լիստ, Կոմիտաս-Ասլամազյան, Բիզե-Շչեդրին և այլն: Տես՝ *պարաֆրազ:*

ՏՐԱՆՍՊՈԶԻՑԻԱ, տես՝ *տոնայնափոխություն:*

ՏՐԱՎԵՍՏԻ (ֆր. travesti, travestir-ից՝ ուրիշ զգեստ հագցնել) 1) տղայի (տղամարդու) դեր, որը կատարում է տղայի զգեստ հագած դերասանուհին, օր. Վանյայի դերը Գլինկայի «Իվան Սուսանին» օպերայում, Ջիբելի դերը Գունոյի «Ֆաուստ» օպերայում, 2) տղայի (տղամարդու) դեր կատարող դերասանուհի:

ՏՐԵԼ (իտ. trillo, ռուս. трель) *դալլալլ*, հիմնական հնչյունի և նրա վերևի օժանդակ հնչյունի հաջորդական արագ և համաչափ բազմիցս կրկնումը, նշանակվում է նոտայից քիչ վեր գրված tr. կամ tr~~~ լատինական տառերով: Երբ հարկ է լինում տ. սկսել ոչ թե հիմնական, այլ



վերին կամ վարին օժանդակ հնչյունով, կամ մի քանի հնչյուններից բաղկացած մելոդիկ դարձվածքով, ապա դրանք նշանակվում են *կարճ ֆորշլագներով*, որոնք մըտնելով տ. կազմի մեջ, կատարվում են հիմնական նոտայի տևողության հաշվին: S. վեր դրված *ալտերացիայի նշանը* վերաբերում է օժանդակ հնչյունին: XVII — XVIII դդ. ընդունված էր տ. վերջին օժանդակ նոտան՝ վերևինի փոխարեն վերցնել ներքևինը: Այդ եզրափակիչ *ֆիգուրը* կոչվում էր *նախշլագ* և նոտաներում չէր նշանակվում, ուստի դասական կոմպոզիտորների ստեղծագործություններում եղած տ. միշտ պետք է կատարել *նախշլագով:* Ներկայումս եթե հեղինակն ուզում է տ. վերջացնել *նախշլագով* կամ այլ կերպ, նա նոտագրում է տ. հետո՝ փոքրիկ *ֆորշլագանման* նոտաներով:

ՏՐԵՄՈԼՈ (իտ. tremolo՝ դողդոջուն) որևէ հնչյունի կամ համահնչյունի (ինտերվալ, ակորդ) կամ երկու տարբեր հնչյունների (տերցիայից ոչ պակաս) և համահնչյուններ ի, ինչպես նաև որևէ հնչյունի և համահնչյունի հաջորդականության բազմիցս համաչափ և արագ կրկնումը: Սեկունդայի հաջոր-



դականության տ. կոչվում է տրել: S. հնարավոր է կատարել համարյա բոլոր նվագարաններով (գործիքներով): Սովորաբար տ. գրվում է կրճատ նոտագրությամբ: Տես՝ կրճատագրություն:

ՏՐԵՅՅԱ (իտ. trezza) կուրանտայի և գալյարդայի ազգակից հինավուրց պար, որը երբեմն մտնում էր XVII դ. գերմանական գործիքային սյուիտի մեջ:

ՏՐԻԼՈԳԻԱ (հուն. trilogia) տես՝ եռերգություն:

ՏՐԻՈ (իտ. trio, tre-ից՝ երեք) 1) երաժշտական ստեղծագործություն, գրված երեք երաժիշտ-կատարողների հա-

մար, որոնցից յուրաքանչյուրին տրված է առանձին պարտիա: Գործիքային տ. գրված են գլխավորապես սոնատային ձևով: Դրանք, մասնավորապես դաշնամուրային տ., ինչպես նաև լարային նվագարանների համար գրված կվարտետը կամերային երաժշտության ամենատարածված ձևերից են, 2) նվագարանների համար գրված, պարզորոշ ռիթմ և եռամաս ձև ունեցող մի շարք երաժշտական ստեղծագործությունների (մենուետ, քայլերգ, սկերցո և այլն) միջին մասը, որն իր սահուն, երգային հանգիստ բնույթով, երբեմն նաև տոնայնությամբ հակադրվում է ավելի աշխույժ եզրամասերին (1-ին և 3-րդ): Այդ միջին մասը կոչվում է տ., որովհետև հնագույն նվագախմբային երաժշտական ստեղծագործություններում դա գրվում էր երեք նվագարանի համար եռաձայն, իսկ եզրամասերը առավելապես գրվում էին երկձայն, կատարվում ամբողջ նվագախմբով:

ՏՐԻՈԼ (ռուս. трюль) երեք նոտայից բաղկացած ռիթմիկ պատկեր, սովորական երկուսի փոխարեն:




ՏՐԻՈ-ՍՈՆԱՏ (իտ. trio-sonata) երեք *պարտիայից* (ձայնից) բաղկացած գործիքային անսամբլ, որի երկու *պարտիաները* կատարում են մեծ մասամբ երկու ջութակ (երբեմն՝ երկու ֆլեյտա կամ հոբոյ), իսկ երրորդը՝ *գեներալ բասը*՝ կլավեսինը կամ երգեհոնը: Տ.-ս. լինում է երկու տեսակ՝ *ա) կամերային սոնատ* (իտ. sonata da camera), որն իրենից ներկայացնում է նախանվագ (նախերգանք) ունեցող պարային *սյուիտի* մի տեսակը, *բ) եկեղեցական սոնատ*, որն ըստ դասական ձևի, բաղկացած է հետևյալ չորս մասից՝ դանդաղ, ակորդային նախերգանք, *ֆուգայանման ալլեգրո* (արագ մաս), երգային բնույթի դանդաղ մաս և պարային բնույթի *ֆուգատոյանման* եզրափակիչ մաս: Գրել են XVII — XVIII դդ. Վիտալին, Կորելլին, Պյորսելը, Բախը, Հենդելը և ուրիշներ: Տես՝ *եկեղեցական սոնատ*:

ՏՐԻՊՏԻԽ (հուն. triptichos՝ բառացի եռածալ) երեք ինքնուրույն *պիեսից* բաղկացած և մեկ գաղափարով, թեմայով կամ ընդհանուր դրամատիկ հղացմամբ միավորված երաժշտական շարք: Ի տարբերություն *տրիլոգիայի*, տ. չունի սյուժետային զարգացման միասնական գիծ, տերմինը փոխառնված է կերպարվեստից:

ՏՐՏՈՆ (իտ. triton՝ երեք տոնից բաղկացած) մեծացրած *կվարտան* ինչպես նաև փոքրացրած *կվինտան*, *որոնք* բաղկացած են երեք տոնից, տ. արտակարգ *դիսոնանս* է, առաջացնում է շատ սուր *լադային ձգողականություն*, ինչում է «չարագուշակ»՝ միջին դարերում տ. անվանում էին «diabolus in musica»)... սատանան՝ երաժշտության մեջ») և արգելում օգտագործել: Ի տարբերություն բոլոր *մեծացրած* և *փոքրացրած ինտերվալների*, որոնք համարվում են *խրոմատիկ ինտերվալներ*, տ. համարվում է *դիատոնիկ ինտերվալ*, որովհետև գոյանում է *բնական մաժոր* և *մինոր լադերի* աստիճանների վրա, տ. մտնում է մի շարք *ակորդների ինտերվալների* կազմի մեջ, օր. *փոքրացրած եռահնչյունի*, *դոմինանտսեպտակորդի*, *փոքրացրած սեպտակորդի* և այլն: Տես՝ *դիատոնիկ ինտերվալներ*, *խրոմատիկ ինտերվալներ*:

ՏՐՈՄԲՈՆ (իտ. trombone, tromba-ից՝ խողովակ) պղնձյա փողային նվագարան (գործիք), օգտագործվում է սիմֆոնիկ, փողային, ջազային և էստրադային նվագախմբերում, նաև որպես մենակատարային նվագարան: Հայտնի են տ. 6 տարատեսակ՝ *սոպրանոյից* մինչև *կոնտրաբաս*




(վերջինս օգտագործել է միայն Ռ. Վագները): Ներկայումս օգտագործվում են *տենոր*, *բաս* և *տենոր-բաս քառավենտիլ (կվարտվենտիլ)* տ. *Տենոր-բաս* տ. ձայնածավալն է *կոնտրօկտավայի սոլ*-ից մինչև երկրորդ *օկտավայի ֆա*:

ՏՐՈՒԲԱԴՈՒՐ (ֆր. troubadour, պրովանսյան trobar-ից՝ գտնել, հորինել) միջնադարյան (XII—XIII դդ.) պրովանսյան (հարավային Ֆրանսիա) թափառաշրջիկ բանաստեղծ-երգիչ: Տ. արվեստը գովերգում էր ֆեոդալների ռազմական ավանդությունները, ասպետությունը, կնոջ գեղեցկությունը, իդեալական սերը և այլն, տ. մեջ կային հասարակության բոլոր խավերին պատկանող մարդիկ՝ սենյորներ, ասպետներ, ռամիկներ: Տ. ծառայում էին *մենեստրելները*, որոնք կատարում էին նրանց հորինած երգերը կամ նվագակցում նրանց: Տ. ասպետական քնարերգությունը զգալի ազդեցություն է ունեցել *տրուվերների* և *մինեզինգերների* արվեստի վրա:


ՏՐՈՒՎԵՐ (ֆր. trouvere, trouver-ից՝ գտնել, հորինել) ֆրանսիական միջնադարյան (XI — XV դդ.) թափառաշրջիկ բանաստեղծ-երգիչ: Մինչև XII դ. սկիզբը տ. արվեստը մոտ էր ժողովրդականին, հետագայում ավելի մեծ ազդեցություններ կրեցին *տրուբադուրների* արվեստից:

ՏՈՒԲԱ (լատ. tuba՝ փող, խողովակ) պղնձյա փողային ամենաբամբ նվագարանը (գործիքը), ունի չորս *վենտիլ*

(կվարտվենտիլ): Կան տ., որոնք ունեն հինգերորդ, նույնիսկ վեցերորդ *վենտիլը*՝ հնչյունների բարձրությունը կանոնավորելու (ճշտելու) համար: Օգտագործվել են տարբեր մեծության և լարվածքի մի շարք տ.: Փողային և սիմֆոնիկ նվագախմբերում ներկայումս գործ են ածվում *բաս.-տ, մի բեմոլ* (in Es) լարվածքով և կոնտրաբաս-տ., *սի բեմոլ* (in B) լարվածքով: Զայնածավալներն են՝ *բաս.-տ՝ կոնտրօկտավայի սոլ*-ից մինչև առաջին *օկտավայի մի բեմոլը* (G_1–es^1), *կոնտրաբաս-տ.՝ սուբկոնտրօկտավայի սի բեմոլ*-ից կամ *կոնտրօկտավայի դո*-ից մինչև փոքր *օկտավայի սի բեմոլ*-ը (B_2(C_1)–B): Նոտագրվում է բասի բանալիով, ըստ իրական հնչողության: Տես՝ *հելիկոն:*



ՏՈՒԲԱՖՈՆ, որոշակի բարձրություն ունեցող հարվածային նվագարան: Նույն *զանգակներ* նվագարանն է, միայն մետաղյա շերտիկները փոխարինված են մետաղյա փողրակներով, որի հետևանքով հնչերանգը հիշեցնում է բյուրեղապակյա ամանների զնգոց: Լինում են տարբեր մեծության տ.՝ 12—36 փողրականոց, հնչեցնում են հատուկ պատրաստված գնդաձայր փայտիկներով, օգտագործվում է էստրադային նվագախմբերում:



ՏՈՒՇ (գերմ. Tusch՝ ողջունանվագ) շատ կարճ, հանդիսավոր երաժշտական ողջույն, որը կատարվում է մեծա-



րանքի հանդեսներին, կոչումներ շնորհելիս, մրցանակներ հանձնելիս և այլն: Տեմպը արագ է, սովորաբար կատարում է փողային նվագախումբը:

ՏՈՒՇԵ (ֆր. touche՝ ձեռք տալ, դիպչել) դաշնամուր նվագելիս մատները ստեղներին դիպցնելու (հպելու, հարվածելու) եղանակ, որից գլխավորապես կախված է դաշնամուրի հնչման բնույթը, հնչերանգը, ուժգնությունը (մեղմ կամ փափուկ տ., ուժեղ տ., չոր տ., թույլ տ. և այլն): Ամեն մի դաշնակահար ունի իր անհատական տ., որը պայմանավորված է նրա բնական տվյալներով և կատարողական-գեղարվեստական հակումներով:

ՏՈՒՏՏԻ (իտ. *tutti*՝ բոլորը) երաժշտության կատարումը նվագախմբի կամ երգչախմբի ամբողջ կազմով:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ (ռուս. длительность) ձայնի չորս հիմնական հատկություններից մեկը, ձայնի տ. կախված է հնչող մարմնի տատանումների երկարատևությունից: Բացարձակ տ. չափվում է ժամանակի չափերով՝ վայրկյաններով, րոպեներով և այլն: Երաժշտության մեջ տ. չափը որոշվում է նրանց հարաբերականությամբ (տես՝ *ռիթմ*): Ձայների տ. նշանակվում են նոտաներով:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՒՅԳ ԲԱԺԱՆՈՒՄ (ռուս. парное деление длительностей) յուրաքանչյուր տևողության բաժանումը երկու հավասար մասերի՝ ամբողջ, կես, քառորդ, ութերորդ, տասնվեցերորդ, երեսուներկուերորդ, վաթսունչորսերորդ: Խիստ հազվադեպ օգտագործվում են նաև 128-երորդական և 256-երորդական նոտաներ, ինչպես նաև երկու ամբողջ տևողության հավասար, *բրեվիս* կոչվող նոտան (𝅜 կամ 𝅜): Կան նաև տևողությունների բաժանման հատուկ ձևեր (այսպես կոչված՝ *տևողությունների ոչ զույգ բաժանում*):

ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ (ռուս. знаки длительности) նույնն է՝ *նոտաներ*, ինչպես նաև՝ *կետ, կրկնակետ, եռակետ:* Տես՝ *լիգա, ֆերմատա:*

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՁԵՎԵՐ (ռուս. особые виды деления длительностей) տես՝ *տևողությունների զույգ բաժանում:*

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻԹՄԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՁԵՎԵՐ (ռուս. особые виды ритмического деления длительности) տես՝ *տևողությունների զույգ բաժանում:*

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻԹՄԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ (ռուս. ритмическое деление длительностей) նույնն է՝ *տևողությունների զույգ բաժանում:*

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՉ ԶՈՒՅԳ ԲԱԺԱՆՈՒՄ (ռուս. непарное деление длительностей) տևողությունների այնպիսի բաժանում, որի ժամանակ տևողության միավորը բաժանվում է ոչ թե երկու, այլ երեք *(տրիոլ)* հինգ *(կվինտոլ)*, վեց *(սեքստոլ)*, յոթ *(սեպտոլ)* և այլ մասերի: Եռամաս տակտերում հանդիպում են նաև *դուոլ* և *կվարտոլ*, այսինքն՝ երբ եռամաս տակտը բաժանվում է երկու կամ չորս մասի, սովորական երեքի փոխարեն

Ց

ՑԱԾՐ ՁԱՅՆ (ռուս. нижний голос) 1) բազմաձայն դարսվածքի երաժշտության ամենացածր ձայնը, այլ կերպ՝ *բասը*, 2) երկձայն դարսվածքի ցածր ձայնը:


ՑԱՅԳԱՆՎԱԳ, ՑԱՅԳԵՐԳ (ռուս. ноктюрн) տես՝ *նոկտյուրն:*

ՑԵԶՈՒՐԱ (լատ. caesura՝ հատում) երաժշտական ստեղծագործության դարձվածքները կամ ավելի մեծ կառուցվածքները (նախադասություններ, պարբերություններ և այլն) իրարից բաժանող այն պահը, որը հազիվ զգալի է, հազիվ նկատելի, կամ՝ ավելի երկարատև դադարի միջոցով: Ց. որոշվում են *պաուզաներով*, կառուցվածքների նմանությամբ, կադանսներով, մելոդիկ պատկերի ավարտմամբ և մի շարք այլ հատկանիշներով: Ց. իմաստավորում է երաժշտությունը և հեշտացնում նրա ընկալումը: Երաժշտական ստեղծագործության ճիշտ դարձվածավորման ու կատարման համար ց. ունի առաջնակարգ նշանակություն:

ՑԻԿԼ (հուն. kýklos՝ անիվ, շրջան) ընդհանուր թեմատիկայով միավորված երաժշտական ստեղծագործությունների շարք:

ՑԻԿԼԱՅԻՆ ՁԵՎԵՐ (հուն. kýklos-ից՝ շրջան, ռուս. циклические формы) երաժշտական ձևեր, որոնք բաղկացած են տարաբնույթ (տեմպ, կառուցվածք) մի քանի առանձին, ինքնուրույն երաժշտական ստեղծագործություններից, սակայն միավորված են մեկ ընդհանուր գաղափարական-գեղարվեստական հատկանիշով: Գործիքային ց. ձ. են՝ *սյուիտը, պարտիտան, պրելյուդների* և այլ *մանրանվագների* շարքերը (օր. Շումանի «Կառնավալը», Բաբաջանյանի «Վեց պատկերը» և այլն), երկմասանի *պրելյուդը և ֆուգան, սոնատային ցիկլիկ ձևը*, որով գրվում են *սոնատներ, սիմֆոնիաներ, կոնցերտներ, կվարտետներ, կվինտետներ* և անսամբլային այլ ստեղծագործություններ: Կան նաև երգերի, ռոմանսների և խմբերգերի շարքեր (օր. Շուբերտի, «Գեղեցկուհի ջրաղացպանուհին», Մելիքյանի «Զմրուխտին» և այլն): Ց. ձ. կարելի է համարել նաև *կանտատը:*


ՑԻՄԲԱԼ (հուն. kymbalon-ից՝ զանգակային նվագարանների նախկին անվանումը) բազմալար, մեծ մասամբ տափակ նվագարան, նվագում էին փայտյա հատուկ թա-




կիչներով, լարերին հարվածելով, երկու կլոր անցք ունի երեսին, վերապատրաստվել է XIX դ.: Նախկինում ձայները խլացվում էին նախաբազկով, իսկ ներկայումս՝ հատուկ *խլարարային (դեմպֆերային)* սարքավորումով: Ունի 35 քառակի, եռակի և կրկնակի լարեր, որոնք կազմում են *խրոմատիկ ձայնաշար, տարբեր մեծության ց.* ունեն տարբեր *ձայնածավալ*, տարածված է Հունգարիայում, Լեհաստանում, Ռումինիայում, Բելոռուսիայում, Մոլդավիայում, Ուկրաինայում և այլուր:

ՑԻՆԳԱՐԵՍԿԱ (իտ. zingaresca՝ գնչուական) գնչուական պար կամ գնչուական բնույթի գործիքային *պիես*, տեմպը՝ աշխույժ, կտրուկ, չափը՝ 2/4: Բնորոշ *ինտոնացիաները և ռիթմերը* իրենց ստեղծագործություններում օգտագործել են Բրամսը, Լիստը, Ռախմանինովը և այլ կոմպոզիտորներ:


ՑԻՆԿ (գերմ. Zink կամ Zinken) հնագույն փողային նվագարան, պարզունակ փող:



ՑԻՍՏՐԱ կամ ՑԻՏՈԼՅԱ (ֆր. cistre կամ citole) *մանդոլինի* նմանվող հնագույն կսմիթային նվագարան, 5—12 զույգ լարերով, տարածված էր արևմտաեվրոպական երկրներում, XIX դ. սկզբին իր տեղը զիջեց *կիթառին:*



ՑԻՏՐԱ (հուն. kíthara-ից՝ կիֆարա, գերմ. Zither) լարային կսմիթային հին նվագարան, նոտագրվում է երկու



նոտակիրի վրա, ջութակի և բասի բանալիներով, տարածված է մի շարք երկրներում, հատկապես Ավստրիայում և Գերմանիայում:

ՑՈՒԳ (գերմ. Zug՝ շարժում, քաշում, ձգում) տես՝ *կուլիս:*


ՈՒ

ՈՒԱՆ-ՍԹԵՓ (անգլ. one-step՝ մեկ քայլ) XX դ. սկզբին Հյուսիսային Ամերիկայում ստեղծված սալոնային պար, չափը՝ 2/4: 20-ական թ. մեծ տարածում գտավ Եվրո-



պայում: Պարում են արագ քայլքի տեմպով, *թուաթեփի* պարզեցված շարժուններով, 30-ական թ. իր տեղը զիջեց արագ *ֆոքստրոտին:*

ՈՒԴ, *ալ ուդ* (արբ. բառացի՝ փայտ) 1) արաբական հնագույն կսմիթային նվագարան, եվրոպական *լյուտնյայի նախատիպը*, 2) հայկական կսմիթային նվագարան, *լյուտնյայի* տեսակը:



ՈՒԹԵՐՈՐԱԿԱՆ ՆՈՏԱ (ռուս. восьмая нота) տես՝ *տևողությունների զույգ բաժանում:*

ՈՒԹԵՐՈՐԱԿԱՆ ՊԱՈՒԶԱ (ռուս. восьмая пауза) տես՝ *պաուզա:*

ՈՒԹՆՅԱԿ (օկտետ) ութ կատարողներից (երաժիշտ կամ երգիչ) կազմված անսամբլ, գործիքային ու. կարող են լինել նույնատիպ կազմի և խառը կազմի, նույնը՝ վոկալ ու.:

ՈՒԺԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. динамика) այն ամենի միակցությունը, ինչ առընչվում է երաժշտության ինչողության ուժգնությանը, ընդգրկում է երաժշտության մեջ կիրառվող ինչման ուժգնության աստիճանները նրանց աստիճանական կամ հանկարծակի ուժեղացումն ու թուլացումը, ինչպես նաև տարբեր տեսակի շեշտերը: Այդ ամենը նոտաներում գրի է առնվում մեծ մասամբ իտալերեն կրճատագրված բառերով և հատուկ նշաններով, որոնք կոչվում են *ուժաբանության (ուժգնության)* կամ *դինամիկայի նշաններ:* Դրանք են՝ piano pianissimo *(պիանո պիանիսսիմո,* կրճատ՝ ppp, չափազանց մեղմ), pianissimo *(պիանիսսիմո,* կրճատ՝ pp, շատ մեղմ), piano *(պիանո,* կրճատ՝ p, մեղմ), mezzo piano *(մեցցո պիանո,* կրճատ՝ mp, ոչ շատ մեղմ), mezzo forte *(մեցցո ֆորտե,* կրճատ՝ mf, ոչ շատ ուժգին), forte *(ֆորտե,* կրճատ՝ f, ուժգին) fortissimo *(ֆորտիսսիմո,* կրճատ՝ ff, շատ ուժգին), forte fortissimo *(ֆորտե ֆորտիսսիմո,* կրճատ՝ fff, չափազանց ուժգին): Երբեմն գործ են ածվում նաև չորս և հինգ piano և forte՝ pppp, ppppp, ffff, fffff: Հնչողության աստիճանական ուժեղացումը նշանակվում է crescendo *(կրեշենդո,* կրճատ՝ cresc.) կամ < նշանով, իսկ աստիճանական մեղմացումը՝ decrescendo կամ diminuendo *(դեկրեշենդո,* կամ դիմինուենդո կրճատ՝ decresc. կամ dim.) և կամ > նշանով: Անսպասելի կերպով ուժեղից թույլի կամ թույլից ուժեղի անցնելը նշանակվում է subito *(սուբիտո՝* հանկարծակի) բառով, որը դրվում է piano և forte բառերից առաջ: Առանձին հնչյունի կամ համահնչյունի հանկարծակի ուժգին շեշտելը նշանակվում է sforzando *(սֆորցանդո)* բառով, կրճատ՝ sf, ինչպես նաև > կամ △ նշաններով: Ուժգնության աստիճանը փոխելու համար հաճախ գործածվում են piu *(պյու՝* ավելի) և meno *(մենո՝* պակաս) բառերը օր. piu f *(պյու ֆորտե՝* ավելի ուժգին), meno f *(մենո ֆորտե՝* պակաս ուժգին) և այլն:

ՈՒԺԳՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. сила (громкость), ձայնի այն հատկությունը, որը կախված է հնչող մարմնի տատանման *ամպլիտուդից.* որքան մեծ (լայն) լինի *ամպլիտուդը,* այնքան ավելի ուժգին կհնչի ձայնը և ընդհակառակն: Ձայնի ու. նոտաներում գրի է առնվում հատուկ նշաններով, որոնք կոչվում են *ուժաբանության (ուժգնության)* կամ *դինամիկայի* նշաններ: Տես՝ *ուժաբանություն:*

ՈՒԺԵՂ ԺԱՄԱՆԱԿ (ռուս. сильное время) տես՝ *ուժեղ մաս:*

ՈՒԺԵՂ ՄԱՍ (ռուս. сильная доля) տ ա կ տ ի շեշտված մասը, այլ կերպ՝ ուժեղ ժամանակը:

ՈՒԿՈՒԼԵԼԵ, տես՝ *բանջո (բանջո-ուկուլելե):*

ՈՒԼԵԿԻՑ (լատ. comes, ռուս. спутник) տես՝ *ֆուգա:*

ՈՒԼԵՊՏՈՒՅՏ (ֆր. tourne, ռուս. турне) *շրջապտույտ,* առանձին արտիստների, անսամբլների, ավելի մեծ երաժշտական կամ այլ կոլեկտիվների մեկնումը ուրիշ քաղաքներ և երկրներ՝ համերգային ելույթների:

ՈՒՂԻ ՁԱՅՆԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ (ռուս. прямое голосоведение) տես՝ *ձայնատարություն* (2-րդ իմաստով):

ՈՒՂՂԱՁԻԳ (ռուս. вертикаль) մի շարք տարբեր բարձրություններ ունեցող հնչյունների զուգակցման միաժամանակության պատկերավոր անվանումը (համահնչյունների, ակորդների): Տես՝ *հորիզոնական:*

ՈՒՂՂԱՁԻԳ ՇԱՐԺԱԿԱՆ ԿՈՆՏՐԱՊՈՒՆԿՏ (ռուս. вер-

тикально-подвижной контрапункт (տես՝ *շարժական կոնտրապունկտ:*

ՈՒՆԴԵՑԻՄԱ (լատ. undecima՝ տասնմեկերորդ) 1) *դիատոնիկ գամմայի* յուրաքանչյուր ինչյունի տասնմեկերորդ աստիճանը, կամ նրանց հարաբերությունը, այսինքն՝ տասնմեկ աստիճան ընդգրկող *ինտերվալ:* Ու. *օկտավ-ընդմեջ կվարտան է (օկտավա + կվարտա), 2) ակորդի ունդեցիմային տոնի* կրճատ անվանումը:

ՈՒՆԴԵՑԻՄԱԿՈՐԴ, տես՝ *ակորդ:*

ՈՒՆԻՍՈՆ (իտ. unisono՝ միահնչյուն) միևնույն բարձրություն ունեցող և միաժամանակ հնչող երկու և ավելի հնչյունների համահնչյուն: Տարբեր *օկտավաներում* հնչող միևնույն հնչյունների համահնչյունը կոչվում է *օկտավային ու.: Ունիսոնային* կատարում է կոչվում երկու և ավելի կատարողների միաձայն երգեցողությունը, նվագը, կամ երգն ու նվագը միասին:

ՈՒՆՏԵՐՏՈՆԵՐ (գերմ. Untertöne-ից, բառացի՝ վարի հնչյուններ) միևոր եռահնչյունի գոյացումը բացատրելու համար տեսականորեն ստեղծված վարընթաց «բնական ձայնաշար», որը կառուցվում է ճիշտ *օբերտոնների ինտերվալային* հաջորդականությամբ, միայն հակառակ ուղղությամբ: Ու. իրական գոյությունը չի ապացուցված, ենթադրյալ ձայնաշարը՝ երկրորդ *օկտավայի դո*-ից:

ՈՒՏ (սոլֆեջիոյում) նախկինում այսպես էր կոչվում դո նոտան (տես՝ սոլմիզացիա), տառային նշանակումն է C կամ c:

Փ

ՓԱՅՏՅԱ ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ԳՈՐԾԻՔՆԵՐ) (ռուս. деревянные духовые (музыкальные) инструменты) սիմֆոնիկ, փողային և այլ նվագախմբերում և տարբեր անսամբլների կազմի մեջ մտնող *սուլող* և *լեզվակային* նվագարանները (գործիքները)՝ *ֆլեյտան, հոբոյը, կլարնետը, ֆագոտը*՝ իրենց տարատեսակներով: Տես՝ *փողային նվագարաններ, փողային նվագախումբ:*

ՓԱՌԱՏՈՆ (լատ. festivus-ից ուրախ, տոնական) *ֆեստիվալ,* մշակույթի և արվեստի՝ ստուգատեսի բնույթի պարբերական տոնակատարություն, որը սովորաբար տևում է մինչև տասը օր: երաժշտական փ. ժամանակ տեղի են ունենում համերգներ, օպերային և այլ ներկայացումներ, կոմպոզիտորական և կատարողական մրցույթներ և այլն: Կարող են լինել մեկ ժանրի ստեղծագործությունների փ., օր. օպերայի, էստրադային երգի և այլն, ինչպես նաև որևէ ժամանակաշրջանի կամ առանձին կոմպոզիտորի երաժշտության և այլն: Փ. խթանում են կատարողական արվեստի բարձրացմանն ու նոր երաժշտական երկերի ստեղծմանը, օգնում դասական և ժամանակակից երաժշտության պրոպագանդմանը: Բացի համամիութենական, հանրապետական, մարզային և քաղաքային փ., տեղի են ունենում նաև միջազգային փ., որոնց ընդգրկումները և կարևորությունն ավելի մեծ է, միաժամանակ նպաստում են ժողովուրդների միջև մշակութային կապերի զարգացմանը, հնարավորություն տալիս փոխադարձորեն ծանոթանալ ստեղծագործական և կատարողական նվաճումներին և այլն: Առաջին երաժշտական փ. տեղի է ունեցել Լոնդոնում, 1709 թ. և նվիրված է եղել եկեղեցական երաժշտությանը:

ՓԱՐԴԱՆԵՐ, նաև՝ *ֆարդաներ,* տես՝ *մատնաշեմեր:*

ՓԻ, *հայկական ձայնագրության* հիմնական *ձայնաշարի* (դո նոտայով սկսվող *միքսոլիդիական լադ)* առաջին հնչյունը, լրիվ անունն է՝ *փուշ:*

ՓՈԽԱԴՐՈՂ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ԳՈՐԾԻՔՆԵՐ) (ռուս. транспонирующие (музыкальные) инструменты) տես՝ *տոնայնափոխ նվագարաններ:*

ՓՈԽԱԴՐՈՒՄ (ռուս. транспозиция (транспонировка) տես՝ *տոնայնափոխություն:*

ՓՈԽԱՍԱՑ, տես՝ *սաղմոսերգու:*


ՓՈԽԱՐԻՆՈՐԴ (ռուս. дублёр) *պարտիայի* կամ *դերի* հիմնական կատարողին փոխարինող դերերգիչ կամ դերասան:

ՓՈԽԵՐԳ, նույնն է՝ *անտիֆոն:*

ՓՈԽԵՐԳՈՒԹՅՈՒՆ, նույնն է՝ *անտիֆոնային երգեցողություն:*

ՓՈՂ (իտ. tromba, ռուս. труба) նաև՝ *շեփոր,* պղնձյա փողային նվագարանների (գործիքների) խմբում ամենաբարձր հնչողություն ունեցողը, ունի գլանաձև փողանցք, որը վերջում դառնում է կոնաձև և ավարտվում ձագարաձև փողաբերանով, հայտնի է դեռևս հնագույն ժամանակներից և դարեր ի վեր եղել է բնական նվագարան (առանց *վենտիլների*): Սիմֆոնիկ նվագախմբի կազմի մեջ է մտել XVII դ. սկզբից: Մինչև *վենտիլների* ստեղծումը նվագախմբերում փողհարները (շեփորահարները) օգտագործել են տարբեր լարվածքի մի քանի փողեր, ինչ հնարավորություն է տվել նվագել մի շարք տարբեր տոնայնություններում: Հետագայում սկսեցին կիրառել *կառներ:* XVIII դ. վերջին փ. վրա հարմարեցվում են *խփասարքեր (կլապաններ),* ինչպիսիք ունեն փայտյա փողայինները, իսկ XIX դ. երկրորդ քառորդում ստեղծվեց *վենտիլավոր* փ., և դա հնարավոր դարձրեց հնչեցնել լրիվ

խրոմատիկ ձայնաշարը: Ժամանակակից փ. ունեն 3 *վենտիլ*, կան տարբեր լարվածքի փ., որոնցից ամենագործածականը *սի բեմոլ* (inB) լարվածքինն է (հնչում է գրվածից մեկ *սեկունդա* ցած), նոտագրվում է ջութակի բանալիով, իրական հնչումից մեծ *սեկունդա* վեր և որպես կանոն՝ առանց բանալիի նշանների: Փողհարներն օգտագործում են տարբեր ձևի *մեղմոցներ (սուրդինաներ)*, որոնց միջոցով փոխում են հնչերանգը, ստանում գրոտեսկային բնույթի ձայներ: Փ. տարատեսակներն են՝



փոքր կամ *պիկոլո փ.* (հնչում է փ. մեծ *տերցիա* կամ մաքուր *կվարտա* վեր), *ալտային փ.* (հնչում է փ. մեծ *տերցիա* կամ մաքուր *կվարտա* ցած), *բասային փ.* (հնչում է փ. մաքուր *օկտավա* ցած): Տարբեր կազմերի նվագախմբերում, բացի նվագակցումից, փ. հանձնարարվում է կատարել նաև մենանվագներ: Սիմֆոնիկ նվագախմբում սովորաբար օգտագործում են 2—3 փ., հիմնականում *սի բեմոլ* (in B), երբեմն էլ՝ *դո* (in C) լարվածքի: Փ. կիրառվում է նաև որպես մենակատարային նվագարան (հատկապես ջազային երաժշտության մեջ), որի համար խոշոր և մանր ձևի ստեղծագործություններ են գրել բազմաթիվ կոմպոզիտորներ:

ՓՈՂԱԲԵՐԱՆ (ռուս. раструб) մի շարք փողային նվագարանների (գործիքների) լայնացող վերջնամասը, որի ձևն ազդում է ձայնի հնչերանգի վրա:

ՓՈՂԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ռուս. духовая музыка) փողային և հարվածային նվագարաններից (գործիքներից) կազմված նվագախմբերի, անսամբլների, նաև առանձին նվագարանների համար գրված երաժշտություն:


ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ (ռուս. духовой оркестр) փողային և հարվածային նվագարաններից (գործիքներից) կազմված նվագախումբ, ինում կոչվել է *ռազմական* կամ *զինվորական* նվագախումբ, որովհետև գոյություն է ունեցել միայն զորամասերում: Փ. ն. համար ամենաբնորոշը *պղնձյա փողային նվագարաններն* են (տես), չնայած *փայտյա փողային* (տես) և *հարվածային* (տես) *նվագարանները* նվագախմբի ընդհանուր հնչողության համար ունեն նույնչափ կարևոր նշանակություն: Զինվորական փ. ն. մեջ մտնում են նաև *ազդանշանային* նվագարաններ: Փ. ն. մեծացրած կազմի մեջ մտնում են նաև *հոբոյներ, ֆագոտներ, սաքսոֆոններ, բաս-կլարնետներ, տրոմբոններ, լիտավրներ, բուբեն, տամբուրին, քսիլոֆոն, զանգակներ, տամ-տամ, եռանկյունի* և այլն:

ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ԳՈՐԾԻՔՆԵՐ) (ռուս. духовые (музыкальные) инструменты) բոլոր այն նվագարանները (գործիքները), որոնցում հնչող մարմինը հանդիսանում է այս կամ այն կերպ ձևավորված փողի (խողովակի) մեջ գտնվող օդի սյունը: Ըստ հնչեցման ձևի փ. ն. բաժանվում են երեք խմբի՝ ա) *սուլող նվագարաններ*, որոնցում օդի սյան տատանումները առաջանում են, երբ փչելու հետևանքով օդի հոսանքը ուժեղ դիպչում է հատուկ անցքի կարծր եզրին *(ֆլեյտաներ, սրինգ, բլուլ*, և այլն), բ) *լեզվակային նվագարաններ*, որոնցում օդի սյան տատանումներն առաջանում են միակի կամ կրկնակի լեզվակի (եղեգնաթիթեղ, պիպիչ) տատանումների հետևանքով, օր. *միակի լեզվակային՝ հոբոյները, ֆագոտները, դուդուկը, զուռնան* և այլն, *կրկնակի լեզվակային՝ կլարնետները, սաքսոֆոնները*, գ) *շրթնային նվագարաններ*, որոնցում օդի սյան տատանումներն առաջանում են բերանոցին *(մունդշտուկին)* սեղմված, նվագողի լարված և փակ շրթունքների տատանման հետևանքով՝ *կոռնետները, փողերը, ալտերը, բարիտոնը, տրոմբոնը* և այն: Սուլող և լեզվակային նվագարաններն այլ կերպ կոչվում են *փայտյա փ. ն.* (թեև շատերն այժմ պատրաստվում են մետաղից, ապակուց և այլ նյութերից) իսկ շրթնայինները՝ *պղնձյա փ. ն.*: Վերջիններն իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝ ա) *լրիվ նվագարաններ*, որոնցով կարելի է հնչեցնել *բնական ձայնաշարի* հնչյունները, սկսած առաջինից, բ) *ոչ լրիվ նվագարաններ*, որոնցով անհնար է հնչեցնել *բնական ձայնաշարի* սկզբի մեկ կամ մի քանի հընչյունները: Փայտյա և պղնձյա մի ամբողջ շարք փ. ն. մտնում են սիմֆոնիկ, ջազային, էստրադային նվագախմբերի, ինչպես նաև խառը անսամբլների կազմի մեջ, դրանցից կազմվում են փողային նվագախմբեր և տարբեր անսամբլներ (քառյակներ, հնգյակներ և այլն), ի վերջո, օգտագործվում են որպես մենակատարային նվագարաններ: Փ. ն. շարքին է պատկանում նաև երգեհոնը և նման փողավոր մի շարք նվագարաններ, որոնց մեջ օդի հոսանքն առաջանում է փուքսերի միջոցով: Փ. ն. են համարվում նաև մի քանի այնպիսի նվագարաններ, որոնք հնչում են ներփչվող օդի միջոցով մետաղյա հատուկ լեզվակների տատանման հետևանքով (շրթհարմոն, ակորդեոն, բայան և այլն):

ՓՈՐՁ (ռուս. репетиция) կատարող արտիստների (երգիչներ, երաժիշտներ, նրանցից կազմված անսամբլներ, նվագախմբեր) ելույթները նախապատրաստող գործողություններից յուրաքանչյուրը, գերակշիռ տեղ են գրավում կրկնումները, որոնց ընթացքում վերջնականորեն ձևավորվում և ավելի կատարյալ է դառնում մեկնաբանումը, կատարումը: Երբ ստեղծագործության կատարմանը մասնակցում են սիմֆոնիկ նվագախումբ, երգչախումբ և մենակատարներ (օպերա, օրատորիա, կանտատա և այլն) փ. կարող են լինել ա) *մասնակի*, օր. նվագախմբի, երգչախմբի և մենակատարների առանձին-առանձին փ.

նույնիսկ երգչախմբի և նվագախմբի առանձին ձայների փ. և բ)ը ն դ հ ա ն ու ր, երբ կատարվող ստեղծագործությունը փորձվում է ամբողջությամբ, բոլորի մասնակցությամբ:

ՓՈՓՈԽԱԿԱՆ ԼԱԴ (ռուս. переменный лад) լ ա դ, որում առանց հնչյունակազմի փոփոխման, փոխվում է նրա տ ո ն ի կ ա ն (կատարվում է զ ա ր տ ու ղ ու թ յ ու ն), մեծ մասամբ՝ հակադրում: Հակադրվում են գլխավորապես զուգահեռ տոնայնությունները, որոնք միանալով, կազմում են մեկ ընդհանուր ձայնահամակարգ, որում այդ երկու տոնայնությունների տ ո ն ի-



կ ա ն ե ր ը սովորաբար ունենում են համարժեք նշանակություն: Այդպիսի փ. լ. կոչվում է զուգահեռ-փոփոխական լ ա դ: Ժողովրդական և պրոֆեսիոնալ երաժշտության մեջ հանդիպում են նաև այլ տիպի փ. լ. օր. միացվում են կ վ ա ր տ ա – կ վ ի ն տ ա յ ի ն փոխհարաբերության երկու մ ա ժ ո ր տոնայնություններ կամ երկու համանուն տոնայնություններ, որում տ ո ն ի կ ա ն մնում է անփոփոխ, փոխվում է միայն լ ա դ ը և այլն:

ՓՈՓՈԽԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐ (ռուս. переменные функции) *երկրորդական ֆունկցիաներ, լադի* աստիճանների կամ նրանց վրա կառուցված *ակորդների* ֆունկցիաների (դերի, նշանակման) ժամանակավոր փոփոխումը, որի հետևանքով ի հայտ է գալիս նոր *տոնիկա*, որը սակայն կրում է երկրորդական բնույթ՝ չի ոչնչացնում հիմնական *տոնիկայի* նշանակությունը, որպես տոնայնական կենտրոնի, դեպի որը վերջին հաշվով ձգտում են նաև բոլոր ժամանակավոր *տոնիկաները:* Ֆունկցիաների փոփոխականությունը կախված է հնչյունների կամ *ակորդների* հաջորդականությունից և ռիթմիկ դրությունից. յուրաքանչյուր *կոնսոնանսող ակորդ տակտի* ուժեղ մասում, հատկապես երբ ավելի տևական է կամ կրկնվում է, ձեռք է բերում ժամանակավոր *տոնիկայի* նշանակություն, որի համար մնացած *ակորդները* ձեռք են բերում *դոմինանտայի* կամ *սուբդոմինանտայի* նշանակություն: Երբ փ. ֆ. ամրապնդվում է, տեղի է ունենում *զարտուղություն (մոդուլյացիա):* Փ. ֆ. տեսությունը հիմնավորապես մշակել է սովետական երաժշտագետ Յու. Տյուլինը: Տես՝ *լադային ֆունկցիաներ:*

ՓՈՓՈԽՎՈՂ ՉԱՓ (ռուս. переменный размер) տես՝ *չափ:*


ՓՈՔՐԱՑՐԱԾ ԵՌԱՀՆՉՅՈՒՆ (ռուս. уменьшенное трезвучие) *եռահնչյուն*, որի կառուցվածքն է՝ հիմքից փոքր *տերցիա*, ավելացրած փոքրացրած *կվինտա:*



Կառուցվում է՝ *հարմոնիկ մաժոր* և *հարմոնիկ մինոր լադերի* VII և II աստիճանների վրա, հանդիսանում է *դիսոնանսող ակորդ:*


ՓՈՔՐԱՑՐԱԾ ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐ (ռուս. уменьшенные интервалы) *ինտերվալներ*, որոնք *խրոմատիկ կիսատոնով* ավելի փոքր են, քան մաքուր և փոքր *ինտեր-*





վալները: Պրիմալից բացի, մնացած բոլոր *ինտերվալները* կարող են լինել փոքրացրած: Փ. ի. լուծվելիս նեղանում են:

ՓՈՔՐԱՑՐԱԾ ՍԵՊՏԱԿՈՐԴ (ռուս. уменьшенный септаккорд) *սեպտակորդ*, որը կազմված է հիմքից՝ փոք-



րացրած *եռահնչյունից* և փոքրացրած *սեպտիմալից*, կառուցվում է *հարմոնիկ մաժորի* և *հարմոնիկ մինորի* VII աստիճանների վրա:

ՓՈՔՐԱՑՈՒՄ (ռուս. уменьшение) *թեման* կամ *մոտիվը* կրկնելիս, դրանք կազմող հնչյունների և *պաուզաների* տևողությունների փոքրացումը սովորաբար 2 կամ 4 անգամ: Տես՝ *իմիտացիա, ֆուգա:*

ՓՈՔՐ ԵՌԱՀՆՉՅՈՒՆ (ռուս. малое трезвучие) նույնն է՝ *մինոր եռահնչյուն:*

ՓՈՔՐ ԹՄԲՈՒԿ (իտ. tamburo, tamburo piccolo, ռուս. малый барабан) *ռազմական թմբուկ*, ձայնի որոշակի բարձրություն չունեցող, բարձր ձ ա յ ն ա ս ա հ մ ա ն ի հարվածային նվագարան՝ մեծ թմբուկի շատ փոքր տարատեսակը: Վրայից ձգված են սովորաբար աղիքե կամ կլապիտոնապատ 2 — 4 լար, որոնք փ. թ. ձայնին հաղորդում են դղզացող երանգավորում: Բացի արագ, կըրկնակի, եռակի և այլ հարվածներից, փ. թ. շատ լավ է ստացվում այսպես կոչված *կոտորակումը*, որն իրենից ներկայացնում է չափազանց արագ *տրեմոլո:* Նոտագրվում է միագծի վրա, օգտագործվում է սիմֆոնիկ, փողային, ջազային, էստրադային և այլ նվագախմբերում և անսամբլներում:



ՓՈՔՐ ԿԱՄ ՄԻՆՈՐ ԵՌԱՀՆՉՅՈՒՆ (ռուս. малое или минорное трезвучие) տես՝ *եռահնչյուն:*

ՓՈՔՐ ԿԼԱՐՆԵՏ (ռուս. малый кларнет) նույնն է՝ *կլարնետ-պիկկոլո*, տես՝ *կլարնետ:*

ՓՈՔՐ ՀՈԲՈՅ (ռուս. малый гобой) նույնն է՝ *հեկկել-ֆոն-պիկկոլո:*

ՓՈՔՐ ՄԱԺՈՐ ՍԵՊՏԱԿՈՐԴ (ռուս. малый мажорный септаккорд) տես՝ *սեպտակորդ:*

ՓՈՔՐ ՄԻՆՈՐ ՍԵՊՏԱԿՈՐԴ (ռուս. малый минорный септаккорд) տես՝ *սեպտակորդ:*

ՓՈՔՐ ԶԳՏՈՂ ՍԵՊՏԱԿՈՐԴ (ռուս. малый вводный септаккорд) *բնական մաժոր լադի* VII աստիճանի, *հարմոնիկ մաժորի* և *մինորի* II աստիճանի վրա կառուցված *սեպտակորդ* (ըստ կառուցվածքի՝ կիսափոքրացած *սեպտակորդ*): Լուծվում է ըստ *լադային ձգողականության մաժոր լադի տոնիկային եռահնչյունի* մեջ երկու ձևով՝ ա) *կրկնապատկված տերցիային տոնով* (եթե փ. ձ. ս. տերցիային տոնը գտնվում է *սեպտիմային տո-*



նից ցած, ապա *զուգահեռ կվինտաներից* խուսափելու համար՝ շարժվում է *սեկունդա* վեր, բ) *կրկնապատկված հիմնական տոնով* (եթե փ. ձ. ս. *տերցիային տոնը* գըտնըվում է *սեպտիմային տոնից* վեր, ապա նա կարող է շարժվել *սեկունդա* վար): Տես՝ *սեպտակորդ, փոքրացրած սեպտակորդ:*

ՓՈՔՐ ՍԵՊՏԱԿՈՐԴՆԵՐ (ռուս. малые септаккорды) *սեպտակորդներ*, որոնց *սեպտիմային տոնը* հիմնական տոնի հետ կազմում են *փոքր սեպտիմա*, դրանք են *փոքր մաժոր սեպտակորդը, փոքր մինոր սեպտակորդը* և *կիսափոքրացած սեպտակորդը:* Տես՝ *սեպտակորդ:*

ՓՈՔՐ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ (ռուս. малый симфонический оркестр) տես՝ *սիմֆոնիկ նվագախումբ:*

ՓՈՔՐ ԵՎ ՄԵԾ ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐ (ռուս. малые и большие интервалы) պարզ և բաղադրովի, փոքր և մեծ *սեկունդաների, տերցիաների, սեքստաների* և *սեպտիմաների* ընդհանուր անվանումը: Տես՝ *ինտերվալ, բարդ ինտերվալներ:*

ՓՈՔՐ ՕԿՏԱՎԱ (ռուս. малая октава) տես՝ *օկտավա* (2-րդ իմաստով):

ՓՈՔՐ ՖԼԵՅՏԱ (ռուս. малая флейта) նույնն է՝ *պիկկոլո-ֆլեյտա:*

ՓՐԻԳԻԱԿԱՆ ԼԱԴ (ռուս. фригийский лад) տես՝ *միջնադարյան լադեր:*

ՓՐԻԳԻԱԿԱՆ ՍԵԿՈՒՆԴԱ (ռուս. фригийская секунда) 1) *փռյուգիական լադի* I և II աստիճանների միջև ընկած փոքր *սեկունդան*, 2) *բնական մինոր լադի* իջեցրած II աստիճանը:

ՓՐԻԳԻԱԿԱՆ ՏԵՏՐԱԽՈՐԴ (ռուս. фригийский тетрахорд) տես՝ *տետրախորդ:*

«ՓՐԿՈՒԹՅԱՆ ՕՊԵՐԱ» XVIII դ. վերջի ֆրանսիական հեղափոխության ժամանակաշրջանի օպերայի ժանր: Փ. օ. իրար մոտեցրեց ֆրանսիական օպերայի երկու ավանդական ձյուղերը՝ քնարական ողբերգությունը և կոմիկական օպերան, նշանակալից դեր խաղաց օպերային արվեստի մեջ ռեալիզմի զարգացման, ժանրի դեմոկրատացման գործում: Փ. օ. կիրառվեցին *լեյտմոտիվներ* և մտցվեց *մելոդրամայի* հնարը:

ՓՈՒՇ տես՝ *հայկական ձայնագրություն:*


ՓՈՒՔՍ (ռուս. мехa) 1) փողային և լեզվակային նվագարաններում հարմարանք օդի մղման համար, որի շիթն սկսում է տատանել ձայնաղբյուրը, 2) մեխանիկական դաշնամուրի մեջ շարժական մեխանիզմը և պնևմատիկ սիստեմն աշխատեցնող հարմարանք, 3) *պարկապզուկների*՝ կենդանու կաշվից պատրաստված պարկը՝ օդի համար:

ՓՈՒՔՍԱԴԱՇՆԱԿ (ռուս. фисгармония) տես՝ *ֆիսհարմոն:*

Ք

ՔԱՅԼԵՐԳ (ռուս. марш) շարքով քայլելու համար նախատեսված եռանդուն և ռիթմիկ առումով ճշտորոշ երաժշտություն (120 հարված մեկ րոպեում), չափը՝ 2/4, 4/4, ¢ , 6/8, սովորաբար ունի եռամաս ձև, որի եզրամասերին հակադրվում է երգային բնույթի միջին մասը *(տրիոն)*: Ք. ռազմական երաժշտական ժանր է, հիմնականում կատարում է փողային նվագախումբը: Կան շարային ք. հետևյալ տարատեսակները՝ *ռազմերթի* կամ *երթի ք., զորահանդեսային ք. հանդիսակարգային ք., դիմավորման ք., զորասյունային ք., շեփորաքայլերգ, սգո ք.* կամ *թաղման ք.*: Հաճախ ք. տալիս են անվանումներ, օր. «Տանկիստների ք.»: Ժանրը լայնորեն օգտագործված է սիմֆոնիկ, օպերային, բալետային, թատերական երաժշտության մեջ: Ք. ռիթմով և բնույթով են գրված բազմաթիվ երգեր, խմբերգեր և այլն:

ՔԱՆՈՆ, հայկական ազգային հինավուրց նվագարան: Կսմիթային երկրաչափական սեղանի ձև ունեցող տափակ *հնչարկղի* երկարությունը 80 — 90 սմ է, լայնությունը՝ 38 — 40 սմ, սովորաբար նվագում են աջ և ձախ ձեռքերի ցուցամատներին հագցված հատուկ մատնոցներով, որոնց ծայրերին *հարիչներ (մեդիատորներ)* են



ամրացված: Ք. ձայնն ունի ուրույն գեղեցկություն և փափկություն, կիրառվում է որպես մենակատարային, անսամբլային և նվագախմբային նվագարան, տարածված է Մերձավոր և Միջին Արևելքի մի շարք երկրներում:

ՔԱՌԱԿԻ ԿԱԶՄ (ռուս. четверной состав) տես՝ *սիմֆոնիկ նվագախումբ:*

ՔԱՌԱԿԻ ԿՈՆՏՐԱՊՈՒՆԿՏ (ռուս. четверной контрапункт) քառաձայնում կիրառված *ուղղաձիգ-շարժական կոնտրապունկտ*, այսինքն չորս այնպիսի մեղեդիների զուգակցումը, որոնցից յուրաքանչյուրը *օկտավային* տեղափոխման միջոցով կարող է գտնվել և առաջին, և երկրորդ, և երրորդ, և չորրորդ ձայներում: Օգտագործվում է խիստ հազվադեպ: Տես՝ *կրկնակի կոնտրապունկտ, եռակի կոնտրապունկտ:*

ՔԱՌԱԿԻ ԿՈՆՑԵՐՏ (ռուս. четверной концерт) *կոնցերտ* չորս մենակատարների համար (նվագախմբի մասնակցությամբ կամ առանց դրա) օր. Վիվալդիի Քառակի կոնցերտը 4 ջութակի համար *(սի մինոր)*, որը Յ. Ս. Բախը փոխադրել է 4 կլավեսինի համար, *լա մինոր* տոնայնությամբ):

ՔԱՌԱԿԻ ՖՈՒԳԱ (ռուս. четверная фуга) տես՝ *ֆուգա:*

ՔԱՌԱՀՆՉՅՈՒՆ (ռուս. четверозвучие) տես՝ *սեպտակորդ:*

ՔԱՌԱՉԱՅՆ ԴԱՐՁՎԱԾՔ (ռուս. четырехголосное сложение) չորս ձայնից գոյացած բազամաձայնություն, *հարմոնիայի* ուսումնական դասընթացի հիմքում ընկած է ք. դ., որտեղ ձայները, քառաձայն երգչախմբի սկզբունքով, կոչվում են *բաս* (ցածից առաջինը) ապա՝ *տենոր, ալտ, սոպրանո:* Վերևի ձայնը՝ *սոպրանոն* անվանվում է նաև մեղեդի:

ՔԱՌՅԱԿ, չորս կատարողներից (երաժիշտ կամ երգիչ) բաղկացած անսամբլ, գործիքային ք. կարող են լինել նույնատիպ կազմի (լարային, փայտյա, փողային, պղընձայա փողային) և խառը կազմի: Ամենատարածվածը լարային ք. է (1-ին ջութակ, 2-րդ ջութակ, ալտ և թավջութակ): Վոկալ ք. կարող են լինել կանանց, տղամարդկանց և խառը, որոնք կարող են ունենալ կամ չունենալ գործիքային կամ երգչախմբային նվագակցություն և ձայնակցություն:

ՔԱՌԵՐԳՈՒԹՅՈՒՆ (հուն. tetralogia, tetra՝ չորս և logos՝ խոսք) չորս ստեղծագործությունից կազմված երաժշտական-բեմական ստեղծագործությունների շարք, որոնք միավորված են մեկ ընդհանուր գաղափարով, օր. Վագների «Նիբելունգների մատանին» օպերային ք.:


ՔԱՌՈՐԴԱԿԱՆ ՆՈՏԱ (ռուս. четвертная нота) տես՝ *տևողությունների գույգ բաժանում:*

ՔԱՌՈՐԴԱԿԱՆ ՊԱՈՒԶԱ (ռուս. четвертная пауза) տես՝ *պաուզա:*

ՔԱՌՈՐԴԱՏՈՆ ՍԻՍՏԵՄ (ռուս. четвертитоновая система) արհեստական ձայնային սիստեմ, հիմնված *օկտավան* 24 հավասար քառորդատոն *ինտերվալների* բաժանման վրա (12 կիսատոնից կազմված սովորական սիստեմի փոխարեն):

ՔՅԱՄԱՆԻ, նաև՝ *քամանի*, հայկական ժողովրդական աղեղնային նվագարան, ունի նեղ և երկարուկ ուղղանկյուն *հնչարկղ*, շատ կարճ *վզիկ*, նվագում են ջութակի աղեղի նման աղեղով: Ք. հաճախ *սազի* փոխարեն օգտագործել և օգտագործում են աշուղները՝ մեծանուն Ջիվանին ք. է նվագել: Մեր ժամանակներում, 20-ական թ. Վ. Բունին ստեղծեց կվարտային լարվածք ունեցող ք. չորս տարատեսակ *(պրիմա, ալտ, բաս, կոնտրաբաս)*, որոնք մտնում էին նրա կազմակերպած արևելյան սիմֆոնիկ նվագախմբի կազմի մեջ, ներկայումս հանդիպում են ք. ավելի կատարյալ տեսակները:


ՔՅԱՄԱՆՉԱ, նաև՝ *քամանչա*, լարային աղեղնային ժողովրդական նվագարան, նվագում են աղեղով, սակայն ուրույն տեխնիկայով. աղեղը չեն տեղափոխում մեկ լարից մյուսին, ինչպես ջութակ նվագելիս, այլ կատարողը ք. շրջում է այնպես, որ ցանկացած լարը քավի շարժվող աղեղին: Նախկինում ք. ուներ երկու կամ երեք լար և




կվարտային լարվածք. XX դ. սկզբից դարձավ հիմնականում քառալար նվագարան, որը լարվում էր ըստ կատարվող ստեղծագործության *լադի*, իսկ հետագայում սահ-

մանվեց կվինտային լարվածքը (վերապատրաստումն իրականացրեց հայ նշանավոր քյամանչահար Սաշա Օգանեզաշվիլին (Ա. Հովհաննիսյան) 1920, 30-ական թ. Վ. Բունին ստեղծեց ք. չորս տարատեսակներ *(պրիմա, ալտ, թավջութակ, կոնտրաբաս)*, որոնք մտնում էին նրա կազմակերպած արևելյան սիմֆոնիկ նվագախմբի կազմի մեջ: Ք. հնագույն նվագարան է, տարածված Անդրկովկասում, Մերձավոր և Միջին Արևելքի մի շարք երկրներում, ինչպես նաև՝ քիչ ձևափոխված և *գիջակ* անվան տակ՝ Թուրքմենիայում, Տաջիկստանում, Ուզբեկստանում: Կիրառվում է որպես մենակատարային, անսամբլային և նվագախմբային նվագարան, մըտնում է *սազանդարների* եռյակի մեջ *(թառ, քյամանչա, դափ)*:

ՔՆԱՐ (հուն. lýra) Հին Հունաստանում՝ լարային կսմիթային նվագարան, միաժամանակ՝ երաժշտության խորհրդանիշը: Ք. դասական տիպը քառալար է, XV — XVIII դդ. Արևմտյան Եվրոպայում տարածված էր բազմալար աղեղնային ք.: Ուկրաինայում կամ Բելոռուսիայում ժողովրդական թափառաշրջիկ երաժիշտների ք. նույնպես լարային-աղեղնային է, ձայնի արտաբերման համար պըտըտվող անիվով, կամ սկավառակով, երբեմն լարերը սեղմելու համար ստեղներով: Ք. ձայնաշարը *խրոմատիկ է, ձայնածավալը* կախված է փայտաձողիկների քանակից, նոտագրը-





վում է ջութակի բանալիով (երբեմն՝ իրական հնչումից մեկ *օկտավա* ցած), նվագում են երկու փոքրիկ գդալանման փայտիկներով: Ք. մենակատարային, նաև անսամբլային և նվագախմբային նվագարան է, ավելի հաճախ կիրառվում է էստրադային և ջազային նվագախմբերում: Ժամանակակից ք. երբեմն ունենում են խողովակաձև ձայնադարձիչներ, ինչպես *վիբրաֆոնը:*

O

ՕԲԱԴ (ֆր. aubade, aube-ից՝ այգաբաց, լուսաբաց) 1) *տրուբադուրների* և *տրուվերների* այգերգ, առավոտյան երգ, *սերենադ*, որը տարբերվում է երեկոյան *սերենադից*, 2) հեգնական իմաստով՝ *կատվահամերգ:*

ՕԲԵՐԵԿ (լեհ. oberek) լեհական ժողովրդական զույգ պար 3/4 կամ 3/8 չափով, արագ *տեմպով*, սովորաբար շեշտվում է *տակտի* երկրորդ, երրորդ մասը: Ստեղծվել է Կույավիայում, հաճախ կատարվում է դանդաղ *կույավիակից* հետո, պարելիս համապատասխան տեղերում ռիթմն ընդգծվում է ոտքերի դոփյունով: Շոպենն իր *մազուրկաներում* հաճախ է օգտագործել օ.: Կոչվում է նաև՝ *օբերտաս:*

ՕԲԵՐՏՈՆՆԵՐ (գերմ. Obertöne, բառացի՝ վերին հնչյուններ) այլ կերպ *մասնակի հնչյուններ, կոմբինացիոն տոներ, համակցական հնչյուններ, հարմոնիկ մասնահնչյուններ.* տարբեր բարձրություն ունեցող այն բազմաթիվ հնչյունները, որոնց համակցությունից գոյանում է որևէ մեկ ձայն: Հնչյունը, (ձայնը) բարդ կազմություն ունի՝ բաղկացած է մեկ հիմնական և բազմաթիվ լրացուցիչ հնչյունների միասնությունից: Լրացուցիչ հնչյուններն ավելի բարձր են, քան հիմնականը, այստեղից էլ՝ օ. անվանումը: Օ. հաջորդականության կարգն ըստ բարձրության կոչվում է *բնական ձայնաշար:*



Կոնտրօկտավայի դո հնչյունի *բնական ձայնաշարը:* Հիմնական հնչյունն ընդունված է համարակալել որպես առաջին օբերտոն: Օ. համարները ցույց են տալիս, թե հնչող մարմնի (լարի) որերորդ մասի տատանումներն են տալիս այս կամ այն օ., կամ որ նույնն է՝ թե օ. յուրաքանչյուր տատանումների քանակը (հաճախականությունը) քանի անգամ է ավել հիմնականից (առաջինից): Օ. կախված է ձայնի հնչերանգը: Բնական ձայնաշարով է բացատրվում *ակորդների տերցիային* կառուցվածքը և առաջին հերթին՝ *մաժոր եռահնչյունի և փոքր մաժոր սեպտակորդի (դոմինանտսեպտակորդի)* գոյացումը, *ակորդներ*, որոնք հարմոնիկ

մտածողության հիմքն են կազմում: Տես՝ *ունտերտոներ բնական նվագարաններ, ֆլաժոլետներ:*

ՕԲԼԻԳԱՏՈ (իտ. obligato, լատ. obligatus-ից՝ անփոփոխ, պարտադիր) 1) անսամբլային երաժշտության մեջ՝ այն նվագարանը (գործիքը), որի մասնակցությունը նվագին պարտադիր է և որը չի կարողանում փոխարինվել այլ նվագարանով: Այն նվագարանները, որոնց մասնակցությունը նվագին պարտադիր չէ, նշվում են ad libitum (ըստ ցանկության) բառով, 2) XVII — XVIII դդ. օպերաներում, օրատորիաներում, կանտատներում՝ մենակատարող նվագարանի *պարտիան*, որով նվագակցում էին մեներգիչներին, մեներգային արիաներ կատարելիս:

ՕԴԱ (հուն. ode՝ գովերգ) տես՝ *ներբող:*

ՕԺԱՆԴԱԿ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ (ռուս. побочные ступени) տես՝ *գլխավոր աստիճաններ:*

ՕԺԱՆԴԱԿ ԳԾԵՐ (ռուս. добавочные линии) տես՝ *հնգագիծ:*

ՕԺԱՆԴԱԿ ԴՈՄԻՆԱՆՏՆԵՐ (ռուս. побочные доминанты) բացի I աստիճանից, *լադի* մնացած բոլոր այն աստիճանների *դոմինանտները*, որոնց վրա կառուցվում են *մաժոր* կամ *մինոր եռահնչյուններ*, այսինքն. *մաժորում*՝ II, III, IV, V, VI, *մինորում*՝ III, IV, V, VI, VII աստիճանների *դոմինանտները:* Օ. դ. վերցվում են *դոմինանտային ֆունկցիային* պատկանող բոլոր *ակորդների* ձևով: Որևէ աստիճանի օ. դ. լուծվում են այն նույն աստիճանի մեջ ճիշտ այնպես, ինչպես *լադի* հիմնական *դոմինանտները տոնիկայի* մեջ: *Դոմինանտայի* (V աստիճանի) համար վերցված *դոմինանտան* կոչվում է *կրկնակի դոմինանտա:*

ՕԺԱՆԴԱԿ ԵՌԱՀՆՉՅՈՒՆՆԵՐ (ռուս. побочные трезвучия) տես՝ *գլխավոր եռահնչյուններ:*

ՕԺԱՆԴԱԿ ԹԵՄԱ (ռուս. побочная тема) *սոնատային ալլեգրոյի օժանդակ պարտիայի թեման*, որը շարադրվում է օժանդակ տոնայնության մեջ:

ՕԺԱՆԴԱԿ ՀՆՉՅՈՒՆ (ռուս. вспомогательный звук) *ակորդային տոնից սեկունդա* վեր կամ վար գտնվող ոչ ակորդային հնչյունը, օ. հ. հանդես են գալիս *տակտի* թե թույլ, թե ուժեղ մասերում (մի քանի տեսաբաններ տ ա կ տ ի ուժեղ մասում գտնվող օ. հ. դիտում են որպես *չնախապատրաստված հապաղում):* Լինում են նաև *չնախապատրաստված (թռիչքային) օ. հ.:* Օ. հ. լինում են *դիատոնիկ* (եթե *լադի* հիմնական աստիճաններն են) և *խրոմատիկ* (եթե ձևափոխված աստիճաններն են), կիրառվում են նաև երկու, երեք, չորս ձայներում միաժամանակ: Տես՝ *ֆիգուրացիա:*

ՕԺԱՆԴԱԿ ՆՈՏԱ (ռուս. вспомогательная нота) նույնն է՝ *օժանդակ հնչյուն:*


ՕԺԱՆԴԱԿ ՊԱՐՏԻԱ (ռուս. побочная партия) այն *պարտիան*, որը *սոնատային ձևի էքսպոզիցիայում* այս կամ այն չափով հակադրվում է *գլխավոր պարտիային:* Օ. պ. ամենակարևոր և պարտադիր հատկանիշը օժանդակ տոնայնության մեջ շարադրվելն է (բացառություն է կազմում Շոպենի մի մինոր դաշնամուրային կոնցերտի I մասը), օ. պ. *թեման* կարող է համարյա ամբողջովին համընկնել *գլխավոր պարտիայի թեմայի* հետ, սակայն շարադրվել այլ տոնայնության մեջ, օ. պ. *թեման* կարող է տարբերվել *գլխավոր պարտիայի թեմայից* ոչ միայն տոնայնությամբ, այլև իր մեղեդային գծապատկերով, բնույթով: Նման օ. պ. *թեմաները*, ի տարբերություն *գլխավոր պարտիաների թեմաների*, մեծ մասամբ ունենում են ավելի հանգիստ, հավասարակշիռ, երբեմն քնարական բնույթ: *Տեմպի* տեսակետից օ. պ. նույնպես կարող է հակադրվել *գլխավոր պարտիային*, սակայն կարող է նաև չհակադրվել և պահպանել *գլխավոր պարտիայի տեմպը*, ինչպես օրինակ վիեննական դասականների և մի շարք այլ կոմպոզիտորների ստեղծագործություններում: Հաճախ օ. պ. բաղկացած է լինում երկու և ավելի *թեմաներից* (հազվադեպ՝ երեքից ավելի), որոնք նույնպես կարող են հակադրվել միմյանց: *Գլխավոր պարտիայի* համեմատությամբ օ. պ. մեծ մասամբ ավելի ծավալուն է, նրան հաջորդում է *եզրափակիչ պարտիան*, որով և ավարտվում է *էքսպոզիցիան:*

ՕԺԱՆԴԱԿ ՍԵՊՏԱԿՈՐԴՆԵՐ (ռուս. побочные септаккорды) *լադի* I, III, IV, VI աստիճանների վրա կառուցված *սեպտակորդներն*՝ իրենց շրջվածքներով, որոնք ֆունկցիոնալ տեսակետից հստակ չլինելու պատճառով հազվադեպ են օգտագործվում ինքնուրույն: Օ. ս. ավելի հաճախ հանդիպում են *դիատոնիկ սեկվենցիաներում*, այդ պատճառով հաճախ կոչվում են *սեկվենցակորդներ:*

ՕԺԱՆԴԱԿ ՍՈՒԲԴՈՄԻՆԱՆՏՆԵՐ (ռուս. побочные субдоминанты) բացի *լադի* I աստիճանից, այն աստիճանի *սուբդոմինանտները*, որոնց վրա կառուցվում են *մաժոր* կամ *մինոր* եռահնչյուններ, այսինքն՝ *մաժորում*՝ II, III, IV, V, VI, *մինորում*՝ III, IV, V, VI, VII աստիճանների *սուբդոմինանտները:* Օ. ս. վերցվում են *սուբդոմինանտային* ֆունկցիային պատկանող բոլոր ակորդների ձևով: Որևէ աստիճանի օ. ս. ավելի հաճախ անցնում է նույն աստիճանի օժանդակ *դոմինանտան*, ապա այդ աստիճանը (օժանդակ *տոնիկա):* *Լադի* IV աստիճանի համար վերցված *սուբդոմինանտան* կոչվում է *կրկնակի սուբդոմինանտա:*

ՕԺԱՆԴԱԿ ՏՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ (ռուս. побочная тональность) տես՝ *գլխավոր տոնայնություն:*

ՕԿԱՐԻՆԱ (իտ. ocarina՝ սագիկ) *ֆլեյտայի* նման սուլող փողային նվագարան, պատրաստվում է կա-



վից կամ ճենապակուց, ունի 7 — 10 նվագանցքեր, ձայնաշարը *դիատոնիկ* է, կան տարբեր մեծության և ձայնածավալի օ., նաև՝ *ցուգ* և *խփասարքեր* ունեցող օ.:

ՕԿՏԱՎԱ (լատ. octava՝ ութերորդ) 1) *դիատոնիկ գամմայի* յուրաքանչյուր հնչյունից հաշված ութերորդ աստիճանը, կամ նրանց հարաբերությունը, այսինքն՝ ութ աստիճան ընդգրկող *ինտերվալ*, մաքուր օ. (նշանակվում է 8 թվանշանով) կամ 6 տոն, 2) *հավասարաչափ տեմպերացված ձայնաշարի* մի հատվածը, որն ընդգրկում է 12 տարբեր բարձրություն ունեցող ձայներ, *դո* նոտայից մինչև *սի* նոտան ներառյալ: Դաշնամուրային ձայնաշարն ընդգրկում է 2 թերի և 7 լրիվ օ., որոնցից յուրաքանչյուրն ունի իր անունը և նշանակման ձևը:

ՕԿՏԱՎԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՆՈՒՄ (ռուս. октавное транспонирование կամ октавная транспозиция) նույնն է՝ *օկտավային փոխադրում:*

ՕԿՏԱՎԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՆՇԱՆ (ռուս. знак переноса на октаву) նաև՝ *օկտավային տեղափոխության նշան*, նշան, որը հնարավոր է դարձնում երաժշտական *ձայնաշարի* ամենաբարձր և ամենացածր հնչյունները գրի առնել, օգտագործելով համեմատաբար ավելի քիչ *օժանդակ գծեր*, իրենից ներկայացնում է 8 թվանշանը՝ կետագծով. 8...: Երբ այս նշանը դրվում է նոտաների վերևից, դրանք կատարվում են մեկ *օկտավա* վեր, հակառակը՝ մեկ *օկտավա* վար: Նույն սկզբունքով երբեմն օգտագործում են *երկօկտավային փոխադրման նշան*, որն իրենից ներկայացնում է 15 թվանշանը՝ կետագծով. 15..., և որի առկայությամբ նոտաները կատարվում են երկու *օկտավա* վեր կամ վար:

Կիտոպրոց.7 Ձայների փոխադրումը մեկ օկտավա վեր կամ վար (օժանդակ գծերի կրճատման համար)



ՕԿՏԱՎԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄ (ռուս. октавное транспонирование) հնչյունների տեղափոխումը նոտաներով գրվածից մեկ *օկտավա* վեր կամ վար: Կան նվագարաններ (գործիքներ), որոնք հնչում են գրվածից մեկ *օկտավա* վեր, օր. պիկկոլո-ֆլեյտան, զանգակները և այլն, և մեկ *օկտավա* վար, օր. կոնտրաբասը, կոնտրաֆագոտը, լիտավրը և այլն:

ՕԿՏԱՎԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄ ԿԱՏԱՐՈՂ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ (ԳՈՐԾԻՔՆԵՐ) ԵՎ ԵՐԳՉԱՁԱՅՆԵՐ նվագարաններ (գործիքներ), որոնք հնչում են նոտաներով գրվածից մեկ *օկտավա* վեր (պիկկոլո-ֆլեյտան, չելեստան, և ժողովրդական մի շարք նվագարաններ և այլն), գրվածից մեկ *օկտավա* վար հնչում են կոնտրաբասը, կոնտրաֆագոտը, լիտավրները և ժողովրդական մի շարք նվագարաններ, ինչպես նաև *տենոր* երգչաձայնը, եթե նրա *պարտիան* գրված է ջութակի բանալիով:

ՕԿՏԵՏ (գերմ. Oktet, լատ. octo-ից՝ ութ) 1) ութ նվագարաններից (գործիքներից) բաղկացած *անսամբլի* համար *առնատային ձևով* գրված երաժշտական ստեղծագործություն, 2) ութ երգչաձայնից բաղկացած անսամբլի համար գրված երաժշտական ստեղծագործություն:

ՕՊԵՐԱ (լատ. opera-ից՝ աշխատություն, շինվածք) երաժշտական-դրամատիկ բեմական սինթետիկ արվեստ, որը միավորում է մենակատարային, անսամբլային և խմբական երգեցողությունը, նվագախմբային երաժշտությունը, թատերական արվեստը, կերպարվեստը, հաճախ՝ պարարվեստը և այլն: Դրամատիկ երկերի նման օ. բաղկացած են մեկ կամ մի քանի գործողություններից (արարվածից), որոնցից յուրաքանչյուրը կարող է ունենալ մի քանի պատկեր և բաղկացած է մի շարք տեսիլներից (տեսարաններից): Օ. կառուցվում է մեներգային համարներից *(արիա, արիոզո, ասերգ, ռոմանս, երգ, սերենադ, կանցոնա, կավատինա, կաբալետտա* և այլն), վոկալ անսամբլներից *(դուետ, տերցետ, կվարտետ, կվինտետ* և այլն) խմբերգերից (սիմֆոնիկ նվագախմբի նվագակցությամբ) և նվագախմբային առանձին համարներից *(նախերգանք, անտրակտ, սիմֆոնիկ պատկեր*, պարեր և այլն): Առաջին երկու օպերաները գրել են XVI դ. վերջին Իտալիայի Ֆլորենցիա քաղաքում կոմպոզիտորներ Պերին և Կաչչինին: Զարգացման ընթացքում ձևավորվել են օ. հետևյալ հիմնական ժանրերը՝ պատմա-հերոսական օ., կենցաղային օ., հերոսա-էպիկական օ., դյուցազներգական օ., քնարական-կենցաղային օ., քնարական օ., քնարական-կատակերգական օ., հոգեբանական-դրամատիկ օ., ժողովրդական-հեքիաթային օ., ժողովրդական երաժշտական դրամաներ և այլն (տես նաև՝ *բալադային օ., զինգշպիլ, մուրացիկների օ., կոմիկական օ., երաժշտական դրամա, սարսուռելա, տոնադիլյա, օպերա-բալետ, օ.-բուֆֆ, օ.-սերիա, օ.-սեմիսերիա, «երեք գռոշանոց օ.», «փրկության օ.»):*

ՕՊԵՐԱ-ԲԱԼԵՏ, *օպերա*, որում բալետային (պարային) տեսարանները կամ գերիշխում են, կամ գրավում են վոկալ (երգեցողական) տեսարաններից ոչ պակաս կարևորություն և տեղ: Ստեղծվել է XVII դ. վերջին:

ՕՊԵՐԱ-ԲՈՒՖՖ (իտ. opera buffa՝ կոմիկական օպերա) իտալական օպերային ժանր՝ կենցաղային սյուժեով երաժշտական կատակերգություն, ձևավորվել է XVIII դ.

ռեալիստական կատակերգության և ժողովրդա-կենցաղային երգային ստեղծագործության հիմքի վրա, որպես դեմոկրատական երկ: Օ.-բ. հակադրվում էր պալատական *օպերա-սերիային*: Օ.-բ. առաջին դասականը համարվում է Պերգոլեզին, որը 1733 թ. գրել է «Սպասուհի-տիրուհի» օ.-բ., հետագա զարգացումը կապված է Ռոսսինիի, Դոնիձետտիի և այլոց անվան հետ:

ՕՊԵՐԱՅԻՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ, տես՝ *երգեցողություն:*

ՕՊԵՐԱՅԻՆ (ՍԻՄՖՈՆԻԿ) ՆՎԱԳԱԽՈՒՄԲ, սիմֆոնիկ նվագախումբ, որը հանդիսանում է օպերային և բալետային ներկայացումների մասնակիցներից և որի ֆունկցիան է կատարել բեմադրվող օպերաների և բալետների երաժշտությունը: Տեղավորված է բեմի առաջ գտնվող «փոսի» մեջ, որը կոչվում է *օրքեստր:* Օ. ն. միշտ չէ, որ ունեցել է ժամանակակից կազմը, առաջին օ. ն. կազմված են եղել մի քանի *լյուտնյաներից* և *չեմբալոյից*, որոնց երբեմն փոխարինել է երգեհոնը: Հետզհետե դրանց ավելացան լարային, ապա փողային և հարվածային նվագարաններ (գործիքներ): Այդ նվագախմբերը բալետներում կատարում էին պարեր և քայլերգեր, իսկ օպերաներում՝ ներածական, եզրափակիչ և միջնամասեր, որոնք կոչվում էին *ռիտուրնելներ, սոնատներ* կամ *սիմֆոնիաներ:* XIX դ. երկրորդ կեսին օ. ն. սկսեցին տալ բաց, վճարովի համերգներ, և հենց այդ ժամանակից է իր գոյությունը սկսում համերգային սիմֆոնիկ նվագախումբը (ի տարբերություն օ. ն.), որը ներկայումս ուղղակի կոչվում է սիմֆոնիկ նվագախումբ:

ՕՊԵՐԱ-ԱԵՄՈՒԵՐԱ (իտ. opera semiseria՝ կիսալուրջ օպերա) XVIII դ. և հատկապես XIX դ. իտալական օպերային արվեստին բնորոշ ժանր, որն իրենից ներկայացնում է *օպերա-սերիայի* և *օպերա-բուֆֆի* միջինը (այլ կերպ՝ *օպերա-սերիա*, որի մեջ կան նաև կոմիկական տեսարաններ):

ՕՊԵՐԱ-ՍԵՐԻԱ (իտ. opera seria՝ լուրջ օպերա) XVII դ. վերջին և XVIII դ. սկզբից նեապոլյան օպերային դպրոցում ստեղծված հերոսա-դիցաբանական կամ առասպելա-պատմական բովանդակության օպերաներ, որոնցում բացակայում են խմբական երգեցողությունն ու բալետը և գերիշխում են մեներգային համարները, հատկապես *արիա դա կապոն:* Օ.-ս. մեծ նշանակություն ունեցավ համաշխարհային օպերային արվեստի զարգացման գործում: Հենց այդ ժամանակաշրջանում մեծ ժողովրդականություն սկսեց վայելել *օպերա-բուֆֆը*, որը թե իր երաժշտական լեզվով, թե սյուժետային գծով դեմոկրատական էր: Ի տարբերություն *օպերա-բուֆֆի*, հինը կոչեցին օ.-ս:

ՕՊԵՐԵՏ (ֆր. opérette՝ փոքրիկ օպերա) երաժշտական-թատերական կատակերգություն՝ նվագախմբի մասնակցությամբ, ուր երգեցողությունը (մենակատարային, անսամբլային և խմբերգային) զուգորդվում է խոսակցության և պարի հետ: Կոմիկական օպերայից տարբերվում է խոսակցական հատվածների առատությամբ: XVII — XVIII դդ. օ. էին կոչվում կոմիկական և հովվերգական փոքր օպերաները, որպես ինքնուրույն ժանր ձևավորվեց XIX դ. երկրորդ կեսում, Ֆրանսիայում (Էրվե, Օֆֆենբախ): XIX դ. 70-ական թ. ձևավորվեց վիեննական (ավստրիական) դասական օ., որում լայնորեն օգտագործվեցին վիեննական կենցաղային երաժշտությունը և ավստրիական, հունգարական և չեխական ժողովրդական պարեղանակները: «Պարային» կոչվող վիեննական դասական օ. առավելապես օգտագործվում էր *վիեննական վալսը* (Զուպպե, Յելլեր, Շտրաուս-որդի) XX դ. առավել աչքի ընկնող օ. հեղինակներ դարձան Լեգարը և Կալմանը: Խորհրդային երաժշտության մեջ օ. սյուժեն հագեցվեց նոր, սոցիալիստական բովանդակությամբ, սոցիալական սուր երգիծանքով:

ՕՊՈՒՍ (լատ. opus՝ աշխատություն, ստեղծագործություն) *երկ* (երաժշտական), կիրառվում է կոմպոզիտորների ստեղծագործությունները համարակալելու համար, հորինման հերթականությունը նշելու համար: Եթե ստեղծագործությունները փոքր ձևի և միևնույն ժանրի են, համարակալվում են միևնույն օ. տակ, օր. Շոպեն, 12 էտյուդներ, op. 10:

ՕՍՏԻՆԱՏԱՅԻՆ ԲԱՍ (իտ. basso ostinato) *համառ բաս*, տես՝ *բասսո օստինատո:*

ՕՍՏԻՆԱՏՈ (իտ. ostinato՝ համառ) բազմիցս կրկնվող մեղեդային կամ ռիթմիկ դարձվածք, տես՝ *բասսո օստինատո:*




ՕՐԱՏՈՐԻԱ (լատ. oratoria, oro-ից՝ ասում եմ, աղաչում եմ) սիմֆոնիկ նվագախմբի, երգչախմբի, մեներգիչների (երբեմն և ասմունքողի) համար գրված մոնումենտալ երաժշտական-դրամատիկ ստեղծագործություն, որն ի տարբերություն օպերայի, կատարվում է համերգային պայմաններում կամ եկեղեցում: Օ. ունի առանձին ավարտված համարներ՝ արիաներ, զուգերգեր, ասերգեր, նախերգանք: Զարգացման առաջին փուլում օ. կատարվում էր որպես բեմական ներկայացում, սակայն XVII դ. դարձավ պատմողական բնույթի համերգային ստեղծագործություն, որն ուներ որոշակի սյուժե, գործող անձինք, այդ թվում նաև ընթացքը շարադրող պատմիչ: XVII — XVIII դդ. օ. սյուժեները հիմնականում աստվածաշնչյան էին: Քրիստոսի չարչարանքներին նվիրված օ. կոչվում էին *պասսիոններ* (տես՝ «չարչարանքներ»): Հենդելի մոնումենտալ-հերոսական օ. գլխավոր գործող անձը ժողովուրդն է, այդ պատճառով նրա երկերում գերիշխում է երգչախումբը: Կան նաև աշխարհիկ սյուժեներով օ. (Հայդնի, «Աշխարհի ստեղծումը», «Տարվա եղանակները»): XIX դ. օ. մեծ տարածում չգտավ: Խորհրդային երաժշտության մեջ օ. գրավեց աչքի ընկնող դեր և տեղ (Շոստակովիչ, Պրոկոֆև, Սվիրիդով):

ՕՐԿԵՍՏՐ (հուն. orchaistrai-ից՝ պարել, ֆր. orchèstre, ռուս. оркестр) 1) հին հունական թատրոնում բեմի և հանդիսականի միջև ընկած այն մասը, որտեղ երգում, նվագում և պարում էին, 2) բոլոր օպերային, օպերետային, ինչպես նաև այլ թատրոնների բեմերի առաջ գտնվող հատուկ փոս, որտեղ տեղավորվում է նվագախումբը, 3) նույնն է՝ *նվագախումբ:*

ՕՐԿԵՍՏՐԻՈՆ (գերմ. Orchestrion) տարբեր կառուցվածք ունեցող մի քանի մեխանիկական նվագարաններ, որոնք այժմ դուրս են եկել գործածությունից:

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ (ֆր. berceuse, ռուս. колыбельная) *(օրորոցի երգ)* երգ, որը սովորաբար երգում են օրորոցի մոտ, երեխան քնեցնելիս, օ. ժողովրդական երաժշտության ժանր է, բազմաթիվ կոմպոզիտորներ օգտագործելով այդ ժանրը, գրել են օ.՝ թե երգելու, թե տարբեր նվագարանների (գործիքների) և նվագախմբերի համար:

ՕՖԻՎԼԵՄ (հուն. ophis՝ օձ և kleidos՝ բանալի, փական) *օֆիկլեյդ,* կոնաձև փողային նվագարան, ծալված երկակի, իսկ ամենաբարակ մասը, որտեղ հագցվում է *մունդշտուկը,* պարուրաձև է, ունի *նվագանցքեր* և *խփասարքեր,* ամենալայն կիրառումն ուներ *օ.-բաս* տարատեսակը, որը մտել էր փողային և սիմֆոնիկ նվագախմբերի կազմի մեջ: XIX դ.՝ առաջին կեսին իր տեղը զիջեց *տուբային:* Ներկայումս օգտագործվում է ֆրանսիական և իտալական փողային նվագախմբերում:



Ֆ

ՖԱ (fa) 1) *ժամանակակից երաժշտական ձայնաշարի* յոթ հիմնական հնչյուններից չորրորդի վանկային անվանումը (տես՝ *սոլմիզացիա),* տառային նշանակումն է F կամ f, 2) *բանալիի* անուն:

ՖԱԳՈՏ (իտ. fagotto՝ կապ, ֆր. fagot՝ կապ, փայտի կապուկ) փայտյա փողային նվագարան, կառուցվածքով մոտ է *հոբոյին,* սակայն երկտակ ծալված է, ունի 22 — 30 նվագանցքեր, որոնցից 5 — 6-ը փակվում են մատներով, մնացածը՝ *խփասարքերով: Ձայնածավալն* է *կոնտրօկտավայի սի բեմոլից* մինչև երկրորդ *օկտավայի մի բեմոլ*-ը (ֆա-ն) (B_1–es^2 (f^2) նոտագրվում է բասի, տենորի և ջութակի բանալիներով, ըստ իրական հնչողության: Ստեղծվել է XVI դ. Իտալիայում, որպես նվագախմբային և անսամբլային նվագարան, կիրառվում էր դեռևս XVII դ. կեսից: Ժամանակակից սիմֆոնիկ նվագախմբում օգտագործվում են 2—3, երբեմն 4 ֆ., որոնցից վերջինը կարող է փոխվել *կոնտրաֆագոտի:* XIX դ. վերջից ֆ. հանձնարարվեցին կատարել նաև ինքնուրույն *պարտիաներ,* մենանվագներ: Ֆ. մտնում է նաև մեծ փողային նվագախմբի կազմի մեջ, տարատեսակներն են *կոնտրաֆագոտը* և հազվադեպ օգտագործվող *սուբկոնտրաֆագոտը:*



ՖԱԼՅԵՏ (իտ. falsetto-ից՝ կեղծ, ռուս. фальцет) գլխավորապես արական երգչաձայնի արտակարգ բարձր ձայնաշարհամն, որը կատարվում է երգչական հատուկ հնարանքով, հնչում է մեղմ, փափուկ, աղքատ է մասնակի տոներով *(օբերտոն):* Այդպես է կոչվում նաև ֆ. երգելու եղանակը: Տես՝ *ֆիստուլա:*

ՖԱԿՏՈՒՐԱ (լատ. factura՝ մշակում, կառուցվածք) երաժշտական ստեղծագործության շարադրման, հյուսվածքի ձևը, որը ստեղծվում է բովանդակությունն ար-

տահայտող երաժշտական արտահայտչամիջոցների (մեղեդի, հարմոնիա, պոլիֆոնիա, ռիթմ, ակորդներ, ֆիգուրացիա և այլն) համակցությամբ: Ֆ. հիմնական տեսակներն են՝ ա) *հոմոֆոնիկ ֆ.*, բ) *ակորդային ֆ.*, գ) *պոլիֆոնիկ ֆ.*, որոնք իրենց հերթին ունեն մի ամբողջ շարք տարատեսակներ՝ կախված նվագարանների, երգչաձայների, անսամբլների, նվագախմբերի և երգչախմբերի արտահայտչական և տեխնիկական առանձնահատկություններից և հնարավորություններից, տարբերում են գործիքային, վոկալ, դաշնամուրային, նվագախմբային, խմբերգային, ինչպես նաև թեթև, թափանցիկ և այլ կերպ բնորոշվող ֆ.:

ՖԱՆԴԱՆԳՈ (իսպ. fandango) իսպանական ժողովրդական պար, *տեմպը*՝ չափավոր, չափը՝ 3/8, 6/8, երբեմն՝ 3/4, պարում են զույգերով, *կիթառի* նվագակցությամբ և *կաստանյետների* զարկով: XVIII դ. վերջերից օգտագործվում է բալետում:


Ա. Կորելլի. Ֆոլիա

ՖԱՆՏԱԶԻԱ (հուն. phantasia՝ երևակայություն) ազատ ձևով գրված, իմպրովիզացիոն բնույթի երաժշտական ստեղծագործություն, գրվել է նաև որպես *ֆուգայի ծավալուն պրելյուդ* (Բախի սոլ մինոր երգեհոնային ֆանտազիան և ֆուգան): XIX դ. գրված բազմաթիվ Ֆ. իրենցից ներկայացնում են ժողովրդական երգերի, պարեղանակների, ռոմանսների, օպերաներից և բալետներից առնված մեղեդիների՝ գլխավորապես ազատ վարիացիոն մշակումներ: Ֆ. մեծ մասամբ վիրտուոզային պիեսներ են: Տես՝ *պարաֆրազ:*

ՖԱՆՖԱՐԱ (իտ. fanfara) 1) շեփոր, 2) շեփորանվագ:

ՖԱՆՖԱՐԱՅԻՆ ՔԱՅԼԵՐԳ (ռուս. фанфарный марш) նույնն է՝ *շեփորաքայլերգ:*

ՖԱՐԱՆԴՈԼԱ (իտ. farandola) հին ֆրանսիական շուրջպար, փոփոխական չափով (2/4, 6/8) և տեմպով՝ աշխույժ, արագ, հետո դանդաղ: Պարն ուղեկցվում էր *ֆլեյտանման* նվագարանի նվագով և *տամբուրինով*, XVIII դ. կատարվում է պարահանդեսներում, որպես *կոնտրդանսի* տարատեսակ: XIX դ. մտավ *կադրիլի* մեջ, որպես եզրափակիչ մաս (ֆիգուր): Ֆ. ձևն իրենց ստեղծագործություններում օգտագործել են Գունոն, Բիզեն, Գլազունովը և ուրիշներ:

ՖԱՐՍ (ֆր. farce) սկզբնական իմաստով՝ թեթև բնույթի կոմեդիա, հետագայում՝ գռեհիկ, անպարկեշտ բովանդակության *վոդևիլ* կամ կոմեդիա՝ էժանագին էֆեկտներով և «բաց» տեսարաններով:

ՖԵՍՏԻՎԱԼ, տես՝ *փառատոն:*

ՖԵՐՄԱՏԱ (իտ. fermata՝ կանգառ) երաժշտության *մետրիկ* շարժումը (չափը) ժամանակավորապես կանգնեցնող հատուկ նշան, որի հետևանքով նոտան կամ *պաուզան* տևում է նշանակվածից ավելի երկար (ըստ կատարողի ցանկության): Ֆ. դրվում է նոտայից կամ *պաուզայից* քիչ վեր կամ վար, կարող է դրվել նաև *տակտի* գծից քիչ վեր. այդ դեպքում հաջորդ *տակտը* պետք է սկսել հապաղումով, որոշ դադարից հետո:

ՖԻԱՍԿՈ (իտ. fiasco՝ շիշ) կատարող արտիստի կամ կատարվող ստեղծագործության անհաջողությունը, ձախողումը, իմաստը բացատրվում է նրանով, որ միջին դարերում Իտալիայում ընդունված էր ձախողվող երգչի կամ դերասանի վզից, որպես խայտառակության նշան, շիշ կախ տալ:

ՖԻԳՈՒՐԱՑԻԱ (իտ. figurato-ից՝ ձև տալ, ռուս. фигурация) *ակորդների* ռիթմա-մեղեդային ձևավորումը, տարբերում են՝ ա) *ռիթմիկ ֆ.*, երբ ակորդները նույնությամբ (չփոխելով մեղեդային գիծը) կրկնվում են տարբեր ռիթմիկ գծապատկերներով, բ) *հարմոնիկ ֆ.*, երբ ակորդները ձևավորելիս օգտագործում են միայն ակորդային տոները (որոնցով կազմվում են տարբեր ռիթմա-մեղեդային ֆիգուրներ), գ) *մելոդիկ ֆ.*, երբ բացի ակորդային տոներից օգտագործվում են նաև ոչ ակորդային հնչյուններ, որոնք ավելի են հարստացնում ակորդների արտահայտչական հնարավորությունները: Ոչ ակորդային հնչյունները հանդես են գալիս որպես *օժանդակ հնչյուն, անցողիկ հնչյուն, հապաղում, կանխիկ և կամբիատա:* Ֆ. այս երեք ձևերը հաճախ օգտագործվում են միաժամանակ:



ՖԻԴԵԼ (գերմ. Fiedel) հնագույն աղեղնային նվագարան, հայտնի է դեռևս IX դ., վաղ միջնադարում անվանումը տարածվում էր աղեղնային բոլոր նվագարանների վրա: Մինչև XVI դ. կեսը ֆ. տարածված է եղել արևմտաեվրոպական երկրներում, դարձել է *վիոլայի* նախորդը:


ՖԻԼԱՐԵՑՈՒՄ (իտ. filare, ֆր. filer՝ ձգել, երկարացնել, ռուս. **филирование**) այլ կերպ՝ երկարաձգել որևէ ձայնը, ըստ որում սկսելով ամենամեղմ հնչողությունից, աստիճանաբար ուժեղացնելով հասցնել ամենաուժգինին և նորից ետ դառնալ ամենամեղմին (կատարվում է մեկ շնչով և շարժումով): Ֆ. կարելի է կիրառել երգելիս, աղեղնային կամ փողային նվագարան (գործիք) նվագելիս:

ՖԻԼՀԱՐՄՈՆԻԱ (հուն. phileō՝ սիրում եմ, harmonia՝ ներդաշնակություն, ռուս. **филармония**) ընկերություն կամ հաստատություն, որը երաժշտական արվեստը պրոպագանդելու նպատակով կազմակերպում է բաց համերգներ հասարակության լայն խավերի համար: Երաժշտությունից բացի Ֆ. պրոպագանդում են նաև հարակից արվեստներ (ասմունք, բալետ, էստրադային այլևայլ ժանրեր):

ՖԻՆԱԼ (իտ. finale՝ վերջին, վերջնական, վերջ) *ցիկլային* (բազմամաս) երաժշտական ստեղծագործության *(սոնատ, սիմֆոնիա, տրիո, կվարտետ* և այլն) վերջին (եզրափակիչ) մասը, նաև՝ օպերայի, օպերետի և բալետի որևէ գործողության կամ ավարտի վերջին (եզրափակիչ) տեսարանը:

ՖԻՈՐԻՏՈՒՐԱ (իտ. fioritura՝ ծաղկում) մեղեդին ծաղկելը զանազան *ձայնազարդերով*՝ արագընթաց *պասաժներով, տրելներով, ֆորշլագներով* և այլն (գլխավորապես՝ երգարվեստում), լայնորեն օգտագործվում էր XVIII դ. իտալական օպերայում: Տես՝ *կոլորատուրա, օռնամենտիկա:*

ՖԻԶԱՐՄՈՆ (հուն. phys՝ փուքսեր և harmonia՝ ներդաշնակություն) հարմոնի սկզբունքով կառուցված լեզվակային օդաճնշիչ նվագարան, որը ձևով հիշեցնում է փոքրիկ *պիանինո*, ունի դաշնամուրի ստեղնաշար (մեկ կամ մի քանի) և լարվածք, 6—20 *ռեգիստրային փոխարկիչներ*, որոնք հնարավորություն են տալիս փոխել ձայների հնչերանգը, կրկնապատկել դրանց *ունիսոնային* կամ *օկտավային* հնչյուններով և *ձայնաշարի* այս կամ այն հատվածը հնչեցնել *օկտավա* վեր կամ վար: Փուքսերն աշխատեցնում են ոտքերով, դինամիկ *նյուանսավորումը* կատարվում է հատուկ փեղկերի միջոցով, որոնք բացվում կամ փակվում են



ծնկների օգնությամբ: Հնչողությամբ հիշեցնում է երգեհոնը, նոտագրվում է երկու *նոտակիրի* վրա:

ՖԻՍՏՈՒԼԱ (լատ. fistula՝ փողակ) 1) նույնն է՝ *ֆալցետ*, 2) հնում այդպես էին կոչվում միափող, հետագայում նաև բազմափող *ֆլեյտաները:*

ՖԼԱԺՈԼԵՏ (ֆր. flagiolet) 1) *երկայնակի ֆլեյտայի* նման, գլանաձև փողանցքով և սուլիչանման ծայրաելով փողային հնագույն նվագարան, ունի *պիկկոլո-ֆլեյտայի ձայնաստիճանը*, 2) եթերային բնույթի, շատ մեղմ և քնքուշ հնչյուն, որը հիշեցնում է ֆ. նվագարանի ձայնը: Ֆ. մեկուսացված (առանձին հնչող) մասնակի *տոն* է, որն ստացվում է տատանվող լարին մատը թեթևակի հպելու միջոցով (տես՝ *օբերտոններ*): Տարբերվում են *բնական* և *արհեստական* Ֆ.: *Բնական* Ֆ. են կոչվում, երբ վերը նշված եղանակով մասերի է բաժանվում բաց լարը, իր ամբողջ երկարությամբ: *Արհեստական* Ֆ. ստացվում են ոչ բաց, այլ մատի սեղմումով կարճացված լարից: Ֆ. ընդլայնում են նվագարանի ձայնածավալը և հարստացնում հնչերանգային գույները:

ՖԼԵՅՏԱ (իտ. flauto) հնագույն փայտյա փողային նվագարան (գործիք), պատրաստում են նաև մետաղից, նույնիսկ ապակուց: Կան երկու տեսակի Ֆ.՝ *երկայնակի*, որն ունի կտցանման բերանոց (շվիի կամ թութակի պես) և *լայնակի*, որը կատարելագործված ձևով օգտագործվում է ներկայումս: Գերմանացի Ֆլեյտահար Բյոմը 1832 թ. ստեղծել է Ֆ. *նվագանցքերի* և *խփասարքերի* նոր կոնստրուկցիա, որը հետագայում կիրառեց նաև մի շարք այլ փողային նվագարանների համար: Ի տարբերություն հին Ֆ., նոր կառուցվածքի Ֆ. ունեն մաքուր *ինտոնացիա*, հստակ և ուժեղ ձայն, *ձայնաստիճանների (ռեգիստրների)* համեմատաբար հավասար հնչողություն: Տեխնիկապես Ֆ. ամենաշարժուն փողային նվագարանն է, սովորական Ֆ. կոչվում է նաև *մեծ* Ֆ. (իտ. flauto grande), կան նաև հետևյալ տարատեսակները՝ ա) *փոքր* Ֆ. կամ *պիկկոլո*-Ֆ. (իտ. flauto piccolo) որը մեծ Ֆ. փոքր



է երկու անգամ, հնչում է մեկ *օկտավա* վեր, բ) *ալտային* Ֆ. (իտ. flauto contralto) և գ) *բասային* Ֆ. (իտ. flauto basso): Նոտագրվում է իրական հնչողությունից մեկ *օկտավա* վեր, ստեղծվել է XX դ. սկզբում, կոչվում է նաև *ալբիգիֆոն* (ստեղծողի անունով): Սիմֆոնիկ նվագախմբում օգտագործվում է մինչև 4 Ֆ., որոնցից վերջինը նվագի ընթացքում կարող է մեծ Ֆ. փոխարինել տարատեսակներով: Մտնում է նաև մեծ փողային նվագախմբի կազմի մեջ: Լայնորեն կիրառվում է որպես մենակատարային և անսամբլային նվագարան:

ՖԼԵՔՍԱՏՈՆ (գերմ. Flexaton, ֆր. flex-à-tone, լատ. flexio-ից՝ ծռվածք, ծալվածք) որոշակի բարձրություն



ունեցող հարվածային նվագարան, որն իրենից ներկայացնում է աստիճանաբար նեղացող պողպատյա լեզվակ. լայն մասը ամրացված է հատուկ ձևի երկաթալարե շրջանակին, լեզվակի երկու կողմից միացված են մեկական ճկուն մետաղյա ձողիկներ, ծայրերին՝ ամուր փայտից պատրաստված գնդիկներ: Նոտագրվում է ջութակի բանալիով, ըստ իրական հընչողության, հիմնականում օգտագործվում է էստրադային անսամբլներում և նվագախմբերում:

ՖԼՅՈՒԳԵԼՀՈՌՆ (գերմ. Flügelhorn՝ թևի փող, աջ կամ ձախ թևում կանգնած զինվորի փչած փողը) *կոռնետանման* պղնձյա փողային նվագարան (գործիք), ավելի լիքը և փափուկ ձայնով, սիմֆոնիկ նվագախմբում օգտագործվում է հազվադեպ, ավելի լայն կիրառություն ունի ջազային, էստրադային և փողային նվագախմբերում: Ունի *սի բեմոլ* լարվածք (in B), նոտագրվում է ջութակի բանալիով, իրական հնչողությունից մեծ *սեկունդա* վեր: Տարատեսակներն են *ալտհոռնը, տենորհոռնը, բարիտոնհոռնը և բասհոռնը:*

ՖՈԼԻԱ (պորտ. folia՝ անզուսպ ուրախություն) դեռևս XIV դ. հայտնի պորտուգալա-իսպանական պարերգ, աշխույժ և կրակոտ մենապար կամ զույգպար: Կառուցվածքով մոտ է *չակոնային* և *սարաբանդային*, XVII — XVIII դդ. մեծ տարածում գտավ Եվրոպայում: Ֆ. ձևն օգտագործվել է բալետներում և նյութ ծառայել տարբեր նվագարանների համար գրված վիրտուոզային բնույթի բազմաթիվ ստեղծագործությունների:



ՖՈՆՈԳՐԱՄՄԱ, տես՝ *ձայնագրվածք:*

ՖՈՆՈԳՐԱՖ, տես՝ *ձայնագիր:*

ՖՈՐԼԱՆԱ, նույնն է՝ *ֆուռլանա:*

ՖՈՐՇԼԱԳ (գերմ. Vorschlag՝ նախորդող հարված, նախահարված, նախաշեշտ) մեղեդի կազմող այս կամ այն հիմնական հնչյունին նախորդող մեկ կամ մի քանի մաքսիմալ կարճ տևողություններ ունեցող հնչյուններ, որոնք կատարվում են հաջորդող կամ նախորդող հիմնական հնչյունների տևողության հաշվին, երաժշտական *ձայնարդ:* Ֆ. լինում է *կարճ* (գծված) և *երկար* (չգծված): Երկար ֆ. ըստ էության հապաղում է, որը հնում գրի էին առնում փոքր նոտաներով, մի կողմից ընդգծելու, մյուս կողմից՝ հեշտ տեսանելի դարձնելու *հարմոնիայի (ակորդի)* մեջ մտնող հնչյունները: Երկար ֆ. վաղուց դուրս է եկել գործածությունից:



ՖՈՐՏԵ (իտ. forte) ուժգին, տես՝ *ուժաբանություն:*

ՖՈՐՏԵ ՖՈՐՏԻՍՍԻՄՈ (իտ. forte fortissimo) չափազանց ուժգին, տես՝ *ուժաբանություն:*

ՖՈՔՍՏՐՈՏ (անգլ. foxtrot, fox՝ աղվես և trot՝ վարգ, վազք) XX դ. սկզբին Եվրոպայում մեծ տարածում գտած սալոնային պար, 4/4 չափով: Սկզբնավորվել է ԱՄՆ-ում, *դարասկզբի 10-ական թթ., ֆ. հիմքում ընկած են թու-սթեփի* շարժումները, ֆ. լինում են դանդաղ ֆ. (slow foxtrot՝ *սլոու ֆ.*) և արագ (quick foxtrot կամ quickster՝ *քուիք ֆ.* կամ *քուիք-սթեփ*):

ՖՐԱԶ (հուն. phrasis՝ արտահայտություն, դարձվածք) 1) *պարբերություն* կազմող հատվածներից մեկը, յուրաքանչյուր պարբերություն ընդգրկում է սովորաբար 4 ֆ. (8 տակտանոց պարբերությունում ֆ. ընդգրկում է 2 տակտ, իսկ 16 տակտանոցում 4 տակտ), 2) կապակցված և համեմատաբար ավարտուն երաժշտական կառուցվածք:

ՖՐԱԶԱՎՈՐՈՒՄ (ռուս. фразировка) երաժշտական ստեղծագործության յուրաքանչյուր *ֆրազի* կատարման եղանակը (ձևը), որով արտահայտվում է նրա գեղարվեստական իմաստը, բովանդակությունն արտահայտող հատվածներից յուրաքանչյուրը: Ամեն կատարող ունի ֆ. իր ուրույն եղանակը, որը և բնորոշում է նրա կատարողական ոճը:

ՖՐԻՉԿԱ, տես՝ *չարդաշ:*

ՖՈՒԳԱ (լատ. fuga՝ վազք, փախուստ) *պոլիֆոնիկ* երաժշտության առավել կատարյալ ձևը՝ հիմնված մեկ, երկու (ավելի սակավ՝ երեք և խիստ հազվադեպ՝ չորս)





թեմաների բազմանգամ *իմիտացիոն* անցկացման վրա բոլոր ձայներում, տոնայնական որոշակի հաջորդականությամբ: Մեկ թեմայով գրված ֆ. կոչվում է *պարզ* ֆ., երկու թեմայովը՝ *կրկնակի* ֆ., երեքովը՝ *եռակի* ֆ., չորսովը՝ *քառակի* ֆ.: Մեծ մասամբ ֆ. գրվում են քառաձայն կամ եռաձայն, հազվադեպ՝ հնգաձայն, ավելի հազվադեպ՝ երկձայն և հինգից ավելի ձայնանի: Եռակի և քառակի ֆ. գրականության մեջ հանդիպում են խիստ հազվադեպ, ինչ բացատրվում է ոչ միայն կոմպոզիցիոն բարդություններով, այլ հիմնականում նրանով, որ ունկնդիրն ի վիճակի չէ միաժամանակ ընկալել մեծ քանակությամբ մեղեդային տարբեր գծեր: Ֆ. սովորաբար բաղկացած է երեք մասից՝ *էքսպոզիցիա, մշակման մաս* և *ռեպրիզա:*

ՖՈՒԳԱՏՈ (իտ. fugato՝ ֆուգայանման) սովորաբար խոշոր ձևի հոմոֆոնիկ երաժշտական ստեղծագործության մեջ մտնող ֆ ու գ այ ան մ ան փոքր էպիզոդ, որպես ինքնուրույն ստեղծագործություն հանդիպում է խիստ հազվադեպ (օր. Բախ, Ֆուգատո կլավիրի համար):

ՖՈՒԳԵՏՏԱ (իտ. fughetta, fuga-ի նվազականը) պարզ բովանդակության փոքր ֆ ու գ ա: Գրել են Բախը, Հենդելը, Բեթհովենը, Շումանը, Լյադովը և ուրիշներ:

ՖՈՒԶԱ, տես՝ մ ե ն գ ու ր ա լ նոտագրություն:

ՖՈՒՌԼԱՆԱ (իտ. furlana, friulana-ից՝ Ֆռիուլի մարզի անունից) իտալական հնագույն գեղջկական պար, 6/4 կամ 6/8 չափով, տարածված էր վենետիկյան գոնդոլավարների շրջանում:

A

A (*լատ.* Ա) — 1. *լա* հնչյունի, մասնավորապես մեծ օկտավայի լա-ի տառային նշանակումը (կոնտրօկտավայինը A_1 կամ $\underline{A}$, սուբկոնտրօկտավայինը՝ A_2 կամ $\underline{\underline{A}}$, 2. *լա* մաժոր տոնայնության (A-dur) կըրճատ նշանակումը:

a (լատ. ա.) — 1. *լա* հնչյունի, մասնավորապես փոքր օկտավայի լա-ի տառային նշանակումը (առաջին օկտավայինը a^1, կամ a' երկրորդինը՝ a^2, կամ a'' և այլն), 2. *լա* մինոր տոնայնության (a-moll) կրճատ նշանակումը:

a ballata (իտ. ա բալլատա) — բալլադանման

a battuta (իտ. ա բատտուտա) — (ճիշտ) տակտով

abbandonamente, (իտ. աբբանդոնամենտե), — անզըսպորեն, անարգել, անկաշկանդ (ազատորեն անձնատուր լինելով զգացմունքներին), խենթի պես:

abbandono (իտ. աբբանդոնո) — անզսպություն, անարգելություն:

abbassamento (իտ. աբբասսամենտո) — (ձայնի) իջեցում, աղարտում (դետոնացիա, դետոնացում):

abbassamento di mano (իտ. աբբասսամենտո դի մանո) — դաշնամուր նվագելիս նշված ձեռքը պիտի անցկացնել մյուսի տակով և նվագել խաչաձևած ձեռքերով:

abbellimento (իտ. աբբելլիմենտո) — զարդարանք — զարդարում, գեղեցկացում *(ֆիորիտուր)*:

Abbreviatur, abbreviatura, abrévation (գեր. աբբրեվիատուր, իտ. աբբրեվիատուրա, ֆր. աբրեվասիոն) — *աբրևիատուրա, կրճատագրություն*

aber (գեր. աբեր) — բայց, սակայն

abnehmend (գեր. աբնեհմենդ) — պակասեցնելով, թուլացնելով (շարժման արագությունը և հնչողության ուժգնությունը)

a bocca chiusa — տես՝ b o c c a

a bouché fermée — տես՝ b o u c h e

absolute pitch (անգ. աբսոլյուտ փիչ — բացարձակ բարձրություն) — *բացարձակ լսողություն*

abstrich (գեր. աբշտրիխ) — վերից վար շարժվող շտրիխ (գիծ) (աղեղը) շարժել վերից-վար (կոճղիկից դեպի գլխիկը)

a cadenza (իտ. ա. կադենցա) — ազատորեն, կադենցիայի նման

a cappella, (իտ. ա կապելլա) — *ա կապելլա*, երգեցողություն առանց նվագակցության

a capriccio — տես՝ c a p r i c c i o

accarezzevole (իտ. ակարեցցեվոլե — շոյանքով, քընքշորեն (գգվանքով, փայփայանքով):

accablement (ֆր. ակկաբլըման) — ընկճվածություն, վհատություն, ճնշված, ընկճված, (թախծոտ, տըխրալի):

accelerando (իտ. աչչելերանդո) — արագացնելով

accentando (իտ. աչչենտանդո) — շեշտելով

accent, a., accento (ֆր. ակսա(ն), անգ. էքսսընտ, իտ. աչչենտո) — *շեշտ*

accentuare (իտ. աչչենտուարե) — շեշտել

accentuato, accentué (իտ. աչչենտուատո, ֆր. ակսանտյուէ) — ընդգծելով, շեշտելով, (ընդգծված, շեշտված)

accentus (լատ. ակցենտուս) — 1. *Գրիգորյան խորալի* սաղմոսային թվերգային (ռեչիտատիվային) կատարումը: Դրան հակառակը conzentus — է՝ Գրիգորյան խորալի շատ երգուն, մելիզմներով հարուստ երգեցողություն: 2. Քահանայի երգեցողությունը, ի տարբերություն երգչախմբի ու մենակատար-երգիչների երգեցողության:

accident, accidento (ֆր. ակսիդա(ն), իտ. աչչիդենտո) — ալտերացիայի նշան:

accolade (ֆր. ակոլադ) — *ակոլադ*

accompagnamento, accompagnement, accompaniment, akkompagnement (իտ. ակկոմպանյամենտո, ֆր. աքոմպանյըման, անգ. ըքոմփանիմընթ, գեր. ակկոմպանըման) — նվագակցություն:

accompagnatore (իտ. ակկոմպանյատորե) — ընկերող, ուղեկից, նվագակից, նվագակցող:

accopiato (իտ. ակկոպիատո) — միացված, կապակցված

accord, a., accordo (ֆր. ակկոռ, անգ. ըքորդ, իտ. ակկորդո) — 1. Ա կ ո ր դ, 2. Ֆրանսերեն (նվագարանի) լարում:

accordare (իտ. ակկորդարե) — լարել (նվագարան)

accord brisé (ֆր. ակկոռ բրիզե) — կոտրատված ակորդ *(արպեջջո)*

accord de neuvieme (ֆր. ակկոռ դը նովյեմ) — *նոնակորդ*

accord de quatre et sixte (ֆր. ակկոռ դը քատր է սիքստ) — *կվարտսեքստակորդ*

accord de quinte et sixte (ֆր. ակկոռ դը քենտ է սիքստ) — *կվինտսեքստակորդ*

accord de seconde (ֆր. ակկոռ դը սըգոնդ) — *սեկունդակորդ*

accord de septième (ֆր. ակկոռ դը սետիեմ) — *սեպտակորդ*

accord de septieme de dominante (ֆր. ակկոռ դը սետիեմ դը դոմինանտ) — *դոմինանտսեպտակորդ*

accord de sixte (ֆր. ակկոռ դը սիքստ) — *սեքստակորդ*

accord de tierce et quatre (ֆր. ակկոռ դը տիերս է քատրը) — *տերցկվարտակորդ*

accordéon, accordion (ֆր. ակկորդեոն, անգ. աքքորդյըն) — *ակորդեոն*

accorder (ֆր. ակկոռդե) — լարել (նվագարան)

accordo di nona (իտ. ակկորդո դի նոնա) — *նոնակորդ*

accordo di sesta (իտ. ակկորդո դի սեստա) — *սեքստակորդ*

accordo di settima (իտ. ակկորդո դի սետտիմա) — *սեպտակորդ*

accordo perfetto (իտ. ակկորդո պերֆետտո) — *եռահնչյուն*

accord parfait (ֆր. ակկոռ պարֆե) — *եռահնչյուն*

accord plagué (ֆր. ակկոռ պլաքե) — ակորդ, որի բոլոր հնչյունները դարսված են մեկ-մեկու վրա (հնչում են միաժամանակ):

accuratezza (իտ. ակկուրատեցցա) — ճշգրտություն, ճշտորոշություն (մետրո — ռիթմիկ ու նրբերանգային բոլոր նշումները):

Achtelnote (գեր. Ախտելնոտե) — ութերորդական նոտա

acoustic, acoustique, acustica (անգլ. էքուստիկ, ֆր. ակուստիկ, իտ. ակուստիկա) — *ակուստիկա*

acte (ֆր. ակտ) — *արար, արարված, գործողություն:*

acuto (իտ. ակուտո) — զիլ, սուր

Adagio (իտ. ադաջո) — դանդաղ տեմպ, ադաջո

addolcendo (իտ. ադդոլչենդո) — հանգստացնելով, մեղմացնելով, քնքշացնելով (ձայնի ուժգնությունը):

addolorando, addolorato (իտ. ադդոլորանդո, ադդոլորատո) — տխուր, վշտագին (դարդոտ)

à demi-voix, demi-voix (ֆր. ա դըմի վուա, դըմի վուա) կիսաձայն (կես ձայնով, մեղմ):

a deux mains, a deu mani (ֆր. ա դեո մեն, իտ. ա դուե մանի) — երկու ձեռքով (երկու ձեռքի համար):

a deux voix — տես՝ **voix**

adiratamente, adirato (իտ. ադիրատամենտե, ադիրատո) — զայրագին (բարձրացած, բարկությամբ):

adornamente (իտ. ադորնամենտե) — զարդարել (մեղեդին որևէ *մելիզմ*-ով՝ *ֆորշլագո*-ով, *մորդենտ*-ով և այլն)

a due կամ **a 2** (իտ. ա դուէ) — երկուսով: 1. Երկու կատարողներ պիտի նվագեն կամ երգեն *ունիսոն:* 2. Դաշնամուրային ստեղծագործություններում նշանակում է, որ պիտի ազատել (այլևս չսեղմել) ձախ ոտնակը:

a due corde (իտ. ա դուէ կորդե — երկու լարով) — բաց թողնել դաշնամուրի ձախ ոտնակը: Տես՝ **una corda**

ad una corda (իտ. ադ. ունա կորդա) — 1. (նվագել) մեկ լարով (մեկ լարի վրա): 2. Տես՝ **una corda**

A-dur (Ա-դուռ) — լյա մաժոր (տոնայնություն)

aeolius modus (լատ. աեոլիուս մոդուս) — *էոլական լադ*

aeolius tonus (լատ. աեոլիուս տոնուս) — *էոլական լադ*

affabile (իտ. աֆֆաբիլե — քաղցրաբարո, բարեկիրթ) — սիրալիր, շոյուն, հաճելի:

affannato, affanato (իտ. աֆֆաննատո, աֆֆանատո — նեղված, շնչասպառ եղած) — անհանգիստ, տագնապալի, հուզումնալի:

affettamente, affettato (իտ. աֆֆետտամենտե, աֆֆետտատո, կոտրատվելով, անբնական, շինծու) — պճնագեղորեն:

affetto (իտ. աֆֆետտո) — զգացմունք:

affettuoso (իտ. աֆֆետտուոզո, սիրալիր, գորովալից, խանդաղատական) — քնքշանվաղ:

affezione (իտ. աֆֆեցիոնե) — զգացմունք, սեր, կիրք **con a.** (կոն աֆֆեցիոնե) — զգացմունքով, սիրով, կրքոտ (մեղմ, քնքույշ)

afflitto (իտ. աֆֆլիտտո) — թախծոտ, վշտահար, տխուր

afflizione (իտ. աֆֆլիցիոնե) — վիշտ, տրտմություն, տառապանք **con a.** (կոն աֆֆլիցիոնե) — տրտմությամբ, տառապանքով:

affrettando, affrettoso (իտ. աֆֆրետտանդո, աֆֆրետտոզո) — արագությունն ավելացնելով, շտապելով, նույնն է՝ **stringendo** կամ **accelerando**

aggiustamente (իտ. աջջուստամենտե, պատշաճապես, ըստ պատշաճի) — ճշտորեն, ճշտությամբ (պահպանել տեմպը, ռիթմը)

agevole (իտ. աջեվոլե) — թեթև, ազատ, առանց հարկադրանքի (անկաշկանդ)

agiatamente (իտ. աջատամենտե) — հանդարտ, հանգիստ, առանց շտապողականության

agiatezza (իտ. աջատեցցա) — դանդաղություն, դանդաղկոտություն, (կոն աջատեցցա) — դանդաղ ու վստահ

agiato (իտ. աջատո) — դանդաղ ու հանգիստ (հանդարտ)

agile, agilemente (իտ. աջիլե, աջիլեմենտե) — դյուրաշարժ, աշխույժ, թեթև, նրբագեղ (արագ, ժորեն):

agilita (իտ. աջիլիտա) արագություն, թեթևություն, նրբագեղություն, **con a.** (կոն աջիլիտա) նույնն է՝ **agile**

agitato (իտ. աջիտատո) — հուզումնալից, տագնապալից, անհանգիստ, բորբոքված (շարժուն):

agité (ֆր. աջիտե) նույնն է՝ **agitato**

agogica, agogies, Agogik, agogique (իտ. ագոջիկա, անգլ. ըգոգիս, գերմ. ագոգիկ, ֆր. ագոժիք) — *ագոգիկա*

air (ֆր. էր) — *արիա, երգ, եղանակ, մեղեդի*

air de danse (ֆր. էր դը դանս) — պարեղանակ

Ais (Աիս) — 1. Լյա դիեզ հնչյունի, մասնավորապես մեծ օկտավայի *լյա* դիեզ-ի տառային նշանակումը (կոնտրօկտավայինը՝ Ais կամ A i s սուբկոնտրօկտավայինը՝ Ais_2 կամ $\underline{\underline{Ais}}$), 2. լյա դիեզ մաժոր տոնայնության (Ais-dur) կրճատ նշանակումը: 1. Լյա դիեզ հնչյունի, մասնավորապես փոքր օկտավայի լյա դիեզի տառային նշանակումը (առաջին օկտավայինը՝ ais¹, ais կամ ais' երկրորդինը՝ ais², ais կամ ais'' և այլն), 2. լյա դ i e զ մինոր տոնայնության (ais-moll) կրճատ նշանակումը:

aisis (աիսիս) — լյա դուբլ դիեզ հնչյունի տառային նշանակումը:

Akkord — ակորդ

Akzident (գերմ. Ակցիդենտ) — *ալտերացիայի նշան:*

a libito — տես՝ **l i b i t o**

a livre ouvert (ֆր. ա լիվր ուվեր — բաց գրքով) — իմաստով նույնն է՝ **a p r i m a v i s t a.**

all', alla, alle (իտ. ալլ, ալլա, ալլե) — նման, ձևով, ոգով

alla breve (իտ. ալլա բրեվե) — նշում այն մասին, որ $\frac{4}{4}$ չափով գրված երաժշտությունը պիտի կատարել որպես $\frac{2}{2}$

alla zoppa (իտ. ալլա ցոպպա) — կաղալով. (սինկոպացված շարժում)

contrappunto alla zoppa — (կոնտրապպունտո ալլա ցոպպա) — սինկոպացված կոնտրապունկտ:

alle (գերմ. ալլե) — բոլորը:

allegramente (իտ. ալլեգրամենտե) — զվարթորեն — (ուրախ, աշխույժ, ոգևորված), (կատարվում է ալլեգրո-ի ու ալլեգրետտո-ի միջին տեմպով):

allegrettino (իտ. ալլեգրետտինո) — ալլեգրետտո-ից քիչ ավելի դանդաղ:

allegretto (իտ. ալլեգրետտո) — աշխույժ:

allegretto con spirito (իտ. ալլեգրետտո կոն սպիրիտո) — ալլեգրետտո-ից քիչ ավելի աշխույժ:

allegretto (ma) non tanto (իտ. ալլեգրետտո (մա) նոն տանտո) — *ալլեգրետտո*, բայց ոչ այնքան (ալլեգրետտո-ից քիչ ավելի դանդաղ):

allegretto (ma) non troppo (իտ. ալլեգրետտո (մա) նոն տրոպպո) — *ալլեգրետտո*, բայց ոչ չափազանց (ալլեգրետտոյից քիչ ավելի դանդաղ):

allegrezza (իտ. ալլեգրեցցա) — ուրախություն, խնդություն, **con a.** (կոն ալլեգրեցցա) — ուրախ, խնդուն:

allegro (իտ. ալլեգրո) — ուրախ, զվարթ:

allemande (ֆր. ալլըման(դ)) — *ալլեմանդա:*

allentando (իտ. ալլենտանդո) — դանդաղեցնելով:

allentamento (իտ. ալլենտամենտո — հապաղում) — դանդաղում:

all' improvvisa (իտ. ալլիմպրովվիզա) — հանկարծ, անակնկալ:

allontanandosi (իտ. ալլոնտանանդոզի) — (կարծես) հետզհետե հեռանալով

all' ottava (իտ. ալլ օտտավա) — կետագծով նշանակված նոտաները նվագել օկտավաներով, կրկնապատկելով նրանց վերին օկտավայի նոտաներով:

all' ottava bassa (իտ. ալլ օտտավա բասսա) — կետագծով նշանակված նոտաները նվագել օկտավանեռով, կրկնապատկելով վարին օկտավայի նոտաներով:

all' ungherese (իտ. ալլ ունգերեզե) — հունգարական ոգով

all' unisono (իտ. ալլ ունիսոնո) — *ունիսոն-ով*

a livre ouvert (ֆր. ալիվր ուվեռ — բառացի՝ բաց գրքով) — առանց նախապատրաստման կարդալ (երգել, նվագել) — անծանոթ նոտաներ

almählich (գերմ. ալմերիխ)—հետզհետե, աստիճանաբար

al piacere (իտ. ալ պիաչերե) — կամայականորեն, ըստ ցանկության, նույնն է՝ *ադ լիբիտում*

al quanto կամ **alquanto** (իտ. ալ կուանտո կամ ալկուանտո) — մի քիչ, մի փոքր

al rigore di tempo (իտ. ալ րիգորե դի տեմպո)—խըստորեն պահպանել տեմպը (չարագացնել ու չդանդաղեցնել):

Alt (գերմ. Ալտ) — *ալտ*

al tempo (իտ. ալ տեմպո) — վերադառնալ նախկին տեմպին

altération, alteration, A., alterazione (ֆր. ալտերասիո(ն), անգլ. օլթըրեյշն, գերմ. Ալտերացիոն, իտ. ալտերացիոնե) — *ալտերացիա*

alternamente, alternando, alternativamente (իտ. ալտերնամենտե, ալտերնանդո, ալտերնատիվամենտե) — փոփոխականորեն, փոփոխակի, հերթով:

alternativo (իտ. ալտերնատիվո — փոփոխ, փոխն ի փոխ) — 1. հնում այդպես էին անվանում *տրիո* ունեցող պարային բնույթի պիեսները (օր. մենուետը և այլն). նման պիեսներում երբեմն այդպես էր կոչվում և ինքը տրիոն, 2. երաժշտական պիեսի երկու մասերի փոխեփոխ հաջորդումը:

altiste (ֆր. ալտիստ) — մեծ ջութակահար, մեծ ջութակ նվագող. (ալտահար, ալտիստ, ալտ նվագող):

alto (իտ. ալտո) — 1. *ալտ* (երգչաձայն երգչախմբում), 2. *պարտիա* երգչախմբում, 3. կրճատ՝ **c o n t r a l t o**, 4. բարձր:

alto (անգլ. ալտո) 1. Մեծ ջութակ, *ալտ* 2. *Պարտիա*, 3. Կրճատ՝ *կոնտրալտո:*

Altschlüssel (գերմ. Ալտշլյուսսել) — *ալտի բանալի*

altri (իտ. ալտրի) — մյուսները, մնացածները (բացի մենակատարներից նաև բոլոր մնացածները)

altus (լատ. ալտուս) — 1. ալտ (ձայնախումբ երգչախմբում):

alzamento (իտ. ալցամենտո) — (ձայնի) բարձրացում

amabile (իտ. ամաբիլե — սիրելի), — սիրալիր, քնքուշ, դուրեկան (հեզ):

amarezza (իտ. ամարեցցա — դառնություն, տառապանք) — կսկիծ, վիշտ, ցավ:
con a. (կոն ամարեցցա) — կսկծանքով, վշտալի, ցավագին:

amateur (ֆր. ամատյոռ) — սիրող (ոչ պրոֆեսիոնալ): Տես՝ *դիլետանտ, մելոման:*

determinato (իտ. դէտէրմինատո) — վճռական (կտրուկ):

Detonation (գեր. Դետոնացիոն) — *դետոնացիա*

detonieren, détonner (գեր. դետոնիրեն, ֆր. դետոնե) — դետոնացիա կատարել (ֆալշ, անմաքուր, ոչ ճիշտ ելևէջել (երգել կամ նվագել)):

deutlich (գեր. դոյտլիխ) — պարզորոշ, որոշակի, ճշգրիտ

deux (ֆր. դէ) — երկու A d. mains (ա դէ մեն) — երկու ձեռքի (համար), երկու ձեռքով:

devoto (իտ. դեվոտո) — ջերմեռանդ, բարեպաշտ, ակնածանքով:

devozione (իտ. դեվոցիոնե) — ջերմեռանդություն, բարեպաշտություն, ակնածանք:

diafonia, diaphonia, Diaphonie (իտ. դիաֆոնիա, հուն. դիաֆոնիա, գեր. դիաֆոնիե) — 1) դիսսոնանս, 2) դիաֆոնիա, նույնն է o r g a n u m

dialogo, dialogue, d., Dialog (իտ. դիալոգո, ֆր. դիալոգ, անգ. դայալոգ, գեր. դիալոգ) — երկխոսություն, (*դիալոգ*)

diapason, d., D. (իտ. դիապազոն, ֆր. դիապազոն, գեր. դիապազոն) — 1) *ձայնածավալ, դիապազոն*. 2) *կամերտոն. ձայնոց* (երկմատնյա ձայնացույց)

diaphonia, Diaphonie — տես՝ d i a f o n i a

diatonico, diatonique, diatonisch (իտ. դիատոնիկո, ֆր. դիատոնիք, գեր. դիատոնիշ)—դիատոնիկ, տես՝ *դիատոնիկա:*

Diatonik (գեր. Դիատոնիկ) — *դիատոնիկա:*

diatonische Tonleiter (գեր. դիատոնիշե, Տոնլայտեր)—d i a t o n i k g a m m a:

di bravura (իտ. դի բրավուրա)—համարձակ, ճարտար, փայլուն, (վարպետորեն): Տես՝ b r a v u r a

dièse, diesi, diesis (ֆր. դիեզ, իտ. դիէզի, դիէզիս)—*դիեզ*

Dies irae (լատ. դիես իրե) — *դիես իրե*

dignita (իտ. դիգնիտա) — արժանապատվություն (վեհություն) con d. (կոն դիգնիտա) — արժանապատվությամբ, արժանավայել (վեհ, հանդիսավոր):

di grado in grado — տես՝ g r a d o

diletante, dilettante, d., Dilettant (իսպ. դիլետանտե, ֆր. դիլըտանտ, անգ. դիլիթընթ, գերմ. դիլետտանտ) — *սիրող, դիլետանտ:*

dilettante (իտ. դիլետտանտե — դուրեկան, ուրախացնող) — 1. խնդուն, ուրախ, 2. *սիրող, դիլետանտ* (արվեստասեր):

diligenza (իտ. դիլիջենցա — ջանասիրություն) — խանդավառություն, արագություն con d. (կոն դիլիջենցա) — արագությամբ, խանդավառությամբ (արագ, խանդավառ):

diluendo (իտ. դիլուէնդո) — (աստիճանաբար) թուլացնելով հնչողությունը:

diminuendo (իտ. դիմինուենդո, պակասեցնելով) — դիմինուենդո

di molto (իտ. դի մոլտո) — շատ, մեծ, խիստ, ավելի: Կցվելով երաժշտության բնույթն ու արագությունը նշող բառերին (տերմիններին) ուժեղացնում է նրանց նշանակությունը, օր. allegro di m. (ալլեգրո դի մոլտո) — կնշանակի՝ ավելի արագ քան allegro-ն, largo di m. (լարգո դի մոլտո)-ն՝ ավելի դանդաղ, քան largo-ն և այլն: Տես՝ m o l t o

direction (ֆր. դիրեկսիոն—ուղեցույց) — *դիրեկցիոն*

director (անգ. դայրեկտր)—նվագավար, *դիրիժոր* (նաև ռեժիսոր, ղեկավար դիրեկտոր):

direttore d'orchestra (իտ. դիրետտորե դ'օրկեստրա)—նվագավար, նվագախմբի դիրիժոր (*կապելմայստեր*):

direttore del coro (իտ. դիրետտորե դել կորո)—խմբավար, երգչախմբի *դիրիժոր:*

Dirigent (գեր. դիրիգենտ) — *դիրիժոր*, երգչախմբի ղեկավար՝ *խմբավար, ռեգենտ:*

diritta (իտ. դիրիտտա)—աջ (ձեռ): Տես՝ m a n o

Dis (Դիս) — 1. Ռե դիեզ հնչյունի, մասնավորապես մեծ օկտավայի ռե դիեզ տառային նշանակումը (կոնտրօկտավայինը՝ Dis, կամ Dis): 2. Ռե դիեզ մաժոր տոնայնության (Dis-dur) կրճատ նշանակումը:

dis (դիս) — 1. Ռե դիեզ հնչյունի, մասնավորապես փոքր օկտավայի ռե դիեզի տառային նշանակումը (առաջին օկտավայինը dis¹, $\overline{dis}$ կամ dis' երկրորդինը՝ dis², $\overline{\overline{dis}}$ կամ dis'' և այլն): 2. Ռե դիեզ մինոր տոնայնության (dis-moll) կրճատ նշանակումը:

discanto, discantus, Diskant (իտ. դիսկանտո, ուշ. լատ. դիսկանտուս, գեր. դիսկանտ) — *դիսկանտ*

disco, d., disk, disque, Schallplatte (իտ. դիսկո, իսպ. դիսկո, անգ. դիսկ, ֆր. դիսք, գեր. Շալլպլատտե)—*ձայնասկավառակ, ձայնապնակ:*

discretamente, discreto (իտ. դիսկրէտամենտէ, դիսկրէտո) — զուսպ, չափավոր (խոհական):

discrezione (իտ. դիսկրէցիոնէ) — զսպվածություն, չափավորություն, խոհականություն con d. (կոն դիսկրէցիոնէ) — զսպվածությամբ, չափավոր, (հապաղելով, դանդաղեցնելով):

discreto — տես՝ d i s c r e t a m e n t e

disgiungere, disgiunto (իտ. դիզջունջերե, դիզջունտո— բաժանել, զատել)—(կատարել) կտրտված, զատ-զատ (անջտելով մեկ հնչյունը մյուսից):

disgiunto — տես՝ d i s g i u n g e r e

disinvolto (իտ. դիզինվոլտո) — ժիր, աշխույժ, (անկաշկանդ, պարզ):

disis (դիսիս) — ռե դուբլդիեզ հնչյունի տառային նշանակումը:

disonancia, dissonance, d., Dissonanz, dissonanza (իսպ. դիսոնանսիա, ֆր. դիսսոնանս, անգ. դիսսոնընս, գերմ. դիսսոնանց, իտ. դիսսոնանցա) — *դիսոնանս*

disperatamente ((իտ. դիսպերատամենտե — հուսահատաբար, կատաղաբար) — հուսաբեկ, կատաղի (քիչ արագացնել շարժումը):

disperato (իտ. դիսպերատո, — հուսաբեկություն) — անհույս, անմխիթար:

disperazione (իտ. դիսպերացիոնէ) — հուսաբեկում, con d. (կոն՝ դիսպերացիոնէ) — նույնն է՝ d i s p e r a t a m e n t e

disprezzo (իտ. դիսպրէցցո) — արհամարհանք

Dissonanz, dissonanza — տես՝ d i s o n a n c i a

distinto (իտ. դիստինտո) — պարզորոշ, որոշակի, ճշգրիտ

dito (իտ. դիտո) — մատ

ditteggiatura (իտ. դիտտեջջատուրա) — *մատադրում, ապլիկատուրա*

divertimento, D., divertissement, d. (իտ. դիվերտիմենտո, գեր. դիվերտիմենտո, ֆր. դիվերտիսսըման, անգ. դայվըրթիսմընթ) — *դիվերտիսմենտ*

divertissement — տես՝ d i v e r t i m e n t o

divisi (իտ. դիվիզի — բաժանվածներ) — *դիվիզի*

divotamente (իտ. դիվոտամէնտե)—նույնն է՝ d e v o t o

divoto (իտ. դիվոտո) — նույնն է՝ d e v o t o

divozione (իտ. դիվոցիոնէ)—նույնն է՝ d e v o z i o n e

di weiche Tonart — տես՝ w e i c h

do (դո) — յոթ հիմնական հնչյուններից առաջինի վանկային անվանումը: Սկզբում կոչվում էր *ուտ* (ut): Տառային անունն է C (ցե): Տես՝ *սոլմիզացիա*

dodecafonia, dodécaphonie, dodecaphony (իտ. դոդեկաֆոնիա, ֆր. դոդեկաֆոնի, անգ. դոդեկաֆոնի) — *դոդեկաֆոնիա*

doglia (իտ. դոլյա) — վիշտ, ցավ, դարդ con d. (կոն դոլյա) — նույնն է՝ d o g l i o s o

doglioso (իտ. դոլիոսո) — վշտաբեկ, ցավագին, դարդոտ

doigté, doigter (ֆր. դուատե, դուատե) — *մատադրում, ապլիկատուրա*

doina (ռումՀ. դոյնա) — *դոյնա*

dolce (իտ. դոլչէ,—քաղցր, դուրեկան)—քնքուշ, մեղմ, փաղաքշական d., ma marcato (դոլչէ, մա մարկատո) — քնքուշ (մեղմ), բայց պարզորոշ:

dolcemente (իտ. դոլչէմէնտե) — մեղմ, քնքուշ, դուրեկան

dolcezza (իտ. դոլչէցցա) — քնքշություն, մեղմություն, փաղաքշանք, con d. (կոն դոլչէցցա) — քնքշորեն, մեղմորեն, փաղաքշական:

dolcissimo (իտ. դոլչիսսիմո) — շատ քնքուշ, շատ մեղմ:

dolente (իտ. դոլենտէ — ցավագին, վշտագին) — աղիողորմ, լալագին, տխուր

dolentissimo (իտ. դոլենտիսսիմո) — շատ աղիողորմ, շատ տխուր:

dolore (իտ. դոլորէ) — թախիծ, վիշտ, տրտմություն, տանջանք, (կոն դոլորե) — նույնն է՝ doloroso

doloroso (իտ. դոլորոսո — ցավագին) — թախծոտ, վըշտալի, տրտում, տանջվելով:

dominant, dominante, d., D. (անգ. դոմինընտ, իտ. դոմինանտէ, ֆր. դոմինանտ, գեր. դոմինանտէ)—*դոմինանտա*

dopo (իտ. դոպո) — հետո, այնուհետև, ապա

doppel (գեր. դոպպէլ — զույգ) — կրկնակի

doppio (իտ. դոպպիո — զույգ) — կրկնակի

double (իտ. դուբլ) — 1. կրկնակի, տես՝ *դուբլ-բեմոլ, դուբլ-դիեզ*, (դուբլ-բեկար), 2. տարբերակ, տես՝ դուբլ:

double-bécarre (ֆր. դուբլ բեկառ) — *դուբլ-բեկար:*

double-bémol (ֆր. դուբլ-բեմոլ) — *դուբլ-բեմոլ:*

double coup de Lanque (ֆր. դուբլ կու դը լանգ — լեզվի կրկնակի հարված) նույնն է՝ d o p p e l z u n g e

double-dièse (ֆր. դուբլ-դիեզ) — *դուբլ-դիեզ*

doubles (ֆր. դուբլ) — նույնն է՝ v a r i a t i o n s

doucement (ֆր. դուսըման) — դանդաղ, քնքուշ, շոյանքով

douloureux (ֆր. դուլուրեո) — տանջալից, վշտահար (դարդոտ)

doux (ֆր. դու) — քնքուշ, մեղմ (դուրեկան)

dramatic, dramatique, dramaturgisch, drammatico (անգ. դրամատիք, ֆր. դրամատիք, գեր. դրամատուրգիշ, իտ. դրամմատիկո) — դրամատիկ (դրամատիկական)

dramatisch (գեր. դրամատիշ) — դրամատիկ, դրամատիկական

drame liturgique (ֆր. դրամ լիտուրժիք)—*լիտուրգիական դրամա*

dramma (իտ. դրամմա) — դրամա

dramma semiserio per musica (իտ. դրամմա սեմիսերիո պեր մուզիկա — *կիսալուրջ օպերա*) — *օպերա սեմիսերիա*

Dreiklang (գեր. Դրայկլանգ) — *եռահնչյուն*

dritta (իտ. դրիտտա) — նույնն է՝ d i r i t t a

droite (ֆր. դրոատ) — աջ, տես՝ m a i n

drolatique (ֆր. դրոլատիք) — զվարճալի, ծիծաղաշարժ

drone-bass (անգ. դրոն-բասս) — *բուրդոն*, տես՝ b o r d o n e

drum (անգ. դրամ)—թմբուկ, bass-drum (բասս-դրամ)—*մեծ թմբուկ* side-drum, snare-drum (սայդ-դրամ, սներ-դրամ) — փոքր թմբուկ, tenor-drum (թենըր-

դրամ)—գլանաձև թմբուկ: Տես՝ Kettle-drum

drums (անգ. դրամզ) — հարվածային նվագարաններ (ջազ նվագախումբ)

Dudelsack (գեր. Դուդելզակկ) — պարկապզուկ

Dudelsackpfeifer (գեր. Դուդելզակկպֆեյֆէր)—նույնն է՝ dudeler

due (իտ. երկու)

Duett, duetto (գեր. դուէտտ, իտ. դուէտտո) — *դուետ, երկյակ*

duettino (իտ. դուէտտինո) — *դուէտինո*

dulcimer (անգ. դուլսիմըր) — *ցիմբալ*

dumca (լեհ. դումկա, չեխ. դումկա) — *դումկա*

duo, d., d. (իտ. դուո, ֆր. դուո, անգ. դուո) — *դուէտ, երկյակ:*

duolo (իտ. դուոլո) — վիշտ, թախիծ, տրամադրություն, դարդ con d. (կոն դուոլո) — վշտալի, թախծալի, տրտում, դարդոտ

dur (դուռ) — դուռ (մ ա ժ ո ր)

duramente (իտ. դուրամենտե) — կոպիտ, չոր, խիստ:

dureté (ֆր. դյուրետե) — խստություն, չորություն, կոշտություն

durezza (իտ. դուռեցցա) — չորություն, կոպտություն, խստություն con d. (կոն դուռեցցա)—չորությամբ, կոպտությամբ, խստությամբ:

durissimo (իտ. դուռիսսիմո duro-ի գերադրական աստիճանը) — շատ չոր, շատ կոպիտ, շատ խիստ:

duro (իտ. դուռո) — չոր, կոպիտ, խիստ:

duster (գեր. դյուստեր) — մռայլ, դժկամ, տխրագին:

du talon — տես՝ talon

dux (լատ. դուքս — առաջնորդ) — այդպես է կոչվում *ֆուգա*-ի թեման՝ հիմնական տոնայնության մեջ:

Dynamik (գեր. Դինամիկ) — *դինամիկա, ուժաբանություն:*

E

E (լատ. է) — 1) Մի հնչյունի, մասնավորապես մեծ օկտավայի մի-ի տառային նշանակումը (կոնտրօկտավայինը E_1 կամ $\underline{E}$): 2) Մի մաժոր տոնայնության (E-dur) կրճատ նշանակումը:

e (լատ. է) — 1) Մի հնչյունի, մասնավորապես փոքր օկտավայի մի-ի տառային նշանակումը (առաջին օկտավայինը e^1, $\bar{e}$ կամ e', երկրորդինը e^2, $\bar{\bar{e}}$ կամ e'' և այլն): 2) Մի մինոր տոնայնության (e-moll) կրճատ նշանակումը:

echo, e., Ē., eco, e. (ֆր. էքո, անգ. էքո, էկո իտ., գեր. էխո, իսպ. էկո) — արձագանք

ecossaise [ֆր. էկոսսեզ — շոտլանդական] — շոտլանդական պար. է կ ո ս ե զ

édition, edition [ֆր. էդիսյոն, անգ. էդիշըն] — հրատարակություն

edizione [իտ. էդիցիոնե] — հրատարակություն

effeminatamente [իտ. էֆֆեմինատամենտե] — կանացիորեն, քնքշանքով (մեղմ, թեթև):

effeminatezza [իտ. էֆֆեմինատեցցա] — քնքշացածություն, փափկասունություն. con e. [կոն էֆֆեմինատեցցա] — քնքշանքով, կանացիորեն (մեղմ, թեթև):

égal, egal [ֆր. էգալ, գեր. էգալ] — հավասար, միօրինակ, հարթ (հնչողականություն)

eguale [իտ. էգուալե] — հավասար, միատեսակ, անփոփոխ, նման (հնչողություն և տեմպ)

eilend [գեր. այլենդ] — արագացնելով

einfach [գեր. այնֆախ — հասարակ, ոչ բարդ] — պարզ, սովորական:

Eingang [գեր. Այնգանգ — ներածական] — սկզբնանվագ

Einklang [գեր. Այնկլանգ] — համահնչյուն: Տես՝ Unisono

Einleitung [գեր. Այնլայտունգ — նախաբան] — *պրելյուդ, նախանվագ:*

Einschnitt [գեր. Այնշնիտտ-հատած] — ցեզուրա (դադար)

Eintritt [գեր. Այնտրիտտ — մուտք] — մ ու տ ք ա ն վ ա գ

Eis [էիս] — 1. Մի դիեզ հնչյունի, մասնավորապես մեծ օկտավայի մի դիեզ-ի տառային նշանակումը. (կոնտրօկտավայինը Eis_1 կամ $\underline{Eis}$): 2. Մի դիեզ մաժոր տոնայնության (Eis-dur) կրճատ նշանակումը:

eis [էիս] — 1. *մի դիեզ* հնչյունի, մասնավորապես փոքր օկտավայի *մի դիեզի* տառային նշանակումը. (առաջին օկտավայինը eis^1, $\bar{eis}$ կամ eis', երկրորդինը՝ eis^2, $\bar{\bar{eis}}$ կամ eis'' և այլն): 2. *մի դիեզ* մինոր տոնայնության (eis-moll) կրճատ նշանակումը:

élan [ֆր. էլան] — պոռթկում, ավյուն, թափ. avec é. [ավեք էլան] — պոռթկումով, ավյունով, թափով. (ուժգին, սրընթաց)

elargissez [ֆր. էլարժիսսե] — ընդլայնեցեք, ընդարձակեցեք, (դանդաղեցրեք):

eleganza [իտ. էլեգանցա] —նրբագեղություն, վայելչություն, նրբություն

elegia, e., Elegie, élégie [իտ. էլեջիա, իսպ. էլեխիա, գեր. էլեգիե, ֆր. էլեժի] — է լ ե գ ի ա:

elegiaco, élégiaque [իտ. էլեջիակո, ֆր. էլեժիաք] — 1) լալագին, աղիողորմ, էլեգիկ: 2) եղերերգու, եղերերգակ:

elevamento, elevazione [իտ. էլեվամենտո, էլեվացիոնե — բարձրացում] — բարձրություն, վեհություն:

elevato [իտ. էլեվատո] — վեհորեն, վեհամբարձորեն, (բարձր տրամադրությամբ):

eleventh [անգ. իլեվընթ — տասնմեկերորդ] — ո ւ ն դ ե գ ի մ ա:

embouchoir [ֆր. ամբուշուառ] — պղնձյա փողային նվագարանների բերանոց (մունդշտուկ), որը նվագելիս հպում են շրթունքներին:

embouchure [ֆր. ամբուշյուռ] — ա մ բ ու շ յ ու ր

émotion [ֆր. էմոսյոն] — հուզմունք, ապրում, էմոցիա, աֆեկտ. avec e. [ավեք էմոսյոն] — հուզիչ, սրտառուչ, ալեկոծ:

Empfindung [գեր. էմպֆինդունգ] — զգացմունք mit E. [միտ էմպֆինդունգ] — զգացմունքով:

emploi [ֆր. ամպլուա] — ա մ պ լ ու ա

en animant un peu [ֆր. ան անիմանէ էն պեո] — մի փոքր ավելի աշխույժ:

enarmonico, enharmonic, enharmonique, enharmonisch [իտ. էնարմոնիկո, անգ. էնհարմընիկ, ֆր. ընարմոնիք, գեր. էնհարմոնիշ] — է ն հ ա ր մ ո ն ի կ

en cédant — տես՝ c é d e r

enchainez [ֆր. անշենե] — կապեք (այսինքն՝ բազմամաս ստեղծագործության նշված մասը պիտի կատարել նախորդ մասի ավարտից անմիջապես հետո, առանց դադարի):

en conservant le rythme — տես՝ c o n s e r v e r

encore [ֆր. անկոր] — նորից, էլի

en dehors [ֆր. ան դըօռ] — զատելով (ավելի լսելի դարձնելով, մի փոքր ընդգծելով նշված ձայնը):

en elargissant [ֆր. ան էլարժիսան] — ընդլայնելով (դանդաղեցնելով):

energia, énergie [իտ. էներջիա, ֆր. էներժի] — եռանդ, ուժ:

energicamente, énergiquement [իտ. էներժիկամենտե, ֆր. էներժիքըման] — եռանդուն, վճռական, ազդու (ուժգին, թափով):

energico, énergique, energisch [իտ. էներջիկո, ֆր. էներժիք, գեր. էներգիշ] — ազդու, սաստիկ, զորավոր (ուժգին, եռանդուն, վճռական):

enfaticamente, enfatico (իտ. էնֆատիկամենտե, էնֆատիկո — ճոռոմաբար, ճոռոմ) — վերամբարձ, արտահայտիչ (ազդու):

Englich Horn (Englischorn) (գեր. էնգլիշ Հոռն (էնգլիշհոռն)) անգլիական փողակ, նույնն է՝ *ալտային հոբոյ*

en poussant (ֆր. ան պուսսան) — հրելով (ցուցում, որ աղեղը պիտի շարժել վարից-վեր (ավելի ճիշտ՝ աջից-ձախ, այսինքն՝ գլխիկից դեպի կոճղիկը): Տես՝ p o u s s é, e n t i r a n t

en retenant peu à peu (ֆր. ան ռըտնան պեո ա պեո) — հետզհետե դանդաղեցնելով:

ensemble, E. (ֆր. անսամբլ, գեր. անսամբլե) — *անսամբլ*

en serrant (ֆր. ան սեռան) — արագացնելով

en s'éteignant peu à peu (ֆր. ան սէտենյան պեո ա պեո) — կամաց-կամաց մարելով (աստիճանաբար մեղմացնել հնչողությունը մինչև նրա վերջնական մարումը):

en tirant (ֆր. ան տիրան) — քաշելով (ցուցում, որ աղեղը պիտի շարժել վերից-վար) ավելի ճիշտ՝ ձախից-աջ, այսինքն կոճղիկից դեպի գլխիկը: Տես՝ e n p o u s s a n t

entracte կամ entr'acte (ֆր. անտրակտ կամ անտր-ակտ) 1) *անտրակտ*, 2) *ընդմիջում:*

entrada, entrata, entrance (իսպ. էնտրադա, իտ. էնտրատա, անգ. էնթրընս) 1) ինտրոդուկցիա, 2) *ինտրադա*

entrain (ֆր. անտրեն) — զվարթություն, կայտառություն, կրակոտություն avec e. (ավեք անտրեն) — զվարթ, կայտառ, կրակոտ:

entrée (ֆր. անտրե) — 1) *Անտրէ*, 2) *ինտրադա:*

entrepreneur (ֆր. անտրըպրընեոր) — *անտրեպրենյոր*

entschlossen (գեր. էնտշլոսեն) — վճռական, եռանդուն

Entschlossenheit (գեր. էնտշլոսսենհայտ) — վճռականություն

entusiasmo (իտ. էնտուզիազմո) — խանդավառություն, ոգևորություն, (էնտուզիազմ)

entusiastico (իտ. էնտուզիաստիկո) — խանդավառ, ոգեվորված

épisode, episodio (ֆր. էպիզոդ, իտ. էպիզոդիո) — միջնադեպ, *էպիզոդ*, տես՝ *ինտերմեդիա*

equabile, equabilmente (իտ. էկուաբիլե, էկուալբիլմենտե) — հավասար (հավասարաչափ, համաչափ, հավասարաչափ):

equabilmente — տես՝ e q u a b i l e

erhaben (գեր. էրհաբեն) — վեհ, ազնվաբարո

eroicamente, eroico (իտ. էրոիկամենտե, էրոիկո — դյուցազնական, դյուցազնաբար) — հերոսական

eroico — տես՝ e r o i c a m e n t e

erotico, erotique (իտ. էրոտիկո, ֆր. էռոտիք-տարփական) — տարփալի, վավաշոտ (էրոտիկ). նաև՝ տարփերգական, սիրերգական:

erotique — տես՝ e r o t i c o

erzahlen (գեր. էրցեհլեն) — պատմել

Es (էս) — 1) մի բեմոլ հնչյունի, մասնավորապես մեծ օկտավայի մի բեմոլ տառային նշանակումը (կոնտրօկտավայինը՝ Es¹ կամ Es): 2) Մի բեմոլ մաժոր տոնայնության (Es — dur) կրճատ նշանակումը:

es (էս) — 1) մի բեմոլ հնչյունի, մասնավորապես փոքր օկտավայի մի բեմոլի տառային նշանակումը (առաջին օկտավայինը es¹, e̅s̅ կամ es', երկրորդինը es², e̅s̅ կամ es'' և այլն: 2) մի բեմոլ մինոր տոնայնության (es-moll) կրճատ նշանակումը:

esacordo (իտ. էզակորդո — վեցաղի) — *հեքսակորդ:*

esafonica, esafonale (իտ. էզաֆոնիկա, էզաֆոնալե) — *ամբողջատոն գամմա:*

esafonica scala (իտ. էզաֆոնիկա սկալա — ամբողջատոն սանդղակ) — *ամբողջատոն գամմա:*

esaltato (իտ. էզալտատո) — խանդավառ, հուզական (սքանչացած, կրակոտ):

esaltazione, exaltation (իտ. էզալտացիոնե, ֆր. էգզալտասիոն) — խանդավառություն, հուզավառություն, սքանչանք:

Es-dur (էս դուռ) — մի բեմոլ մաժոր (տոնայնություն)

esercizio, exercice (իտ. էզերչիցիո, Ֆր. էգզերսիս) — վարժություն, *էկզերսիս*

eses կամ **Eses** (էսէս) — մի դուբլ-բեմոլ հնչյունի տառային նշանակումը:

es-moll (էս-մոլլ) — մի բեմոլ մինոր (տոնայնություն)

espansivo (իտ. էսպանսիվո) — սրտագեղ, սրտաբուխ, էքսպանսիվ (զգացմունքները բուռն կերպով, անզուսպ արտահայտելը):

espirando (իտ. էսպիրանդո) — նվաղելով (շունչը փչելով, մեռնելով):

espressione, expression, e. (իտ. էսպրեսսիոնէ, Ֆր. էքսպրեսսիոն, անգ. էքսփրեշըն) — արտահայտչություն, արտահայտչականություն, էքսպրեսի, (կենդանություն) (իտ. կոն էսպրեսսիոնէ) — արտահայտիչ, էքսպրեսսիվ (կենդանությամբ):

espressionismo (իտ. էսպրեսսիոնիզմո) — *էքսպրեսիոնիզմ*

espressivo (իտ. էսպրեսսիվո) — արտահայտիչ, էքսպրեսսիվ, (կենդանի):

estaticamente, estatico (իտ. էստատիկամենտէ, էստատիկո) — խանդավառ, հափշտակված, հիացած:

estinguendo (իտ. էստինգուէնդո — մարելով, հանգցնելով) — (աստիճանաբար, թուլացնելով, մեղմացնելով (հնչողությունը):

estinguere (իտ. էստինգուէրե — հանգցնել, մարել) — (աստիճանաբար) թուլացնել, մեղմացնել, խլացնել (հնչողությունը):

estinto (իտ. էստինտո — հանգցրած, մարած) — (աստիճանաբար) թուլացված, խլացված, մեղմացված (հնչողությամբ):

estrinciendo (իտ. էստրինչենդո) — ուժգին

estro (իտ. էստրո) — ոգեշնչվածություն, ավյուն, նաև՝ քմահաճություն **con e.** (կոն էստրո) — ոգեշնչվածությամբ, ավյունով, քմահաճորեն:

estro poetico (իտ. էստրո պոէտիկո) — պոետիկ ոգեշնչվածություն

con e. p. (կոն էստրո պոետիկո) — պոետիկական ոգեշնչվածությամբ:

estudio (իսպ. էստուդիո) — *էտյուդ*

eterofonia (իտ. էտէրոֆոնիա) — *հետերոֆոնիա:*

etnomusicologia (իտ. էտնոմուզիկոլոջա) — երաժշտական ազգագրություն:

étude (Ֆր. էտյուդ) — *էտյուդ*

etwas (գեր. էտվաս) — փոքր ինչ, մի քիչ, մի փոքր, **op. e. sterker** (էտվաս շտյորկեր) — փոքր ինչ ավելի ուժգին

ex abrubto (լատ. էքս աբրուբտո) — հանկարծակի, միանգամից, անակնկալ, անսպասելի, հանպատրաստից

exalté (Ֆր. էկզալտե) — խանդավառ, հուզական (կրակոտ):

exécutant (Ֆր. էկզեկյուտան) — (երաժիշտ) — կատարող

exercice — տես՝ **esercizio**

expressif, expressive (Ֆր. էքսպրեսսիֆ, անգ. էքսփրեսիվ) — արտահայտիչ (ազդու):

expression — տես՝ **espressione**

expressivo (իտ. էքսպրեսսիվո) — նույնն է՝ **espressivo**

expressionism, expressionisme, Expressionismus (անգ. էքսփրեշընիզմ, Ֆր. էքսպրեսսիոնիսմ, գեր. էքսպրեսսիոնիզմուս) — *էքսպրեսիոնիզմ*

F

F (լատ. էֆ) — 1) Ֆա հնչյունի, մասնավորապես մեծ օկտավայի ֆա-ի տառային նշանակումը (կոնտրօկտավայինը F_1 կամ $\underline{F}$), 2) Ֆա մաժոր տոնայնության (F-dur) կրճատ նշանակումը, 3) բանալիի անուն:

f (լատ. էֆ) — 1) Ֆա հնչյունի, մասնավորապես փոքր օկտավայի ֆա-ի տառային նշանակումը (առաջին օկտավայինը f^1, $\bar{f}$ կամ f', երկրորդինը f^2, $\bar{\bar{f}}$ կամ f'' և այլն), 2) Ֆա մինոր (f-moll) տոնայնության (f-moll) կրճատ նշանակումը, 3) կրճատ՝ forte, 4) ջութակի ընտանիքին պատկանող նվագարանների հնչերեսի (դեկայի) վրայի լատինական էֆ-անմանը (փոքր անցքերի անունը (էֆ-եր):

fa (ֆա) — յոթ հիմնական հնչյուններից չորրորդի վանկային անունը: Տառային նշանակումն է F կամ f (էֆ): Տես՝ *սոլմիզացիա:*

facetamente, faceto (իտ. ֆաչետամենտէ, ֆաչետո) — կատակելով, թեթև, աշխույժ (ուրախ):

facetissimo (իտ. ֆաչետիսսիմո) — չափազանց թեթև ու աշխույժ (վառվռուն):

facile, f. (իտ. ֆաչիլէ, Ֆր. ֆասիլ) — հեշտ, դյուրին, մատչելի, հեշտությամբ, թեթև:

facilement, facilmente (Ֆր. ֆասիլըման, իտ. ֆաչիլմենտե) — (հեշտ, դյուրին, մատչելի) թեթև

facilita, facilité (իտ. ֆաչիլիտա, Ֆր. ֆասիլիտե) — հեշտություն, թեթևություն.

factura, facture, Faktur, fattura (լատ. ֆակտուրա, Ֆր. ֆակտուր, գեր. ֆակտուր, իտ. ֆատտուրա) — *ֆակտուրա*

Fagott, Fagotte (գեր. ֆագոտտ, ֆագոտտե) — *ֆագոտ*, ֆագոտներ

fagotto, fagotti (իտ. ֆագոտտո, ֆագոտտի) — *ֆագոտ*, ֆագոտներ

falset, Falsett, falsetto, fausset (անգ. ֆոլսետ, գեր. ֆալսետտ, իտ. ֆալսետտո, Ֆր. ֆոսսե — *ֆալցետ*

fandango (իսպ. ֆանդանգո) — *ֆանդանգո*

fanfara (իտ. ֆանֆարա) — 1) ֆանֆար, 2) *փողային նվագախումբ, 3) ստեղծագործություն փողային նվագախմբի համար, 4) տուշ:*

fanfare, f. (Ֆր. ֆանֆար, գեր. ֆանֆարե) — *ֆանֆար*

fantaisie, fantasia, f., Fantasie (Ֆր. ֆանտեզի, իտ.

ֆանտազիա, անգ. ֆանթազիա, գեր. ֆանտազիե)— *ֆանտազիա*, երևակայություն, քմահաճույք:

fantastico, fantastique (իտ. ֆանտաստիկո, ֆր. ֆանտաստիք)— ֆանտաստիկ, քմահաճ, (ֆանտաստիկորեն, քմահաճորեն):

farandola, farandole (իտ. ֆարանդոլա, ֆր. ֆարանդոլ) — *ֆարանդոլա*

farce, farsa (ֆր. ֆարս, իտ. ֆարսա) — *ֆարս*

farsa in musica (իտ. ֆարսա ին մուզիկա) — երաժշտական ֆարս

fastosamente, fastoso (իտ. ֆաստոզամենտե, ֆաստոզո — պերճությամբ, շքեղությամբ) — պերճաշուք, շքեղազարդ, շքեղ, փառահեղ, հոյակապ:

F-dur (էֆ-դուռ) — ֆա մաժոր (տոնայնություն)

febbrimente (իտ. ֆեբբրիմենտե)—հուզումնալից, տենդագին (աշխույժ, կենդանությամբ):

féerie, Feerie (ֆր. ֆեերի, գեր. ֆեերի)— ֆեերիա

feenhaft, féerique (գեր. ֆեենհաֆտ, ֆր. ֆեերիկ) — ֆեերիկական, կախարդական, մոգական, տես՝ ֆեերիա:

feierlich (գեր. ֆայերլիխ) — հանդիսավոր, տոնական

fermanente (իտ. ֆերմանենտե — հաստատապես) — պինդ, ամուր, հաստատուն (ուժգին)

fermare (իտ. ֆերմարե) — կանգնեցնել (դանդաղեցնել):

fermata (իտ. ֆերմատա — կանգառ) — *ֆերմատա*

fermé (ֆր. ֆերմե) — փակված, ծածկված (փակած, ծածկած):

fermezza (իտ. ֆերմեցցա) — պնդություն, ամրություն, հաստատունություն, տոկունություն.

fermissimo (իտ. ֆերմիսսիմո) — շատ ամուր (շատ ուժգին):

fermo (իտ. ֆերմո) — պինդ, աներեր (ուժգին) նաև՝ հապաղել, կանգ առած, անշարժ:

feroce (իտ. ֆերոչէ) — վայրենաբար, կատաղած, մոլեգին, սանձարձակ, (աներկյուղ, քաջասիրտ):

fervidamente (իտ. ֆերվիդամենտե)—կրակոտ, բոցաշունչ.

fervido (իտ. ֆերվիդո, բորբոքված, եռանդուն) — աշխույժ, կայտառ (կրակոտ, բուռն, ոգեշնչված):

fervore (իտ. ֆերվորե — եռանդ, բորբոքում)— ավյուն, ոգեշնչվածություն, կրակոտություն

Fes (Ֆէս) — 1) ֆա բեմոլ հնչյունի, մասնավորապես մեծ օկտավայի ֆա բեմոլի տառային նշանակումը (կոնտրօկտավայինը Fes$_1$ կամ Fes, 2) ֆա բեմոլ մաժոր տոնայնության (Fes-dur) կրճատ նշանակումը:

fes (ֆես)—1) ֆա բեմոլ հնչյունի, մասնավորապես փոքր օկտավայի ֆա բեմոլի տառային նշանակումը (առաջին օկտավայինը fes^1, fes կամ fes' երկրորդինը fes^2, fes կամ fes'' և այլն): 2) ֆա բեմոլ մինոր տոնայնության (fes-moll) կրճատ նշանակումը:

Առաջին օկտավայի ֆա բեմոլի տառային նշանակումը (առաջին օկտավայինը fes^1, $\overline{\text{fes}}$ կամ fes' երկրորդինը fes^2, $\overline{\overline{\text{fes}}}$ կամ fes'' և այլն): 2) ֆա բեմոլ մինոր տոնայնության (fes-moll) կրճատ նշանակումը:

festante, festivo, festosamente, festoso (իտ. ֆեստանտե, ֆեստիվո, ֆեստոզամենտե, ֆեստոզո)—տոնական, ուրախ, զվարթ, ցնծալից (ոգևորված):

festevole, festevolmente (իտ. ֆեստեվոլե, ֆեստեվոլմենտե) — ուրախ, զվարթ, (ուրախությամբ, զվարթությամբ):

festival, f., F. (իտ. ֆեստիվալ, գեր. ֆեստիվալ, ֆր. ֆեստիվալ) — *ֆեստիվալ*

festivamente (իտ. ֆեստիվամենտե) — հանդիսավոր

festivita (իտ. ֆեստիվիտա — տոն, տոնախմբություն)— ուրախություն, խնդություն

festlich (գեր. ֆեստլիխ) — տոնական, հանդիսավոր

feuer (գեր. ֆոյեր — կրակ, բոց) — կրակոտ, բոցավառ:

feurig (գեր. ֆոյրիգ)— բոցավառ, կրակոտ, ջերմ, կըրքոտ

fiaccamente (իտ. ֆիակկամենտե)—թույլ, հոգնած, անզոր

fiachezza (իտ. ֆիակեցցա) — թուլություն, հոգնածություն, անզորություն

fiasco (իտ. ֆիասկո — անհաջողություն, ձախողանք)— *ֆիասկո*

fiata (իտ. ֆիատա)— անգամ: Տես՝ **una fiata, due fiate**

fiati կամ fiatti (իտ. ֆիատի կամ ֆիատտի) — փողային նվագարանների ընդհանուր անվանումը:

fiato (իտ. ֆիատո) — շնչառություն, շունչ, (ստրումենտո ա ֆիատո) — փողային (շնչային) նվագարան:

fiducia (իտ. ֆիդուչիա) — վստահություն, աներերություն. **con f.** (կոն ֆիդուչիա) — վստահ, աներեր (վստահությամբ, աներերությամբ):

fieramente (իտ. ֆիերամենտե) — հպարտ, մոլեգին, բուռն

fierezza (իտ. ֆիերեցցա) — հպարտություն, համարձակություն (ցայտունություն)

fierissimo (իտ. ֆիերիսսիմո) — շատ համարձակ, շատ հպարտ, (շատ ուժգին)

fiero (իտ. ֆիերո) — համարձակ, հպարտ (ուժգին):

fiévreux (ֆր. ֆիեվրեո) — տենդորեն, տաքարյուն:

Figur, figura, figure (գեր. ֆիգուր, իտ. ֆիգուրա, ֆր. ֆիգյուր) — ֆիգուր

figuration, f., F., figurazione (ֆր. ֆիգյուրասիոն, անգ. ֆիգըրեյշն, գեր. ֆիգուրացիոն, իտ. ֆիգուրացիոնե) — *ֆիգուրացիա, ֆիգուրացում*, ձևավորում:

filando ((իտ. ֆիլանդո) — երկարաձգելով, ֆիլարեցնելով (ձայնը): Տես՝ **filare**

filare (իտ. ֆիլարե — ձգել, երկարաձգել (ծորել)) — ֆիլարեցնել

filare la voce (իտ. ֆիլարե լա վոչե) — ֆիլարեցնել ձայնը. տես՝ *ֆիլարեցնել*

filarmonica (իտ. ֆիլարմոնիկա) — *ֆիլհարմոնիա*
filata, filato, filate (իտ. ֆիլատա, ֆիլատո, ֆիլատե)— նույնն է՝ f i l a r e
filer (ֆր. ֆիլեր) — *ֆիլարեցնել*
fin (ֆր. ֆէն) — վերջ
fin'al (իտ. ֆինալ) — ընդհուպ մինչև
final[le], Finale, f. (ֆր. ֆինալ, գեր. ֆինալե, իտ. ֆինալե) — *ֆինալ*
Finalklausel (գեր. ֆինալկլաուզել) — նույնն է *կոդա*
fine (իտ. ֆինե) — վերջ. տես՝ a l f.
finezza (իտ. ֆինեցցա — գեղեցկություն, ճարտարություն) — նրբություն, նրբագեղություն.
Fingersatz (գեր. ֆինգերզատց) — *մատադրում, ապլիկատուրա*
fiocheto (իտ. ֆիոկետո) — խռպոտ, կերկերաձայն
fiochezza (իտ. ֆիոկեցցա) — խռպոտություն, կերկերություն
fioco (իտ. ֆիոկո) — խռպոտ, կերկերուն, թույլ, խուլ (տկար ձայն):
fioritura, F., fioriture (իտ. ֆիորիտուրա, գեր. ֆիորիտուրա, ֆր. ֆիորիտյուռ) — *ֆիորիտուրա*
Fis (Ֆիս) — 1) ֆա դիեզ հնչյունի, մասնավորապես մեծ օկտավայի ֆա դիեզի տառային նշանակումը (կոնտր օկտավայինը Fis^{1} կամ Fis): 2) ֆա դիեզ մաժոր տոնայնության (Fis-dur) կրճատ նշանակումը:
fis (ֆիս) — 1) ֆա դիեզ հնչյունի, մասնավորապես փոքր օկտավայի ֆա դիեզի տառային նշանակումը (առաջին օկտավայինը՝ fis', $\overline{\text{fis}}$ կամ fis', երկրորդինը՝ fis^{2}, $\overline{\overline{\text{fis}}}$ կամ fis'' և այլն): 2) ֆա դիեզ մինոր տոնայնության (fis-moll) կրճատ նշանակումը:
Fis-Harmonica (գեր. ֆիս-Հարմոնիկա)—նույնն է՝ M e l o d i c o n
Fisharmonium (գեր. ֆիսհարմոնիում) — *ֆիսհարմոնիա*
fisis կամ Fisis (ֆիսիս) — ֆա դուբլ դիեզ հնչյունի տառային նշանակումը:
Fistel (գեր. ֆիստէլ) — *ֆալցետ (ֆիստուլա):*
fistula (իտ. ֆիստուլա — փողակ, շվի) — *ֆիստուլա:*
flageolet, f., Flageolett, flagiolletto (անգ. ֆլաժոլետ, ֆր. ֆլաժոլե, գեր. ֆլաժոլետտ, իտ. ֆլաջոլետտո) — *ֆլաժոլետ*
flat (անգ. ֆլաթ) — *բեմոլ*
flautando, flantato (իտ. ֆլաուտանդո, ֆլաուտատո)— (հնչեցնել) ֆլեյտայի նման: (Լարային — աղեղնային նվագարաններ նվագելիս աղեղը լարերին են քսում *նվագակոթի* (գրիֆի) մոտ, որի հետևանքով ստացվում են ֆլեյտայի ձայնը հիշեցնող հնչյուններ):
flebile, flebilmente (իտ. ֆլեբիլե, ֆլեբիլմենտե)— ողբալի, ողբագին, ցավագին, տխուր (լալագին, աղիողորմ):
flessibile (իտ. ֆլեսսիբիլէ) — ճկուն, դյուրադարձ, դյուրարթեք, ճապուկ
flessibilita (իտ. ֆլեսսիբիլիտա) — ճկունություն, դյուրադարձություն, դյուրաթեքություն, կակղություն (մեղմություն), (կոն ֆլեսսիբիլիտա) — ճկուն, դյուրադարձ, դյուրաթեք, կակուղ (մեղմ)
fliessend (գեր. ֆլիեսսենդ) — հոսուն, սահուն
Flöte, Flöten (գեր. ֆլյուտե, ֆլյուտեն) — *ֆլեյտա*, ֆլեյտաներ
flottant (ֆր. ֆլոտտան) — սահուն (լողուն):
flotter (ֆր. ֆլոտտե) — սահուն, հոսուն:
Flügel (գեր. ֆլյուգել — թև (թռչունի) — (համերգային) — *ռոյալ*
fluidezza (իտ. ֆլուիդեցցա) — հոսունություն, սահունություն, կապակցվածություն, թեթևություն
fluido (իտ. ֆլուիդո — ծորան) — հոսուն, սահուն (կապակցված, թեթև)
flute, flute (անգ. ֆլյուտ, ֆր. ֆլյուտ) — *ֆլեյտա*
flute de Pan (ֆր. ֆլյուտ դը Պան-Պանի ֆլեյտան)— *Պանի սրինգը*
flutiste (ֆր. ֆլյուտիստ) — ֆլեյտահար (ֆլեյտիստ), ֆլեյտա նվագող:
f-moll (էֆ-մոլլ) — ֆա մինոր (տոնայնություն)
focoso (իտ. ֆոկոզո — բորբոքված, բռնկված) — կրակոտ, աշխույժ (նաև կատաղի):
foglietto (իտ. ֆոլիետտո — տպագրված թերթիկ) — երաժշտական ռեպլիկա (համառոտ պարտիտուրա). առաջին ջութակներից մեկի համար գրված հատուկ պարտիա, որում նշված են նվագախմբի մնացած նվագարանների մուտքերը և որով կարելի է նվագավարել (ղեկավարել նվագախումբը):
foglio verso (իտ. ֆոլյո վերսո — թերթիկի հակառակ կողմը) — (տես) հաջորդ էջում:
folia (պորտ. ֆոլիա) — *ֆոլիա:*
folle (իտ. ֆոլլե) — խելագար, խենթ
follement (ֆր. ֆոլլըման) — խենթի պես, խենթորեն
follezza (իտ. ֆոլլեցցա) — նույնն է՝ f o l l i a
follia (իտ. ֆոլլիա) — խելագարություն, խենթություն (նաև չարաճճիություն):
force (ֆր. ֆորս) — ուժ, ամրություն. à toute force (ա տուտ ֆորս) ամբողջ ուժով (հնարավորին չափ ուժգին)
forlane, furlana (ֆր. ֆորլան, իտ. ֆուրլանա) — *ֆորլանա:*
forte (իտ. ֆորտե) — *ուժգին*, ֆորտե
forte fortissimo (իտ. ֆորտե ֆորտիսսիմո) — չափազանց ուժգին (ֆորտիսսիմոից — ավելի ուժգին):
fortepiano (իտ. ֆորտեպիանո — բառացի՝ ուժգին, մեղմ) — *դաշնամուր*
forte possibile — տես՝ p o s s i b i l e
forte subito — տես՝ s u b i t o
forte tenuto — տես՝ t e n u t o
fortissimo (իտ. ֆորտիսսիմո — forte-ի գերադրական աստիճանը) — *ֆորտիսսիմո*
forza (իտ. ֆորցա — զորություն) — ուժ, եռանդ.

fourchette tonique (ֆր. ֆուրշետ տոնիք)—կամերտոն, ձայնոց:

foxtrot (անգ. ֆոքստրոտ) — *ֆոքստրոտ*

fragment, frammento (ֆր. ֆրագման, իտ. ֆրամմենտո) — *ֆրագմենտ*

francaise, francese (ֆր. ֆրանսեզ, իտ. ֆրանչեզե) — ֆրանսիական (գաղղիական):

francamente, franchement (իտ. ֆրանկամենտե, ֆր. ֆրաշման) — անկեղծորեն, ազատ, համարձակ (արիաբար):

franchezza (իտ. ֆրանկեցցա) — անկեղծություն, համարձակություն, վստահություն — արիություն.

franchissimo (իտ. ֆրանկիսսիմո — franco-ի գերադրական աստիճանը) չափազանց անկեղծ, վստահ, համարձակ ու արի:

frappe (ֆր. ֆրապպե — հարված, զարկ) — շեշտել (շեշտելով)

freddamente, freddo (իտ. ֆրեդդամենտե, ֆրեդդո) — սառը, անտարբեր, զուսպ. (նաև դանդաղ, ծուլ, անփույթ):

freddezza (իտ. ֆրեդդեցցա)— սառնություն, անտարբերություն, զսպվածություն (նաև՝ ծուլություն, անհոգություն)

fredon (ֆր. ֆռըդոն)— 1) *տրել* (դայլայլ), 2) *կրկներգ:*

fredonner (ֆր. ֆռըդոննե)— կիսաձայն (շատ մեղմ) երգել, (քթի տակ մռմռացնել):

frei (գեր. ֆրայ) — ազատ, ազատորեն

French horn (անգ. ֆրենչ հորն — ֆրանսիական փող)— *վալտորնա*

frescamente, fresco (իտ. ֆրեսկամենտե, ֆրեսկո) — առույգ, կայտառ (զվարթ):

fresco — տես՝ f r e s c a m e n t e

fretta (իտ. ֆրետտա) — շտապկոտություն, աճապարանք:

frettando (իտ. ֆրետտանդո) — արագացնելով, շտապեցնելով (նույնն է՝ s t r i n g e n d o)

frettoloso (իտ. ֆրետտոլոսո — շտապող, աճապարող)— շտապորեն, աճապարանքով (արագացնելով):

freudig (գեր. ֆրոյդիգ) — ուրախ, խնդալից

frisch (գեր. ֆրիշ) — զվարթ, կայտառ

friska (հունգ. ֆրիշկա) — *ֆրիշկա*

frivole, frivolo (ֆր. ֆրիվոլ, իտ. ֆրիվոլո — թեթև, աննշան) — թեթևամիտ, անպարկեշտ:

frivolezza (իտ. ֆրիվոլեցցա — թեթևություն) — թեթևամտություն, անպարկեշտություն):

froh (գեր. ֆրո) — ուրախ, խնդալից, գոհունակ:

fröhlich (գեր. ֆրոյլիխ) — ուրախ, խնդալից:

Frosch (գեր. ֆրոշ)— աղեղի կոճղիկ am F. (ամ ֆրոշ)— նույնն է՝ du t a l o n.

frottez (ֆր. ֆռոտտե) — քսեք (ծնծղաները միմյանց քսելով հնչեցնելու հատուկ ձև):

frullato (իտ. ֆրուլլատո)— ֆլեյտա կամ փող նվագելիս որևէ մեկ հնչյունի տրեմոլոյան բազմանգամ արագ կրկնումը. կամ գլիսսանդո-ն գամմայնման շարժման ժամանակ:

fuga, Fuge, fugue, f. (իտ. ֆուգա, գեր. ֆուգե, ֆր. ֆյուգ, անգ. ֆյուռ) *ֆուգա:*

fuga doppia (իտ. ֆուգա դոպպիա) — *կրկնակի ֆուգա:*

fugato (իտ. ֆուգատո) — *ֆուգատո*

fughetta (իտ. ֆագետտա) — *ֆուգետտա:*

funebre, funebre (իտ. ֆունեբրե, ֆր. ֆյունեբրի — հուղարկավորություն, մահաշշուկ)— թաղման, սգո, մահագույժ, տխրազդեցիկ:

funesto (իտ. ֆունեստո — դժնդակ, տխուր — մռայլ, չարագուշակ (վշտալի) դարդոտ):

fuoco, foco (իտ. ֆուոկո, ֆոկո — կրակ, հուր, բոց, բորբոքում, աշխուժություն, եռանդ, (ավյուն, ոգեշընչվածություն):

fuocoso (իտ. ֆուոկոզո) — կրակոտ, բռնկված, բորբոքված, եռանդոտ, աշխույժ, (ավյունով, ոգեշնչվածությամբ:

furia (իտ. ֆուրիա)— կատաղություն, մոլեգնություն:

furieux (ֆր. ֆյուրյե) — նույնն է՝ f u r i o s o

furioso (իտ. ֆուրիոզո) — մոլեգնած, կատաղի, բուռն:

G

G (լատ. Գե) — 1) Սոլ հնչյունի, մասնավորապես մեծ օկտավայի սոլ-ի տառային նշանակումը (կոնտրօկտավայինը G_1 կամ $\underline{G}$ սուբկոնտրօկտավայինը՝ G_2 կամ $\underline{\underline{G}}$), 2) Սոլ մաժոր տոնայնության (G-dur) կրճատ նշանակումը, 3) բանալիի անուն:

g (լատ. գե) — 1) սոլ հնչյունի, մասնավորապես փոքր օկտավայի սոլ-ի տառային նշանակումը (առաջին օկտավայինը՝ g^1, $\overline{g}$ կամ g' երկրորդինը՝ g^2, $\overline{\overline{g}}$ կամ g'' և այլն): 2) սոլ մինոր տոնայնության (g-moll) կրճատ նշանակումը: 3) բանալիի անուն:

gagliarda (իտ. գալյարդա) — *գալյարդա:*

gagliardo (իտ. գալյարդո — կորովի) — ուժգին, մոլեգին (բուռն):

gai, gaio (ֆր. գե, իտ. գայո) — ուրախ, աշխույժ, կայտառ, պայծառ:

gaiement, gaiment (ֆր. գեման, գեման) — ուրախ, աշխույժ:

gaillarde (ֆր. գայառդ) — *գալյարդա*

galantamente, galante (իտ. գալանտամենտե, գալանտե — վայելուչ, ազնիվ, գեղեցիկ) — նրբագեղ, նրբաբարո (նուրբ, սիրալիր):

galop, g., galopp (իտ. գալոպ, ֆր. գալո, գեր. գալոպպ) — *գալոպ*

gamba — (իտ. գամբա) — ոտք: Տես՝ *վիոլա դա գամբա*

gamma, gamme (հուն. գամմա, ֆր. գամմ) — *գամմա*

ganzer Bogen (գեր. գանցեր Բոգեն) — ամբողջ աղեղով (աղեղի ամբողջ երկարությամբ):

Ganzton (գեր. Գանցտոն) — *ամբողջ տոն*

Ganztonleiter (գեր. Գանցտոնլայտեր) — ամբողջատոն գամմա
garbatamente (իտ. գարբատամենտե — քաղաքավարությամբ) — նազանի, թեթև:
garbo (իտ. գարբո — քաղաքավարություն, վայելչություն, շնորհք) — նրբագեղություն, նազանիություն (նրբություն, դուրեկանություն)
gauche (ֆր. գոշ) — ձախ (ձեռքով):
gavota, gavotte, g., G. (իսպ. գավոտա, իտ. գավոտտա, ֆր. գավոտ, անգ. գավոտտ, գեր. Գավոտտէ) — *գավոտ*
G-dur (Գէ-դուռ) — սոլ մաժոր (տոնայնություն)
gebunden (գեր. գեբունդեն) — կապակցված, *լեգատո*
gehalten (գեր. գեհալտեն — զուսպ) — նույնն է՝ s o s t e n u t o
geheimnissvoll (գեր. գեհայմնիսֆոլ) — խորհրդավոր:
geistliche Music (գեր. գայստլիխե մուզիկ) — *հոգևոր երաժշտություն:*
gemächlich (գեր. գեմեխլիխ) — հանգիստ, հարմար, առանց շտապելու (դանդաղ):
gemässigt (գեր. գեմեսսիգտ) — հանգիստ, հանդարտ, զուսպ:
gemere (իտ. ջեմերե) — ողբալ, հեծել, տառապել, կսկծալ:
gemessen (գեր. գեմեսսեն) — չափված, ռիթմիկ, համաչափ (ծանրաբարո):
gemüthlich (գեր. գեմյուտլիխ) — դուրեկան, հարմարավետ, հանգիստ:
generoso (իտ. ջեներոզո) — հոյակապ, շքեղ, ազնվաշուք
Ges (Գես) — 1) Սոլ բեմոլ հնչյունի, մասնավորապես մեծ օկտավայի սոլ բեմոլի տառային նշանակումը (կոնտրօկտավայինը՝ Ges_1 կամ $\underline{Ges}$ սուբկոնտրօկտավայինը Ges_2 կամ $\underline{\underline{Ges}}$): 2) Սոլ բեմոլ մաժոր տոնայնության (Ges-dur) կրճատ նշանակումը:
ges (գես) — 1) սոլ բեմոլ հնչյունի, մասնավորապես փոքր օկտավայի սոլ բեմոլի տառային նշանակումը (առաջին օկտավայինը ges^1, $\overline{ges}$ կամ ges' երկրորդինը՝ ges^2, $\overline{\overline{ges}}$ կամ ges'' և այլն): 2) սոլ բեմոլ մինոր տոնայնության (ges-moll) կրճատ նշանակումը:
Gesamtausgabe (գեր. գեզամտաուսգաբե) — երկերի լիակատար ժողովածու
Gesang (գեր. գեզանգ) — երգեցողություն
Gesangabend (գեր. գեզանգաբենդ) — երգեցողության երեկո
gesanglich (գեր. գեզանգլիխ) — երգային
Gesangskunst (գեր. գեզանգսկունստ) — երգարվեստ, երգչային վարպետություն
Gesangstück (գեր. գեզանգշտյուկ) — երգելու համար գրված պիես՝ երգ, ռոմանս, արիա և այլն (նվագակցությամբ, կամ առանց նրա) այլ կերպ՝ վոկալ պիես, վոկալ ստեղծագործություն:
gesangvoll (գեր. գեզանգվոլ) — երգուն (արտահայտիչ)
Gesangwerk (գեր. Գեզանգվերկ) — նույնն է՝ G e s a n g s t u c k
geschliffen (գեր. գեշլիֆֆեն) — նրբաճաշակ, հղկված, (կոկիկ):
geschwind (գեր. գեշվինդ) — սրընթաց (ժիր):
geses կամ Geses (գեսես) — սոլ դուբլբեմոլ հնչյունի տառային նշանակումը:
gestopft (գեր. գեշտոպֆտ) — նույնն է՝ c o p e r t o
getragen (գեր. գետրագեն) — դանդաղ, հանդիսավոր (երկարաձիգ):
ghiribizzo (իտ. գիրիբիցցո — հանկարծական բեկում) — ֆանտազիա, քմայք (քմահաճություն)
giga, G., gigue, G. (իտ. ջիգա, գեր. ժիգա, ֆր. ժիգ, գեր. ժիգե) — *ժիգա*
giobiloso (իտ. ջոբիլոսո) — հրճվելով, ցնծալով:
giochevole (իտ. ջոկեվոլէ) — ուրախ, աշխույժ, խաղուն
giocondamente (իտ. ջոկոնդամենտե — զվարթությամբ) ուրախ, զվարթ, խնդուն:
giocondevole (իտ. ջոկոնդեվոլե) — ուրախ, զվարթ
giocondezza, giocondita (իտ. ջոկոնդեցցա, ջոկոնդիտա — զվարթություն) — ուրախություն, խնդություն, կենսուրախություն.
giocosamente, giocoso (իտ. ջոկոզամենտե, ջոկոզո) — ուրախությամբ, զվարթությամբ, (ուրախ, զվարթ, խաղուն). նաև՝ կատակելով, ծաղրելով:
giocoso — տես՝ g i o c o s a m e n t e
gioiosetto (իտ. ջոյոզետտո) — ուրախ, զվարթ (խաղուն):
gioioso (իտ. ջոյոզո) — ուրախ, զվարթ (խնդուն, ցնծուն):
gioviale (իտ. ջովիալե) — կենսուրախ, զվարթ, կայտառ
giovialita (իտ. ջովիալիտա) — կենսուրախություն, զվարթություն, կայտառություն
Gis (Գիս) — 1) Սոլ դիեզ հնչյունի, մասնավորապես մեծ օկտավայի սոլ դիեզի տառային նշանակումը (կոնտրօկտավայինը Gis_1 կամ $\underline{Gis}$ սուբկոնտրօկտավայինը Gis_2 կամ $\underline{\underline{Gis}}$), 2) սոլ դիեզ մաժոր տոնայնության (Gis-dur) կրճատ նշանակումը:
gis (գիս) — 1) սոլ դիեզ հնչյունի, մասնավորապես փոքր օկտավայի սոլ դիեզի տառային նշանակումը (առաջին օկտավայինը՝ gis^1, $\overline{gis}$ կամ gis' երկրորդինը՝ gis^2, $\overline{\overline{gis}}$ կամ gis'' և այլն), 2) սոլ դիեզ մինոր տոնայնության (gis-moll) կրճատ նշանակումը:
gisis կամ Gisis (գիսիս) — սոլ դուբլ դիեզ հնչյունի տառային նշանակումը:
gitana (իտ. ջիտանա) — *գիտանա:*
Gitarre (գեր. գիտարրե) — կիթառ:
giubilante (իտ. ջուբիլանտե) — ցնծալի, ուրախ:
giubilazione (իտ. ջուբիլացիոնե) — մեծ ուրախություն, ցնծություն:
giubilo (իտ. ջուբիլո) — ցնծություն, ուրախություն.
giubiloso (իտ. ջուբիլոսո) նույնն է՝ g i o b i l o s o
giucante, giuchevole (իտ. ջուկանտե, ջուկեվոլե) — ուրախ

giuoco (իտ. ջուոկո) — խաղ, կատակ

giusto (իտ. ջուստո — ճիշտ, ճշտիվ) — ճշտորեն, ճշգրտորեն, tempo g. (տեմպո ջուստո) — ճշտորեն պահպանել երաժշտության բնույթին համապատասխան տեմպը:

glänzend (գեր. գլենցենդ) — փայլուն

Glasharmonika (գեր.. գլասհարմոնիկա) — *ապակյա հարմոնիկա*

gleichmässig (գեր. գլայխմեսսիգ) — համաչափ, հարթ

glissando, g. (իտ. գլիսսանդո, ֆր. գլիսսանդո)—*գլիսսանդո*

Glocke, Glocken (գեր. գլոկկե, գլոկկեն) — զանգ, զանգեր

Glockenspiel (գեր. գլոկկենշպիլ)—*գլոկկենշպիլ, զանգակներ*

Gloria (լատ. գլորիա) — *գլորիա*

g-moll (գե-մոլլ) — սոլ մինոր (տոնայնություն)

gondoliera, Gondollied (իտ. գոնդոլիերա, գեր. գոնդելլիդ) — *գոնդոլիերա, բարկարոլլա*

Gondellied — տես՝ gondoliera

gong, g., g., G. (իտ. գոնգ, ֆր. գոն (գ), անգ. գոնգ, գեր. գոնգ) — *գոնգ, տամտամ* (տամ-տամ)

grace (անգ. գրեյս) — *ֆիորիտուրա*

gracieux, grazioso (ֆր. գրասյես, իտ. գրացիոսո) — վայելչագեղ, նրբագեղ, շոյուն, դուրեկան):

gradation, gradazione (ֆր. գռադասիոն, իտ. գրադացիոնե) — աստիճանականություն, նաև՝ երանգ. (ինչողության աստիճանական ուժեղացում կամ մեղմացում, տեմպի աստիճանական արագացում կամ դանդաղեցում):

gradevole, gradevolmente (իտ. գրադեվոլե, գրադեվոլմենտե) — դուրեկան, հաճելի, սիրալիր:

graditamente (իտ. գրադիտամենտե) — դուրեկան, հաճելի:

grado (իտ. գրադո)— 1) *աստիճան* A, g. a g. (ա գրադո ա գրադո)—աստիճանաբար, քիչ-քիչ di g. in g. (դի գրադո ին գրադո) — հետզհետե, աստիճանաբար, 2) *ինտերվալ:*

gran, grande (իտ. գրան, գրանդե) — մեծ

gran cassa (իտ. գրան կասսա) — *մեծ թմբուկ*

grand, grande (ֆր. գրան, գրանդ) — մեծ (ուժեղ, ուժգին, կարևոր):

grande caisse (ֆր. գրանդ կեսս) — *մեծ թմբուկ*

grandemente (իտ. գրանդեմէնտե) — հանդիսավոր, վեհասքանչ

grandezza (իտ. գրանդեցցա) — մեծություն, վեհություն, փառահեղություն, նաև՝ փայլ, շքեղություն

grandioso (իտ. գրանդիոսո) — վեհապանծ, վսեմ, մեծասքանչ:

grandisonante (իտ. գրանդիսոնանտե) — փառահեղ, հնչող:

grand pas (ֆր. գրան պա) — *գրան պա*

grave, g. (իտ. գրավե, ֆր. գրավ) — 1) ծանրաշարժ, հանդիսավոր, դանդաղ, խիստ, 2) ցածր (հնչյուն, ձայն, տոն) — *գրավե*

gravemente (իտ. գրավեմենտե — ծանր կերպով) — ծանրապես (դանդաղ, լրջամիտ):

gravetto (իտ. գրավետտո) — grave-ից քիչ ավելի արագ (հավասար է larghetto-ի արագությանը, սակայն կատարման բնույթը պիտի լինի ավելի խիստ ու հանդիսավոր:

gravézza (իտ. գրավեցցա) — ծանրություն, լրջություն, խստություն, նաև՝ թախիծ, տրտմություն

gravissimo (իտ. գրավիսսիմո grave-ի գերադրական աստիճանը) — շատ ծանր, շատ լուրջ, շատ խիստ, շատ դանդաղ, շատ հանդիսավոր:

gravita (իտ. գրավիտա) — ծանրություն, լրջություն, խստություն

grazia (իտ. գրացիա) — նազանք, նրբագեղություն, դուրեկանություն.

graziosamente (իտ. գրացիոսամենտե)—նույնն է՝ grazioso

graziosissimo (իտ. գրացիոսիսսիմո — grazioso-ի գերադրական աստիճանը)—շատ նազանի, շատ նրբագեղ, շատ գրավիչ:

grazioso — տես՝ gracieux

Griff (գեր. գրիֆֆ)— նվագակոթ գրիֆ beim G. (բայմ Griff) — (նվագել) նվագակոթի մոտ (աղեղը լարերին քսել նվագակոթի մոտ):

groß (գեր. գրոսս) — մեծ

grotesco (իտ. գրոտեսկո) — գրոտեսկ (օտարոտի, ֆանտաստիկ, տարօրինակ, այլանդակ, ծիծաղելի):

grotesque (ֆր. գրոտեսկ) — նույնն է՝ grotesco

gruppetto (իտ. գրուպպետտո) — *խմբավորում:*

guaracha (իսպ. գուարաչա) — *գուարաչա*

guerriero (իտ. գուերրիերո) — պատերազմող, պատերազմական (ռազմաշունչ):

guitar, guitara, guitare, Guitarre (անգ. գիթառ, իսպ. գիտառա, ֆր. գիտառ, գեր. գիտառ) — *կիթառ*

gusto (իտ. գուստո)—ճաշակ (գեղեցիկի զգացողություն). (կոն գուստո) — ճաշակով (գեղեցիկ զգացողությամբ):

gustoso (իտ. գուստոսո — համեղ) — ճաշակով (գեղեցիկի զգացողությամբ):

H

H (լատ. հա) — 1) սի հնչյունի, մասնավորապես մեծ օկտավայի սի-ի տառային նշանակումը (կոնտրօկտավայինը՝ H_1 կամ $\underline{H}$, սուբկոնտրօկտավայինը՝ H_2 կամ $\underline{\underline{H}}$), 2) սի մաժոր տոնայնության (H-dur) կրճատ նշանակումը:

h (լատ. հա) — 1) սի հնչյունի, մասնավորապես փոքր օկտավայի սի-ի տառային նշանակումը (առաջին օկտավայինը h^1, $\bar{h}$ կամ h', երկրորդինը՝ h^2, $\bar{\bar{h}}$ կամ

h" և այլն), 2) սի մինոր տոնայնության (h-moll) կրճատ նշանակումը:

Halbcadenz (գեր. Հալբկադենց) — կիսակադանս (ավարտվում է դոմինանտայով):

Halbton (գեր. հալբտոն) — *կիսատոն*

halleluja (գեր. հալլելույա) — *ալելույա* ժամերգության ժամանակ՝ գովք, փառաբանում արտահայտող բացականչություն:

Hammerklavier (գեր. համմերկլավիր — մուրճիկներով կլավիր) — հնում՝ դաշնամուր-ի անվանումը Գերմանիայում:

Hand (գեր. հանդ) — ձեռք: Տես՝ r e c h t e H a n d, l i n k e H a n d

Handlung (գեր. հանդլունգ) — գործողություն, արար, արարված:

harmonie (ֆր. առմոնի) — 1) հարմոնիա, համահնչյուն, բարեհնչյուն, 2) *փողային նվագախումբ*

Harmoniemusik (գեր. հարմոնիմուզիկ) — 1) ստեղծագործություն փողային նվագախմբի համար, 2) *փողային նվագախումբ:*

Harmonik (գեր. հարմոնիկ) — *հարմոնիա:*

harmonique (ֆր. հարմոնիկ) — 1) հարմոնիկ, ներդաշնակ, 2) օբերտոն, son h (սոն հարմոնիկ) — մասնակի ձայն. *ֆլաժոլետ:*

harmonisation (ֆր. առմոնիզասիոն) — ներդաշնակում

harmonize (անգ. հարմոնայզ) — վերադաշնակել (արանժեվորել)

harmony (անգ. հարմընի) — ներդաշնակություն (հարմոնիա), բարեհնչյունություն

hastig (գեր. հաստիգ) — փութկոտ, սրընթաց, կրակոտ:

haut (ֆր. o) — բարձր

haut dessus (ֆր. դըսսյու) — բարձր *սոպրանո*, բարձր *դիսկանտ*

haute-contre (ֆր. օտ կոնտրը) — *ալտ* (երգչաձայն)

heftig (գեր. հեֆտիգ) — սրընթաց, փոթորկալից, կրակոտ, ուժգին (բուռն, թափով, զիլ, սուր):

heimlich (գեր. հայմլիխ) — գաղտնի, ծածուկ, խորհրդավոր

heiter (հայտեր) — ուրախ, խնդուն, պայծառ, լուսավոր:

hell (գեր. հել) — պայծառ, վառ, զնգուն, հնչեղ:

heptachord (հուն. հեպտախորդ — յոթ լարանի) — *հեպտախորդ:*

héroique (ֆր. էռոիք) — հերոսական. հերոսային, քաջարի

heroisch (գեր. հերոիշ) — հերոսական

hervortreten (գեր. հերֆորտրետեն — առաջ կարկառվել (աչքի ընկնել)) — զատել (ընդգծել):

herzlich (գեր. հերցլիխ) — սրտանց, անկեղծորեն:

Heterophonie, h. (գեր. հետերոֆոնի, ֆր. էտերոֆոնի) — *հետերոֆոնիա:*

Hexachord (գեր. հեքսախորդ — վեց աղի (վեց լարանի)) — *հեքսախորդ:*

hier (գեր. հիր) — այստեղ von h. an (ֆոն հիլան) — այստեղից

His (հիս) 1) սի դիեզ հնչյունի, մասնավորապես մեծ օկտավայի սի դիեզ տառային նշանակումը (կոնտրօկտավայինը՝ His_1 կամ $\underline{His}$ սուբկոնտրօկտավայինը՝ His_2 կամ $\underline{\underline{His}}$), 2) սի դիեզ մաժոր տոնայնության (His-dur) կրճատ նշանակումը:

his (հիս) — 1) սի դիեզ հնչյունի, մասնավորապես փոքր օկտավայի սի դիեզի տառային նշանակումը (առաջին օկտավայինը his^1, his կամ $\overrightarrow{his}$' երկրորդինը his^2, $\overrightarrow{\overrightarrow{his}}$ կամ his" և այլն), 2) սի դիեզ մինոր տոնայնության (his-moll) կրճատ նշանակումը:

Holz (գեր. հոլց — (այտ) — կրճատ H o l z b l a s i n s t r u m e n t e

Holzbläser (գեր. հոլցբլեսեր) — փայտյա փողային նվագարաններ

Holzblasinstrumente (գեր. հոլցբլասինստրումենտե) — փայտյա փողային նվագարաններ

homophonie (հունարենից — հոմոֆոնիե) — *հոմոֆոնիա:*

hongrois (ֆր. օնգրուա) — հունգարական

Humor, humour (գեր. հումոր, ֆր. յումուր) — հումոր (միտ հումոր) — հումորով:

Humoreske, humoresque (գեր. հումորեսկե, ֆր. յումորէսկ) — *հումորեսկա*

hymn, hymne, hymnus (անգ. հիմն, ֆր. հիմն, լատ. հիմնուս) — 1) հիմն, 2) օրհներգ, գովերգ:

Hymne, Hymnos, Himnus (գեր. հիմնե, հիմնոս, հիմնուս) — հիմն:

I

idillio, idyll, idylle (իտ. իդիլլիո, անգ. իդիլլ, ֆր. իդիլլ) — հովվերգություն (իդիլլիա):

il basso ben marcato (իտ. իլ բասսո բեն մարկատո) — լավ ընդգծելով բասը:

il doppio movimento (իտ. իլ դոպպիո մովիմենտո) — կրկնակի արագությամբ: Տես՝ d o p p i o m o v i m e n t o

ilarita (իտ. իլարիտա) — զվարթություն, ուրախություն, խինդ (կոն իլարիտա) — զվարթ, ուրախ, խնդուն:

il tempo crescendo (իտ. իլ տեմպո կրեշենդո) — արագացնելով տեմպը:

im klagenden Ton (գեր. իմ կլագենդե Տոն) — լալագին, աղիողորմ, շատ տխուր:

im lebhaftesten Zeitmasse (գեր. իմ լեբհաֆտեստեն ցայտմասսե) — շատ աշխույժ:

imitando (իտ. իմիտանդո) — նմանվելով, նմանեցնելով

imitando la voce (իտ. իմիտանդո լա վոչե) — նմանվելով երգչաձայնին (նվագարանով կրկնել երգչի կատարած դարձվածքը):

imitation, i., I., imitazione (ֆր. իմիտասիոն, անգ. m e n t o

իմիտեյշընն, գեր. իմիտացիոն, իտ. իմիտացիոնե)— *իմիտացիա*

imitazione — տես՝ **imitation**

im massigen Zeitmaß — տես՝ **Zeitmaß**

immer (գեր. իմմեր)—միշտ, շարունակ: Տես՝ **sempre**

impaziente, impazientemente (իտ. իմպացիենտե, իմպացիենտե) — անհամբեր, նեղսիրտ (անհանգիստ)

impazienza (իտ. իմպացիենցա) — անհամբերություն, անհանգստություն, նեղսրտություն

imperioso, imperieux (իտ. իմպերիոզո, ֆր. էմպերյեո) — հրամայողական

impeto (իտ. իմպետո) — պոռթկում, գրոհ, ոգևորություն

impetuosamente, impetuoso (իտ. իմպետուոզամենտե, իմպետուոզո) — բուռն, սրընթաց, կրակոտ, բորբոքուն, (ջերմ):

imponente (իտ. իմպոնենտե) — ազդու, արտահայտիչ:

impresario (իտ. իմպրեսարիո) — *իմպրեսարիո, անտրեպրենյոր:*

impression (ֆր. էմպրեսիոն) — տպավորություն:

impressionism, impressionisme, impressionismo, Impressionismus (անգ. իմփրեշընիզմ, ֆր. իմպրեսիոնիսմ, իտ. իմպրեսիոնիզմո, գեր. իմպրեսիոնիզմոս) — *իմպրեսիոնիզմ*

impromtu (ֆր. էմպրոմտյու) — *էքսպրոմտ*

improvisation (ֆր. էմպրովիզասիոն) — իմպրովիզացիա

improvvisamente, improvviso (իտ. իմպրովվիզամենտե, իմպրովվիզո) — անսպասելիորեն, հանկարծակի, անակնկալ: Տես՝ *իմպրովիզացիա:*

improvvisata, improvvisazione (իտ. իմպրովվիզատա, իմպրովվիզացիոնե) — *իմպրովիզացիա*

improvviso — տես՝ **improvvisamente**

im Takt — տես՝ **Takt**

in (իտ. ին) — մեջ, դեպի — ից, վրա (պես ձևով):

in (գեր. ին) — մեջ, դեպի, վրա

in A, in B, in D, in E, in Es, in F, in G, in As (իտ. ին Ա, ին Բէ, ին Դէ, ին Է, ին Էս, ին Էֆ, ին Գէ, ին Աս)—փոխադրող կամ տոնայնափոխ (ուրիշ տոնայնության տեղափոխող, ուրիշ տոնայնությունում հնչող) նվագարանների լարվածքները: Տես՝ *տոնայնափոխ նվագարաններ, փոխադրող նվագարաններ:*

in C (իտ. ին Ցե) — բոլոր այն նվագարանների լարվածքը, որոնք հնչում են ճիշտ այնպես, ինչպես գրված է նոտաներում: Տես՝ *տոնայնափոխ նվագարաններ, փոխադրող նվագարաններ:*

incalzando (իտ. ինկալցանդո) — արագացնելով (տեմպը):

incrociando (իտ. ինկրոչանդո) — (ձեռքերը) խաչաձևելով (դաշնամուր կամ նման այլ ստեղնաշարային նվագարան նվագելիս):

indebolire (իտ. ինդեբոլիրե) — թուլացնել (մեղմացնել հնչողությունը)

indeciso (իտ. ինդեչիզո — տարտամ, վարարմիտ) — անվճռական, անորոշ (տատանվելով, երկբայելով):

indifferente (իտ. ինդիֆֆերենտե) — անտարբեր, սառնասիրտ, (սառը), անհոգ, ինդիֆերենտ

indifferenza (իտ. ինդիֆֆերենցա)— անտարբերություն, սառնասրտություն, (սառնություն) անհոգություն, ինդիֆերենտություն

indolente (իտ. ինդոլենտե)— անհոգ, անփույթ, անզգա:

indolenza (իտ. ինդոլենցա) — անհոգություն, անփութություն, անզգայություն,

infernale (իտ. ինֆերնալէ — դժոխքի, սոսկալի, չար) — դժոխային (դիվային, սարսափելի, զարհուրելի):

infocarsi (իտ. ինֆոկարսի) — բոցավառվել, բորբոքվել, ոգևորվել

ingenuo (իտ. ինջենուո) — պարզամիտ (պարզասիրտ), միամիտ, անկեղծ (նաև համարձակ):

innig (գեր. իննիգ) — անկեղծ, սրտակից, մտերմական

inno (իտ. իննո) — 1) Հիմն, 2) Օրհներգ, գովերգ:

innocente (իտ. իննոչենտե) — անմեղ, մաքուր, պարզ (միամիտ):

innocenza (իտ. իննոչենցա) — անմեղություն, մաքրություն, պարզություն (միամտություն)

inquietissimo — տես՝ **inquieto**

inquieto (իտ. ինկուիետո) — տագնապալի, հուզումնալի, անհանգիստ, **inquietissimo** (ինկուետիսսիմո)—շատ անհանգիստ, չափազանց, հուզումնալի ու տագնապալի:

insensibile (իտ. ինսենսիբիլե — անզգա) — անզգալի, աննկատելի, աննշմարելի (այսինքն՝ տեմպը արագացնել կամ դանդաղեցնել, կամ հնչողությունն ուժեղացնել կամ մեղմացնել հազիվ զգացվող (հազիվ նկատելի) աստիճականությամբ:

insieme (իտ. ինսիեմե — միասին, բոլորը միատեղ)—*անսամբլ*

instantemente, istantemente (իտ. ինստանտեմենտե, իստանտեմենտե — վայրկյանաբար) — հանկարծակի, անակնկալ:

instrument, i., I, (ֆր. էնստրյուման, անգ. ինսթրումընթ, գեր. ինստրումենտ) — **նվագարան**

instrumental, i., i. (ֆր. էնստրյումանտալ, անգ. ինսթրումենթըլ, գեր. ինստրումենտալ) — նվագարանային, նվագային:

Instrumentalmusik (գեր. ինստրումենտալմուզիկ)—նվագային երաժշտություն, նվագարանային երաժըշտություն:

instrumentation, i., I., Instrusentierung (ֆր. էնստրումենտասիոն, անգ. ինստրումենթեյշընն, գեր. ինստրումենտացիոն, ինստրումենտիրունգ) — *նվագարանավորում:*

Instrumentenkunde (գեր. ինստրումենտենկունդե) — նվագարանագիտություն:

instrumento, (իտ. ինստրումենտո — գործիք)— նվագարան: Տես՝ **istrumento**

interludio, interludium (իտ. ինտերլուդիո, ինտերլուդիում) — *ինտերլյուդիա:*

intermède, intermedio, Intermedium (ֆր. էնտերմէդ, իտ. ինտերմեդիո, գեր. ինտերմեդիում) — *ինտերմեդիա*, տես՝ *դիվերտիսմենտ:*

intermedietto (իտ. ինտերմեդիետտո) — շատ փոքր (կարճ) *ինտերմեդիա:*

intermezzo, i. (իտ. ինտերմեձձո, անգ. ինտերմեցցո — դադար, ընդմիջում, միջին, միջանկյալ) — (երաժշտական) — ինտերմեցցո (թատերական) *ինտերմեդիա, միջախաղ:*

interruption (ֆր. էնտեռռյուպսիոն) — ընդհատում, դադար, կանգ առում sans i. (սան զէնտեռռյուպսիոն) — առանց ընդհատման, առանց կանգ առնելու:

interruzione (իտ. ինտերրուցիոնե) — ընդհատում, դադար, կանգառում senza i. (սենցա ինտերրուցիոնե) — առանց կանգ առնելու, առանց ընդհատման

Intervall, intervalle, intervallo, intervallum (գեր. ինտերվալլ, ֆր. էնտեռվալլ, իտ. ինտերվալլո, լատ. ինտերվալլում) — *ինտերվալ*

intime, intimo (ֆր. էնտիմ, իտ. ինտիմո — ներքին, խորը) — մտերիմ, մոտիկ, սրտակից, ինտիմ:

intonare (իտ. ինտոնարե) — 1) ելևէջել, հնչեցնել (ձայն հանել, ձայն տալ, 2) նախերգել, 3) վերածել երաժշտության, 4) լարել նվագարան:

intonation, I., intonazione (ֆր. էնտոնասիոն, գեր. ինտոնացիոն, իտ. ինտոնացիոնէ) — ելևէջ (*ինտոնացիա*)

intonatore (իտ. ինտոնատորե) — *նախերգիչ:*

intonieren (գեր. ինտոնիրէն) — ելևեջել (ինտոնացնել)

intrada, Intrade (իտ. ինտրադա, գեր. ինտրադե) — *ինտրադա:*

in tre — տես՝ t r e

intrepidamente, intrepido (իտ. ինտրեպիդամենտե, ինտրեպիդո) — անվախ, խիզախ, անվեհեր, աներկյուղ:

intrepidezza (իտ. ինտրեպիդեցցա) — անվախություն, խիզախություն, անվեհություն, աներկյուղություն. con i. (կոն ինտրեպիդեցցա) — անվախորեն, խիզախորեն, անվեհեր, աներկյուղ:

introduction, i., Introduktion, introduzione (ֆր. էնտրոդյուկսյոն, անգ. ինտրոդաքշըն, գեր. ինտրոդուկցիոն, իտ. ինտրոդուցիոնէ — նախաբան ներածություն) — *ինտրոդուկցիա, նախաբան,* տես՝ նաև *նախերգանք:*

in uno (իտ. ին ունո) — մեկի (չափ տալիս նշվում է տակտերի միայն առաջին մասերը):

invention, i., I., invenzione (ֆր. էնվանսիոն, անգ. ինվենշըն, գեր. ինվենցիոն, իտ. ինվենցիոնե) — *ինվենցիա*

ira (իտ. իրա) — զայրույթ, բարկություն, ցասում

irato (իտ. իրատո) — բարկացած, ցասկոտ, զայրացած:

ironia (իտ. իրոնիա) — հեգնանք, ծաղր

ironicamente, ironico (իտ. իրոնիկամենտէ, իրոնիկո) — հեգնական, ծաղրական:

ironico — տես՝ i r o n i c a m e n t e.

irresoluto (իտ. իրրեսոլուտո — տարտամ, վարանամիտ) — անվճռականորեն, երկմտորեն:

istantemente — տես՝ i n s t a n t e m e n t e

istesso — տես՝ l' i s t e s s o, s t e s s o, l' i s t e s s o t e m p o, l o s t e s s o t e m p o

istrumentale, strumentale (իտ. իստրումենտալե, ստրումենտալե — գործիական, գործիքային) — նվագարանային (նվագային): musica i., musica s. (մուզիկա իստրումենտալե, մուզիկա ստրումենտալե) — *նվագ (րանա)յին երաժշտություն, նվագերաժշտություն,* concerto i., concerto s. (կոնչերտո իստրումենտալա, կոնչերտտ ստրումենտալե) — նվագա(րանա)յին երաժշտության համերգ, նվագերաժշտության համերգ:

istrumentare, strumentare (իտ. իստրումենտարե, ստրումենտարէ) — նվագարանավորել (տես՝ *նվագարանավորում):*

istrumentario (իտ. իստրումենտարիո) — *նվագարանք*

istrumentatore (իտ. իստրուկմենտատորե) — նվագարանավորող, նվագարանավորման հեղինակ: Տես՝ *նվագարանավորում:*

istrumentatura (իտ. իստրումենտատուրա) — 1) նվագարանավորում, 2) *պարտիտուր:*

istrumentazione, strumentazione (իտ. իստրումենտացիոնե, ստրումենտացիոնե) — *նվագարանավորում,* (նվագարանավորագիտություն):

instrumentista, strumentista (իտ. իստրումենտիստա, ստրումենտիստա) — նվագարանահար, նվագահար, նվագածու, նվագիչ (նվագարանահարուհի և այլն):

istrumento, strumento (իտ. իստրումենտո, ստրումենտո — գործիք (երաժշտական գործիք)՝ — *նվագարան* i. կամ s. a corda (իստրումենտո կամ ստրումենտա ա կորդա) — լարային նվագարան: i կամ s. a fiato (իստրումենտո կամ ստրումենտա ա ֆյատո) — փողային նվագարան. i. կամ s. percussione (իստրումենտո կամ ստրումենտո պերկուսսիոնէ) — հարվածային նվագարան. i. կամ s. a pizzico (իստրումենտո կամ ստրումենտո ա պիցցիկո) — *կսմիթային նվագարան.* i կամ s. a tasto (իստրումենտո կամ ստրումենտո ա տաստո)—ստեղնային նվագարան. i. կամ s. a vento (իստրումենտո կամ ստրումենտո ա վենտո)—փողային նվագարան:

istruttore del coro (իտ. իստրուտտորե դել կորո — երգչախմբի մարզիչ) — *խմբավար*

ivresse (ֆր. իվրեսս) — արբեցում, սքանչանք (խանդավառություն):

J

Jahrbuch (գեր. Յարբուխ) — տարեգիրք:

jaleo (իսպ. խալեո — աղմկալի ուրախություն)—խալեո:

jazz, J. (անգ. ջազզ, ֆր. ժյազ) — *ջազ:*

jazz band կամ jazzband — տես՝ band
Jazzband, Jazzkapelle (գեր. ջազբանդ ջազ բանդ): Տես՝ orchestra di jazz orchestre de jazz
Jeu Liturgique (ֆր. ժեո լիտյուրժիք)— *միստերիա:*
jig (անգ. ջիգ) — *ժիգա*
jocoso (իսպ. խոկոսո) — ուրախ, զվարճալի:
jodel, jodler (գեր. Յոդել, յոդլեր)— *յոդել, յոդլեր*
Jodeln (գեր. Յոդելն)— գեղգեղանքներով (կլկլոցներով) երգեցողություն (տիրոլականի նման):
jouer (ֆր. ժուե) — նվագել:
joyeux (ֆր. ժուայե) — ուրախ, խնդուն:
jubiloso (իսպ. խուբիլոսո) — խնդուն, ցնծացող, ուրախ:
jusqu'á la fin (ֆր. ժյուսկ ա լա ֆեն) — մինչև վերջ:
jusque (ֆր. ժյուսկ) — մինչև:

K

Kadenz (գեր. կադենց) — *կադենցիա*
kakophonie (հունարենից՝ կակոֆոնի) — *կակոֆոնիա:*
Kammermusik (գեր. կամմերմուզիկ) — *կամերային երաժշտություն*
Kammersonate (գեր. կամմերսոնատե)— կամերային սոնատ: Տես՝ sonata da camera
Kammerton (գեր. Կամմերտոն) — *կամերտոն, ձայնոց:*
Kanon (գեր. Կանոն) — կանոն, տես՝ canon
Kantate (գեր. Կանտատե) — *կանտատ*
Kantilene (գեր. Կանտիլենե) — *Կանտիլենա*
Kantor (գեր. Կանտոր) — *կանտոր*
Kanzone (գեր. Կանցոնե) — *կանցոնա*
Kanzonetta (գեր. կանցոնետտա) — *կանցոնետտա*
Kapelle (գեր. կապելլե) — *կապելլա*
Kastagnetten (գեր. Կաստանյետտեն) — *կաստանյետներ*
Katzenmusik (գեր. Կատցենմուզիկ)— «Կատուների երաժշտություն» «կատուների համերգ» (ծաղրական) տես՝ charivari
kaum (գեր. կաում) — հազիվ, միայն, մի քիչ, հազիվհազ
Kavatine (գեր. կավատինե) — *կավատինա:*
keck (գեր. կեկկ)— համարձակ, հանդուգն, կայտառ:
key (անգ. քի) — 1) բանալի, 2) ստեղն, 3) *կափույր,* (խփասարք, կլապան):
key-board (անգ. քի բոորդ) — *ստեղնաշար:*
keynote (անգ. քինոթ) — *տոնիկա:*
Kielflügel (գեր. կիլֆլյուգել) — *կլավեսին:*
Kirchenchor (գեր. Կիրխենխոր) — եկեղեցական երգչախումբ:
kirchenlied (գեր. Կիրխենլիդ — եկեղեցական երգ, հոգեվոր երգ) — *խորալ:*
kirchenmusik (գեր. Կիրխենմուզիկ) — *եկեղեցական երաժշտություն*
kirchensonate (գեր. Կիրխենսոնատե) — *եկեղեցական սոնատ, տես՝* sonata da ciesa
kirchentonarten (գեր. Կիրխենտոնարտեն) — *եկեղեցական լադեր (միջնադարյան լադեր):*
klagend (գեր. Կլագենդ) — ողբագին, լալագին, աղիողորմ:
Klang (գեր. Կլանգ) — հնչողություն, *ձայն:*
Klangfarbe (գեր. Կլանգֆարբե) — *հնչերանգ (տեմբր):*
klangvoll (գեր. Կլանգվոլլ) — հնչեղ, լիահունչ, զնգուն:
Klappe (գեր. կլապպե) — *կափույր, խփասարք:*
klassik (գեր. Կլասսիկ) — դասականություն, կլասիկա:
klassisch (գեր. կլասսիշ) — դասական կլասիկ:
klassizismus (գեր. Կլասսիցիսմուս) — *կլասիցիզմ, դասականություն:*
Klaviatur (գեր. Կլավիատուր) — *ստեղնաշար*
Klavier (գեր. Կլավիր) — *Կլավիր:*
Klavierauszug (գեր. կլավիրաուսցուգ) — *կլավիրաուսցուգ*
Klavierbegleitung (գեր. Կլավիրբեգլայտունգ) — դաշնամուրային նվագակցություն:
Klavierduett (գեր. Կլավիրդուետտ) — դաշնամուրային դուետ (երկու դաշնամուրների զուգանվագ):
Klavierkonzert (գեր. Կլավիրկոնցերտ) — դաշնամուրային *կոնցերտ (կոնցերտ դաշնամուրի համար):*
Klaviermusik (գեր. կլավիրմուզիկ) — դաշնամուրային երաժշտություն (դաշնամուրի համար գրված երաժշտություն):
Klavierspieler, klavierspilerin (գեր. կլավիրշպիլեր, Կլավիրշպիլերին) դաշնակահար, դաշնակահարուհի (դաշնամուր նվագող մասնագետ՝ տղամարդ, կին):
Klavierstimmer (գեր. Կլավիրշտիմմեր) — դաշնամուր լարող վարպետ, *դաշնակահարդար:*
Klavierstück (գեր. Կլավիրշտյուկ) — դաշնամուրային պիես (դաշնամուրի համար գրված, սովորաբար ոչ մեծ ստեղծագործություն):
Klaviertate (գեր. Կլավիրտատե) — *ստեղն*
kleine (գեր. կլայնե) — փոքր
kokett (գեր. կոկետտ) — նազանքով, սեթևեթաբար (կոկետորեն):
komisch (գեր. կոմիշ) — կոմիկական, ծիծաղելի
Koloratur (գեր. Կոլորատուր) — *կոլորատուրա*
komma (գեր. կոմմա) — կոմմա (տես՝ comma)
Komposition (գեր. կոմպոզիցիոն) — *կոմպոզիցիա:*
Konsonanz (գեր. Կոնսոնանց) — *կոնսոնանս*
Konstruktivismus (գեր. կոնստրուկտիվիզմուս) — *կոնստրուկտիվիզմ*
Kontrapunkt (գեր. կոնտրապունկտ) — *կոնտրապունկտ*
Kontrasubjekt (գեր. կոնտրասուբյեկտ) — *դիմաշար*
Konzert (գեր. կոնցերտ) — *կոնցերտ*
Konzertina (գեր. կոնցերտինա) — *կոնցերտինո* (նվագարան):
Konzerthaus (գեր. կոնցերտհաուս)—համերգային դահլիճ
Konzertmeister (գեր. կոնցերտմայստեր) — *կոնցերտմայստեր*

konzertstück (գեր. կոնցերտշտյուկ) — *կոնցերտշտյուկ*
konzertwerk (գեր. կոնցերտվերկ) — երաժշտական պիես, ստեղծագործություն համերգային կատարման համար:
Kraft (գեր. կրաֆտ) — ուժ. **mit k.** (միտ կրաֆտ) — ուժով, ուժգին
kräftig (գեր. կրեֆտիգ) — ուժգին:
Kreuz (գեր. կրոյց) — *դիեզ:*
Krone (գեր. Կրոնե) — կրոն, տես՝ **stimmbogen**
Kunst (գեր. Կունստ) — արվեստ, գեղարվեստ:
kurz (գեր. կուրց) — կարճ, կտրտված, ընդհատ-ընդհատ:

L

L (գեր. էլ) — կրճատ՝ **linke**
la (լա — ՍՍՀՄ-ում ընդունված է արտասանել լյա) — յոթ հիմնական հնչյուններից վեցերորդի վանկային անվանումը: Տառային նշանակումն է՝ A կամ a (ա): Տես՝ *սոլմիզացիա:*
lacrima (իտ. լակրիմա) — նույնն է՝ **lagrima**
lacrimosa (լատ. լակրիմոզա) — *լակրիմոզա:*
lacrimoso (իտ. լակրիմոզո) — նույնն է՝ **lagrimoso**
lagnevole, lagnosamente, lagnoso (իտ. լանյեվոլե, լանյոզամենտե, լանյոզո) — հառաչելով, տրտնջալով, լալագին, աղիողորմ, սրտաճմլիկ:
lagno (իտ. լանյո) — հառաչանք, տրտունջ, ողբ, կոծ:
lagnosamente — տես՝ **lagnevole**
lagnoso — տես՝ **lagnevole**
lagrima (իտ. լագրիմա) — արցունք, արտասուք.
lagrimabile, lagrimando, lagrimoso (իտ. լագրիմաբիլե, լագրիմանդո, լագրիմոզո) — արտասվալի, ողբալի, լալագին:
lagrimale (իտ. լագրիմալե — արտասվական) — արտասվալի, լալագին
lagrimando տես՝ **lagrimabile**
lagrimevole (իտ. լագրիմեվոլե) — արտասվալի, ողբալի, (լալագին, աղիողորմ)
lagrimoso — տես՝ **lagrimabile**
Laie (գեր. Լայե) — սիրող (ոչ մասնագետ) — **laiemusiker** (լայեմուզիկեր) — սիրող-երաժիշտ
Laienkunst (գեր. լայենկունստ)—*գեղարվեստական ինքնագործունեություն*
lamentabile, lamentedole, lamentoso (իտ. լամենտաբիլե, լամենտեվոլե, լամենտոզո)—ողբագին, ցավագին (ողբալի, խղճալի):
lamentation, lamentazione, lamento (ֆր. լամենտասիոն, իտ. լամենտացիոնե, լամենտո — տրտունջ, հեծեծանք) — ողբ, հառաչանք, լաց, կոծ (գանգատ):
lancier (ֆր. լանսիե) — *լանսյե*
ländler (գեր. լենդլեր) — *լենդլեր.* տես՝ **Dreher**
langsam (գեր. լանգզամ) — դանդաղ **langsamer** (լանգզամեր) — ավելի դանդաղ
languendo, languido (իտ. լանգուենդո, լանգուիդո) — նվաղ, թույլ, մեղկ (ուժասպառ լինելով, հոգնատանջ, քնքշանվաղ):
languer (ֆր. լանգե) — ուժասպառություն, քնքշանվաղություն (քնքշանք):
la prima volta forte (իտ. լա պրիմա վոլտա ֆորտէ) — առաջին անգամ ուժգին (ուժեղ):
largamente (իտ. լարգամենտե — ընդարձակորեն) — երկարաձիգ, դանդաղածոր, լայնարձակ
large (ֆր. լարժ — լայնարձակ, լայնատարած, ընդարձակ) — նույնն է՝ **largo**
larghetto (իտ. լարգետտո) — *լարգետտո:*
larghezza (իտ. լարգեցցա) — լայնարձակություն, երկարաձիգություն.
larghissimo (իտ. լարգիսսիմո) — շատ դանդաղ
largo, l. (իտ. լարգո, ֆր. լառգո)— *լարգո* դանդաղ *տեմպ:*
lassan (հունգ. լաշշան)—լաշան (*պալոտաշ* պարի առաջին մասի անունը):
lauda (իտ. լաուդա — հիմն, գովերգ) — *լաուդա:*
laureate, laureato (ֆր. լառեատ, իտ. լաուրեատո) — դափնեկիր (*լաուրեատ*)
Laute (գեր. լաուտե) — *լյուտնյա, վին, ջնար:*
leader (անգ. լիդըր) — 1) *դիրիժոր, խմբավար* (առավելապես եկեղեցական երգչախմբի), 2) *կոնցերտմայստեր:*
lebendig (գեր. լեբենդիհ) — աշխույժ, ժիր
lebhaft (գեր. լեբհաֆտ) — կայտառ, կենդանի, **lebhafter** (լեբհաֆտեր) — ավելի կայտառ, ավելի կենդանի
lebhaftigkeit (գեր. լեբհաֆտիհկայտ)—կայտառություն, կենդանություն (աշխուժություն):
legare (իտ. լէգարե) — միացնել, կապել, կապակցել:
legatissimo (իտ. լէգատիսսիմո **legato**-ի գերադրական աստիճանը) — չափազանց կապակցված (շատ սահուն): Տես՝ *լեգատո:*
legato (իտ. լեգատո) — լեգատո
legato-staccato — տես՝ **mezzo — legato**
legatura (իտ. լեգատուրա) — *լիգատուրա:*
legend, legénde, légende leggenda (անգ. լեջընդ, գեր. լեգենդե, ֆր. լեժանդ, իտ. լեջջենդա)— *լեգենդ*
léger (ֆր. լեժե) — թեթև, սրընթաց, աշխույժ, կայտառ:
légérement (ֆր. լեժերըման) — թեթև:
leggenda — տես՝ **legend**
leggerezza (իտ. լեջջերեցցա)— թեթևություն, արագություն, աշխուժություն.
leggero (իտ. լեջջերո) — նույնն է՝ **leggiero**
leggiardo (իտ. լեջջարդո) — նազանքով, նրբագեղ, նուրբ:
leggierissimo (իտ. լեջջերիսսիմո — **leggiero**-ի գերադրական աստիճանը) — շատ թեթև, շատ աշխույժ, շատ նուրբ:
legiero (իտ. լեջջերո) — թեթև, նուրբ, աշխույժ, ժիր

leggio (իտ. լեջջիո) — *նոտակալ*, պյուպիտր, պուլտ (նաև գրքակալ):

legni (իտ. լենյի) — (սիմֆոնիկ նվագախմբի) փայտյա փողային նվագարանների ընդհանուր անվանումը

legno (իտ. լենյո — փայտ) — աղեղի փայտաձողը, աղեղնափայտը

leicht (գեր. լայխտ) — թեթև, թեթևակի (կատակելով):

leidenschaftlich (գեր. լայդենշաֆտլիխ) — կրակոտ, կըրքոտ

leidenschaftlicher (լայդենշաֆտլիխէր) — ավելի կրակոտ, ավելի կրքոտ:

leidenschaftlicher — տես՝ leidenschaftlich

leise (գեր. լայզե) — մեղմորեն, հուշիկ. leiser (լայզէր) — ավելի մեղմ, ավելի հուշիկ:

Leitmotiv (գեր. լայտմոտիվ) — *լայտմոտիվ*

lene (իտ. լենե) — հուշիկ, քնքուշ, մեղմ (ձկուն)

leno (իտ. լենո) — թույլ, անզոր, ուժաբեկ, ալարելով:

lent (ֆր. լան) — դանդաղ, դանդաղկոտ, անշտապ:

lentamente (իտ. լենտամենտե) — ծանր, դանդաղ:

lentando (իտ. լենտանդո) — դանդաղեցնելով: Տես՝ slentando

lentement (ֆր. լանտըման) — դանդաղ

lenteur (ֆր. լանտեռ) — դանդաղություն, դանդաղկոտություն avec l. (ավեք լանտեռ) — դանդաղորեն, դանդաղկոտությամբ:

lentezza (իտ. լենտեցցա) — դանդաղություն, դանդաղկոտություն, ալարկոտություն

lento, l. (իտ. լենտո, ֆր. լենտո) — *լենտո:*

lento assai (իտ. լենտո ասսաի) — շատ դանդաղ:

lento di molto (իտ. լենտո դի մոլտո) — շատ դանդաղ:

lento lento (իտ. լենտո-լենտո — դանդաղ-դանդաղ) — շատ դանդաղ:

lestamente (իտ. լեստամենտե) — արագությամբ, ճարպկորեն, թեթև (նաև խորամանկությամբ):

lestezza (իտ. լեստեցցա) — արագություն, ճարպկություն, թեթևություն (խորամանկություն)

lesto (իտ. լեստո) — արագ, ճարպիկ, խորամանկ:

liaison (ֆր. լիեզոն — կապ) — *լիգա:*

liberamento, librement (իտ. լիբերամենտե, ֆր. լիբռըման) — ազատորեն, համարձակ (քմահաճ, ըստ ցանկության):

libero (իտ. լիբերո) — ազատ, համարձակ, քմահաճ (սանձարձակ, ըստ իր կամքի): Տես՝ a tempo libero

liberta (իտ. լիբերտա) — ազատություն, համարձակություն, (քմայք, սանձարձակություն)

libito (իտ. լիբիտո) — քմայք (քմահաճույք), ցանկություն, կամք. a l. (ա լիբիտո) — ըստ ցանկության (ըստ կամքի):

librement — տես՝ liberamente

libretto, l. (իտ. լիբրետտո, ֆր. լիբռետտո) — *լիբրետո*

libro (իտ. լիբրո) — գիրք, հատոր

libro di musica (իտ. լիբրո դի մուզիկա — երաժշտական գիրք) — նոտաներ

licenza (իտ. լիչենցա) — ազատություն, համարձակություն, անկաշկանդություն

lié (ֆր. լիե) — կապակցված, միացված, *լեգատո*

Lied, Lieder (գեր. լիդ, լիդեր) — երգ, երգեր (ռոմանս, ռոմանսներ)

Liederabend (գեր. լիդերաբենդ) երգի երեկո, մեներգչի համերգ:

Liederbuch (գեր. լիդերբուխ) — *երգարան*

Liedercyklus (գեր. լիդերցիկլուս) — երգերի կամ ռոմանսների ցիկլ — տես՝ ռոմանսների ցիկլ:

Lieder ohne Worte (գեր. լիդեր օօնե վորիե) — *երգեր առանց խոսքերի:*

Liederspiel (գեր. լիդերշպիլ) — *լիդերշպիլ:*

lietissimo (իտ. լիետիսսիմո) — շատ ուրախ, շատ խընդուն:

lieto (իտ. լիետո) — ուրախ, զվարթ:

lieve (իտ. լիեվե) — թեթև, նուրբ:

lievemente (իտ. լիեվեմենտե — թեթևակի, թռուցիկ, ի միջի այլոց) — թեթև, արագ, մեղմ (նաև քաղցրությամբ, սիրով):

lievissimo (իտ. լիեվիսսիմո lieve-ի գերադրական աստիճանը) — շատ թեթև, շատ արագ, շատ մեղմ (նաև՝ մեծ սիրով ու քաղցրությամբ):

liga (իտ. լիգա — կապ) — *լիգա*

Ligatur, ligatura, ligature, l. (գեր. լիգատուր, իտ. լիգատուրա, ֆր. լիգատյուռ, անգ. լիգեչըր) — *լիգատուրա*

limpido — (իտ. լիմպիդո) — հստակ, ջինջ (պայծառ, վճիտ)

Liniensystem (գեր. Լինիենսիստեմ — գծային սիստեմ) — հնագիծ նոտակիր.

linke (գեր. լինկե) — ձախ l. hand (լինկէ Հանդ) — ձախ ձեռք

lirico (իտ. լիրիկո — քնարերգական) — 1) Քնարական (լիրիկական) 2) երաժշտական, arte lirica (արտէ լիրիկա-երաժշտական արվեստ) — երաժշտություն, dramma l. (դրամա լիրիկո — երաժշտական դրամա) — *օպերա*, teatro l. (տեատրո լիրիկո — երաժշտական թատրոն) — օպերային թատրոն, cantante l. (կանտանտե լիրիկո) — օպերային երգիչ. artista l. (արտիստա լիրիկո) — օպերային արտիստ

lirista, lyriste (իտ. լիրիստա, ֆր. լիրիստ) — քնարահար, քնար նվագող:

liscio (իտ. լիշո — հարթ, հավասար, հղկված, կոկած) — պարզ կերպով (պարզ):

l'istesso tempo, lo stesso tempo (իտ. լ'իստեսսո տեմպո, լո ստեսսո տեմպո) — նույն տեմպով (չփոխելով տեմպը):

liturgia, liturgie, l., liturgy (իտ. լիտուրջիա, ֆր. լիտյուրժի, գեր. լիտուրգի, անգ. լիթըրջի — եկեղեցական պաշտամունք) — *պատարագ:*

livre (ֆր. լիվր) — գիրք, հատոր: Տես՝ l i b r o
livret (ֆր. լիվռե — փոքրիկ գիրք, գրքույկ) — *լիբրետո:*
loco (իտ. լոկո — տեղ) — 1. Տեղում (այսինքն նոտաները պիտի կատարել ոչ թե օկտավա վեր կամ վար, ինչպես նշված էր մինչ այդ, այլ այն օկտավայում, որում գրված են: 2. Մինչև այստեղ:
loin (ֆր. լուէն) — հեռու:
lointain (ֆր. լուէնտեն) — հեռուն, հեռավոր, հեռավորություն (հեռվում):
lontano (իտ. լոնտանո) — հեռավոր, հեռու (հեռվից, բեմի հետևից):
lo stesso tempo — տես՝ l ' i s t e s s o t e m p o
lourdement (ֆր. լուռդըման) — ծանրությամբ (ծանրաշարժորեն, դանդաղաշարժորեն) sans lourdeur (սան լուրդեոր)—առանց ծանրության, առանց դանդաղաշարժության (ոչ ծանր, ոչ դանդաղաշարժ: (Տես՝ l o u r d e u r
Luftpause (գեր. լուֆտպաուզե — օդային պաուզա)—լուֆտ պաուզա:
lugubre, l., l. (լատ. լուգուբրե, իտ. լուգուբրե, ֆր. լյուգյուբռը) — տխուր, ցավագին, սգալով (մռայլ, չարագուշակ):
lullaby (անգ. լուլլաբայ) — *օրորոցի երգ, օրորոցային:*
lumineux (ֆր. լումինեո)— պայծառ, լուսավոր, վառ
lunga, lungo (իտ. լունգա, լունգո) — երկար, երկարություն
l. pausa (լունգա պաուզա) — շատ երկար պաուզա
l. trillo (լանգո տրիլլո) — երկարաձիգ տրել l. arco (լունգո արկո)—աղեղի ամբողջ երկարությամբ:
luogo (իտ. լուոգո) — նույնն է՝ l o c o
lusingando (իտ. լուզինգանդո)—խաղուն, ժիր, փաղաքշանքով, կամացուկ (շողոքորթաբար):
lusinganto (իտ. լուզինգանդո (ե)) — շոյելով, հրապուրելով:
lusingare (իտ. լուզինգարե) — հմայել, հրապուրել նաև շողոքորթել, շողոմել (հուսադրել):
lusinghevole (իտ. լուզինգեվոլե) — հրապուրիչ, հմայիչ, գրավիչ (քնքուշ)
lusinghiero (իտ. լուզինգիերո — հաճոյական, ախորժալի) — քնքուշ, հմայիչ, դուրեկան:
lustig (գեր. լուստիգ) — ուրախ, խնդուն, զվարճալի:
lustigkeit (գեր. լուստիգկայտ) — ուրախություն, խնդություն, զվարճանք:
luttuosamente (իտ. լուտտուոսամենտե)—սգով, տըրտմությամբ, ցավագին:
luttuoso (իտ. լուտտուոսո) — սգալի, տրտում, ողբալի, ցավալի (դառն):
lyrico (իտ. լիրիկո) — նույնն է՝ l i r i c o
lyrique (ֆր. լիրիք) — 1) քնարական (լիրիկական), 2) երաժշտական, comedie l. (կոմեդի լիրիք) — *երաժշտական կոմեդիա,* տես՝ *օպերետա:* Théâtre l. (տեատրը լիրիք — երաժշտական թատրոն)— *օպերային թատրոն:*

M

ma (իտ. մա) — բայց:
macabre (ֆր. մակաբր) թաղման, մռայլ, danse m. (դանս մակաբր) — մահվան պարը (մեռելապար):
macabro (իտ. մակաբրո) — թաղման, մռայլ
madrigal, m., M., madrigale (ֆր. մադրիգալ, անգ. մադրիգըլ, գեր. մադրիգալ, իտ. մադրիգալե) — *մադրիգալ, մանրերգ:*
madrigaletto (իտ. մադրիգալետտո) — *մադրիգալետտո:*
maesta (իտ. մաեստա) — վեհություն, վեհապանծություն, մեծափառություն:
maestosamente (իտ. մաեստոզամենտե) — նույնն է՝ m a e s t o s o
maestoso (իտ. մաեստոզո) — վեհ, հանդիսավոր, մեծաշուք. (շքեղ)
maggiore (իտ. մաջջորե- (ավելի մեծը), մեծագույն, գլխավոր) — *մաժոր*
magnanimita (իտ. մանյանիմիտա — մեծանձնություն)— վեհանձնություն, ազնվություն con m. (կոն մանյանիմիտա) — վեհանձնությամբ, ազնվաբարո, ազնվաբար):
magnificamente (իտ. մանյիֆիկամենտե) — շքեղությամբ, փառավորությամբ (փառահեղությամբ):
magnifico (իտ. մանյիֆիկո) — շքեղ, մեծաշուք, մեծապայծառ, փառավոր, հոյակապ:
main (ֆր. մեն) — ձեռք:
main droite (ֆր. մեն դրուատ) — աջ ձեռք:
main gauche (ֆր. մեն գոշ) — ձախ ձեռք
maître-chanteur (ֆր. մետռը շանտեռռ) — *մայեստերզինգեր*
Majestät (գեր. Մայեստետ) — վեհություն, փառահեղություն:
majestätisch (գեր. մայեստետիշ) — վեհ, փառահեղ (մեծասքանչ):
majeur (ֆր. մաժեռռ — ավելի մեծը, գլխավորը) — *մաժոր*
malinconia (իտ. մալինկոնիա) — մելամաղձոտություն (մելանխոլիա) — թախիծ, տրտմություն
malinconicamente, malinconico (իտ. մալինկոնիկամենտե, մալինկոնիկո) — մելամաղձոտ, թախծալի, տըրտում:
manca (իտ. մանկա) — ձախ ձեռք:
mancando (իտ. մանկանդո) — նվազելով, դադարելով (ինչողությունը աստիճանաբար թուլացնելով հասցնել այն աստիճանի, որ այլևս ոչինչ չլսվի: (Գործ է ածվում նաև d i m i n u e n d o և p e r d e n d o s i բառերի իմաստով):
manche (ֆր. մանշ — կոթ, բռնակ, բռնատեղ) — *նվագակոթ, գրիֆ:*
mandritta, manritta (իտ. մանդրիտտա, մանրիտտա — աջ կողմ) — աջ ձեռք
maniéré (ֆր. մանիեռե) — կոտրատվելով, նազ անելով, սեթևեթելով:

mano (իտ. մանո) — ձեռք:
mano destra, mano diritta (իտ. մանո դեստրա, մանո դիրիտտա) — աջ ձեռքով:
mano diritta — տես՝ m a n o d e s t r a
mano sinistra (իտ. մանո սինիստրա) — ձախ ձեռքով:
manritta — տես՝ m a n d r i t t a
Manual, manuale, manuel (գեր. մանուալ, իտ. մանուալե, ֆր. մանյուել) *մանուալ:*
manualiter (իտ. մանուալիտեր)— այս բառը հանդիպում է երգեհոնային նոտաներում և ցույց է տալիս, որ պիտի նվագել միայն ձեռքերի ստեղնաշարերով՝ *մանուալ*-ներով, առանց օգտագործելու ոտնակը (ոտնաստեղնաշարը, ոտքերի ստեղնաշարը): Վերջինի օգտագործման անհրաժեշտությունը նշանակվում է p e d a l i t e r բառով:
marcando (իտ. մարկանդո) — զատելով, առանձնացնելով, ընդգծելով, marcato (մարկատո) — ընդգծելով, շեշտելով. marcatissimo (մարկատիսսիմո m a r c a t o-ի գերադրական աստիճանը) — շատ ընդգծված, շատ շեշտված:
marcatissimo — տես՝ m a r c a n d o
marcato — տես՝ m a r c a n d o
marche (ֆր. մառշը) — քայլերգ:
marche funébre (ֆր. մառշը ֆյունեբռը—մահվան քայլերգ, թաղման քայլերգ:
marcia (իտ. մարչա — չվերգ) — *քայլերգ:*
marciale, marschenmässig (իտ. մարչալե, գեր. մարշենսեսսիգ) — քայլերգանման
maricuita (իսպ. մարիկուիտա) — մարիսիտա
markieren (գեր. մարկիրեն) — զատել, առանձնացնել, ընդգծել:
markirt (ֆր. մարկիռ) — ընդգծելով, շեշտելով, տես՝ m a r c a t o
marqué (ֆր. մառքե)—սուր, զիլ, վառ (ընդգծված, շեշտված):
marquer la mesure — տես՝ m e s u r e
martelé, martellato (ֆր. մարտելե, իտ. մարտելլատո)— *մարտելե:*
martellato — տես՝ m a r t e l é
marziale (իտ. մարցիալե — պատերազմական (պատերազմի աստված Մարս բառից))— ռազմաշունչ:
mass (գեր. մեսս) — նույնն է՝ m e s s a
mässig (գեր. մեսսիհ) — չափավոր
matelote (ֆր. մատլոտ) — *մատլոտ* (նավաստիների պար):
maxima (լատ. մաքսիմա) — մենզուրալ նոտագրության ամենաերկար տևողությունը նշանակող նոտան: Տես՝ *մենզուրալ նոտագրություն:*
m. d. կրճատ՝ m a i n d r o i t e
medesimo (իտ. մեդեզիմո) — նույնը, միևնույնը, m. moto (մեդեզիմո մոտո) — նույն (միևնույն) շարժումը, m. tempo (մեդեզիմո տեմպո) — նույն տեմպը. m. valore (մեդեզիմո վալորե) — նույն տևողությունը՝ (նոտաների պաուզաների):
mediant, mediante, m., M. (անգ. մեդիընտ, իտ. մեդիանտե, ֆր. մեդիանտը, գեր. մեդիանտե) — *մեդիանտա:*
mediator (լատ. մեդիատոր) — *մեդիատոր, հարիչ, կտրնտոց,* (կսմիթ): Տես՝ p l e c t r u m, p l e c t r e
méditation (ֆր. մեդիտասյոն) — մտորում, խորհում, հայում:
medium (լատ. մեդիում)—*մեդիում* (երգչաձայնի միջին ձայնասահմանը, ռեգիստրը): Տես՝ *երգչաձայն:*
mehr (գեր. մեր) — ավելի, էլ ավելի:
mehrstimmig (գեր. մերշտիմմիհ) — բազմաձայն:
Meistersinger (գեր. մայստերզինգեր) — *մայստերզինգեր:*
melancholisch (գեր. մելանխոլիշ) — մելամաղձոտ (մելանխոլիկ):
melancolia (իտ. մելանկոլիա)—նույնն է՝ m a l i n c o n i a
mélancolie (ֆր. մելանկոլի)— մելամաղձոտություն (մելանխոլիա), թախիծ, մտախոհություն:
mélancolique (ֆր. մելանկոլիք)— մելամաղձոտ, թախծալի, մտախոհ:
mélange — (ֆր. մելանժ — խառնուրդ) — նույնն է՝ *պոպուրի:*
melica (իտ. մելիկա) — քնարերգություն, լիրիկա melico (մելիկո) — 1) մելոդիկ, 2) երաժշտական, 3) քնարական:
melisma.. m., M., mélisme (իտ. մելիզմա, անգ. մելիզմ, գեր. մելիզմա, ֆր. մելիսմ) — մելիզմ, տես՝ *մելիզմներ:*
Melismatik (գեր. մելիզմատիկ) — *մելիզմներ*
melo, melode (իտ. մելո, մելոդե) — 1) *մելոդիա, մեղեդի, 2) եղանակ*
melode — տես՝ m e l o
Melodeklamation (գեր. մելոդեկլամացիոն) — *մելոդեկլամացիա:*
melodia (իտ. մելոդիա) — 1. մելոդիա, մեղեդի, եղանակ, 2. մեղեդայնություն:
melodica, Melodik (իտ. մելոդիկա, գեր. մելոդիկ) — մեղեդիագիտություն, մելոդիկա, գիտություն մեղեդու վերաբերյալ
mélodie (ֆր. մելոդի) — 1) *մեղեդի, մելոդիա, 2) երգ, ռոմանս:*
Melodie, melody (գեր. Մելոդի, անգ. մելոդի) — *մեղեդի, մելոդիա*
Melodik — տես՝ m e l o d i c a
melodioso (իտ. մելոդիոսո) — մեղեդային, մելոդիկ, երգուն (բարեհնչյուն)
melodist, melodista, mélodiste (անգ. մելոդիստ, իտ. մելոդիստա, ֆր. մելոդիստ) — մելոդիստ (մեղեդահան, մեղեդաստեղծ):

melodrama, Melolrame, mélodrame (անգ. մելոդրամա, գեր. մելոդրամե, ֆր. մելոդրամ) — *մելոդրամա*

melodramma (իտ. մելոդրամմա) — *օպերա:*

melody — տես՝ Melodie

melologo (իտ. մելոլոգո) — *մելոդեկլամացիա*

mélomane (ֆր. մելոման) — ե ր ա ժ շ տ ա մ ո լ (երգամոլ, նվագամոլ), երաժշտության ջերմ սիրահար:

melopea (իտ. մելոպեա) — *կոնտրապունկտ:*

Melorezitation (գեր. Մելորեցիտացիոն) — *մելոդեկլամացիա:*

melos, Melos (հուն. մելոս, գեր. մելոս) — *մելոս:*

membranofoni, Membranophone, membranophones, m. (իտ. մեմբրանոֆոնի, գեր. մեմբրանոֆոնե, ֆր. մամբռանոֆոն, անգ. մեմբրանոֆոնզ) — *մեմբրանոֆոններ:*

méme (ֆր. մեմ) — նույն, միևնույն, նույնպիսի, m. mouvement (մեմ մուվըման) — նույն տեմպը:

même mouvement — տես՝ m e m e

meno (իտ. մենո) — ավելի քիչ, ավելի պակաս (ոչ այնքան):

meno forte (իտ. մենո ֆորտե) — ոչ այնքան ուժգին, (ավելի պակաս ուժգնությամբ):

meno mosso (իտ. մենո մոսսո) — ոչ այնքան աշխույժ, ոչ այնքան արագ (ավելի պակաս արագությամբ), m o s s o-ից ավելի դանդաղ:

meno piano (իտ. մենո պիանո) — ոչ այնքան մեղմ (ավելի քիչ մեղմ):

meno presto (իտ. մենո պրեստո) — ոչ այնքան արագ, p r e s t o-ից ավելի պակաս արագությամբ, p r e s t o-ից ավելի դանդաղ:

mensura, Mensur (լատ. մենզուրա, գեր. մենզուր — չափ) — *մենզուրա:*

Mensuralmusik (գեր. մենզուրալմուզիկ) — մենզուրալ երաժշտություն:

menuet, Menuett (ֆր. մենյուէ, գեր. մենուետ) — *մենուետ:*

messa, messe, M. (իտ. մեսսա, ֆր. մես, գեր. մեսսե) — *մեսսա, պատարագ* (կաթոլիկական եկեղեցում պատարագի ժամանակ կատարվող երգեցողություն, երաժշտություն):

messa da requiem (իտ. մեսսա դա ռեկուիեմ) — *ռեքվիեմ*

messa di voce (իտ. մեսսա դի վոչե) — երգչաձայնի ֆիլարեցնելը:

messe des morts (իտ. մեսսե դէս մորտս) — *ռեքվիեմ*

mestissimo (իտ. մեստիսսիմո — m e s t o-ի գերադրական աստիճանը) — շատ տխուր, շատ տրտում:

mestizia (իտ. մեստիցիա) — տխրություն, տրտմություն (թախիծ) con m. (կոն մեստիցիա) — տխրալի, տըրտում (թախծոտ):

mesto, mestoso (իտ. մեստո, մեստոզո) — տխուր, տըրտում:

mestoso — տես՝ m e s t o

mesure (ֆր. մեզյուր) — տակտ, չափ, battre la m., marquer la m. (բատտր լա մեզյուր, մարկե լա մեզյուր) — տակտ խփել (հարվածներով նշել տակտի մասերը, խփելով չափ տալ):

Metalophone (գեր. մետալոֆոնե) — *մետալոֆոն*

metre, mètre, metro, Metrum (անգ. մեթըր, ֆր. մետռը, իտ. մետրո, գեր. մետրում) — *մետր*

metrica, Metrik, métrique (իտ. մետրիկա, գեր. մետրիկ, ֆր. մետրիք) — *մետրիկա*

Metronom, metronome, métronome, métromètre, metronomo (գեր. մետրոնոմ, անգ. մեթրոնոմ, ֆր. մետռոնոմ, մետռոմետռ, իտ. մետրոնոմո) — *չափահար, մետրոնոմ:*

mettere (իտ. մետտերե) — դնել, մտցնել, հագցնել (*մեղմոցը, սուրդինան*):

mettez les sourdine (կամ sourdines) — տես՝ s o u r d i n e

mezza (իտ. մեձձա) — կես, կիսա (ՍՍՀՄ-ում ընդունված է արտասանել մեցցա):

mezza orchéstra (իտ. մեձձա օրկեստրա) — նվագախմբի կեսը, (այսինքն՝ պիտի նվագի նվագախմբի կես մասը, մինչև tutti բառը, որից սկսած նվագին մասնակցում է նվագախմբի ողջ կազմը): Տես՝ m e z z a

mezzo voce (իտ. մեձձա վոչե) — կիսաձայն (երգել, նվագել), տես՝ mezza

mezzo (իտ. մեձձո) — մեջտեղ, միջին, միջնա..., միջա..., կես, կիսով չափ, կիսա... (ՍՍՀՄ-ում ընդունված է արտասանել մեցցո):

Mezzosopran (գեր. մեցցոսոպրան) — *մեցցո-սոպրանո:*

mezzosoprano, mezzo soprano, mezzo-soprano, m.—s. (իտ. մեձձոսոպրանո, մեձձո սոպրանո, մեձձո-սոպրանո, ֆր. մեցցո-սոպրանո) — *մեցցո-սոպրանո:*

m. g. — կրճատ՝ m a i n g a u c h e

mi (մի) — յոթ հիմնական հնչյուններից երրորդի վանկային անվանումը: Տառային նշանակումն է՝ e կամ E: Տես՝ *սոլմիզացիա:*

mignon (ֆր. մինյոն) — *մինյոն*

militaire, militare, military (ֆր. միլիտեր, իտ. միլիտարե, անգ. միլիթարի) — ռազմական

militairement (ֆր. միլիտերման) — ռազմականի պես (ռազմական ոգով):

militare, military — տես՝ m i l i t a i r e

Militärmusik (գեր. միլիտերմուզիկ) — ռազմական երաժշտություն

minacciando (իտ. մինաչչանդո) — սպառնալով

minacciosamente (իտ. մինաչչոզամենտե) — սպառնական կերպով:

minaccioso (իտ. մինաչչոզո) — սպառնական, սպառնալից:

mineur, minor, minore (ֆր. մինեռ, անգ. մայնըր, իտ. մինորե (փոքրը) փոքրագույն) — *մինոր*

Miniatur, miniatura, miniature, m. (գեր. Մինատուր, իտ. մինատուրա, ֆր. մինյատյուռ, անգ. մինյաչըր) — *մինիատյուր:*

minima (լատ. մինիմա — ամենափոքրը) — *մինիմա:* Տես՝ *մենզուրալ նոտագրություն:*

minipiano (մինիպիանո) — *մինիպիանո*

Minnesang (գեր. միննեզանգ — Minne — սեր և Sang — երգեցողություն) — (ասպետական) սիրային պոեզիա, *մինեզինգեր*-ների արվեստ:

Minnesänger, Minnesinger (գեր. միննեզենգեր, մինեզինգեր) — *մինեզինգեր:*

Minnesinger — տես՝ Minnesänger

minor, minore — տես՝ mineur

missa (լատ. միսսա) — *մեսսա:*

missa brevis (լատ. միսսա բրեվիս) — կարճ *մեսսա:*

missa de profundis (լատ. միսսա դե պրոֆունդիս) — թաղման (հուղարկավորության) *մեսսա:*

missal (լատ. միսսալ) — *միսսալ:*

missa solennis (լատ. միսսա սոլեննիս) — *հանդիսավոր մեսսա:*

misterioso (իտ. միստերիոզո) — խորհրդավոր:

mistero (իտ. միստերո (միստերիո)) — խորհրդավորություն, con m. (կոն միստերո (միստերիո)) — խորհրդավորությամբ:

misura (իտ. միզուրա, լատ. mensura-ից, չափ, ամանակ) — *տակտ, մենզուրա:*

misurato (իտ. միզուրատո) — համաչափ, չափված (ռիթմիկ:

mit (գեր. միտ) — հետ, ...ով:

M. M. — կրճատ՝ *Մելցելի մետրոնոմ,* (Մելցելի *չափահար):*

mobile (իտ. մոբիլե) — շարժուն, (աշխույժ):

mode, m., modo, modus, M. (ֆր. մոդ, անգ. մոդ, իտ. մոդո, լատ. մոդուս, գեր. մոդուս) — *լադ* (հին հունական ու միջնադարյան լադեր) *տոնայնություն:*

moderatamente, moderato (իտ. մոդերատամենտե, մոդերատո) — *մոդերատո*

moderato — տես՝ moderatamente

moderateur, moderator, M., moderatore (ֆր. մոդերատեր, անգ. մոդըրեյտըր, գեր. մոդերատոր, իտ. մոդերատորե) — *մոդերատոր:*

modéré, modérément (ֆր. մոդերե, մոդերեման) — չափավոր, զուսպ (զսպված):

modérément — modéré

modern, m., moderne, moderno, m. (գեր. մոդերն, անգ. մոդեռն, ֆր. մոդեռն, իտ. մոդերնո, իսպ. մոդերնո) — ժամանակակից, արդիական, նորաձև, մոդայիկ (այժմեական) — Տես՝ alla moderna

modernism, modernisme, modernismo, Modernismus (անգ. մոդերնիզմ, ֆր. մոդերնիսմ, իտ. մոդերնիզմո, գեր. մոդերնիզմուս) — *մոդերնիզմ*

modulation, m., M., modulazione (ֆր. մոդյուլասիոն, անգ. մոդուլեյշըն, գեր. մոդուլասիոն, իտ. մոդուլացիոնե) — *զարտուղություն (մոդուլացիա)*

modus — տես՝ mode

mödlich (գեր. մյոգլիխ) — հնարավոր, հնարավոր է

vie m. (վի մյոգլիխ) — որքան հնարավոր է:

moins (ֆր. մուան) — ավելի պակաս, ավելի քիչ, առանց ան...:

moll (գեր. մոլլ) — *մոլլ:*

molle (ֆր. մոլլ, իտ. մոլլե) — մեղմ, քնքուշ, թույլ (փափուկ):

mollement, mollemente (ֆր. մոլլըման, իտ. մոլլեմենտե) — մեղմորեն, քնքշորեն, թույլ:

mollezza (իտ. մոլլեցցա) — մեղմություն, քնքշանք, թուլություն, con m, (կան մոլլեցցա) — մեղմությամբ, քնքշանքով, թույլ:

molto (իտ. մոլտո) — շատ, շատ ավելի (մեծ, ուժեղ, անհամեմատ) m. adagio կամ adagio m. (մոլտո ադաժիո կամ ադաժիո մոլտո) — շատ դանդաղ

monochord, Monochord, monocorde, monochorde (անգ. մոնոկորդ, գեր. մոնոխորդ, ֆր. մոնոկորդ, իտ. մոնոկորդո) — միալար, (միաղի), *մոնոխորդ:*

monodia, Monodie, m. (իտ. մոնոդիա, գեր. մոնոդի, ֆր. մոնոդի) — *մոնոդիա:*

Monodram, Monodrama (գեր. մոնոդրամ, մոնոդրամա) — *մելոդրամա:*

monody (անգ. մոնոդի) — 1) մոնոդիա, 2) թաղման երգ:

moqueur (ֆր. մոքեռռ) — ծաղրական, ծաղրալի:

morbidamente (իտ. մորբիդամենտե — փափկությամբ) — քնքշորեն, մեղմորեն:

morbidezza (իտ. մորբիդեցցա) — մեղմություն, քնքշություն.

morbido (իտ. մորբիդո) — մեղմ, քնքուշ (քնքշացված):

morceau, morceaux (ֆր. մորսո, մորսո — հատված, հատվածներ) — ստեղծագործություն, *պիես,* ստեղծագործություններ, պիեսներ

mordant, mordent, M., mordente (ֆր. մորդան, անգ. մոռդընտ, գեր. մորդենտ, իտ. մորդենտ — կծող, խայթիչ) — *մորդենտ*

mordent, M., mordente — տես՝ mordant

morendo (իտ. մորենդո) — *մորենդո:*

mormorare (իտ. մորմորարե) — սոսափել, շշնջալ, կարկաչել, տրտնջալ, փնթփնթալ (խուլ աղմկել):

mosso (իտ. մոսսո — աշխույժ, հուզված, փոթորկալից) — աշխույժ, արագ:

Դրդվելով տեմպը նշանակող բառից հետո, այն ավելացնում է նրա արագությունը. օր.՝ allegro m. (ալլեգրո մոսսո) — ավելի արագ (ու աշխույժ), քան allegro-ն: Տես՝ piu mosso

motet, m., Motette, motetto (ֆր. մոտե, անգ. մոութեթ, գեր. մոտետտե, իտ. մոտետտո) — *մոտետ:*

motetus (լատ. մոտետուս) — *մոտետ:*

motif, m., Motiv, motivo (ֆր. մոտիֆ, անգ. մոութիֆ, գեր. մոտիվ, իտ. մոտիվո) — *մոտիվ:*

moto (իտ. մոտո) — շարժում, ընթացք, հուզում. (կոն մոտո) — շարժուն, աշխույժ, հուզումնալի (այսինքն՝ ավելի արագ, ավելի աշխույժ, ավելի հուզումնալի քան մինչ այդ էր):

moto continuo — տես՝ c o n t i n u o

moto perpetuo (իտ. մոտո պերպետուո — անվերջ շարժում) — *պերպետուում մոբիլե:*

moto precedente (իտ. մոտո պրեցեդենտե) — նախորդ շարժումով (տեմպով), նույնն է՝ t e m p o p r i m o

moto primo (իտ. մոտո պրիմո) — նույնն է՝ t e m p o p r i m o

mouvement (ֆր. մուվըման) — 1) շարժում, տեմպ, օր. m, de valse (մուվըման դը վալս) — վալսի տեմպով au m. (o մուվըման) — տեմպով (այսինքն արագացումից կամ դանդաղեցումից հետո վերականգնել նախկին տեմպը, 2) ցիկլիկ (բազմամաս) ստեղծագործության մասերից մեկը (մեկի անվանումը), 3) հուզմունք, աֆեկտ (հոգեկան շարժում):

mouvementé (ֆր. մուվըմանտե)—չափազանց շարժուն, աշխուժացած, աղմկալի, անհանգիստ (վառ):

mouvement perpétuel (ֆր. մուվ(ը)ման պերպետյուէլ) — նույնն է՝ p e r p e t u u m m o b i l e

movement (անգ. մուվըմընթ) — շարժում, *տեմպ, ռիթմ:*

movimento (իտ. մովիմենտո) — 1) շարժում, 2) *տեմպ,* ընթացք, 3) *չափ,* 4) ոգևորություն, կենդանություն, հուզում, խլրտում, կիրք:

m. s. — կրճատ m a n o s i n i s t r a

Mundharmonika (գեր. մունդհարմոնիկա)—*շրթհարմոն*

munter (գեր. մունտեր)—ուրախ, առույգ, աշխույժ, կայտառ (չարաճճի):

murmure (ֆր. մյուրմյուր) — սոսափյուն, շշունջ, կարկաչյուն, տրտունջ, փնթփնթոց (խուլ աղմուկ):

murmurer (ֆր. մյուրմյուրե) — սոսափել, շշնջալ, կարկաչել, տրտնջալ, փնթփնթալ (խուլ աղմկել):

musetta (իտ. մուզետտա) — պարկապզուկ (տիկ)

music, musica, música (անգ. մյուզիկ, իտ. մուզիկա, իսպ. մուսիկա) — 1) *երաժշտություն,* 2) *երաժշտական ստեղծագործություն, պիես, 3) նոտաներ, 4) նվագախումբ, փողային նվագախումբ:*

musica a programma — տես՝ p r o g r a m - m u s i c

musica da camera (իտ. մուզիկա դա կամերա) — *կամերային երաժշտություն:*

musica da chiesa (իտ. մուզիկա դա կիեզա) — *եկեղեցական երաժշտություն:*

musica divina (լատ. մուզիկա դիվինա) — *եկեղեցական երաժշտություն*

musica falsa (լատ. մուզիկա ֆալսա) — նույնն է՝ m u s i c a f i c t a

musica ficta (լատ. մուզիկա ֆիկտա) — կեղծ, անբնական, արհեստական, շինծու երաժշտություն (միջնադարում այդպես էին կոչվում այն երաժշտական ստեղծագործությունները, որոնցում բացի դիատոնիկ ձայնաշարից օգտագործված էին նաև լադի ալտերացված աստիճաններ, այսինքն հնչյուններ, որոնք չէին մտնում դիատոնիկ ձայնաշարի մեջ):

musica instrumentale (իտ. մուզիկա ինստրումենտալե) — նվագարանային երաժշտություն

musical, m., musicale (ֆր. մյուզիկալ, իսպ. մուսիկալիտ, մուզիկալե) — երաժշտական

musical (անգ. մյուզիքըլ) — 1) երաժշտական, 2) մեղեդային, մելոդիկ:

musicalita, musicalité (իտ. մուզիկալիտա, ֆր. մյուզիկալիտե) — երաժշտականություն:

musicante (իտ. մուզիկանտե) — *երաժիշտ:*

musica sacra (իտ. մուզիկա սակրա) — *եկեղեցական երաժշտություն*

musicastre (ֆր. մյուզիկաստրը) — վատ երաժիշտ:

musica strumentale (իտ. մուզիկա ստրումենտալե) — *նվագա(րանա)յին երաժշտություն*

musician (անգ. մյուզիշըն) — *երաժիշտ*

musicien (ֆր. մյուզիսիեն) — 1) երաժիշտ, նվագախմբի արտիստ, 2) երաժշտական:

musicista (իտ. մուզիչիստա) — *երաժիշտ, կոմպոզիտոր:*

musik master (անգ. մյուզիկ մաստեր) — երաժշտության ուսուցիչ

music mistress (անգ. մյուզիկ միստրես) — երաժշտության ուսուցչուհի:

musico (իտ. մուզիկո) — 1) երաժիշտ, երգիչ, 2) երաժշտական

musicografo, musicographe (իտ. մուզիկոգրաֆո, ֆր. musicographe) — երաժշտական քննադատ, երաժշտական գրող:

musicologia, musicologie, musicology (իտ. մուզիկոլոջա, ֆր. մյուզիկոլոժի, անգ. մյուզիքոլոջի)—*երաժշտագիտություն:*

musicologo (իտ. մուզիկոլոգո) — *երաժշտագետ:*

musicomane (իտ. մուզիկոմանե) — երաժշտամոլ, երաժշտասեր (երաժշտության ջերմ սիրահար):

music scholar (անգ. մյուզիք սքոլըր — երաժշտության գիտնական) — *երաժշտագետ:*

musik-stand (անգ. մյուզիկ ստենդ) — նոտակալ (պուլտ, պյուպիտր):

Musik (գեր. Մուզիկ) — 1) *երաժշտություն, 2) նվագախումբ:*

musikálisch (գեր. մուզիկալիշ)— *երաժշտական:*

Musikant (գեր. մուզիկանտ) — երաժիշտ:

Musiker (գեր. մուզիկեր) — երաժիշտ ausübender M. (աուզյուբենդեր մուզիկեր) — կատարող երաժիշտ:

Musikforscher (գեր. մուզիկֆորշեր)— *երաժշտագետ:*

Musikoforschung, Musikologie (գեր. մուզիկֆորշունգ, մուզիկոլոգի) — երաժշտագիտություն:

Musikkapelle (գեր. մուզիկկապելլե — բառացի՝ երաժշտական կապելլա) — *նվագախումբ:*

Musiklehrer (գեր. մուզիկլեհրեր) — երաժշտության ուսուցիչ

Musikliebhaber (գեր. մուզիկլիբհաբեր) — երաժշտասեր, երաժշտամոլ (երաժշտության ջերմ սիրահար):

Musikologie (գեր. մուզիկոլոգիե) — երաժշտագետ:

Musikstück — տես՝ S t ü c k

Musikwerk (գեր. մուզիկվերկ) — երաժշտական ստեղծագործություն, երաժշտական երկ:

Musikwissenschaft (գեր. մուզիկվիսսենշաֆտ) — *երաժշտագիտություն:*

Musikwissenschaftler (գեր. մուզիկկվիսսենշաֆտլեր) — *երաժշտագետ:*

musique (ֆր. մյուզիկ) *երաժշտություն:*

musique á programme — տես՝ p r o g r a m m u s i c

musique classique (ֆր. մյուզիկ կլասսիկ) — *դասական երաժշտություն (կլասիկ երաժշտություն):*

musique concrete (ֆր. մյուզիկ կոնկռետ) — *կոնկրետ երաժշտություն:*

musique de chambre (ֆր. մյուզիկ դը շամբռը) — *կամերային երաժշտություն:*

musique de danse (ֆր. մյուզիկ դը դանս) — պարային երաժշտություն, *պարերաժշտություն:*

musique de salon (ֆր. մյուզիք դը սալոն) — *սալոնային երաժշտություն:*

musique de scéne (ֆր. մյուզիք դը սսեն) — *բեմական երաժշտություն:*

musique descriptive (ֆր. մյուզիք դեսկրիպտիվ) — նկարագրողական (նմանացնողական) երաժշտություն:

musique dramatique (ֆր. մյուզիք դրամատիք) — դրամատիկական երաժշտություն:

musique instrumentale (ֆր. մյուզիք էնստրումենտալ) — *նվագա(րանա)յին երաժշտություն:*

musique militaire (ֆր. մյուզիք միլիտեր) — ռազմական երաժշտություն (զինվորական երաժշտություն)

musique populaire (ֆր. մյուզիք պոպյուլեր) — 1) հանրամատչելի (պոպուլյար) երաժշտություն, 2) ժողովրդական երաժշտություն:

musique profane (ֆր. մյուզիք պրոֆան) — աշխարհիկ երաժշտություն:

musique religieuse (ֆր. մյուզիք ռըլիժեոզ) — պաշտամունքային երաժշտություն, *հոգևոր երաժշտություն*

musique romantique (ֆր. մյուզիք ռոմանտիք) — ռոմանտիկական երաժշտություն

musique sacrée (ֆր. մյուզիք սաքրե) — *հոգևոր երաժշտություն, պաշտամունքային երաժշտություն:*

musique simphonique (ֆր. մյուզիք սեմֆոնիք) — *սիմֆոնիկ երաժշտություն:*

musiquette (ֆր. մյուզիքետտ — musique-ի փոքրացուցիչը) — 1) եղանակիկ (վատի իմաստով) 2) *թեթև երաժշտություն*

musique vocale (ֆր. մյուզիք վոկալ) — երգեցողական երաժշտություն, *վոկալ երաժշտություն:*

muta in (իտ. մուտա ին muta- փոխում, փոխարինում) — փոխել (նվագարանը, տոնայնությունը). օր.՝ հոբոյի պարտիայում նշված՝ m. i. corno inglese (մուտա ին կորնո ինգլեզե) — կնշանակի հոբոյը փոխել անգլիական փողակով: Լիտավրի պարտիայում m. i. A — կնշանակի՝ լիտավրի նախկին լարվածքը փոխել և դարձնել A (լյա):

mutare (իտ. մուտարե) — փոխել, փոփոխել, փոխարինել:

mute (անգ. մյուտ) — մեղմոց (սուրդինա):

mystére (ֆր. միստեր) — 1) Միստերիա, խորհուրդ, 2) խորհրդավորություն:

N

Nachgelassenes Werk (Նախգելասսենես վերկ) — հետմահվան ստեղծագործություն (այսինքն՝ ստեղծագործություն, որը հրատարակվում է հեղինակի մահից հետո):

nach und nach (գեր. նախ ունդ նախ) — կամաց-կամաց, քիչ-քիչ, աստիճանաբար,

naenia, nenia (լատ. նաենիա, իտ. նենիա) — *նենիա:*

narrante (իտ. նարրանտե — պատմիչ, պատմող — (կարծես) պատմելով (թվերգանման):

narrare (իտ. նարրարե) — պատմել, տես՝ n a r r a n t e

natural (անգ. նեչըրըլ) — *բնկար*

naturale (իտ. նատուրալե) — բնական, պարզ, անարվեստ, անսեթևեթ (անբռնազբոսիկ):

naturalezza (իտ. նատուրալեցցա) — բնականություն, պարզություն, անբռնազբոսիկություն

naturalism, naturalisme, naturalismo, Naturalismus (անգ. նեչըրալիզմ, ֆր. նատյուրալիսմ, իտ. նատուրալիզմո, գեր. նատուրալիզմուս) — *նատուրալիզմ:*

naturalmente, naturellement (իտ. նատուրալմենտե, ֆր. նատյուրելըման) — բնական կերպով, պարզ, (ազատ, թեթև):

naturel (ֆր. նատյուրել) — բնական, պարզ, անսեթևեթ (անբռնազբոսիկ, ոչ շինծու):

nazionale (իտ. նացիոնալե) — ազգային, ժողովրդական:

necessario (իտ. նեչեսսարիո) — անհրաժեշտը, կարևորը, պետքականը, հարկավորը (որոշ անսամբլներում այս բառը դրվում է այն պարտիաների վրա, որոնք անհրաժեշտորեն պիտի մասնակցեն կատարմանը):

nenia — տես՝ n a e n i a

neoclassicism, néoclassicisme, neoclassicismo, Neoklassizismum (անգ. նեոքլասիսիզմ, ֆր. նեոկլասսիսիսմ, իտ. նեոկլասսիչիզմո, գեր. նեոկլասսիցիզմուս) *նեոկլասիցիզմ:*

nerveux, nervoso (ֆր. ներվե, իտ. ներվոզո) — ջղային, նյարդային (ուժով, զորավոր):

net, netto (ֆր. նե, իտ. նետտո — մաքուր, ջինջ) — հստակ, պարզորոշ, ճշգրիտ

nettamente, nettement (իտ. նետտամէնտե, ֆր. նետտ(ը)ման) — հստակորեն, անկեղծաբար, համարձակ (նաև՝ պարզորոշ, ճշգրիտ, որոշակի):
nettissimo (իտ. նետտիսսիմո — netto-ի գերադրական աստիճանը) — շատ մաքուր, շատ պարզորոշ, շատ ճշգրիտ ու որոշակի:
netto — տես՝ n e t
neu, neue (գեր. նոյ, նոյե) — նոր:
nicht (գեր. նիխտ) — ոչ, չէ:
nicht schleppend — տես՝ s c h l e p p e n d
nicht zu (գեր. նիխտ ցու) — ոչ շատ (ոչ չափազանց):
niente (իտ. նիենտե) — գրեթե ոչինչ (այսինքն հնչողությունը հետզհետե նվաղեցնելով հասցնել անլսելիության աստիճանի):
ninna-nanna (իտ. նիննա-նաննա) — օրորոցի երգ, օրորոցային:
ninnare (իտ. նիննարէ — օրորել) — օրոր ասել (քնեցնել):
nitido (իտ. նիտիդո) — պարզ, հստակ, պայծառ:
nobile (իտ. նոբիլէ) — ազնվաբարո (վեհ) — con n. orgoglio (կոն նոբիլէ օրգոգլիո) — ազնվությամբ, հպարտությամբ:
nobilissimo (իտ. նոբիլիսսիմո — nobile-ի գերադրական աստիճանը) — չափազանց ազնվաբարո ու վեհ:
noch (գեր. նոխ) — էլի, էլ, դարձյալ, ևս:
nocturne, n., N. (ֆր. նոկտյուռն, անգ. նոքթյուրն, գեր. նոկտյուրնէ) — *նոկտյուրն, ցայգերգ* (գիշերային երգ):
non (իտ. նոն) — ոչ, չէ, չ... ան..., առանց
nona, None (իտ. նոնա, գեր. նոնէ, — իններորդ) — *նոնա*
non divisi (իտ. նոն դիվիզի — չբաժանված, անբաժան, առանց բաժանվելու) — տես՝ divisi
nonet, Nonett, nonette, nonetto (անգ. նոնեթ, գեր. նոնետտ, ֆր. նոնետտ, իտ. նոնետտո) — *նոնետ:*
non legato (իտ. նոն լեգատո) — չկապակցված, առանց կապակցելու:
non molto (իտ. նոն մոլտո) — ոչ շատ:
non tanto (իտ. նոն տանտո) — ոչ այնքան, ոչ այնչափ, ոչ այնպես
non troppo (իտ. նոն տրոպպո) — ոչ շատ, ոչ չափազանց:
nota, note, n., N. (իտ. նոտա, ֆր. նոտ, գեր. նոտէ) — *նոտա:*
note (անգ. նոթ) — 1) նոտա, 2) երաժշտություն, 3) մելոդիա:
Notenpult — տես՝ p u l t
Notensystem (գեր. նոտենսիստեմ — նոտային սիստեմ) — նոտակիր, հնգագիծ:
notturno (իտ. նոտտուրնո) — *նոկտյուրն, ցայգերգ* (գիշերային երգ): (Նաև՝ գիշերային ժամերգություն):
nourrir le son (ֆր. նուռիր լը սոն — հանգեցնել հնչողությունը) — ուժեղացնել հնչողությունը:
novelletta (իտ. նովելլետտա) — *նովելետ:*
nuance (ֆր. նյուանս) — նրբերանգ, նյուանս:
nuovo (իտ. նուովո) — նոր, di n. (դի նուովո) — նորից (կրկնել)

O

o (իտ. o) — կամ, օր՝ per violino o flauto (պէր վիոլինո o ֆլաուտո) — ջութակի կամ ֆլեյտայի համար:
oben (գեր. օբէն — վերևում, վերում) — վերևից linke Hand o. (լինկէ հանդ օբեն) — ձախ ձեռքով վերեվից. կրճատ՝ L. H. oben
Obermanual (գեր. օբերմանուալ) — երգեհոնի վերին ստեղնաշարը:
Oberton (գեր. օբէրտոն) — *օբերտոն:*
obligato (իտ. օբլիգատո) — *օբլիգատո:*
obligé (ֆր. օբլիժե) — նույնն է՝ o b l i g a t o
oboe, oboi (իտ. օբոէ, օբոի) — հոբոյ, հոբոյներ:
իփլեպե (լատ. օկտավա — ութերորդ) — *օկտավա:*
octave, o. (ֆր. օքտավ, անգ. օքթեյվ) — *օկտավա:*
octet, octuor, Oktett, ottetto (անգ. օքթեթ, ֆր. օքտուոր, գեր. օկտետտ, իտ. օտտետտո) — *օկտետ:*
octuor — տես՝ o c t e t
oda, ode, o., o., o. (իսպ. օդա, իտ. օդէ, ֆր. օդ, անգ. օդ, գեր. օդէ) — գովերգ, ներբող, *օդա:*
oeuvre (ֆր. էովր — գործ, աշխատություն) — ստեղծագործություն, երկ, նույնն է՝ o p u s
oeuvres complètes (ֆր. էովրը կոմպլետ) — երկերի լիակատար ժողովածու:
oeuvre[s] posthume[s] (ֆր. էովրը պոստում) — հետմահու (հեղինակի մահից հետո հրատարակված) ստեղծագործություն(ներ):
offen (գեր. օֆֆէն — բացած) — նույնն է՝ a p e r t o
oft (գեր. օֆտ) — հաճախ:
ohne (գեր. օնէ) — բացի, առանց:
ohne Dampfer (գեր. օնե դեմպֆեր) — առանց մեղմոցների (սուրդինաների):
ohne Verschiebung — տես՝ V e r s c h i e b u n g
Oktave (գեր. օկտավե) — *օկտավա:*
Oktett — տես՝ octet
one-step (անգ. ուան-ստեփ) — *ուան-ստեպ:*
ongarese (իտ. օնգարէզէ) — նույնն է՝ u n g h e r e s e
op. — կրճատ՝ o p u s
opera (իտ. օպէրա — գործ, աշխատանք, գործունեություն և այլն) 1) *օպերա*, 2) օպերային թատրոն, 3) ստեղծագործություն, հորինվածք:
opera magica (անգ. օպըրա — մեջիկա) — կախարդական (մոգական) *օպերա:*
Opernführer (գեր. օպերնֆյուհրեր) — օպերային ուղեցույց. (բրոշյուր, որում շարադրված է օպերայի բովանդակությունը և վերլուծումը):

ophicléide (ֆր. օֆիկլեիդ) — օֆիկլեիդ:
oppure (իտ. օպպուրե) — կամ, կամ թե
opus (լատ. օպուս — գործ, աշխատություն, երկ, ստեղծագործություն) — *օպուս:*
opusculum (լատ. օպուսկուլում) — փոքրիկ ստեղծագործություն:
opus posthumum (լատ. օպուս պոստհումում) — հետմահու (հեղինակի մահից հետո հրատարակված) ստեղծագործություն:
oratorio, o., o., Oratorium (իտ. օրատորիո, ֆր. օրատորիո, անգ. օրաթորիո, գեր. օրատորիում) — *օրատորիա:*
Orchester, orchestra, o. (գեր. օրկեստեր, իտ. օրկեստրա, անգ. օրքեսթրե) 1) *նվագախումբ,* 2) *օրկեստր:*
Orchestermusik (գեր. օրկեստերմուզիկ) — նվագախմբային երաժշտություն:
orchestra di jazz, orchestre de jazz (իտ. օրկեստրա դի ջազ, ֆր. օրկեստրը դը ջազ — ջազային նվագախումբ) — *ջազբանդ* (ջազ բանդ)
orchestral, o., orchestrale (ֆր. օրկեստռալ, անգ. օրքեսթրըլ, իտ. օրկեստրալե) — նվագախմբային:
orchestrare, orchestrate, orchestrer, orchestrieren (իտ. օրկեստրարե, անգ. օրքեսթրեյտ, ֆր. օրկեստրե, գեր. օրկեստրիրեն) — *նվագարանավորել:*
orchestration, orchestrazione, Orchestrierung (ֆր. օրկեստրասիոն, անգ. օրքեստրեյշըն, իտ. օրկեստրացիոնե, գեր. օրկեստրիտունգ) — *նվագարանավորում:*
ordinario (իտ. օրդինարիո — սովորական ձևով, ըստ սովորականի) — ցուցում այն մասին, որ նվագելու որևէ հատուկ (ոչ սովորական) ձևից հետո պիտի վերականգնել սովորական ձևը, կամ պիտի վերականգնել նախկին շարժումը (տեմպը): *Ծնծղաներ* (տես) նվագելիս՝ նրանց իրար պիտի հարվածել:
ordre (ֆր. օրդր — կարգ, հաջորդականություն) — պիեսների շար, *սյուիտ:*
Organographie, o. (գեր. օրգանոգրաֆի, ֆր. օրգանոգրաֆի) — օրգանագրություն (օրգանոգրաֆիա) — նվագարանների նկարագրումը
organo pieno (իտ. օրգանո պիենո) — լրիվ երգեհոն (այսպես է կոչվում երբ նվագելիս օգտագործվում են երգեհոնի բոլոր ռեգիստրները միաժամանակ):
Orgel — տես՝ o r g a n
Orgelmusik (գեր. օրգելմուզիկ) — երգեհոնային երաժշտություն
Orgelpfeife (գեր. օրգելպֆայֆե) — *երգեհոնային փողեր, երգեհոնափողեր:*
Orgelpunkt (գեր. օրգելպունկտ) — *ձայնառություն:*
oriental, o., o., orientale, orientalisch (անգ. օրիենթըլ, ֆր. օրիանտալ, իսպ. օրիենտալ, իտ. օրիենտալէ, գեր. օրիենտալիշ) — արևելյան:
ornamenti (իտ. օրնամենտի)—(մեղեդու) զարդեր (տրել, ֆորշլագ և այլն), տես՝ *ֆիորիտուրա, (կոլորատուրա):*
ornamento (իտ. օրնամենտո — զարդարան) — *ֆիորիտուրա:*
ornaments (ֆր. օռնըման) — նույնն է՝ o r n a m e n t i
osanna (օզաննե — օվսաննա, փառք) — փառաբանություն, գովք (գովերգություն):
ossia (իտ. օսսի)՝ — (նոտաներում տրված որևէ փոքր կամ մեծ հատվածի, սովորաբար հեշտացված տարբերակը):
ostinato (իտ. օստինատո — համառ, տես՝ *բասսո օստինատո:*
oter, otez (ֆր. օտե, օտե) — հանել, հանեցեք (ձեռքը):
otez les sourdines (ֆր. օտե լե սուրդին) — հանեցեք մեղմոցները (սուրդինաները):
ottava (իտ. օտտավա) — *օկտավա:*
ottava alta (իտ. օտտավա ալտա) — (կատարել) օկտավա վեր:
ottava bassa (իտ. օտտավա բասսա) — (կատարել) օկտավա վար:
ottavino (իտ. օտտավինո)—փոքր *ֆլեյտա, ֆլեյտա պիկկոլո:*
ottone (իտ. օտտոնե — դեղին պղինձ, արույր)— պղնձյա փողային նվագարանների ընդհանուր անվանումը:
ouvert (ֆր. ուվեռ) — բաց. accord á l'ouvert (ակոռ ա լ'ուվեռ) — ակորդը բաց (ակորդը վերցնել բաց լարերով):
ouverture, o., Ouverture, overture (իտ. ուվերտուրե, ֆր. ուվեռտյուռ, գեր. ուվերտյուրե, անգ. օվըրչըր) — *ուվերտյուրա:*
8 — va — կրճատ՝ ottava

P

pacatamente (իտ. պակատամենտե) — հանգիստ, հանդարտ, անվրդով, հեզ:
pacatissimo (իտ. պակատիսիմո) — շատ հանգիստ, շատ անվրդով ու հեզաբարո:
pacato (իտ. պակատո) — հանգիստ, անվրդով, հեզ:
page, p., pagina, p. (անգ. փեյջ, ֆր. պաժ, լատ. պաջինա, իտ. պաջինա) — էջ
pagina — տես՝ p a g e
palotas (հունգ. պալոտաշ) — *պալոտաշ:*
pandera, pandero (իսպ. պանդերա, պանդերո) — *բուբեն, տամբուրին.* տես՝ t a m b u r i n o
pantomima, pantomime, p., P. (իտ. պանտոմիմա, ֆր. պանտոմիմ, անգ. փենթոմայմ, գեր. Պանտոմիմե) — *մնջախաղ,* (մնջակատարություն), *պանտոմիմա:*
parafrasi, paraphrase, p., P. (իտ. պարաֆրազի, ֆր. պարաֆռազ, անգ. փարաֆրեյզ, գեր. պարաֆրեզե) — *պարաֆրազ*

parlare (իտ. պարլարե) — խոսել, parlando, parlante (պարլանդո — խոսելով, պարլանտե — խոսող) — խոսելով (խոսելու նման), ռիթմն ու ելևէջը ազատ (նմանվելով խոսակցականին):

parlé (ֆր. պառլե) — խոսելով (խոսելու նման) — ռիթմն ու ելևէջը ազատ (նմանվելով խոսակցականին):

parodia (իտ. պարոդիա) — *պարոդիա:*

part, parte, partie, p. (անգ. փարթ, իտ. պարտե, ֆր. պառտի, գեր. պարտիե — մաս, կողմ, գիծ, դեր) — *պարտիա, դերերգ:*

partita, p. (իտ. պարտիտա, գեր. պարտիտա) — *պարտիտա:*

partition (ֆր. պարտիսյոն) — *պարտիտուրա*

Partitur, partitura (գեր. պարտիտուր, իտ. պարտիտուրա) — *պարտիտուր*

part-song (անգ. փարթ-սոնգ) — երեք և ավելի ձայնանոց երգչային (վոկալ) *անսամբլ:*

pas (ֆր. պա-քայլ) — *պա:*

pasacalle, passacaglia, passacaille (իսպ. պասսակալյե, իտ. պասսակալյա, ֆր. պասսաքայ) — *պասսակալյա:*

pas accéléré, pas redoublé (ֆր. պա աքսելերե, պա ռդդուբլե) — արագացված քայլ) — արագ *քայլերգ:*

pasaje, passage, p., P., passaggio (իսպ. պասսախե, ֆր. պասսաժ, անգ. փասսեյջ, գեր. պասսաժե, իտ. պասսաջջո) — *պասսաժ:*

passamezzo, (իտ. պասսամեձձո) — պասսամեձձո, հին իտալական պար պավանա-ի արագացված տեսակը:

passe-pied (ֆր. պասսը — պիե) — *պասպյե*

passion, p., P., passione, passion-play (ֆր. պասսիոն, անգ. փաշըն, գեր. պասսիոն, իտ. պասսիոնե, անգ. փաշըն — փլեյ) — *պասսիոն, չարչարանքներ:*

passionato (իտ. պասսիոնատո) — նույնն է՝ appassionato

passion-play — տես՝ passion

pasticcio (իտ. պաստիչչո — խառնուրդ, շիլափլավ) — *պաստիչչո:*

pastoral, p., pastorale (ֆր. պաստոռալ, անգ. փաստրոռըլ, իտ. պաստորալե) — հովվական, հովվերգական:

pastoral, pastorale, p., P. (ֆր. պաստոռալ, իտ. պաստորալե, անգ. փաստրոռըլ, գեր. պաստորալե) — *պաստորալ:*

pastorella (հին ֆր. պաստոռելլա) — հովվական երգ:

pastourelle (ֆր. պաստուռել) — *պաստուրել:*

pateticamente, patetico (իտ. պատետիկամենտե, պատետիկո) — սրտաշարժ, սրտառուչ, հուզիչ (կրքոտ, պաթոսով լի, ազդու):

pathétique (ֆր. պաթետիք) — նույնն է՝ patetica-mente, տես՝ sonate pathétique

patimente (իտ. պատիմենտե) — տանջվելով, տառապելով, (չարչարվելով):

Pauke, Pauken (գեր. պաուկե, պաուկեն) — *լիտավր,* լիտավրներ:

pausa, pause, P. (իտ. պաուզա, ֆր. պոզ, գեր. պաուզե) — *պաուզա:*

pauser (ֆր. պոզե) — լռել (չնվագել, չերգել):

pavana, p., pavane (իսպ. պավանա, իտ. պավանա, ֆր. պավան) — *պավանա*

pavillon en l'air (ֆր. պավիյոն ան լ'եռ — փողաբերանը հոդս) — իմաստը նույնն է՝ campana in aria

ped. — կրճատ՝ pedale

ped. á chaque mesure — տես՝ chaque mesure

pedal, P., pedale, pédale (անգ. ֆեդըլ, գեր. պեդալ, իտ. պեդալե, ֆր. պեդալ) — *պեդալ, ոտնակ:*

pedal bord (անգ. փեդըլ, բորդ) — նույնն է՝ pedal-klaviatur pedalier, pedaliera (ֆր. պեդալիե, իտ. պեդալիերա) — նույնն է՝ pedalklaviatur

Pedalklaviatur (գեր. պէդալկլավիատուր) — *ոտնաստեղնաշար* (երգեհոնի):

pénétrant (ֆր. պենետրան) — խորաթափանց, սրտառուչ, հուզված:

pensieroso (իտ. պենսիերոսո — մտածկոտ) — մտախոհ (մտազբաղ) մտքերում խորասուզված:

pentafonica (իտ. պենտաֆոնիկա) — *պենտատոնիկա* (նույնն է՝ pentatonica)

pentatonica, Pentatonik (իտ. պենտատոնիկա, գեր. պենտատոնիկ) — *պենտատոնիկա:*

percussion, p., percussione (ֆր. պերկյուսսիոն, անգ. փըրքայշըն, իտ. պերկուսսիոնե, — հարված, զարկ) — հարվածային նվագարանների ընդհանուր անվանումը:

perdendosi (իտ. պերդենդոզի) — կորչելով, մարելով (աստիճանաբար նվազեցնել ինչողությունը, մինչև նրա մարումը):

period, période, periode, periodo, p. (անգ. փերիյեդ, ֆր. պերիոդ, գեր. պերիոդե, իտ. պերիոդո, իսպ. պերիոդո) — *պարբերություն:*

perpetuum mobile (լատ. պերպետուում մոբիլե — անընդհատ շարժում) — *պերպետում մոբիլե:*

pesante (իտ. պեզանտե) — ծանր, ծանրաշարժ, ծանրաքաշ (դանդաղ)

pesantissimo (իտ. պեզանտիսսիմո — pesante-ի գերադրական աստիճանը) — շատ ծանր, շատ ծանրաշարժ, շատ ծանրաքաշ (շատ դանդաղ):

petit (ֆր. պըտի) — փոքր:

petite flute (ֆր. պըտիտը ֆլյուտ) — փոքր ֆլեյտա, *ֆլեյտա պիկոլո:*

peu á peu (ֆր. պէո ա պէո) — քիչ-քիչ, աստիճանաբար, հետզհետե:

pezzi concertanti (իտ. պեցցի կոնչերտանտի) — կոնցերտային պիեսներ

pezzo — (իտ. պեցցո — բան, մաս, կտոր) — 1) Պիես, ստեղծագործություն, օր.՝ p. a quattro mani (պեցցո ա կուատտրո մանի) — պիես չորս ձեռքի համար: 2)

. Հատված, օր. un p. dell' "Aida" (ուն պեցցո դել «Ադդա») — (մեկ) հատված «Ադիդա»-ից:

pezzo a quatro mani — տես՝ p e z z o

Pfeife (գեր. պֆայֆե) — սուլիչ, շվի (փողակ):

Phantasie (գեր. ֆանտազի) — *ֆանտազիա:*

phantastique, phantastisch (ֆր. ֆանտաստիկ, գեր. ֆանտաստիշ) — ֆանտաստիկ (հեքիաթային, կախարդական):

phantastisch — տես՝ p h a n t a s t i q u e

philharmonic (անգ. ֆիլհարմոնիկ) — 1) ֆիլհարմոնիա, 2) ֆիլհարմոնիկ, այսինքն երաժշտական (հասարակություն, ունկնդիրներ), 3) երաժշտասեր:

philharmonie (ֆր. ֆիլառմոնի) — երաժշտասիրություն:

Philharmonie, philharmonique (գեր. ֆիլհարմոնի, ֆր. ֆիլառմոնիք) — *ֆիլհարմոնիա:*

Philharmoniker (գեր. ֆիլհարմոնիկեր) — 1) երաժշտասեր, 2) ֆիլհարմոնիայի *արտիստ:*

piacevole (իտ. պիաչեվոլե) — սիրալիր, դուրեկան, գրավիչ (նրբագեղ):

pianino (իտ. պիանինո) — 1) կամացուկ, հուշիկ, 2) *երգեհոնիկ, շարմանկա*

pianissimo (իտ. պիանիսսիմո — piano-ի գերադրական աստիճանը) — շատ մեղմ, *պիանիսսիմո:*

pianist, P., pianista, p. pianiste (անգ. փիանիստ, գեր. Պիանիստ, իտ. պիանիստա, իսպ. պիանիստա, ֆր. պիանիստ) — դաշնակահար (դաշնամուր նվագող):

piano (իտ. պիանո) — 1) *ռոյալ,* 2) մեղմ, պիանո:

piano piano (իտ. պիանո պիանո) — շատ մեղմ. նույնն է՝ p i a n i s s i m o

pianto (իտ. պիանտո) — լաց, կոծ, հեկեկանք, արցունքներ, կսկիծ, (տանջանք, տրտունջ)

pibroch (անգ. փիբրոչ) — 1) Շոտլանդական պարկապզուկ, 2) վարիացիաներ պարկապզուկի համար:

piccante (իտ. պիկկանտե)—խայթող, կծու, սուր, բարկ. նաև՝ հրապուրիչ:

picchiettando (իտ. պիկկիետտանդո—թեթևակի հարվածելով) — ընդհատ, ընդհատ, *ստակատո-յանման դետաշե:*

piccolo (իտ. պիկկոլո—փոքրիկ, փոքր, կարճ)—*պիկկոլո:*

piéce, piece, pieza (ֆր. պիես, անգ. փիս, իսպ. պյեսա) — *պիես:*

pieghevole (իտ. պիէգեվոլե) — ճկուն, հարմարվող, ճապուկ, մեղմ

pieno (իտ. պիենո) — լրիվ, (ամբողջ, լիակատար).

pietoso (իտ. պիէտոսո) — գթոտ, սրտաշարժ, խղճալի, բարեպաշտ, ակնածանքով, պատկառանքով (տխուր, ողբալի):

pince étouffé (ֆր. պենս էտուֆե—խլացված կսմիթ) — վիզ (արֆա) նվագելիս լարերը կարմրելուց անմիջապես հետո նրանց խլացնել (հանգցնել) ձեռքով:
2. Տես՝ *աչչակատուրա:*

pincer (ֆր. պենսե — կսմթել) — 1) (նվագել) կսմթելով (լարերը), այսինքն՝ պիցցիկատո, 2) նվագել (կսմիթային նվագարան):

pipe (անգ. փայփ) — 1) *սրինգ, ֆլեյտա, 2) փողային նվագարաններ,* 3) նվագել. (սրինգ, շվի, ֆլեյտա և նման այլ նվագարաններ):

pitch (անգ. փիչ — բարձրություն (ձայնի)) — որոշակի բարձրություն ունեցող հնչյուն (տոն), որով լարվում են երգիչները կամ լարում են նվագարանները. տես՝ a b s o l u t e p., *կամերտոն, ձայնոց:*

pittoresco (իտ. պիտտորեսկո նկարչական)—գեղանկարային, նկարագեպ:

piu (իտ. պիու) — ավելի:

piva (իտ. պիվա — հովվականտիկ, տկճոր) — *պարկապզուկ:*

pizz. — կրճատ՝ p i z z i c a t o կամ՝ p i z z i c a n d o

placidamente (իտ. պլաչիդամենտե) — մեղմ, հանդարտ, հուշիկ

placido (իտ. պլաչիդո) — մեղմ, հանդարտ, հուշիկ:

plain-chant (ֆր. պլեն — շան — համաչափ երգեցողություն) — նույնն է՝ c a n t u s p l a n u s

plaintif (ֆր. պլենտիֆ) — աղիողորմ, լալագին (հառաչող, մխկտացող):

plaintivement (ֆր. պլենտիվ(ը)ման) — աղիողորմ, լալագին, հառաչելով, մխկտալով:

plaisant (ֆր. պլեզան) — ուրախ, ծիծաղելի, հետաքրքրաշարժ

platte (գեր. պլատտէ) — *ձայնապնակ:*

play (անգ. փլեյ) — 1) կատարել (դեր, դերերգ, երաժշտական ստեղծագործություն), 2) նվագել, 3) մեկնել հյուրախաղերի, 4) պիես, 5) ներկայացում:

plectre, plectrum, Plektron, plettro (ֆր. պլեքտըր, անգ. փլեքթրըմ, գեր. պլէկտրոն, իտ. պլէտտրո) — h a r p i չ (պ լ ե ք տ ր), կ ն տ ն տ ո ց:

plötzlich (գեր. պլյոտցլիխ) — հանկարծ, անսպասելի, անակնկալ:

plus (ֆր. պլյու. ձայնավորից առաջ՝ պլյուզ) — ավելի, էլ ավելի, ավելի շատ:

plus á l'aise (ֆր. պլյու զա լ'եզ) — ավելի ազատ (ավելի հարմար):

plus allant (ֆր. պլյու զ'ալլան) — ավելի շարժուն (ավելի պոռթկուն):

plus animé (ֆր. պլյու զ'անիմե) — ավելի աշխույժ:

plus calme (ֆր. պլյու կալմ) — ավելի հանգիստ, (հանդարտ), ավելի հուշիկ:

plus lent (ֆր. պլյու լան) — ավելի դանդաղ:

plus lointain (ֆր. պլյու լուենտեն) — էլ ավելի հեռվից:

plus modéré (ֆր. պլյու մոդեռե) — էլ ավելի չափավոր:

plus mouvementé (ֆր. պլյու մուվըմանտե) — ավելի շարժուն:

plus retenu (ֆր. պլյու ռըտընյու) — էլի դանդաղեցնել. (էլ ավելի դանդաղեցնել):

plus rien (ֆր. պլյու ռիեն) — լուծվելով, չքանալով, կորչելով:

poccetta, pocetto, pochette, pocket-fiddle (իտ. պոչչետտա, պոչետտո, ֆր. պոշետտ, անգ. փոքեթ—ֆիդըլ) — *պոշետտա, (պոշետ):*

pochettino (իտ. պոկետտինո) — քիչ, մի քիչ, մի փոքր, փոքր ինչ:

pochissimo (իտ. պոկիսսիմո — poco-ի գերադրական աստիճանը) — հազիվ, շատ քիչ (աննշան):

pocket-fiddle — տես՝ p o c c e t t a

un poco (իտ. ուն պոկո) — քիչ, մի քիչ, մի փոքր:

poco a poco (իտ. պոկո ա պոկո) — քիչ-քիչ, աստիճանաբար, հետզհետե:

poco a poco accelerando (իտ. պոկո ա պոկո աչչելերանդո) — աստիճանաբար արագացնելով:

poco a poco il tempo va crescendo (իտ. պոկո ա պոկո իլ տեմպո վա կրեշենդո) — աստիճանաբար արագացնելով տեմպը:

poco meno (իտ. պոկո մենո) — մի փոքր պակաս, մի քիչ պակաս:

poco piu (իտ. պոկո պիու) — փոքր ինչ ավելի, մի քիչ ավելի:

poem, P., poema (անգ. փոէմ, գեր. պոեմ, իտ. պոէմա) — *պոեմ:*

poema simfonica, poéme simphonique (իտ. պոէմա սիմֆոնիկա, ֆր. պոէմ սեմֆոնիք)—*սիմֆոնիկ պոեմ:*

poéme (ֆր. պոէմ) — 1. պոեմ, 2. վոկալ ստեղծագործության տեքստ, օպերային *լիբրետտո:*

poéme symphonique — տես՝ p o e m a s i m f o n i c a

poi (իտ. պոի) — այնուհետև, հետո, ապա (նրանից հետո):

poi seque (իտ. պոի սեգուե) — ապա հետևում է, հետո հաջորդում է (հետո գալիս է):

poi sequente (իտ. պոի սեգուենտե) — ապա (հետո) հաջորդը:

polca (իտ. պոլկա) — *պոլկա:*

polca mazurca (իտ. պոլկա մաձուրկա) — *պոլկա մազուրկա:*

polifonia, poliphonie, P. (իտ. պոլիֆոնիա, ֆր. պոլիֆոնի, գեր. պոլիֆոնի) — *պոլիֆոնիա:*

poliritmia, polyrhitmic, polyrhytmie, Polyrhytmik (իտ. պոլիրիտմիա, անգ. պոլիրիթմիկ, ֆր. պոլիռիթմի, գեր. պոլիռիթմիկ) — *պոլիռիթմիա:*

polo (իսպ. պոլո) — պոլո (անդալուզական պար):

politonalita, Polytonalitat, polytonalité, polytonality (իտ. պոլիտոնալիտա, գեր. պոլիտոնալիտետ, ֆր. պոլիտոնալիտե, անգ. փոլիթոնալիտի) — պոլիտոնալություն, բազմատոնություն *(բազմատոնայնականություն):*

polonaise, polonesa (ֆր. պոլոնեզ, իսպ. պոլոնեսա)—*պոլոնեզ:*

pompös, mit Pomp (գեր. պոմպյոզ, միտ պոմպ)—նույնն է՝ p o m p o s a m e n t e

pomposamente, pomposo (իտ. պոմպոսամենտե, պոմպոսո)—շքեղ, հանդիսավոր, վեհ (ծանրակշիռ):

ponderoso (իտ. պոնդերոսո)—ծանր, ծանրակշիռ (կարևոր):

ponticello (իտ. պոնտիչելլո) — լարակալ, հենարան (իշուկ): **sul p.** (սուլ պոնտիչելլո) — (աղեղը լարերին քսել, կամ հարիչով լարերը կսմթել (*լարակալի* մոտ):

popolare, populaire, popular (իտ. պոպոլարե, ֆր. պոպյուլեռ, անգ. փոփյուլըր) — 1) ժողովրդական, 2) հանրամատչելի, հանրածանոթ, հանրաճանաչ, հանրահայտ, համբավավոր, ժողովրդականություն վայելող:

portamento (իտ. պորտամենտո) — *պորտամենտո:*

portamento di voce (իտ. պորտամենտո դի վոչե) — իմաստով նույնն է՝ p o r t a m e n t o

portamusica (իտ. պորտամուզիկա)—նոտապանակ:

port de voix (ֆր. պոռ դը վուա) — նույնն է՝ p o r t a m e n t o d i v o c e

portée (ֆր. պոռտե) — *նոտակիր, հնգագիծ:*

pos, Pos. — կրճատ՝ position, Posaune, Posaunen

Posaune, Posaunen (գեր. պոզաունե, պոզաունեն) — *ավագափող,* ավագափողեր (*տրոմբոն,* տրոմբոններ):

posément (ֆր. պոզեման) — առանց շտապելու, լուրջ, ծանրաբարո (դանդաղ):

positif, Positiv, organo positivo (ֆր. պոզիտիֆ, գեր. պոզիտիֆ իտ. օրգանո պոզիտիվո)— *պոզիտիվ:*

position, p., posizione (ֆր. պոզիսիոն, անգ. փոզիշըն, իտ. պոզիցիոնե) — դիրք, *պոզիցիա:*

possibile (իտ. պոսսիբիլե — հնարավոր) հնարավորին չափ, որքան հնարավոր է օր.՝ **piu forte p.** (պիու ֆորտէ պոսսիբիլէ) — հնարավորին չափ ուժգին, **piano p.** (պիանո պոսսիբիլէ) — որքան հնարավոր է մեղմ):

possibile (ֆր. պոսսիբլ) — հնարավոր:

posthume (ֆր. պոստյում)—հետմահու (հեղինակի մահից հետո հրապարակված): Տես՝ o e u v r e p o s t h u m e

postlude, p., postludio, Postludium (ֆր. պոստլյուդ, անգ. փոստլյուդ, իտ. պոստլուդիո, գեր. պոստլուդիում) — *պոստլյուդիա:*

pot-pourri, potpourri (ֆր. պո-պուրրի, իտ. անգ. փոփուրի, գեր. Պոտ — խառնուրդ, շիլափլավ) — *պոպուրի:*

poussé (ֆր. պուսսե, pousser-ից, հրում) — իմաստով նույնն է՝ e n p o u s s a n t

pp — կրճատ՝ p i a n i s s i m o, (երկու p i a n o): Տես՝ *դինամիկ նշաններ*

ppp — կրճատ՝ p i a n o p i a n s s i m o, (երեք p i a n o): Տես՝ դինամիկ նշաններ:

praeludium, Praludium (լատ. պրելուդիում, գեր. պրելուդիում) — նույնն է՝ **prélude**

präludieren, préluder, preludiar (գեր. պրելուդիրեն, ֆր. պրելյուդե, իսպ. պրելուդիար) — 1) *պրելյուդել, նախանվագել,* 2) *նախապատրաստվել նվագելու կամ*

երգելու (լարել նվագարանը, փորձել ձայնը և այլն):

précédement (ֆր. պրեսեդամման) — առաջ, մինչ այդ, դրանից առաջ:

precedente (իտ. պրեչեդենտե) — նախորդ, նախորդող, օր. tempo p. (տեմպո պրեչեդենտե) — նախորդ տեմպը: Տես՝ t e m p o p r i m o

precipitando (իտ. պրեչիպիտանդո)—շտապելով (արագացնելով)

precipitare (իտ. պրեչիպիտարե — շտապեցնել)—արագացնելով (տեմպը):

preciso (իտ. պրեչիզո) — ճշգրիտ, որոշակի:

pregando (իտ. պրեգանդո) — խնդրելով, աղաչելով, աղերսելով, (աղոթելով)

prélude, prelude, preludio, p. (ֆր. պրելյուդ, անգ. փրելյուդ, իտ. պրէլուդիո, իսպ. պրելուդիո — սկիզբ, սկզբնավորություն) — *պրելյուդ, պրելյուդիա:*

premier (ֆր. պրեմյե) — *պրեմյերա:*

presque (ֆր. պրեսկ) — համարյա, գրեթե:

pressante (իտ. պրեսսանտե) — շտապելով, փութով, (արագ-արագ):

presser (ֆր. պրեսսե — սեղմել, նեղել) — շտապեցնել, արագացնել,

pressez (պրեսսե) — շտապեցրեք, արագացրեք:

prestezza (իտ. պրեստեցցա) — արագություն, ժրություն, եռանդ (կոն պրեստեցցա) — արագորեն, ժրորեն, եռանդորեն:

prestissimo (իտ. պրեստիսսիմո — presto-ի գերադրական աստիճանը) — *պրեսստիսիմո:*

presto (իտ. պրեստո) — *պրեսստո:*

presto assai (իտ. պրեստո ասսաի) — ավելի արագ, քան պրեստո-ն (համարյա պրեստիսսիմոյի արագությամբ):

prima, primo (իտ. պրիմա, պրիմո — առաջին) — պրիմա (պրիմո):

primadonna, (prima donna) (իտ. պրիմադոննա (պրիմա դոննա):

primo uomo (իտ. պրիմո ուոմո — առաջին մարդը) — հին իտալական օպերաներում գլխավոր դերեր կատարող երգիչ (18-րդ դ. գլխավորապես ամորձատ-տենոր):

principale (իտ. պրինչիպալե — առաջին, հիմնական, կարևոր) — գլխավոր (ձայնը անսամբլում կամ ռեգիստրը երգեհոնում):

principalmente (իտ. պրինչիպալմենտե) — առավելապես, գլխավորապես, հատկապես օր.՝ p. il basso (ֆորտիսսիմո, պրինչիպալմենտե իլ բասսո)—շատ ուժգին, հատկապես բասը:

Principalstimme (գեր. պրինցիպալշտիմմե)— գլխավոր ձայն, (գլխավոր պարտիա):

probe (գեր. պրոբե) — փորձ:

producer (անգ. փրոդյուսըր) — ռեժիսոր, բեմադրող:

production, produzione (ֆր. պռոդյուկսիոն, իտ. պրոդուցիոնէ) — ստեղծագործություն, երկ, հորինվածք:

profondo (իտ. պրոֆոնդո — խորը, ցածր) — կրծքային, թավ (բամբ): Տես՝ b a s s o p r o f o n d o

program-music, Programmusik, musica a programma, musique a programme (անգ. փրոգրամ-մյուզիք, գեր. պրոգրամ-մուզիկ, իտ. մուզիկա ա պրոգրամմա, ֆր. մյուզիք ա պրոգրամմ) — *ծրագրային երաժշտություն:*

progression, p., progressione (ֆր. պրոգրեսսիոն, անգ. փրոգրեշըն, իտ. պրոգրեսսիոնէ) — *սեկվենցիա*

progressivement (ֆր. պրոգրեսսիվմման) — աստիճանաբար, հետզհետե:

promptement (ֆր. պրոմպտմման) — արագորեն, աշխուժորեն, ճարպկորեն (կենսալի):

prontezza (իտ. պրոտենցցա) — արագություն (աշխուժություն, ճարպկություն):

pronto (իտ. պրոնտո) — արագ, աշխույժ, ճարպիկ:

pronunziato (իտ. պրոնունցիատո) — առոգանված, ընդգծված, ուժեղացված (պարզորոշ, հասկանալի):

proposta (իտ. պրոպոստա) — պրոպոստա (առաջնորդ) տես՝ r i s p o s t a

Prospekt (գեր. պրոսպեկտ) — երգեհոնի ճակատը:

prunkvoll (գեր. պրունկվոլլ) — շքեղ, ճոխ, հոյակապ:

Psalm, p., psaume (գեր. պսալմ, անգ. սամ, ֆր. պսոմ)— *սաղմոս:*

psalmodie, P., psalmody (ֆր. փսալմոդի, գեր. պսալմոդիե, անգ. (փ)սալմըդի) — սաղմոսերգություն

Pult, Notenpult (գեր. պուլտ, նոտենպուլտ) — նոտակալ, (պուլտ, պյուպիտր):

Punkt, punto (գեր. պունկտ, իտ. պունտո) — կետ:

punta (իտ. պունտա) — ծայր, սուր ծայր (աղեղի) **a p. d'arco** կամ **a p. dell' arco** (ա պունտա դ'արկո կամ ա պունտա դել'արկո) — աղեղի ծայրով (նվագել):

punta d'arco (իտ. պունտա դ'արկո) — աղեղի ծայրը:

puntato (իտ. պունտատո — կետով նշագրված, նշված)— կտրտված, հատիկ-հատիկ ու չոր:

pupitre (ֆր. պյուպիտռ)—նոտակալ (պյուպիտր, պուլտ):

Q

Quadrat (գեր. կվադրատ) — *բեկար:*

quadrille, Q (ֆր. քադրիյ, գեր. կվադրիլլ) — *կադրիլ*

quanto (իտ. կուանտո) — ինչքան, որքան, ինչպես **q. possibile** (կուանտո պոսսիբիլե) — որքան հնարավոր է

quarta, quarte, Q. (իտ. կուարտա, ֆր. քարթ, գեր. կվարտե — չորրորդ) — *կվարտա*

quartet, Quartett, quartetto, q. (անգ. քուարթեթ, գեր. կվարտետտ, իտ. կուարտետտո, ֆր. կուարտետտո)— *կվարտետ*

Quartenakkord (գեր. կուարտենակկորդ) — *կվարտային ակորդ* (կվարտային կառուցվածքի ակորդ):

Quartenharmonik (գեր. կուարտենհարմոնիկ) — *կվարտային հարմոնիա*. (կվարտային կառուցվածքի ակորդներով):

quartettino (իտ. կուարտետտինո) — *կուարտետինո:*

quasi (լատ. կվազի, իտ. կուազի) — կարծես թե, գրեթե, համարյա, մոտավորապես. օր.՝ andante q. allegretto (անդանտե կուազի ալլեգրետտո) — andante-ն (կատարել) մոտավորապես allegretto-ի տեմպով:

quasi una fantasia (իտ. կուազի ունա ֆանտազիա) — կարծես (թե) *ֆանտազիա*, ֆանտազիայանման:

quasi niente (իտ. կուազի նիենտե — գրեթե ոչինչ) — հետզհետե մեղմացնել հնչողությունը մինչև նրա վերջնական մարումը:

quatre, quattro (ֆր. քաթր, իտ. կուատտրո) — չորս: Տես՝ á qatre mains, a quattro mani, suonare a quattro mani, pezzo a quattro mani

quatuor (ֆր. քաթեոր կամ կուատուոր) — *կվարտետ:*

quietamente (իտ. կուիետամենտե) — հանդարտ, հուշիկ (քնքուշ).

quietissimo (իտ. կուիետիսսիմո) — չափազանց հանգիստ ու քնքուշ.

quieto (իտ. կուիետո) — հանդարտ, հանգիստ, հեզաբար:

quilio (իտ. կուիլիո) — *ֆլյեյտ:*

quinta, quinte, Q. (իտ. կուինտա, ֆր. քենթ, գեր. կվինտե) — *կվինտա:*

quintet, Quintett, quintette, quintetto (անգ. քուինթեթ, գեր. կվինտետտ, ֆր. քենթեթ, իտ. կուինտետտո) — *կվինտետ*

Quintharmonik (գեր. կվինտհարմոնիկ) — *կվինտային հարմոնիա* (կվինտային կառուցվածքի ակորդներով):

quintuor (ֆր. քենթեոր) — *կվինտետ:*

R

rabbioso (ռաբբիոզո) — մոլեգին, զայրագին, կատաղի:

raddolcendo (իտ. ռադդոլչենդո) — մեղմելով, հանդարտեցնելով, չափավորելով (հնչողությունը):

radieux (ֆր. ռադիեո) — ուրախ, խնդալից, լուսափայլ:

raffrenando (իտ. ռաֆֆրենանդո — սանձահարելով) — զսպելով, չափավորելով (շարժումը):

rall. — կրճատ՝ rallentando

rallentando (իտ. ռալլենտանդո) դանդաղեցնելով:

rapidamente, rapidement (իտ. ռապիդամենտե, ֆր. ռապիդըման) — արագ, արագորեն, սրընթաց:

rapide, rapido (ֆր. ռապիդ, իտ. ռապիդո) — արագորեն, արագընթաց, սրընթաց (սաստիկ):

rapsodia, rapsodie (իտ. ռապսոդիա, ֆր. ռապսոդի) — *ռապսոդիա:*

rasch (գեր. ռաշ) — արագ, աշխույժ, զվարթ, rascher (ռաշէր) — ավելի արագ, ավելի աշխույժ, ավելի զվարթ:

Rassel, Ratsche, rattle (գեր. Ռասսել, Ռաչե, անգ. ռեթթըլ) — ճչանակ (չխկչխկան) տես՝ crécelle

Ratsche — տես՝ Rassel

rattamente, ratto (իտ. ռատտամենտե, ռատտո) — արագ, թեթև, աշխույժ:

rauco, roco (իտ. ռաուկո, ռոկո) — խռպոտ, խզզան, կերկերաձայն:

rauschend (գեր. ռաուշենդ) — աղմկալի, կարկաչելով, սոսափելով:

ravvivando (իտ. ռավվիվանդո) — աշխուժացնելով (արագացնելով):

ravvivando il tempo (իտ. ռավվիվանդո իլ տեմպո) — աշխուժացնելով (արագացնելով) տեմպը:

re (ռե) — յոթ հիմնական հնչյուններից երկրորդի վանկային անվանումը: Տառային անունն է՝ d կամ D (դէ), տես՝ *սոլմիզացիա:*

rechte (գեր. ռեխտե) — աջ:

récit (ֆր. ռեսի) — նույնն է՝ recitatif

récital, recital, r. (ֆր. ռեսիտալ, անգ. րիսայթըլ, իտ. ռեչիտալ) — *մենահամերգ* (մեկ կատարողի համերգ, կամ համերգ նվիրված մեկ կոմպոզիտորի):

recitando, recitata (իտ. ռեչիտանդո, ռեչիտատո) — արտասանելով, պատմելով (թվերգելով):

récitant (ֆր. ռեսիտան) — 1) մենակատարային, 2) մենակատարող նվագարան, մենակատարող ձայն:

recitante, recitatore (իտ. ռեչիտանտե, ռեչիտատորե) — 1) արտասանող, 2) կատարող:

récitation (ֆր. ռեսիտասիոն) — *թվերգել* (կատարել կարծես խոսելով, արտասանելով):

récitatif, recitative, recitativo (ֆր. ռեսիտատիֆ, անգ. իտ. ռեչիտատիվո) — *թվերգ, ռեչիտատիվ:*

Recitativ, Recitativo, Rezitativ (գեր. ռեցիտատիֆ, ռեցիտատիֆո, ռեցիտատիֆ) — *թվերգ, ռեչիտատիվ:*

recitativo accompagnato (իտ. ռեչիտատիվո ակկոմպանյատո) — թվերգ (ռեչիտատիվ), որի նվագակցությունը անընդհատ է, կատարվում է շատ ռիթմիկ և արտահայտչական նշանակություն ունի. ի տարբերություն recitativo secco-ի (ռեչիտատիվո սեկկո չոր թվերգ (ռեչիտատիվ) — որի նվագակցումը՝ երբեմնի վերցված առանձին ակորդներ են, որոնք օգնում են երգչին պահպանել ելևէջային (ինտոնացիոն) ճշտությունը. recitativo secco-ն (չոր թվերգը) ռիթմիկ տեսակետից կատարվում է ազատ, ըստ կատարողի (երգչի) ցանկության:

rédaction, redaction, redazione, Redaktion (ֆր. ռեդակսիոն, անգ. րիդաքշըն, իտ. ռեդացիոնէ, գեր. ռեդակցիոն) — 1) խմբագրություն, 2) խմբագրում:

redoublé (ֆր. ռըդուբլե) — արագացված (նաև՝ կրկնապատկված):

réduction (ֆր. ռըդուկսիոն — պակասեցում, կրճատում) — համառոտված (համառոտագրված) *պարտիտու-*

րա (պարտիտուրա՝ հարմարեցված երկու հնգագծերի վրա):

refrain (ֆր. ռըֆռեն) — կրկներգ (*ռեֆրեն*):

regens chori (լատ. ռեգենս խորի) — եկեղեցական երգչախմբի *խմբավար*

régisseur, Regisseur, regista (ֆր. ռեժիսեռ, գեր. ռեժիսյոր, իտ. ռեջիստա) — *ռեժիսոր:*

register, registre, registro (անգ. ռեջիստըր, գեր. ռեգիստեր, ֆր. ռըժիստր, իտ. ռեջիստրո) — *ձայնաստիճան, (ռեգիստր)*

Registration, r. (գեր. ռեգիստրացիոն, ֆր. ռըժիստրասիոն) — ռեգիստրավորում (երգեհոնի):

regret (ֆր. ռեգրե) — տրտունջ, դարդ, ողբ:

Reihe (գեր. ռայե — շար, շարք) — նույնն է՝ **serie**

religiosamente, religioso (իտ. ռելիջոզամենտե, ռելիջոզո) կրոնականորեն (կրոնասերորեն, կրոնապաշտորեն):

répertoire, repertorio (ֆր. ռեպերտուար, իտ. ռեպերտորիո) — *ռեպերտուար, երկացանկ:*

répétition (ֆր. ռեպետիսյոն — կրկնություն) — *փորձ:*

replica (իտ. ռեպլիկա) — 1) առարկություն, ռեպլիկա, 2) նոտաներում՝ — կրկնություն **senza r.** (սենցա ռեպլիկա)՝ — առանց կրկնության **si r.** (սի ռեպլիկա) — կրկնվում է

reprenez le mouvement (ֆր. ռըպրենե լը մուվըման — վերականգնել (նախկին) շարժումը — իմաստով նույնն է՝ **a tempo**

reprise, (ֆր. ռըպրիզ, անգ. րիփրույզ, գեր. ռեպրիզ) — 1) *ռեպրիզ* 2) կրկնակ, 3) բեմադրության կամ ներկայացման վերականգնումը, 4) *ագուցիկ* (մտցնովի) համար (օպերայի, օպերայի մեջ)

résigné (ֆր. ռեզինյե)— անտրտունջ, հեզաբար, խոնարհ:

résolu, resoluto (ֆր. ռեզոլյու, իտ. ռեսոլուտո — որոշված, վճռված) — վճռականորեն, վճռականությամբ լի (առնական, ուժգին)

responsorium (ուշ լատ. ռեսպոնսորիում) — կաթոլիկական եկեղեցու երգեցողության հնագույն ձևերից մեկը, անտիֆոնային երգեցողության տարատեսակը՝ երգչախմբի պատասխանը մեներգչի (քահանայի) երգին. տես՝ *սաղմոսերգություն, փոխերգություն, անտիֆոնային երգեցողություն:*

rest (անգ. րեստ) — *պաուզա* (լռություն, լռության նշան):

retard (ֆր. ռըտար) — *հապաղում,* դանդաղեցում:

retarder (ֆր. ռըտարդե) — ուշանալ, հետ մնալ, հապաղել, դանդաղեցնել:

retenir (ֆր. ռըտընիր) — կասեցնել, ուշացնել, զսպել, դանդաղեցնել (մեղմել), տես՝ **en retenant peu à peu**

retenu (ֆր. ռըտընյու) — ուշացնելով, դանդաղեցնելով, (զուսպ, չափավոր):

revenir (ֆր. ռըվընիր — նորից գալ) — վերադառնալ:

revenir au mouvement (ֆր. ռըվընիր օ մուվըման) — վերադառնալ (նախկին) շարժմանը, (վերականգնել նախկին տեմպը):

revenez (ֆր. ռըվընե) — վերադարձեք:

revenez peu á peu au 1-er mouvement (ֆր. ռըվընե պեո ա պեո օ պռըմյե մուվըման) — քիչ-քիչ (աստիճանաբար) վերադարձեք սկզբնական տեմպին:

réverie (ֆր. ռեվըրի) — 1) անընդջականություն, մտախոհություն, անուրջներ, 2) համապատասխան բնույթի երաժշտական պիեսի անվանում (խորագիր):

Rhapsodie, rapsody (գեր. ռապսոդի, ֆր. ռապսոդի, անգ. րափսոդի) — *ռապսոդիա:*

rhythm (անգ. րիթմ) — 1) *ռիթմ, 2) չափ*

riavvicinandosi (իտ. ռիավվիչինանդոզի) — (կարծես հեռվից) մոտենալով:

ricercare (իտ. ռիչերկարե — փնտրել, որոնել) — 1) *ռիչերկար,* 2) պրելյուդել (նախանվագել հանպատրաստից):

ricercato (իտ. ռիչերկատո) — նուրբ, գեղանի, նրբագեղ

ricochet, á ricochet (ֆր. ռիկոշե, ա ռիկոշե) — *ռիկոշետ*

riduzione (իտ. ռիդուցիոնե — վերածում) — *արանժեվորում*

rigaudon, rigodon (ֆր. ռիգոդոն, ռիգոդոն) — *ռիգոդոն*

rigodon — տես՝ **rigaudon**

rigore (իտ. ռիգորե) — խստություն, ճշգրտություն, պարտադրանք **con r.** (կոն ռիգորե) — խստությամբ, ճշգրտորեն, պարտադիր կերպով (պահպանելով ռիթմն ու կատարման նրբերանգները), **senza r.** (սենցա ռիգորե) — առանց ճշտորեն (խստորեն) պահպանելու (ռիթմը):

rigore di metro (իտ. ռիգորե դի մետրո) — ճշտորեն (խստորեն) պահպանելով չափը:

rigorosamente, rigoroso (իտ. ռիգորոսամենտե, ռիգորոսո)— խստորեն, ճշգրտորեն, պարտադիր կերպով, տես՝ **rigore**

rigorissimo (իտ. ռիգորիսսիմո) — շատ խիստ, շատ ճշգրիտ, տես՝ **rigore**

rigueur (ֆր. ռիգեր)—ճշգրտություն, խստություն, խիստ, ճշգրիտ պահպանում (ռիթմի ու կատարման նրբերանգների) **sans r.** (սան ռիգեռ)—առանց ճշտորեն (պահպանելու ռիթմը):

rinforzando (իտ. ռինֆորցանդո) — ուժեղացնելով:

Ringeltanz (գեր. ռինգելտանց) — *կլոր պար, շուրջպար:*

ripetere (իտ. ռիպետերե — կրկնել, սովորել, սերտել) — փորձել:

ripetizione (իտ. ռիպետիցիոնե — կրկնում, կրկնություն) — *փորձ:*

ripieno (իտ. ռիպիենո — լեփ-լեցուն, ճխրուն) — *ռիպիենո:*

ripresa (իտ. ռիպրեզա) — նույնն է՝ **reprise**

risentimento (իտ. ռիսենտիմենտո) — վրդովմունք, գայրույթ, բարկություն:
risolutamente (իտ. ռիսոլուտամենտե) — վճռական, համարձակ, աներկյուղ (առնական):
risoluto (իտ. ռիսոլուտո) — վճռական, համարձակ, աներկյուղ, (առնական)
risonante (իտ. ռիսոնանտե) — հնչուն, հնչեղ, զնգուն
voce r. — (վոչե ռիսոնանտե) — հնչուն ձայն, հնչեղ ձայն, զնգուն ձայն (սաստկաձայն):
risposta (իտ. ռիսպուստա) — պատասխան:
ristretto (իտ. ռիստրետտո — նեղ, սեղմ) — *ստրետտա:*
risvegliando (իտ. ռիզվելյանդո) — արթնացնելով (կենդանացնելով, աշխուժացնելով):
rit. — կրճատ՝ **ritenuto**
ritard. — կրճատ՝ **ritardando**
ritardando (իտ. ռիտարդանդո) — դանդաղեցնելով:
riten. — կրճատ՝ **ritenuto**
ritenuto (իտ. ռիտենուտո) — դանդաղեցնելով:
ritmica (իսպ. ռիտմիկա) — *ռիթմիկա:*
ritmico (իսպ. ռիտմիկո) — ռիթմիկ, ռիթմիկական, ռիթմային:
ritmo, r. (իտ. ռիտմո, իսպ. ռիտմո) — 1) *ռիթմ, 2) չափ, 3) տեմպ:*
Ritornell, ritornello, ritornelle (գեր. ռիտոռնելլ, իտ. ռիտոռնելլո, ֆր. ռիտուռնել) — *ռիտուռնել* — փոքրիկ կրկներգ:
robustamente, robusto (իտ. ռոբուստամենտե, ռոբուստո — զորավոր) — ուժեղ, ամուր, առնական:
roccoco, rococo (իտ. ռոկկոկո, ռոկոկո) — *ռոկոկո:*
Rokoko (գեր. Ռոկոկո) — *ռոկոկո:*
rollando, rollo (իտ. ռոլանդո, ռոլլո)—տրեմոլո-յանման հարվածել մեծ թմբուկին կամ լիտավրին, այնպիսի արագությամբ, որ ստացվի միաձույլ տևական դռռոց (և ոչ առանձին դմփոցներ), այլ կերպ ասած՝ կոտորակել:
Rolltrommel (գեր. ռոլլտռոմմել) — գլանաձև թմբուկ:
romance (անգ. րոմանս) — 1) *ռոմանս,* 2) ռոմանտիկա:
romance, romanza, Romanze (ֆր. ռոմանս, իտ. ռոմանձա, իսպ. ռոմանցա, գեր. ռոմանցե) — *ռոմանս:*
romancero (իսպ. ռոմանսերո) — 1) ռոմանսների ժողովածու, 2) ռոմանսներ կատարող երգիչ:
romanticism, romanticismo (անգ. ռոմանթիսիզմ, իսպ. ռոմանտիսիսմո) — ռոմանտիզմ:
romanticismo, Romantik (իտ. ռոմանտիչիզմո, գեր. ռոմանտիկ) — 1) ռոմանտիզմ, 2) ռոմանտիկա:
romantico (իսպ. ռոմանտիկո) — ռոմանտիկական:
romantique (ֆր. ռոմանտիկ) — 1) ռոմանտիկական, 2) ռոմանտիկ
romantisme (ֆր. ռոմանտիսմ) — *ռոմանտիզմ:*
romanza, Romanze — տես՝ **romanse**
ronde (իտ. ռոնդե) — *շուրջպար*
rondeau, r. (ֆր. ռոնդո, անգ. ռոնդո) — *ռոնդո:*
rondinetto, rondino, rondoletto (իտ. ռոնդինետտո, ռոնդինո, ռոնդոլետտո) — փոքրիկ *ռոնդո:*
rondo, rondo (անգ. ռոնդո, գեր. ռոնդո, իտ. ռոնդո)— *ռոնդո*
roulade (ֆր. ռուլադ) — *ռուլադ, գեղգեղանք:*
roulement (ֆր. ռուլըման) — հարվածային նվագարանների շատ արագ *տրեմոլո* (այլ կերպ՝ կոտորակում): Ֆրանսիայում միայն թմբուկի կոտորակում:
rovescio (իտ. ռուվէշո — շուռ տված, շրջված, շուռ եկած, թարս ու շիտակ) — շրջված
rude, r. (ֆր. ռյուդ, իտ. ռուդե)— կոպիտ, խիստ, սաստիկ, դաժան, մռայլ:
ruhig (գեր. ռուհիգ) — հանդարտ, մեղմ. **ruhiger** (ռուհիգեր) ավելի հանդարտ, ավելի մեղմ:
ruhiger — տես՝ **ruhig**
rullante (իտ. ռուլլանտե) — թմբուկով շատ արագ *տրեմոլո* կատարել (այլ կերպ՝ կոտորակել):
rul lio, rullo (իտ. ռուլլիո, ռուլլո) — 1) թմբկահարում, թմբուկի անընդհատ դափյուն, 2) հարվածային նվագարանների շատ արագ *տրեմոլո* (այլ կերպ՝ կոտորակում):
rumba, r. (իտ. ռումբա, իսպ. ռումբա) — *ռումբա*
Rundgesang (գեր. ռունդգեզանգ) — շուրջպարերգ:
rustico (իտ. ռուստիկո — գյուղական, գյուղացիական)— պարզ, բնական, անպաճույճ, (ոչ արհեստական), ժողովրդականի պես (նաև բիրտ, կոշտ, կոպիտ):
ruvidamente, ruvido (իտ. ռուվիդամենտե, ռուվիդո)— անպաճույճ, կոպիտ, անտաշ (խիստ, մռայլ):
rythme (ֆր. ռիթմ) — 1) *ռիթմ, 2) չափ, 3) տեմպ:*
rythmé (ֆր. ռիթմե) — ռիթմիկ (ռիթմիկորեն) **tres r.** (տրեռիթմե) — շատ ռիթմիկ, ռիթմիկորեն ճշգրիտ:
rythmique (ֆր. ռիթմիք) — ռիթմական, ռիթմիկական, ռիթմիկ:

S

Sackpfeife (գերմ. Զակկպայֆե, Sack—պարկ և pfeife—շվի (պզզան)) — *պարկապզուկ, տիկ:*
Saite (գեր. Զայտե) — *(սիմ)*
Saiteninstrumente (գեր. Զայտենինստրումենտե)— *լարային նվագարաններ*
salmeggiamento (իտ. սալմեջջամենտո) — *սաղմոսերգություն:*
salmeggiante (իտ. սալմեջջանտե) — 1) սաղմոսերգու, 2) միապաղաղ, միօրինակ:
salmo (իտ. սալմո) — *սաղմոս:*
Salonorchester (գեր. սալոնօրկեստեր) — *սալոնային նվագախումբ:*
Salonstück (գեր. Սալոնշտյուկկ)—սալոնային պիես (զըվարճալի, թեթև բնույթի երաժշտական ստեղծագործություն):

salmodia (իտ. սալմոդի)—1) սաղմոսերգություն, 2) միապաղաղ, միօրինակ, երգեցողություն:
saltando, saltato (իտ. սալտանդո, սալտատո) — *սալտանդո, սալտատո:*
saltarello (իտ. սալտարելլո) — *սալտարելլո:*
saltato — տես saltando
Sammelwerk (գեր. Զամմելվերկ) — ժողովածու:
Sammlung (գեր. Զամլունգ) — ժողովածու:
sämtlich (գեր. զեմտլիխ) — բոլորը:
sämtliche Werke (գեր. Զեմտլիխե վերկե)—երկերի լիակատար ժողովածու
sanft (գեր. զանֆտ) — մեղմ, քնքույշ:
sans (ֆր. սան (սանզ)) — առանց (ան...):
sans interruption — տես՝ interruption
sans paroles (ֆր. սան պարոլ) — առանց խոսքերի:
sans pédale (ֆր. սան պեդալ)—առանց ոտնակի:
sans presser (ֆր. սան պրեսսե)— առանց շտապելու:
sans rigueur տես՝ rigueur
sans sourdines (ֆր. սան սուրդին) — առանց մեղմոցների, դաշնամուր նվագելիս՝ առանց ձախ ոտնակի:
saraband, sarabanda, sarabande (անգ. սարաբանդ, իտ. սարաբանդա, ֆր. սարաբանդ) — *սարաբանդա:*
Sarabanda (գեր. սարաբանդա) — *սարաբանդա* (իսպանական պար), նվագարանային պիես:
Satz (գեր. Զատց) — մաս (բազմամաս (ցիկլային) ստեղծագործության յուրաքանչյուր առանձին մաս), *պարբերություն,* թեմա, պարտիա (գլխավոր պարտիա, օժանդակ պարտիա *սոնատային ալեգրո-ում):*
scala (իտ. սկալա — սանդուղք, աստիճան) — *1) գամմա, 2) ձայնաշար կամ հնչյունաշար:*
scale ((անգ. սքեյլ)—*1) գամմա, 2) ձայնաշար* կամ *հընչյունաշար, 3) մենզուրա* (չափ):
scemare (իտ. շեմարե) — (աստիճանաբար) պակասեցնել թուլացնել (հնչողության աստիճանը):
scena, scene, scène (իտ. շենա, անգ. սին, ֆր. սսեն)—1) բեմ, (թատերաբեմ), բեմահարթակ (էստրադա), 2) տեսիլ, տեսարան: Տես՝ stage
scenário. s., scénario (իտ. շենարիո, անգ. սենարիո, ֆր. սսենառիո) — *սցենար:*
schalkhaft (գեր. շալկհաֆտ) — խորամանկորեն, չարաճճիորեն, կատակելով, խաղուն (նաև՝ նենգաբար, խարդախորեն):
Scherz (գեր. շերց) — կատակ
scherzando, scherzoso (իտ. սկերցանդո, սկերցոզո)— կատակով (կատակելով, հումորով, ուրախ, աշխույժ, խաղուն):
scherzen (գեր. շերցեն) — կատակել:
scherzend (գեր. շերցենդ) — կատակելով:
scherzetto (իտ. սկերցետտո) — *սկերցետտո:*
scherzino (իտ. սկերցինո) — *սկերցինո:*
scherzo (իտ. սկերցո — կատակ) *սկերցո*
schietezza (իտ. սկիետեցցա) — անկեղծություն, պարզամտություն, մաքրություն, con s. (կոն սկիետեցցա) — անկեղծ, մաքուր, սրտաբաց, պարզ
schietto (իտ. սկիետտո) — անկեղծ, մաքուր, (նաև համարձակ):
Schlagel (գեր. շլեգել) — թակ, թակիչ, կափ:
Schlaginstrumente, Schlagzeug, Schlagwerk (գեր. շլագինստրումենտե, շլագցոյգ, շլագվերկ) — *հարվածային նվագարաններ:*
schleppend (գերմ. շլեպպենդ)—ձգձգուն, դանդաղկոտ, ալարկոտ, անաշխույժ, nicht s. (նիխտ շլեպպենդ)—ձգձգելով, (առանց ձգձգման, առանց դանդաղկոտության, աշխույժ):
Schlummerlied (գեր. Շլումմերլիդ)—օրորոցի երգ:
Schluss (գեր. շլուսս) — վերջ, վերջավորություն
Schlüssel (գեր. շլյուսսել) — *բանալի*
Schlusssatz, Schlussszene, Schlussteil (գեր. շլուսսզատց, շլուսսցենե, շլյուսստայլ) — *ֆինալ*
Schnarre (գեր. շնարրե) — *ճչանակ (չխկչխկան):*
schnell (գեր. շնել) — արագ, սրընթաց, ժիր. schneller (շնելլեր) — ավելի արագ, ավելի սրընթաց, ավելի ժիր:
Schottisch (գեր. շոտտիշ — շոտլանդական) — *էկոսեզ:*
schwach (գեր. շվախ) — թույլ (թուլացնել, մեղմացնել հնչողությունը) schwächer (շվեխէր) — ավելի թույլ:
schwermütig (գեր. շվերմյուտիհ) — ընկճված, տխուր, մելամաղձոտ:
schwungvoll (գեր. շվունգֆոլլ) — ոգևորությամբ, ոգեշնչվածությամբ, եռանդով (աշխույժ, կայտառ):
scintillante (իտ. շինտիլանտե) — կայծկլտող, փայլփլուն, շողշողուն (վառ արտահայտիչ)
sciolta mente, sciolto (իտ. շոլտամենտե, շոլտո) — արագ, ազատ, համարձակ (անկապ, այսինքն՝ *ոչ լեգատո).*
scioltezza (իտ. շոլտեցցա) — արագություն, ճարտարություն, ճկունություն, ազատություն, համարձակություն (անկապություն) con s. (կոն շոլտեցցա) — արագ, ճարտար, ճկուն, ազատ, համարձակ (անկապ, այսինքն՝ *ոչ լեգատո):*
scordanza (իտ. սկորդանցա) — *դիսոնանս:*
scordare (իտ. սկորդարե)—1) լարից գցել, լարից ընկնել, 2) դիսոնանսել (հնչել ոչ բարեհնչյուն).
scordato (իտ. սկորդատո) — 1) լարից գցված, լարից ընկած, 2) դիսոնանսող:
scordatura (իտ. սկորդատուրա — դիսոնանս) — *սկորդատուրա:*
score (անգ. սքոր) — 1) պարտիտուրա, տես՝ piano score, vocal score 2) նվագարանավորել:
scorrendo (իտ. սկորրենդո — հոսելով, թորալով) — սահելով (լարերի կամ ստեղնաշարերի վրայով), միաձուլելով (հնչյունները):
scorrevole (իտ. սկորրեվոլե—հոսուն, սահուն)—իմաստով նույնն է՝ scorrendo
Scotch (անգ. սքոչ) — շոտլանդական — *էկոսեզ*
sdegno (իտ. զդենյո)—վրդովմունք, զայրույթ, ցասում.

con s. (կոն զդենյո) — զայրույթով, վրդովմունքով, ցասումով:

sdegnoso (իտ. զդենյոսո)—զայրագին, վրդովված, ցասկոտ:

se bisogna (իտ. սէ բեզոնյա)—եթե հարկավոր է, եթե պետք է, (ըստ անհրաժեշտության):

sec, secco (ֆր. սեկ, իտ. սեկկո) — չոր, խիստ, (կտրուկ, կարճ, կտրտված) տես՝ r e c i t a t i v o s e c c o

second, seconde (անգ. սեքընդ, ֆր. սըգոնդ, — երկրորդ) — *սեկունդա:*

seconda, secondo (իտ. սեկոնդա, սեկոնդո — երկրորդ)—1) *սեկունդա,* 2) չորս ձեռքի համար գրված դաշնամուրային ստեղծագործությունների (կամ փոխադրությունների) վարի կամ ձախ կողմի (էջի) պարտիան:

seconda volta կամ II volta (իտ. սեկոնդա վոլտա, կամ 2 վոլտա) — երկրորդ *վոլտա,* երկրորդ անգամ:

segno (իտ. սենյո) — նշան կամ (al s. (ալ սենյո) մինչև նշանը (կրկնել) d'al s. (դալ սէնյո) — նշանից (սկսած):

seque (իտ. սեգուե — հետևում է, հաջորդում է) — շարունակել նույնպես (կատարել այնպես, ինչպես մինչ այդ):

seguendo (իտ. սիգուենդո — հաջորդելով, շարունակելով) — իմաստով նույնն է՝ s e g u e

seguente (իտ. սեգուենտե — հաջորդը) — իմաստով նույնն է՝ s e g u e

segue subito senza cambiare il tempo (իտ. սեգուե սուբիտո սենցա կամբիարե իլ տեմպո) — անմիջապես շարունակել առանց տեմպի փոփոխման:

Sehnsucht (գեր. Զեհնզուխտ) — կարոտ, ձգտում, բուռն (կրքոտ) ցանկություն:

sehnsüchtig, sehnsuchtsvoll (գեր. զեհնզյուխտիհ, զեհնզուխտվոլլ) — կարոտով լի, կրքոտ:

sehnsüchtsvoll — տես՝ s e h n s u c h t i g

sehr (գեր. զեեռ) — շատ (սաստիկ)

Seite (գեր. զայտե) — էջ

seitenthema (գեր. զայտենթեմա)—*օժանդակ թեմա* (սոնատային ձևում)

Sekunde (գեր. սեկունդե) — *սեկունդա*

semibiscroma (իտ. սեմիբիսկրոմա) — վաթսունչորսերորդական (տևողության) նոտա

semibreve (իտ. սեմիբրեվե) — ամբողջ (տևողության) նոտա

semibrevis (լատ. սեմիբրեվիս—կիսակարճ)—*սեմիբրեվիս,* տես՝ մենզուրալ նոտագրություն

semicroma (իտ. սեմիկրոմա) — տասնվեցերորդական (տևողության) *նոտա*

semifusa (լատ. սեմիֆուզա—կես f u s a)—սեմիֆուզա, տես՝ *մենզուրալ նոտագրություն:*

semiminima (լատ. սեմիմինիմա — կիսամինիմալ)—սեմիմինիմա. տես՝ *մենզուրալ նոտագրություն:*

semiseria (իտ. սեմիսերիա) — կիսալուրջ, տես՝ *օպերա, սեմիսերիա:*

semi-ton, semitone, semitonium, semitono (ֆր. սըմիտոն, անգ. սեմիթոն, ուշ. լատ. սեմիտոնիում, իտ. սեմիտոնո) — *կիսատոն:*

semitone, semitono — տես՝ s e m i - t o n

semplice, semplicemente, semplicetto (իտ. սեմպլիչե, սեմպլիչեմենտե, սեմպլիչետտո) — պարզ, անկեղծ, բնական (միամիտ, պարզամիտ):

semplicita (իտ. սեմպլիչիտա) — պարզություն, անկեղծություն, բնականություն. (միամտություն, անփորձություն) con s. (կոն սեմպլիչիտա) — պարզ, անկեղծ, բնական (միամիտ, անփորձ)

sempre (իտ. սեմպրե)—միշտ, շարունակ, ամբողջ ժամանակ (այսինքն՝ շարունակ կատարել նշված ձևով). օր.՝ s. legato (սեմպրե լեգատո) — ամբողջ ժամանակ *լեգատո* s. staccato (սեմպրե ստակկատո) — շարունակ *ստակկատո* s. piano (սեմպրե պիանո)—միշտ *պիանո:*

sensibile, sensible (իտ. սենսիբիլե, ֆր. սանսիբլ—զգայուն, դյուրազգաց)—1.զգացված, սրտառուչ, 2.ձըգտող տոն (7-րդ աստ), տես՝ n o t a s e n s i b i l e

sensibilmente (իտ. սեսիբիլմենտե—զգալի կերպով)—սրտառուչ, զգացված:

sensible — նույնն է՝ s e n s i b i l e

sensuel (ֆր. սանսյուէլ)—վավաշոտությամբ, կրքոտ:

sentimental, sentimentale (ֆր. սանտիմանտալ, իտ. սենտիմենտալե—զգայուն, գորովալիր)—դյուրազգաց, չափազանց քնքուշ, սենտիմենտալ

sentimentalism, sentimentalisme, sentimentalismo, Sentimentalismus (անգ. սենթիմենթալիզմ, ֆր. սանտիմանտալիսմ, իտ. սենտիմենտալիզմո, գեր. սենտիմենտալիզմուս) — *սենտիմենտալիզմ:*

sentimento (իտ. սենտիմենտո)—զգացմունք con s. (կոն սենտիմենտո) — զգացմունքով:

sentitamente, sentito (իտ.՝ սենտիտամենտե, սենտիտո) — անկեղծորեն, զգացմունքով, սրտառուչ:

senza (իտ. սենցա) — առանց, ան..., չ...:

senza fiori (իտ. սենցա ֆիորի) — առանց զարդարանքի, առանց ձայնազարդերի (առանց մելիզմների, առանց ծաղկացնելու):

se piace (իտ. սե պիաչե)—եթե հաճելի է, եթե պետք է, եթե ցանկալի է:

septet, septeto, Septett, septuor (անգ. սեփթեթ, իսպ. սեպտետո, գեր. սեպտետտ, ֆր. սետյուոռ) — *սեպտետ:*

septième, septima, Septime (ֆր. սեթիեմ, լատ. սեպտիմա, գեր. սեպտիմե) — *սեպտիմա:*

Septimenakkord (գեր. սեպտիմենակկորդ)—*սեպտակորդ*

septuor — տես՝ s e p t e t

sequence, séquence, Sequenz (անգ. սիկուընս, ֆր. սեքանս, գեր. սեկվենց) — *սեկվենցիա*

sequenza (իտ. սեկուենցա — շարք) — սեկվենցիա:

serenade, S., sérénade, serenata (անգ. սերընեյդ, գեր. սերենադե, ֆր. սերենադ, իտ. սերենատա) — սերենադ (*գիշերերգ*):

sereno (իտ. սերենո) — մեղմ, հանդարտ, պարզ, պայծառ, բերկրալի, զվարթ

seria (իտ. սերիա) — լուրջ: Տես՝ **opera seria**

serie, série (իտ. սերիե, ֆր. սեռի) — սերիա (շարք, կարգ):

seriell (գեր. սերիել[լ]) — սերիային: Տես՝ *սերիային երաժշտություն*

serio, seriozo (իտ. սերիո, սերիոզո)—ծանր, լուրջ, ծանրակշիռ, խիստ:

serrer (ֆր. սերրե—սեղմել, նեղել)—արագացնել (շարժումը) **serrez** (սերրե) — արագացրեք:

serrez et augmentez (ֆր. սերրե է օգմանտե)—արագացրեք (տեմպը) և ուժեղացրեք (հնչողությունը):

serrez un peu (ֆր. սերրե ըն պեռ) — մի փոքր արագացրեք:

sesta (իտ. սեստա) — *սեքստա*

sestetto (իտ. սեստետտո) — *սեքստետ*

settima (իտ. սետտիմա) — *սեպտիմա:*

settimino (իտ. սետտիմինո) — *սեպտետ*

seventh (անգ. սեվընթ — յոթերորդ) — *սեպտիմա*

severo (իտ. սեվերո) — լուրջ, խիստ, սաստիկ, (մռայլ, դաժան):

severita (իտ. սեվերիտա)—լրջություն, խստություն (կոն սեվերիտա) — լրջորեն, խիստ (խստությամբ):

Sextakkord (գեր. սեքստակկորդ) — *սեքստակորդ*

sexte, S. (ֆր. սեքստ, գեր. սեքստե) — *սեքստա:*

sextet, Sextett, sextuor (անգ. սեքսթեթ, գեր. սեքստետտ, ֆր. սեքստյուոռ) — *սեքստետ:*

sextuor — տես՝ **sextet**

sforzando, sforzato (իտ. սֆորցանդո, սֆորցատո) — սֆորցանդո

sforzo (իտ. սֆորցո) — ջանք, ճիգ, ուժերի լարվածություն (ուժգին, թափով, համարձակ). **con s.** (կոն սֆորցո) — (ուժգին, թափով, համարձակ), ջանքով, ճիգով, ուժերի լարվածությամբ:

sforzosamente, sforzoso (իտ. սֆորցոզամենտե, սֆորցոզո) — ուժգին, համարձակ:

sfrenatamente (իտ. սֆրենատամենտե)—շատ աշխույժ, սրընթաց:

sfuggevole (իտ. սֆուջջեվոլե — անցողական, թռուցիկ, դյուրասահ) — սահելով (նվագարանի լարերի կամ ստեղների վրայով):

sharp (անգ. շարփ) — *դիեզ:*

Shimmy (անգ. Շիմմի) — *շիմմի:*

si (սի)—յոթ հիմնական հնչյուններից յոթերորդի վանկային անվանումը: Տառային անունն է **h** կամ **H** (հա): *Սոլմիզացիա:*

si bisogna (իտ. սի բիզոնյա)—եթե պետք է, եթե հարկ կա:

siciliana (իտ. սիցիլիանա) — *սիցիլիանա*

silence (ֆր. սիլանս — լռություն) — *պաուզա*

silenzio (իտ. սիլենցիո) — լռություն, հանդարտություն, ինքնամոռացում

silenzio parfetto (իտ. սիլենցիո պարֆետտո)—կատարյալ լռություն, կատարյալ հանդարտություն, կատարյալ ինքնամոռացում

si leva (no) il sordino (իտ. սի լեվա (նո) իլ սորդինո) — հանել մեղմոցը (սուրդինան):

sim. — կրճատ՝ **simile**

simile (իտ. սիմիլե — միանման, միատեսակ, բոլորովին նման) — (կատարել) նույնանման (ճիշտ այնպես, ինչպես մինչ այդ՝ նույն շտրիխով, նույն ուժգնությամբ, նույն նրբերանգով (նյուանսով) և այլն)

similmente (սիմիլմենտե) — միատեսակ, նույնպես:

sincère, sincero (ֆր. սենսեր, իտ. սինչերո)—անկեղծ, սրտաբաց, մաքուր:

sincope (իտ. սինկոպե) — *սինկոպա:*

sine (լատ. սինե) — առանց, (ան...):

sinfonia (իտ. սինֆոնիա) — 1. սիմֆոնիա, 2. նախերգանք (*ուվերտյուրա*):

sinfonia concertante (իտ. սինֆոնիա կոնչերտանտե)—*սիմֆոնիա — կոնցերտ, կոնցերտային սիմֆոնիա:*

sinfonico, sinfonisch (իտ. սինֆոնիկո, գեր. սինֆոնիշ)—սիմֆոնիկ

Sinfonie, Simphonie (գեր. սինֆոնի, սիմֆոնի) — *սիմֆոնիա:*

Sinfoniekonzert (գեր. սիինֆոնիկոնցերտ) — *սիմֆոնիկ համերգ*

Sinfonieorchester (գեր. սինֆոնիեորկեստեր) — *սիմֆոնիկ նվագախումբ*

sinfonietta, S. (իտ. սինֆոնիետտա, գեր. սինֆոնիետտա) — *սիմֆոնիետտա*

Sinfonische Dichtung (գեր. սինֆոնիշե դիխտունգ) — սիմֆոնիկ պոեմ

singbar (գեր. սինգբար) — երգուն:

singhiozzando (իտ. սինգիոցցանդո)—հեկեկալով, հեծկըլտալով, հոնգուր-հոնգուր լալով, (հեծեծալով)

Singspiel (գեր. Զինգշպիլ) — *զինգշպիլ*

sinistra, sinistro (իտ. սինիստրա, սինիստրո) — ձախ. **s. mano** (սինիստրա մանո)—ձախ ձեռքով. կրճատ՝ **s. m.** կամ **m. s.**

sinistra mano — տես՝ **sinistra**

sinkope — տես՝ **syncope**

sino, (sin) (իտ. սինո (սին)) — մինչև **sin al segno** (սին ալ սենյո) — մինչև նշանը (կրկնել):

si piace (իտ. սի պիաչե) — եթե ցանկալի է, եթե հաճելի է:

si seque (իտ. սի սեգուե) — շարունակվում է (շարունակիր)

si tace (իտ. սի տաչե) — լռում է (լռիր):

si volta, (-i) (իտ. սի վոլտա (-ի)) — շրջվում է, (շրջիր էջը):

sixth (անգ. սիքսթ — վեցերորդ) — *սեքստա*

Skala (գեր. սկալա)—1) սանդղակ (սանդուղք) 2) *գամմա:*

slancio (իտ. զլանչիո)—թոռթկում, ավյուն, թափ. con s. (կոն զլանչիո) — պոռթկումով, ավյունով, թափով (ուժգին, սրընթաց)

slargando (իտ. զլարգանդո — ընդլայնելով) — դանդաղեցնելով

slegato (իտ. զլեգատո — անկապ, բաժան-բաժան) — նույնն է՝ staccato

slentando (իտ. զլենտանդո)—դանդաղեցնելով, մարելով:

slumber song (անգ. սլամբըր սոնգ) — օրորոցի երգ:

s. m. — կրճատ՝ sinistra mano

smania (իտ. զմանիա) — կատաղություն, մոլեգնություն con s. (կոն զմանիա) — կատաղությամբ, մոլեգին

smanioso (իտ. զմանիոսո) — կատաղի, մոլեգին

sminuendo (իտ. զմինուէնդո — նվազեցնելով, պակասեցնելով)—(աստիճանաբար) թուլացնել (հնչողության ուժգնությունը): Տես՝ diminuendo

sminuire (իտ. զմինուիրէ — նվազեցնել, պակասեցնել)—իմաստով նույնն է՝ sminuendo

smorendo (իտ. զմորէնդո)—նույնն է՝ smorzando

smorfioso (իտ. զմորֆիոզո) — ծամածռիկ, կոտրատվող, սեթևեթ (կոտրատվելով, նազ անելով)

smorzando (իտ. զմորցանդո — նվազեցնելով, խլացնելով, մարելով) — (աստիճանաբար) թուլացնելով, մեղմացնելով (հնչողությունը, մինչև նրա վերջնական մարումը) և դանդաղեցնելով (տեմպը):

smorzare (իտ. զմորցարե — նվազեցնել, հանգցնել, մարել) — իմաստով նույնն է՝ smorzando

smorzatore (իտ. զմորցատորե — խլացուցիչ) — 1) *խլարար, դեմպֆեր,* 2) *մոդերատոր*

snellamente (իտ. զնելլամենտե — արագությամբ)—արագ, թեթև, աշխույժ, նրբագեղ (նուրբ):

snellezza (իտ. զնելլեցցա) — թեթևություն, արագություն, աշխուժություն, նրբագեղություն con s. (կոն զնելլեցցա)—արագությամբ, թեթևությամբ, աշխուժությամբ, (նրբագեղ, նուրբ):

snellissimo (իտ. զնելլիսսիմո — snello-ի գերադրական աստիճանը), շատ արագ, շատ թեթև, շատ աշխույժ, շատ նուրբ

snellita (իտ. զնելլիտա)—նույնն է՝ snellezza

snello (իտ. զնելլո) — արագ, թեթև, աշխույժ, նրբագեղ:

soave, soavemente (իտ. սոավե, սոավեմենտե — քաղցրությամբ, սիրով) — մեղմ, քնքուշ, թեթև, հանդարտ:

soavemente — տես՝ soave

sobriamente, sobrio (իտ. սոբրիամենտե, սոբրիո)—չափավոր, զուսպ, լրջամիտ (ավելացնելով արագությունը նշող բառին՝ չափավորում է արագության (կամ դանդաղության) աստիճանը):

sobrieta (իտ. սոբրիետա) — չափավորություն, զսպվածություն, լրջամտություն con s. (կոն սոբրիետա)—նույնն է՝ sobriamente

soggetto (իտ. սոջետտո)—1. *սյուժե,* 2. *թեմա* (ֆուգի թեման՝ *առաջնորդ*):

soggetto cavato (իտ. սոջջետտո կավատո) — 1) երաժշտական թեմա, որը կոմպոզիտորը վերցրել է ուրիշի երաժշտությունից, 2) *տառային երաժշտական թեմա:*

sognando (իտ. սոնյանդո — անրջասույզ) — անրջելով, երազելով:

sol (սոլ) — յոթ հիմնական հնչյուններից հինգերորդի վանկային անվանումը: Տառային անունն է՝ g կամ G (գե) տես՝ *սոլմիզացիա:*

sola (իտ. սոլա) — մեկը (այսինքն՝ մեկ մենակատար):

sole (իտ. սոլե)—մեկերը (այսինքն՝ մի քանի մենակատարներ)

solemnis, solenne (լատ. սոլեմնիս, իտ. սոլեննե)—հանդիսավոր, շքեղ, մեծաշուք, փառավոր (մեծահանդես, հոյակապ):

solenne — տես՝ solemnis

solennemente (իտ. սոլեննեմենտե) — հանդիսավոր կերպով, մեծ շուքով, փառահեղ, վեհ:

solennita (իտ. սոլեննիտա)—փառավորություն, շքեղություն, հանդիսավորություն, վեհություն con s. (կոն սոլեննիտա) — փառավորությամբ, շքեղությամբ, հանդիսավորությամբ, վեհությամբ:

sol-fa, solfège, solfeggio, (անգ. սոլ-ֆա, ֆր. սոլֆեժ, իտ. սոլֆեջջո, գեր. սոլֆեջջո)—*սոլֆեջո* (ՍՍՀՄ-ում ընդունված է արտասանել՝ *սոլֆեջիո):*

soli (իտ. սոլի) — solo-ի հոգնակին

solist, solista, soliste, soloist (գեր. սոլիստ, իտ. սոլիստա, ֆր. սոլիստ, անգ. սոլիստ)—*մենակատար (սոլիստ)*

solitamente, solito (իտ. սոլիտամենտե, սոլիտո)—սովորականի պես, ըստ սովորականի (առանց հատուկ ձևերի)

sollecitamente (իտ. սոլլեչիտամենտե)—արագորեն (արագ-արագ), փութով շտապով:

sollecitando (իտ. սոլլեչիտանդո — աճապարելով) — շտապելով, արագացնելով

sollecitare (իտ. սոլլեչիտարե—փութալ, աճապարել)—շտապեցնել, արագացնել:

sollecito (իտ. սոլլեչիտո) — արագ, փութաջան, ժիր:

solmisation, S., s., solmisazione (ֆր. սոլմիզասիոն, գեր. սոլմիզացիոն, անգ. սոլմիզեյշըն, իտ. սոլմիզացիոնե) — սոլմիզացում, սոլմիզացիա: Տես՝ solmization

solmization (անգ. սոլմիզեյշըն) — *սոլմիզացում, սոլմիզացիա:* Տես՝ solmisation

solo (իտ. սոլո, ֆր. սոլո, անգ. սոլո, գեր. սոլո) — *սոլո* (մեկ, մենակ):

Solosänger (գեր. սոլոզենգեր)—*մենակատար (սոլիստ)*
soltanto (իտ. սոլտանտո) — միայն, հազիվ (սոսկ)
sombre (ֆր. սոմբռը) — տխուր, մռայլ, դժկամ:
son, s. (ֆր. սոն, իսպ. սոն) — հնչյուն (ձայն), ղողանջ, հնչում
sonabile (իտ. սոնաբիլե) — 1) (կատարման համար) հեշտ, դյուրին (երաժշտություն), 2) հնչեղաձայն (հնչեղ):
sonare (իտ. սոնարե) — հնչել, կատարել, նվագել, զարկել, փչել. օր.՝ s. il violino (il pianoforte) (սոնարե իլ վիոլինո (իլ պիանոֆորտե)) ջութակ (դաշնամուր) նվագել s. la sinfonia (սոնարե լա սինֆոնիա) — սիմֆոնիա կատարել, s. la tromba (սոնարե լա տրոմբա) — փող փչել, s. il tamburo (սոնարե իլ տամբուրա) — թմբուկ զարկել:
son armonique — տես՝ armonique
sonata, sonate, (իտ. սոնատա, անգ. սոնատա, ֆր. սոնատ, գեր. զոնատէ) — *սոնատ(ա):*
sonatina, sonatine (իտ. սոնատինա, անգ. սոնատինա, ֆր. սոնատին, գեր. զոնատինէ) — *սոնատին:*
sonator (լատ. սոնատոր)—նվագիչ, նվագածու, նվագահար (նվագող երաժիշտ): Տես՝ cantor
sonatore (իտ. սոնատորե)—նվագիչ, նվագածու, նվագահար (նվագող երաժիշտ) s. di pianoforte (di violino) (սոնատորե դի պիանոֆորտե (դի վիոլինո)) — դաշնակահար (ջութակահար): Տես՝ cantore
song (անգ. սոնգ) — 1. երգ, 2. երգեցողություն
Song of Songs (անգ. սոնգ օֆ սոնգս) — *երգ երգոց*
sonoramente, sonoro (իտ. սոնորամենտե, սոնորո — քաղցրահունչ) — զնգուն, հնչեղ (բարձրաձայն):
sonore (ֆր. սոնոր) — նույնն է՝ sonoramente
sonorita (իտ. սոնորիտա — քաղցրաձայնություն)—հընչեղություն, զնգունություն:
sons bouchés (ֆր. սոն բուշե)—փակ ձայներ (գալարափողով) վալտորնայով:
sons concomitants (ֆր. սոն կոնկոմիտան) — *օբերտոններ (մասնակի տոներ)*
sons harmoniques (ֆր. սոն առմոնիք) — 1) *օբերտոններ (մասնակի տոներ)* 2) ֆլաժոլետային հնչյուններ *(ֆլաժոլետներ):*
sons naturels (ֆր. սոն նատյուրել) — բնական հնչյուններ
sons partiels (ֆր. սոն պարսիել) — *մասնակի տոներ, օբերտոններ*
sons résultants (ֆր. սոն ռեզյուլտան) — *օբերտոններ, մասնակի տոներ*
sopra (իտ. սոպրա) — վրա, վերին, վերևի, առաջ. օր՝ s. una corda (սոպրա ունա կորդա) — մեկ լարի վրա (նվագել) come s. (կոմե սոպրա) — (կատարել) ինչպես վերևում (այսինքն կատարիր այնպես, ինչպես մինչև այդ (ինչպես առաջ) կատարում էին համապատասխան հատվածը: Դաշնամուրի կամ նման այլ նվագարանների համար գրված նոտաներում այդ բառով նշվում է, թե խաչաձևման ժամանակ ձեռքերից որը պիտի գտնվի վերևում:
Տես՝ alzamento, sotto
Sopran, soprano, s., s. (գեր. սոպրան, ֆր. սոպռանո, անգ. սոփրանո, իտ. սոպրանո — վերին, առաջին, ամենաբարձր) — *սոպրանո:*
sopranista, sopraniste (իտ. սոպրանիստա, ֆր. սոպռանիստ) — *սոպրանիստ,* տես՝ *ամորձատ-երգիչներ:*
sopratonica (իտ. սոպրատոնիկա) — վերին ձգտող տոն (մաժոր և մինոր լադերի երկրորդ աստիճանը):
sopra una corda — տես՝ sopra
sordamente, sordo (իտ. սորդամենտե, սորդո) — խուլ, խլաձայն
sordina, Sordine, sordino (իտ. սորդինա, գեր. սորդինե, անգ. սորդինո) — *մեղմոց (սուրդինա):* Տես՝ sourdine
sordino (իտ. սորդինո) — *ձայնագրել, մոդերատոր*
